

Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ



ՆԻՒԹԵՐ
ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
(1912-1915)



ՆԻԻԹԵՐ
ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

363
հետ
հիմ
համ-
1993



Կողքի նկար՝
Օսմանեան Կայսրութեան քարտէսը (ԺԹ. դար)

Ձեռագիրներու դասաւորում եւ խմբագրութիւն՝
Հայր Տաճատ Եարտըմեան

Վերստուգող սրբագրիչ՝
Հայր Վահան Օհանեան

Ամէն իրաւունք վերապահուած է
Միջինարեան Միաբանութեան, Վեներիկ (Իտալիա)

9(47.925)

21-11

ՀԱՅԻՐ ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ

3363

ՆԻԻԹԵՐ
ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
(1912-1915)

*

ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ





ՆՈՒԷՐ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՄՈՒԹԱՐԵԱՆ
 ԿԵՆՏՐՈՆԻՑ

Ի. ԱՄԻՐՅԱՆ, 7-ՍՐԵՒԱՆ

1993

ՎԵՆԵՏԻԿ - ՍԻ. ՂԱԶԱՐ





Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ
(1878-1956)

Այս գիրքը կը հրատարակուի ՕԳՆԻԿ Մանուկեանի զատակներուն նպաստով, իրենց հօր մահուան տասնամեակին առիթով:

ՕԳՆԻԿ Մանուկեան եղբայրական բարեկամութեամբ եւ հիացմունքով սերտօրէն կապուած էր գիրքիս ճեղիմակին:

Այս հրատարակութիւնը կ'ուզէ պատուել անոնց յիշատակը, յուսալով որ պատմութեան ուսումնասիրութիւնը լուսատրէ ներկայ կեանքին ծանր պայմանները:

Questo libro viene pubblicato grazie al contributo messo a disposizione dai figli di Onnik Manoukian a dieci anni dalla sua scomparsa.

All'autore di questo testo Onnik Manoukian era legato da stima, devozione e fraterna amicizia.

La pubblicazione vuole onorare la loro memoria ed essere auspicio perché lo studio della storia illumini le gravose scelte del presente.

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Էջերը, որոնք կը լեցնեն այս հատորը եւ առաջին անգամ ըլլալով կը յանձնուին հանրութեան ուշադրութեան, կը պատկանին ծանօթ անունի մը, որ պատմագետ է միտով ու գրիչով, Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան վաստակատու անդամներէն՝ Հայր Սահակ Վրդ. Տեր-Մովսէսեանին (մահացած՝ Վենետիկ՝ 1956ի Դեկտեմբերին):

Հեղինակին պատմական-վերլուծական այս կարեւոր աշխատանքը, որ հրատարակութեան կը յանձնենք ուսումնասիրողի մահէն շուրջ երեսունհինգ տարիներ յետոյ, կ'ընդգրկէ միայն քանի մը տարիներու քաղաքական դէպքերը - 1912էն մինչեւ Մեծ Աղէտ երկարող շատ կարճ ու արհաւրական ժամանակահատուածը - որ սակայն լեցուն է միջազգային եւ ազգային քաղաքական ներքին, քարոզ ելեւէջներով, քաղաքական քաֆուն հետապնդումներու շարժումներով ու սխալ հեռանկարներով. անոնց անդրադարձը ո'չ միայն մեզի՝ ազգային նիւթական ու բարոյական անչափելի վնասներ ու դառնագոյն հետեւանքներ բերաւ հետը, այլ ստեղծեց նաեւ անմախքընթաց փորձառութիւններ ու «դասեր քաղելու» առիթներ՝ մեր քաղաքական, ազգային եւ ընկերա-հոգեբանական հասունացումի ենթահողերուն վրայ:

«Քաղաքական դասն փորձառութիւնները, կ'անդրադարձնէ երոպացի դիւանագետ մը, կ'արթնցնեն ժողովուրդի մը զիտակցութիւնը եւ կը սրեն անոնց ներքին թէ արտաքին քաղաքականութեան հոտառութիւնը»:

Թէ մեր հաւաքական հասունացումի սնդիկը՝ ներքին քէ արտաքին քաղաքականութեան ասպարէզին մէջ ո'ր կը գտնուի ներկայիս, մեր նիւթի սահմաններէն դուրս կը գտնուի անշուշտ, սակայն, Մեծ Աղէտի նախօրեակին՝ միսիթարեան ու դիւանագիտական ըլլալէ չափազանց հեռու էր առիկա: Հմուտ Հեղինակը կրցած է ձեռքին մէջ առնել պատմաքաղաքական այդ թելերը, վերլուծել ու մեկնաբանել՝ ի նպաստ մեր գալիք ժամանակներուն:

Գրիգորիս Վրդ. Պալաքեան, 1915ի Մեծ Աղէտի միջազգային ու ազգային մթնոլորտի մեծագոյն վկաններէն մէկը, իր «Հայ Գողգոթան» գործին մէջ, Հայ ժողովուրդին ուղղելով իր խօսքը՝ կը գրէ. - «Որովհետեւ զրազէտ, բանաստեղծ, վիպագիր, թատերագիր եւ մանաւանդ լրագրող ու խմբագիր ունեցար, բայց պատմագէտ երբեք չունեցար. որ անաչառ, անկաշառ եւ անվերապահ զրջով քննադատական վերլուծումը ընէր վարդոյրին ետեւ թաքնուած ներքին իրական քու կեանքիդ եւ ցոյց տար իսկական շարժառիթները քու շարունակական դժբախտութիւններուդ . . . քանի որ ազգային քաղաքականութեան հիմը եւ ուղղութիւնը՝ միշտ անխորհուրդ արկածախրնդրութիւնն է» (հտ. Ա., Վիեննա, 1922, էջ Թ.):

Հայր Սահակ Վրդ. Տեր-Մովսէսեան, կարծէ՛ք, Պալա՛քեան Վրդ.ի մատնանշած այդ աշխատանքը կ'ուզէ կատարել: Ան, իբր պատմագէտ, իրապաշտ է, յստակատես, վերլուծական մտքի ու կտրիմ արտայայտութեան տէր:

Պատմութեան դառն բեկադրանքներով եւ մեր ազգային քաղաքական հասունացումի սիրոյն, արհարական ազդակներու լոյսերով եւ իր սեւեռակէտին տակ առած պատմական ժամանակաշրջանին դառն իրադարձութիւններու ընդմէջէն, պատմագէտի յատուկ՝ նախաշումի խորունկ ու հաւաստի տուեալներով կը պատկերացնէ ու կը վերլուծէ Մեծ Աղէտը պատրաստող դէպքերու եւ երեւոյթներու մեր ազգային, քաղաքական, ընկերային, կուսակցական ու եկեղեցական նախօրեակը:

Հեղինակը, իր կեանքի վերջին տարիներուն ձեռնարկած է այս յանդուգն, բայց կեանական գործին, երկար տարիներ որո՞ճալ է եւ իր վերլուծական պրիսմայի տակ առնել յետոյ՝ ծանր դէպքեր ու դերակատարներ այդ սահաւոր օրերուն:

Մեր համեստ կարծիքով, հանրութեան մատուցուած այս հրատարակութիւնը, վերլուծումներու եւ տեսութիւններու թերեւս ամէնէն յանդուգն ու շահեկան ուսումնասիրութիւնն է, որ ցարդ հրապարակ ելած ըլլայ, մեր ազգային նորագոյն պատմութեան ամէնէն դժբախտ ժամանակաշրջանին նուիրուած:

«Գիրք մը, կը խորհրդածէ Յակոբ Օշական, *Երբեմն ա՛յնքան բարիք կ'ընէ, որքան չեն ըրած տասը ժամ ու հինգ զպրոց միասին*»:

Վերլուծական ինքնուրոյն մօտեցումի շահեկանութեան մղուած այս գործը՝ միայն օգուտ ու նպաստաւոր կրնայ ըլլալ մեր ազգային, քաղաքական քէ եկեղեցական այսօրուան ու գալիք քոյր դեկավարներուն:

* * *

Ներկայ հրատարակութիւնը կատարուած է ուղղակի Հեղինակի բնագիրներուն վրայէն, որոնք կը կազմեն անհամար տետրակներ, ամբողջութեամբ գրեթէ դժուարընթեռնի ձեւագիրներ, հետեւանք՝ Հեղինակի յառաջացած տարիքին եւ աչքերու վատ տեսողութեան: Լեզուն իրն է: Ոչ մէկ հպում մեր կողմէ:

Գործին ամբողջական դասաւորումն ալ, բոլոր մանրամասնութիւններով, կը պատկանի Հեղինակին: Գործին սակայն, կը պակսէր Ներածական մը: Մեր կողմէ՝ արտասպա՛ծ ենք միայն պատմական այդ չարաբախտ օրերուն առընչուող՝ գլխաւոր դերակատարներուն քանի մը լուսանկարները:

Վեներտիկ

ՀԱՅՐ ՏՄՃԱՏ ՎՐԴ. ԵԱՐՏՇՄԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԳԷՈՐԳ Ե. ԵՒ ՆԻԿՈԼԱ Ք.

ԳԷՈՐԳ ՍՈՒՐԷՆԵԱՆ՝ ԿԹՂ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երբ Գէորգ Արք. Սուրէնեան Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ, սրամիտ եւ գիտակից դասակարգը ապշած մնաց: Որովհետեւ նորընտիր կաթողիկոսը ցայտուն գէմք մը չէր եւ օրուան ծանր կացութեան բոլորովին անյարմար մէկն էր:

Չարական Ռուսիոյ զրգումով, Պալքանեան ազգերը պատերազմի կը պատրաստուէին երիտասարդ Թուրքիոյ դէմ. ուստի քաղաքական միջնորդուր աւելի խառնակ էր քան երբեք: Չկար այլեւս դիւանագէտ եւ նենգաւոր քաղաքականութեամբ դիտուած, Սուլթան Ապտ-իւլ-Համիտ մը, որ կարենար Պալքանեան ազգերը իրարմէ բաժնել եւ պատերազմի վտանգը հեռացնել, ինչպէս ըրած էր ուրիշ առիթներով:

Այսպիսի վտանգաւոր դրութեան մը մէջ, ուր աշխարհի խաղաղութիւնը մագէ մը կախուած էր, մահու եւ կեանքի մէջ ապրող թրքահայ ժողովուրդին հարկաւոր էր խոհեմ, շրջահայեաց, դիւանագէտ եւ պատմական փորձառութիւններով լեցուն կաթողիկոս մը, որ ճարտարութեամբ վարէր Հայ ժողովուրդի արդէն իսկ ծանրագէտ վտանգուած ճակատագիրը՝ այսպիսի պիկո՛ծ ծովուն վրայ:

Որովհետեւ աշխարհի մէջ ո՛րեւէ փորձանք կամ մեծամեծ ցընցումներ երբ պատահին, անպատճառ հայուն գլխուն ալ ուումը մը կը պայթի, ինչպէս եղած է միշտ:

Այսպիսի ձիրքերով օժտուած Ամենայն Հայոց Կաթողիկոս մը, որուն հոգեւորական իշխանութիւնը կը տարածուէր թրքահայաստանի եւ պարսկահայաստանի վրայ ալ, գոնէ պիտի յաջողէր իր հօտը նուազ կորուստներով փրկել:

Նորընտիր կաթողիկոսը, ընդհակառակն, զուրկ էր այդպիսի ձիրքերէ, եւ ունէր միայն եռանդուն եւ անկեղծ ազգասիրութիւն:

Սուրէնեան կաթողիկոս, կը գրէ ուսական հոգի վրայ ապրող ժամանակակից փորձառու եւ քաջ պատմագիր՝ Լէօ, երբեք չէր գտնուել սեփական իրաւունքներով շարժում, քաղաքական եւ առհասարակ գաղափարական տեսակետից եղել էր անգոյն եւ անտարբեր մի հոգեւորական, մէկն այն սովորական տափակ տիպիցից, որոնց բնորոշումն են «մեռելի թաղող հոգեւորական» խօսքերով:

ՍՈՒՐԷՆԵԱՆ՝ ՆԻԿՈՂԱ ՁԱՐԻՆ ՄՕՏ

Սուրէնեան կաթողիկոս, աւանդական սովորութեան համաձայն, մեկնեցաւ Պետերբուրգ, ներկայանալու համար Նիկողա Բ. ձարին, իրբեւ նորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ան ձարէն ընդունուեցաւ եւ այդ օրէն սկսած՝ ան դարձաւ Հայ ժողովուրդին հոգեւոր միապետը, Գէորգ Ե. անունով:

Հայոց նոր միապետը, 1912 թուին Յունիս 1ին, չքեղ հանդէսներով վերադարձաւ Էջմիածին: Գոհ էր եւ երջանիկ, բացառիկ պատիւներով ընդունուած ըլլալով ձարական արքունիքին մէջ: Անշուշտ անոր մտքէն չէր անցնէր որ ինքը քիչ ժամանակէն, Էջմիածնի գահակալներու շարքին մէջ ամէնէն գերախոս կաթողիկոսը պիտի ըլլար: Օր մը, ան պիտի անմահանար ինքն իրեն տալով «սգակիր կաթողիկոս» տիտղոսը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՆՈՐ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Սուրէնեան կթղ.՝ դառնալով Էջմիածնի Աթոռին միապետը, քիչ ժամանակէն քաղաքական հրապարակը այնքան պիտի աղմկէր, որ պիտի դառնար ժողովրդական ամենամեծ ղէմքը: Իսկական կուռք մը, եկեղեցական եւ աշխարհական գործիչներու աչքին: Իր պաշտօնի վաւերացումէն հազիւ երեք ամիս անցած, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացուց «Հայկական Հարցը», ուղղակի հրաւիրելով օտար եւ թշնամի պետութեան մը միջամտութիւնը՝ թուրքիոյ ներքին գործերուն մէջ:

Սուրէնեան կաթողիկոս, 1912ի Հոկտեմբեր 2ին, դիմեց Նիկողա Բ.-ին պաշտօնագիրով մը, որուն մէջ կը խնդրէր հայատեաց ձարէն որ «քրիստոնէսներն իր հովանաւորութեան տակ առնէ եւ զանոնք ազատէ քաղաքացիական տանջանքներէ»:

Այս պաշտօնական դիմումը ցնցեց այն դիւանագէտ հայերը, որոնք խորապէս թափանցեցին Էջմիածնի եւ արեւելեան բարք եւ նենգամիտ դիւանագիտութեան դադտնիքներուն մէջ: Արդարեւ, միամիտ եւ քաղաքականօրէն տհաս կաթողիկոսը՝ չէր կրցած հասկնալ թէ ինքն իր ձեռքով թրքահայութեան մահուան դատաւճիռն ստորագրեր էր:

Այս համարձակ քայլը, կը գրէ Լէօ, մի կատարեալ անակնկալ եղաւ: Այժմ դառնալով Էջմիածնի Աթոռի միապետ, այս մարդը ստանձնում էր մի այնպիսի խոշոր քաղաքական դեր, որի մնաց չէին կատարել նրա նախորդներից շատ շատերն, դարբնի ընթացքում, մի ահաւոր պատասխանատու դեր, որ բոլորովին չէր համապատասխանում նրա հոգեւորական եւ մտաւոր կարողութիւններին:

ԳԷՈՐԳ Ե.՝ ԳՈՐԾԻՔ ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

«Փողոցի մարդն» ալ, ինչպէս սովոր են ըսել եւրոպացիները, եթէ աղօտ գաղափար մը ունենար պաշտօնական Ռուսաստանի որդեգրած թշնամական քաղաքականութեան վրայ՝ հանդէպ թրքահայ ժողովուրդին, սկսած Պերլինի դաշինքին անիծապարտ 61րդ յօդուածէն, ուսկից ծնաւ պաշտօնապէս «Հայկական հարցը», դիւրաւ պիտի հասկնար այն գարհուրելի աղէտներուն շարքը, որոնք, անցան թրքահայ ժողովուրդի գլուխէն, յանգելով հայկական կոտորածներուն, համիլէի գունդերուն կազմակերպութեան եւ ի վերջոյ ծնունդ տալով հայաջինջ դատակնիքին, շուտով պիտի հասկնար թէ հայութեան մեծագոյն թշնամին ձարական Ռուսաստանն էր:

Բայց Սուրէնեան կաթողիկոսը ո՛չ միայն այս բոլորը մոռցեր էր, այլ եւ մտքէն հաներ էր ռուսական քաղաքական հիմնաքարը՝ հանդէպ թրքահայ ժողովուրդին, «Հայաստանը առանց Հայերու» անպարիշտ բանաձեւը: Մոռցեր էր նաեւ Նիկողա Բ. ձարին հեռագիրը իր սիրելի եղբոր Ապտ-իւլ Համիտին. «Ջարդէ՛, վեհապառուրիւն: Բոլորովին չէր յիշեր հայ վարժարաններուն փակումը, նոյն այդ ձարական իշխանութեան հրամանով: Ինչպէս նաեւ հայ եկեղեցական կալուածներու գրաւումը, որպէսզի հայ եկեղեցիները աղքատութեան մէջ մնալով, ստիպուին ռուսական «Օրթոտոքս» եկեղեցիին յարիւլ մէկ խօսքով, ռուսահայ ժողովուրդը բռնի միջոցներով ռուսացնել:

Գէորգ Ե. Սուրէնեան երազներով օրօրուելով, ոտքով ու ձեռքով մտաւ ձարական դիւանագիտութեան լարուած թակարդին մէջ, գործիք դառնալով ձարական հայաջինջ քաղաքականութեան:

Ինչպէս գիտենք, հին հաշիւ ունէր կարգադրելու Եւրոպայի հետ, որ զինքը նուաստացուցեր ու խոնարհեցուցեր էր Պերլինի վեհաժողովին մէջ, եւ իր ձեռքէն իլեր էր 16րդ յօդուածը, անոր տեղ դնելով 61րդ յօդուածը:

Հայերը տակաւին կապուած կը մնային եւրոպական դիւանագիտութեան հետ եւ շատ խոշոր փորձերով ձարականութիւնը խելահաս դարձեր էր, որ Կ.Պոլսոյ մէջ ռուսական գործը երբեք սէր ու համակրանք չէր գտած հայերու մէջ: Վերջին ապացոյցը այն էր, որ ՍանՍթեֆանոյի 16րդ յօդուածն անգամ անգլիական ղեսպան Լայարդն էր հայերու խորհրդատուն եւ ուղեցոյցը: Ներսէս Պատրիարքի պատգամաւոր Սորէն եպս. Նարպէյը, որ ուղարկուած էր Պետերբուրգ՝ ձարական կառավարութեան անկցութիւնը խնդրելու, որ Հայաստանի ինքնագաւառութիւն տրուի, Գէորգ Գ. կաթողիկոսի դիւանական ձեռագիր վաւերագրի մը համաձայն, «սառն ընդունելութիւն գտաւ, եւ Ադեմսանդր Բ.ը իրեն ուղղուած աղերսանքը լսելուց յետոյ, ոչ մի խոստում չարաւ եւ շարունակ պատգամաւոր եպիսկոպոսին աչքին

էր խոթում այն դիմադրութիւնը, որ ցոյց էին տալիս Կ. Պոլսի հայերն իրենց ծրագիրներուն»:

«Պէտք է միայն յիշել, *կը գրէ Լէօ*, մի պատմական իրողութիւն, այդ էջմիածնի դերն է ուսական արեւելեան քաղաքականութեան մէջ, երկու հարիւր տարուան ընթացքում հայ կրօնական միապետութեան հեղինակութիւնը նա օգտագործեց էր աւելի կամ պակաս յաջողութեամբ: Այժմ նոյն այդ օգտագործումը կատարում էր մինչեւ այժմ չտեսնուած սպառիչ չափերով: Ահա բոլորը: Սուրբնեան կաթողիկոսը միանգամայն ինքնուրուի մեծ ոչնչութիւն էր անձնական քաղաքականութեան ո՛րքեւ ինքնուրոյն գիծ անցկացնելու համար: Բայց իբրեւ հլու եւ կոյր գործիք՝ վերելից եւ խորհրդից եկած թելադրանքներն էր ներշնչումներին, նա նոյն իսկ ծայրայեղ անցանկալի չափերով իր տեղն էր եւ կարող էր գործ կատարել, մեծանալ անգամ: Իր նախապարտադրութեան ժամանակ նա ներշնչումներ ստացաւ, անշուշտ, թէ՛ Թիֆլիսի փոխարքայական պալատում եւ թէ՛ Պետերբուրգի պատշաճաւոր պաշտօնարաններում, եւ այդ պատճառով էր, որ նա, դեռ ոչինչ չարած իր հօտի հոգեւոր փրկութեան համար, անպարտում էր առաջ ու առաջ ձեռք առնել նրա քաղաքական ազատութեան գործը, յանձնելով այն ամբողջովին իր «պաշտելի միապետի» մեծառոգութեան»:

«Մի ուրիշ ժամանակ, այնպիսի մի ժամանակ, երբ ուսական քաղաքականութիւնը իմաստութիւն էր համարում ոչնչացնել հայերին, հոկտ. 9ի դիմումը ո՛չ միայն անպատասխան կը մնար, այլ եւ կը համարուէր մի կղերական ըմբոստացում: Բայց այս անգամ ա՛յլ էին Մեծաւոր-Արեւելեան քաղաքական հանգամանքները, որոնք եւ մտրակում էին ձարիզմին՝ իր գրկի մէջ առնել նոյն այդ հայերին»:

Ա.ՃԱՊԱՐԱՆՔԻՆ ՊԱՏՃԱՌԸ

Գէորդ Ե. Կաթողիկոսը ստիպուած էր անապարանքի գալ, յարուցանելով Հայկական Հարցը, որովհետեւ ինչպէս տեսանք, 1912ի Հոկտ. 2ին ծագեց էր արդէն Պալքանեան պատերազմը, եւ երիտասարդ Թուրքիոյ անկազմակերպ բանակները, առաջնորդուած ալիկար պետերէ, չարաչար պարտուած եւ վարկաբեկ եղեր էին Պալքանեան ազգայնական բանակներէն: Այս պարտութեան վրայ, երիտասարդ թուրքերը որոնց կառավարութիւնը կազմուած էր դեռ աւելի ազգայնամուլ, մոլեռանդ եւ սնապարծ կուսակցականներէ, կատաղութեամբ լեցուեր էին Ռուսաստանի դէմ, որուն թելադրութեամբ Պալքանեան ազգերը զէնքի զիմեր էին հողային նոր կցումներ ձեռք բերելու համար: Հազիւ Պալքանեան պատերազմը վերջացած, ահա միջազգային պատերազմի մը վտանգը կը սպառնար աշխարհս վեր ի վայր ընելու:

ԳԷՈՐԳ Ե. ՕՐՈՒԱՆ ՄԱՐԴԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապահովուած կարծելով ազատագրուած Հայաստան մը, դրուած ձարական իշխանութեան հօր պաշտպանութեան տակ, խանդավառուեցաւ եւ գլուխը կորսնցուց: *էջմիածնի վանքին չորս պատերուն մէջ քաշուած, ինքզինքը բացարձակ տէր եւ տնօրէն կը համարէր թրքահայութեան ճակատագրին, մանաւանդ որ Հայ մտաւորական դասը եւ քաղաքական դործիչներն ալ մեծ խանդավառութեամբ իրենց աչքերը յարած էին իր վրայ:*

«Եւ այնու ամենայնիւ, *կը գրէ Լէօ*, նա մի կարն միջոցում բեւեռեց իր վրայ ամբողջ հայ ժողովուրդի ուշադրութիւնը, դարձաւ քաղաքական մի շատ խոշոր գործիչ, որ նստած իր վանական հնաշէն խուցում, բանակցութիւններ էր վարում իր ներկայացուցիչների միջոցով եւրոպական մեծ պետութիւնների հետ, պայմաններ էր թելադրում, ծրագիրներ էր քննում: Եղաւ մի միջոց, երբ նա յաղթանակեց եւ արդէն թրքահայութեան փրկիչ էր դարձել: Բայց այդ մի երազանք էր, եւ իրականութիւնը, որի մէջ Սուրբնեանը բաց արաւ իր աչքերը, մի անհուն գերեզման էր, որի մէջ թաղուած էր թրքահայութիւնը. իսկ ինքը, միայնակ կայնած այդ գերեզմանի վրայ, անկարող էր այլեւս ո՛րքեւ բան տալու նրան, բացի իր խղուկ «Հոգւոցն հանգուցելոց»ից»:

Պատմական այս անողոք դատաստանը չափազանցուած է: *Կը հանգչի անհերքելի փաստերու վրայ:*

Արդարեւ, հայ կամ օտար պատմագիրը, ո՛ւր որ դառնայ, ո՛ր կողմ ալ գլուխը զարնէ փնտռելու համար թրքահայերու գլուխէն անցած փորձանքներուն ամենագարհուրելի ողբերգութեան պատճառը, անոր մտքին առջեւ միշտ պիտի ցցուին այս տասներկու գիրերով կազմուած չարագուշակ նախադասութիւնը. — «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ»ը, ծնունդ՝ Պերլինի ՅԵՐԷ անիծապարտ յօդուածին:

Թրքահայութիւնը արմատէն բնաջնջել, որպէսզի եւրոպական դիւանագիտութեան սեղանէն վերնայ թրքակառուցուցիչ «Հայկական հարց»ը: Անիկա երիտասարդ թուրքերուն պատասխանն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին, Հայկական Հարցին նոր արծարծման եւ այս հարցին թեւ ու թիկունք հանդիսացող Թուրքիոյ եւ թրքահայութեան ոխերիմ թշնամիին՝ ձարական Ռուսաստանին:

Կ. ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ
ՌՈՒՄ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՃԱՆԿԵՐՈՒՆ ՄԷՁ

Ռուս զիւանազիտութեան առաջին գործն եղաւ էջմիածնի Աթո-
ռէն առաջ, իր ճանկերուն մէջ առնել Կ. Պոլսոյ Պատրիարքարանը եւ
անոր միջոցով՝ Ազգային Վարչութեան անդամներէն ոմանք:

Երիտասարդ թուրքերու կատաղութիւնը իր ծայր աստիճանին
պիտի հասնէր, եթէ իմանար որ թրքահայութեան հոգեւոր պետը
միացած է Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, հետապնդելով Հայ-
կական Հարցը, զրուած Ռուսիոյ ձարին հովանաւորութեան տակ:

Չարական զիւանազիտութեան փայփայած ծրագիրը մեծ յաջո-
ղութեամբ գլուխ հանեց Կ. Պոլսոյ ղեսպանը, Գիրսն, որ թրքահա-
յերու բարեկամ ձեւանալով, յաջողեցաւ Հայոց Պատրիարքարանը իր
ճանկերուն մէջ առնել:

Դեսպանը, 1912ի Նոյ. 26ին, կը հաղորդէր Ռուսիոյ արտաքին
գործերու նախարար Սազանովին, թէ Կաթողիկոսին զիմումը կայ-
սեր, թրքահայերու անտանելի կացութեան մասին, կը հաստատուի
այն տեղեկութիւններու մէջ, որոնք ինքը ստացած է Անատոլիի ռուս
հիւպատոսական մարմիններէ, ինչպէս այն գանգատներուն մէջ, որ
Հայոց Պատրիարքը ներկայացուցած է Թուրք կառավարութեան:

Մէջբերելով այս գաղտնի վաւերագրի կարեւոր մասը, պատմա-
գիր Լէօ Կ'եղբակացեհ.- «Հայոց Պատրիարքարանի յիշատակութիւնը
իմֆընստիմֆեան մի ապացոյց է, որ Կ. Պոլսի հայ պաշտօնական շրջա-
նակներէն արդէն իսկ Գիրսին աշխատակցելու գործն յանձն առել, եւ
որ, այսպիսով, Գեորգ Կաթողիկոսը իմֆնաքերաբար չէր առել Հոկտ.
2ի քայլը, այլ թրքահայ ժողովուրդի պաշտօնական ներկայացուցիչ-
ների հաճութեամբ, եւ մանաւանդ այն, որ ռուսական ներշնչումները
պարարտ հող էին գտել եւ Կ. Պոլսի ազգային վարչութեան մէջ»:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ԶՆՇՈՒՄ՝ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ո՛վ որ մօտէն շփուած է Կ. Պոլսոյ հայերու Խորհրդարանի երես-
փոխաններու հետ, դիւրաւ կը հասկնայ այն մեծ ազդեցութիւնը որ
ունէին հայ ազգային քաղաքական գործիչները՝ Պոլսոյ Պատրիար-
քարանի վրայ. անոնք ամէնքն ալ մտաւորականներ էին, որոնք այդ
չըջանին՝ ամէն կողմէ եկեր էին Թուրքիոյ մայրաքաղաքը: Հետե-
ւաբար, զարմանալի չէ որ Ամենայն Հայոց կաթողիկոսներու նման
Թուրքիոյ Հայ Պատրիարքներն ալ իյնային անոնց ճշունմին տակ եւ
վարէին ազգային քաղաքականութիւնը: Ամէնէն հօգր եւ բանիբուն
կաթողիկոսները եւ պատրիարքները միայն ազատ էին անոնց ճշունմէն:

Սակայն ասոնց հետ միասին, ո՛չ էջմիածնի եւ ո՛չ ալ Պոլսոյ Պա-
տրիարքարանի պետերը ծանր մեղադրանքէ զերծ են, ըլլալով իրենց
պատկանած պետութեանց առջեւ պատասխանատու պետեր, մինչ
ազգային գործիչները՝ միայն անհատական պատասխանատուութիւն
ունէին:

ԳԱՂՏՆԻ ԿԱՊԵՐ

Թէ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը նետուեր էր ռուս ղեսպանին
ճանկերուն մէջ, կը հաստատուի պատմական փաստով մը: «Նոյն
1912ի վերջերին, կը գրէ Լէօ, Պետերբուրգի հայկական կոմիտէի ան-
դամներից երկուքն ուղարկուեցին Կ. Պոլիս, ծանօթանալու համար
թէ ինչպէս էին այն տեղի վարիչները վերաբերում Հայոց հարցի այս
նոր արծարծման»:

Յայտնի է թէ գաղտնի կապեր կային ռուսական եւ թրքահայ
ժողովուրդի պաշտօնական ներկայացուցիչներու միջեւ: Ձեռագիր
վկայութիւն մը կայ, որ լաւ կերպով կը բացատրէ այս պարագան:
Ռուսահայ պատուիրակները կը գրէին իրենց գեկուցման մէջ: Ահա
ձեռագիր պատճէնը, զտնուած Ազգային Պիւրոյի թուղթերուն մէջ:

«Երբ Ամենայն Հայոց սրբազնագոյն կաթողիկոսը իր զիմու-
մով ռուսական կառավարութեան պաշտօնապէս բարձրացրեց Հայոց
Հարցը եւ պատասխանատուութիւնը վերցրեց իր վրայ, ազգային
վարչութիւնը հնարաւորութիւն ստացաւ ձեւականօրէն հետաքննել
իրեն պաշտօնական մասնակցութիւնից այս միջնորդութեան մէջ մի-
ջազգային ժողովի առջեւ. բայց ազգային վարչութիւնը, հասկնալի
պատճառներով, հեռու պահելով բացարձակ ելոյթից, միեւնոյն ժա-
մանակ հարկաւոր է համարում տեղեակ պահել, աջակցել եւ մասամբ
նաեւ ղեկավարել կաթողիկոսի նրա զիմումների մէջ ուղղուած պե-
տութիւններին: Այս նպատակով էլ նա ընտրել է յիշած յանձնաժո-
ղովը պարտաւորեցնելով նրա ամէն բանի մէջ գործել Հայոց եկե-
ղեցու գլխի հետ միաբան եւ Հայոց տալ նրան աջակցութիւն, տալով
նրան անհրաժեշտ նիւթեր, տեղեկութիւններ եւ նկատառումներ»:

ՁԱՐԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԹԱՔՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ

Պոլսոյ մէջ կային բանիբուն հայ մարդիկ, որոնք ուշի-ուշով
հետեւած ըլլալով հայկական հարցի զանազան փուլերուն, եւ անոնց
բերած մեծամեծ ազդեցութիւն, սարսուռ գգացին, երբ լսեցին հրա-
պարակ նետուած Հայկական Հարցին նոր արծարծումին լուրը, եւ

այն ալ Պալքանեան պատերազմի նախօրեակին, ուր երիտասարդ Թուրքիան մատուած էր ծանր ճգնաժամի մը:

Անոնց սուր եւ թափանցող աչքերը, այդ արարքին մէջ նշմարեցին իսկոյն Ռուսիոյ մատը, որ նենգամտօրէն վարագոյրի տակ ծածկուած, մէջտեղ նետեր էր Հայոց ազգի երկու պատասխանատու հոգեւոր պետերը, անոնց վիզին փաթթելով Հայկական Հարցին նոր արծարծումը, իրագործելու համար իր հայաջինջ նպատակը:

Ձարական կառավարութիւնը շատ լաւ գիտէր թէ Պալքանեան պատերազմին շուտով պիտի յաջորդէր համաշխարհային պատերազմը, որուն ընթացքին կը կարծէր թէ «հիւանդ մարդը» իր վերջին շունչը շուտով պիտի փչէ, ուստի մէջտեղ հանել տուաւ Հայկական Հարցը, որուն պաշտպանը կը հանդիսանար ինքը՝ ձարը, թրքահայերը պաշտօնապէս իր հովանաւորութեան տակ առնելով:

Պերլինի դաշնագրին ՅԱՐԴ յօդուածին վրայէն անցեր էին 32 երկար տարիներ, եւ ինքը՝ ձարական Ռուսաստանը, ինչպէս իր հլու եւ կամակատար դաշնակից Ֆրանսան, եւ անոր բարեկամ դարձած Անգլիան, ո՛չ մէկ վճռականութիւն եւ գուժ ցոյց տուեր էին դէպի տառապող թրքահայ ժողովուրդը, որ հայկական հարցի լուծման համար հեղեղօրէն արիւն եւ արցունք թափեր էր: Իսկ ինքը եւ իր հաւատարիմ դաշնակիցը եւ նոր բարեկամը, անկարեկից, ձեռքերին ծայած, ակամատեօրի դերը կը կատարէին, մինչդեռ վճռական միջոցներով եւ իրական սպառնալիքով կարող էին արիւնը դադրեցնել, պահանջելով եւ գործադրել տալով դաշինքով խոստացուած բարենորոգումները: Ընդհակառակն, Նիկոյա Բ. Ձարն էր որ կը զինէր ու կը քաջալերէր Ապտ-Իւլ-Համիտի ձեռքը, որ կոտորէ հայերը եւ իր հինգ մեծ ընկերներն ալ, որ հանդիսաւոր դաշինքին ՅԱՐԴ յօդուածին գործադրութիւնը երաշխաւորեր էին, մեկուսի կեցած կոկորդիլոսի արցունքներ կը թափէին: Իսկ եթէ երբեմն վեց մեծերու դեսպանները իրեն վրայ ծիծաղող կարմիր Սուլթանին կը դիմէին, բարենորոգումներու հարցը ործարծելով, պարզապէս անոր համար էր, որ անկէ նոր առանձնաշնորհումներ կորզեն, կուրծքերնին նոր քրանշաններով զարդարեն, դրամական առատ գումարներ ստանան: Այնքան զօրաւոր է կաշառքի ոյժը, որ ամէնէն շատախօս լեզուներն ալ լռութեան կրնայ դատապարտել:

Արդեօք ի՞նչ անցած դարձած էր որ անողորմ ձարը յանկարծ իր գլխութեան հովանին տարածեց թրքահայերուն վրայ: Արդեօք իր թմրած խի՞ղճն էր որ արթնցեր էր, որուն վրայ ծանրացած էր 300.000 անմեղ հայերու արիւնը: Ո՛չ: Ձարական զիւանագիտութեան չարամիտ նպատակն էր երիտասարդ թուրքերու կատարութիւնը աւելի բորբորեղ, որպէսզի անոնց գործադրեն այն ահաւոր սպանալիքը: Անոնք հազիւ իշխանութեան զլուխ անցած, խրոխտանքով յայտարարեր էին

Հայոց քաղաքական գործիչներուն.— «Եթէ օտար միջամտութիւն հրաւիրէք Թուրքիոյ ներքին գործերուն մէջ, այնպիսի կոտորած մը պիտի սարքենք, որուն քով Սուլթան Համիտին կատարած ջարդերը երեխայի խաղալիք ըլլան»:

Մնացածը շատ պարզ էր: Թրքահայութեան ի սպառ բնաջնջումը՝ իր հայրենի հողերուն վրայէն. ուստի դատարկուած Թրքահայաստան մը, ռուսական նահանգի մը վերածուած, իրագործելու համար Լորանդի եւ Ռոստովսկիի շնականօրէն բանաձեւած ծրագիրը: Թրքահայութեան բնաջնջումը պիտի ըլլար ռուսական զիւանագիտութեան յաղթանակը:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՀԱՒՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Լոյսի պէս պայծառ է որ ձարական զիւանագիտութիւնը մանրակրկիտ հաշիւներով իր ճանկերուն մէջ առնելով էջմիածինը եւ Գում-Գարուն, երկուքն ալ Հայերու պաշտօնական ներկայացուցիչները, անոնց միջոցով ուղղակի պիտի հասնէր իր չարամիտ նպատակին:

Իսկապէս Ամենայն Հայոց կաթողիկոսները, ո՛չ մէկ քաղաքական իշխանութիւն ունէին Ռուսաստանի հայերուն վրայ, անոնց իրաւասութիւնը «Մայրագոյն Պատրիարք» շողչողուն տիտղոսին տակ, ամփոփուած էր միայն եկեղեցական գործերու մէջ եւ այն ալ կը գտնուէր ձարական կառավարութեան խիստ հակադէմի տակ: Անոնք նոյնիսկ հրաման չունէին իրենց Աթոռէն շարժելու՝ առանց ռուս կառավարութեան արտօնութեան: Հակառակ ասոր, Ամենայն Հայոց Կաթողիկոսի իշխանութիւնը կը տարածուէր Թուրքիոյ, Պարսկաստանի, Պալքանեան երկիրներու, արեւմտեան Եւրոպայի, Ամերիկայի, Հնդկաստանի եւ աշխարհի ամէն կողմ ցրուած հայերու վրայ, որոնք դարերով սովոր էին աչքերնին դարձնել դէպի էջմիածին Աթոռը, իբր տեղակալ՝ արքայական կործանած Գահին:

Թուրքիոյ պատրիարքական Աթոռի պարագան բոլորովին ուրիշ բան էր:

Սուլթանական «Ֆերման»ներու զօրութեամբ ձոխացած, անիկա բոլորովին առանձնաշնորհալ զիրք ունէր: Ո՛չ միայն հօտին կրօնական պետն էր, այլ քաղաքական ամենաբարձր պաշտօնեայ մը, պատասխանատու՝ Սուլթանին առջեւ: Անոր իրաւասութիւնը կը տարածուէր ո՛չ միայն Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ սպորդ հայերու վրայ, այլ եւ քաղաքական իրաւասութիւն ունէր արտասահմանի մէջ ցրուած թրքահայատակ հայերու վրայ եւ այդ հանգամանքով ալ պատասխանատու էր Բարձրագոյն Դրան առջեւ: Իրաւունք ունէր նաեւ տեսնելու եւ տեսնուելու օտար պետութեանց

դեպպաններուն եւ կամ անոնց ներկայացուցիչներուն հետ, որով անոր պատասխանատուութիւնը աւելի ծանր կը կշռէր:

Այսպիսի արտօնութիւններով ճոխացած Պատրիարք մը, իր ուսերուն վրայ կը կրէր պատասխանատուութեան ծանր բեռ մը: Անոր առած մէկ սխալ քայլը պետական շահերու հակառակ, մանաւանդ օտար պետութիւններու միջամտութիւն հրահրող փորձ մը իսկ Թուրքիոյ ներքին գործերուն մէջ, եղբրական յանցանք կը համարուէր սուլթանական կառավարութեան առջեւ, եւ այդ պարագային պատրիարքին հետ թրքահայ ժողովուրդն ալ պետութեան ապահովութեան դէմ դաւաճանել կը նշանակէր:

Այս ուղիղ ճամբէն չէին շեղած Մատթէոս Բ. եւ Գէորգ Գ. կաթողիկոսները, երկուքն ալ թրքահայութեան պատրիարքներ: Ինչպէս տեսանք, կաթողիկոսական Աթոռ բարձրացեր էին, խաբելով ոռոս կառավարութիւնը, որպէս թէ ոռոսական շահերուն գործիք պիտի դառնային Թուրքիոյ դէմ: Հազիւ կաթողիկոս օծուեցան, թիկունք դարձուցին ձարական Ռուսաստանին, հաւատարիմ մնալով Թուրքիոյ, ուր թէեւ հայ գիւղացիութիւնը սաստիկ կերպով ճնշուած էր, բայց եւ այնպէս՝ կը վստելէր կրօնքի եւ ազգային մշակոյթի ազատութիւնը:

Ասկէ գտա, անոնք սպրելով կողք կողքի հայ փորձառու ամիրաներուն հետ, անոնց չափ թափանցեր էին արեւելեան խորամանկ քաղաքականութեան մէջ: Միշտ աչքի առջեւ ունէին «Տնեւէր»ի պատրիարքարանը, որուն դրան առջեւ կախուեցաւ Սուլթան Մահմուտ Բ.ի հրամանով, «Օրթոտոֆս» եկեղեցիի տիեզերական Պատրիարքը եւ ուրիշ վեց եպիսկոպոսներ Պոլսոյ թաղերուն մէջ ենթարկուեցան միեւնոյն ճակատազրին, պարզ անոր համար՝ որ անոնք յունական ապստամբութեան մասնակից նկատուեր էին: Պոլսոյ Պատրիարքը միշտ մտքին մէջ պէտք էր սեւեռած ըլլար սուլթանական «ջարդարար դպրոց»ը:

ՓԱՍՏԱՏԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Զէյթունը շատ անգամ, զէնքը ձեռքերուն մէջ, ապստամբեր էր սուլթանական կառավարութեան դէմ, տիրանալու համար իր կատարեալ ինքնավարութեան: Եւ սակայն, այս ըմբոստացումները ո՛չ մէկ արձագանգ գտեր էին Օսմանեան կառավարութեան քով եւ հայկական միւս զաւառներուն մէջ, որովհետեւ այդ ըմբոստական շարժումներուն մէջ, պատրիարքարանի մասնակցութիւնը չկար, հետեւաբար նման շարժումներ կը համարուէին սեղական խլրատումներ, որոնք սովորական դէպքեր էին Փոքր Ասիոյ մէջ:

Ուրիշ բան էր 1862ի Զէյթունի ապստամբութիւնը, որ ա՛յնքան աղմուկ հանեց, նոյնիսկ եւրոպական երկիրներու մէջ, այնպէս որ Վիկտոր Լանկլուս «Հայկական Հարցի» սկզբնաւորութիւն համարեցաւ այդ թուականը:

Այդ ապստամբութիւնը, պատրաստուած Կ. Պոլսոյ մէջ՝ կովկասահայ յեղափոխական Միքայէլ Նալբանտեանէն, հիմնադիր թրքահայ յեղափոխութեան, ունէր քաղաքական որոշ ծրագիր եւ կազմակերպուած գինական շարժում:

Ամպերու մէջ սպրող կովկասահայ յեղափոխականը, Զէյթունը ապստամբեցնելով թուրք կառավարութեան դէմ, կը հետապնդէր մանկական փորձ մը: Անոր նպատակն էր՝ որ եթէ զէյթունցի լեւոնական գիւղացիները յաջողէին զէնքի ոյժով ինքնավարութեան տիրանալ, այդ փորձը կատարել պիտի տար բուն Հայաստանի գիւղացիներու ձեռքով, կերտելու համար ազատ եւ ինքնավար Հայաստան մը:

Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ խիստ միջոցներ շառաւ, ակնածելով նափոլէոն Գ. կայսրէն, որուն հետ կապուած էր բարեկամական սերտ կապով: Սակայն անոր յաջորդը՝ Ապտ-իւլ Համիտ, արեան մէջ խեղդեց այդ ապստամբութիւնը եւ Զէյթունը իր կէս անկախութիւնն ալ կորսնցուց: Հակառակ ասոր, հայկական զաւառներուն մէջ ո՛չ մէկ կոտորած տեղի ունեցաւ, որովհետեւ Պատրիարքը ապստամբական շարժման հետ կապ չուներ:

Շատ մը օրինակներու մէջ, յիշենք միայն աչքի զարնող դէպք մը, որուն ես եղած եմ ակնատես եւ ակնաշարուր վկան:

Երբ Երլարզի համիտեան մղկիթին առջեւ ոււմը մը նետուեցաւ, Ապտ-իւլ Համիտի կեանքը վերցնելու համար, ես այդ պահուն կը գտնուէի Գաղկեդոնի Գատը-Բէօյի Միթիթարեան վարժարանի դրան առջեւ, ուր կը սպասէի կառքի մը, երթալու համար Սկիւտար, Պէրպէրեան վարժարանը, ներկայ գտնուելու համար պարզեւարաշխութեան հանդէսին: Ռումբի պայթումը այնքան սարսափելի էր, որ վարժարանի ամրակուռ շէնքը ուժգին ցնցուեցաւ: Ո՛չ մէկը կրցաւ մեկնութիւն մը տալ:

Հանդէսին կը նախագահէր Մաղաբիա Օրմանեան Պատրիարքը, որ ուրախ զուարթ կը խօսակցէր շուրջիններուն հետ: Երբ հանդէսը բաւական առաջ գացած էր, տիրադէմ եւ շուարած մարդ մը մօտեցաւ Պատրիարքին եւ անոր ակնաշին բաներ մը փսփոսաց: Օրմանեանի գոյնը շրջեցաւ: Երբ հանդէսը վերջացաւ, Պատրիարքը, ոտքի, այս բառերը արտասանեց. «Բու՛մը մը նետուել է կայսերական մզկիթին առջեւ, նորին վեհափառութեան կեանքին դէմ: Բայց, փառք Աստուծոյ, Վեհափառ Սուլթանը մահափորձէ ազատը է»: Եւ անմիջապէս մեկնեցաւ, երթալու համար կայսերական պալատ, Սուլթանին ներկայացնելու համար թրքահայ ժողովուրդին հաւատարմական զգացումները:

5363

Հանդիսականները քարացած մնացին, որովհետև մինչև այդ օրը այդպիսի ծանրակշիռ դէպք պատահած չէր մայրաքաղաքին մէջ:

Դարձիս, կառքին մէջ, ծունկերս կը դողային, աչքիս առջև բերելով այդ բիւրաւոր անմեղ հայերը, որոնք զոհ պիտի երթային Սուլթանին ջարդարար հրամանին: Կէս ճամբան, կառքս կեցուց լրտեսութիւն սիրող հայ մը, զաւակ ազնուատոհմ եւ ազգասէր հայ կաթողիկէ գերզաստանի մը, որ այլապէս ղէմքով մը ինծի ըսաւ. - «Վարդապետ, իմացա՞ր եղածը», երբ ո՛չ պատասխանեցի, աւելցուց. - «Ումը մը նետեր են Վեհափառ Սուլթանը սպաննելու համար, անմիջապէս կը մեկնիմ պալատ, իմ ներկայութիւն կարեւոր է»:

Ես որ ժամէ ժամ կը սպասէի իրարանցումի մը, տեսայ որ խոռված ղէմքեր ազատօրէն կը շրջազայէին, բայց միշտ ահուզողի մէջ:

Պոլսեցի տարիքոտ մարդիկ անշուշտ լաւ կը յիշեն Նըլտըզի պալատին մէջ սկսած զատական ատեանը, որ ամիսներով հարց ու փորձեր կատարեց, ումբին զերակատարները ճշտելու եւ դախին պատասխանատու անձերը գտնելու:

Ապտ-իւլ Համիտ վարազոյրին ետեւ նստած կը հետեւէր հարցաքննութեանց: Եւ որովհետև ուումը նետողը հայ մըն էր, Սուլթանը ուզեր էր հասկնալ թէ Պատրիարքը կամ ազգային Վարչութեան անդամները նախապէս տեղեակ եղե՞ր են մահափորձի պատրաստութեան: Եւ երբ ստուգեր է որ անոնք անտեղեակ եղած են ղէպքին, հանդարտեր է, որով ո՛չ մէկ հայու քիթը արիւնոտեցաւ:

Այս պարագան ինծի պատմեր է նոյնինքն Օրմանեան Պատրիարքը: Դարձնենք այժմ մետալին միւս կողմը:

Տեսանք թէ ի՛նչ արքայական փառքով նորընտիր Իզմիրլեան Պատրիարքը, Սուլթանական կառավարութենէն նկատուած օտար միջամտութիւններու կուսակից եւ հայ քաղաքական գործիչներու մարդը, անցաւ Նըլտըզի պալատի առջեւէն իր յաղթական մուտքը գործելու Կ. Պոլսոյ մէջ: Եւ սակայն քանի մը օրէն ան իր փառքի գագաթէն վար պիտի իջնէր, բուրձով եւ մոխիրով ծածկուելու, ողբալու համար 20.000 անմեղ հայերու կեանքը, որոնք ինկան բարդաւաճ, հարուստ եւ մինչև այն ատեն ջարդերէ զերծ մնացած Ատանայի փողոցներուն մէջ: Թէ ո՞վ էր կոտորած հրամայողը, զեւ մինչև այսօր գաղտնիք մըն է: Սակայն մարդոց կարծիքն այն է, թէ երիտասարդ թուրքերու զրդումով այդ ահաւոր կոտորածը կատարուած էր, փճացնելու եւ տկարացնելու համար Ատանան, որ դարձեր էր վերակազմեալ հնչակեաններու յեղափոխական կեդրոնը. միւս կողմէ նախկին Մուշեղ արք. Սեդրեան, որ Ատանայի վայրին խորխտանքով սպառնացեր էր թէ «իմքը իր ետեւ ունի բառատուն հազար կիլիկեցի սպառազինուած զինուորներ, որով ոչ մէկ բանէ չի վախեր»: Այս գրգռիչ լեզուն՝ վճռական դեր կատարեր է այդ ջարդերուն մէջ:

Ահա թէ ի՛նչ փրկարար կամ աղիտաւոր դեր կը կատարէին պատրիարքները՝ թրքահայ ժողովուրդի ճակատագրին վրայ: Եթէ անոնք պատմական փորձառութիւններով լեցուն մարդիկ ըլլային, դիւրաւ կը թափանցէին եւրոպական չարամիտ քաղաքականութեան մէջ, որով բնականաբար կը մերժէին այդ օտար քաղաքականութեան գործիք դառնալ: Իսկ այն պատրիարքները, որոնք չէին զիտցած կամ չէին ուզած պատմական փորձառութիւններէ դասեր քաղել, դիւրին որսեր եղան եւ ապա գործիք՝ այդ օտար քաղաքականութեան, ծանրապէս վտանգելով իրենց հօտին ճակատագիրը:

Փաստերը այնքան առատ եւ խօսուն են, որ մէկը սոփեստ պիտի ըլլայ եթէ ելլէ առարկէ յիշեցնելով ժողովրդական իմաստուն առածը թէ «կառքը կոտորելէ վերջ, ցամաքայ ցուցնողները շատ կ'ըլլան»:

Այդպիսին՝ պիտի կարգայ գործիս վերջաւորութեան թէ ահռելի ողբերգութենէն ետքն ալ նո՛յն այդ Հայկական Հարցը որ թրքահայութիւնը ջնջեր էր, ինչպիսի զաւելջտական կերպարանք ստացաւ Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ եւ որուն իլացուցիչ ծափերով հաւանութիւն տուաւ ներկաներու մեծամասնութիւնը, քաջալերելով այդ անապարծ ժողովին կազմակերպիչները:

Կ. ՊՈԼՍՈՅ ԹՐԻՔԱՍԷՐ ԵՒ ՌՈՒՍԱՍԷՐ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

Հայկական Հարցին նոր արծարծումը եւ Նիկոլա Բ. ճարին թրքահայերը իր հովանիին տակ առնելու լուրը, թափանցեր էր նաև ժողովրդական խաւերու եւ հասարակաց հարցերը ներկայացնող Պոլսոյ հայ մամուլի էջերուն մէջ ալ:

Թրքասէր հոսանքին գլուխ կանգներ էին կարգ մը զիտակից եւ խոհեմ հայեր, որոնց մէջէն ամէնէն եռանդուն թրքասէրն էր՝ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան, այդ ժամանակ Թուրքիոյ արտաքին գործերու նախարարը, եւ հետեւաբար քաջատեղեակ՝ միջազգային քաղաքականութեան մէջ անցած դարձած խաղերուն, եւ որ օր մը, թրքահայութեան ջնջումէն ետք, ստիպուեցաւ պանդուխտի դաւազան առնել եւ ապաւինիլ Փարիզ:

Թրքասէր հոսանքին բերանն էր «Բիւզանդիոն» լուրջ թերթը, որուն հիմնադիր խմբագրապետն էր Բուզանդ Քէչէեան, խոհեմ եւ հեռատես մարդ, որ ուշադրութեամբ կը հետեւէր «Թայմ» անկախ եւ հեղինակաւոր օրաթերթի «առաջնորդող յօդուած»ներուն:

Այդ գործնական միտք ունեցող կեսարացի հայը, իր խմբագրականներով մեծ ազդեցութիւնը ունէր նաև այն հայերուն վրայ ալ, որոնք փորձառութեան մէջ թրժուած մարդիկ էին:

Ահա թէ ի՛նչ կը զրէր «Բիւզանդիոն» թրքահայ գործիչները եւ մտաւորականները զգաստութեան ճամբու վրայ դնելու համար.-(ԽՄԲՐ՝ քննադիրը կիսատ մնացած է):

ԳԵՆՐԳ Ե. ԵՒ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱԶԿՈՎ ԶԵՌՔ ԶԵՌՔԻ

Սուրէնեան Կաթողիկոսը երազելով թրքահայութեան ազատագրումի մտաւորատ արշալոյսը, էջմիածնի վեհարանը դարձուց քաղաքական գործունէութեան կեդրոն, որուն վրայ սեւեռներ էին, ինչպէս տեսանք, համօրէն հայութեան աչքերը: Օրէ օր, Սուրէնեան աւելի խրոխտ եւ յանդուգն կը դառնար, կռնակը տուած հօր Ռուսաստանին, որ առիթը չէր փախցնէր կաթողիկոսին աչքին շողացնելու «բարեկորոզումներու» կնճոտ հարցը:

Այս միամիտ հաւատքով զօրացած, ան դե՛ռ աւելի ամուր սիրով կապուեցաւ կոմս Վորոնցով-Դաչկովին, որ ուշի ուշով կը հետեւէր կաթողիկոսի ամէն մէկ քաղաքական քայլին, մինչեւ որ ծածկամիտ միջոցներով յաղթեցաւ անոր լիուլի վստահութիւնը զբաւել՝ դառնալով անոր չար խորհրդատուն:

Վորոնցով-Դաչկով թրքահայութեան նոյնքան կատաղի կուսակիցն էր, որքան էր Ռուսիոյ նախկին դեսպանը՝ իշխան Լորանով-Ռուսաովսքի: Միակ տարբերութիւնն այն էր, որ ան այդ բարձր գիւնագիտական ներկայացուցիչին պէս հրապարակաւ եւ շնականօրէն Ներսէս Վարժապետեան Պատրիարքին առջեւ իր բաժակը չէր պարպեր «Հայաստանի կեանքը» եւ միւս կողմէ կը յայտարարէր թէ «Հայաստանը կ'ուզէ առանց հայերու»:

Եւ Սուրէնեան Կաթողիկոսը, միամիտ եւ բարեսիրտ մարդ, չէր կարող ի հարկէ միտքը պահել այս անպարիշտ բանաձեւը, թէեւ ուրիշ բազմաթիւ ազդեցիկ օրինակներ ալ կային իր աչքերը բանալու, եթէ խանդավառուած եւ զլուխը կորսնցուցած ըլլալուն տեղ՝ իրատեսն ըլլար:

Ընդհակառակն, Կովկասի փոխ-արքան, հագած հայասէրի պատմունճան, ինքզինքը միշտ ցոյց կու տար իբր հայութեան անկեղծ բարեկամ, որով զարմանալի չէր որ կաթողիկոսը եւ Վորոնցով-Դաչկովը թեւ թեւի քայլէին:

Իրապէս, կաթողիկոսը գիտէր թէ ի՛նչ ազդեցութիւն ունէր այդ ձարական ծեր աղուէսը, տկարամիտ Նիկոլա Բ.ի վրայ, ինչպէս ժամանակին ունէր Միհր-Ներսէս վարդապետը՝ Յաղկերտ Բ.ի պէս յեղ-յեղուկ մարդու մը վրայ: Ան էր, ինչպէս գիտենք, որ մեծ արքային ներշնչէր էր բռնի ոյժով հայերը նետել Մազզէզի գիրկը:

Գչորդ Ե. Կաթողիկոսը կը կարծէր թէ բարեկամական սերտ կապեր հաստատելով փոխարքային հետ, ձարական հովանաւորութիւնը վերջնականապէս կ'ապահովէր:

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎՐ

Այն օրէն ի վեր, երբ յայտնի եղաւ թէ Սուրէնեան Կաթողիկոսը պաշտօնական դիմում կատարէր է ձարին մօտ, Հայկական Հարցին լուծումը անոր հայրենական թագաւորութեան յանձնելով, Թիֆլիսի վրայ, աւելի ճիշտ Հայոց մայրաքաղաքը, հայ ազգային լայն գործունէութեան մը վառարանը դարձաւ:

Ժամանակը ստիպիչ էր: Պալքանեան ազդերու բանակներն ամէն օր յաղթանակէ յաղթանակ կ'ընթանային, երիտասարդ Թուրքիան ենթարկելով նուաստացուցիչ ամօթի մը:

Եւրոպական մեծ պետութիւնները, ժամանակը յարմար դատեցին թուրք-պալքանեան պատերազմին վերջ դնելու. որոշեցին Լոնտրայի մէջ դեսպանախորհուրդ մը դուրսարել, կարգադրելու համար թուրք-պալքանեան վէճը, մանաւանդ որ կայսերապալա Գերմանիան, ոտքէն մինչեւ գլուխը սպառազինուած, յարմար առիթի կը սպասէր տարիներէ ի վեր սպառնացող չոր վառօղջ պայթեցնելու համար: Նոյն տրամադրութեան մէջ էր նաեւ Աւստրիա-Հունգարիան, որ իր քաղաքական ու տնտեսական կենսական շահերուն հակառակ կը նկատէր իրեն սահմանակից Մեծ-Սերպիան, ենթարկուած ուսական թեւարկութեան: Այս մտահոգութենէն մղուած, Աւստրիան ալ առիթի կը սպասէր իր սուրը պատեանէն քաշելու համար:

Ահա այս անստոյգ եւ տաղնապեցուցիչ շրջանին էր որ Թիֆլիսի եւ Ռուսաստանի զանազան հայաշատ տեղերու մէջ, աչքի զարնող ազգային քաղաքական գործիչները եւ զբաղական հրապարակի վրայ ծանօթ հայ մտաւորականները, հայրենասիրական պարտք սեպեցին, քով քովի դալ եւ զլուխ-զլուխի խորհրդակցիլ օրուան հրատապ խնդիրներուն եւ թրքահայութեան ապահովութեան մասին:

Այս տաղնապի եւ յոյսի փոթորիկէն է ծնած Թիֆլիսի երկու համագումարները, որոնք իրենց խորքին մէջ ուրիշ բան չէին՝ բայց եթէ խորհրդակցական ժողովներ:

Թիֆլիսի առաջին համագումար ժողովը տեղի ունեցաւ 1912ի Հոկտեմբերի վերջերը: Ապագային հիմնուելիք «Ազգային Բիւրոյի» զեկոյցը այսպէս կը ներկայացնէ համագումար ժողովին սկզբնաւորումը:—

«Միաժամանակ Բաբուում եւ Թիֆլիսում միտք ծագեց հրաւիրել զանազան հայաբնակ վայրերի ներկայացուցիչներին մի համագումար,

խորհրդակցելու համար օրուայ այդ հրատապ խնդրի մասին... : Ժողովին ներկայ էին պատգամաւորներ Բաբուից, Նրեւանից, Ախալ-
ֆալաֆից, Պաքումից եւ այլ տեղերից. իսկ Թիֆլիսից՝ զանազան
կուլտուրական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ...» :

Վերոյիշեալ գեկուցման համաձայն, ժողովը ունեցաւ երկու նիստ, եւ իբր օրակարգ հետեւեալ երկու կէտերը.-

Ա. Հրաւիրել մօտ ապագային, աւելի լայն կազմով նոր համա-
գումար մը, կարելի եղածին չափ բոլոր հայաբնակ վայրերու ներկա-
յացուցիչներէն, ընտրելու համար լիազօր մարմին մը՝ Հայկական
Խնդրին շուրջը աշխատելու համար :

Բ. Դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խնդրել որ ան յա-
նուն հայութեան դիմում կատարէ նորին մեծութեան ուսաց կայսեր,
օգնութեան հասնելու համար թրքահայ ժողովուրդին այս աագնա-
պալից օրերուն :

«Ժողովն այս մտով մշակեց բանաձեւ մը եւ յատուկ պատգա-
մաւորութեան ձեռնով գայն ներկայացուց վեհափառ կաթողիկոսին :

Նոյն ժողովին մէջ խնդիր եղեր էր նաեւ թրքահայերու ինքնա-
պաշտպանութեան մասին. բայց մեծամասնութիւնն որոշեց սահմա-
նափակուիլ դիւանագիտական դիմումներով :

Համագումարը, կ'ըսէ նոյն գեկուցը, ընտրեց մի ժամանակաւոր
Բիւրոյ, բաղկացած եօթը հոգուց. Ա. Յարութիւնեան, Ա. Խատիսեան,
Ա. Քալանդար, Հ. Առաքելեան, Ա. Պօղոսեան, Յովհ. Թումանեան,
Ն. Աղբալեան...» :

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

Համագումարը որոշեր էր նաեւ որ ժամանակաւոր Բիւրոն զբաղէր
ընթացիկ հարցերով եւ պատրաստութիւն տեսնէր Թիֆլիսի մէջ նոր
եւ աւելի բազմամարդ համագումար մը :

Այդպէս ալ եղաւ : «Նոյնմբեր 25ին, նոյն քուին, Թիֆլիսի մէջ
տեղի ունեցաւ Բ. համագումար ժողովը, որուն ներկայ էին պատ-
գամաւորներ, Թիֆլիսէն, հին Նախիջեւանէն, Շուշիէն, նաեւ ներ-
կայացուցիչներ Թիֆլիսի հայ կաթողիկէ համայնքէն, ներկայացու-
ցիչներ Մշակի եւ Հորիզոնի խմբագրութիւններէն : Ժամանակաւոր
Բիւրոյի գեկուցումէն յետոյ քննութեան դրուեցան միեւնոյն երկու
խնդիրները, այն է դիւանագիտական միջնորդութիւն եւ ինքնա-
պաշտպանութիւն : Հարցերու քննութեան յետոյ ժողովը հրահանգ-
ներ մշակեց ընտրուելիք Բիւրոյի համար...» :

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻ

Համագումար ժողովը, իր որոշումին համաձայն, ընտրեց դիւա-
նագիտական ուժեղ եւ հեղինակաւոր մարմին մը, որ կոչուեցաւ
«Թիֆլիսի ազգային Բիւրոյ» : Իսկ ժողովը անոր հրահանգներ տուաւ,
յանձնարարելով .

Ա. «Օժանդակել նորին վեհափառութիւն կաթողիկոսին իր գոր-
ծունէութեան մէջ, հայկական Հարցի վերաբերմամբ» :

Բ. «Կապեր հաստատել Պոլիս, Փարիզի եւ ուրիշ հայ վայրերի
հայ մարմինների հետ, որոնք նպատակ ունին աշխատելու Հայոց
Հարցին համար» :

Գ. «Պրոպագանտի միջոցով նպաստաւոր տրամադրութիւն ստեղծել
նուս հասարակական եւ վարիչ շրջանների մէջ դէպի Հայոց Հարցը» :

«Գալով ինքնապաշտպանութեան խնդրին, ժողովը միաձայն ըն-
դունեց նրա կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, բայց պար-
տաւորիչ որոշումներ չկայացրեց Բիւրոյի համար այդ խնդիրների
վերաբերմամբ : Միեւնոյն ժամանակ, համագումարը յանձն տուաւ՝
կարիքի դէպքում նիւթական օժանդակութիւն հասցնել Բիւրոյին» :

Յայտնի է որ Թիֆլիսի ազգային Բիւրոյի գլխաւոր գործունէու-
թիւնը պիտի ըլլար, մէկ կողմէ Թիֆլիսի փոխ-արքայական պալատը
կապել էջմիածնի վեհափառին հետ եւ միւս կողմէ ուղղութիւն տալ
կաթողիկոսի քաղաքական գործունէութեան, քանի որ միջազգային
դիւանագիտական միջնորդութիւն երթալով կը միագնէր : Բայց, այս-
պիսի ուժեղ եւ հեղինակաւոր մարմին մը, ինչպէս էր Թիֆլիսի ազ-
գային Բիւրոն, պէտք էր օրինաւոր կերպով ճանչցուիլ ձարական
կառավարութենէն :

Բայց Թիֆլիս՝ Կ. Պոլիս չէր, ուր թրքահայերը ունէին պետա-
կան օրէնքով հաստատուած Սահմանադրութիւն իր Ազգային երես-
փոխանական, վարչական եւ խառն ժողովներով. առանձնաչոր-
հումներ, որոնք երբեք գոյութիւն ունեցած չէին եւ այժմ ալ չունին
Ռուսաստանի մէջ :

Ուրեմն, ո՛րեւէ հիմ չկար ոտքի կանգնեցնել ներկայացուցչա-
կան պաշտօնական մարմին մը, որ փոխ-արքայական պալատը կապէր
էջմիածնի վեհափառին հետ : Այսպիսի հիմնարկութեան մը հնարքը
գտան կովկասահայութեան մտաւորական քանի մը ներկայացուցիչ-
ները, որոնք մուտք ունէին փոխ-արքայական պալատի մէջ :

Շնորհիւ այդ ջանքերուն, հիմնուեցաւ փափաքուած ներկայա-
ցուցչական մարմինը, որ կոչուեցաւ «Թիֆլիսի ազգային Բիւրոյ»
որ թէեւ չհաստատուեցաւ կառավարութեան կողմէ, բայց կը գոր-
ծէր արձակ համարձակ փոխ-արքայական ստիկանութեան բարեհաճ

ակնարկին տակ, քանի որ ան կապ պիտի ըլլար փոխ-արքային եւ կաթողիկոսին միջեւ:

Այս հիմնարկութիւնը կը յիշեցնէ Ֆրանսական յեղափոխութեան օրով հաստատուած «Հանրային փրկութեան կոմիտէն» (Բոմբիէ տիւսալիւ քիւլլիֆ), եւ որուն ղլխաւոր նպատակը պիտի ըլլար թրքահայութեան փրկութիւնը:

ԻՐԱՐԱՆՑՈՒՄԻ ԴՐՌԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Երկու համազումար ժողովները եւ անոնցմէ բխող «Ազգային Բիւրոն» ծանր մտահոգութեան մը ծնունդ էին:

Անցած էին այն երանելի օրերը, ուր կաթողիկոսական դիմումը կովկասահայութեան մէջ բերել էր նորօրինակ խանդավառութիւն մը, որուն հետ եկեր խառնուել էին փոխ-արքայական պալատին ժպիտներու եւ ճաշկերոյթներու անոյշ արձագանգը:

Տակաւ առ տակաւ խանդավառութեան ուրախ բաժակին մէջ լեցուել էին լեզի եւ քացախ, որովհետեւ թրքահայ դաւաճներուն վիճակը զգալի կերպով վատթարացել էր, ծանր մտահոգութիւն պատճառելով ուսահայութեան, որուն ծոցին մէջ տեղի ունեցեր էր Հայկական Հարցի նոր արձարձումը:

Ազգային Բիւրոյի ղեկուցումը այդ մասին պայծառ գաղափար մը կու տայ. — «1912 թ.ի աշնանը, Բալթանեան պատերազմը սկսուելուց յետոյ, քրքահայ ժողովրդի վիճակը նորից եւ բուռն կերպով հայ հասարակութեան զանազան խաւերու մտահոգութեան առարկայ դարձաւ: Մի կողմից՝ հնարաւոր ջարդերի սպառնալիքը եւ միւս կողմից՝ Թիւրքիայի գործերը վերջնականապէս կարգադրելու համար հրաւիրուելիք միջազգային կոնֆերանցիայի վրայ դրած յոյսերն՝ առիթ տուին հայ մտաւորականութեան զգալուն մասին համախմբել իրենց ջանքերը ըստ կարելույն աւելի լայն կերպով օգտագործելու յարմարաւոր պատմական մոմենտը, նա մանաւանդ որ կողմնակի կերպով հաստատապէս յայտնի էր դարձել ուս կառավարութեան շատ նպաստաւոր տրամադրութիւնն ղեպի քրքահայերի դատը»:

ԱԶԳԱՑԻՆ ԲԻՒՐՈՑԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԿԻՑ ԿԷՏԵՐԸ

Ձեկուցումի առաջին նշանակալից կէտն է, որ երկու համազումար ժողովներու մասնակցողները պայծառապէս մարդիկ էին: Անոնք Կ. Պոլսոյ Պատրիարքարանի չափ գիտէին թէ թրքահայութեան ղլխուն վրայ կար մահացու վտանգ մը, այն է «հնարաւոր ջարդերու»

սպառնալիքը: Հետեւաբար, սպառնալիքն էր որ «նորէն բուռն կերպով հայ հասարակութեան զանազան խաւերու մտահոգութեան առարկայ դարձեր էր»:

Անշուշտ բաներ մը անցեր-դարձեր էին որ «հնարաւոր ջարդերու» հեռապատկերը կարմիր ուրուականի պէս ցցուել էր անոնց մտքին առջեւ: Եղածը հասկնալի է, պարզ հանելուկ մըն էր, բայց արիւնազանգ, ահուկի հանելուկ մը, որ փողոցի մարդն անգամ կարող էր անաշխատ լուծել: «Հնարաւոր ջարդեր» կարող էին պատահել սահմանադրական երկրի մը մէջ, ուր կար խորհրդարան, ազատ բեմ, ուրկէ կարող էին հայ եւ յոյն երեսփոխաններ արձակ-համարձակ իրենց բողոքը հնչեցնել բովանդակ աշխարհի: Այդ շրջանին չկար Ապտ-իւլ-Համիտ մը, որուն վրայ երիտասարդ թուրքերը բեռնէին ջարդին պատասխանատուութիւնը եւ կամ ասոր կամ անոր վրայ, ինչպէս ըրեր էին Ատանայի ջարդերուն առիթով: Այդ ահուկի հանելուկը՝ մեր պարզամիտ, դիւանագիտօրէն տհաս, անպատասխանատու կղերականութիւնը եւ անոր ետեւ կեցող հայ մտաւորականութիւնն էր, որ առաջին օրէն եղածն ու չեղածը տանիքներու վրայ քարոզեր էին, առանց մտածելու «հնարաւոր ջարդերու» մասին: Մինչ խորամանկ թուրքը՝ մեծ եղեռնը կը պատրաստէր այնպիսի զաղտնածածուկ կերպով եւ մտեթ վարագոյրի տակ, որ միայն Գերմանիան գիտէր:

Երկրորդ նշանակալից կէտն էր «իմբնապաշտպանութեան հարցը», որ առաջին ժողովին մէջ մերժուած էր, բայց երկրորդին մէջ ընդունուած էր իբրեւ «կարելու եւ անհրաժեշտ» եւ ժողովը կը պատրաստէր անոր համար նիւթական միջոցներ հայթայթել Բիւրոյին:

Մենք տեսանք արդէն հայկական ահուկի միջավայրը, ուր զէնքով պաշտպանուելու անհնարին էր. երկրորդ, անհնարին էր նուիրապետութիւններով զինել ամբողջ թրքահայութիւնը եւ երրորդ՝ եթէ հնարուել իսկ ըլլար զինելու, ատիկա պիտի ըլլար ուսական դրամով: Այդ «իմբնապաշտպանութեան» հարցը պաշտօնական ժողովի մը մէջ այնպիսի թրքակատեղեցուցիչ արարք մըն էր, որ երիտասարդ թուրքերը այնպէս կատեղեցուց, որ այդ «զիմուած իմբնապաշտպանութիւնը» ուղղուած պիտի համարէր կառավարութեան դէմ եւ պիտի նկատէր իբրեւ ապստամբութիւն, որով բարիք բերելու տեղ՝ պիտի բերէր ահագին չարիք:

Մենք յետոյ պիտի տեսնենք թէ երիտասարդ թուրքերու կառավարութիւնը ի՞նչ զարհուրելի տանջանքներու ենթարկեց թրքահայ ժողովուրդը՝ այդ խեղճ ու կրակ զէնքերը հաւաքելու համար:

Երրորդ նշանակալից կէտը այն է, յոյսի չող մը, կաթեցուցած լեզի բաժակին մէջ, այդ յոյսի նշոյլը «Թիւրքիայի գործերը վերջնականապէս կարգաւորելու համար իրաւիքելիք միջազգային կոնֆերանցիայի վրայ դրուած յոյսերն էին, որոնք առիթ տուին հայ

մտաւորականութեան զգայուն մասին համախմբել իրենց ջանքերը ըստ կարելոյն, աւելի լաւ կեդրացով օգտագործելու յարմարաւոր պատմական մոմէնտը, մանաւանդ որ կողմնակի կեդրացով հաստատապէս յայտնի էր դարձել ռուսաց կառավարութեան շատ նպաստաւոր տրամադրութիւնը դէպի թրքահայերի դատը»:

ԳԷՈՐԳ Ե. Ի ՆՈՐ ԴԻՄՈՒՄԸ
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Կը կարծուէր թէ երկար տարիներէ ի վեր «ջարդ» եւ «կոտորած» բառերը թրքահայ ժողովուրդին անբաժան մասնիկները կազմելուն համար, կովկասեան ղեկավարներուն համար ջուրի ձայն պիտի ըլլար:

Այդպէս չեղաւ: «Հաւանական ջարդերը» ահռելի մղձաւանջի պէս ճնշած ըլլալու էին «հայ մտաւորականութեան զգայուն մասին» խիզճին վրայ: Ուստի նա թելադրեց Գէորգ Կաթողիկոսին, որ դիմէ ռուս կառավարութեան, խնդրելով որ փութացնէ Հայկական Հարցի Լուծումը, «հաւանական ջարդերը» կանխարգելելու համար:

Իր զբաւոր դիմումներէն յետոյ, Գէորգ Կաթողիկոս, միշտ պատրաստ ապանջ դնելու ամէն խորհուրդի որ կապ ունէր Հայկական Հարցի հետ, 1912 թուին, Նոյեմբերի սկիզբը, Պետերբուրգ զրկեց Մեսրոպ Եպս. Տէր-Մովսէսեանը, որ ինչպէս տեսանք, մտերիմ բարեկամն էր կոմս Վորոնցով-Դաշկովի եւ ինչպէս կ'ըսէ Լէօ «Էջմիածնական դիւանագիտութեան պարագլուխը կը համարուէր, թէն գիտէր երեխայի պէս խարուիլ, փոխ-արքայական պալատին զանազան ընծաներով»:

«Կաթողիկոսը իր պատգամաւորին յանձնարարած էր, ինչպէս կը հաստատէ ձեռագիր վաւերագիրը, իմանալ կառավարող շրջանակների տրամադրութիւնը յարուցած հարցի առիթով: Դուրս եկաւ՝ որ այդ տրամադրութիւնը միանգամայն նպաստաւոր էր»:

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Բնական էր որ այդ կառավարող շրջանակներուն պարագլուխներն էին վարչական ու արտաքին գործերու նախարարը, որոնց ներկայացաւ կաթողիկոսական պատուիրակը:

«Թէ՛ վարչապետը՝ Կոկովցեւ թէ՛ արտաքին գործերի մինիստր Սազանովը, կ'ըսէ նոյն վաւերագիրը, յայտնեցին թէ ռուսական



Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց

կառավարութիւնը համաձայն է իր ձեռքն առնել Հայոց Հարցը, բայց հարկաւոր է համարում որ Հայոց Կաթողիկոսը ներկայացուցիչ ունենայ Արեւմտեան Եւրոպայում, որ դիմումներ անէ պետութիւնների, մասնաւորապէս Ֆրանսայի եւ Անգլիայի, հող պատրաստէ որ նրանք էլ գործակցին ռուսական կառավարութեան այս աշխատանքին մէջ»:
Սուրէնեան Կաթողիկոսը, որուն համար ռուսական կառավարութեան էր թիֆլիսի փոխ-արքայական պալատէն թելադրուած ամէն մէկ խորհուրդ երկնային մէկ-մէկ պատգամներ էին, չէր կրցած բնականաբար հասկնալ թէ այդ «նպատատւոր տրամադրութեան» տակ ղեղին ի՞՞՞՞՞ մը ծածկուած էր: Որովհետեւ իրականին մէջ, Նիկոլա ձարը, իշխան Լոբանով-Ռոստովաքին, կոմս Վորոնցով-Դաշկով, վարչապետ Կոկովցեւ եւ արտաքին գործերու նախարար՝ Սազանովը, ձեռք-ձեռքի տուած էին սրտաուռ ճամբարաշուխութեամբ մը գործադրել տալու հրէշային ոճիրը:

Այսպէս, հսկայ կայսրութեան մը հինգ բարձրաստիճան սիւները, անխղճօրէն խարելով անդէն, անպաշտպան, փոքրիկ եւ անմեղ ժողովուրդի մը բարեմիտ եւ բարեսիրտ հոգեւոր պետը, զայն Պիղատոսի ատեանէն՝ Հերովդէսի ատեանը կը զրկէին:

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

ԳԷՈՐԳ ԿԹՂ.Ի ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷԶ

Գէորգ կաթողիկոսը, ինչպէս որ չէր անդրադարձած թէ Նիկիոյ ձարին ձեռքը գործիք դառնալով թակարդի մէջ բռնուեր էր, այժմ ալ չէր անդրադարձած որ ռուսական պետութեան վարչապետին եւ արտաքին գործերու նախարարին գործիք դառնալով, խոր վիրապի մէջ ինկեր էր, հոն իջեցնելով նաեւ այն ժողովուրդը՝ զոր փրկել կ'ուզէր:

Երբ Գէորգ Կաթողիկոսը Մեսրոպ եպիսկոպոսէն տեղեկացաւ թէ Պետերբուրգի «բարձր շրջանակները» նպաստաւոր տրամադրութիւն ցոյց տուեր են դէպի Հայկական Հարցը, նոյն Նոյ.ի 10ի կոնդակով, իրեն լիազօր պատուիրակ նշանակեց Պօղոս Փաշա Նուպար: Այս կերպով Արեւմտեան Եւրոպայի մէջ ալ կը հաստատուէր կարեւոր հիմնարկութիւն մը Հայկական Հարցի լուծման համար՝ Թուրքիոյ դեսպանին եւ թուրք լրտեսներու աչքին տակ:

Ոչ մէկ կասկած, որ եթէ Եգիպտոսի կեանք տուող Նուպար Փաշան ողջ ըլլար եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այդպիսի փափուկ եւ պատասխանատու պաշտօն մը յանձնէր անոր, ան որ արժանի էր ոչ թէ Եգիպտոսի՝ այլ Եւրոպական մեծ պետութեան մը նախարարապետ եւ կամ արտաքին գործերու նախարար ըլլալու, ոչ միայն պիտի մերժէր թրքակառողեցոցիչ այդպիսի պաշտօն մը, այլ իր ճկուն, գիտակից եւ քաղաքագիտական հանճարով՝ Գէորգ Կաթողիկոսի հայրենասիրական խանդով բռնկած գլխուն վրայ պաղ ջուր պիտի լեցնէր, ցոյց տալով անոր թէ կըրակի հետ կը խաղար:

Բայց հայերու չար բախտէն, իր որդին՝ Պօղոս Փաշա զուրկ էր իր հօր դիւանագիտական հանճարէն եւ հեռատեսութեանէն:

ԳԼՈՒԽ Բ.

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵԻ

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐԱՆՈՐ ՍԱԳՐԱՆՔՆԵՐԸ

ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱԶԿՈՎԻ ՊԱՇՏՕՆԱԳԻՐԸ
ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երբ հրատապ խնդիրները իբրբու կը յաջորդէին, կոմս Վորոնցով-Գաշկով 1912ի Դեկտ. 22ին, պաշտօնագիրով մը կը հաղորդէր Գէորգ Կաթողիկոսին թէ կայսերական կառավարութիւնը, ինչպէս կ'ըսէ վաւերագիրը, իմացուցեր է թուրք կառավարութեան թէ վերջին ժամանակները հայոց դրութիւնը վատացած է եւ ասոր համար անհրաժեշտ է բարենորոգումներ մտցնել Թրքահայաստանի մէջ:

Չարմանալի պիտի ըլլար որ փոխարքան ըսէր Կաթողիկոսին թէ եւրոպական պետութիւններու մէջ Հայկական Հարցին շուրջ համաձայնութիւն չէ գոյացած, որով այդ հարցը պէտք չէ Լոնտրայի դեսպանախորհուրդին առջեւ հանել:

Վերջապէս, կոմսը իբրեւ հայերու բարեկամ, խորհուրդ կու տար Կաթողիկոսին որ ներկա վճռական բոլէին հայերը ցոյց տան շրջա-հայեցութիւն եւ վարուելակերպ:

Փոխարքայական պաշտօնագիրը չափազանց կարեւոր եւ նշանակալից ըլլալով, ամբողջութեամբ կը մէջբերենք:

«Ձերոք սրբութիւնը հայ ժողովուրդի անունից մի խնդիրով դիմել է իմ միջոցով պաշտպանելու մասին քիւրճիքի ձեռնով հարստահարուող հայերին Ասիական Թուրքիայում եւ նրանց ընդունելու մասին Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Այս միջնորդութիւնը ներկայացուց նորին կայսերական բարեհայեցողութեան եւ թագաւոր կայսրին համեմի եղաւ վերաբերուել հայ ժողովուրդի վիճակին կատարեալ բարեացակամութեան:

Այժմ կայսերական կառավարութիւնն առաջարկութիւն է արել քիւրճաց կառավարութեան՝ ցոյց տալով նրան որ մեզ մօտ եղած տեղեկութիւններով՝ հայերի դրութիւնը Փոքր Ասիայում վերջին ժամանակները վատացաւ եւ առաջացնում է արդարացի գանգատներ

ֆրդերի կողմից եղած մեղումների եւ անձնական ու կալուածական ապահովութեան բացակայութեան վրայ, որոնք առաջանում են վարչութեան անկարգութիւնից եւ վատ կողմից: Դրա հետ միասին Թիւրքիային ցոյց է տրուած թէ անհրաժեշտ է նրա համար թէ այժմ իսկ լուրջ կերպով զբաղուել է բարենորոգումներով Թիւրքաց Հայաստանի մէջ եւ լուացել վարչութեան կազմը, ցոյց տալով որ քրիստոնեայ ժողովուրդների օրինական շահերի արհամարհումը մի շարք տարիների ընթացքում եղել է Թիւրքիայի համար մշտական խոռվութեան եւ բարոյութիւնների աղբիւր նրա եւրոպական նահանգներում եւ, վերջ ի վերջոյ, բերաւ Թիւրքիայի համար դժբախտ Պալեանեան պատերազմը իր բոլոր հետեւանկներով:

Հետեւելով դարաւոր ւանդութիւններին եւ խորին զգացմունքով վերաբերելով հայ ժողովրդի տանջանքներին, կայսերական կառավարութիւնն այսուհետեւ էլ մտադիր է վերաբերուել ամենաբարեացակամ կերպով Թիւրքիայում հարստահարուող հայ ժողովրդի կարիքներին, եւ ջանքեր գործադրել եղծումները վերացնելու եւ անհրաժեշտ բարենորոգումներն իրագործելու նպատակով:

Կայսերական կառավարութիւնը, սակայն, գտնում է, որ կատարելապէս անհամապատասխան է հէնց իրանց հայերի շահերի հայոց հարցի կննութեան առնելը պետութիւնների համախմբման մէջ առաջիկայ կոնֆերանսում, որ կը հաւաքուի Պալեանեան մզմաժամը կարգաւորելու համար, որովհետեւ կատարեալ միտք ունի կանկալածելու, թէ եւրոպական պետութիւնները միակամ կը լինին հայերի համար կենսական հարցի լուծման ժամանակ: Եւ սակայն, պետութիւնների այսպիսի միակամութեան բացակայութիւնը եւ դրա հետ կապուած տարածայնութիւնների ծագումը կը ստեղծեն, ինչպէս այս ապացուցել է պատմական տխուր փորձը, չափազանց նպաստաւոր պարագաներ, որպէսզի տեղական վարչութիւնը խուսափողական վերաբերմունք ցոյց տայ դէպի հայերի դրութեան բարոճման գործը:

Չերդ սրբութեան առանձին ուշադրութիւնը դարձնելով այս վերջին հանգամանքին վրայ, եւ առանձնապէս կարեւոր կը համարէի, որ այժմեան վնասական բոպէին հայերը ցոյց տային առանձին շրջահայեցողութիւն եւ տակտ եւ անժամանակ հաւաքական դիմումներով չբարդացնեն կայսերական կառավարութեան համար թիւրքահայերին դրութեան լուացման կատարումը: Եւ կատարելապէս համոզուած եմ, որ Նորին Սրբութիւնն իր պատկառելի հեղինակութեամբ կը կարողանայ ներգործել հայերի վրայ, իրենց իսկ օգտին համար ցանկալի ուղղութեամբ»:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ ԴԱԶԿՈՎԻ ՄՕՏ

Սակայն, դեռ այդ պաշտօնագիրը չստացած, Գէորդ Կաթողիկոսը յատուկ պատգամաւորութիւն մը հաներ էր ճամբայ՝ ներկայանալու համար Վորոնցով-Դաչկովին: Պատգամաւորները, ինչպէս կ'ըսէ վաւերագիրը, բաղկացած էր Մեսրոպ եպիսկոպոսէն, Բազրատ վարդապետէն, Սողոմոն Յարութիւնեանէն եւ Աղէքսանդր Սատիսեանէն:

Պատգամաւորները Դեկտ. 26ին հասան Թիֆլիս եւ անմիջապէս ներկայացան Փոխ-արքային, որուն յանձնեցին Կաթողիկոսին ընդարձակ յուշագիրը, ուղղուած Նիկոլա կայսեր: Յուշագիրը զրուած էր Դեկտ. 23ին:

Այդ յուշագիրը պատմական տեսութիւն մըն էր Հայկական Հարցին, որ կը վերջանար Ատանայի կոտորածին յիշատակութեամբ, սպա կու գար Կաթողիկոսին խնդրանքը, ուղղուած ամէնողորմ ճարին: Վաւերագիրին համաձայն այդ խնդրանքը հետեւեալ կերպով ձեւակերպուած էր. -

«Այդ օրինակ ծանր փորձութիւնները, որ մինչեւ օրս վիճակում են Թիւրքիայի հայ ազգաբնակչութեան, նրա գոյութեանը սպառնացող բացարձակ վտանգէն իրաւունք են տալիս նրան օգնութիւն խնդրել մեծ ռուսական պետութիւնից-ֆրիստոնէութեան պատմական պաշտպանից արեւելքում:

Ներկայումս ստեղծուած արտաքին դէպքերը, որով առաջ են եկել Պալեանեան պետութիւնների Թիւրքիայի դէմ մղուած պատերազմի շնորհիւ, բնականաբար նանապարհ են հարթում լուծելու թիւրքահայերի դրութեան բարելաման վաղուց ի վեր հասունացած խնդիրը:

Իմ հօտի աղբրասնկները եւ սպառնալիքները հետեւեալներն են. իրական ապահովութիւն ազատ հոգեւոր կուլտուրական զարգացման, գործադրելով անհրաժեշտ ռեֆորմներ թիւրքաց Հայաստանում՝ ձերդ կայսերական մեծութեան հօր եւ բարձր հովանաւորութեան տակ:

Ներկայումս տեղի ունի Լոնդոնում մեծ պետութիւնների դեսպանների խորհրդաժողով եւ ապագայում սպասոււմ է կոնֆերենցիայի կամ կոնկրետի գումարում, լուծելու համար Պալեաներում պատերազմող կողմերի մէջ առաջացած վիճելի խնդիրները, որոնք կապուած են ֆրիստոնեաների խնդրին հետ Արեւելքում:

Հայկական խնդիրը 34 տարի առաջ դրուած է եւրոպական դիւանագիտութեան առաջ լուծուելու համար, բայց մինչեւ այսօր մնում է չլուծուած: Եթէ հայերը եւ այժմ բարարութիւն չստանան, այդ կը նշանակէ մի ամբողջ ժողովուրդ յանձնել վերջնական ոչնչացման: Եւ եւ իմ հոգեւոր հօտը շարունակում ենք հաւատալ խորապէս, որ դուք, իմ թագաւոր, իբրեւ ողորմածութեան եւ արդարութեան աղբիւր, բարեհան վերաբերմունք ցոյց կը տաք դէպի բազմաշարչար

հայ ժողովրդի վիճակը Թիւրքիայում, հրամայելով ձերդ կայսե-
րական մեծութեան ձեռնարկել իրական միջոցներ ազատելու հայե-
րին՝ կոտորածներից եւ բարեւակելու նրանց դրութիւնը Թիւրքաց
Հայաստանում:

Վերոյիշեալը յոսս անկանելով ձեր, օգոստափառ թագաւոր,
ես յուսով եմ որ ձերդ մեծութեան հօր ձայնը, որ կը բարձրանայ
Թիւրքիայի հայ ազգաբնակութեան դրութիւնը բարեւակելու համար,
կը լինի այն բարի համբար, որ կ'աւետի ժողովրդի կրած տառա-
պանքների վախճանը»:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՐՈՒԱԾԸ

Գէորդ Կաթողիկոսի պատգամաւորները ուրախ-զուարթ տրամա-
դրութեամբ եկեր էին կոմս Վորոնցով-Դաշկովի մօտ: Անոնք քաջա-
լերուած Ռուսաստանի վարչապետին եւ արտաքին գործերու նախա-
րարին հանդիսաւոր յայտարարութենէն, կարծեր էին թէ «պատուոյ
խօսքը» արժէք մը ունի պետական մարդոց համար ալ:

Ինչպէս վերը տեսանք, ուստի նախարարները խորհուրդ տուեր
էին Կաթողիկոսին թէ «Ռուսական կառավարութիւնը համաձայն է իր
ձեռնք առնել Հայոց Հարցը, բայց հարկաւոր է համարում, որ հայոց
կաթողիկոսը ներկայացուցիչ ունենայ Արեւմտեան Եւրոպայում, որ
դիմումներ անէ պետութիւններին եւ հող պատրաստէ, որ նրանք էլ
գործակցին Ռուսական կառավարութեան այս աշխատանքին մէջ»:

Այս հանդիսաւոր յայտարարութեան վրայ հազիւ երկու ամիս
անցած, Կաթողիկոսին «յուշագիր»ին առիթով, նոյն ամսուան 27ին,
երկարատեւ խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ փոխ-արքայի եւ
պատգամաւորներուն միջեւ:

Յուշագիրը, ինչպէս տեսնուեցաւ, սեւ գիծերով ներկայացուցած
ըլլալով թրքահայ ժողովուրդին վիճակը, փոխ-արքան ուշի-ուշով
կարդալէ յետոյ, դիտել տուաւ պատգամաւորութեան, թէ Կաթողի-
կոսը «միջոցի մասին որոշ քան չէ տուած»: Ըսել կ'ուզէր թէ Կաթո-
ղիկոսը ինչ միջոց կը նախատեսէ, որպէսզի անով Ռուսաստանը վերջ
դէնը տայ թրքահայ ժողովուրդի դառն վիճակին:

Պատգամաւորները, ինչպէս կ'ըսէ վաւերագիրը, «յայտնեցին փոխ-
արքային, որ յուշագրին նպատակն ու խնդիրքը տակնախայտ պատուի,
գոյքի եւ ազատ քաղաքակրթութեւն կատարեալ ապահովութիւնն է»: Իսկ
այդ իրազործելու մասին՝ դիւանագէտներն աւելի կ'իմանան:

Փոխ-արքային ուզածն ալ այդ էր: Ժամանակը շահիլ եւ դիւանա-
գիտական դիմումներով միամիտ հայը խաբելով հասնել այն վճռա-
կան կէտին, ուսկից այլեւս ետ դառնալ կարելի չէր:

Վորոնցով-Դաշկով, միշտ պատրաստարան, այդ առիթով «յայտ-
նեց որ Ռուսաստանը չէ կարող այժմ մտնել Տանկահայաստան եւ
տիրել, քանի որ պայմանները նպաստաւոր չեն»:

Հետեւեալ օրը փոխ-արքան իր մօտ հրաւիրելով պատգամաւոր-
ները, «կարդաց անոնց իր տուած պատասխանը Վեհափառին». ապա
յայտնեց «որ այդ նամակը իմքը խմբագրել է եւ կաթողիկոսին դրկել է
առաջ, ամբողջ նամակը հետագրով յայտնած է Պետերբուրգ, եւ
այնտեղի հաճութիւնը ստանալէն յետոյ միայն ուղարկած է էջմիա-
ծին...»:

Այդ նամակին մէջ, ինչպէս տեսանք, երկու որոշ կէտեր կար
հայկական հարցի վերաբերմամբ աննպաստ.-

Ա. նկատի ունենալով որ եւրոպական պետութիւններուն մէջ
տաճկահայոց հարցի լուծման առթիւ ներկայ պայմաններում համա-
ձայնութիւն չէ կայանալու, այդ հարցը Լոնդոնի դեսպանաժողովի
խորհրդակցութեան նիւթ չէ դառնալու, ուստի

Բ. Կաթողիկոսը չպէտք է դիմի միւս եւրոպական պետութիւն-
ներին այդ խնդրով այժմ:

Այս երկու աննպաստ կէտերը, այդքան յուսադրիչ խոստումներէ
ետք, անպատեղի անակնկալ մը եղաւ Կաթողիկոսի պատգամաւոր-
ներուն համար, եւ գործեց նետուած ուղմբի մը տալաւորութիւնը,
ստով հանդերձ պատգամաւորներու լեզուն չփակուեցաւ: Անոնք
փոխ-արքային բացատրեցին որ «ամենուն կողմէ հայերի յոյսով
համոզումն է այն է թէ ուսաց կառավարութիւնը այս անգամ լուրջ
ուշադրութիւն կը դարձնէ եւ կը բարելաւ տակնախայտ վիճակը, որ
միանգամայն անտանելի է: Շեշտուեց առանձնապէս փոխ-արքային,
նախարարապետ Կոկոլցեւի եւ արտաքին գործերու նախարար՝ Սա-
գանովի բարեացակամ տրամադրութիւնը, յուսադրութիւնն ու խոր-
հուրդները տակնախայտ խնդրի վերաբերումին»:

ԹՈՒՐԻ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԵՐԿԻԻՂԸ

Նոյն փաստաթուղթը շատ կարեւոր կէտի մը վրայ մատը կը դնէ:
Կաթողիկոսին պատգամաւորները կը յայտնեն փոխ-արքային թէ
«Տանկաստանի հայաբնակ գաւառներում, տակնախայտ պաշտօնեաները
վերջերս շարունակ երկիւղ են արտայայտում եւ թէ մի գուցէ ուսաց
գորքը մտնէ Տանկաստան հայերի վերաբերմամբ գործադրուող քրդա-
կան եւ քրքական բռնութիւններին առաջն առնելու համար. այս
պատճառով՝ վալիներով առ այժմ նախագուշակում են բրդերին
եւ թիրքերին, որպէսզի առիթ չտան եւ զգոյշ մնան քրքահայերին
նշնելուց: Բնական է, այս երկիւղը ժամանակաւոր կը լինի եւ կ'անցնի

եթէ ոուսաց կառավարութիւնը ձեռնապահ մնայ եւ ո՛չ մի դրական քայլ չառնէ տանկահայերի պատուի, գոյքի եւ անձի ապահովութեան համար»:

Ոչ մէկ կասկած, որ այս տեղեկութիւնները Կ. Պոլսոյ Պատրիարքարանը հաղորդէր էր էջմիածին, ապա թէ ո՛չ, պատուիրակներուն համար ղժուար էր զիսնալ թէ ի՛նչ անցած դարձած էր հեռուոր հայ դաւառներուն մէջ:

Ուրեմն, ուսական միջամտութեան լուրը տարածուել էր Թրքահայաստանի ամենահեռուոր անկիւններուն մէջ անգամ եւ կատարութիւն առաջ բերած էր թէ՛ ուսերուն եւ թէ՛ հայերուն զէմ: Եւ այդ կատարութեան գոհերը ի հարկէ ուսերը պիտի չըլլային, այլ անզէն ու անպաշտպան հայ ժողովուրդը:

Ուսած էր Վորոնցով-Դաշկով, լսելով որ ուսական հայաջինջ զիւսնազիտութիւնը ուղիղ ճամբուն մէջ մտած է:

Ասոր հակառակ, արտուր էին կաթողիկոսին պատգամաւորները, որոնք չէին կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ համար ուսական կառավարութիւնը յուսադրեր էր կաթողիկոսը Հայկական Հարցը Լոնտոնի ղեսպանախորհուրդի սեղանին վրայ հանելու, եւ ասոր համար խորհուրդ տուել էր հայոց Հոգեւոր Պետին արտասահմանի մէջ իրեն լիազօր ներկայացուցիչ մը կարգելու, որպէսզի ուրիշ եւրոպական պետութիւններու մօտ զիմուամներ կատարելով՝ զիւրացնէ այս հարցին լուծումը նոյն ղեսպանախորհուրդին մէջ: Իսկ պատգամաւորները միամտութեամբ «ամենայն մանրամասնութեամբ քացատրեցին փոխ-արքային, այն ծանր տպաւորութիւնը որ կ'ունենայ փոխարքային տուած պատասխանը Վեհափառին, ամէն կողմի հայերին, յատկապէս տանկահայերի վրայ...»: «Շեշտուեց եւ այն, որ եթէ տանկի պաշտօնեաները իմանան թէ Ռուսաստանն այժմ ձեռնապահ է եւ չի ցանկանում միջամտել, անպայման հայերի վիճակը աւելի կը վատթարանայ եւ մինչեւ իսկ կարող է սուսկալի հետեւամեծեր ունենալ»:

Արդէն Վորոնցով-Դաշկովի ուզածն ալ այդ էր, որ է «սուսկալի հետեւամեծեր ունենալ»։ Ուստի բոլոր պաղարիւնութեամբ «մի քանի անգամ կրկնեց որ Ռուսաստանն՝ այժմեան րոպէն, ներկայ պայմանները միանգամայն աննպաստ է համարում գործնական քայլեր առնելու համար եւ այդ չէ նշանակում թէ դադարում է միջամտելուց: Ռուսական կառավարութիւնը իւր դիպլոմացիական ազդարարութիւնները շարունակելու է»:

ԵՕԹ ԿԷՏԵՐԸ

Ձարական ծեր աղուէսը շատ լաւ գիտէր թէ ի՛նչ կը նշանակէ ուսական կառավարութեան դիպլոմացիական ազդարարութիւնները: Իսկ կաթողիկոսական պարզամիտ պատգամաւորները, կախուած կոմսի շրթներէն, փոխանակ զգաստանալու՝ կ'աղերսէին. «Խնդրեցիմք փոխ-արքայէն, կ'ըսէ վաւերագիրը, որ ոուսաց կառավարութիւնը իւր դեսպանին եւ հիւպատոսին միջոցով վերահսկողութիւն ունենայ տանկահայոց վրայ, որպէսզի դրութիւնն աւելի չվատթարանայ»:

Փոխ-արքան, հայ պատգամաւորներէն կարեւոր տեղեկութիւնները քաղելէ յետոյ, գլուխ-գլուխ խօսակցութիւն մը ունեցաւ անոնց հետ եւ ապա փոխադարձ խորհրդակցութեամբ փոխ-արքան սկսաւ զբել հետեւեալ եօթը կէտերը, որոնց մասին մանրամասն քացատրութիւններ տեղի ունեցան: Ահա թէ ի՛նչպէս արձանագրուած են այդ եօթ կէտերը ձեռագիր վաւերագրին մէջ:

Ա.- «Կ. Պոլսոյ ոուսաց դեսպանին եւ Տանկահայաստանի հիւպատոսների հրահանգ տրուի, որ շարունակեմ պաշտպանել տանկաց կառավարութեան առաջ հայերին քրդական եւ թրքական նշումներից:

Պատգամաւորները կը քացատրեն փոխ-արքային, որ նախարարապետ Կոկոլցեւի եւ արտաքին գործոց նախարարի խորհրդի հիման վրայ եւ բոլոր կողմերի հայերի ցանկութեան համաձայն կաթողիկոսը նշանակեց Պօղոս Փաշա Նուրարին իւր կողմից ներկայացուցիչ՝ եւրոպական պետութեանց ներկայացուցիչների կոնֆերանսում աշխատելու տանկանպաստաւոր բարեկորագումների համար ուսական կոնդրոլի վրայ»:

Եւ որովհետեւ ինչպէս տեսանք, փոխ-արքային առ կաթողիկոսն ուղղուած նամակին մէջ գրուած էր թէ Հայկական Հարցը Լոնտոնի ղեսպանախորհուրդի խորհրդակցութեան նիւթ պէտք չէ դառնայ, եւ թէ կաթողիկոսը պէտք չէ զիմէ եւրոպական պետութեանց այդ խնդրին համար, պատգամաւորները յուզումի մասնուած կ'ըսեն փոխ-արքային «թէ կաթողիկոսին տուած պատասխանը շատ ծանր կացութիւն կը ստեղծէ. արդեօք Նուպար Փաշան պէ՞տք է շարունակէ Վեհափառի կողմից եւրոպական պետութեանց մօտ աշխատելը, թէ դադարէ իր պաշտօնից: Վերջին դէպքը ծանր կը լինի կաթողիկոսի եւ տանկահայոց համար, եւ անշուշտ վերին աստիճանի խրախուսիչ տանկաց կառավարութեան համար»:

Փոխ-արքան, միշտ արթուն, անմիջապէս բանաձեւեց երկրորդ կէտը.

Բ.- «Պօղոս Փաշա Նուրարը նշանակուած է Կաթողիկոսի կողմից, հաւանութեամբ Պատրիարքի եւ Ազգային ժողովի, որ աշխատէ

ելրոպական կառավարութեանց մօտ ՅԵՐԳ յօդուածի իրագործման համար, հայաբնակ նահանգներում բարեկարգումներ մտցնելու վերաբերմամբ ոռուսաց կառավարութեան նախաձեռնութեամբ եւ նրա կոնտրոլի տակ»:

Հուսկ պատգամաւորները, կը շարունակէ նոյն վաւերագիրը, կը բացատրեն փոխ-արքային «որ Կ.Պոլսում տանկաց կառավարութիւնը վախճալով օտար միջամտութիւնից, հայկական հարցի առթիւ եւ ցանկանալով առջեւ առնել այդպիսի միջամտութեան, ըստ իւր նախնաւանդ սովորութեան, կազմել է մասնախումբ. ներքին գործոց նախարար Ռեզիս Բէյը կանչել է մի քանի հայերի, որպէս թէ հայաբնակ վիլայէտների բարեկարգումների մասին խորհրդակցելու: Բացատրուեցան այդ կեղծ քայլի շարժառիթները»:

Եթէ փոխ-արքան կաթիլ մը խիզճ ունենար զէպի թրքահայերը, խորհուրդ պիտի տար իր դիմացը նստած նորընծայ Հայ զիւանազէտներուն որ համոզեն Կաթողիկոսը, որ զազրի ոռուսական կառավարութեան դռները զարնելէ, եւ խորհուրդ տայ Կ.Պոլսոյ անդիւստազէտ Պատրիարքին, որ հրաժարի օտար միջամտութեան կախարհիչ ազդեցութենէն եւ աշխատի երիտասարդ թուրքերուն հետ լուծում մը տալ Հայկական Հարցին: Օտար միջամտութիւնը հազար անգամ խաբեր էր Հայերը եւ արեան գետեր հոսել տուեր էր: Թող Թուրքիան ալ խաբէր եւ թող հայերու արիւնը ծովու պէս չմտփէր: Բայց այդ ճկուն զիւանազիտութիւնը Վորոնցով-Ռաշկովի պէս ոռուս պետական մարդու մը գործին չէր դար: Ուստի զրիչն առաւ ու գրեց երրորդ կէտը.

Գ.- «Ներքին գործոց նախարար Ռեզիս Բէյը նշանակել է այժմ մի մասնախումբ, որին նախագահին նշանակումով, չորս եւս հայ մասնակցում են: Այս մասնախումբը ոչ մի վստահութիւն չի վայելելու հայերու կողմից, դրանով տանկաց կառավարութիւնը ցանկանում է ոռուսաց միջամտութեան առաջն առնել»:

Փոխ-արքան եւ պատգամաւորները շեշտեցին հետեւեալը եւ փոխ-արքան գրեց.

Դ.- «Բոլոր հայերը առանց կուսակցական խորութեան համաձայն են որ Տանկահայաստանի ռեֆորմների նախաձեռնողը լինի Ռուսաստանը, եւրոպական պետութեանց համաձայնութեամբ ռեֆորմների իրագործման կոնտրոլը պատկանի Ռուսաստանին»:

Վորոնցով-Ռաշկով խրախուսուած Հայ պատգամաւորներուն ծայրայեղ ոռուսախրութենէն, ոչ նուազ վստահաւոր կէտի մը վրայ մատը դրաւ:

Ե.- «Բերլինի կոնգրէսի ՅԵՐԳ յօդուածի իրագործումն ու վերահսկողութիւնը Ռուսաստանի յանձնելը յաջողցնելու համար, պէտք է

կաթողիկոսի կողմից, եւրոպական կառավարութեանց մօտ պատգամաւորութիւններ նշանակել, որպէսզի դիպլոմատիական շրջանակներում տրամադրութիւններ ստեղծուին յօգուտ ոռուսական նախաձեռնութեան եւ կոնտրոլի»:

Սորամանկ փոխ-արքան, որ գիտէր թէ ընդհանուր պատերազմը մօտալուտ է, մէկ հարուածով երկու թոչուն կ'որսար, մէկ կողմէն երիտասարդ թուրքերուն կատաղութիւնը կը զրգուէր թրքահայութեան դէմ, որ պիտի ըլլար ձարական կառավարութեան հայաջինջ քաղաքականութեան կոյր գործիք, եւ միւս կողմէն վրէժ կը լուծէր եւրոպական միւս հինգ մեծ պետութիւններէն, որ Ռուսաստանը նուստացնելով Սան-Ստեֆանոյի 1878 յօդուածը փոխեր էին Պերլինի ՅԵՐԳ յօդուածին, եւ փոխ-արքան փաղաքշելու համար իր շրթներէն կախուած Կաթողիկոսը եւ անոր պատգամաւորները, գրեց հետեւեալը.

Զ.- «Երբ որ յարմար մտմնտ կը լինի, կաթողիկոսը բախտաւոր կը համարէ իրեն՝ ներկայանալ թագաւոր կայսրի, իւր հօտի, տանկահայ ժողովրդի բարեկաման համար անձամբ հայցելու»:

Կայսրը զառնալով թրքահայերու «Հայրիկը», կաթողիկոսական պատգամաւորները, որոնք միջազգային զիւանազիտութեան մասին ոչ մէկ գաղափար ունէին, ուրախութենէն ինքզինքնին կորսնցուցին: «Քանի որ, կը շարունակէ նոյն վաւերագիրը, փոխ-արքան ցոյց էր տալիս բարեացակամ տրամադրութիւն, եւ մի քանի եւս իւր անձնական կարծիքը (յայտնեց) թէ կաթողիկոսը ու հայ ժողովուրդը, ինչպէս եւ կաթողիկոսի ներկայացուցիչ Պօղոս Փաշա Նուրարը, պէտք է աշխատեն յաջողցնել Ռուսաստանի նախաձեռնութեան եւ կոնտրոլի տակ ռեֆորմներ մտցնել տալու Տանկահայաստանում, պատգամաւորութիւնը խնդրեց, որ եթէ հնարաւոր է, մի նոր լրացուցիչ նամակով յանուն Վեհափառ կաթողիկոսի յայտնի փոխ-արքան թէ հայկական հարցը չէ փակում, այլ ընթացքի մէջ է եւ կարելի է նոյն ուղղութեամբ աշխատանքները շարունակել...»:

Վորոնցով-Ռաշկով իր բոլոր մեղքերուն վրայ փորը թեթեւացում մը պիտի ընէր, եթէ խորհուրդ տար Գէորգ Կաթողիկոսին, որ Հայկական Հարցը փակուած նկատէ: Բայց այդ բանը խիզճ եւ սիրտ ունեցող մարդու գործ էր, եւ ո'չ թէ ոռուս պետական մարդու, որ կը պահանջէր Հայկական Հարցի բաց մնալը, հետեւաբար փոխ-արքան այսպէս գրեց.

Է.- «Նամակի տպաւորութիւնն այն է, որպէս թէ հայկական նահանգների ռեֆորմների հարցը հերթական լինելուց դադարում է. կաթողիկոսից այս կէտի առթիւ հարցապնդում ստանալու դէպքում, տալ բացատրութիւն, որ ո'չ թէ հայկական հարցը վերցում է, այլ ընթացքի իւր ոյժի մէջ է եւ կը քննուի Բալթիկան հարցի հետ միասին»:

Այս երեք օրուան տեսակցութիւնը, լեցուն էր նորանոր սազարանքներով, որոնք բովանդակ թրքահայ ժողովուրդը թշնամի կը դարձնէին երիտասարդ թուրքերու աչքին, որոնք կատաղի ազգայնամոլներ էին եւ մուկանսդ ազատ որմնադրականներ, այնքան նշանակութիւն ունէին հանրային դիւանագիտութեան համար, որ փոխարքան «խոստացաւ, կ'ըսէ վաւերագիրը, վերոյիշեալ եօթը կէտերի մասին փոխադարձ խորհրդակցութեամբ եւ իւր ձեռքով կազմած ձեւակերպումները հետագրով յայտնել Պետերբուրգ. խոստացաւ նաեւ աջակցել...»:

Կաթողիկոսական պատգամաւորներուն միտքէն անգամ չէր անցած որ այդ եօթը կէտերու զօրութեամբ, ճարական Ռուսաստանի ուժեղ ձեռքով կը պատրաստուէին եօթը հաստ չուաններ, որոնք պիտի անցնէին օր մը թրքահայ ժողովուրդի վիզէն: Պատգամաւորները ընդհակառակն, այնքան ուրախ եւ յաղթական էին, որ պատգամաւորութեան պետը, «Մեսրոպ եպիսկոպոսը, կ'ըսէ վաւերագիրը, պատգամաւորների կողմից մի քանի խօսքով շնորհակալութիւն յայտնեց փոխարքային իւր բարեացակամ վերաբերմունքի համար»:

«ԵՍ ՌՈՒՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԴ ԵՄ»

«Փոխարքան պատասխանեց, կ'ըսէ վաւերագիրը, որ իմքը դէպի հայերը լաւ է վերաբերում, սակայն, այս դէպքում՝ գործում է որպէս ռուս պետական մարդ եւ անցած համարեց Լոպանովի քաղաքականութիւնը: Յայտնուեց ուրախութիւն, որ այս կարեւոր խնդրում՝ ռուսական եւ հայկական շահերը միացած են»:

«Անհրաժեշտ է յիշել եւ այն, կ'ըսէ վաւերագիրը, որ վերոյիշեալ կէտերի մասին եղած խմբագրութիւնը փոխարքան կարգաց երեք անգամ. իսկ երրորդ ընթերցանութեան ժամանակ, իւր գիտութեամբ արձանագրեց մոյմ կէտերը Բագրատ վարդապետը պատգամաւորութեան համար»:

Եթէ Գէորգ Կաթողիկոսն ու իր պատգամաւորները պարզամիտ մարդիկ չըլլային, դիրքաւ պիտի հասկնային Վորոնցով-Դաշկովի գրած եօթը կէտերը եւ անոնց մէջ ամփոփուած պայմանները: Անոնք չկրցան հասկնալ թէ ինչ կը նշանակէ «ռուս պետական մարդ» եւ թէ ինչ ըսել կ'ուզէ «ռուսական եւ հայկական շահերը միացած են»:

Ռուս պետական մարդ, կը նշանակէր խիղճէ, զգացումէ եւ գուրիք զուրկ ըլլալը եւ գիտնալ խարել, նենգել եւ որչափ կարելի է մեծամեծ սուտեր խօսիլ:

Իսկ երբ փոխարքան կ'ըսէր թէ ռուսական եւ հայկական շահերը միացած են, կը հասկնար որ եթէ հայերը կոտորուին եւ անոնք որ

ողջ պիտի մնան, «ռեֆորմներու» պէտք պիտի չունենան, որովհետեւ թրքահայաստանը զստնալով Ռուսաստանի մէջ նահանգը, ռուսական շահերը կը միանան հայկականին հետ:

Վորոնցով-Դաշկով յայտնապէս կը ստէր, երբ կ'ըսէր թէ «իմքը դէպի հայերը լաւ է վերաբերում», շատ լաւ գիտնալով որ ռուսական սադրանքներով թունաւորուած այդ եօթը պայմանները անհաշտ թշնամութիւն կը ստեղծեն «եքիտասարդ թուրքիոյ» եւ բովանդակ հայ ժողովուրդին միջեւ, քանի որ արեւու լոյսին պէս պայծառ էր թէ իր թելադրած պայմանները հայոց ազգին հոգեւոր պետերը եւ ամբողջ հայ ժողովուրդը պիտի դարձնէին ձարական դիւանագիտութեան կոյր զործիք:

Այս բոլորը գիտնալով էր, որ սադրել չկոմսը պիտի պիտի նայելով միամիտ պատգամաւորներու աչքերուն մէջ, այդ չարաշուք պայմանները անոնց կարգաց երեք անգամ, գիտնալու համար թէ անոնք բան մը անդրադարձե՞ր են: Եւ երբ նշմարեց թէ անոնք իրենց միամիտ հաւատքին մէջ են, բնականաբար խնդաց անոնց քթին:

Պատմագիր Լէօ իրաւունք ունէր գրելու սա նշանակալից տողերը.

«Մի նարպիկ բառախաղով Վորոնցով-Դաշկով կարծել տուեց էջմիածնի դանիելյականութեան թէ ռուսական կառավարութիւնը հերքից հանում է հայոց հարցը եւ այդպիսով իր առջեւ ծուկ է չոփեցնում էջմիածնի ամբողջ դանիելյականութիւնը, թելադրում է նրան պայմաններ, որոնք ամբողջ հայ ժողովուրդը դարձնում են ձարական դիւանագիտութեան կոյր գործիք: Այսպէս էր, օրինակ, այն պայմանը, որ պարսաւորեցնում էր հայ ժողովուրդին իր կաթողիկոսով, նուրբար փաշաներով ամէն կերպ աշխատել որ Հայաստանի ռեֆորմների վերահսկողութիւնը յանձնուի միայն Ռուսաստանի:

Այս կը նշանակէր պատերազմ յայտարարել թուրքիային, նրա հետ եւ Գերմանիային եւ Ռուսաստանի ձեռքը տալ ամբողջ Փոքր Ասիան. եւ դանիելյականութիւնը ընդունում էր այս պայմանը, մի քիչ ուղեղը չէր շարժում, որ հասկնայ թէ այսպիսի բանը դիւանագիտութեան մրցումներով կարող է կատարել իմքը Ռուսաստանը: Էջմիածնի վեղարար եւ անվեղար դիպլոմատները գիտէին թէ պայծառափայլ կամբ հայրենասիրութիւնից դրդուած է թելադրում իր եօթը կէտերը: Իսկ պայծառափայլը գոնէ այստեղ անկեղծ էր եւ պարզ ստում էր թէ իմքը գործում է իրրեւ «ռուս պետական մարդ»:

Այս «ռուս պետական մարդը» սասձն էլ անվերծանելի եղաւ Գէորգ Ե.ի ներկայացուցիչների համար: Պետք էր յիշել թէ ինչ են եղել հայերի համար այնպիսի հարազատ եւ հոշակաւոր ռուս պետական մարդիկ, ինչպիսիք էին Երմոլով, Պասկեւիչ, իսկ նորերից՝ Դոնդուկով, Շերեմետեւ, Գոլցցին, Լորանով-Ռոստովսկին: Կոմս Վորոնցով-Դաշկովը մի բանի մէջ էր ստում, ասելով թէ Լորանովի

հաղափականությունը անցել է: Այսպես չէր: Եւ եթէ ինքը ձարիզմի հարագատ ոռու պետական մարդ չէր, բայց նա իսկապէս պետական մարդ էր, ուրեմն եւ Լորանովականութիւն էլ կար նրա մէջ, ինչպէս ցոյց էր տուել ադուէսային խարուսիկութեամբ եւ ինչպէս ցոյց պիտի տար յետոյ, արինոտ 1915 թուին:

Չհասկցաւ այս հասարակ բանն ամբողջ էջմիածինը՝ մանկական ծայրայեղ միամտութեամբ, որ միշտ էլ յատուկ էր դանիելականութեան, նա ուրախանում էր, որ այս անգամ հայկական եւ ոռուսական շահերը միացած են իրարու հետ: Եւ խրոխտ ու մեծամիտ այս հաւատով, նա, Եղիշէի ասածին պէս «Եղջիւր էր ամուսն» թիրք կառավարութեան դէմ անգամ»: (Լէօ, Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Հտ.Բ. էջ 96-97):

Ռուսական սաղրանքները մերկացուցած ըլլալով անհերքելի փաստերու լոյսին տակ, այժմ անցնինք տեսնելու թէ ի՛նչ պատկեր կը ներկայացնէր մեծ պետութիւններու մրցակցութիւնը՝ առաջին աշխարհամարտի նախօրեակին: Այս վերլուծումն անհրաժեշտ էր եւրոպական մեծ պետութիւններու նենգաւոր դիւանագիտութիւնը լիովին ըմբռնելու համար:

ԳԼՈՒՍ Գ.

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄՐՅԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ԱՐԻԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ՆՈՐ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Ռուսական դիւանագիտութիւնը արծարծելով Հայկական Հարցը, կ'ուզէր անոր միջոցով միջազգային սեղանի վրայ դնել «Արեւելեան Հարցը», այս անգամ վերջ դնելով Օսմանեան կայսրութեան, որ Մեծն Պետրոսէն ի վեր Ռոմանով արքայատոհմին փայփայած երազն էր:

Բայց այս անգամ ռուսական սաղրանքներուն դէմ կանգնած էր ոտքէն մինչեւ աիտաները զինուած Գերմանիան, որ որոշեւ էր Արեւելեան Հարցը լուծել միայն իր հաշիւներուն համար: Այս որոշումին եկեր էր շնորհիւ իր երկու թեւերուն՝ ճարտարարուեստին եւ վաճառականութեան:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԸ

Պիղմարքի հիմնած կայսրութիւնը, 1880էն ի վեր, ապշեցուցիչ արագութեամբ անազին յառաջդիմութիւն կատարեւ էր, մրցելով անգամ հսկայ Ամերիկայի հետ: Ռուսրին աւազանը, Սաքսոնիան, Շլեզիայի անխափանքերը կարեւոր կեդրոններ դարձեւ էին եւ կը հաւասարէին քիչ թէ շատ Միացեալ - Նահանգներու եւ Անգլիոյ անխափանքերուն: Լոռէնէն, Հոնոսեսան Բրուսիայէն, Թուրինեանկայէն, Շլեզիայէն եւ Սաքսոնիայէն կը հանէին մետաղի առատ հանքեր: Էւսէնի Բոիւպ գործարանները դարձեւ էին թնդանօթի անուանի ձուլարաններ, Գոլոնիա կամ Քէօլն եւ Գանստատ կ'արտադրէին պողպատ, Գրէվիլի՛ մետաքս, Ալսասի մէջ բամպակի մանրաբանները բազմապատկուեւ էին:

Քիչ շատ, ամէն տեղ, դործաւոր դասակարգը կ'աճէր արտակարգ չափերով, քաղաքները կը մեծնային, Պերլին, որ 1853ին 450.000 բնակիչ ունէր, հասեր էր երկու միլիոնի. կային երեսուէ քաղաքներ, որոնց բնակչութիւնը չորսհարիւր հազարէն աւելի էր:

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՏԷՐ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒ

Գերմանիոյ վաճառականութիւնն ալ յառաջդիմեր էր: Ունէր 45.000 բիլիոններ շահարեւ երկաթուղի: Բազմաթիւ ջրանցքներ կ'աղօսէին Գերմանիան. ան գիտակից էր իր բոլոր գետերուն եւ գետակներուն:

Վաճառական նաւերը ստացեր էին արտակարգ ծաւալում, իսկ մարդատար նաւերը՝ աշխարհի լուսագոյններն էին:

Գերման վաճառականները բռներ էին բազմաթիւ երկիրներու շուկաները, մանաւանդ Ամերիկայի եւ մինչեւ իսկ Ֆրանսայի հրապարակները: Իտալիան ողողուած էր գերմանական ապրանքներով, որովհետեւ առեւտրական դաշինքի մը զօրութեամբ, անոնք առանց մաքսի, ազատօրէն կը շրջէին իտալական շուկաներուն մէջ: Իսկ Գուելլիմոս Բ.ի եւ Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Բ.ի գրկախառնումէն յետոյ, Օսմանեան կայսրութիւնը դառնալով գերմանական անպաշտօն գաղթավայր մը, իր շուկաներուն դռները բացեր էր գերմանական ապրանքներուն առջեւ, թրքական հրապարակէն դուրս քշելով Ֆրանսական եւ անգլիական ապրանքները, որոնց յաճախորդները մնացեր էին թրքահայերը, լեզուով եւ մտաւոր մշակոյթի կապերով հաւատարիմ մնալով Ֆրանսայի եւ Անգլիոյ:

Ո՛չ մէկ պետութիւն կրնար մըցիլ Գերմանիոյ հետ, որովհետեւ գերմանական ապրանքները թէ՛ լաւ շինուած էին եւ թէ՛ աւելի աժան կը վաճառուէին:

ԳԱՂՏՆԻ ԼՐՏԵՍՆԵՐ

Այդ վաճառքը տեղաւորելու դործը յանձնուած էր գերման վաճառականներու շրջող պաշտօնեաներուն կամ քրտոններու (քօմի վուլայփօն), որոնք յատուկ դասակարգ մը կը կազմէին համագերմանական գաղափարին մէջ թրծուած:

Այս դասակարգի անձերը, կազմուած պետական պաշտօնեաներէ, բարձրաստիճան զինուորականներէ, գիտնականներէ, հմուտ ուսուցիչներէ, պատմագէտներէ, աշխարհագիրներէ եւ լեզուագէտներէ, կը թուած, ազնուարարոյ եւ քաղցրալեզու մարդիկ էին: Ասոնք միաժամանակ պետական պալատի լրտեսներ էին, որոնք պաշտօն ունէին, նոր երկրի մը վրայ ոտք դրած ժամանակ, մեծ ճշտութեամբ գծել քաղաքաբարտէսներ, զինուորական կարեւոր կեդրոններ, ուսումնասիրել բնակիչներուն ճշգրիտ թիւն ու բնիկ ժողովուրդներուն մտաւոր մակարդակը, անոնց գիմարական ոյժը: Այս գաղտնի լրտեսներն էին որ Փարիզի մէջ, գերմանական դրամով, Ֆրանսական վարձկան գրիչներու ձեռքով գրել կու տային եւ կը տարածէին անբարոյական

վէպեր, որպէսզի ժողովուրդը դեռ աւելի սանձարձակ ազատութեան մղուի եւ պատերազմի պարագային դիւրին որս մը դառնայ գերման բանակներուն առջեւ:

Տնտեսական այս երկու ոյժերու կողքին, կանգնած էր պատերազմական նաւատորմիդը, որ 1870ին գոյութիւն չունէր. 1914ին հասած էր արդէն այնպիսի զօրութեան մը, որ անգլիական նաւատորմիդէն անմիջապէս վերջ կու գար: Բնականաբար տենդագին կ'աշխատէին որ իրենց նաւատորմիդը անգլիականին հաւասարի: Գուելլիմոս Բ.ը ըսեր էր. «Մեր ապագան այիֆնիրու վրայ է»: Գերմանիան ինքզինքը ծովերու տէր կը համարէր:

Գերմանիան իր սպառազէն բանակներով, նաւատորմիդով, ճարտարարուեստով եւ բանուկ վաճառականութեամբ, աշխարհի ամէնէն երկիւղալի պետութիւնը դարձեր էր: Ան կարող պիտի ըլլար, առանց սուրբ պատեանէն քաշելու՝ տիրել միջազգային հրապարակներու: Բայց Գուելլիմոս Բ.ի ուզածն այդ չէր. ան կը սիրէր սուր շողացնել:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՍՈՒՐ ԱՆՈՐԺԱԿԸ

Ի բնէ փառատենչ եւ ինքնահաւան Գուելլիմոս Բ. կը սիրէր այնպիսի յանկարծական որոշումներ առնել որ աշխարհը իր վրայ գմայլի: Ան գիտէր որ Գերմանիան ունէր ընկերային երկու վերքեր. ժողովուրդը օրէ օր կ'աճէր, բնակարանները կը պակսէին, ուստի հազարաւոր ընտանիքներ օտար երկիրներ կը գաղթէին, մանաւանդ Մ. Նահանգներ, ինչ որ Գերմանիան կը տակարացնէր:

Երկրորդ վէրքը, որ գլխաւորն էր, Գերմանիայի հողը ապրուստի տեսակէտով բաւականաչափ բարեբեր չէր. կային հողամասեր, որոնք ճախճախուտ եւ աւազուտ էին, իսկ գերման ժողովուրդը, օգի խստութեան պատճառով, շատակեր էր:

Դարմանելու համար այս գոյգ վէրքերը, կայսրը նախանձոտ աչքով կը նայէր Անգլիոյ եւ Ֆրանսայի, որոնք աշխարհը իրարու մէջ բաժնած, իրեն շատ քիչ բան ձգեր էին:

Այս մտահոգութենէն էր որ ծնաւ Գերմանիոյ «աշխարհաժաւալ քաղաքակառուութեան» գաղափարը: Այս նախանձէն մղուած գերման կայսրը նախ իր ուշադրութիւնը ուղղեր էր Ֆրանսական Մարոքի վրայ: Երբ հետզհետէ գերման ճարտարարուեստը եւ վաճառականութիւնը հասան իրենց բարգաւաճումի գագաթնակէտին, գերմանական սուր ախորժակը դեռ աւելի սրեցաւ:

Պուրէլչի դաշինքն ետք, որ 1913ին վերջ դրաւ թուրք-պալքանեան պատերազմին, գերման կայսրը, բանբեր համագերման հոսանքին, համարձակօրէն աշխարհաժաւալ քաղաքականութեան դրօշը

պարզեց: Ուզեց Ռուսաստանի ձեռքէն խլել Պայթիկեան գաւառները, քանի որ անոնք ճարտարարուեստի եւ առեւտուորի հարուստ շահաստաններ էին, եւ երկրորդ՝ վրէժ լուծելու Նիկոլա Բ. ձարէն, որ չէր ուզած բաժնուիլ Ֆրանսական նիզակահեցութենէն: Ան ուզեց Պելճի-քայէն յափշտակել Անվերսան, աշխարհի ամէնէն վաճառաշահ քաղաքներէն մէկը:

Ամէնէն աւելի, կայսեր ախորժակը գրգռեր էր Ֆրանսան, որուն երկիրը արգաւանդ եւ բազմաբեր էր, ծածկուած պարարտ եւ ինքնաբոյս դաշտերով: Ծրագրեր էր ամէնէն առաջ Ֆրանսայէն փրցնել Նանսի եւ Բէզանսոն, նշանաւոր՝ ժամացոյցի գործարաններով եւ երկաթի վաճառքներով:

Եւ որովհետեւ ախորժակը ուտելով կը բացուի, կայսրը եւ իր շրթներէն կախուած համագերմանները երազեցին գրաւել Ֆրանսական Ափրիկէի բոլոր գաղթավայրերը, անոնց մէջ քշելու ոչ միայն ճարտարարուեստի արտադրութիւնները, այլ նաեւ անոնցմէ ճարելու հում նիւթեր:

Եւրոպայի եւ Ափրիկէի մէջ կատարուելիք այս գրաւումը, զերման աշխարհածաւալ քաղաքականութեան ձախ թեւերն էին, իսկ աջը զէպի արեւելք երկարած էր: Ասիկա պիտի իրականանար, երբ զերման ժողովուրդէն «երկրպագուած» կայսրը առաջին համաշխարհային պարերազմի փողը հնչեցնէր:

ԱՐՇԱԻ ԴԷՊԻ ԹՐԲԱԿԱՆ ԱՍԻԱՆ

Գերմանական ոսկեղէն երազը թրքական Ասիան էր, «կոյս հողը» ուսկից արեւը կը ծագէր եւ կը տեղար ոսկին: Այդ ընդարձակ երկրին մէջ, երկու պատուական մարզարիտներ կը շլացնէին Գերմանիոյ աչքերը, Փոքր Ասիան եւ Միջագետքը, որոնք կը ներկանային անոր իբր «աւետեաց» երկիրներ:

Այն օրը, երբ Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Բ. եւ Գուլելմոս Բ. ըզրկախառնուեցան, եւ զիրար եղբայր կոչեցին, անօթի եւ մերկ գերմանացիները թափեցան Թուրքիա, ուր անոնք, Կ.Պոլսոյ մէջ, գրաւեցին հայ պաշտօնեաներու կարեւոր դիրքերը, ստանալով բարձր թոշակներ. ուրիշ խումբեր՝ կատարեալ արշաւանք մը գործեցին Թուրքիոյ ուրիշ մասերու մէջ, ամէն տեղ գտնելով սիրալիր ընդունելութիւն:

Համագերման գրիչները պանծացուցեր էին ասիական Թուրքիան, Գերմանիոյ մէջ ստեղծելով անսահման խանդավառութիւն եւ ծայրաչեղ թրքասիրութիւն:

Այս խաղաղ թափանցումին մէջ կարեւոր դեր խաղացեր էր նախ զերման զիտական արշաւը, փառաբանելով Նիքատ-Տիգրիսեան հոփիտին մէջ հանգչող Քաղղէաստանը, որ հանդիսացեր էր ո՛չ միայն մարդկային քաղաքակրթութեան առաջին օրրանը, այլ կեդրոն մը, ուրկէ տարածուած էր քաղաքակրթութիւնը զէպի զանազան երկիրներ: Գիտական արշաւախումբը կը փառաբանէր մասնաւորապէս Քաղղէաստանի առասպելական պտղաբերութիւնը, որ թէեւ թրքական տիրապետութեան օրով փճացած էր, սակայն աշխատող բազուկներու շնորհիւ կարող էր վերանորոգուիլ:

Գերմանիան արդէն ինքզինքը «բնական ժառանգորդ» համարելով Օսմանեան կայսրութեան, «բարեկամ» Սուլթանէն խնդրեր էր երկաթուղային արտօնութիւններ, եւ Սուլթանը, արեւելեան ժողովուրդին մէջ մեծցած մարդը, առատօրէն ամէն բարիք տուեր էր իր «սիրելի եղբոր»:

Գերմանիան երկաթուղային ցանցով մը պատած էր Թուրքիան, եւ դրած էր հսկայ ծրագիր մը՝ «Ֆերման»ը:

ՊԵՐԼԻՆ-ՊԱՂՏԱՏ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Երկաթուղային այս հսկայ դիժը մեկնելով Պաղտատէն, քերելով թրքական հարուստ երկիրները, պիտի բերէր ասիական հարուստ բերքերը՝ թափելու Համպուրկի մեծ նաւահանգիստին մէջ եւ անկէ Պերլին, ուր գիժը կանգ պիտի առնէր:

Այսօր, մեզի երազ մը կը թուի այդ հսկայ ծրագրին իրականացումը. բայց եթէ Գերմանիան յաղթական ելլէր մեծ պատերազմէն, ո՛չ մէկ կասկած, որ զերմանական գործնական միտքը այդ ծրագիրը յաջողութեամբ պիտի իրագործէր, մանաւանդ որ երիտասարդ Թուրքիան «գաղտնի դաշնակիցն» էր թրքասէր Գերմանիոյ:

Ձարսկան Ռուսաստանի կոյր քաղաքականութիւնն էր որ երիտասարդ Թուրքերը ոտքով-ձեռքով նետեր էր Գերմանիոյ գիրկը: «Ջուրի մէջ ինկած մարդը, կ'ըսէ իմաստուն առածը, փրկելու համար օձին ալ կը փաթթուի»:

«ՀԱՅԱՍՏԷՐ»Ի ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Համագերման հեղինակաւոր գրիչ մը, Պաուլ Ռոհրբախ, որ «Խայասէր»ի համբաւ ալ ունէր, այսպէս կ'որոշէր Հայաստանի կարեւորութիւնը: «Հայաստանն իր աշխարհագրական դիրքով եւ մակերեսութի կազմութեամբ կը հանդիսանայ բանալի այն դիրքը, որ

տիրապետութիւն կու տայ Անատոլիայի վրայ: Այսպէս, Հայաստանի անցնումը Ռուսաստանի ձեռքը, ուրիշ բան չի նշանակեր բայց եթէ Թուրքիայի մէջ իրրեւ ինքնագլուխ պետութեան գոյութեան...: Թոյլ տանք, սակայն, որ տեղի ունենայ անցանկալիմ եւ յուսանք, անհաւատալի դէպքը, երբ ռուսական տիրապետութիւնը կը հաստատուի Հայաստանի վրայ: Այս դէպքիմ մէջ, Ռուսաստանը ունենալով իր տիրապետութեան տակ Հայաստանը, կը տիրապետէ եւ ամբողջ Փոքր Ասիոյ վրայ, Պարսից ծոցէն մինչեւ Միջերկրական ծովը, ինչպէս որ բերդը կը տիրապետէ առաջաւոր ամբութիւններու վրայ:

Չէ կարելի երեւակայել, կը շարունակէ ան, աւելի ահեղ թերի մը Փոքր Ասիոյ նկատմամբ, քան այն, որ Ռուսաստանը կ'ունենայ միացնելով իր ձեռքի մէջ Անդրկովկասը, հիւսիսային Պարսկաստանը եւ Հայաստանը»:

Ռուսական տիրապետութիւնը Հայաստանի վրայ, կը նշանակէր վերջ գննել գերմանական ոսկեղէն երազին, որուն հետ կապուած էին այնքան գեղեցիկ յոյսեր: Այս սեւ պատկերէն զարհուրած, հայասէր գերմանացին կը յայտնէր այս զգայացունց «գաղափարը», իբր «բերան» պաշտօնական Գերմանիոյ.

«Ուստի եթէ մեծ անիրաժեշտ է պաշտպանել Թուրքիան, այն ժամանակ քրքական պիտի մնայ մասն Հայաստանը: Եւ որովհետեւ քաղաքական օրէնքներուն ոյժով մեզ պիտի պաշտպանենք Թուրքիան մինչեւ վերջին ծայրայեղութիւն, ուստի թող պիտի չտանք որ Հայաստանն անցնի Ռուսաստանին»:

**ԳԵՐՄԱՆԻՈՑ ԳԱՂԱՓԱՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ՀԱՅԻ**

Քանի որ Գերմանիան որոշած էր ամէն զինով պաշտպանել իր գաղտնի դաշնակիցը, կը մնար նախատեսել Հայաստանի պաշտպանութեան կնճռոտ հարցը: Գերման սպայակոյտը շատ լաւ գիտէր մեր երկրին ռազմական դիրքը, որուն կարեւորութիւնը ակնյի եւս կը շեշտէր վեհապանձ, վիթխարի եւ երկնայայաց Մասիսը, որ մենաւոր կանգնած Այրարատեան աշխարհի մէջ, Մեծ Հայքի կեդրոնը, Առաջաւոր Ասիոյ հռչակաւոր լեռն էր: Սակայն եթէ Հայաստանի աշխարհագրական դիրքը առաջնակարգ կարեւորութիւն ունէր, անոր բնիկ ժողովուրդը, հայերը, այս հսկայ բերդին պահպաններն էին: Արդ, անոնք գերման սպայակոյտին համար անվստահելի տարր մը կը կազմէին, որովհետեւ վախ ունէին որ հայերը, գերման-ռուս պատերազմի մը պարագային, սիրայօժար պիտի ենթարկուէին Կովկասի մէջ ապրող իրենց ազգակիցներուն ազգեցութեան եւ այդ ձեւով պիտի զիւրացնէին ռուսական գործը Հայաստանի նուաճման մէջ:

Ամէն անգամ, երբ ռուսերը յարձակեր էին Թուրքիոյ վրայ, կովկասեան բանակները, որոնց մէջ բազմաթիւ հայ զինուորներ, առաջնորդուած տաղանդաւոր հայ զօրավարներէ, զրկարաց կ'ընդունուէին թրքահայ ժողովուրդին կողմէ, որոնց կ'օգնէին նաեւ պաշարով: Այս գրկարաց ընդունելութիւնը ռուսի գեղեցիկ աչքերուն համար չէր, այլ հայ ժողովուրդի մղուած իր առողջ բնազդէն, գիտնալով որ ռուսական տիրապետութեան ենթարկուած իրենց հայրենակիցները, շնորհիւ երկրին արդարադատ օրէնքներուն, կեանքի, պատիւի եւ ինչքի կատարեալ ապահովութիւն ունէին: Եւ եթէ այս անգամ ալ փարէին ռուսական իշխանութեան՝ նոյն բնազդով շարժած կ'ըլլային, մանաւանդ որ չէին պիտի թէ Հայկական Հարցի պատճառն է որ Գողգոթայէ Գողգոթա կը քալէ:

Եթէ գերմանական դիւանագիտութիւնը այս բոլորը գիտէր, խիղճ եւ բարի կամք ունենար, հեշտութեամբ կրնար համոզել իր «գաղտնի դաշնակիցը», իր օսմանցի հպատակ հայերուն շնորհելու, նոյնիսկ իր մեծագոյն շահերուն համար, հայկական «բարեկրօնութեանը», որոնց համար այնչափ անմեղ արիւն թափեր էր: Այս արդար եւ մարդասէր ձեւով, Գերմանիան՝ Թրքահայաստանի հայ ժողովուրդը յախտեանական երախտագիտութեամբ իրեն պիտի կապէր եւ իր ռուս ոստիկ երեսին շառաշու սպտակ մը պիտի իջնցնէր: Սակայն Գերմանիան չուզեց այդ փառքին բարձրանալ, որովհետեւ ան լաւ գիտէր թէ Իթիհատի կուսակցութիւնը չէր կրնար հանդուժել որեւէ պետութեան մը միջամտութիւնը, նոյն իսկ եթէ այդ պետութիւնը իրեն բարեկամ եւ զաշնակից ըլլար, խառնուելու իրեն ներքին գործերուն մէջ, եւ երկրորդ՝ որ կարեւորն է, ան գաղտնի ծրագիր մը ունէր որ լաւազոյն կերպով պիտի լուծէր Հայկական Հարցը, եթէ մօտալուտ համաշխարհային պատերազմէն յաղթական դուրս գար:

Հապճեպի մատնուած Գերմանիոյ համար, «սեւ գազանը» Ռուսաստանն էր, որ հայերու կողորդէն բռներ էր, եւ որոնց կողքին կանգնած հայ բարձրաստիճան մտաւորականներն ու գործիչները չէին կրնար բաժնուել ձարապաշտութենէ, որուն համար ատելութեամբ լեցուեր էին դէպի Գերմանիան:

Նկատելով այս վտանգը, գերմանացի քաղաքագէտներու մտքին մէջ նոյնպէս ծնաւ «Հայաստանը առանց հայերու» գաղափարը, բայց բոլորովին տարբեր ոճով:

Մինչ ռուսական քաղաքականութիւնը իմաստութիւն կը համարէր հայերը ոչնչացնել, ոչ թէ ռուսերու ձեռքով, այլ ինչպէս ըրեր էր՝ Կովկասի մէջ հայերը կոտորել տալով թաթարներու ձեռքով, ինչպէս պիտի ընէր նաեւ թրքահայերը կոտորել տալով կատգած Իթիհատի ձեռքով, գերմանական քաղաքականութիւնը խոհեմութիւն չէր համարեր կոտորածներու միջոցով իրականացնելու իր գաղափարը:

Գերմանական գաղափարն էր՝ հայ ժողովուրդը իր հինաւուրց հայրենիքէն ուրիշ տեղ փոխադրել: Բայց ո՞ր դոնեւ այդ վայրը, հոն քշելու համար երկուքուկէս միլիոն հայեր, որպէսզի աշխարհի ուշադրութիւնը չգրաւուի:

ՀԱՅԵՐԸ ԴԷՊԻ ՄԻՋԱԳԵՏՔ ԵՒ ՍՈՒՐԻԱ

Մինչ գերման քաղաքագէտները անճրկեր մնացեր էին այդ վայրը գտնելու կնճռոտ հարցին առջեւ, նոյն «հայաւեր» Ռոհրբախը, օժտուած գերմանացիի գործնական խելքով, զրիչի մէկ հարուածով խնդիրը լուծեց, որ իրեն համաձայն թէ՛ օգտակար պիտի ըլլար հայերուն, թէ՛ գերմանացիներուն եւ թէ՛ թուրքերուն:

Ան կ'առաջարկէր «հայերն իջեցնել իրենց լեռներէն եւ անոնցմէ կազմուած գաղութները բնակեցնել Միջագետքի եւ հիւսիսային Սուրիոյ մէջ, Պաղատտի երկաթուղիի երկարութեան»: Ապա կ'ըսէր. «հայերն իրենց մտաւոր եւ մշակութային ընդունակութիւններով կը ծաղկեցնեն այդ վայրերը, քե՛լ իրենք կը հարստանան եւ քե՛լ կը հարստացնեն Պաղատտի երկաթուղիին բաժնետէրերը»:

Հայասէր զորողը միայն հայերու եւ գերմաններու օգուտներով չէր մտահոգուած, այլ իր յատուկ դուրգուրանքին առարկայ էր Գերմանիոյ գաղտնի դաշնակցը, որպէսզի ստանար «ատրիժի բաժինը»: Ըստ իրեն «թուրքերը պիտի ստանային կրկնակի օգուտներ: Հայերու թողած տեղերուն մէջ բնակեցնելու է, կ'ըսէ ան, մահմետական գաղթականները կովկասէն, Բոսնիայէն եւ Մակեդոնիայէն, եւ այսպիսով թուրք ազգաբնակչութիւնը կը կապուի Անդրկովկասի թուրքերուն հետ. իսկ անոնց միջոցով նաեւ Վոլգայի ափերուն վրայ ապրող թաթար ցեղերու հետ»:

Միշտ այս եղած է Սուլթան Ապտ-իւլ Համիտի գաղափարը, եւ ապա դաւանանքը եղաւ մոլեռանդ եւ քրիստոնեան ատող՝ Իթթիհատի կուսակցութեան, որ մեծ մասով կազմուած էր «տեօնմէ» հրեաներէ, եւ որուն արտաքին քաղաքականութիւնը կը հանդէսը «համախաւսմական» եւ «համաթուրանական» պաշտամունքին վրայ:

ԽՕԼԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

Սակայն, հայասէր գերմանացին, կամաւ նկատի չէր ուզած առնել թէ իր ծրագիրը հակամարդկային արարք մըն էր, քանի որ քսանհինգ դարերէ ի վեր հայրենիքին մէջ ապրող ժողովուրդը մը իջեցնել իր հովասուն լեռներէն, զրկել զայն իր պայծառ երկիրէն, իր առողջ

ու կազդուրիչ կլիմայէն, իր պաղպաջուն եւ անուշահամ աղբերներէն, եւ զայն տանիլ՝ նետել աւազոտ եւ սօթակէզ կլիմաներու տակ. անոր համար պիտի ըլլար անմոռանալի զժախտութիւն մը:

Գերմանիան շատ լաւ գիտէր որ խաղաղասէր, անզէն եւ գինաւարժութեան մէջ բոլորովին անփորձ ժողովուրդ մը կարող չէր գերմանական արդիական գէնքերով օժտուած պետութեան մը սպառնալ, եթէ նոյնիսկ ուսը ոտք դնէր հայկական հողի վրայ:

Երբ հասնին սարսափի օրերը, որոնց ընթացքին անադորոյն Իթթիհատը բառացի կերպով պիտի դործադրէ «հայասէրի» յայտնած գաղափարը, գերման սպայակոյտը եւ անոր գաղափարի թարգման «հայասէրը», բաց աչքով պիտի տեսնեն այդ լեռնցի ժողովուրդը, որ ոչխարներու պէս քշուած երկու թուրք ոստիկան զինուորներէ, քայլուտ համար Գողգոթայէ Գողգոթա, քար մը անգամ պիտի չունենայ ձեռքին մէջ ինքզինքը պաշտպանելու համար մահուան ճիւղաններէն:

Բայց այս բոլորը «հայասէր» գերմանացիին համար երկրորդական էին, քանի որ ամէն «հայասէր» եւ «քարի» գերմանացիի սրտին մէջ խորագէտ դրոշմուած էր «Գերմանիա, աշխարհի մէջ, ամէն բանէ վեր» ազգային երգի թրթռացումները: Անոր համար կարեւորութիւն ունեցող հարցն էր, իրենց լեռներէն իջնող հայերը շարել Պերլին-Պաղատտի երկաթուղիի երկարութեան, որպէսզի անոնց ձեռքով ծաղկին այդ խոպան ու անջրդի անապատները, զանոնք վերածելու համար «երկրաւոր դրախտի» մը, եւ այդ հրաշքը կարող էին միայն կատարել այդ տեղահան հայերը, օժտուած «մտային եւ մշակութային ընդունակութիւններով», ինչպէս կ'ըսէ «հայասէրը»:

ՀԱՅ ՑԵՂԻ ՊԱՆԾԱՑՈՒՄԸ

Միայն հայասէր Ռոհրբախը չէր որ կը գնահատէր հայ ցեղին ճիրքերը, այլ նաեւ գերման գիտական արշաւախումբի յայտնի դէմքեր, որոնք ասիական Թուրքիան ուսումնասիրելէ հոք, հասնելով մինչեւ մեր պատմական Հայաստանը, որուն ծնունդ կու տային Եփրատի եւ Տիգրիսի ափերը: Բայց առանձին ուշադրութեան առարկայ դարձաւ Կիլիկիան, երկրագունտի ամէնէն արգաւանդ վայրերէն մէկը, ուր համագերմանականութիւնը գտաւ իր երազած գաղթավայրերէն մէկը, Միջերկրականով կապուած Եւրոպայի հետ:

Հայկական թագաւորութեան հինաւուրց այդ հողերուն վրայ, գերման մեծ գիտնականներ ուսումնասիրելով հայ ազգի ցեղաբանութիւնը, զարմացան՝ գտնելով հնադարեան ժողովուրդ մը, որ թէև գերմանականին պէս «դեղնորակ մութ», «կապուտաչուի» եւ «չիլակահեր» չէր, բայց ըլլալով թխամորթ, մեծ սեւաչեան եւ սեւահեր,

աւելի գտարիւն արիական եւ ունէր աւելի կատարելագործուած լեզու, անկէ աւելի խելացի, ճարպիկ, ձեռներէց եւ ընտանեկան բարբերով գերմանականին չափ բարձր:

Այս առաջին հանդիպումը հայոց հետ այն օգուտն ունեցաւ, որ գերման նշանաւոր գիտնականներ գնահատեցին հայ ցեղին ձիրքերը, սորվեցան հայ լեզուն, նուիրուեցան հայկական գրականութեան, պատմութեան եւ աշխարհագրութեան այնպիսի խորաթափանց ոճով, որ այդ նիւթերուն մէջ հայոց ուսուցիչները դարձան:

Անոնց ուսումնասիրութեան արդիւնքն եղաւ պանծացումը հայ ազգին: «Անկասկած է, կը գրէ արեւելագէտ՝ Հիւրշման, որ ժամանակակից հայերը, որոնք արժանաւոր յաջորդներն են իրենց մահապետներուն, իրենց բրիտոնեական բարոյականութեամբ, ձգտումը դէպի գիտութիւնն ու կրթութիւնը, իրենց բազմակողմանի ընդունակութեամբ, արժանի են քաղաքակիրթ աշխարհի ամենաբարձր գնահատանքին»:

Ուրիշ նշանաւոր գերման հայագէտ մը, Ֆրիտրիխ Միւլլէր, համարձակօրէն կը գրէ. - «Այնպիսի ազգութիւն մը, որպիսին հայկական ազնիւ ազգն է, որ ոչ միայն փառաւոր անցեալ ունի, այլ եւ իսկապէս քանկագին երկերով հարուստ գրականութիւն, չէ կարող ոչնչանալ, այլ ընդհակառակն ինքնագիտակցութեամբ, ինքնավստահութեամբ պետք է սպասէ իր լաւ օրերուն»:

Սակայն այդպէս չեղաւ: Պաշտօնական Գերմանիան, իր բոլոր մասնաճիւղերով, նախամեծար համարեցաւ արեւակից նկատելու թուրք ցեղը, եւ առաջին առիթը ներկայանալուն, անոր հետ միասին ոչնչացնելու «հայկական ազնիւ ցեղը» որ արիական եւ քրիստոնեայ Գերմանիոյ աջակցութեան «կը սպասէր իր լաւ օրերուն»:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Համագերմանութեան ծաւալապաշտ քաղաքականութեան երեսէն, Ռուսաստան եւ Անգլիա, երկու դարաւոր ոսոխներ, իրարու հետ բարեկամացեր էին: Պաղտատի երկաթուղին, երկու պետութիւններու բարեկամական կապը դեռ աւելի ամրապնդեց էր, որովհետեւ ռուսական եւ անգլիական շահերը միացեր էին: Երկաթուղին հասնելով պարսից ծոցը, Հնդկաստանի ճամբան պիտի անցնէր Գերմանիոյ ձեռքը: Անգլիան պէտք ունէր ռուսական ցամաքային բանակներուն, խորտակելու համար իր ահարկու մրցակիցները: Այս նպատակին հասնելու համար, Անգլիան իր նոր բարեկամին զիջեց էր Կ. Պոլիսն ու նեղուցները: Ասոնց քով մեծ Հայաստանը կը մթազնէր եւ Հայկական Հարցը իրեն համար նշանակութենէ զուրկ էր, եւ հետեւաբար

Ռուսաստանի ձեռքը ազատ ձգեց էր, որպէսզի Հայկական Հարցը լուծել տայ իր ուզածին պէս: Մանաւանդ թէ կոմս Վորոնցով-Դաշկով, խորհրդակցելով կաթողիկոսական պատգամաւորներուն հետ, գրեց էր «բոլոր հայերը, առանց կուսակցական խտրութեան, համաձայն են որ Թրքահայաստանի բարեկարգումներուն մախաճնոնողը Ռուսաստանն ըլլայ»: Եւ անշուշտ այս պարագան՝ ռուս կառավարութիւնը հաղորդեց էր անգլիական կառավարութեան:

Անգլիան ուրիշ զօրաւոր պատճառ մըն ալ ունէր իր խղճի խայթը թմբեցնելու համար: «Երբ Արեւելեան հարցը բացուեց էր հայոց կոտորածներով, կը գրէր Ֆրանսացի հեղինակաւոր գրիչ՝ Մէյնէրոս, Անգլիոյ եւ Ռուսաստանի աւանդական գիրքերը յեղաշրջուած էին: Անգլիան Եւրոպայի կ'առաջարկէր միջամտել՝ ստիպելով Սուլթանը որ բարեկարգումներ կատարէ ի նպաստ իր հպատակ քրիստոնեաներուն. Ռուսաստանն էր որ Սուլթանին կողմը բռնեց, միջամտութիւնն եւ բարեկարգումները խափանելու համար: Այս քաղաքականութիւնը բացատրեց մախաճատութեամբ մը ռուս դեսպանը. «մեք չենք ուզեր որ Հայաստանը նոր Պուլղարիա մը դառնայ»: Ռուս դեսպանը պարզ լեզուով ըսել կ'ուզէր, որ միջամտութիւն Թուրքիոյ ներքին գործերուն մէջ, կը նշանակէր թոյլ տար որ Սուլթանը հայերու արիւնով լուայ Հայոց աշխարհը, ինչպէս որ ան Պուլղարներու արիւնով լուացեր էր Պուլղարիան»:

Ֆրանսացի պատմագրին յիշատակած կոտորածները՝ 1896ի համարտեան ջարդերն էին, որոնց քաջալերողն եղեց էր արեւելքի քրիստոնեաներու պաշտպանը, Նիկոլա Բ. ձարը, որուն ղեսպանը Կ. Պոլսոյ մէջ շշնջեց էր Սուլթանի կայսերական ականջներուն. «կոտորեցէք, Ձերդ վեհափառութիւն, կոտորեցէք», եւ այս խրախուսանքի հետեւանքն էր որ թուրք մայրաքաղաքին փողոցները ողողուեցան հազարաւոր անմեղ հայերու արիւնով:

Իսկ Ֆրանսան, Պերլինի Յւրդ յօդուածէն ի վեր, միշտ անտարբեր դիրք մը բռնեց էր Հայկական Հարցի լուծումին դիմաց: Քանի որ նախ անտեսական մեծ շահեր ունէր Օսմանեան կայսրութեան մէջ, եւ երկրորդ՝ երկար դարերով միացած Անգլիոյ հետ, թրքասիրական քաղաքականութեան ախոյեաններէն եղած էր եւ Թուրքիոյ ամբողջութեան հզօր պաշտպանը:

Այս քաղաքականութիւնը փոխուեցաւ, երբ Ռուսաստանի դաշնակից դարձաւ, եւ Նիկոլա Բ. ձարին Փարիզ այցելելէն վերջ՝ մոտկովեան հլու կամակատարը եղաւ:

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Մեզի ծանօթ է Աւստրիոյ բռնած դիրքը համիտեան կոտորածներուն առիթով: Թուրք-Պալքանեան պատերազմին իր դաշնակից Գերմանիոյ պէս կուսակից էր Թուրքիոյ ամբողջութեան սկզբունքին, իրրեւ պատենչ ռուսական հեղեղի առջեւ եւ պահապան նեղուցներուն:

Այսպիսով թու՛մք մը կանգնուած կ'ըլլար Ռուսաստանի դիմաց, որ կը ձգտէր Թուրքիոյ ճակատագիրը տնօրինել, եւ այս նպատակին հասնելու համար վերաբարձար էր Հայկական Հարցը:

Բացայայտ էր, որ Աւստրիա-Հունգարիան, ամբողջապէս գերմանական թեւերուն մէջ մտած, պիտի հակառակէր ռուսական ծրագրին:

Փալով Իտալիոյ, անիկա արդէն նոր պետութիւն մըն էր, եւ չէր կրնար խառնուիլ Արեւելեան Հարցին մէջ, որմէ անբաժան էր Հայկական Հարցը: միւս կողմէ, իրր դաշնակից Գերմանիոյ եւ Աւստրիոյ, որոնց հրամանին տակ կը գտնուէր, ուրիշ կերպով չէր կրնար շարժիլ:

«ՅՐԱՆ-ՄԱՍՈՆ» ՕԹԵԱԿՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՐԸ

Հայկական Հարցի դէմ կանգնած ամենակարող զաղտնի ոյժը, որ մեծ ազդեցութիւն ունէր միջազգային քաղաքականութեան վրայ, «Քրան-մասոնական օթեակներն» էին, որոնց ազդեցութեան վրայ դեռ ոչ մէկ հայ գրիչ մատը դրած էր:

Հրէական այդ ահագին ոյժը հետզհետէ զօրանալով՝ համաշխարհային պետութեան մը վերածուեք էր: Քաղաքական ամէն ծանր դէպքերուն, պատերազմի, խաղաղութեան, ընկերային շարժումներու եւ դաշինքներու մէջ, անոնց մատը կար անպատճառ: Անոնց կեղերնը Փարիզ էր եւ կը կոչուէր «Մեծ-Արեւելք»ի Քրան-մասոնական օթեակը, ուր կը գումարուէին ամէն երկիրներու օթեակներու երեսփոխանները, անկէ զաղտնի հրահանգներ ստանալու եւ անոր համաձայն զաղտնի զործելու համար:

Անոր ազդեցութիւնը բարձրագուծն կ'իշխէր Սելանիկի Քրան-մասոնական օթեակին վրայ, որ որջն էր հրեաներուն, «տէօնմէ» հրեաներուն եւ երիտասարդ թուրքերուն: Այդ օթեակին մէջ էր որ պատրաստուեք էր թուրք զինուորական յեղափոխութիւնը: Այդ հրէաշունչ օթեակին մէջ էր որ համաշխարհային առաջին պատերազմը ծագելուն, պիտի դրուէին թրքահայութեան բնաջնջումի ծրագրին նախահիմքը:

Գործելով միշտ մութի մէջ, այդ զարհուրելի ազանդը, հրէական զրամով հիմներ էր ամէն երկիրի մէջ կարեւոր եւ ազդեցիկ մամուլ

մը, կազմելու համար, հրէական օգուտին, «հասարակաց կարծիք» մը՝ անոր միջոցով ազդելու այդ երկիրներու կառավարութեանց վրայ:

Ամէնէն աւելի Ֆրանսայի մէջն էր որ «Մեծ-Արեւելքի» օթեակը զգալի ըրեր էր իր ոյժը: Իր ձեռքն էր ուզած ժամանակ տապալել նախարարական աթոռները, եւ անոնց վրայ բարձրացնել իր ուզած անձերը: Ան էր որ ուղղութիւն կու տար Քրանսական կառավարութեան: Անոր ազդեցութիւնը մեծապէս զգալի էր ներքին գործերու եւ աշխատանքի նախարարութեանց գրասենեակներու մէջ: Օտար երկիրներէ զաղթող հրեայ մը անմիջապէս կը ստանար Քրանսական անցաղիւր, բնակարան եւ աշխատելու իրաւունք: Շատերը գործ կամ պաշտօն եւ տիտղոս ստանալու համար՝ այդ ազանդի տոմարներուն մէջ կ'արձանագրուէին:

Ես ինքս՝ ճանչցած եմ Փարիզի մէջ բաւական թիւով նոյնիսկ հաւատացեալ հայեր, որոնք գործ, պաշտօն եւ պաշտպանութիւն ձեռք բերելու համար, Քրան-մասոնութեան անդամակից եղած էին: Անոնցմէ ոմանք ալ, որ աստիճանի բարձրացում ստացեր էին, հազած իրենց Քրան-մասոնութեան պաշտօնական զղեստը, ուսերէն կախած աղանդին խորհրդաւոր ժապաւէնը, հայ զոյգերու պսակներ կը կատարէին, աշխատելով որ հայ վարդապետը կամ քահանան չմօտենայ անոնց: կ'արդիւլէին որ մահամերձ հայ Քրան-մասոնի սնարին մօտենայ քահանան՝ աղօթելու կամ խորհուրդ մը կատարելու, հակառակ անոր հայ բարեպաշտ կնոջ թախանձանքներուն: Անոնք էին որ կը կատարէին թաղման արարողութիւնը, աղանդին օրէնքներուն համաձայն, եւ մեռնողը յանձնելով «Տիեզերքի մեծ Յարտարապետին», շատ անգամ ննջեցեալին մարմինը աճիւնացնելով:

ԽՈՐ ՀԱՄԱԿՐԱՆՔ ԴԷՊԻ ՅՐԱՆՍԱՆ

Միայն զարմանալի երեւոյթն այն էր, որ թրքահայ եւ արտասահմանի հայ զործիչները եւ մտաւորական կոչուած դասակարգը, որոնք Հայկական Հարցը կը հետապնդէին, բազմաթիւ յուսախաբուցութիւններէ ետք, դարձեալ աչքերնին յարեր էին Ֆրանսայի, միշտ այն յոյսով որ վերջապէս անիկա օր մը ոտքի պիտի կանգնի եւ իրր արեւելքի քրիստոնէութեան հին «պաշտպանը», իր հօր թեւարկութիւնը տարածելու համար թրքահայութեան վրայ:

Այս միամիտ յոյսը անհիմ չէր: Հայ մտաւորական մարդիկը, մանուկ հասակէն սնած ու մեծցած Քրանսական եւ մանուաւոր արտասահմանի Քրանսական եւ հայկական միջնակարգ վարժարաններու մէջ, պաշտամունք ունէին դէպի Քրանսական գրուիչ յեղուն, անոր պատմութեան, զրականութեան եւ մտաւոր մշակոյթի ամէն

ճիւղերուն, որոնց մէջէն Ֆրանսան իրենց կ'երեւէր իբր ասպետական թագուհի մը, միշտ պատրաստ իր պաշտպանողական թեւերը տարածելու թշուառ եւ անպաշտպան ժողովուրդներու վրայ:

Գատը-գիւղի Քրիստոնեայ եղբայրներ կոչուած մեծ վարժարանին մէջ, մրցակցութեան հանդէսներուն, որոնց միշտ կը նախագահէր կուրծքը շքանշաններով զարդարած ֆրանսական դեսպանը, հայ մանուկը թուփակի պէս կ'արտասանէր այս նշանակալից խօսքերը. «Ամէն մարդ երկու հայրեմբի ունի, մախ Ֆրանսան եւ ապա իր սեփական հայրեմբի»: Բազմաթիւ ծնողներ, իրենք զիրենք փառաբանուած զգալով, ծափերու մէջ կը խնդրէին այդ խօսքերը: Ես ինքս ահանատես, ահանջալուր եղած եմ այդ տեսարաններուն:

Թրքահայ մտաւորական եւ ազգային գործիչներու այս պարզամիտ դիւանագիտութիւնը՝ մինչեւ վերջ շարունակուեցաւ: Անոնք երբեք չկրցան զանազանել ֆրանսացի բարի, ազնիւ, մարդասէր եւ կարեկցող ժողովուրդը՝ անոր պետական վարիչներէն, որոնց համար իրենց երկրին շահերն ամէն բանէ վեր էին, ինչպէս կովկասահայ «մտաւոր գործիչ»ները երբեք չկրցան զանազանել ռուս բարեմիտ, սրտաբաց եւ նանրահաստ ժողովուրդը՝ ճարականութեան անողորմ վարիչներու քաղաքականութենէն:

Ֆրանսական կառավարութիւնը շատ լաւ գիտէր որ Թուրքիոյ եւ արտասահմանի մէջ ֆրանսերէն լեզուն, ֆրանսական ազդեցութիւնը, անոր վաճառականութիւնը տարածողները հայերն եղած էին, ինչպէս նաեւ Արեւելքի մէջ իր դեսպանատուններուն թարգմանները հայերն էին, իրեւ վստահելի տարրեր:

Հայերու այս խորին համակրանքը դէպի Ֆրանսան, շատ լաւ գիտէր նաեւ նոյնիսկ թուրք խուժանը, այնպէս որ մեծ եղեռնի գործադրութեան տարուան մէջ, ինչպէս կը վկայէ ֆրանսացի ահանատես մը, երբ զազանացած կատաղութեամբ հայերու գանկերը կը ջախջախէր Կարինի մէջ, կ'ազազակէր. «Շուն, կեաւուր, գացէ կանչեցէ՛ք ձեր պաշտպան ֆրանսացիները, որ գան ձեզ մեր ձեռքէն ազատելու»: Եւ երբ ջարդուած, կոտորուած հայութեան բեկորները հրաշքով մը ազատած՝ ցրուեցան աշխարհի չորս կողմը, ֆրանսական կէս պաշտօնական թերթը «Լը Թամ» չկրցաւ չգրել սա հետեւեալը. «Հայերու ջնջումով՝ ֆրանսական լեզուն ալ Թուրքիայէն ջնջուեցաւ»: Միայն մոռցեր էր հայերուն ազգ ու դաս մը տալու. գրելով՝ համակրանքը տարրեր բան է, իսկ դիւանագիտութիւնը՝ տարրեր:

ՎԵՐՋ՝ ԶԻՆԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Գերմանական բանակներուն ջախջախիչ յաղթանակը ֆրանսական գունդերու վրայ, ոչ միայն Ֆրանսան, այլ բոլորը ցնցեր էր: Մինչեւ ֆրանս-գերման պատերազմը, Ֆրանսան նկատուած էր գինուորական անպարտելի զօրութիւն եւ հարագատ յաջորդը «Մեծ յեղափոխութեան» բանակներուն, որ գրեթէ անօթի ծարաւ եւ բողոքոտ ամբողջ Եւրոպան զողացուցեր էր, այնպէս որ Աւստրիոյ դեսպանը գրեր էր իր կառավարութեան. «Երբ Ֆրանսան հարբուխէ բռնուած է, աշխարհն է որ կը փոնգտայ»:

Գերման յաղթանակէն յետոյ այդ դերն անցեր էր Գերմանիոյ, որուն «երկաթէ վարչապետը» Եւրոպան իր մականին տակ կը պահէր: Գերմանիան հասեր էր իր նպատակին: Անոր գերիշխանութեան վախէն, ոչ ոք կը մտածէր փոխ-վրէժի պատերազմի մը մասին:

Իրապէս, Գերմանիան յազեցած ըլլալով բովանդակ Եւրոպայի մէջ, բացի պալքանեան ազգերէ, ոչ մէկ պատերազմ տեղի ունեցաւ, ոչ մեծ, ոչ փոքր: Առաջին անգամն էր որ Եւրոպան կատարեալ խաղաղութեան շրջան մը կը բոլորէր: Բայց այս խաղաղութիւնը գինուած խաղաղութիւն էր, լեցուն պատերազմական ծախքերով եւ սպահնոթութեան վախով:

Կրկին աշխարհը յուզումի մատնուեցաւ, երբ 1913ին, խոր խաղաղութեան մէջ, Ռայխսթակ մէկ միլիոն մարքի արտասովոր վարկ մը քուէարկեց: Յայտնի էր որ այլեւս պատերազմը պիտի պայթէր, եւ ֆրանսական խորհրդարանը այդ բանը այնքան լաւ հասկցաւ, որ երբեք տարուան գինուորական ծառայութիւն հաստատեց, որպէսզի ֆրանսական բանակաթիւր շատ վար չմնայ:

Արդէն նոյն թուականին, երբ ես Պելճիքա կը դտնուէի, յանկարծ մարդիկ փողոցները իջած, թուրքիներ կը կարդային թէ Գերմանիան պատերազմ յայտարարեր է: Այս սխալ լուրը թէեւ հերքուեցաւ, սակայն ամէն մարդ համոզուած էր որ աշխարհի խաղաղութիւնը թելէ մը կախուած էր:

Ահա այս էր մեծ պետութիւններու հակամարտութեան ճշգրիտ պատկերը, երբ Պողոս Փաշա Նուպար, Գէորգ Կաթողիկոսին լրագոր ներկայացուցիչը, ձեռնարկեց իր քաղաքական դործունէութեան:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

Գէորդ Կաթողիկոսը նշանակելով Պօղոս Փաշա Նուպարը իր լիազօր ներկայացուցիչը արեւմտեան Եւրոպայի մէջ, նոր հիմնարկութիւն մը հաստատեց Հայկական Հարցի լուծումին համար: Այս հիմնարկութիւնը կոչուեցաւ «Ազգային Պատուիրակութիւն», քանի որ անիկա պաշտօն ունէր գործելու յանուն բովանդակ հայութեան:

Կաթողիկոսական ներկայացուցիչը կոնկրէր հազիւ ընդունած, անմիջապէս մեկներ էր դէպի Փարիզ, հոն հաստատելու համար իր քաղաքական գործունէութեան զրասենեակը:

Թէեւ այդ շրջանին Փարիզի մէջ կը գտնուէին արեւելեան քաղաքականութեան մէջ թրծուած հայ մարդիկ, սակայն Թիֆլիզի մէջ «ժամանակաւոր պիւրոյի» անդամներէն՝ Համբարձում Առաքելեան, մտաւորական մը եւ խմբագիր «Մշակ» լուրջ թերթին, ուզելով Պօղոս Փաշայի փառքին մասնակցիլ թրքահայութեան ազատագրումի գործին մէջ, էջմիածին գնաց Կաթողիկոսէն խնդրելով, որ զինքը գործակից եւ խորհրդական նշանակէ լիազօր պատուիրակին, առաջարկելով նաեւ որ իրեն խորհրդական կարգուի Սամսոն Յարութիւնեանը:

Սուրէնեան Կաթողիկոսը, ամէն առաջարկութեան ունկնդիր, նամակով մը թախանձեց Սամսոնին որ իր առաջարկը չմերժէ, քանի որ մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէ Հայկական Հարցի լուծման:

Ահա այդ կարեւոր նամակին պատճէնը:

«Բալխանեան պետութեանց եւ Տանկաստանի պատերազմից ու խաղաղութեան դաշ կապելուց յետոյ, ամենայն հաւանականութեամբ շատ շուտով լինելու է մեծ պետութեանց ներկայացուցիչներու կոնֆերանս: Յայտնի է ձեզ, որ արդէն նշանակելի եմ կոնդակով եւ խրմիրով վսեմափայլ Պօղոս Նուբար փաշային լինել մեր կողմից ներկայացուցիչ կոնֆերանսին եւ եւրոպական պետութեանց մօտ: Մեր կողմից պատգամաւորական մարմին կազմելու եւ տանկաստանից հարցին յաջող ընթացք տալու համար, անհրաժեշտ է խորհրդակցութիւն Պօղոս փաշա Նուբարին հետ, որպէսզի համերաշխ ու միահամուտ

գործունեության մը ընդհանուր ծրագիր մշակուի շուտով ոուսահայոց, տանկահայոց ու Ամերիկայի հայոց մէջ: Ի նկատի ունենալով այս առաջնակարգ կարեւորութիւն ունեցող խնդրին յաջողութիւնը, սոյն նամակով խնդրում եմ ձեզ ի սէր Տանկահայաստանի բազմաչարչար ժողովրդի, բարեհաճել գնալ մեր կողմից, պարոն Համբարձում Առաքելեանի հետ Փարիզ, խորհրդակցելու Պօղոս Փաշա Նուրարի հետ եւ այս խորհրդակցութեան արդիւնքն զեկուցանելու ինձ: Միանգամայն աներկբայ է, որ այս իմ դիմումը յանձն կ'առնէք եւ կը կատարէք յաջողութեամբ: Լիայոյս եմ, որ ձեր փորձառութեամբ եւ խոհական գործունեութեամբ մեծապէս կը նպաստէք տանկահայոց հարցի յաջող լուծելուն, եւ իմ տառապեալ գաւակների համար կը ծագի փրկութեան արշալոյս եւ օրհնութեամբ կը յիշուի ձեր անունը»: (Տես ԼէՕ, Թրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Հտ. Բ. էջ 88-89)

Յարուժիւնեանը չի դիտցուիր ի'նչ պատճառով, Փարիզ չեւանց եւ անոր տեղ նշանակուեցաւ Միքայէլ Վարանդեանը, նոյնպէս կովկասահայ, բայց աւելի կարող, աւելի մշակուած միտք մը, որ երկար տարիներով փաշային խորհրդականը մնաց:

Շուտով կաթողիկոսական ներկայացուցիչին շուրջ հաւաքուեցան թրքահայ ամէն գոյնէ ազգային «գործիչ»ներ, որոնց մէջ կային նաեւ բանաստեղծներ եւ վիպասաններ, որոնք թէեւ դիւանադիտութենէ բան չէին հասկնար, բայց ճնշում բանեցնելով բարեսիրտ փաշային վրայ, մտան ազգային պատուիրակութեան շրջանակէն ներս, որպէսզի կարենան փայլեցնել իրենց դիւանադիտական հանճարը, ազգային գատի պաշտպանութեան համար:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԳԵՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ռուսական կառավարութիւնը այնպիսի եռանդով ձեռք առեր էր Հայկական Հարցը, որ թուրք կառավարութիւնը ծանր տագնապի մատնուած, շտապեր էր մեծ վզրուկի նախադահույթեամբ յանձնախումբ մը կազմել, մշակելու հայաբնակ նահանգներու համար, բարենորոգումներու ծրագիր մը: «Հայոց պատրիարքարանը, ինչպէս կը հաղորդէր Կ.Պոլսոյ ղեսպան Գիրսը, վստահութիւն չունէր կառավարութեան աչքին, որովհետեւ անիկա կը գտնուէր ուսական դեսպանի ձեռքին մէջ, կապուած էջմիածնի հետ, այս պատճառով պատրիարքարանը չհրաւիրուեցաւ մասնակցելու նոր մշակած բարենորոգումներու քննութեան, այլ անոնց փոխարէն չորս կողմնակի հայեր, անոնց կարծիքները լսելու համար: Կառավարական ծրագիրը չափաւոր էր, յարմարեցուցած 1895ի Մայիսեան բարենորոգումներու:

Սակայն կառավարութիւնը տրամադիր է գիշումներ եւ փոփոխութիւններ ընելու, ինչպէս որ մտցուցեր էր շարք մը կարեւոր փոփոխութիւններ խորհուրդի կանչուած չորս հայերու դիտողութեանց ազդեցութեան տակ»:

ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կարեւոր էր, ինչպէս կ'երեւի ուսական «Նարնջագոյն գիրք»էն, համաձայնութեան գալ կառավարութեան հետ եւ ազատել զայն օտար միջամտութեան վախէն: Շատ հաւանական է որ այս բանակցութեանց լուրը հասեր էր Պետերբուրգի «Հայկական Կոմիտէի» ակննջին, եւ Պատրիարքարանի դիրքը զատապարտելի գտած: Այս կոմիտէն, թէեւ բաղկացած էր մտաւորական մարդերէ, բայց բարեբախտաբար, հեռու գտնուելով Վրոնցոյ-Դաշկովի թունալից ազդեցութենէն, քաղաքական դէպքերը կը դիտէր հեռատեսութեամբ եւ խորաթափանց միտքով, գուշակելով այն անդամանելի չարիքը, որ կարող էր պայթիլ թրքահայութեան գլխուն, եթէ Հայկական Հարցը լուծուէր ուսական նախաձեռնութեամբ, որ աւելի թրքակառուցուցիչ էր, ինչպէս եղեր էր Սուլթան Համիտ Բ.ի օրով, եւ այդ պատճառով ալ Հայոց ազգէն խլեր էր 300.000 հայեր, որոնք կը կազմէին ազգին ընտիր դասակարգը:

Այս կոմիտէն ալ կարելի կը նկատէր Հայկական բարենորոգումներու հարցը կարգադրել ուղղակի թուրք կառավարութեան հետ, մանաւանդ որ Գերմանիան ալ իր կարգին ծրագրի ունէր Հայերն իր կողմը շահելու՝ զանոնք ուսական խիստ ազդեցութենէն հեռացնելու համար, եւ ուստի խորհուրդ տուած ըլլալու էր «գաղտնի Դաշնակիցի», այս անգամ լրջութեամբ կարգադրելու բարենորոգումներու հարցը:

Այս միտքով էր որ Պետերբուրգի Հայկական Կոմիտէն դարձեալ Կ.Պոլիս դրկեց պատուիրակութիւն մը, տեղւոյն վրայ քննելու եւ ստուգելու հայ եւ թուրք յարաբերութիւնները:

Պատգամաւորները վերադարձան Պետերբուրգ եւ իրենց քննութեան արդիւնքը զեկուցադրով մը հաղորդեցին Կոմիտէին: Ահա-լասիկ.-

«Ինչ վերաբերում է այն դիրքին, որ բռնել է պատուիրակութիւնը թիւրքի վերաբերեալ, պէտք է յիշել որ նա աշխատում էր պահուել կատարեալ օրինապահութեան (լոյալութեան) հողի վրայ, ձգտում ցայց չտալով կանգնել անջատման (սեպարատիզմի) ճամապարհին վրայ-պահանջել եւ ձեռք բերել ռեֆորմների իրագործումը, որոնք ընդունուած են հենց թիւրքի կողմից. այսպէս է պատուիրակութեան դիրքը» (ձեռագիրը տեսնել Լէօ, Հտ. Բ. էջ 97):

Եթէ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը հեռատեսութիւն ունենար հետեւելու Պետերբուրգի պատուիրակութեան իմաստուն խորհուրդին, անկասկած թրքահայ ժողովուրդին ճակատագիրը բոլորովին տարբեր պիտի ըլլար, որովհետեւ հայ-թրքական յարաբերութիւնները, որ արդէն կատաղի հանգամանք առած էին, դարձեալ պիտի մտերմանային եւ ոռոսական դիւանագիտութեան գործ պիտի չմնար ու պիտի դադրէր անոր ձեռքը գործիք ըլլալէ:

Բայց այդպէս չեղաւ. ամսո՛ւս որ խումբ մը ազգասէրներ, հրապարակ իջած՝ վճռեր էին հայ ժողովուրդին ճակատագիրը անօրինելու ոռոսասիրութեան խոյանքին մէջ, քանի որ Թիֆլիսի փոխարքայական պալատին մէջ արձանագրել տուած էր ամբողջ հայ ժողովուրդին անունով թէ «թիւրք նախարարներէ կազմուած յանձնաժողովը եւ անը չորս խորհրդական հայերը՝ ոչ մէկ վստահութիւն կը ներշնչէր»:

Եթէ պատգամաւորներու խոհական խորհուրդը մնաց «ձայն բարբառոյ յանպատի», պատճառն այն էր որ Թիֆլիսի «ազգասէր գործիչները» այս սխալ կարծիքը կազմեր էին, առանց հայ ժողովուրդին կարծիքը շօշափելու, թէ բովանդակ հայութիւնը ոռոսասէր է:

Այս սխալ կարծիքը կը հերքէ նոյն ինքն Մեսրոպ Եպիսկոպոսը, Գէորգ Կաթողիկոսին աջ բազուկը եւ Վորոնցով-Դաշկովի սիրած մարդը:

ԹՐՔԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍԱՍԻՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Մեսրոպ Եպիսկոպոսի անձնական նամակի մը վկայութեան համաձայն՝ Կ. Պոլսոյ մէջ գոյութիւն ունէին երկու հոսանքներ, թրքասիրական եւ ոռոսասիրական: Թրքասէր հոսանքին պարագլուխն էր Գաբրիէլ էֆէնտի Նորատունկեան, ունենալով ձեռքի տակ բազմաթիւ խելօք, ազգասէր եւ արեւելեան քաղաքականութեան մէջ թափանցած մարդիկ: Այս հոսանքին բերանն էր «Բիւզանդիոն» ազդեցիկ թերթը եւ ուրիշ քանի մը թերթեր, որոնք ոռոսական միջամտութեան դէմ «ակնյայտնի վիրաւորական յօդուածներ կը գրէին»:

Իսկ ոռոսասիրութեան բոյնը՝ Պատրիարքարանն էր: Նոյն վաւերագիրին համաձայն՝ «Պատրիարքի եւ այժմ Երոպայի կարծիքն է ամենեւեւ չդիմել թիւրք կառավարութեանը, հաւատ չընծայել նրա խոստումներին եւ որեւէ բանակցութեան մէջ չմտնել նրա հետ»:

Անշուշտ, այդ Երոպան կը ներկայացնէր Ռուսաստանը, Անգլիան եւ Ֆրանսան, որոնք գլխաւոր պատասխանատուներն էին հայկական բարենորոգումներու արիւնտ հարցին:

Ճիշտ է որ Պատրիարքարանը լաւ գիտէր թէ Սուլթան Համիտը եւ երիտասարդ թուրքերը եւրոպական միջամտութեան վրասն՝ շատ խոստումներ տուեր էին թրքահայ ժողովուրդը բարւոքելու եւ երբեք խոստումէն գործի անցած չէին, բայց եթէ Մեսրոպ Եպիսկոպոս թրքասէր հոսանքին դէմ չըլլար, որ կ'աշխատէր հայկական բարենորոգումներու մասին համաձայնութեան գալ անմիջապէս թուրք կառավարութեան հետ, դիւրաւ գլխուն մէջ պիտի մտնէր թէ Եւրոպայի կարծիքը կեղծ հայասիրութեան վրայ հիմնուած էր եւ ձեռք բերուած՝ ոռոսական սաղրանքներով:

Նոյն սաղրանքներով էր որ Պատրիարքարանի Խառն ժողովը Ազգային ժողովէն իրաւասութիւն ստացեր էր խստութեամբ պահանջել թուրք կառավարութեանէն լուրջ երաշխիքներ հայկական բարենորոգումներու իրագործումին համար: Ասիկա կը նշանակէր հաւասարէ հաւասար խօսիլ, ինչպէս կ'ընեն երկու անկախ պետութիւններ: Բայց Պատրիարքարանին ետեւ կար ոռոսական պետութիւնը, որուն Կ. Պոլսոյ դեսպանը, Գիրսը, կը գրէր իր կառավարութեան. «ամէնէն իրական եւ ցանկալի երաշխիքը հայերը կը համարէին ա՛յն՝ որ իրենց զօրքերով գրաւեն Հայաստանը»:

Այս չափազանց պահանջկոտութեան հետեւանքն այն եղաւ, որ Իթիֆհատի կառավարութիւնը իր արժանապատուութեան մէջ վիրաւորուած, այլեւս Հայկական Հարցը ծայեց եւ մէկ կողմ դրաւ, յոյսը կորսնցուցած ըլլալով թէ պիտի չյաջողի գոհացնել հայերը: Ուստի Հայկական Հարցը կրկին մտաւ իր հին պատեանին մէջ, այսինքն պիտի դրուէր եւրոպական դիւանագիտութեան սեղանին վրայ, մէկ կողմէ Պօղոս Փաշա Նուպար պիտի հետապնդէր զանիկա իր գիմումներով, եւ միւս կողմէ՝ ոռոսական կառավարութեան նախաձեռնութեամբ եւ Ֆրանսայի եւ Անգլիոյ աշխատակցութեամբ, ինչպէս կաթողիկոսական պատուիրակներն ու Վորոնցով-Դաշկով գլուխգործոցի զրեւր էին Չորրորդ կէտին մէջ:

Ահա այդ քաղաքական շրջանին էր որ Բերիայի գերման դեսպանատան մէջ կը տեղաւորուէր Վանկէնհայմ, գերման կայսեր անձնական ներկայացուցիչը, ոռոսական խազերը ի զերեւ հանելու նպատակով:

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ

ԴԵՍՊԱՆ ԳԻՐՄԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Ամբողջ 1913ի ընթացքին, ուսև դեսպան՝ Գիրսը, սկսեր էր դիւանագիտական բանակցութիւններ ընել երիտասարդ թուրք կառավարութեան հետ: Դեսպանին դիրքը զօրաւոր էր, քանի որ ուսական դիւանագիտութիւնը իր ձեռքն առեր էր Հայկական Հարցի լուծումը, հայոց ազգի պաշտօնական մարմիններու միահամուռ համաձայնութեամբ եւ Ռուսաստանի դաշնակից՝ Ֆրանսայի եւ նոր բարեկամ Անգլիոյ բարեհաճութեամբ:

ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՆԻՍԻՆԸ

Միեւնոյն 1913 թուին, Պօղոս Փաշա Նուպարն ալ, իբր լիազօր ներկայացուցիչ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, նստած Փարիզի մէջ, ազգասիրաբար եւ եռանդազին դիւանագիտական յարաբերութիւններ կը մշակէր, հրդ կէտի համաձայն, հինգ մեծ պետութիւններու հետ, որոնք Պերլինի անիծեալ 61րդ յօդուածը ստորագրեր էին: Այս անգամ հայրենասէր Փաշային յոյսը մեծ էր, ունենալով կռնակը հզօր Ռուսաստանը, «Գարա կեպուրը», որուն անունն անգամ կը դողացնէր թուրքիան:

Շատ ցաւալի է որ Ազգային Պատուիրակութեան նախագահին պաշտօնական դիմումներուն եւ անոնց պատասխաններուն վաւերագիրները չեն հասած մեզի: Սակայն անոնք գոյութիւն ունեցած ըլլալու են. ասոր իբր ապացոյց կարող է ծառայել կաթողիկոսական պատուիրակութեան այն խօսքերը, զրուած թիւ 1 կէտին մէջ որ հետեւեալն է. «Նուպար փաշան իր կողմից, կ'ըսէին պատգամաւորները Վորոնցով-Դաշկովին, իւր անհատական հեղինակաւոր դիրքին շնորհիւ կատարել է մասնաւոր դիմումներ», եւ ասիկա ա'յն շրջանին,

երբ փաշան զեռ կաթողիկոսէն հրահանգ ստացած չէր եւրոպական գիւանագիտութեան հետ շփումներ ունենալու:

Ստոյգ է որ Պօղոս Փաշա Նուպար, զաւակ՝ մեծ գերդաստանի մը, եւրոպական քաղաքական շրջանակներուն մէջ կը վայելէր բարձր համբաւ մը եւ բարեկամական մեծ կապեր ունէր եւրոպական արքունիքներու հետ, ինչպէս նաեւ ֆրանսացի եւ անգլիացի նշանաւոր ու ազդեցիկ պետական մարդերու հետ:

Ուստի, անկարելի էր որ լիազօր ներկայացուցիչը իր անհատական դիմումներուն արդիւնքը հազորգած չըլլայ Սուրէնեան Կաթողիկոսին:

Իսկ երբ ուստական կառավարութեան թոյլտուութեամբ՝ կաթողիկոսը անոր հրահանգ տուաւ հետապնդելու Հայկական Հարցը զիւանագիտական շրջանակներու մէջ, անկասկած Գէորգ Կաթողիկոսն ալ իր լիազօր ներկայացուցիչին հետ գրաւոր եւ շարունակական յարաբերութեան մէջ էր, անոր տալով պէտք եղած ուղղութիւնները: Իսկ փաշան ալ, եւրոպական միտքով մարդ, օրը օրին իր դիմումներուն եւ անոնց ստացած պատասխաններուն վաւերագրերը զրկած ըլլալու էր էջմիածին, որ իր կարգին զրկած ըլլալու էր Թիֆլիսի Ազգային Բիւրոյին, որ ինչպէս տեսանք վերեւ, ծնունդ առեր էր իբրեւ զիւանագիտական մարմին մը Կաթողիկոսին մօտ, անոր արտաքին քաղաքականութեան ուղղութիւն տալու համար: Ազգային Բիւրոյի թուղթերուն մէջ գտնուէր է միայն համառօտ հաշուետուութիւն մը, որ կը ծառայէ իբրեւ միակ ազդիւր, որմէ ծանօթացանք թէ ի՞նչ պարագաներու տակ ծներ էր այդ քաղաքական մարմինը:

Պատմագիր Լէօ, որ Թիֆլիսցի էր, եւ անկասկած մտերմիկ յարաբերութիւններ ունեցեր էր Ազգային Բիւրոյի մտաւորական գործիչներու հետ, կը գրէ որ «այդ միակ աղբիւրը մեզ տեղեկացնում է, որ 1913ի թուին, Բիւրոյի գործունէութիւնը եղել է գլխաւորապէս ա՛յն, որ Գէորգ Կաթողիկոսի անունից գրուած բոլոր իմ գն է խմբագրել եւ փնտրեան ենթարկել, յարաբերութիւններ է պահպանել Կ. Պոլսոյ պատրիարքարանի եւ Պօպոս Նուբար Փաշայի հետ. փնտրել է նրանց կազմած ծրագիրները հայկական ռեֆորմների մասին. կազմել է նոր ծրագիր միացնելով այդ երկուսը, ինչպէս կամեցել է Կաթողիկոսը»:

Արդ, ո՛չ էջմիածնի կաթողիկոսական Դիւանին եւ ո՛չ ալ Ազգային Բիւրոյի զիւանակն մէջ գտնուած են այդ թանկագին փաստաթուղթերը, որոնք հայկական արիւնոտ հարցի պատմութեան վաւերական աղբիւրները պիտի ըլլային:

Այդ հայկական աղբիւրներու փճացումը կամ կորուստը զեռ աւելի ցաւալի կը դառնայ, երբ ուզենք մտածել եւ զիտնալ թէ լիազօր ներկայացուցիչը զիւանագիտական շփումներ ունեցե՞ր է գերմանական եւ աւստրիական պետութիւններու հետ, որոնք Թուրքիոյ,

Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ ստորագրեր էին Պերլինի 61րդ անիժապարտ յօդուածը, եւ եթէ զիմոււմներ կատարեր է, անոնցմէ ի՞նչ պատասխան ստացեր էր:

ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Մինչ Պօղոս Փաշա Նուպար եւրոպական զիւանագիտութեան զրոնները կը զարնէր, անոր նենգաւոր երեսէն արիւնաքամ ժողովուրդի մը համար զթուլթիւն խնդրելով, կարեւոր դէպք մը կը պատահէր Կովկասի մայրաքաղաքին մէջ: 1913 թուականին, Գէորգ Կաթողիկոս Թիֆլիսի հայ թեմին առաջնորդ նշանակեց Մեսրոպ Եպիսկոպոսը: «Այս միջոցով, կ'ըսէ Լէօ, անիի սերտաւում էր կապը Վորոնցով-Դաչկովի պալատի եւ հայ ինտելիկեցիայի հետ, մի հանգամանք, որ յղի էր չափազանց տրագիքական (աղբերգական) հետեւանքներով»:

Թիֆլիսի նոր առաջնորդը՝ Վորոնցով-Դաչկովի սիրելի մարդն էր, պարագլուխ ուսասէր հոսանքին եւ Գէորգ Կաթողիկոսի մեծ խորհրդակալն, անոր Աքիտորէլը:

ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻ ԴԻՒԱՆԱԿԻՏԱԿԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐԸ

Մեսրոպ Եպոս. հազիւ իր առաջնորդական գահին վրայ բազմած, Ազգային Բիւրոն ալ նոր եռանդով ազգասիրական գործունէութեան մը լծուեցաւ: Նոյն 1913 թուականին, ան նոր ծրագիր մը յղացաւ, որ է, Գէորգ Կաթողիկոսը զրկել Պետերբուրգ՝ անձամբ ներկայանալու Նիկոլա Բ. ձարին, խնդրելու համար որ Հայկական Հարցի լուծումը փութացնել տայ, նկատի առնելով թրքահայերու դրուժեան վատթարացումը, որուն պատճառով՝ ուսասհայերը յուզումի մատնուեր էին:

Մնորագիրը Վորոնցով-Դաչկովի ձեռքով զրկուած ըլլալով Սազանովին, արտաքին գործերու նախարարը՝ փոխարքային յայտնեց թէ «Քանի որ զիւանագիտական բանակցութիւնները կը վարուին հայկական հարցի առթիւ պետութիւններու մէջ, անյարմար է, որ կաթողիկոսն անձամբ դիմում ընէ կայսրին»:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԻ՝ ՇԱՏԻՆՈՎԻ ՄՕՏ

Ազգային Բիւրոյի «ազգասէր մասը փոխանակ իր ձեռնարկութեան անյաջող վերջաւորութեան խրատ փաղիւսի եւ թրփահայերու դրութեան վատթարացումին պատճառը ուսումնասիրելու, զե՛ն

աւելի յանդուզն եւ վտանգաւոր քայլ մը առաւ որ իր անդիւանազի- տական հասկացողութեան աստիճանը կ'որոշէր:

Ազգային Բիւրոն, 1913ի ապրիլ 27ին, պատգամաւորութիւն մը դրկեց ուսւ գորավար Շատիլովի մօտ, որ փոխ-արքային օգնականն էր, իբրեւ հրամանատար անոր հետեւազօրին, խնդրելու համար որ ուսւական կառավարութիւնը թրքահայերը զինէ, որպէսզի անոնք կարենան իրենք զիրենք պաշտպանել թշնամի մահմետական ժողո- վուրդներու դէմ:

Թրքահայերը ուսւական ղէնքերով զինելու փորձը հեռատեսու- թենէ այնքան հեռու էր, որ Վորոնցով-Դաշկովն անգամ ապշած մնաց: Ան՝ նկատելով որ նման վտանգաւոր զիմում մը կարելի էէր առանց կաթողիկոսի հրամանին, եւ նկատելով միաժամանակ որ Ազ- գային Բիւրոն իր տրամադրութեան տակ ունի կաթողիկոս մը, որ կը շարժէր անոր խորհուրդներով եւ թելադրանքներով, Մայիս 21ին՝ շարժէր անոր խորհուրդներով եւ թելադրանքներով, Մայիս 21ին՝ քաղցրաբարբառ նամակ մը ուղղեց Գեորգ Կաթողիկոսին, թէ՛ անոր ազգասիրութեան ետանդը զսպելու եւ թէ՛ պատգամաւորներուն խելքը զլուխը կանչելու: Ահա այս կարեւոր վաւերագիրին պատճէնը:

«Անցեալ Ապրիլ 27ին, զինուորական մասի մը օգնական՝ ինֆան- տերիայի գեներալ Շատիլովին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Կովկասի հայերի կողմից, կազմուած Մեսրոպ եպիսկոպոսից եւ Պ. Խատիսեանից, Յարութիւնեանից, Քալանթարից եւ Պապազանեանից: Այս պատգամաւորութիւնը դարձնելով ինֆանտերիայի գեներալ Շա- տիլովի ուշադրութիւնը թրքահայատակ հայերի առանձնապէս ծանր դրութեան վրայ ներկայ մտնեցում, խնդրեց աջակցութիւն ցոյց տալ նրանց, հայթայթելով միջոցներ ինքնապաշտպանութեան հա- մար թշնամի մահմետական ազգաբնակչութեան դէմ:

Պատգամաւորութեան արտայայտած ամէն բան, ինֆանտերիայի գեներալ Շատիլովը գեկուցեց կայսերական կառավարութեան: Այժմ արտաքին գործոց մինիստրն ինձ ծանուցեց, որ կայսերական կառա- վարութիւնն արդէն ձեռք է առել բոլոր միջոցները թուրքիոյ հայ ազգաբնակչութեան դրութիւնը շուտափոյթ կերպով բարելաւելու համար»:

Փոխ-արքան ուսւահայերու յուզուած միտքերը հանդարտեցնե- լու համար, նոյն նամակի վերջաւորութեան մէջ խորհուրդ կու տար կաթողիկոսին, որ իր բարձր հեղինակութեամբ քարոզէ հայ ժողո- վուրդին որ ինքզինքը զսպէ:

«Տեսնելով, կը շարունակէ նոյն վաւերագիրը, կովկասեան հա- յերի պատգամաւորութեան կողմից ինֆանտերիայի գեներալ՝ Շա- տիլովի ուղղած դիմումի մէջ նշան սաստկացած անհանգստութեան թիւրքիայի իրանց ցեղակիցների վիճակի համար, եւ անհրաժեշտ համարեցի ներկայ նամակով տեղեկացնել ձեր վեհապառութեանը

թէ ներկայումս ինչ փուլի մէջ է գտնուում թիւրքաց Հայաստանի ռեֆորմների հարցը, որպէսզի դուք ձեր լուսաւոր հեղինակութեամբ հանգստացնող ներգործութիւն անէք հայ ազգաբնակչութեան փոքր ինչ յուզուած մտքերի վրայ եւ մի անգամ եւս պնդէք նրան ինք- նագապման եւ հանգստութեան անհրաժեշտութիւնը» (տե՛ս Լէօ, հտ. Բ. էջ 99-100):

Փոխ արքայական պալատը ա՛յնքան ղիւթեր եւ իր ափին մէջ առեր էր Կովկասի հայ մտաւորական ազգասէր մասը, որ ղիւանագիտու- թեան գործ մնացած էէր:

Թիֆլիսցի մտաւորական Լէօ, այնքան լաւ կը ճանչնար տեղական ազգասէր մտաւորականութեան հոգեբանութիւնը, որ կը քննադատէ զանոնք. -

«Այս վաւերագիրը չափազանց բնորոշիչ է ցոյց տալու համար Ազգային Բիւրոյի քաղաքագիտական իմաստութեան աստիճանը: Հայ ինտելիգենցիայի ծաղիկը կազմող մի ամբողջ հիմնարկութիւն այն- քան միամիտ ու տգէտ էր, որ կարծում էր թէ մի պետութիւն կարող է բաց անել իր զինանոցների դռները եւ զինել մի ուրիշ պետութեան հպատակներին, այս էլ այնպիսի մի պետութեան, որ խաղաղ դրու- թեան մէջ էր գտնուում: Այսպիսի յաւակնութիւն կարող էին ունենալ միայն երես առած մարդիկ: Եւ նիշտ որ ինֆանտերիայի գեներալ՝ Շատիլովի մօտ գնացողները երես առած էին: Եւ երես նրանց տուել էր Վորոնցով-Դաշկով մինչ այն աստիճան, որ Բիւրոն կարծում էր թէ տրամադրութեան տակ է գտնուում ամբողջ ցարականութիւնը: Այս- պիսի մանկական յաւակնոտ մտայնութեամբ դեռ ինչե՛ր եւ ինչե՛ր պիտի կարողանային անել հայկական թախյրանները» (Լէօ, հտ. Բ. էջ 100):

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՒԻԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

1914ի Փետրուար 8ին, Օսմանեան կառավարութեան մեծ վզրուկ՝ Սայիդ-Հալեմ փաշան եւ Կ. Պոլսոյ ուսական ղեսպանին տեղապահ Գուլկեվիչ՝ ստորագրեցին Թրքահայաստանի մէջ մտցուելիք բարենորոգումներու ծրագիրը, որ մեծ զժուարութիւններով յաջողած էր գլուխ հանել ղեսպան Գիրսը:

Այս գործը Սազանովի քաղաքականութեան յաղթանակն էր, եւ ինչպէս կ'ըսէ «Նարնջագոյն գիրքը», Ռուսաստանի համար ունեցաւ պատմական նշանակութիւն: Այս պատմական վաւերագիրը կը բարձրացնէր ուսական վարկը միջազգային քաղաքականութեան մէջ: Կարեւոր էր միաժամանակ այն հանգամանքը, որ այդ թուղթով՝ Թուրքիան պարտաւորութիւններ յանձն առեր էր Ռուսաստանի առջեւ եւ այսպէս կը վերանորոգուէր Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան 16րդ յօդուածը:

ՓԵՏՐՈՒԱՐ 8Ը՝ ՕՐ ԱՆՄՈՌԱՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ռուս կառավարութեան ղիւանագիտական յաղթանակը, յաղթանակ էր նաեւ հայութեան երկու հոգեւոր պետերուն, Գէորգ Կաթողիկոսին եւ Կ. Պոլսոյ Պատրիարքին համար: Գուլկեվիչ ընդարձակ բացատրութեան մը հետ ներկայացնելով ստորագրուած վաւերագիրը արտաքին գործերու նախարարին, հետեւեալ խօսքերով կը բնորոշէր Փետրուար 8ի գործողութեան նշանակութիւնը հայերու մէջ. «Այսպիսով, 1914 թուականի Փետրուար 8ի գործողութիւնն անտարակոյս կը նշանակէ մի նոր, աւելի երջանիկ ժամանակաշրջանի սկիզբ հայ ժողովուրդի պատմութեան մէջ: Իր ներքին քաղաքականութեամբ այս ազգի համար, անկա կարելի է համեմատել 1870 թուի ֆերմանի հետ, որ ստեղծեց բուլղարական էֆգարֆութիւն (յուճարէն բառ մը որ կը նշանակէ մարգպանութիւն կամ գաւառապետութիւն) եւ ատով ազատեց բուլղարական ժողովուրդը յուճական ինքնակալութենէն: Հայերը չեն կրնար չտեսնել որ այժմ անոնց տրուած է առաջին քայլը քրքական լուծէն ազատելու համար»:

Իսկապէս ալ ուուս-թրքական համաձայնութեամբ՝ հայկական նահանգներու համար նշանակուած էին երկու եւրոպացի զօրավար վարտեսուէներ, նման պուլղարական էքզարքներուն:

Եթէ Գուլիկովիչի խօսքերուն մէջ չըրուէր կոմս Վորոնցով-Գաչկովի ուուսական սաղբանքները, կ'արժէր որ համօրէն հայութիւնը ծունկի գար «ողորմած» եւ քրիստոսասէր» ձարին առջեւ, որ ոչ միայն բարենորոգումներ մը մօցնէր հայկական հին նահանգներուն մէջ, այլ կը հաստատէր անոնց մէջ քրիստոնեայ մարզպաններ, եւ դեռ աւելի մեծ պարզեւ՝ Նորին Վեհափառութիւնը Հայոց շնորհել պիտի տար կատարեալ ազատութիւն եւ անկախութիւն, որոնք հայերու մտքէն անգամ անցած չէին, որովհետեւ ինչպէս տեսանք, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ թրքահայութեան Պատրիարքին պահանջը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ կեանքի, դոյքի, պատիւի եւ ազգային ազատ մշակոյթի իրաւունքները, որ մարդու մը տարրական իրաւունքներն են:

ՀԱՅԵՐՈՒ ԾԱՅՐԱՅԵՂ ԲԵՐԿՐԱՆՔԸ

Երբ սատակիչ սուրբ կախուած էր թրքահայ ժողովուրդի պարանոցէն, լուրը տարածուեցաւ թէ ուուսական կառավարութեան յամառ ջանքերով Հայկական Հարցը յաջողութեամբ լուծուեր էր, երկու եւրոպացի մարզպաններ որոշուած են, հայկական բարենորոգումները գործադրել տալու համար: Ծատ բնական էր որ այս աւետիսը աշխարհի բոլոր հայերը մղէր ծայրայեղ խանդավառութեան մը, որուն հետ կարելի է միայն համեմատել 1908ի օրը, երբ Սուլթան Ապտ-իւլ-Համիտը, երիտասարդ թուրքերու գինուորական ճնշումին տակ, վերահաստատեց Օսմանեան սահմանադրութիւնը, եւ Պոլսոյ հայութիւնը խանդավառուած եւ գլուխը կորսնցուցած, անձնատուր եղեր էր:

Արդարեւ, բերկրանքի եւ ցնծութեան օրեր էին. ամէն տեղ հայերը իրար կը շնորհաւորէին, կը փառաբանէին ուուսական կառավարութիւնը եւ Գէորգ Կաթողիկոսը, որ Հայկական Հարցի մէջ երջանկութեան նոր թուական մը բացեր էին:

Եթէ մեր ժողովուրդը գաղափարապաշտ եւ ամէն քաղաքական դէպքով ոգեւորուած չըլլար, միտքը պիտի բերէր Նիկոլա Ա. ձարի կողմ, որ հազիւ ոուս-պարսկական պատերազմը սկսած, հայերուն կը խոստանար կատարեալ անկախութիւն, վերահաստատելով Հայաստանի թագաւորութիւնը:

Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԻՒՆ ԾՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԸ

Ծատ բնական էր որ Պոլսոյ Պատրիարքը, ձեռք-ձեռքի միացած Գէորգ Կաթողիկոսին հետ, թրքահայ ժողովուրդը պաշտպանելու եւ ազատարար կանգնելու անոր, ամէնէն առաջ իջնէր հրապարակ, շնորհաւորելու Կաթողիկոսը, անոր տարած յաղթանակին համար: «Ազգային մեր դատը, կը գրէր ան, հասած է իր առաջին հանգրուանը. առաջին եւ սրբազան պարտք կը համարեմք մեզ, յանուն մեր ժողովներուն, խորին երախտագիտութեան պարտքը հասուցանել Ձերդ Ս. Օծուրեան, որ թրքաց տառապած ձեր հօտի աղերսները ի նկատի առի՛ք եւ ոչինչ չխնայեցի՛ք անոնց վիճակին բարեման, Ձերդ Վեհափառութեան ջանքերը, բարեբախտ եմ ըսելու, որ ամուլ չմնացին եւ այսօր պիտի աւետեմ որ հայկական պահանջներու հիմնական մասերու շուրջ վերջնականապէս գոյացաւ համաձայնութիւն Բ. Դրան եւ ոուս կառավարութեան մէջ» (Լէօ, հտ. Բ. էջ 101):

ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Սուրէնեան Կաթողիկոսի դիւանագիտական յաղթանակը, յաղթանակ էր նաեւ իր լիազօր ներկայացուցիչ Պօղոս Փաշա Նուպարին, որ կը հեռագրէր Կաթողիկոսին. «Բախտաւոր եմ մատուցանել Ձերդ Սրբութեան ակնածալիք շնորհաւորութիւններ՝ Հայաստանի բարեկրօնութեան համար բարեխաչող համաձայնութեան գալու առթիւ Նորին Վեհափառութեան ոուսաց կայսեր կառավարութեան եռանդուն գործունէութեան եւ Ձեր իմաստուն հեռատեսութեան բարձր ցուցումների շնորհիւ: Ասիական Թիւրքիայի մեր եղբայրներն, այսուհետեւ, հնարաւորութիւն կ'ունենան ապրելու արդարադատ եւ ապահով վարչութեան ներքոյ»:

ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻՆ

Գէորգ Կաթողիկոսը, ազգային անխոնջ գործիչը, չուզեց հանգչիլ իր շահած յաղթական դափնիներուն վրայ: Ան իր սիրոյն եւ երախտագիտական պարտքը հատուցելու իր ներկայացուցիչ փաշային, նախ անոր հեռագիր մը ուղղեց, ուր կ'ըսէր «Իմ շնորհակալութիւնս Ձերդ վսեմափայլութեան եռանդուն գործունէութեան համար Տանկաստանում բարեկրօնութեան մտցնելու առթիւ: Բախտաւոր եմ, որ մեր եղբայրների գործը յաջողութեամբ է առաջ ընթանում. հայցում եմ Աստուծոյ օրհնութիւնը Ձեր եւ Ձեր ընտանեաց համար»:

Ազգասէր Կաթողիկոսը հրճուանքէն ինքնիրմէ՛ զուրս ելած, նկատելով իր լիագոր ներկայացուցիչին թափած ջանքերը հայկական բարենորոգումներու ընդունելութեան համար, փառաբանելով անոր ազգասիրական գործունէութիւնը, որով յաջողութեամբ գլուխ հաներ էր հայուն գաղափարականը: Ահա այս պատմական պատճէնը:

«Եւ Դուք, վսեմափայլ Տէր, առյցեալ հայրենասիրական եւ մարդասիրական զգացմամբ, նուիրեցիք, յընթացս հնգետասան ամսոյ, ջանքն Ձեր եւ շնորհիւ բարձր հեղինակութեան եւ հոգեկան կարողութեանց Ձերոյ, յաջողութեամբ ի կատար ածիք զիդեալ հայի ի վերայ Ձեր զագգային առաքելութիւն մեծ, յուրախութիւն եւ ի մխիթարութիւն մեր եւ համայն ազգիս Հայոց:

... Արդարեւ, Դուք արժանաւոր ժառանգ մեծահամբաւ հօր, ազգօգուտ եւ մարդասէր գործունէութեամբ Ձերոյ անմահացուցիք զգրուատեիլ անուն Ձեր, եւ թողիք զյիշատակ բարի եւ անեղծանելի յագգային պատմութեան մերում, եւ հաւատամք, զի որպէս այսօր յամենայն կողմանց հոգեւոր գաւակունք մեր յայտնի չերմ համակրանս եւ գերախտագիտական զգացումնս իւրեանց առ Ձեզ, նոյնպէս եւ ապագայ սերունդի Հայոց միշտ եւ յաւետ օրհնութեամբ եւ երախտագիտութեամբ յիշեն զբարի եւ զագգային գործս Ձեր» (Լեօ, հտ. Բ. էջ 102):

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՐԱՆՍԱԳԻՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՍԱԶՍՆՈՎ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիս ամիսին, Գէորգ Կաթողիկոսը կը շնորհաւորէր նաեւ Վորոնցով-Դաշկով, ուղարկելով անոր Սազանովի խնդրանքով՝ պատճէնը այն թուղթին որ ստորագրուած էր Կ. Պոլսոյ մէջ Փետրուար Տին:

Գանի որ Հայկական եւ Հարցի յաղթող բանակին գորազուխ եւ առաջնորդ կանգնած էր Սազանովը, արդար էր որ Գէորգ Կաթողիկոսը իր երախտագիտական զեղուն զգացումները յայտնէր Ռուսաստանի արտաքին գործերու նախարարին, ուղղելով անոր շնորհաւորական նամակ մը, որ շարագրուած էր Թիֆլիսի Ազգային Բիւրոյի մտաւորականներէն, ուր կը շեշտուէր «ազատարար ձարին մեծ գործը, եւ հնագոյն քրիստոնեայ հայ ժողովուրդի համակրամբ դէպի մեծ Ռուսաստանը»: *այս կ'ըսէր*. «Իմ սիրեցեալ միապետ թագաւոր – կայսր Նիկոլա Բ. ի արքայական կամքով հայ ժողովուրդը նորէն կանգնած է պատմական ասպարէզ...»: Ահա այդ նշանաւոր նամակին պատճէնը:

«Թիւրքահայ կեանքի այս պատմական օրերում, երբ, շնորհիւ Ձերոյ բարձր գերագանցութեան ամուր եւ մարդասէր քաղաքական-

նութեան տրուած են հնարաւորութիւններ իմ հօտի հոգեկան ոյժերի խաղաղ կուլտուրական զարգացման, այնտեղ ուր մինչեւ այժմ տիրապետում էր քրիստոնեայ ազգաբնակչութեան հետեւողական ոչնչացումը, երբ ազատարար ցարի մեծ գործն սկսում էր մարմնանալ կենդանի իրականութեան մէջ ի բարօրութիւն եւ ի զարգացում մի ամբողջ ժողովուրդի, որ դարերի ընթացքում տանում էր հալածանքներն հնագոյն քրիստոնէական կրօնին պատկանելուն եւ այն ձգողութեան համար, որ նա ցոյց էր տալիս դէպի Մեծ Ռուսաստանը, երբ իմ սիրեցեալ միապետ թագաւոր-կայսեր Նիկոլա Բ. ի արքայական կամքով հայ ժողովուրդը նորից կանչուեւ է պատմական ասպարէզ ինչպէս միակ տարրի, որ ընդունակ է անցկացնել Ասիական Թիւրքիայի մէջ եւրոպական մտաւոր եւ նիւթական կուլտուրայի սկզբումները, այս պատմական օրերին սրբազան պարտքս եմ համարում արտայայտել Ձերոյ բարձր գերագանցութեան՝ իմ եւ ամբողջ հայ ժողովուրդի անունից անկեղծ շնորհակալութեանս զգացումները» (ՆԱՐՆԱԳՈՅՆ ԳԻՐՔ, էջ 178-179. Լեօ, հտ. Բ. էջ 103):

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՐԱՆՍԱԳԻՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ԿՈՄՍ ԴԱԶԿՈՎԻՆ

Գէորգ Կաթողիկոսի շնորհաւորական նամակներէն ամէնէն նշանակալիցն է այն գովաբանական եւ փաղաքշական նամակը, որ ան ուղղեց փոխարքայ Վորոնցով-Դաշկովին, որ մեծագոյն զերականատարներէն մէկն էր Հայկական Հարցի նոր արծարծումին, անոր լուծումին:

Ազգային Բիւրոյի ազգասէր մտաւորականներու թելադրանքներով գրուած նամակին մէջ, Կաթողիկոսը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէր պայծառփայլ փոխարքային որ «երեսան եկեր էր իբրեւ հայ ժողովուրդի ճշմարիտ ձգտումներուն մեկնաբանիչ, վերականգնելով անոր անունը կայսերական կառավարութեան առջեւ»: Անցնելով ապա գովասանքի, կ'ըսէր. «Մենք ձեզի պարտական ենք այն բանը, որ դուք ամուր կերպով հաստատեցիք այն հայ ազգը թէ վաղեմի բարեացակամութիւնը դէպի թրքահայերը, այսուհետեւ ալ առաջնորդող ըլլալ Մերձաւոր արեւելի մէջ: Դուք ձեր հեղինակաւոր խօսքերով մեծ աջակցութիւն ցոյց տուիք հայկական հարցի յաջող լուծման մէջ»: Յետոյ, զգալով թէ յայտարարուած բարենորոգումները Օսմանեան կառավարութեան կողմէ կրնան արգելքի հանդիպել, «խորհուրդ եւ օգնութիւն կը հայցէր, եթէ յանկարծ դրութիւնը փոխուէր»:

Եւ որովհետեւ թիֆլիսի հայ երեւելի դիւանագէտները գիտէին թէ հայ արիւն պիտի թափի, կաթողիկոսը փոխ-արքային կ'իմացնէր թէ «իմքը առանց մտահոգութեան չէ որ կը նայի քիւրտերու շարժման վրայ, որովհետեւ ամէն մէկ խառնակութիւն, այն երկրին մէջ, հաստատուած սովորութեամբ հայերու գլխուն կը պայթի»: Ապա կ'աղերսէր «Ես հաստատ յոյս ունիմ որ կայսերական կառավարութիւնը հզօր ձեռքով կը դադրեցնէ արիւնահեղութիւնը Թրքահայաստանի մէջ եւ չի մերժեր հայերուն աջակցելու, որ անոնք պաշտպանեն իրենց կեանքը, պատիւը եւ ստացուածը»:

«Ձեր նամակը այս մարտի 16ից (29 Մարտին), կը գրէր կաթողիկոսը, որով տեղեկացնում էր Թուրքաց Հայաստանի ռեֆորմներին ընդունուած լինելու մասին, յցրեց իմ սիրտը մեծ ուրախութեամբ: Իմ ամենատաքին պարտքն եմ համարում ջերմագին երախտագիտութիւն մատուցանել Ձեզ այն ամէնի համար, որ Դուք արել էք հայ ժողովուրդի համար մեր երկիրը Ձեր գալուց ի վեր, ամբողջ ժամանակ:

Դուք, Ձերդ պայծառափայլութիւն, երեսն եկաք իբրեւ հայ ժողովրդի նշմարիտ ձգտումների մեկնարանիչ, վերականգնեցիք նրա անունը կայսերական կառավարութեան առջեւ: Մեմք Ձեզ եմք պարտական այն բանը, որ Դուք ամուր կերպով հաստատեցիք այն հայեացքը թէ վաղեմի բարեացակամ քաղաքականութիւնը դէպի թիւրքիայի հայերը պիտի այսուհետեւ էլ առաջնորդող լինի Մերձաւոր Արեւելիում: Բարերար միջոցներով վերացնելով Ռուսաստանի հայերի դէմ եղած խաղաղ գարգացման խոչընդոտները, Դուք Ձեր հեղինակաւոր խօսքով մեծ աջակցութիւն ցոյց տուիք հայերիս եւ հայոց հարցի յաջող լուծման մէջ, որովհետեւ առանց Ձեր ձեռքով վերականգնած լինելու, բարեացակամ վերաբերմունք դէպի հայերը չէր կարելի յուսալ Ռուսաստանի հզօր միջամտութեան վրայ թիւրքահայերի գործի մէջ, մի բան, առանց որի անհնարին կը լինէր հասնել այսօրվան բարերար հետեւանքների:

Իմ անունից եւ հայ ժողովրդի անունից Ձեզ մեծ շնորհակալութիւն: Ինձ համար բոլորովին աւելորդ է խնդրել Ձեզ, որ ապագայում էլ օգնութեան զաք իմ բազմաշարքար ժողովուրդին, որովհետեւ Դուք չափազանց շատ նշաններով էք յայտարարել Ձեր սրտագին վերաբերմունքը դէպի իմ հօտը: Բայց ես ինձ իրաւունք եմ պահում դիմելու Ձեզ առաջիկայում եւ խնդրելու խորհուրդ եւ օգնութիւն, երբ յայտարարած ռեֆորմները կը հանդիպեն իրենց գործադրութեան մէջ սովորական արգելիք Օսմանեան կառավարութեան կողմից: Առանց մտահոգման չէ որ ես նայում եմ քրդերի շարժման, որովհետեւ ամէն մի խառնակութիւն, այս երկրում հաստատուած սովորութեամբ, հայերի գլխին է պայթում: Ես հաստատ յոյս ունեմ, որ կայսերական

կառավարութիւնը հզօր ձեռքով կը կանգնեցնէ հնարաւոր արիւնահեղութիւնը թիւրքաց Հայաստանում եւ չի մերժի հայերին աջակցելու, որ նրանք պաշտպանեն նրանց կեանքը, պատիւը եւ ստացուածքը» (Լէօ, հտ. Բ. էջ 103-104):

Շատ աւելի հետաքրքրական եւ օգտակար բան պիտի ըլլար, եթէ Գէորգ Կաթողիկոսէն գրութիւն մը մեր ձեռքը հասած ըլլար, թէ ի՞նչ պատճառով «արիւնահեղութիւնը» տեղի պիտի ունենայ, որ «ռուսական հզօր ձեռքը միայն կարող է դադրեցնել»: Կարելոր էր որ ան մեզի բացատրէր թէ ինչո՞ւ թրքական երկրին մէջ պատահած «ամէն մի խառնակութիւն հայերի գլխին է պայթում»:

Եթէ ան եւ ուրիշ եկեղեցական կամ աշխարհական մտաւորական գործիչներ, որոնք պաշտօն ունէին հայ ժողովուրդին ճակատագիրը վարելու, պատմութեան դասերէն փորձառութիւն քաղէին, ապահովապէս պիտի համոզուէին թէ դիւանագիտութեան մէջ սիրտ եւ ազգասիրութիւն ըսուած բաները գոյութիւն չունին. հայ հեռատես եւ խորթափանց միտք, որ ապահով հաւասարակշիռն է ամէն քաղաքական գործունէութեան: Հակառակ պարագային, փոխանակ ժողովուրդը փրկութեան եւ ազատութեան առաջնորդելու՝ կորուստի կ'առաջնորդեն:

Այս բոլորը շատ լաւ դիտէր կոմս Վորոնցով-Դաշկով, ուսս պետական մարզը, որ կարողալով կաթողիկոսական լորձնաշուրթն նամակը, անպատճառ իր մտքէն ըսեր էր, թէ ինքը իր դիւանագիտական հանձնարը փայլեցուցեր էր թրքահայ ժողովուրդին կորուստը պատրաստելու եւ այս բարեսիրտ եւ բարեմիտ կաթողիկոսը այդ բանին համար, իր եւ իր ժողովուրդին անունով իրեն կը յայտնէ՝ «մեծ շնորհակալութիւն»:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

«Այս բոլորից՝ թիւրքահայ ժողովուրդը դեռ ոչինչ չէր իմացել, կը գրէ իրաւատես Լէօ, բայց կարող էր ինքն էլ շնորհակալ լինել իր «բարերարներից» այն պայմանով սակայն, որ նրանից իւրաքանչիւրը բաւականաճառ իր որսացածով եւ գնա հանգչելու իր վաստակած դափնիների վրայ»:

Բայց թրքահայ ժողովուրդի չար բախտէն այդպէս չեղաւ: Հայոց «բարեացակամ» կոմսը, ինչպէս իր տեղին պիտի ըսենք, զեռ աւելի նենգութեամբ իր աղուէսի դիւանագիտութիւնը շարունակեց. իսկ անոր ձեռքը կոյր գործիք դարձան Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ անոր կողքին կանգնած եկեղեցական եւ աշխարհական խորհրդակալները՝ սկսան թեթեւօրէն խաղալ թրքահայ անպաշտպան ու

որ աւելի պայծառաւոր է եւ դիւանագէտ՝ քան հայ ժողովուրդին ճակատագիրը վարող՝ վեղարաւոր ու անվեղար դիւանագէտ կարծուածները:

«Պոլոքը չէ, կը շարունակէ թղթակիցը, որ կը սարսափեցնէ, անիկա կրնայ քիչ մը աղփատացնել առեւտրականները, քանի մը վանառական սնանկացնել... ո՛չ, այդ չէ մեր երկիրը: Հայկական բարեկրօնագումները ստիպեցին ստորագրել օտարները, հայերը չմասնակցեցին օսմ. փառամենքի ընտրութիւններուն, յանձին Պօղոս փաշայի օտարներու դիմեցին, անոնց միջամտութիւնը հրաւիրեցին օսմանեան ներքին գործերու մէջ... այս ամէնը կատղեցուցած են թիւրք, ոչ թէ ժողովուրդն, վասնզի անգգայ անասունի պէս անգիտակից է դեռեւս, այլ թիւրք վարիչները: Իսկ այսօր դեռ յայտնի չէ թէ Թիւրքիոյ մէջ ջարդ կամ կոտորած կրնայ ըլլալ միայն եւ միայն վերէն եկած հրամանի մը հիման վրայ:

Գարնան պիտի սկսին ստորագրուած կամ ստորագրուելու վրայ եղող հայկական բարեկրօնագումները: Պիտի գան օտար ընդհանուր քննիչներ, պիտի գէթ քիչ մը շտցնեն հայ պաշտօնեաներու, հայ փոխներու եւ ժանտարմներու թիւը, պիտի քիչ ստակ տան հայ դպրոցներուն եւ այլն եւ այլն: Ու ես միամիտ չեմ, աղէկ գիտեմ որ թիւրք վարչութիւնը ամէն տեսակ մանր ու խոշոր արգելքներ պիտի հանէ վիժեցնելու համար իրմէ կորցուած հայկական խղճուկ ունեւորները, պիտի գործնականի մէջ դարձնէ իր քիթն ու քերամը եւ վայր դնէ: Սակայն այդ չէ խնդրի ողբերգական մասը, առոր մեծ վաղուց վարժուած ենք: Ողբերգական կողմն այն է, որ այդչափ չնչին առաւելութիւն մը — ան ալ դեռ տեսնենք առաւելութիւն պիտի ըլլայ — պատճառ պիտի դառնայ թիւրքերու գրգռման: Կառավարական գրգռիչ գործակալները (ածան-պրովոկատոր) պիտի մատերու փաթեան ընեն այդ բարեկրօնագումները եւ գաւառներու մէջ գրգռեն թիւրք եւ քիւրտ ամբողջ թէ հայերը պէյլիֆ կ'ուզեն, արդէն օտարներու ձեռքով հասան իրենց նպատակին, այսուհետեւ նրանք պիտի սկսին ճնշել միւսլիմները եւ այլն եւ այլն: Այդ երկիրները այդքան մեծ են եւ իրական, որ Բարիգէն հայասէր եւ արեւելի գործերուն սքանչելիօրէն հմուտ Վիտոր Պերար արդէն ահագանգը կը հնչեցնէ «կոտորած պիտի ընեն թիւրքերը Հայաստանի մէջ, առաջիկայ գարնան»: Ուրեմն քանի մը ամիսէն սպասելիքներ ունինք: Իմ կողմէս, ոչ մարիտ ըսեմ, շատ ալ չեմ հաւատար եթէ Ռուսիա չուզէ, Հայաստանի մէջ ջարդ անկարող է ըլլալ: Ու կը թուի թէ Ռուսիան այդ չ'ուզեր, տարբեր խնդիր է, եթէ Ռուսիա վնաս ըլլայ գրաւելու համար ջարդ մը թոյլ տալ կամ ինքը սարքել» («Հորիզոն», 1914, թիւ 29):

Ուրեմն, ամէն տեղէ, Պոլիսէն, Փարիզէն, թրքահայ գաւառներէն, սկանչները ծակող աղաղակներ կը բարձրանան թէ «կոտորած

պիտի ըլլայ» օտար միջամտութեան պատճառով, որուն պուրջ կանգնած են Ռուսաստանը եւ Պօղոս Փաշա Նուպարը, Կաթողիկոսին լիազօր ներկայացուցիչը:

Բայց այդ աղիողորմ ճիչերը — գործածելով Բագրատունի վարդապետին իմաստնալից բացատրութիւնը — «յականջս մեռելոց խօսեցան», հակառակ որ Զաւէն Պատրիարքը շատ լաւ գիտէր որ ռուսական բարենորոգումները բռնի կերպով փաթթուած էին Թուրքիոյ վրէժն:

Կարելի էր զգաստութեան ճամբան բռնել, հրաժարիլ ռուսական ծրագրէն եւ ետ կանչել օսմանեան հպատակ Պօղոս Նուպար Փաշան, ճամբու դնել օտար քննիչները, ներկայանալ իթթիհատական պետերուն եւ ընդունիլ թրքական ծրագիրը:

Սակայն, դիւանագիտական այս ճարտար խաղը կարող էին ընել միայն Գէորգ, Մատթէոս, Ներսէս Վարժապետեան եւ Մաղաքիա Օրմանեան պատրիարքները: Իսկ Զաւէն պատրիարքը եւ իր ռուսասէր խորհրդակալները, ռուսական դեսպանատան վարիչներէն սոսնքացած եւ փրացած, առանց փոքրիկ բան մը վայելելու ռուսական սեղանէն՝ մեծամեծ ծրագիրներ կ'որոճային, ինչ որ քիչ մը անդին պիտի տեսնենք:

ԳԼՈՒԽ Է.

ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉԸ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՓԱՌԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՆՁԱՆՔՆԵՐԸ

Գերմանիան 40 տարի Եւրոպայի պարտադրեր էր «գիւնեալ խաղաղութիւն» մը: Գիտենք նաեւ որ Սուլթան Համիտի օրերէն սկսեալ, Գերմանիան Հաստատուն կերպով տեղաւորուեր էր Թուրքիոյ մէջ, նպատակ ունենալով անոր աջակցութեամբ հիմնել աշխարհածաւալ կայսրութիւն մը, որ հիւսիսային ծովէն տարածուեր մինչեւ Պարսից ծոցը: Նոր գերման կայսրութիւնը վերակազմութիւն պիտի ըլլար հին հռոմէական աշխարհածաւալ կայսրութեան, որուն միահեծան ինքնակալին պէս գերման կայսրն ալ պիտի պաշտուէր իբր աստուած մը:

Այս փառամոլ տենչանքները իրագործելու համար, Գերմանիա 40 տարի զիշեր-ցերեկ աշխատեր էր կազմելու աշխահաստան բանակներ՝ սպասելով յարմար առիթին բռնկեցնելու համար համաերոպական պատերազմ մը:

Այդ, «ցանկալի պատերազմը» անխուսափելի դարձաւ, երբ Ռէվալի մէջ, Եղուարդ Զ. եւ Նիկոլա Բ. ձարը պաշտօնական տեսակցութիւն մը ունեցան, որուն հիմնական որոշումները զաղտնի մնացին: Սակայն փողոցի մարդն անգամ հասկցաւ թէ նոյն Եղուարդ Զ. յաջողած ըլլալով երկու դարաւոր ոսոխները, Ֆրանսան եւ Անգլիան համաձայնեցնել, նոյնպէս յաջողեր էր համաձայնութեան գետին մը գտնել երկու անհաշտ թշնամիներու միջեւ, Անգլիան եւ Ռուսիան: Յայտնի էր որ Անգլիական-ռուսական համաձայնութիւնը ուղղուած էր Գերմանիոյ դէմ, որ երկուքին համար ալ դարձեր էր գինուորական եւ տնտեսական երկիւղալի զօրութիւն մը:

Ռէվալի տեսակցութիւնը մղեր էր նաեւ երիտասարդ Թուրքիոյ «միութիւն եւ յառաջադիմութիւն» գինուորական յեղափոխութիւն մը, Թուրքիան փրկելու նոր անդամահատութենէ մը, որ Ռուսաստանի արեւելեան գիւանադիտութեան հիմնաքարն էր:

մութ ու անխիղճ խաղերուն, եւ ասիկա մինչեւ անոր եղերական վախճանը: Իր «Յուշերը», հիմնուած անհերքելի ապացոյցներու վրայ, անմոռաց յիշատակի կոթող մը պիտի մնայ թրքահայ անմեղ ժողովուրդի բնաջնջման, որ ինքն իսկ պիտի անուանէ «պատմութեան մեծագոյն ոճիրը»:

ՎԱՆԿԷՆՀԱՅՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԸ

Բարոն ֆոն Վանկէնհայմ, արտակարգօրէն օտուած էր դիւանագիտական փայլուն տաղանդով մը: Իր ետեւ ունէր 25 տարիներու յաջող ասպարէզ մը. եղած էր Պետրոգրատ, Գորէնհակ, Մատրիտ, Աթէնք եւ Մեքսիգոյ: «Իլուամագէտի մը համար անհրաժեշտ յարմարութեամբ, կը գրէ Մորկէնթաու, այնքան դիրար կը խօսէր գերմաներէնը, անգլերէնը եւ ֆրանսերէնը: Վերջապէս, խորամանկ կերպով կը ճանչնար արեւելքը, ուր գլխաւոր անձնաւորութեանց հետ սերտ յարաբերութիւններ հաստատած էր»:

Նման զեսպան մը, ի հարկէ պիտի ըլլար գերման կայսեր հոգեհատորը:

ՎԱՆԿԷՆՀԱՅՄԻ ԿԵՆԳԱՆԳԻՐԸ

Մորկէնթաու, որ Վանկէնհայմի մտերիմ բարեկամը դարձեր էր զինքը խորապէս ուսումնասիրելու համար, այսպէս կը գծէ անոր կենդանագիրը: «Տղայութեան երբ Գերմանիա կ'ապրէի, հայրեմիքը ընդհանրապէս խորհրդանշուած էր գեղեցիկ եւ ուժեղ կնոջ մը դիմագիծով, շլացուցիչ Վալգիրիի տեսակ մը: Երբ աչքիս առջեւ կը բերեմ արդի Գերմանիան, Վանկէնհայմի գանգուածոյ մեծդի ստուերատիպը, բնականաբար իմ մտքիս առջեւ կը ներկայանար իր բարձր հասակով 1 մետր 89 սանդիմէն աւելի. իր հաստատուն կազմուածքը, հսկայի իր ուսերը, ուրկէ վեր կը բարձրանայ իր գլուխը ուղիղ եւ ապերասան, իր աչքերուն կրակը իր ամբողջ անձէն յորդող կեանքի եւ գործունէութեան պատկերը կը յիշեցնէր ինձի, Գերմանիան, ոչ թէ այն Գերմանիան որ նանչցած եմ, այն Գերմանիան, որուն չափէ դուրս փառասիրութիւնները ամբողջ աշխարհը սոսկումի մատնած էր: Վանկէնհայմի իւրաքանչիւր բառը կամ շարժումը շատ լաւ կերպով կը յայտնաբերէր այս ձգտումը»:

Վանկէնհայմի մարմնական զիմագիծը կը համապատասխանէր իր բարոյական նկարագրին: Սորին ուշադրութեան արժանի է Մորկէնթաուի նշանակալից նկարագրականը, որմէ հիանալի կերպով զուրս կը ցայտէ գերման զեսպանին իսկուծիւնը:

«Վանկէնհայմ, կը գրէ Մորկէնթաու, ամբողջ կրակ, ամբողջ բոց էր... Վանկէնհայմ խորապէս անմարդկային, անպատկառ եւ անգուր էր: Ան գոհ էր դիմակայելուն համար իր քաղաքականութեան բոլոր հետեւանմանքը, որքան ալ անոնք զգուշի ըլլային, քանի որ նկատի ունէր միայն նպատակը, որուն հարկ էր հասնիլ»: Եւ այլուր. «ունէր փառասիրութիւն մը որ ոչ մէկ նկատում, ոչ մէկ սահման կ'ընդունէր»:

Իրապէս, Վանկէնհայմը իր կայսեր պէս մինչեւ ոսկրները բրուսիացի էր: Անոր պէս իրապաշտ մը, թշնամի՝ ազնուական դադափարներու եւ այդ ալ առանց խղճահարութեան: Ան, ինչպէս իր կայսրը, երբեք չէր ընդունէր որ քաղաքականութեան մէջ ձրի բան մը կատարուի եւ ուրիշ շարժառիթ ունենայ, բայց եթէ զերմանական շահերը:

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ԹՈՒՐԳԻԱՆ ՉԵՌՔ ՉԵՌՔԻ

ՀԱՅԵՐԸ ՍԻՐԱՇԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՌԻԱԽՆՁՈՐ

ՌՈՒՄ ԵՒ ԳԵՐՄԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆ

Գերմանացի աշխարհագետները, ինչպէս տեսանք, Հայաստանի աշխարհագրական դիրքը շատ աւելի լաւ ուսումնասիրեր էին քան հայ եւ ոռւս աշխարհագետները: Այս աշխարհագրական կարեւոր դիրքը նկատի առնելով, Գերմանիան չէր կրնար հանդուրժել որ Հայաստան իյնար ոռւսական տիրապետութեան տակ, մանաւանդ ինչպէս նշմարեցինք, Պերլին-Պաղատտ երկաթուղին պիտի քերէր Հայկական Տաւրոսի ստորոտները:

Ռուսաստանը կոահելով թէ այս երկաթուղագիծը ի վերջոյ պիտի յանգի պարսից ծոցի ափին, ինքն ալ իրեն համար նոր ծրագիր մը զրաւ. Պետերբուրգ-Պարսից ծոց երկաթուղագիծը: Հայաստան այս երկու արշաւանքներուն խաչաւորման կեդրոնին մէջ կ'իյնար: Մենք տեսանք թէ «հայասէր» կոչուած Ռոհբրախը ի՞նչ կենդանի գոյներով պատկերացուցեր էր Հայաստանի աշխարհագրական դիրքի կարեւոր նշանակութիւնը:

Ամէն գիտակից գերմանացի, ըլլայ գիտնական կամ գինուորական, նոյն «հայասէր»ին պէս, այն խորին համոզումը գոյացուցեր էր, որ եթէ Հայաստանն անցնէր Ռուսաստանի ձեռքը, այդ պիտի նշանակէր վերջ դնել Թուրքիոյ, իրեւ ինքնազուլս պետութիւն:

Եւ հետեւաբար, վերջ դնել նաեւ Գերմանիոյ ծաւալապաշտ կայսրութեան քաղաքականութեան: Ուստի, ինչպէս կ'եղբակացնէր «հայասէր» գերմանացին, Գերմանիան պիտի պաշտպանէր Թուրքիան, որով թրքական պիտի մնար նաեւ Հայաստանը, եւ ասիկա մինչեւ վերջին ծայրայեղութիւն:

Համագերման մտաւորականին մտքին մէջ «միւնչեւ վերջիւն ծայրայեղութիւն» կը նշանակէր՝ որ եթէ հայերը շարունակեն մնալ Ռուսաստանի գրկին մէջ, խաբուած ոռւս դիւանագիտութեան խաբերայ խոստումներէն, պիտի ենթարկուին ծանր փորձանքներու, որոնց փոքրագոյնը պիտի ըլլար բռնի տեղահանութիւնը:

Արդ, մինչ ձարական կառավարութիւնը, յանձին կոմս Վորոն-ցով-Դաչկովի, դիւային սաղրանքներով ոտքի կանգնեցուցեր էր հայոց արիւնոլը ժանգոտած Հայկական Հարցը, խոստանալով լուծել ուսական նախաձեռնութեամբ, Գերմանիան եւ Թուրքիան ալ, ձեռք ձեռքի տուած, լծուեցան լուրջ աշխատանքի մը, հայերը իրենց կողմը սիրաշահելով, կորզել զանոնք Ռուսաստանի գրկէն եւ նետել Գերմանիոյ եւ Թուրքիոյ դիրկը:

Բայց որովհետեւ Գերմանիան գիտէր թէ մօտալուտ է համաշխարհային պատերազմը, եւ թէ իր գաղտնի «ղաշնակիցն» իր կողմին պիտի կուռի իր յաւիտենական ոստիին դէմ, եւ ճանչնալով իր ջարդարար բնազդները, չէր տարակուսեր որ ան ուս թրքական պատերազմի մը ընթացքին կոտորէ թրքահայ ժողովուրդը եւ ինքն ալ իբր անոր դաշնակիցը պիտի դատուի եւ դատապարտուի հանրային կարծիքէն, իբրեւ Մեծ Եղեռնին կամակից: Որով անհրաժեշտ եղաւ Հայկական Հարցին նոր ուղղութիւն մը տալ:

ԳԵՐՄԱՆ-ԸԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Այդ նպատակին հասնելու համար, գերման կառավարութիւնը, յանձին իր արտաքին գործոց նախարար՝ ֆոն Եակովի եւ անոր օգնական՝ ֆոն Յիմըրմանի, ձեռքը առաւ խումբ մը հայասէր գերմանացիներ եւ խումբ մըն ալ գերմանասէր հայեր, գաղտնապէս թելադրելով անոնց եւ քաջալերելով որ միութիւն մը կազմեն, որ կարող ըլլայ բարենորոգումներու կրակէն բորբոքած հայերը զգաստութեան ճամբուն վրայ դնել:

Այսպէս, Պերլինի մէջ ծնունդ առաւ «գերման-հայկական» ընկերութիւնը, որուն նախագահն եղաւ դոկտ. Լեպսիուս, ծանօթ հայասէրը եւ արեւելեան գործերու մասնագէտը, ըլլալով նախագահ Գերման-արեւելեան ընկերութեան:

ԼԵՊՍՒՈՒՍԻ ԳԻՄԱԳԻՄԸ

Դոկտ. Լեպսիուս, վարդապետ աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան, հանրաձանօթ եւ անկեղծ հայասէր էր, ինչպէս որ էր եռանդուն եւ թունդ գերմանասէր:

Բնաւորութեամբ ազնիւ, բարեհամբոյր եւ արդարադատ էր: Իսկական լուրջ մտաւորական մը, որ բազմակողմանի եւ հարուստ պաշարին հետ, մերձաւոր արեւելքի ժողովուրդները դատելու կարողութիւն ունէր:

Եղաւ հայասէր մը ո՛չ թէ նիւթական շահի կամ համբաւի տիրանալու համար, ինչպէս եղան կարգ մը շահամուլ, կեղծաւոր եւ կաշառակեր եւրոպացիներ, մանաւանդ լրագրողներ, այլ ներքին համոզումներով, խորապէս ուսումնասիրած ըլլալով հայոց պատմութիւնը եւ անոր մէջէն հայ ազգին ցեղային ձիրքերը, որոնք իրեն հիացում կը պատճառէին:

Ան կը սիրէր արդարութիւնը, ճշմարտութիւնը, որովհետեւ ունէր հաստատուն ու բարձր նկարագիր, եւ ասոր համար սիրուած ու յարգուած էր ո՛չ միայն գերման մտաւորականներէն, այլ եւ պետական բարձրաստիճան պաշտօնեաներէն: Ամէն ջանք տարաւ որ թրքահայութեան գլուխէն հեռացնէ գալիք մեծ Եղեռնը: Ան փայլակի արագութեամբ հասաւ, ձաղկեց, խարանեց թէ՛ Իթիէհատի եւ թէ՛ կայսերական Գերմանիոյ պատասխանատու պետական մարդիկը:

Մտքով ազնուախոհ մարդ, հալածուեցաւ կայսերապաշտ նեղմիտ գերմաններէ, այն միակ յանցանքով՝ որ յանդգներ էր գրել իր թանկարժէք «գաղտնի տեղեկագիր» խորագրեալ մատենան, որ յաւիտենական վաւերագիրը պիտի մնայ իթիէհատական Թուրքիոյ կատարած մեծ ոճիրին, եւ ուր ցոյց կու տան նաեւ գերմանական մատը:

Տարագիր՝ իր սեփական հայրենի հողէն, իր ճշմարտախօսութեան համար, ստիպուեցաւ ապրիլ եւ մեռնիլ յետին չքաւորութեան մէջ: այնպէս որ քանի մը երախտագէտ եւ ազնուասիրտ հայերու դրամական նպաստներովը ամօքուեցաւ անոր հիւանդագին այրիին եւ աղջկան թշուառութիւնը:

ԳԵՐՄԱՆ-ԸԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Պատուելի Լեպսիուս, մօտիկ չփոմի մէջ գերման կառավարական շրջանակներու հետ եւ լիովին տեղեակ «հայաւեր» Ռոհրբախի առաջարկած տեղահանութեան, շատ լաւ գիտէր որ այդ ծրագիրը օգին մէջ կախուած բան մը չէր, այլ պետական ծրագիր մը, որ իրականութիւն պիտի դառնար, եթէ հայութեան երկու հոգեւորական պատասխանատու պետերը, Ազգային Բիւրոյի անդամները եւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի ուսասիրական հոսանքը փարած մնային ձարական հակաթուրք քաղաքականութեան: Եւ հետեւարար, ուսաւ թուրք պատերազմի մը պարագային, բռնագաղթին կարող էր յաջորդել մէկմիլիոնէ աւելի հայերու ոչնչացումը:

«Գերման հայկական ընկերութեան նախագահը լաւ գիտէր միանգամայն որ խումբ մը «ազգային գործիչ»ներ հրապարակ համելով հայկական հարցը, ուսական դիւանագիտութեան ձեռքը կոյր գործի՛լ

մը դարձնելիս, Ռուսաստանի հայթաթեւոյ գեմք մը, որուն միջոցով նա տիրէ արեւելեան Անատոլի:

«Գերման հայկական ընկերութեան» երկրորդ նպատակն ալ էր լուսաւորել հայերու միտքը, մատնանշելով օտար եւ դարաւոր թշնամիէ մը գործ դրուած միջամտութեան մը ծանր հետեւանքները, որոնց առաջին գոհերը հայերը պիտի ըլլային:

«Գերման հայկական միութիւն»ը ուրիշ կարեւոր նպատակ մըն ալ կը հետապնդէր. Գերմանիոյ մէջ «հայասէր» մթնոլորտ մը ստեղծել, համակրելի դարձնել հայ ժողովուրդը գերմաններու աչքին, որոնք համիտեան շրջանէն ի վեր հայութիւնը կը նկատէին Օսմանեան պետութեան թշնամի, որ անդադար եւրոպական պետութիւններու կը դիմէր, անոնց միջամտութիւնը հրաւիրելով Թուրքիոյ ներքին գործերուն մէջ:

Գերման ընկերութեան եւ ժողովուրդին բուն թրքախրութիւնը, կը գրէ Պալաքեան վրդ.ը, չէր կրնար վրիպիլ անշուշտ Գերմանիոյ մէջ ապրող ո՛րեւէ հայու հետատես ակնարկէն, եւ հնար չէր չմտավախել ապագայ դժուարութիւններէ...: Զի հակառակ գերման-հայկական կոմիտէի նախագահ Տօթ. Լեպսիուսի ապահովիչ հաւատումներուն, գերմաններու համար շատ համակրելի ժողովուրդ մը չէինք, քանի որ թուրքերու ուխտեալ թշնամիներէն էինք»: (Հայ Գողգոթեան, Հտ. Ա. Վիեննա, 1922, էջ 31-32):

ԳԵՐՄԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Այդ երկիւղալի շրջանին, գերման ժողովուրդը իր քաղաքական, գինուորական, մտաւորական եւ լրագրական խումբերով, կը գտնուէր Գուլելմոս կայսեր հմայքին տակ, զոր կը պաշտէին իբր շատուած մը, որ թէեւ մտքով անհաւասարակչիւ մարդ էր, բայց անոր խօսքերը կ'ընդունէին որպէս երկնային պատգամներ:

Քաղաքական դեմքի վրայ, գերման ժողովուրդն իր խոշոր մեծամասնութեան մէջ, մտքի ազատութենէ զուրկ, մեքենայ մըն էր, պատրաստ գործելու, մտածելու, շարժելու այնպէս ինչպէս որ կ'ուզէին իր քաղաքական եւ գինուորական պետերը:

Ռէնէ ՓիւնՈՆ, Ֆրանսացի նշանաւոր գրողը, եւ ուսուցչապետ քաղաքական դիտութեանց ղարոցին, խոր կերպով թափանցեւ էր գերման ժողովուրդին մտայնութեան մէջ եւ պատկերացուցեւ էր անոր նկարագրերը:

ՀԵՌՄԱՆԵՍ ՀԱՅԵՐ

Գերման-հայկական միութեան անդամները, Հեռատես եւ խորթ-թափանց մարդիկ, սոսկումով կը դիտէին այն անդունդը, ուր կ'առաջնորդուէր թրքահայ ժողովուրդը, անոր վեղարաւոր ու անվեղար առաջնորդներէն: Գիտէին թէ կատաղի փոթորիկ մը փրթելու վրայ էր, եւ հայ ժողովուրդի գլուխը այդ փոթորիկէն ազատ պահելու համար անհրաժեշտ դատեր էին հաւաստումներ տալ գերման կառավարութեան թէ հայերու մեծամասնութիւնը յանցապարտ չէ, ինչպէս որ կ'ամբաստանուէր, այլ համակիր են Գերմանիոյ եւ Թուրքիոյ, եթէ անոնք անկեղծօրէն ապահովեն թրքահայ ժողովուրդին կեանքը, պատիւը, ինչքը եւ ազգային մշակոյթը: Ասոնց համար է որ հայերու մէկ մասը ուսական քաղաքականութեան ետեւէն կ'երթայ:

Այս լեզուն գործածելով, այդ խումբ մը հայերը կ'աշխատէին գերման կառավարութեան համարումն ու վստահութիւնը շահիլ ղէպի այդ տկար ու անպաշտպան ժողովուրդը, որ ուրիշ բան չէր ուզեր, բայց եթէ արեւու տակ ունենալ ապահով տեղ մը:

Գերման արտաքին գործոց նախարարը որ սովոր էր խօսելու այնպէս ինչպէս որ կը մտածէր, իրեն ներկայացող հայերու դրաւ այս երկու պայմանները.

- 1. Զերբազատուիլ ձարական դիւանագիտութեան կաշկանդիչ կապանքներէն:
- 2. Եւրոպական միջամտութիւնը չհրաւիրել Թուրքիոյ ներքին գործերուն մէջ:

Ասոնց փոխարէն, արտաքին գործոց նախարարը, յանուն իր կառավարութեան, կը խոստանար իթթիհատական կառավարութեան ձեռքով երաշխաւորել եւ հայկական նահանգներուն մէջ մտցնել այնպիսի բարենորոգումներ, որոնք աւելի արժէք պիտի ունենան քան 61րդ չարաշուք յօդուածով պահանջուած բարենորոգումները:

Գերման-հայկական ընկերութեան ամէնէն ազդեցիկ անդամը, որ միանգամայն Հ.Յ.Դաշնակցութեան ամէնէն կարկառուն ղէմքերէն մէկն էր — որուն անունը դեռ չեմ ուզեր տալ, քանի որ տակաւին կ'ապրի — համաշխարհային պատերազմէն 15 տարի ետք, բառ առ բառ կը հաղորդէր ինծի հետեւեալը, Փարիզի Մուրատեան վարժարանի դահլիճին մէջ. «Եւ եւ քանի մը ընկերներ ներկայացանք Գերմանիոյ արտաքին գործոց նախարար ֆոն Եակովին, որ քաղաքացիական կերպով ընդունեցաւ մեզ: Ընդունելութեան ներկայ էր անոր օգնական Յիմըրմանը: Մեմք նախարարին բացատրեցինք մեր ծանր մտահոգութիւնը թրքահայ ժողովուրդի նկատմամբ, այն պարագային երբ Թուրքիան ալ պատերազմին մէջ մտնէր:

Նախարարը ծանրախոհ մեզ մտիկ ընել է ետք, հատիկ հատիկ ըսաւ. մենք չենք ուզեր ձեզ խաբել միւս մեծ պետութիւններու պէս, Թուրքիոյ ներքին գործերուն մէջ խառնուելով, եւ ձեզի ինքնավարութիւն խոստանալով, հայ ժողովուրդը ջարդել կու տան: Գերմանիան պատուոյ խօսք կու տայ ձեզի, որ երբ հաւանական պատերազմը ծագի եւ մենք յաղթենք, եւ պիտի յաղթենք, ձեզի ինքնավարութիւն չենք խոստանար, քանի որ Թուրքիան գերմանական գաղութ մը պիտի դառնայ: Բայց դուք կրնաք վստահ ըլլալ որ յաղթական Գերմանիան հայ ժողովուրդին պիտի շնորհէ կեանքի, պատուոյ, գոյքի եւ ազգային մտաւոր մշակոյթի լիակատար ապահովութիւն, երաշխաւորուած պետական հաստատուն օրէնքներով:

Պատերազմի պարագային մենք հայերէն չենք պահանջեր որ Գերմանիոյ եւ Թուրքիոյ հետ ըլլան ընդդէմ Ռուսաստանի եւ անոր դաշնակիցներուն, բայց գոնէ *չէզոք զիրք* բոնէ եւ գիտնայ ծածկել իր հրապարակային անխոհեմ համակրութիւններն եւ հակակրութիւնները. - *ապա խօսակիցս աւելցուց*. եթէ մենք, հայերս, հետեւէինք գերման նախարարին իմաստուն խորհուրդին, այսօր պիտի չողբայինք մէկմիլիոն հայերու ոչնչացումը, որ պատրաստեց այդ հին չարագործ ճարտ օղորուածը»:

Դիտելի է որ գերման արտաքին գործերու նախարարը կ'արտասանէր այդ կապարեայ խօսքերը, երբ դեռ ձարական ծեր աղուէսը թափած չէր իր դաւաճանութեան բովանդակ մաղձը:

ԼԵՊՍԻՈՒՍԸ Կ. ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Արդարեւ, ֆոն Եակոֆ ճշմարտութիւնը խօսած էր: Ճիշտ այդ միջոցին էր, 1913ին, որ «գերման հայկական միութեան» նախագահը, Լեպսիուս, հասած էր Կ. Պոլիս, հայ-գերման մերձեցման մը հիմերը ձգելու համար:

Հայասէր պատուելին իր քարոզչութիւնը սկսեր էր այցելելով Գոռմ Գափուրի եւ Սազըզ Աղաճի պատրիարքարանները, հայոց պաշտօնական մարմիններուն եւ յատկապէս «ռուսասէր» հոսանքին, թէ Գերմանիոյ հետ ըլլալ կը նշանակէր ըլլալ Թուրքիոյ հետ, որոնց քաղաքականութիւնն էր բարեօրելով թրքահայութեան դրութիւնը, սիրաշահիլ զայն դէպի գերմանական եւ թրքական շահերը, որոնք անբաժան կերպով իրարու հետ հիւսուած են, եւ հետեւաբար՝ հայկական շահերուն հետ, քանի որ Հայաստան կը ստանար բացառիկ կարեւորութիւն այն տեսակէտով որ Պաղտաստի երկաթուղին իր ազդեցութեան շրջանակին մէջ կ'անէր երկրին մեծագոյն մասը, եւ Պաղտաստը պատուար պիտի դառնար ռուսական յառաջխաղացման դէմ:



Մեհմէտ Թալաաթ փաշա

Ասոր մէջ չկար բան մը որ դիւանագիտական գաղտնիք ըլլար: Ամէն ինչ պարզ եւ հրապարակային էր: Աշխարհի վրայ այն գործերը յաջողութեամբ կը պսակուին, որոնք հիմնուած են փոխադարձ շահերու վրայ:

Լեպսիուս աշխատեցաւ հայութեան կոչեցեալ եւ անկոչ ղեկավարներուն գլխուն մէջ խոթել թէ որքան գերման նախաձեռնողները թափանցեն Փոքր Ասիոյ խորերը, այնքան անոնք աւելի ու աւելի այն համոզման կու գան թէ յաջողութիւն գրեթէ չեն կրնար գտնել իրենց ձեռնարկութեանց մէջ առանց հայերու աջակցութեան: Ուստի, բնական էր որ Գերմանիան բարենորոգումները հաստատէր Թուրքիոյ մէջ եւ խրախուսէր այդ ընդունակ ժողովուրդը, որուն պանծացումը արդէն տեսանք:

Վերին աստիճանի շահեկան է այն տեսակցութիւնը, որ թուրք մայրաքաղաքի Հ.Յ. Դաշնակցութեան «Ազատամարտ» պաշտօնական

օրաթերթի խմբագիրներէն մէկը ունեցաւ Լեպսիուսի հետ, եւ որ հրատարակեց նոյն կուսակցութեան Թիֆլիսի պաշտօնաթերթը՝ «Հորիզոն», որպէսզի այդ քաղաքին «դիւանագէտ» գործիչները տեղեկ մնան գերման կառավարութեան հայանպաստ ջանքերուն:

«Գերմանական քաղաքականութիւնը, ըսաւ Լեպսիուս, կատարեալ յեղաշրջում է կրել հայկական խնդրի նկատմամբ: Որքան գերման նախաձեռնողները մտնում են Փոքր Ասիայի խորքերը, այնքան նրանք աւելի ու աւելի այն համոզման են գալիս որ գրեթէ չեն կարող յաջողութիւն գտնել իրենց ձեռնարկութիւններուն մէջ, առանց հայերի աջակցութեան: Ուստի, գերմանացիները վնոյն էին խրախուսել այդ ընդունակ՝ բայց անտարբերութեան մատնուած ժողովուրդին: Գերմանական դիւանագիտութիւնը ըստ ամենայնի աշխատելու է բարենորոգումներ մտցնել Հայաստանում եւ միանգամ առ միշտ հեռացնել այդ երկրում անդորրութիւնը խանգարող պատճառները: Այս հոգածութիւնը անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով որ նա նպատակ ունի պահպանել ասիական Թուրքիայի անձնակազմը լիութիւնը:

Ահա թէ ինչպէս էր նայում Գերմանիան Թուրքիայի բարենորոգումներին վրայ: Ամէնից առաջ բանակի կազմակերպումը կը յանձնուի բացառապէս գերմանացի սպաներին, որոնք չեն մնար Պոլսում, այլ կը գան ասիական Թուրքիայի բոլոր գաւառները: Ուստի, կարելի է վստահ լինել որ երբ գործերի հրամանատարութիւնը գաւառներում անցնի գերմանացիներին, բնակչութեան կեանքը կ'ապահովի:

Երկաթուղու կառուցումն իր բոլոր ճիւղերով, աստիճանաբար առաջ է գնում, Սվազ-Խարբերդ-Տիարպեֆի գիծը մեր ձեռքին կը լինի. այս է նոր միջոցը երկրի վերածնութեան:

Բայց լուսաւորութեան ջերմ կոյսակից հայերին առանձնապէս կ'ուրախացնէ Պոլսում գերմանական համալսարան հիմնելու ծրագիրը: Սակայն ամենից առաջ պէտք է փոխել դասաւանդումի եղանակը ստորին եւ միջնակարգ դպրոցներում: Մենք կ'օգտուենք այդ բանի համար հայերից: Մենք Հայաստանում մի առանձին դպրոց կը բանակն ուսուցիչներ պատրաստելու համար, որոնք գերմանական մեթոդներով զինուած կը վերակազմեն տարրական դպրոցները»: («Հորիզոն», 1913, թ. 165):

«Պաղարիւն» Եակոֆը եւ յայտնի «հայաւեր» Լեպսիուսը շեշտակի կերպով հայ ժողովուրդի հոգեւորական եւ աշխարհական «գործիչներ»ու առջեւ հրապարակաւ այսպէս կը դնէին Հայկական Հարցին նոր, գործնական լուծումը. բանաւոր եւ հնարաւոր «բարենորոգումներ», ու փոխադարձ շահերով ամբապնդուած, հրապարակէն դուրս բերելով հայու արիւնով մաշած զէնքը:

Սակայն, հայ գործիչները, ինչպէս շատ անգամ տեսանք, վարժած ըլլալով սրտով գործելու, եւ գործնական մտքի բնաւ չհետեւելու, աւելի ու աւելի փակած մնացին ձարականութեան պաշտամունքին, որ իրենց կը խոստանար անիրագործելի ինքնավարութիւնը:

ԹՈՒՐԻՔ-ՎՐԱՅԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԴԱՇԻՆՔԸ

Մինչդեռ Թիֆլիսի փոխարքայական պալատին մէջ հայ մտաւորականութիւնը թրքահայ ժողովուրդին կեանքի թելերը կը մանէր ու կը քակէր առանց մտահոգութեան ստուերի մը, նոյն քաղաքին մէջ, բուրբուրի նոր պատկեր մը կը պարզուէր:

Վրացիները, թէպէտ «կիւնտօի» համբաւը կը վայելէին, բայց ճակատագրական այդ պղտոր ու տազնապալից շրջանին այդ «կերուխում»ի ժողովուրդը ցոյց տուաւ հեռատեսութիւն եւ լրջութիւն: Ան ալ որ ունէր ձարականութեան դէմ, որ ջնջեր էր իր անկախ թագաւորութիւնը եւ մեծագոր ազնուականութիւնը իրարու մէջ բաժնէր էին վրացական բերրի հողերու մեծ մասը. աշխատեւ էր բռնի միջոցներով ջնջել վրացերէն լեզուն, կաշկանդելով անոր կրօնական դաւանանքը, որպէսզի «ռուսացում»ը կատարուած իրողութիւն մը ըլլայ, ճիշտ այն բռնի միջոցներուն պէս, որ գործադրեր էր ռուսահայութեան դէմ:

Բայց վրացի ժողովուրդին ղեկավար մարմինները ծածկեր էին իրենց ներքին զգացումները, ոուս կառավարութեան վրէժխնդրութիւնը իրենց վրայ չհրաւիրելու համար, սպասելով յարմար առիթին, իրենց դիրքը ճշտելու ձարական կառավարութեան հետ:

Անոնք, երբ տեսան որ Թիֆլիսի փոխարքայական պալատին մէջ հայ գործիչները շարունակ փոխարքային հետ գլուխ-գլխի բաներ մը կ'ենթեն Թուրքիոյ դէմ, եւ հայ ժողովուրդն ալ ուրախութեան եւ ցնծութեան մէջ է, երբ կեանքի եւ մահու թելէ մը կախուած էր, առանց տատամսելու որոշեցին Թուրքիոյ հետ բարեկամական կապեր հաստատել, ապագային սպահովելու համար իրենց երկրին կենսական շահերը:

Եւ անմիջապէս, առանց ձայն-ձուն հանելու, վրացական պատգամաւորութիւն մը ճամբայ ելաւ դէպի Կ. Պոլիս, ուր «գաղտնի Դաշիմէ» մը կազմեց Երիտասարդ Թուրքիոյ հետ, հակառուսական պայմաններով, ընդունելով Գերմանիոյ եւ Թուրքիոյ քաղաքական ուղղութիւնը:

Մէջտեղ դրաւ փաստ չկայ թէ ինչ հիմերու վրայ կը հանդէսին հակառուսական պայմանները, քանի որ բանակցութիւնը վարողները գաղտնապահ մարդիկ էին, բոլորովին հակապատկեր հայկական

գիւանագիտութիւնը վարող ազգային գործիչներուն, որոնք եթէ այդպէս դաշինք մը կնքած ըլլային, 24 ժամէն գաղանիքը տանիքներուն վրայ կը քարոզուէր:

Թուրք-վրացական բարեկամութեան խօսուն փաստն այն է որ այդ գաղտնի դաշինքին շնորհիւ, վրացիները առանց կաթիլ մը արիւն թափելու, աշխարհամարտը վերջանալէն ետք, մեծ բարիքներ վայելցին: Մինչդեռ անոնց դրացի հայութիւնը, ինչպէս պիտի տեսնենք, սոսկալի աղէտներու ենթարկուեցաւ, թուրք-գերմանական քաղաքական ուղղութիւնը չընդունելուն համար:

ԹՈՒՐԻԹԻՈՑ ԶԱՆՔԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Այն միջոցին, երբ գերման արտաքին գործերու նախարարը, յանձին գտկաւ Լեպսիուսի, փորձեր կը կատարէր հայոց ուսասիրական հոսանքը համոզելու որ թուրք-գերմանական ուղղութիւնն ընդունին, երիտասարդ թուրքերու կուսակցութիւնն ալ հրապարակ իջաւ հայկական բարենորոգումներու խնդիրը ուղղակի կարգադրելու Պատրիարքարանին հետ, որ, ինչպէս տեսանք, ուսասիրութեան բոյնը դարձեր էր, քանի որ այդ Աթոռը սերտօրէն կապուած էր էջմիածնի Աթոռին հետ, զոր Գէորգ Ե. Կաթողիկոսը ձարապաշտութեան եւ գիւանագիտական կեզրոն ըրեր էր, եւ ամէնքը կը պտտէին անոր շուրջը, կարծելով անոր մէջ գտնել փրկութեան խարխիւր:

Այս անգամ թուրք կառավարութիւնը վճռեր էր անկեղծ եւ լուրջ կերպով վերջ դնել հայկական Հարցին եւ Օսմանեան հայաբնակ նահանգներուն մէջ լայն բարենորոգումներ մտցնելով, հայոց վստահութիւն ներշնչելով, զանոնք ուսական ճանկերէն ազատել:

Հանդամանքները ստիպիչ էին: Մէկ կողմէն ձարական գիւանագիտութիւնը կ'աճապարէր օր առօր Հայկական Հարցը լուծել ուսական նախաձեռնութեամբ, եւ միւս կողմէն Պօղոս Նուպար Փաշան ալ սկսեր էր, ինչպէս տեսանք, եւրոպական կառավարութիւններուն մօտ դիմումներ կատարել, ինչ որ ուսական տեսակէտն աւելի եւս կը զօրացնէր:

Այս առիթով, «Հորիզոն» թերթը, իր 1913 թուի, թիւ 283 ին մէջ կը գրէր. «գերմանական դիւանագիտութիւնը, միշտ պաշտպան Թիւրքիային, արտաբուստ գիշող էր ուսական պահանջների առջեւ չկամենալով միանգամից ջնջել իր նկատառումները հայերի վերաբերմամբ: Ոչ միայն այդ, նա Թիւրքիային էլ խորհուրդ էր տալիս գիշող լինել, եւ ժխտել չէ կարելի որ թուրք կառավարութիւնն աշխատում էր համաձայնութիւն կայացնել իրանց՝ հայերի հետ: Այսպէս թուրք մամուլը ցանկութիւն էր յայտնում որ կաթողիկոսին ներկայացուցիչ՝

Պօղոս Նուպար փաշան, փոխանակ եւրոպական պետութիւններին դիմումներ անելու, գալ Կ. Պոլիս եւ բանակցութիւններ վարել ուղղակի թուրք կառավարութեան հետ: Ինքը, թուրք կառավարութիւնն էլ կազմել էր իր սեփական ծրագիրը Հայաստանում բարենորոգումներ մտցնելու համար»:

Մենք ունինք փաստաթուղթ մը, որ մեծ լոյս կը սփռէ թրքահայկական բանակցութիւններուն վրայ, եւ լաւագոյն թարգմանն է եկող զարհուրելի արհաւիրքին: Փարիզի թերթերէն մէկուն թղթակիցը, Պուլէն կը գրէր «Հորիզոն» թերթին հետեւեալ ուշագրաւ տողերը:

«Երիտասարդ թիւրքերը տրամադրութիւն են ցոյց տալիս դէպի հայերը եւ պնդում են թէ ուզում են միայն համաձայնութեան գալ նրանց հետ: Նրանք իրար յետեւից միջոցներ են ձեռք առնում եւ նոյն իսկ իրենք միմիտրները, յաճախ այցելում են պատրիարքին, որպէսզի տրամադրեն նրան այն բարենորոգումները, որոնք բոլորովն են անմիջապէս թիւրք կառավարութիւնից: Մինչդեռ իսկապէս երիտասարդ թիւրքերը ուզում են կործանել պետութիւններ ծրագիրը, որով եւրոպական կոնդրոլ է պահանջում: Այս նպատակով նրանք տրամադիր էին զիջումներ անելու հայերին»: («Հորիզոն», 1913, թ. 279):

Թուրք կառավարութիւնը ուրիշ շօշափելի փաստ մըն ալ տուաւ իր բարեացակամութեան, խոստանալով Պատրիարքին թէ ինքը պիտի օգնէ որ աւելի մեծ թիւով հայ երեսփոխաններ ընդունին Օսմանեան խորհրդարանին մէջ, քանի որ ինչպէս գիտենք, հայերն ինքնին անկարող էին լոկ իրենց ձայնով ընտրել իրենց թիւին համապատասխանող երեսփոխաններ: Այս պահանջն էր 61րդ յօդուածը յարուցանելու զորդիչ պատճառներէն մէկը, եւ կառավարութիւնը կատարեց այդ ապօրինի, խօսարանը ժխտող պահանջն ալ:

Ոստելով այս մասին, նոյն փաստաթուղթը կը շարունակէ. «Այսպէս, ներքին գործերի միմիտր Թալեաթ բէյը պատրիարքին խոստացել է ապահովել հայ պատգամաւորների ընտրութիւնը հայերի պահանջած թիւով եւ նոյնիսկ ընտրել տալ հենց այն անձերին, որոնց կը մատնանշեն հայերը, եթէ պատրիարքարանը հայ ժողովուրդի անունից մի մանիֆեստ հրապարակ յայտարարելով թէ նա հաւատում է բարենորոգումներին, որ Օսմանեան կառավարութիւնը մտադիր է գործադրելու Անատոլիայում: Պարզ է որ կառավարութիւնը պիտի օգտուի այդ մանիֆեստից, յայտարարելու համար Եւրոպային թէ հայերը, որոնց վիճակով հետաքրքրում էք դուք, վստահանում են մեզ, ուրեմն ինչո՞ւ դուք չէք ուզում թողնել որ մենք ինքներս գործադրենք բարենորոգումները»:

Երիտասարդ թուրք կառավարութեան խորամանկ քաղաքականութիւնը, արժանաւոր ժառանգորդ համիտեան նուրբ գիւանագիտութեան, պահանջելով մանիֆեստ ընդդէմ Եւրոպայի, կ'ուզէր պատին

դամել ձարականութիւնը, որուն դաժան սրտին մէջ յանկարծ բորբեր էր հայասիրական զգացումները, որովհետեւ Անգլիան եւ Ֆրանսան իբրեւ դաշնակիցներ, միայն բարոյական աջակցութիւն ցոյց կու տային Ռուսաստանին, որ մինչեւ վերջը պիտի մնայ Հայկական Հարցին տէրն ու տնօրէնը:

ԹԱՂԱՍԹԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՄԵՐԺՈՒԱԾ

Հակառակ երիտասարդ թուրքերու կատարած ջանքերուն, Պատրիարքարանը, ինչպէս կ'եղրակացնէ վերի փաստաթուղթը, մերժեց Թալաաթ բէյի առաջարկը: Վերջինս դառնալով նոյն նիւթին, խնդրեց պաշտօնապէս տալ իրեն հայկական բաղձանքներու ցուցակը, խոստանալով այդ բաղձանքներն ի կատար ածել, որպէսզի Երոզայի համար այլեւս ո՛չ մէկ պատճառ մնայ հայկական բարեկրօնութեան պահանջելու: Պատրիարքը Թալաաթ բէյի այս առաջարկը յայտնեց Ազգային ժողովին, եւ վերջինս վճռեց տալ կառավարութեանը հայոց բաղձանքների ցուցակը, թէեւ ոչ լիակատար:

ՄԵՐԺՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Չարմանալի չէ եթէ զուր անցան գերման եւ թուրք կառավարութեանց բոլոր ջանքերը հայերը ուսական ազդեցութեանն ազատելու եւ թուրք գերմանական ուղղութեան առաջնորդելու համար: Ո՛վ որ Գերմանիոյ պատմութիւնը քիչ թէ շատ ուսումնասիրած է, անոր համար զաղտնիք մը չէ որ գերման ազգին պէս շատ մը ձիւրքերով օժտուած մեծ ժողովուրդ մը երբեք ունեցած չէ, բացի Պիզմարքէն, նշանաւոր դիւանագէտներ: Անորմէ ետք, իրարու յաջորդեցին միջակ կամ միջակէն վար մարդիկ, որոնք չգիտցան ուրիշ ժողովուրդներու բաղձանքներէն ներս թափանցել: Գերման դիւանագէտները պարզմտօրէն կը խօսէին ու կը գործէին ինչ որ կը մտածէին, չէին ուզեր մտթիւն մէջ գործել, եւ իրենց ներքին համոզումները կարտայայտէին բրտօրէն: Այս մտայնութեան փայլուն ապացոյցներն եղան երկու համաշխարհային պատերազմները, երկուքն ալ իր ձեռքով ծագած, երկուքն ալ առաջնորդուած դէպի կորուստ: Եթէ գերման արտաքին գործերու նախարարը եւ իր բանբեր Լեպսիուսը թրքահայ ժողովուրդին կղերական եւ աշխարհական գործիչներուն փոխանակ բարենորոգումներ խոստանալու, խոստացած ըլլային ինքնավարութիւն, շնորհուած Թուրքիայէն, հայ սատրապի մը ընտրութեամբ, ինչպէս եղեր էր Աքեմենեան կայսրութեան օրով, շատ հաւանական

էր որ այդ իմաստուն կարգադրութիւնը ծափերով ողջունուէր եւ մեծ եղեռնին գողափարը չծնէր:

Այսպիսի խաղ մը կրնար ընել եւրոպական մեծ պետութեան մը ճիւղն քաղաքականութիւնը: Վասնզի, եւրոպական իմաստով ա՛յն է դիւանագիտութիւնը, որ կը մօտենայ դիւագիտութեան, որ գիտէ կեղծել, ստել, նենգել, դաւաճանել եւ ապա փճացումի եւ մահուան անդունդը նետել:

Իսկ զալով իթթիհատական կառավարութեան, ան այդ խոհուն դիւանագիտութեան մասնագէտն էր: Բայց այս անգամ անկեղծ էր, որովհետեւ օտար միջամտութիւնը կը նկատէր ամենամեծ աղէտը Օսմանեան կայսրութեան համար: Այս պատճառով, հազիւ Հայկական Հարցը հրապարակ դրուած, անիկա աճապարեց եւ ձեռք առաւ կենիկա եւ մենք ծանօթ ենք Պետերբուրգի «Հայկական Կոմիտէին» բռնած խոհեմ դիրքին:

Թրքական առաջարկը մերժելուն զլիսաւոր պատճառներէն մէկն ալ ա՛յն էր, որ Պատրիարքարանը, ուսասիրութեան բոյնը, հաւատք չէր ընծայեր թուրք կառավարութեան խոստումներուն եւ ո՛րեւէ կերպով բանակցութեան մէջ չէր ուզեր մտնել անոր հետ:

Եւ ասիկա ա՛յն աստիճանի, որ Պատրիարքարանի խառն ժողովը լիազօրութիւն ստացած էր Ազգային ժողովէն խստութեամբ պահանջել թուրք կառավարութեանն լուրջ երաշխիքներ հայկական բարենորոգումներու իրաւորմունքին համար:

Եւ հիմա, որ թուրք կառավարութեան ներքին գործերու նախարարը, ետեւ ունենալով գերման կառավարութիւնը, այդ երաշխիքները կու տար, Պատրիարքը խրոխտ եւ մեծամիտ, ինքզինքը կարծելով Թուրքիոյ «Երկրորդ սուլթան», կը մերժէր իրեն երկարած համաձայնութեան ձեռքը, որովհետեւ կը գտնուէր ուսու դեսպանին ձեռքը, որ արդէն արձակեր էր յաւիտենականի արժանի խօսք. «Ամէնէն իրական եւ ցանկալի երաշխիքը հայերը կը համարէին ա՛յն, որ ուսերը իրենց գօրծերով գրաւեց Հայաստանը»:

Ժամանակին հետ զլուխներն ալ փոխուէր էին: Խրիմեան Հայրիկը, որ ազգային ժողովին մէջ սեղանի վրայ դրաւ հարստահարութիւններու հարցը եւ բարենորոգումներ պահանջեց, սովոր էր գործածել այս բանաձեւը. «պատրիարքութեան շրջանին ազգին թշուառութիւնը պիտի մերկայացնեմ բարեխնամ տէրութեան եւ դարման խնդրեմ»: Այժմ, այդ պետութեան նախարարները «Հայրիկ»ի յաջորդին ոտքը կու դան, այդ ազգին թշուառութեան բարենորոգումներ առաջարկելու, իսկ Պատրիարքը, իր ուսասիրական թեւերով կը մերժէ, վճռելով միայն բարենորոգումներու ցուցակը, որ լիակատար չէր: Վասնզի ուսասիրական հոսանքը մտքին մէջ ծրարեր էր այնպիսի մեծ եւ արտաուոց առաջարկներ, որոնք, ինչպէս պիտի

տեսնենք, եթէ թուղթի վրայ գրուէին, Պատրիարքը իր ուսուսիրական թեւերով ուղղակի դէպի կախազան պիտի առաջնորդէին, իբրեւ հայրենիքի հասարակ դաւաճաններ, առանց Ռուսաստանն ու իր երկու դաշնակիցները կարենային մատերնին իսկ բարձրացնելու:

ՄԵՐԺՈՒՄԻՆ ԱՀՈՅԼԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Իթթիհատական կառավարութեան առաջարկին մերժումը՝ ահազին ճակատագրական դեր խաղաց հայ ազգի կեանքին մէջ:

Այս մերժումին առջեւն է ահա որ սոսկումով պիտի կանգնի պատմագիրը, երբ սկսի հետազոտել թէ ինչպէս մորթուեցան եւ ջընջուեցան մէկուկէամիլիոնի չափ անդէն եւ անպաշտպան հայեր: Անոր զարհուրանքը պիտի հազարապատկուի, երբ տեսնէ որ փոքրիկ ու չնչին խումբ մը «ազգային գործիչ»ներու, որոնք սոսկալի գործիք դարձեր էին ուսուս գիւանագիտութեան ձեռքին մէջ, այնքան թեթեւօրէն կը վարէին հայութեան ճակատագիրը:

Արդարեւ, պատրիարքական փոխանորդին ոտքը դացող աղաչաւոր իթթիհատական նախարարները այլեւս ուրիշ բանի վրայ չմտածեցին, բայց եթէ գերմանական կառավարութեան հետ ձեռք-ձեռքի տուած, Հայկական Հարցին եւ անկէ ծնունդ առնող բարենորոգումներու ծրագրին այնպիսի արմատական լուծում մը տալ, որ համօրէն աշխարհը սարսափէն քարացած մնայ:

ԳԵՐՄԱՆ-ԹՈՒՐԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Գերման-թուրք-հայկական մերձեցումի ջանքերը ջուրն ինկած ըլլալով, գերման եւ թուրք կառավարութիւնները հայերը նկատելով իրրեւ դաշնակիցներ ձարական Ռուսաստանի, սիսերիմ թշնամի թուրքիոյ, որ Հայկական Հարցը պատրուակ բռնած կը ձգտի թուրք կայսրութիւնը նոր անգամահաստութեան մը ենթարկել, ձեռքէն լայել տալով անոր եւրոպական կալուածներուն մեծ մասը, ինչպէս ընել տուած էր թուրք-պալքանեան պատերազմին, սկսան լրջօրէն մտածել հայկական փտանգը հեռացնելու միջոցին վրայ:

Այդ միջոցը թոնգապիւրն էր, որ ինչպէս տեսանք, բանաձեւեր ու վարդապետութեան վերածեր էր «հայասեր» կոչուած համագերման Ռոհրբախը: Որպէսզի այս վայրենի ծրագիրին գործադրութեան դէմ չձաւանայ գերման հասարակաց կարծիքը, պէտք էր որ հայերը ներկայացուէին վնասակար տարր մը, եւ այս անգամ որչափ կարելի է չուտ:

Տակաւին պատերազմը բռնկած չըլլալով, պաշտօնապէս կարելի չէր հասարակաց կարծիքը պատրաստել: Այդ գործը պէտք էր կատարել յատուկ մարմին մը:

Այսպէս, գերման նոյն արտաքին գործերու նախարարին յայտնի նախաձեռնութեամբ, 1914 թուի Յունուար ամսուան մէջ, կազմուեցաւ «գերման-թուրք» միութիւն մը, որուն նախագահ ընտրուեցաւ թուրք բանակին քսանամեայ վերակազմիչ՝ ֆոն Տէր Կոլց փաշան:

Այս ահարկու գերմանացին, որ ունէր բրուսացիի մը անգույթ եւ վայրագ նկարագիրին յատկանշական բոլոր դիժերը, մտքով եւ սրբտով իրապէս թրքացած էր: Գատը գիւղի մէջ ստէպ կը տեսնէք այդ փաշան, խոժոռադէմ եւ բարձր հասակով, հագուած թուրք փաշայի շողշողուն տարազը, կուրծքը զարդարած գերման եւ թուրք շքանշաններով, իր անհեթեթ մոյկերով՝ փողոցներուն սալալատակը կը փշրէր արհամարհոտ ատելութեամբ լեցուն դէպի հայերը, որոնք թրքական դրամով հարստացեր էին:

ԸԱՅՈՑ ՈՒՂՂՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Համաշխարհային պատերազմի յայտարարութենէն 6 ամիս առաջ, 1914ի Փետրուարին, գերման եւ թուրք ընկերութեան առաջին նիստին, որուն ներկայ էին թուրք դեսպանը, իր ամբողջ պաշտօնեաներով, եւ գերման քաղաքական եւ բարձր մտաւորական, առեւտրական եւ մամուլի նշանաւոր դէմքերը, նախագահ ֆոն Տէր Կոլց, Գուլելմոս Բ.ի «աչքի լոյս»ը, հագուած իր ոսկեճամուկ համագգեստը, կ'արձակէր առաջին ահեղ սպանալիքը հայերուն դէմ, որոնք գործիք զարձեր էին Ռուսաստանին, որ միջամտութիւն ի գործ կը դնէ թուրքիոյ ներքին զործերուն մէջ: Պատրուակ բռնելով Հայկական Հարցը, որպէսզի թուրքիան նոր անդամահաստութեան մը ենթարկէր:

Շեշտելով ուսու-հայկական բանակցութիւնները, նախագահը կ'առաջարկէր այժմէն իսկ հայերը բռնի կերպով տեղափոխել Միջագետքի եւ Սուրիոյ խոր անապատները:

Գերմանացի ուսուցչապետ մը, հաւանաբար «հայասեր» մը, որ ներկայ կը գտնուէր այդ ժողովին, կը վազէ Պալաքեան Վարդապետին քով, եւ անոր խորհրդարար կը պատմէ այդ հրէշալի ծրագիրը. «Նկատելով որ ուսու կառավարութիւնը, կ'ըսէր ֆոն Տէր Կոլց փաշան, այս վերջին դարուն մէջ թուրք կայսրութեան մէջ սպրող բրիտանիայ հպատակ ժողովուրդները պատրուակ բռնելով, միշտ հօգր միջամտութիւն ի գործ դրած է թուրքիոյ ներքին գործերուն մէջ, եւ այսպիսով պատեալ եղած անոր անդամահաստութեան, նկատելով որ թուրքիոյ բոլոր բրիտանիայ հպատակ ազգերը, ազատագրուած ըլլալով արդէն,

այժմ ալ ռուս կառավարութիւնը հայերը ձեռք առած է եւ պալլանեան պատերազմէն օգտուելով, բարեկարգութեան ծրագիր մը մէջտեղ նետած է, Թուրքիան նոր անդամահատութեան մը ենթարկելու թափուն մպատակով, հարկ է որ Թուրքիան նոր աղէտէ մը փրկելու համար, միանգամ ընդ միշտ ռուս-թրքական սահմաններուն կից՝ Վանի, Բաղէշի եւ Կարիսի կուսակալութիւններուն մէջ ապրող կէս միլիոն-նոց հայութիւնը հեռացուի ռուս-թրքական սահմաններէն եւ փոխադրուի հարաւ, Հալէպի եւ Միջագետքի կողմերը: Իսկ սա կողմերէն ալ արարները փոխադրուի ռուս-թրքական սահմանները: («Հայ Գողգոթան», էջ 32-33)

Պարզ է. Ֆոն Տէր Կոլց փաշան «մէկ հարուածով, ինչպէս արդարացի կերպով կ'ըսէ Վարդապետը, երկու քաղաքական մպատակ հետապնդած կ'ըլլար, արարները եւ հայերը հեռացնելով իրենց ցեղային բազմադարեան հայրենիքներէն, սպաննել անոնց մէջ ներկայ եւ ապագայ անկախութեան ամէն յոյս եւ ակնկալութիւն»:

Պատկերը կ'ամբողջանայ երբ ըսենք որ արարներն ալ այդ չըջանին ունէին իրենց «արարական հարցը», ինքնավարութիւն ձեռք ձգելու նպատակով:

ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆՍՊԱՏԻ

Պալաքեան Վարդապետը լսելով Ֆոն Տէր Կոլց փաշայի խօսքերը շանթահար եղաւ, ինչպէս ինքը կը վկայէ.— «Այն ժամանակ ո՛չ ոք հաւատք կ'ընծայէր այսպիսի քաղաքական մեծ ծրագրի մը կարելիութեան, նկատելով որ մարդկային նախապատմական շրջանէն առիւթ, չի յիշուիր երբեք ազգերու պատմութեան մէջ նմանօրինակ պարագայ մը, ազգերու բռնագրօսիկ տեղահանութեան»:

Եւ սարսափէն զալարուած, «փութացի, կ'ըսէ, ատենին գրել Պատրիարքարան»: Իսկ Պատրիարքը եւ քաղաքական ժողովի «ռուսաւեր» անդամները, որ տեղեակ էին վերահաս վտանգին, քանի որ Հայկական Հարցը Ռուսաստանի նախաձեռնութեամբ միջազգային դիւանագիտութեան սեղանին վրայ դրուելէն ի վեր Հայաստանի գաւառներէն սրտամոլիկ գէպքերու արձագանքը կը Հասնէր: Եւ դժուար չէր խոհական ընտրութիւն մը կատարել Թուրքիոյ եւ Ռուսաստանի միջեւ, քանի որ կային շատ ուժեղ հանդամանքներ երկու կողմերու օգտակարութիւնը բոլոր լրջութեամբ կշռադատելու համար: Եւ ընտրողը պէտք էր ըլլար Պատրիարքարանը, որուն երեք միլիոն զաւակները, ռուս եւ թուրք պատերազմի մը պարագային, Թուրքիոյ ձեռքը կը մնային իրրեւ պատանդներ: Իսկ Ռուսաստանի պատրաստած ճոխ սեղանէն՝ Հայերը տակաւին փշուր մը հաց կերած չէին: Բայց Ներսէս

Պատրիարք Վարդապետեանին յաջորդը, չեղելով անոր ռուսատեաց քաղաքականութենէն, յանկարծ փակաւ ձարական բազուկներուն: Ականջներն ամուր մը խցեց զգաստութեան ձայներ չլսելու համար, որով Ֆոն Տէր Կոլց փաշային ցնցող խօսքերը մնացին «ձայն քարրանոյ յանապատի», ինչպէս մնացեր էին հայասէր Լեպսիուսի խելացի խօսքերուն ձայնը:

Պատրիարքին եւ ռուսասէր հոսանքին խլութեան արդարացուցիչ պատճառն այն էր, որ Հայերը ռուսական մատով Յորդանան գետն անցնելու վրայ էին, մտնելու համար «Աւետեաց Երկիրը»:

ՆՈՐԱԴԱՐՁ ՄԸ

Եթէ Պատրիարքն ու իր մտերիմ խորհրդականները ռուսական օրօրներով թմբեր էին, հայ անապատին մէջ գոչած ձայնը ուժգին թափանցեր էր «ռուսաւեր»ի մը ականջէն ներս, եւ իջած անոր սըրտին խորը: Ան Գրիգորիս Վրդ. Պալաքեանն էր, հայկական «քարե-նորոգումներու» Պատրիարքարանի կեղրոնական յանձնաժողովի անդամը:

Երբ քանի մը ամիսէն պայթեցաւ համաշխարհային այն ահաւոր պատերազմը, որ կը սպասուէր երկար տարիներէ ի վեր «նորադարձ» Վարդապետը ականատես եւ ականջալուր վկան եղաւ գերման ժողովուրդին ահաւոր ատելութեան՝ ընդդէմ Ռուսաստանի, այն ժամանակ սկսաւ հաւատալ թէ Ֆոն Տէր Կոլց փաշային սպառնալիքը, «որ այն ատեն, ինչպէս կ'ըսէ ինքը, անհնարին բուեր էր ամէնուն եւ հեզ-նանքի առարկայ եղած, այլ եւ համաշխարհային պատերազմի միջոցին հնարաւոր դարձաւ, մարդկային տարեգրութեանց մէջ աննախընթաց եղբրական եւ եղնունական ու համատարած ահաւոր սպանդի նախնիրներով»:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐ՝ ՍԵՐԲԻՈՅ ԵՒ ԱՒՍՏՐԻՈՅ ՄԻՋԵՒ

Թուրք-պալքանեան պատերազմը քաղաքական նոր կացութիւն մը ստեղծեւ էր, որ կը սպառնար Աւստրո-Հունգարական միապետութեան անջատման:

Նորաստեղծ «Մեծ Սերբիա» յիսով լեցուն էր Աւստրիոյ եւ Հունգարիոյ դէմ, որոնք անխոհեմ գտնուեւ էին Բոսնիա եւ Հերձեկովինա սերբիական գաւառները Աւստրո-Հունգարական կայսրութեան կցելով: Եւ այս պատճառով, Սերբիոյ մէջ կազմուեւ էին, ինչպէս տեսանք, գաղտնի քաղաքական ընկերութիւններ, որոնք կը վայելէին սերբ կառավարութեան գաղտնի հովանաւորութիւնը, եւ որոնց նպատակն էր ահաբեկչական գործունէութեամբ մէջտեղէն վերցնել Հաբսբուրգեան արքիդուքսերը, նախարարները եւ աչքի գարնող քաղաքական անձնաւորութիւնները:

Աւստրո-Հունգարական կառավարութիւնները, հակառակ իրենց ոստիկաններուն աչալուրջ հսկողութեան, տարտամ գաղափար մը ունէին միայն «ՄԻՈՒԹԻՒՆ» կամ «ՄԱՀ» կոչուած հզօր աղանդին վրայ, որ սերբիական կառավարութեան գործունէութեան աջ բազուկն էր:

Սերբիոյ մութ խաղերուն դէմ թուժը մը կազմելու համար հունգար կառավարութիւնը, յանձին իր նախագահ Թիցձանի, գաղտնի ծրագիր մը պատրաստեւ էր պալքանեան դաշնակցութիւն մը ստեղծելու, Սերբիան կղզիացնելու համար: Նման ծրագիր մը ունէր նաեւ Սերբիան, նպատակ ունենալով կղզիացնել Բուլղարիան, որպէսզի գիմարէ Աւստրիոյ, որ 1918-ի Հոկտեմբերին, հրամայեւ էր իրեն որ իր գունդերը սահմանէն անդին քաշէ, եւ սերբ կառավարութիւնը դողալով կատարեւ էր արձակուած հրամանը:

Բայց երկու ծրագիրներն ալ ունէին իրենց դժուարին կողմերը: Բուլղարիան կապուած էր Աւստրո-Հունգարական եւ գերմանական քաղաքականութեան հետ, որովհետեւ ցաւի կսկիծը սրտին մէջ, չէր մոռցած այն նուաստացումն ու վնասը, որոնց ենթարկուէր էր Բուլքէշի դաշինքը, եւ վրէժ կը փնտռէր: Բայց ստիպողական էր որ Բուլղարիան յուսահատութենէ մղուած, յանկարծ չնետուի ուսուսական բազուկներուն մէջ եւ մոսկովեան դիւանագիտութենէն չըռնադատուի:

մօտենայ Սերբիոյ: Պէտք էն ուրեմն փոխ վրէժ խոստանալ անոր, որ է Բուլղարէի դաշինքին վերաքննութիւնը եւ բուլղարական ծաւալումը Մակեդոնիոյ մէջ:

Այլ աւելի դժուար էր լուծել ուսմանական հարցը: Թէեւ Կարոլոս թագաւորը իրբեւ Հոյնցոյներն իշխան մը, եռանդուն փափաք ունէր հաւատարիմ մնալու Երից Դաշնակցութեան, բայց ուսմանական դիւանագիտութիւնն ալ քաղաքական շահեր ունէր, որոնց իրագործումը գինքը կը մղէին դէպի Պետերբուրգ:

Ռուսմանիան տենչանքներ ունէր Դօբրուճիոյ վրայ եւ ասոր համար բարեւ էր Աւստրիոյ ընդդիմութեան, որ համակիր էր Բուլղարիոյ:

Ռուսական դիւանագիտութիւնը ճարպիկօրէն փայփայելով ուսմանական բաղձանքները, Ռուսմանիոյ ցոյց տուեր էր ուսմանական թրանսիլվանիան, որ հունգարական գաւառ մըն էր: Ուստի աւստրոգերման դիւանագիտութիւնը իր առջեւ ունէր դժուարին գործ մը, Ռուսմանիան կեցնել այն ճամբուն վրայ որ կը տանէր դէպի ուսական բարեկամութիւնը: Աշխատեր էր ցոյց տալ անոր որ Մեծ Ռուսմանիոյ մը կազմութիւնը Սեւ Մովու եւ Թիրիսքոյի միջեւ լոկ ցնորք մըն էր. թէ աւելի խոհեմ էր պահպանել արդի կայրածները ընդդէմ ուսական սպառնալից գերիշխանութեան, եւ թէ իր կենսական շահը կը պահանջէր կոթնիլ Երից Դաշնակցութեան վրայ, առանց մտածելու որ ասոնցմէ մէկը, Իտալիան, ունէր իր ազգայնական տենչանքները՝ Թիրոլի, Թրիէսթի եւ Թրենթոյի վրայ:

Հուսկ, պէտք էր սիրաշահիլ նաեւ Թուրքիան, հաշտեցնելով գանձիկա Բուլղարիոյ հետ, խոստանալով անոր փոխարինութիւն, ի վնաս Սերբիոյ եւ Յունաստանի, եթէ ասիկա չհաւանէր մէկդի թողուլ Սերբիան:

Մաճառ վարչապետը, 1914ի Մարտին, իր ծրագիրը յուշագրով մը ներկայացուցեր էր Փրանկիսկոս Յովսէփ կայսեր, անոր հաճութիւնը ընդունելու համար:

«ԵՐԿՈՒ ՆԻԿՈՒԱ»ՆԵՐԸ

Գրեթէ միեւնոյն ժամանակ, Սերբիոյ կառավարութեան նախագահը, Նիկոլայ Փասիլը, որ անշուշտ հունգարական հոտն առած էր, զնաց Պետերբուրգ եւ գլուխ-գլխի տեսակցութիւն մը ունեցաւ Նիկոլա ճարին հետ, անոր հաւանութեան ենթարկելով Սերբ կառավարութեան կազմած ընդարձակ ծրագիրը, որ կը ձգտէր Բալքանեան նոր դաշնակցութիւն մը կազմել:

Այդ ծրագրին զլխաւոր հիմերն էին՝ նպաստել անկեղծ խաղաղութեան հաստատումին Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ. որոշել

որ թուրքերն ու յոյները իրարու մէջ լուծէին անկախ մնացած վէճերը. ձեռք բերել ապահով կերպով ուսմանական դաշնակցութիւնը: Բուլղարիոյ զիջումներ եւ խոստումներ ընել այն պարագային, եթէ սա նպաստաւոր ըլլայ սերբ-խուռաթ ծրագիրներուն ընդդէմ Աւստրիոյ-Հունգարիոյ: Եւ միեւնոյն ատեն Սերբիան եւ Սեւ Լեռն իրարու հետ ձուլել եւ այսպիսով Սլաւականութիւնը ապահովապէս պիտի հասնէր Ադրիական:

Մաճառական եւ սերբիական ծրագիրները մեծապէս կը տարբերէին: Մաճառական ծրագիրը պիտի գործադրուէր երկար ժամանակի ընթացքին մէջ եւ այնպիսի ձեւով՝ որ ձգտող կացութիւնը կամաց կամաց բարեշրջուի:

Եթէ Վիեննայի մէջ «պատերազմաւեր» կուսակցութիւն մը կար, բայց կար նաեւ «խաղաղաւեր» զօրաւոր կուսակցութիւնը, որուն գլուխը կանգնած էր Փրանկիսկոս Ֆէրտինանդ զահաժառանգ արքիզուբսը:

Իսկ սերբիական ծրագիրը ժամանակի չէր կրնար սպասել, որովհետեւ Հայկական Հարցը այնպիսի հանգոյց մը չիներ էր, որ սուրով միայն կրնար կտրուիլ:

Արդարեւ, 1914ի գարնան, Աւստրիոյ-Հունգարիոյ եւ Սերբիոյ միջեւ եղած սուր պայքարը հասեր էր եղբրական կէտի մը:

ՔՈՆՈՊԻՇԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մաճառ վարչապետին ծրագիրը Սերբիան զօրաւոր օղակով մը շրջապատելու եւ զայն դանդաղօրէն անվնաս դարձնելու զաղափարը, 1914ի գարնան, հաւանութիւն գտնելով Վիեննայի մէջ, Բերգոլոլո նախարարը ուշագրաւ մը զրկեց Պերլին, գերման կառավարութեան դատաստանին յանձնելու:

Բնական է որ Պալքանեան այդպիսի հարցերը, լրջութեամբ դրուէին երկու դաշնակից պետութիւններու միջեւ:

Այդ հարցերը բանակցութեան առարկայ եղան եւ Գուլելմոս Բ. կայսրը, 1914ի գարնան, տեսակցութիւն մը ունեցաւ Աւստրիոյ զահաժառանգ արքիզուբսին հետ, Գոնոպլիշի զղեակին մէջ, որ Պոսեմիա կը գտնուէր:

Տեսակցութիւնը տեւեց երկու օր. Յունիսի 12էն 13ը. Գուլելմոս Բ. հաշտ աչքով չէր դիտած Ռուսմանիոյ հեռանալը Երից Դաշնակցութիւնէն: Ռուսմանիան Բուլղարիայով փոխարինելը իրեն համար իմաստուն բան մը թուած չէր: Փրանկիսկոս Ֆէրտինանդը մտահոգուած էր Մաճառ կառավարութեան բռնած դիրքին վրայ՝ հանդէպ Թրանսիլվանիացիներուն: Գուլելմոս Բ. խոստացաւ միջնորդել Թրիցձոյի մօտ,

որպէսզի Պուտա-Փեշտի քաղաքականութիւնը քաղցրացնէ Թրանսիլ-վանիայի վիճակը եւ հանդարտեցնէ Թուամնիոյ զայրոյթը՝ ընդդէմ Երից Դաշնակցութեան:

Վէճի նիւթ եղաւ նաեւ Յունաստանի եւ Թիւրքիոյ միջեւ եղած կղզիներու վերաբերեալ հարցերն ալ: Որովհետեւ ինչպէս տեսանք, Թուրքիան կ'ուզէր զանոնք վերստանալ:

Յայտնի էր որ Բոնոպիշի տեսակցութիւնը շօշափելի արդիւնք մը չտուաւ. բայց ինչպէս կը նկատուի, այդ տեսակցութեան ընթացքին՝ Գերման կայսրը կրկնած ըլլայ արքիդուքսին, ինչ որ ըսեր էր Բերգոլդին նախընթաց Հոկտեմբերին. «Աւստրիա-Հունգարիան Սերբիոյ հետ չի կրնար ունենալ ուրիշ յարաբերութիւն՝ քայց եթէ ինչ որ մեծը ունի փոքրիկին հետ, ըստ մոլորակային դրութեան: Բալ-ֆաններուն մէջ չենք կրնար երեւակայել ուրիշ ուղղութիւն, քայց եթէ միապետութեան գերակշռութիւնը Բալքանիան պետութիւններուն վրայ...: Պարգեւեցէ՛ք Սերբիոյ դրամ, առաւելութիւններ, զինուորական պայմանադրութիւններ. եթէ մերժէ, ոյժ բանցուցէ՛ք, ... ես պատրաստ եմ սուրս պատեանէն հանելու»:

«Ասոնք եւ այսպիսի արտայայտութիւններ, կը գրէ Փրանկիսկոս Կոյնապոյ, ստուգիւ չեն ապացուցաներ թէ Գուլիմոս Բ. կ'ուզէր պատերազմ, ո՛չ պալքանիան եւ ո՛չ ալ համաշխարհային:

Բայց ան համոզուած էր թէ կարելի է Սերբիան խոնարհեցնել, ինչպէս եղեր էր 1913ի գարնան: Ստոյգ է որ գերմանական ֆաղափա-կանութիւնը տակաւ առ տակաւ հասաւ այն կետին, որ առջեւ չդնէ Վիեննայի կառավարութեան ծրագրին, պալքաններու մէջ նորէն ձեռք բերելու գերիշխանութիւնը՝ առանց ռուսական շահերը նկատի առնելու»:

Ոչ մէկ կասկած որ Նիկոլա Բ. ձարը, ունենալով իրեն ալ բազուկ Սերբիոյ խորամանկ Նիկոլա Փասիջը, հագած կեղծ «խաղաղասէր»ի պատմուճանը եւ կոթնած իր երկու թեւերուն՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի, աշխատէր էր, որ Գերմանիոյ ծրագրած պատերազմը անխուսափելի դառնայ եւ պայթիլ ճիշտ այն հողին վրայ՝ որ աւելի քան մէկ դար «չոր վառոց»ի եւ «ֆաղափական ռճիրներու բոյն» հռչակին արժանա-ցեր էր:

ՍԱՐԱՅԵՒՈՅԻ ՈՃԻՐԸ

1914ի 28 Յունիսին, Բոսնիացի չորս երիտասարդ ուսանողներ, բոլորն ալ աւստրիացի հպատակներ, որոնք կը պատկանէին «Միու-թիւն կամ Մահ» կոչուած սարսափ ազդող աղանդին, կոչուած նաեւ «Սեւ ձեռք», կռելով ճամբորդի խորհրդաւոր բեռ մը, կանգ առին

Բոսնիոյ Սարայեւոյ մայրաքաղաքին այն կէտի վրայ, ուր պիտի դար Աւստրիոյ-Հունգարիոյ զահաժառանգ իշխանը, Փրանկիսկոս Ֆեր-զինանդ արքիդուքսը, ներկայ գտնուելու զինուորական մեծ ուղ-մափորձերու:

Երբ արքիդուքսը եւ իր արքիդքսուհի կինը կը պատրաստուէին կառքի վրայ բարձրանալու, չորս ուսանողները, որոնց մէջէն ամէնէն կատարի եւ տաք գլուխ՝ Նեդէլքօ Կարբինովիչ եւ Փրինչիբ, ռումբեր նետելով զահաժառանգ իշխանին եւ անոր կնոջ վրայ, որոնք հազիւ կառք կը բարձրանային, զանոնք տեղն ու տեղը սպաննեցին:

Քաղաքական այս զգուելի ոճիրը ամէն տեղ բուռն զայրոյթի փոթորիկ մը փրցուց, եւ ասիկա այն աստիճանի՝ որ Սերբ Կառավա-րութիւնը հրապարակաւ յայտարարեց թէ պատրաստ է յանցաւոր-ներն փնտռելու եւ պատժելու:

ԶԱՐՀՈՒՐԱՆՔ՝ ԱՒՍՏՐԻՈՅ-ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

Արքիդուքսային զոյգի սպանութիւնը Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ առաջ բերաւ զարհուրանք եւ սրտաբեկում, ո՛չ միայն անոր հա-մար որ սպաննուած իշխանը խաղաղասէր եւ ազնիւ ձիւրքերով զար-դարուած մարդ էր, այլ եւ գործուած ոճիրը՝ միապետութիւնը մա-հացու վտանգի մէջ կը դնէր:

Աւստրո-Հունգարական կառավարութիւնը անգիտանալով Սեր-բիական կառավարութեան ծանր պատասխանատուութիւնը, ոճիրին երկրորդ օրն իսկ՝ քննութիւն բացաւ Բոսնիոյ մէջ, մահափորձի հեղինակները երեւան բերելու համար. եւ ասիկա բնական էր: «Միու-թիւն կամ Մահ» ընկերութիւնը, աւելի ծանօթ «Սեւ ձեռք» անունով, արդէն բազմաթիւ մահափորձեր կատարեր էր Աւստրիացի եւ հուն-գարացի բարձրաստիճան պաշտօնեաներու դէմ, եւ որով կ'ենթա-դրուէր, որ զահաժառանգ արքիդուքսին սպանութիւնն ալ անոր խորհուրդով կատարուած ըլլալու էր:

Սակայն, Աւստրո-Հունգարական ոստիկանութիւնը «Սեւ ձեռքի» զոյութեան վրայ զաղափար չունէր եւ միայն գիտէր «Միութիւն կամ Մահ» կոչուած գաղտնի կուսակցութիւնը, որուն ձեռքով կը գործուէին այնքան մահափորձեր:

Եւ հետեւաբար, քննութիւնը շատ երկար ժամանակի կը կարօ-տէր, մինչեւ շօշափելի արդիւնքներ տար:

ԵՐԿՈՒ ԿԱՅՍՐԵՐՈՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Սարայելոյի քաղաքական ոճիրը սովորական ոճիրներէն չէր. անկէ կարող էր ծագիլ համաշխարհային պատերազմ մը կամ զինուած խաղաղութիւն մը:

Աւստրո-Հունգարական արտաքին գործոց նախարարը, Բերգ-զոլդը, իսկոյն յարեցաւ Կուստի գաղափարներուն: Եւ Յուլիս Յին, նախարարական խորհուրդին մէջ որոշուեցաւ անգամ մը եւս հարցնել Պերլինի կառավարութեան կարծիքը: Գերման դեսպանը, ինչպէս տեսանք, արդէն ապահովուցուցեր էր Աւստրիոյ կայսրը թէ Գերմանիան պիտի գտնուի միապետութեան ետեւ, եթէ սա ստիպուի պաշտպանել իր կենսական շահերը: Վիեննայի կառավարութեան կը վերաբերէր այդ պարազան որոշել:

Հակառակ այս հաւատարմութիւն, աւստրիական կառավարութիւնը Հոյոս կոմսը Պերլին զրկեց, Փրանկիսկոս Յովսէփ կայսեր ինքնագիր նամակով մը, ուղղած Գուլելմոս կայսեր եւ յուշագիր մը:

Փահաժառանգ իշխանին սպանութիւնը ցոյց կու տար Միապետութեան եւ Սերբիոյ միջեւ եղած անդարմանելի հակամարտութիւնը: Կարենուր էր ուժգին կերպով քաշել հանել խեղդանի հաստ չուանը, որ Սերբիան կ'ուզէր նետել Միապետութեան վրայ:

Պերլինի պատասխանը այն եղաւ որ դաշնակիցը նիզակակցութեան պարտաւորութեանց համեմատ՝ հաւատարմութեամբ պիտի կանդնէր զինակիցի կողքին: Յանձնառութիւն մը չէր. Պերլինի կառավարութիւնը Վիեննական դիւանագէտներուն կատարեալ ազատութիւն կը թողուր, իր պատասխանատուութեամբ վճռել եւ գործել:

ԱՆՍԱՀՄԱՆ ՑՆԾՈՒԹԻՒՆ ՍԵՐԲԻՈՑ ՄԷՋ

Երկու կայսրերու միջեւ բանակցութիւնները կատարուած ժամանակ, Սերբիան խանդավառուէր ու գլուխը կորսնցուցեր էր. մինչ քաղաքակիրթ համարուած աշխարհը կը սգար գահաժառանգ արքիզուքսին եղերական մահը. իսկ Աւստրիական ոստիկանութիւնը քննութեան պրպտումներուն մէջ անյաջող գտնուէր էր:

Այս շրջանին, Սերբ ժողովուրդը, մամուլը եւ պետական անձնաւորութիւնները, առանց մտահոգուելու «հասարակաց կարծիքին» առջեւ գոնէ «արտաքին երեւոյթներ փրկելու» տարրական զգուշութիւնը, սկսեր էր Սարայելոյի ոճիրը պանծացնել, նկատելով զայն ազգային մեծ յաղթանակ մը, որ այդ ոճիրով «Փոքր Սերբիան» պիտի դառնար «Մեծ Սերբիա» եւ ասոր համար պէտք էր որ Աւստրո-Հունգարական Միապետութիւնը կործանէր:



MAP 2

Քարտէս Հայաստանի Կայսերապաշտական բաժանում՝ ըստ 1915ի գաղտնի համաձայնութեան. անգլիական, ֆրանսական եւ ռուսական գոտիներ

Մղուած այս ծայրայեղ ազգայնամոլ զգացումէն, մամուլը՝ ահաբեկիչները նկատել տուաւ իբր ազգային դիւցազներ:

ԱԻՍՏՐԻՈՑ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ

Այս խելագար աղմուկը Աւստրո-Հունգարական կառավարութեան աչքերը բացաւ եւ հասկցաւ ու համոզուեցաւ թէ դահաժառանգ արքիզուքսի սպանութեան հարուածը որ կողմէն եկած էր: Որոշ՝ որ դաւաճանութիւնը նիւթուած եւ պատրաստուած էր Պելկրատի մէջ, «Սեւ Զեռֆ»ի պետերուն ձեռքով եւ սերբ պետական իշխանութեան կատարեալ մեղակցութեամբ, ինչ որ իր տեղին պիտի տեսնէր անհերքելի փաստերով:

Աւստրիան անօգուտ համարեցաւ իր ոստիկանութեան միջոցով շարունակել քննութիւնը Բոսնիոյ եւ 1914ի Յուլիս 23ին, սերբիական կառավարութեան ուղղեց պատմական ծանուցագիր մը, որ Աւստրիոյ ներկայացուցիչը Գրիլլը, նոյն իրիկունը յանձնեց Նիկոլա Փասիչին:

Ծանուցագիրը խմբագրուած դիւանագիտական նրբութեամբ, բայց ազդեցիկ եւ եփած ոճով, կ'ամբաստանէր սերբ կառավարութիւնը թէ «քոյլաորած է զանազան գաղտնի դաշնակցութիւններու եւ ընկերակցութիւններու եղեռնական գործունէութիւնը՝ ընդդէմ միապետութեան, եւ այդպիսով կազմուի մթնոլորտ մը, որուն մէջ հասունանան դաւադրութիւն եւ ոճիրներ»: Եւ իբր պայցոյց՝ կը մատնանչէր մամուլին անսանձ լեզուն՝ մահափորձի հեղինակներուն եւ անոնց փառաբանութեան գովեստը, որուն մասնակցած են սպաներ եւ պետական պաշտօնեաներ:

Ապա կը պահանջէր ամենածանր հատուցումներ եւ զոհացումներ արքիդուքսին սպանութեան համար: Գլխաւոր պահանջները, որ կայսերական պաշտօնեաները մտնեն սերբիական հող եւ մասնակցին այն քննութեան, որուն ձեռնարկեր է սերբիական կառավարութիւնը, ոճրագործները երեւան հանելու համար:

Ռուսիան իր երկու պոչերովը - Ֆրանսան եւ Անգլիան - որոնց հետ մինչեւ իսկ Իտալիան, Աւստրիոյ կողմէ քննութիւն բանալը սերբիական հողի վրայ, դատեցին արտառոց պահանջ մը եւ միջամտեցին Աւստրիական կառավարութեան մօտ, որ հրաժարի այդ անընդունելի պահանջէն:

Այս միջամտութեան սիրտ առաւ նախարարապետ՝ Նիկոլա Փասիչը, որ շատ լաւ գիտէր թէ Աւստրիական ծանուցագիրը ճշմարտութեան փոքր մաս մը միայն մատնանչեր էր, եւ ապաւինելով իր ազգային անկախութեան սկզբունքին, խուսափողական պատասխան մը տուաւ Աւստրիական ծրագիրին, կարծելով որ օտար միջամտութեան հարցը վերջնականապէս փակուած է:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՍՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նիկոլա Փասիչը, որուն ձեռքին մէջ կը դռնուէր ոճիրին զաղանի թելերը, անակնկալի եկաւ երբ, Աւստրո-Հունգարական կառավարութիւնը, Յուլիս 28ին, իրեն վերջնագիր մը արձակեց 40 ժամ պայմանաժամ տալով, եթէ իր պահանջները չընդունուէին եւ չգործադրուէին:

Սերբ դահլիճին նախագահը, Նիկոլան, դիմեց ձարին խորհուրդ հարցնելու: Ռուսաստանը որ կիսավայրենի սերբիացիները եւ Սեւ լեւոնցիները իր աչքին բերեբուն պէս կը սիրէր, իբրեւ «հարազատ»

սլաւներ եւ իբր «օրթոտոֆս»ներ, ապահովցուց սերբերը որ զիրենք պիտի պաշտպանէ: Ֆրանսան ալ ապահովցուց Ռուսաստանը որ դաշնակցութեան պայմանները պիտի գործադրէ: Անգլիան, դարերով մթութեան մէջ գործելու վարժած, իր թագաւորին ձեռքով սկսաւ իբր խաղաղութեան միջնորդ՝ երկու կայսրերուն քով դիմումներ կատարել, բայց առանց ազդեցիկ քայլերու:

Սերբիոյ մերժումը Աւստրիական վերջնագրին՝ կը նշանակէր խզում: Այսպէս, 1914 թուի 28 Յուլիսին, Աւստրո-Հունգարական կայսրութիւնը պատերազմի մէջ էր այնչափ փոքր սերբ պետութեան հետ, որուն զինուորը վայրագ եւ պատերազմասէր, որ կը յիշեցնէր հին ասորեստանեան զինուորը:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԻՐՔԸ

Աւստրո-Հունգարական պատերազմը հազիւ սկսած, Ռուսաստանը ընդհանուր զօրակոչ յայտարարեց, Սերբիոյ օգնութեան հասնելու համար:

Գերմանիան անմիջապէս իր դիրքը ճշտեց, համոզուած ըլլալով որ Ռուսիան պիտի չկարենար պարզ հանդիսատես ըլլալ, Սերբիոյ ջարհարումը անխուսափելի նկատելով:

Պերլինի մէջ մեծ էր խանդավառութիւնը. ամէն տեղ Աւստրո-Հունգարական դրօշին հետ կը ծածանէր գերմանականը: «Մայրաքաղաքին բոլոր թերթերը, կը գրէ ակնատես եւ ականջալուր վկան Պալաքեան Վրդ.ը, առանց կուսակցական խորութեան, կը պաշտպանէին իրենց զինակիցին բոլոր պահանջները... եւ ծանր ու կծու լեզու մը կը գործածէին Ռուսիոյ դէմ, յայտարարելով որ Սարայեւոյի ոճիրին գաղտնիքին թելերը Պելկրատի մէջ փնտռելէ աւելի, պետք է Պետերբուրգի մէջ որոնել»:

Գերման մամուլը մատը ճիշտ կերպով դրեր էր պատմական եղելութեան վրայ: Արդարեւ, գահաժառանգ արքիդուքսին մահափորձը արդէն ամիսներով վճռուէր էր:

Երբ, 1914ի Մայիսին լուր տարածուեցաւ Պելկրատի մէջ թէ՛ Աւստրիա-Հունգարիան զինուորական մեծ ուղղափորձեր կը պատրաստէ Բոսնիոյ մէջ եւ թէ գահաժառանգ իշխանը անձամբ ներկայ պիտի ըլլայ անոնց, Դիմիդրոյեվիչ գնդապետը, մահափորձին բուն կազմակերպիչը, որ սովորութիւն ունէր իր բարեկամներուն հանդիպելու նոյն քաղաքին ճաշարաններէն մէկուն մէջ, ըսեր էր. «Սքէզոյգ մը ռումբեր մետեմք աճոր վրայ...»: Արդ, երբ խորամանկ Նիկոլա Փասիչը, որ ամէն բան գիտէր, կարելի չէր որ Պետերբուրգի տեսակցութեան ընթացքին, Նիկոլա ձարին եւ նենգամիտ Մազանովին

յայտնած չըլլար զահաժառանգ արքիդուքսին մէջտեղէն վերցնելուն գաղտնի վճիռը, զիտնալով որ այս քաղաքական ոճիրը ի՛նչ ահաւոր հետեւանքներ կրնար ունենալ: Ուրեմն, քաղաքակիրթ մարդկային ճակատագիրն միայն Ռուս կայսեր շրթներէն կախուած էր: Իսկ սա, մէկ կողմէն Պալքանեան թերակողզին բորբոքուած հրաբուխի մը մէջ տեսնելու բաղձանքը ունէր, որպէսզի սլաւականութիւնը հասցնէ մինչեւ Ադրիականի եզերքը, իսկ միւս կողմէն երազելով Թըքահայաստանին տիրապետութիւնը, անկէ կը յուսար հասնել Պարսից ծոցի ափը: որով բնական էր վաւերացնել իշխանին սպանութեան դատակէրքը: Այսպէս, Նիկիոյ Փասիշը գոհունակ սրտով զառնալով Սերբիա սպասեց ոճիրին գործադրութեան յարմար օրուան:

Այլեւս կասկածէ դուրս նկատելով ձարական կառավարութեան մեղսակցութիւնը ոճիրին մէջ «Պերլինի մեծ ու փոքր բոլոր բերքերը, կը գրէր Պալքանեան Վրդ.ը, սպառնական լեզու սկսեր էին գործածել Ռուսիոյ դէմ, բացայայտօրէն յայտարարելով, որ Աւստրո-Հունգարական-Ռուսական պատերազմի մը պարագային Գերմանիան պիտի փութար հաւատարմօրէն կատարել իր զինակցին սրբազան պարտականութիւնը: Մայրաքաղաքին ժողովուրդը արդէն սկսած էր անխուսափելի նկատել պատերազմը ընդդէմ Ռուսիոյ. կառավարութեան օրկանները, իրենց գլուխ ունենալով՝ «նօրդ դէյէ-Ալկեմայնէ - Յայտունէ» պաշտօնական մեծագոյն օրաթերքը, սկսած էին հող պատրաստել, պատերազմի պատասխանատուութիւնը Ռուսիոյ վրին կապելու համար»:

ՀՍԿԱՅ ՅՈՅՑ ՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԷՄ

Այսպիսի ելեկտրականացած մթնոլորտի մը մէջ, զարմանք չէր որ Գերմանիոյ մէջ կազմուէին պատերազմասէր եւ պատերազմատեաց հոսանքներ, ինչպէս կար ամէն մէկ երկրին մէջ:

Գերման ժողովուրդը հնուց ի վեր իր պատերազմասէր կատարող զգացումներով վայելած էր, եւ այսօր ալ զեռ կը վայելէ պատերազմասէրի համբաւը:

Իսկ պատերազմատեաց հոսանքը, Գերմանիոյ մէջ մտաւ, ինչպէս եւրոպական միւս երկրներուն մէջ, բանուորական դասակարգին շահերը պաշտպանելու համար:

Գերման ընկերվարական-ոսմկավար կուսակցութեան պարագլուխները, առանց զիտնալու թէ քաղաքական բեմի ետեւ Ռուսաստան եւ Սերբիան ինչ խողեր խաղացեր են, կը կարծէին թէ Աւստրո-Սերբիական պատերազմը ծագեր է միակ մարզու մը սպանութեան պատճառով, մինչ իրականութեան մէջ, այդ կուրը կապուած էր

Աւստրո-Հունգարական միակետութեան «ըլլալու թէ չըլլալու» հարցին հետ, մանաւանդ որ Ռուսական զօրահաւաքը ուղղակի Գերմանիոյ դէմ ուղղուած էր:

Այս խաղաղասիրական գաղափարէն չարժած՝ ընկերվարական-ոսմկավար կուսակցութիւնն ալ, պատերազմի յայտարարութեան օրն իսկ, կազմակերպած էր պատերազմի դէմ հսկայ ցոյց մը մայրաքաղաքին զանազան ժողովատեղիներու մէջ, եւ որուն կը մասնակցէին տասնեակ հազարաւոր բանուոր դասակարգի երկսեռ ժողովուրդը:

Ընկերվարական ճառախօսներու բողոքի ձայնն այս էր. «մենք պատերազմ չենք ուզեր, որովհետեւ ներկայ դարուն մէջ՝ այսպիսի պատերազմ մը նախատիք է եւրոպական քաղաքականութեան, եւ որուն ամբողջ ծանրութիւնը պիտի կրեմք մենք աշխատաւորներս, արդար քրտիմքի արիւնքամ բանուորներս: Ինչու պատերազմ, որպէսզի Աւստրիա-Հունգարիան անկախ փոքրիկ Սերբիա մը անպատեալ յաջողի ընկնել, դատելու եւ պատժելու համար Սարայեւոյի ոնիրը»:

Յուցարարները անթերի կարգապահութեամբ իջան փողոց, աւելի քան 200.000 հոգի, ամէն կողմ աղաղակներ բարձրացնելով. «անկցի պատերազմը, կեցցէ՛ համաշխարհային խաղաղութիւնը»:

Յուցարարներէն մաս մը՝ դրեթէ 60.000 հոգի, հակառակ ոստիկանական խիստ միջոցներուն, կողմնակի ճամբաներէ հասան կայսերական պալատը պատերազմի դէմ բողոքելու համար: Բայց կայսրը բացակայ էր՝ արշալոյսին մեկնած ըլլալով Փոստամի արքայական զդեակը, անարգական ցոյցերու առարկայ չդառնալու համար: Սակայն եւ այնպէս, անոնք երգեցին իրենց համբաւաւոր «ինդերնա-սիոնալը» եւ կատարեալ կարգապահութեամբ ցրուեցան:

Եւրոպական ընկերվարականները ցոյցեր սարքեր էին Ռուսաստանի մէջ, որ կը փութար օր առաջ Սերբիոյ օգնութեան հասնել. ցոյցեր կատարած էին նաեւ Ֆրանսայի մէջ, որ կը պատրաստուէր իր զաշնակիցի կողմնակի կանգնելու: Չիւար խաղաղները խարազաններով լուեցուցին բարձրացած աղաղակները, իսկ Ֆրանսացի ընկերվարականներու աշխարհահռչակ պետը՝ Ժան-Փօրէսը, որ պատերազմի դէմ կ'ողորէր նոյնքան խստութեամբ, զինուորներու եռանդը թուլացնելու համար, յանկարծ ատրճանակի խորհրդաւոր հարուածով մէջտեղէն անհետացաւ:

Այս յուզիչ ցոյցերը ո՛չ միայն ազդեցութիւն չգործեցին գերման հասարակաց կարծիքին ու մամուլին վրայ, այլ զանոնք աւելի եւս կապեցին իրենց «սիրելի կայսեր» հետ, որովհետեւ անոնք կը յիշէին իրենց «երկաթէ վարչապետին» խօսքը, թէ «Գերմանիոյ կայսրութեան մեծագոյն վտանգը գերման ընկերվարականներն են»:

«Բերլինի բոլոր բերքերը, կը գրէ Պալաքեան Վրդ-ը, յաջորդ օրը, 29 Յուլիսին, արձագանգ եղան այդ խաղաղութեան հսկայ ցոյցերուն, հակազգային նկատելով զանոնք» եւ թէ «գերման ժողովուրդին ամբողջ ցասումը Ռուսիոյ դէմ էր» որ «գորահանութիւն կատարէր էր, եւ Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Հունգարիոյ սահմաններուն վրայ, Ռուսիան արդէն սպառնական դիրք գրաւած է», եւ թէ այսպիսով՝ «Սարայեւոյի ոմիրը Ռուսիոյ բեյադրութեամբ եղած է, պատրուակ գըտնելու համար Աւստրիոյ եւ Հունգարիոյ վրայ յարձակելու նպատակով...»: Այս կճու եւ նախատական լեզուն, արտայայտուած Յուլիս 31ին, կասկած չէր թողուր թէ պատերազմը այլեւս անխուսափելի է:

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ՌՈՒՍԻՈՑ ԵՒ ՖՐԱՆՍՍԱՅԻ ԴԷՄ**

Հազիւ լուր տարածուեցաւ, թէ կայսրը պատերազմը պաշտօնապէս պիտի յայտարարէ, ծովածաւալ բազմութիւն մը անմիջապէս զրաւեց կայսերական պալատին հսկայ հրապարակը ստէպ աղաղակելով «Մեր սիրելի կայսրը կ'ուզենք տեսնել»:

Երկար ժամեր անձկանքով սպասելէն յետոյ, վերջապէս բացուեցան մեծ պատշգամին վարազուրները: Գուլելմոս Բ. կայսրը եւ Աւգուզա կայսրուհին, հագած իրենց պաշտօնական շքեղափայլ տարազը եւ շրջապատուած պալատական թիկնապահներէ, երեւցաւ պատշգամին վրայ: Կայսրը, գերման ժողովուրդին միջնաբերդը, գերեզմանային լուծեան մէջ, յստակ եւ բամբ ձայնով ըսաւ. —

«Ես ըրի կարելիք պահպանելու համար խաղաղութիւնը, բայց մեր նախանձոտ դրացիները, անցնելով մեր սահմանները ոտնակոխ ըրին մեր հայրենիքի սուրբ հողը:

Կը ներքեմ ցարդ եղած բոլոր կրճոտ պայթարներուն (ակնարկութիւն ընկերվարականներուն, որոնց երեսփոխանները Ռայխսբազի մէջ հակառակ դիրք կը բռնէին կայսեր դէմ), Գերման ազգը իբր մէկ մարդ պէտք է կանգնի մղելու համար այն նակատագրական անխուսափելի պայթարը, որ մեր թշնամիները մեր դէմ կը մղեն, մեզ փնացնելու միակ նպատակով:

Սուրս որ աւելի քան 25 տարիներ յանուն եւ ի սեր խաղաղութեան վար դրեր էի, այսօր կը քաշեմ պատեանէն, եւ մինչեւ որ չյաղթեմ պիտի չղնեմ պատեանը:

Օ՛ն, գնացէ՛ք վարը՝ եկեղեցի եւ ծնրադիր աղաչեցէ՛ք մեր Աստուծմէն արագ յաղթանակներ մեր զէնքերու յաջողութեան համար»:

Պալաքեան Վրդ-ը, որ հետաքրքրութենէն մղուած, կայսերական պատշգամին մօտերը սեղ զրաւած էր, կը գրէ. «Հարիւր հազարաւոր

շրքներէն թիւած սրտագոչ «ուռու»ներու եւ «հօխ»երու խժալուր ալմուկով կը բնդար հսկայ մայրաքաղաքը, եւ ծովածաւալ ժողովուրդը այնտատան տակաւ կը ցրուի երգելով իրենց ազգային սիրական երգերը, այսինքն «Գերմանիան գեր ի վեր քան զամենայն» եւ «Հոննոս»ի պահակը»:

Այս Գուլելմոս Բ-ը Օգոստոս 1ին պատերազմ յայտարարեց ձարին դէմ, եւ Օգոստոս 3ին՝ ֆրանսական հանրապետութեան դէմ:

«Օգոստոս 2ի Կիրակի օրը, կը գրէ Պալաքեան Վրդ-ը, իսկապէս պատմական օր մըն էր ամէն գերմանացիի համար: Կայսեր յանձնարարութեան համաձայն, գերման բոլոր եկեղեցիներուն, անոնց հրապարակներուն եւ հանրակառօններուն մէջ ժողովուրդը ծունկ եկած, խաղաղութեան Աստուծմէ կ'աղերսէր պատերազմի յաղթանակներ գերման բանակներուն համար...»:

Նոյն օրինակ հանդիսաւոր աղօթքներ կատարուեցան Պետերբուրգի մէջ: Զարն ալ գնաց Մոսկուա՝ կայսերական թագազրուութեան Գրեմլինի պատմական մայր եկեղեցիին մէջ, ուսու զէնքերու յաղթութեան համար պաշտօնական աղօթք կատարելու, հրահրելու համար «մուծիք»ին պատերազմասէր խանդը:

Այս շրջանին է որ Անգլիան պատերազմ յայտարարեր էր, եւ գերման պաշտօնական թերթերը գրեր էին թէ Պետերբուրգի մէջ 300.000 ուսու բանուորներ ապստամբեր են ձարին դէմ, եւ ձարն ալ փախեր է Մոսկուա: Թէեւ հակադերման թերթերը այդ լուրը նկատեցին շինծու եւ աւազի վրայ կառուցուած շէնք մը, բայց պատերազմի ընթացքին, գերման եւ անգլիական դիւանդիտութիւնը այս շինծու լուրերը պիտի իրականացնէին զարհուրելի իրականութեամբ մը:

Ամէնէն համեստը եղած էր այնպիսի Փրանկիսկոս Յովսէփ կայսրը, որ ինքնազիր նամակ մը գրելով Պիոս Ժ. սրբազան քահանայապետին, խնդրեր էր որ իր «սուրբ օրհնէ», եւ ստացեր էր կտրուկ սառնային պատասխան մը. «Ես եղած եմ ոչ թէ պատերազմ օրհնելու, այլ խաղաղութիւնը»:

Բայց քաղաքակիրթ մարդկութեան ճակատագիրը վարող երեք կայսերու մտքէն չէր անցած թագաւոր մարդարէին այն զարհուրելի վճիռը, թէ «աղօթք մոցա ի մեղս դարձցին», եւ ո՛չ ալ մտաբերեր էին թէ անմեղ արեան նախճիրին մէջ պիտի խեղդուէին իրենք եւ ճշմարտութեան անզիրտակ իրենց ռազմաշունչ ժողովուրդները:

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԾՐԱԳԻՐԸ

Գերմանիոյ մեծ սպայակոյտը հաշիւի առած ըլլալով Ռուսաստանի անսահման տարածութիւնը, կարծեր էր թէ ան պիտի դանդաղէր,

ինչպէս միշտ, իր զօրահաւաքի գործին մէջ: Ուստի որոշեր էր իր ոյժերուն գրեթէ ամբողջութիւնը նետել նախ Ֆրանսայի վրայ, քիչ ժամանակի մէջ ջախջախել զանիկա եւ ապա բոլոր ոյժերով նետուիլ Ռուսաստանի վրայ, որուն պարտութիւնը ըստ իրեն կաակած չէր վերցնէր:

Գերման սպայակոյտը իրաւունք ունէր այսպէս մտածելու: Անիկա գիտէր թէ ռուսական արքունիքին մէջ կը բազմէր գերմանացեղ ձարուհի մը, որ աւելի Գերմանիան կը սիրէր քան Ռուսաստանը: Գիտէր որ ռուս արքունիքին հետ կապուած ռուս զօրավարները աւելի գերմանասէր էին քան ռուսասէր: Գիտէր վերջապէս, որ Նիկոլայ ձարը տկարամորտ մարդ մըն էր եւ ձարուհիին հետ միասին խաղալիք դարձեր էին անբարոյական եւ դիւթող աչքերով Ռասքոլնիկն կոչուած ռուս խաբերայ կրօնաւորին ձեռքը, որուն պատճառով ռուս ազնուակաւութեան պարկեշտ մասը արքունիքէն զզուած, ռոտվ լեցուն էր կայսերական ընտանիքին դէմ: Եւ յետոյ, որ զլիսաւոր կէտն էր, ռուսական վիթխարի կայսրութիւնը, կէս եւրոպացի, կէս ասիացի, կը նմանէր աքեմենեան ընդարձակածաւալ կայսրութեան, եւ անոր պէս կը նմանէր կաւէ ոտքերով հսկայ արձանի մը, որ մէկ հարուածով կրնայ փշրուիլ:

Այս հանգամանքներուն մէջ, գերման սպայակոյտը կը համարէր հետեւիլ Պիզմարքի պատուամին, որ կ'ըսէր. - «Պատերազմի մը միջոցին Գերմանիան այն ժամանակ յաղթող կը հանդիսանայ, երբ մէկ մակատի վրայ կռուի, իսկ եթէ երկու մակատի վրայ կռուի, միշտ պիտի յաղթուի»: Նախ Ֆրանսայի վրայ գերման բանակները յարձակելով, մէկ ճակատ կազմած կ'ըլլար: Այս յարձակումը պէտք էր երեք կամ չորս շարաթ տեւէր, ապահովցնելով յաղթանակը: Արդ, Ֆրանսան, 1871ի պատերազմէն ետք, իր նոր սահմանադրութիւնը պաշտպանելու համար, Բելֆորէն Վերդէօն կառուցեր էր կրկնազիծ ամրոցներ, որոնք կարող էին երկար ժամանակ թշնամիին արշաւը կեցնել: Գերման սպայակոյտը խորհեցաւ այդ ամրոցներէն խուսափիլ եւ Պելճիքական հողէն թափանցել Ֆրանսայի մէջ, Ուազի հովիտէն իջնել Փարիզի վրայ: Ֆրանսան, Պելճիքայի չէզոքութեան վրայ վստահ անհոգ դռներ էր կ'ըլլէր եւ Մորէժը պաշտպանողական վիճակի մէջ զնելու:

Ֆրանսան, Անգլիան եւ Բրուսիան, 1839ի դաշինքով, երաշխաւորեր էին Պելճիքայի չէզոքութիւնը: Արտաքին երեւոյթները փրկելու համար, գերման կառավարութիւնը շատ քաղաքավար ոճով վերջնազիր մը տուաւ պելճիքական կառավարութեան, խնդրելով որ թոյլ տայ գերման բանակներուն անցնիլ պելճիքական հողէն եւ անկէ մտնել Ֆրանսա, խոստանալով մինչեւ անգամ ամենաչնչին վնասին կրկնապատիկ հատուցանել:

ԻՏԱԼԻՈՅ, ՊԵԼՃԻՔԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ԴԻՐՔԸ

Գերմանիան չտուով աչքերը բացաւ իր պատրանքներուն վրայ: Նախ եւ առաջ Իտալիան իրեն իմացուց որ Երից Դաշնակցութեան դաշինքը կնքուած է իբր պաշտպանողական ուխտ մը, որով ինքը չի միարանիր յարձակողական քաղաքականութեան մը:

Յետոյ, Պելճիքայի թագաւորը՝ Ալբեր Ա., որոշ կերպով հաղորդեց գերման կառավարութեան թէ «ինքը իր բոլոր ոյժերով պիտի դիմադրէ գերմանական արշաւանքին, եթէ իր հողին չէզոքութիւնը րոնաքարուի»:

Գերման կառավարութիւնը այսպիսի վճռական պատասխանի չէր սպասեր, քանի որ Պելճ թագաւորը գերմանասէր էր: Բայց ինչ փոյթ, Գերմանիոյ դիւանապետը՝ Բէթման-Հոլլվէկ, միջակ քաղաքագէտ մը, իբրեւ հաւատարիմ աշակերտ Նիցշէի բռնի ոյժի վարդապետութեան, որ «հոգեկան հիւանդութիւններ կը մկատեր գուրբն ու կարեկցութիւնը, որոնք արգելիքներ են Գերմանիոյ մերկայ եւ ապացայ փառքի եւ մեծութեան», չէզոքութեան դաշինքը անուանեց «թուղթի բուրջ» մը եւ պատերազմ յայտարարեց Պելճիոյ դէմ, կարծելով թէ Պելճիքան կեղծ դիմադրութիւն մը պիտի ընէ եւ Անգլիան ալ ձեւակերպութեան համար պիտի բողոքէ, ռուսի հրամայեց իր բանակներուն անցնիլ Պելճիքական հողը եւ անկէ մտնել Փարիզ: Անգլիան, որ երաշխաւորեր էր Պելճիքայի չէզոքութիւնը, կը ստիպէր զինքը յարգել իր յանձնառութիւնը: Անիկա անմիջապէս ծանուցազիր մը դրկեց Գերմանիոյ, ազդարարելով որ իր գունդերը Պելճ հողէն քաշէ: Երբ Գերմանական կառավարութիւնը կարեւորութիւն չտուաւ այդ խիտ ազդարարութեան՝ Անգլիան, Օգոստոս 5ին, պատերազմ յայտարարեց Գերմանիոյ դէմ:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՍԽԱԼ ՄԸ

Գերման վարչապետ՝ Բէթման-Հոլլվէկ եւ Գերման մեծ սպայակոյտը հաշուի առեր էին միայն Անգլիական «փոքր» եւ «ողորմելի» բանակը, առանց մտածելու որ այդ բանակին ետեւ կանգնած էին Բրիտանական կայսրութիւնը կազմող ազգերուն բանակները, որոնք հետզհետէ կազմակերպուելով պատկառելի ոյժ մը պիտի կազմէին: Անգլիան ալ, Ռուսաստանի պէս զանդաղ մեքենայ մըն էր, բայց անգամ մը որ շարժման մէջ դրուէր՝ կը դառնար ահարկու ոյժ մը, որուն կը լծուէր անոր նենգաւոր դիւանագիտութիւնը եւ իր ստերկրներու փայլը, որով հրապուրիչ կը դառնար փոքր եւ աղքատիկ ազգերուն:

Գերման թերթերը սկսան բուռն կերպով յարձակիլ Անգլիոյ վրայ, իբրև «ամէն չարաց աղբիւր», եւ համաւերոպական պատերազմին սկզբնապատճառ նկատեցին անոր ֆրանսաէր նշուարդ Չ. թագաւորը, որ իբր թէ Ֆրանսայի հետ բարեկամանալով եւ ասոր միջնորդութեամբ ու Ռուսիոյ հետ համաձայնելով, Գերմանիոյ դէմ նախապատրաստեր էր այս ահաւոր պատերազմը, նպատակ ունենալով ոչնչացնել գերման նաւատորմիդին հետ՝ նաեւ գերման վաճառականութիւնն ալ, եւ այդպէս ապահովել ծովերու անպատասխանատու տիրապետութիւնը:

Այս պատմական ճշմարտութիւններու մէջ կը ցոլայ անգլիական քաղաքականութեան ռազմաշունչ պատկերը:

Գերման դիւանագիտութիւնը միտք բերելու էր այս բոլորը, Պել-ճիբական հողը բռնաբարելէն առաջ եւ ոչ թէ վերջին ժամուն երբ բանը-բանէն անցեր էր: Երբ կիրքին թափը մեղմացաւ, «գերման խելահաս մարդիկ, կ'ըսէ սկանատես վկան, շուարեցան իրենց գլխուն անակնկալօրէն պայթած ահաւոր այն ումբին ազդեցութեան տակ: Որովհետեւ, ոչ մէկուն մտէն անցած էր թէ Անգլիան կրնար միջամտել, որոնք կը կարծէին մի քանի ամսուան մէջ առ առաւելն, մաքրել հաշիւը Ֆրանսայի եւ Ռուսիոյ հետ»:

Բայց այս շուարած ամբօրի կողքին կար նաեւ լուրջ դասակարգ մը, որ առանց տարուելու տիրող ընդհանուր պատերազմաշունչ խանդավառութենէն, ղէպերը պաղարիւնով կը զիտէր, կը դատէր եւ կը վերլուծէր, հասկնալով որ Անգլիոյ հետ կռուի բռնուիլ մեծ սխալ մըն էր, որովհետեւ «յամառ ազգ մըն էր, որ կրնար ուրիշ հեռաւոր ազգեր ալ ոտքի հանել, եւ Գերմանիոյ գլխուն իջեցնել շնորհաց հարուածը», եւ «թէ՛ յաղթենք, թէ՛ յաղթուինք, այլեւս Գերմանիան աղֆատ երկիր մը պիտի ըլլայ, այլեւս մեր դիակներով պիտի լեցուի մեր դրախտանման երկիրը: Թէպէտ 40 տարի է ի վեր այս պատերազմին պատրաստուած էինք, սակայն մէկ անգամէն այսքան հզօր թշնամիներու մեր վրայ յարձակումը չէինք ենթադրած... Անգլիոյ մասնակցութեամբ, այլեւս ամէն հաւասարակշռութիւն խանգարուած է...: Ափսո՛ս մեր 40 տարուան խաղաղ աշխատանքին, հոյակապ քաղաքակրթութիւնը պիտի փնանայ...»:

Սակայն եթէ Պերլինի մէջ կային դատաւորներ, այստեղ կային զինուորականներ, որոնք կը կարծէին թէ սուրի ոյժով ամէն բան կարելի է ընել:

Քաղաքական այս սկարամտութիւնը շատ պարզ կերպով բացատրած է գերմանուհի մը. «Դեռ թարմ է յիշողութեանս մէջ, կ'ըսէ Պալաքեան Վրդ-ը, գերման օրիորդի այն սրտացաւ յայտարարութիւնը, որ քննադատելով այս ահաւոր պատերազմին պատճառ եղողները, կ'ըսէր ի միջի այլոց: Ափսո՛ս, որ մենք գերմաններս բազ-

մաթիւ նշանաւոր զինուորականներ ունինք, սակայն դժբախտաբար ո'չ մէկ քաղաքագետ ունեցած ենք: Չունինք, որովհետեւ քաղաքական պաշտօններու մէջ գտնուողները ամէնքն ալ զինուորականներ ենք, ըլլայ նախարարացեալ, նախարար, դեսպան, հիւպատոս: Որով Անգլիոյ նման պաշտօնին լուրջ գիտակցութիւնն ունեցող փորձ քաղաքագետներ չունինք եւ այս պայմաններուն ներքեւ չենք ալ կրնար հասցնել: Եթէ գտնէ մէկ հատ քաղաքագետ ունենայինք եւ ան մեզ ըսեր թէ գերմաններս կ'ատուինք ամբողջ աշխարհէն, անշուշտ մեր ազգին պատասխանատու անձերը այսքան անխորհուրդ կերպով եւ թեթեւօրէն պիտի չնետուէին այս պատերազմին մէջ...»

Մեզմէ ո'չ ոք կը հաւատար թէ Անգլիա կրնայ յանկարծ անցնիլ մեր թշնամիներուն կողմը... որով հաւասարակշռութիւնը այնքան խախտեցաւ, որ այս պատերազմը շահինք ալ, կորսցնենք ալ, Գերմանիա այլեւս կորսուած է...»: (ՊԱԼԱՔԵԱՆ, «Հայ Գողգոթան», էջ 34-35):

ԳԵՐՄԱՆ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԽԱՆԴԸ

Հակառակ Անգլիոյ տուած հարուածին, «արտակարգ էր, կը գրէ սկանատես վկան, հայրենասիրական խանդավառութիւնը գերման ժողովուրդին բոլոր խաւերուն մէջ, մասնաւորապէս հիւսնայի էր գերման մայրերու դիւցազնական անձնորոշութիւնը. մայրեր եղան որ ռազմադաշտ դրկեցին նոյնիսկ իրենց վեց երիտասարդ գաւակները»:

Գերման լրագիրները լեցուն էին բազմաժին գերման մայրերու անձնանուէր դիւցազն օրինակներով: Կը գրեն թէ գերման զօրութեան եւ մեծութեան իսկական հիմքը գերման բազմաժին մայրերն են, առանց որոնց արժէք պիտի չունենային ո'չ էստընի կուրբան տասնեակ հազարաւոր թնդանօթները, ո'չ ալ արագահարուած մաուզերները:

Իսկ երբ գերման բանակները, խճողուած Երկաթուղիներուն մէջ կը մեկնէին ղէպի ռազմադաշտ, բաժանման վերջին խօսքը այս է. «ցտեսութիւն»: Այս առիթով սկանատես վկան կը գրէ. «ոչ մէկ արցունք, ոչ մէկ թախիծ, ոչ մէկ հառաչանք, այլ հրաժեշտ կ'առնէին իրարմէ ժպտելով, եւ սահմանագլուխ կ'երթային ուրախութեամբ, իբր թէ խնձոյքի կ'երթան, այնքան վստահ էին իրենց յաղթանակին վրայ»:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ՈՅԺԵՐԸ

Այսպէս, Օգոստոս ամսուան առաջին օրերէն՝ Սերբիան, Ռուսաստանը, Ֆրանսան, Պելճիբան եւ Անգլիան պատերազմի մէջ էին Գերմանիոյ եւ Աւստրիա-Հունգարիոյ դէմ:

Համաձայնական պետութիւնները, թուական առաւելութիւն ունէին շնորհիւ Ռուսաստանի, որ ահագին պահեստազօր ունէր: Անոր գործօն բանակին թիւը կը հասնէր մէկմիլիոն երկուհարիւր հազարի. Ֆրանսայի մէջ ութհարիւր հազարի: Այս բանակներուն դէմ Գերմանիան ունէր՝ իրրեւ գործօն բանակներ, ութհարիւր եօթանասուն հազար մարդ. իսկ Աւստրիա-Հունգարիան՝ չորսհարիւր քսանհինգ հազար մարդ: Սակայն Գերմանիոյ աշխարհազրական զիրքը, որ Ֆրանսան կը բաժնէր Ռուսաստանէն, անոր թոյլ կու տար իր թշնամիները հարուածել մէկ մէկու ետեւէն, նախ Պելճիբական բանակները, յետոյ Ֆրանսացի զունդերը, վերջապէս Ռուսիոյ բանակները:

Միւս կողմէն, Գերման բանակները ուրիշ առաւելութիւն մըն ալ ունէին. անոնք կը գտնուէին ընդհանուր սպայակոյտի մը հրամանին տակ: Անոնց սպայակոյտին պետը, մարաշխտո Ֆոն Մոլտէ, իր արամազրուութեան տակ ունէր գերմանական բոլոր բանակները, կայսեր անուանական իշխանութեան ներքեւ:

Մինչդեռ համաձայնական պետութիւններու եւ անոնց դաշնակից ազգերու սպայակոյտերը, թէեւ վճռած էին իրենց շարժումները իրարու հետ խորհրդակցելով կարգադրել, այսուհանդերձ անոնց իւրաքանչիւրը ունէր իր անհատական գաղափարները, որոնք միշտ ընդհանուր շահէն չէին ներշնչուած:

Ռազմամթերքի տեսակէտով, Ֆրանսան ունէր Լըբէլ հրացանը, որ գերման մաուզէրներու արժէք ունէր. բայց գերմանները ունէին շատ աւելի գնդացիներ, ինչ որ չունէր Ֆրանսան. անոնք ունէին բազմաթիւ ծանր թնդանօթներ, մինչդեռ Ֆրանսացիները հազիւ ունէին 60ի չափ հրետանի: Բարեբախտաբար Ֆրանսական դաշտային թնդանօթները գերմանականներէն վեր էին: Ֆրանսական բանակները, առաջնորդուած հայրենասէր եւ տաղանդաւոր զօրավարներէ, ոգեւորուած Ալսաս-Լորէնէն, իրենց «սիրական մահաճ»-ներու վերազրուումի գաղափարէն, որոնք պիտի դառնային մայր հայրենիքի զիրկը, թոյլ պիտի տային որ Ֆրանսան յաղթականօրէն զիմազրէր գերմանական բանակներուն կատաղի յարձակումներուն:

ՍԽԱԼ ՀԱՇՅԻՒ ՄԸ

Գերման ժողովուրդը կաղապարուած իր սպայակոյտի օրինակին վրայ՝ այն համոզումը գոյացուցեր էր թէ իր բանակները փայլակի արագութեամբ պիտի յառաջանան: Եւ արդարեւ, զօրաշարժի եօթներորդ օրն իսկ արդէն հինգ միլիոն զինուոր, իրենց ամբողջ կազմածով, պատերազմական երկու ճակատներու վրայ դիրք բռնած եւ պատերազմի մտած էին ուսական եւ Ֆրանսական բանակներու հետ:

«Եթէ գերման զինուորի մը հարցուէր, կը զբէ մեր վերոյիշեալ ականապես վկան, թէ որքան կրնար տեսիլ պատերազմը, նա անվարան կը պատասխանէր. եթէ միայն Ֆրանսան եւ Ռուսը ըլլային, երկու ամիսէն ամէն ինչ կը վերջանար. սակայն քանի որ Անգլիան ալ մասնակցեցաւ պատերազմին, դեռեւս քանի մը ամիս աւելի տեսիլ: Իսկ երբ հարցուէր թէ ե՛րբ գերմանները կրնան Փարիզ մտնել, անմիջապէս կը պատասխանէր. — այս տարուան Սետանի տարեդարձը, Սեպտեմբեր 2ին Փարիզի մէջ պիտի տօնենք»: Յետոյ ականջալուր վկան կ'աւելցնէ. «ամէն գերմանացիի խորին համազումն էր, թէ հոն պիտի ըլլային Սեպտեմբեր 2ին»: Որով զարմանք չէր, ինչպէս կ'ըսէ ականատես վկան, որ «գերման ժողովուրդը օրէ օր յաղթանակներու սպասէր, եւ ամէն գերման՝ հպարտօրէն իր օտարական բարեկամներուն խոստովանէր, թէ մե՛նք սա պատերազմին կը պատրաստուէինք 40 տարիներէ ի վեր»:

Միայն՝ գերման սպայակոյտը եւ գերման ժողովուրդը ազգային խանդավառութեան մէջ մոռցեր էին այն իմաստուն առածը թէ «մարդս կ'առաջադրէ եւ Աստուած է որ կը տնօրինէ»:

Սենք չենք հետեւիւր համաերոպական պատերազմին եւ անկէ ծնունդ առած աշխարհամարտի մանրամասնութիւններուն, սակայն յաջորդ գլուխներուն պիտի յիշատակենք պատերազմի այն զրուագները, որոնք կապուած են թրքահայութեան ճակատագրին եւ անոր բնաջնջումին հետ:

ԳԼՈՒԽ Ժ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ԲԵՄԻ ՎՐԱՑ

Համաեւրոպական մեծ պատերազմը, արեւելեան միջերկրականի հարցը բեմի վրայ դրեր էր, կապուած Արեւելեան Հարցին հետ:

Եգիպտոսի եւ Սուէզի ջրանցքին հարցերը, նեղուցներու եւ Օսմանեան կայսրութեան գոյութեան խնդիրները, ինչպէս նաեւ Գերմանիոյ եւ Անգլիոյ բանակցութիւնները, Պաղտատի երկաթուղիին հարցը, որուն լուծումը կանգ առեր էր պատերազմի յայտարարութեան պատճառով, դարձան մրցակցութեան նիւթեր երկու պատերազմիկ կողմերու միջեւ: Այս մրցակցութեան հետ սերտօրէն կապուած էր առաջնակարգ կարեւորութիւն ունեցող հարց մը. — ո՞ր պետութիւնը գերիշխան դիրք պիտի բռնէր Պալքանեան թերակղզիին մէջ: Արեւելեան Հարցին հետ կապուած էր ուրիշ աւելի մեծ եւ ծանր հարց մը. — ո՞ր պետութիւնը գերիշխանութիւն ձեռք պիտի բերէր արեւմտեան Եւրոպայի մէջ:

Համաձայնական եւ կեդրոնական կայսրութիւններու դիւանագիտութիւնը, իրարու հետ կը մրցէին թէ ի՞նչ միջոցներով պիտի շահին Պալքանեան ազգերը, որոնց կատարելիք զերը մեծ նշանակութիւն կու տար անոնց բռնելիք դիրքին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՏՈՐԱՄԵՒ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Երբ Սարահեոյի մէջ ռուս եւ սերբ կառավարութիւններու մեղսակցութեամբ սպաննուեցաւ Աւստրիոյ-Հունգարիոյ զահաժառանգ իշխանը, եւ այդ քաղաքական ոճիրին պատճառով հասարակաց կարծիքը սաստիկ յուզումի մատնուեցաւ, նախատեսելով աշխարհամարտը, երբ Հայկական Հարցը իր լուծումը գտաւ ռուսական նախաձեռնութեամբ եւ Անգլիոյ եւ Ֆրանսայի յայտնի աջակցութեամբ, թրքահայութեան վիճակը դարձեր էր սարսափելի, եւ օրէ օր հասեր էր այնպիսի մահացու վտանգի մը, որ «Մշակ» եւ «Հորիզոն» լրագիրները լեցուն էին թրքահայաստանի բոլոր անկիւններէն ստացուած տեղեկութիւններով, որոնք միաբերան կը նկարագրէին թէ ինչ

գարհուրելի գրողում ծաւայած է հայերու դէմ. «ամէն տեղ մէկ նշանաբան կայ. կոտորել հայերը: Ամէն ինչ պատրաստ է ընդհանուր կոտորածի համար. կը մնար միայն հրամանը արձակել»:

Արեւու պէս պայծառ էր, որ թրքահայ ժողովուրդի զլխուն կախուած էր ընդհանուր ջարդի սպառնալիքը, դամոկլեան սուրբի մը պէս:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԷՐՁՐՈՒՄԻ ՄԷՁ

Ո՞վ պիտի իջեցնէր երիտասարդ թուրքերու կուսակցութեան վրէժխնդիր կատաղութիւնը: Ո՞վ հրապարակ պիտի իջնէր թրքահայ ժողովուրդի գլուխէն հեռացնելու համար մահացու վտանգը:

Այդ բանը պիտի ընէր Պատրիարքարանը, որ թրքահայ ժողովուրդին պաշտօնական ներկայացուցիչն էր Իթթիհատական կառավարութեան մօտ: Բայց Պատրիարքարանը, ռուսասիրութեան բոյն, երես չունէր կառավարութեան մօտ, քանի որ, ինչպէս տեսանք, մերժեր էր անոր բարենորոգումներու ծրագիրը, քաջալերուած ռուսական զեսպանատունէն:

Մէջտեղ չըլլալով ո՛րեւէ պաշտօնական մարմին, կը մնար Դաշնակցական Կուսակցութիւնը, որ տակաւին դաշնակից էր երիտասարդ թուրքերու կուսակցութեան, որ այնքան բարեսցական գտնուէր էր Դաշնակցութեան վերաբերմամբ. Դաշնակցականները, անոր միջոցով, յաջողք էին իրենց թեկնածուները մտցնել Օսմանեան խօսարանին մէջ:

Ուրեմն, Հ. Յ. Դաշնակցութիւնը այնքան ազատ եւ իրաւատես կը զգար ինքզինքը, որ ութերորդ ընդհանուր ժողովը գումարեց էրզրում քաղաքի իր ակումբին մէջ, 1914ի Յուլիսին, աւստրո-սերբիական պատերազմը դեռ չծագած:

«Դաշնակցական պատգամաւորներուն մէջ գլխաւոր դէմքերն էին, կը գրէ Մինախորեան, իր «Յուշեր»ուն մէջ, Ռուբէն Զարդարեանը, Ալնուհին, Սիմոն Վրացեանը, Համագասպ Սրուանձտեանը, Արտաւազդ Հանրմեանը, Տիգրան Խաչիկեանը, եւ ուրիշներ» (1915 թուականը, 1949, Վենետիկ - Ս. Ղազար, էջ 60), որոնց կարգին նաեւ ինքը Վահան Մինախորեանը, Վոսմեանը եւ Ռոստոմ: Համագումարը հետեւեալ որոշումը տուաւ թուրք կառավարութեան վերաբերմամբ. «Նկատի ունենալով պետական այն նեղ եւ տարամբժ քաղաքականութիւնը, որով կը բնորոշուի իթթիհատական կառավարութիւնը իր գործունէութեամբ եւ որուն արդիւնք էր տնտեսական, դպրոցական, վարչական եւ այլ պայմաններու մէջ բոլոր ոչ-թուրք ազգութիւններու, հետեւաբար եւ հայ ժողովուրդի վերաբերմամբ գործ դրուած օրինական եւ հակաօրինական ննչիչ միջոցները:

Նկատի ունենալով մանաւանդ կառավարութեան հետապնդած խափանաբար ուղղութիւնը հանդէպ բարենորոգումներու արդէն իսկ ազնատուած ծրագրի անշեղ գործադրութիւնը:

Ընդհանուր ժողովը եկաւ այն եզրակացութեան որ կուսակցութիւնը շարունակելու է մնալ անյողողղ ընդդիմադիր եւ անաչառ Բննադատի դերին մէջ՝ հանդէպ Իթթիհատի, պայքարելով անոր ազգայնական վնասակար եւ հակապետական քաղաքականութեան դէմ: Ժողովը չի՛ ժխտեր գործադրութեան սկզբումքը այն համապետական կարեւոր խնդիրներուն համար, որոնք համապատասխան են մեր կուսակցութեան ծրագրային պահանջներուն»: («Սրիբասիոն»... թրքական փաստաթուղթ. թիւ 9):

ՈՒՇԱԳՐԱԻ ԿԷՏԵՐ

Նշանակալից են թրքական փաստաթուղթին երկու կէտերը: Դաշնակցական Կուսակցութեան պարագլուխները յայտարարեցին թէ ներքին քաղաքականութեան մէջ, «իրենց կուսակցութիւնը կը շարունակէ մնալ անյողողղ ընդդիմադրի եւ անաչառ Բննադատի դերին մէջ», քանի որ Իթթիհատական կառավարութիւնը որդեգրած է ազգայնական վնասակար եւ հակապետական քաղաքականութիւն մը, որուն երեսէն կը տուժեն բոլոր ոչ-թուրք ազգութիւնները, եւ մասնաւորապէս հայ ժողովուրդը, որուն դէմ Իթթիհատական կառավարութիւնը ի գործ կը դնէ օրինական եւ հակաօրինական ննչումներ»:

Իթթիհատական կառավարութիւնը այս տրամաբանական որոշումը հակապետական յանցանք մը համարեցաւ, ցոյց տալով որ խորհրդարանի ազատ կարգերը տակաւին որդեգրած չէր:

Անգլիան, որ շատ հին դարերէն, սկսած էր խորհրդարանի մէջ ընդդիմադրի եւ անաչառ քննադատի դերը այնքան կենսական եւ կարեւոր համարել, որ ընդդիմադիր կուսակցութեան պետին աւելի խոշոր ամսաթուղակ մը յատկացուցած էր քան օրուան նախարարապետին: Կարելի՞ ըսն էր որ անգլիական կառավարութիւնը, նոյն իսկ պատերազմի միջոցին, փորձէր ընդդիմադիր կուսակցութեան երեսփոխաններու «ազատ լեզուն» քրէական յանցանք համարելով զայն լուրթեան դատապարտէր:

Դաշնակցութեան երեսփոխանները Օսմանեան խորհրդարանին մէջ, գտնուէր էին ընդդիմադրի եւ անաչառ քննադատողի դերին մէջ, պաշտպանելու համար ո՛րեւէ ազգի պատկանող քաղաքացիի կենսական շահերը: Այսօր ալ՝ ընկերվարական-ոսմկավար Թուրքիոյ մէջ կան երկու զլխաւոր կուսակցութիւններ, որոնք իրարու

դէմ ընդդիմադրի եւ անաչառ քննադատի այնպիսի նախատական լեզու մը կը դործածեն, որ եւրոպական ո՛չ մէկ Երկրի մէջ կը պատահի:

Աւելի ուշադրաւ է արտաքին քաղաքականութեան վերաբերեալ երկրորդ կէտը: Դաշնակցութեան պատգամաւորները կ'որոշեն գործակցել թուրք կառավարութեան համապետական կարեւոր խնդիրներուն մէջ:

Այս շատ ծանր եւ պատասխանատու խոստում մըն էր, մանաւանդ այն ժամանակ, երբ թուրքիան վճռած էր իր ոյժերը ուղղել իր դարաւոր թշնամի՝ Ռուսաստանի դէմ:

Այստեղ, ուրեմն, կը ծագէր համապետական առաջնակարգ կարեւորութիւն ունեցող խնդիր մը, որ էր հայրենիքի պաշտպանութիւնը թշնամիին դէմ:

Պարզ է որ Դաշնակցութիւնը պիտի կատարէր իր պարտականութիւնը հանդէպ պետութեան պաշտպանութեան, ինչպէս թուրք-խապական եւ թուրք-պալքանեան պատերազմներու ժամանակ:

ԹՈՒՐԻՔ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԷՐՋՐՈՒՄԻ ՄԷՋ

«Դաշնակցութեան համագումարի աշխատութիւնները, ինչպէս կը գրէ նոյն թրքական փաստաթուղթը, գրեթէ վերջացեր էին, երբ էրզրում եկան թուրք երիտասարդ կուսակցութեան ներկայացուցիչները Հայերու հետ բանակցելու համար»: Այս նշանակալից բանակցութիւններուն կը մասնակցէին թուրքերու կողմէն՝ Նեճի Պէյ, Սալիլ Պէյ եւ Շաքիր Պէյ. Դաշնակցութեան կողմէ՝ Վուսեան, Ակնունի եւ Ռոստոմ: Թուրք երեք պատգամաւորները եկեր էին իմանալու համար, թէ արդեօք Դաշնակցականները հոգիով եւ սրտով պիտի ընդունէի՞ն այն նշանաւոր ծրագիրը, որ ընդունուած էր վրացիներէ եւ թաթարներէ:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՅՈՐԴՈՐԸ

Թուրք երեք պատգամաւորները առաջարկ կը բերեն որ հայերը յարին թուրք եւ գերման միութեան, եւ «հաւատարիմ վկայութեամբ կը համոզելին զանոնք որ համաձայնութիւնը գոյացած է Անդրկովկասի վրացիներու եւ թուրքերու հետ միասին: Թէ՛ անոնք, թէ՛ ասոնք կ'ապստամբին, եթէ միայն հայերը, որպէս աւելի եռանդուն մարդիկ, իրենց վրայ վերցնեն նախաձեռնութիւնը»:

Երիտասարդ թուրքերու այս ծրագիրը, հարաւային Կովկասը գիւրութեամբ նուաճելը, գերմանական ծագում ունէր եւ ո՛չ թրքա-

կան: Ինչպէս բռնի տեղահանութեան ծրագիրը ծնունդ առած էր գերման խելագատակէն, այսպէս ալ ա՛յս ծրագիրը:

Իրապէս, Պալքեան Վրդ.ը, որ տակաւին չուր անգամ չունէր թուրք-դաշնակցական բանակցութեան մասին, կը գրէ հետեւեալը.՝ «Յուլիս 6ի օրն էր երբ Պերլիմի ծանօթ սրմարանի մը մէջ կը խօսակցելիմք օրուան հրատապ միւքերուն վրայ, ընտրեալ դասակարգիմ անծանօթ գերմաններ եկան նիշտ մեր մօտիկ նստելու: Անծանօթներն աւելի երիտասարդը, որ յետոյ իմացանք որ փաստարան է եղեր, ի միջի այլոց հետեւեալ միտքը արտայայտեց. Հայերը ձեռներէց, յանդուգն եւ գործունեայ ժողովուրդ մըն են: Եթէ ասոնք անգամ մը ապստամբին, Կովկասի 12 միլիոն իսլամները շուտով հայերու օրինակիմ կը հետեւին, եւ Ռուսիոյ գլխուն մեծ փորձանք կը բանան»: («Հայ Գողգոթան», էջ 17-18): Ապա ահանջալուր վկան կ'աւելցնէ. «Եթէ այս գերմանը, ներկաներուն մէջ հայու մը գոյութեան իրագել ըլլար, անշուշտ այս յայտարարութիւնը քաղաքական պարզ ձեւակերպութիւն մը պիտի ուզէի նկատել»:

Ուշադրութեան առնենք մասնաւորապէս ապստամբութեան յորդորելու թուականին զուգարկալութիւնը, որ մեր առջեւ կը պարզէ թուրք-վրացական զաղտնի դաշինքին ծալքերը: Թուրք փաստաթուղթէն կ'իմանանք, որ վրացիները խոստացեր էին Ռուսաստանի դէմ ապստամբել, որուն փոխարէն պիտի ստանային հողամասեր: Գաղտնի դաշինքին յայտնութիւնը Դաշնակցութեան ներկայացուցիչներուն առջեւ զրեւ էին հայերու ապստամբութիւնը քաջալերելու համար:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՓՈՒՍԱՐԷՆԸ

Թուրք պատգամաւորները, ինչպէս կը շարունակէ նոյն թրքական փաստաթուղթը, վրացիները, թաթարները եւ հայերը ապստամբութեան փոխարէն պիտի ստանային ինքնավարութիւն, հետեւեալ հողային շրջաններով.՝ «Վրացիները պիտի ստանային Գուրպիսի, Թիֆլիսի նահանգները, Բաքումի շրջանը եւ Տրապիզոնի նահանգիմ մէկ մասը: Դաղաստանը, լեռնային շրջանները մինչեւ Վլատի Կովկասը, Բագուի նահանգը, եւ Գանձակ նահանգի մաս մը կը տրուէր մահմետականներուն: Իսկ հայերուն, Կարսի շրջանը, Երեսնի նահանգը, Գանձակ նահանգի մէկ մասը, Վանի շրջանը, Բիթլիսը եւ Էրզրում նահանգի մէկ մասը: Վրացիները, թուրքերը եւ հայերը կը դառնան ինքնագլուխ, ինքնավար ժողովուրդներ, թուրքիոյ հովանաւորութեան տակ»:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Երիտասարդ թուրքերու արկածալից առաջարկը ապստամբութիւն յարուցանելու Անդրկովկասի մէջ, Ռուսաստանի դէմ, դաշնակցական կուսակցութենէն իմաստուն պատասխան մը ստացաւ. «կուսակցութեան ներկայացուցիչները, ինչպէս կ'ըսէ թուրք փաստաթուղթը, պատասխանեցին թէ թուրքիոյ պատերազմը Ռուսաստանի դէմ իրենց կը համարին կորստարեւր առաջինին համար, եւ որ իրենց դաշնակցականները, ձեռք կ'առնեն իրենցմէ կախուած բոլոր միջոցները խանգարելու համար այդպիսի պատերազմը. որ այն դէպքին մէջ, եթէ թուրքիան այնուամենայնիւ պատերազմ յայտարարէ Ռուսաստանին, դաշնակցականները համոզուած են որ հայերը կ'ըլլան կատարելապէս օրինապահ եւ կը կատարեն իրենց քաղաքացիական պարտքը ինչպէս Ռուսաստանին՝ ա՛յնպէս ալ թուրքիոյ վերաբերմամբ. որ ոչ մէկ դէպքի մէջ իրենց խռովութիւն չեն բարձրացնէր Ռուսաստանի մէջ: Երիտասարդ թուրքերու ներկայացուցիչները յայտնեցին թէ դաշնակցականներու հայեցակէտը ուրիշ ալ բան չէ, եթէ ոչ ռուսասիրութիւն, որ այսպիսի պատմական առիթ մը ուրիշ անգամ չի գար, որ հասեր է ժամանակը վերջապէս հաշիւ տեսնելու Ռուսաստանի հետ առաջուամբ բոլոր ստորնացումներուն համար եւ ստորնացնել զինքը մինչեւ երկրորդական կարգի պետութիւն, ռուսական սահմաններուն մէջ, որ այս բոլորը պիտի կատարուի առանց հայերուն օգնութեան, բայց այն ժամանակ այս վերջինները չդժգոհին եթէ իրենց նախատեղիքը տխուր ընթացք ստանայ:

Այս տեսակ առաջարկութիւններով երիտասարդ թուրքերը գացին Վան եւ Մուշ, որպէսզի համաձայնութեան գտն տեղւոյն դաշնակցական կոմիտէներու հետ. պատասխանը միանման էր: Այսպիսով քանակցութիւնները վերջացան»:

Դաշնակցութեան ներկայացուցիչներուն պատասխանը այնքան ողջամիտ էր եւ խելացի, որ Լէօ պատմագիրը, միշտ պատրաստ աջէն ձախէն փաստեր փնտռելու Դաշնակցական Կուսակցութեան վրայ աճէն յանցանք բեռնելու, կը գրէր այս նշանակալից տողերը. — «Երիտասարդ թուրքերի այս ծրագիրը հարաւային Կովկասը հեշտութեամբ նուանելու ծրագիրն էր, որ ունէր անշուշտ գերմանական ծագում: Առաջարկութիւններն անկասկած շատ եւ շատ էին գրաւիչ, բայց հաւատալ սրանց՝ չունենալով ոչինչ իրական երաշխիքներ եւ հետեւել Ռուսաստանի դէմ ապստամբելու, ահռելի արկածախնդրութիւն կը լինէր, մի ահռելի յիմարութիւն, եւ Դաշնակցութիւնը կարողացաւ ըմբռնել այդ բանը»:

ՈՒՇԱՑԱԾ ԽԵԼԱՑԻ ԳԱՂԱՓԱՐ ՄԸ

Հայոց ինքնավարութիւն շնորհելու թուրք եւ գերման գաղափարը, քաղաքական իմաստութիւն մը պիտի համարուէր, եթէ գործադրուէր ռուսական միջամտութենէն առաջ, եւ մեծ օգուտներ պիտի բերէր թէ՛ թուրքիոյ, թէ՛ Գերմանիոյ եւ թէ՛ Թրքահայաստանի համար, եւ աշխարհի վրայ ցրուած բոլոր հայերը երախտագիտութեամբ պիտի կապուէին Գերմանիոյ եւ թուրքիոյ հետ:

Թուրքիոյ համար ատիկա այն մեծ օգուտը կ'ունենար որ ինքնավար Հայաստան մը, թուրքիոյ եւ Ռուսաստանի միջեւ, վերջնականապէս պիտի փակէր Ռուսաստանի առջեւ անոր պարբերաբար միջամտութիւնը թուրքիոյ ներքին գործերուն մէջ, որուն անկասկած կողմնակից պիտի ըլլային Անգլիան եւ Ֆրանսան ալ, որոնք իրենց խորքին մէջ միշտ «քրքասէր», պիտի նկատէին Թրքահայաստանի ինքնավարութիւնը զօրաւոր պատուար մը Ռուսաստանի դարաւոր տենչանքներուն, որ անդադար կը ձգտէր մէկ կողմէն հասնելու Պարսից ծոցը, անկէ ճամբայ բանալու դէպի հարուստ Հնդկաստանը, որուն վրայ Անգլիան կը զողար, միւս կողմէն կը ձգտէր դէպի Ադրիականի եւ Միջերկրականի տաք ծովերը, ձեռք անցընելու համար նեղուցները, Վոսիօրը եւ Կ. Պոլիսը, որ ձարականութեան ոսկեղէն երազն էր, եւ եթէ օր մը իրականանար, Ռուսաստանը կը դարձնէր աշխարհի տէր, որուն ոգով չափ հակառակ էին թէ՛ Անգլիան, թէ՛ Ֆրանսան:

Երկրորդ մեծ օգուտը ա՛յն կ'ըլլար, որ ինքնավար Թրքահայաստանը, ինչպէս եղեր էր ինքնավար Լիբանանը, պիտի մնար միշտ թրքական հող եւ վայելելով անոր հովանաւորութիւնը, պիտի զառնար անոր անկեղծ եւ հաւատարիմ դաշնակիցը, իրարու հետ սերտօրէն կապուած ընկերային, տնտեսական եւ զինուորական փոխադարձ շահերով, քանի որ քաղաքականօրէն իմաստուն Սուլթաններն եւ գերման նշանաւոր զինականները նկատեւ էին թէ հայերը, ինչպէս տեսանք, «խելացի, ձեռներեց, շինարար ժողովուրդ մը», որոնք ո՛չ միայն իրենց առեւտուրին եւ ճարտարարուեստի տաղանդով, ինքնավար Հայաստանը պիտի վերածէին երկրաւոր դրախտի մը, այլեւ նախանձելի չափով երջանկութիւն եւ բարօրութիւն պիտի պարգեւէին ինքնավար Հայաստանի սահմաններուն մէջ բնակող եւ երկար դաւրերով հայ ժողովուրդին հետ կողք կողքի բարեկամարար ապրած թուրք ժողովուրդին եւ ուրիշ մահմետական տարբերու հետ:

Երրորդ մեծ օգուտը, ո՛չ նուազ կարեւոր, հայ վաճառականները անվախ եւ արձակ-համարձակ մտնելով բարեկամ եւ դաշնակից կայսրութեան սահմաններուն մէջ, երկրէ երկիր ճամբորդելով, ապրանքներու ներածութեան եւ արտածութեան ընդարձակ աստի-

ճանով, Թուրքիան պիտի հարստացնէին, ինչպէս հարստացուցեր էին անոսկի եւ անարձաթ յետամնաց Պարսկաստանը:

Անգամ մը հասարակաց շահերով իրարու հետ կապուած, Օսմանեան եւ հայկական զունդերը սիրալոթար պիտի քալէին կողք կողքի, պաշտպանելու համար հայրենի նուիրական հողը, այն պարագային, որ մէջտեղ ելլէին պատահական իշնամիի մը բանակները:

Գերմանիոյ համար ինքնավար Հայաստանը կ'ունենար այն մեծ օգուտը որ անոր ճարտարագէտները բարեկամ հայերու ձեռքով պիտի բերէին հազարաւոր տարիներով կոյս մնացած հայկական հողերուն ընդերքը, հոն դանելով հարուստ նախանիւթեր, որոնց այնքան պէտք ունէր գերման ճարտարարուեստը:

Յետոյ Թուրքիան իր հովանաւորութեան տակ առած, Գերմանիան պիտի կարենար բարեկամ հայերէն վերցնել փոքր գաղութներ եւ զանոնք փոխադրելով Սուրիոյ եւ Միջագետքի ովասիաներուն մէջ, թրքական երկարատեւ տիրապետութեան օրով դարձած անմշակ հողեր, վերստին պիտի վերածուէին ծաղկած եւ քաղաքակիրթ երկիրներու, եւ միեւնոյն ժամանակ նոր կեանք մը պիտի տային Պերլին-Պաղատա երկաթուղիին, օգ հանելով Պետերբուրգ-Պարսից ծոց երկաթուղիին ոռոսական երազը:

Իսկ հայոց համար՝ ինքնավար Թրքահայաստանը պիտի դառնար ապահով եւ հրապուրիչ երկիր մը, ուր պիտի գային մնայուն բնակարան հաստատելու օտար ազգերու տակ ապաւինած, դիրքի եւ հարստութեան տէր դարձած հայերը, որոնք չըջանէ չըջան լքեր էին հայրենի հողը՝ թրքական եւ մանաւանդ քրտական հարստահարութենէ փախուստ տալով, բախտ որոնելու համար:

Անոնք, թափելով հայրենի հողին վրայ, իրենց ձեռք բերած հարստութիւններով պիտի վերաշինէին աւերեալ քաղաքները, պիտի ստեղծէին կեանքի նոր պայմաններ, նոր շունչ եւ կենդանութիւն տալով երկրի մը, ուր իրենց նախնիքը դարերով ապրեր ու արիւն թափեր էին:

Բայց այսպիսի իմաստուն եւ հեռատես քաղաքականութեան համար, պէտք կար Շահ Աբբաս Ա.ի պէս արեւելեան իմաստութիւն ունեցող մարդու մը, որ հայերու սիրտը գրաւելու համար, պարսկական հողի վրայ իսկ շնորհեր էր տեսակ մը ինքնավարութիւն:

Այս տարրական ճշմարտութիւնը չհասկցաւ Գերմանիան, որ ամբողջ Թուրքիան իրեն գաղութ մը կը նկատէր, եւ ոչ ալ նոր Թուրքիան, որ առաջնորդուած էր թիւռ ազգայնամոլութեամբ, անշուշտ կասկածելով որ օր մը ձարական Ռուսաստանը գրաւելով հայերը, ինքնավար Թրքահայաստանը հոչակէր բոլորովին ազատ ու անկախ երկիր մը, բաժնելով զանիկա արեւելեան Անատոլուէն:

Այս կասկածը անհիմ էր, քանի որ ինքնավար հայերը, բանալով եւրոպական մտքով վարժարաններ, պիտի պատրաստէին քաղաքականապէս այնպիսի հասուն ժողովուրդ մը, եւ այնպիսի դիւանագէտ դեկավարներ, որոնք բռնելով մինչեւ այդ ժամանակ դարերով անխօս եւ անմտունչ եւ յետին աստիճանի միամիտ, անպատասխանատու, ինքնակամ եւ քաղաքականօրէն տհաս առաջնորդներուն տեղը, դիւրաւ պիտի հասկնային թէ ազատ եւ անկախ Հայաստանը վարդի մը չափ կեանք միայն կրնար ունենալ, քանի որ չըջապատուած պիտի ըլլար հօր եւ զինսպաշտ Թուրքիայով մը, որ այդ առիթով կատարի իշնամի պիտի դառնար, նախանձոտ վրացիներէ եւ մոլեռանդ թաթարներէ: Միւս կողմէն, հայերը շատ լաւ գիտէին թէ Թուրքիոյ եւ ուրիշ մահմետական երկիրներուն մէջ, հայ լեզուն, զպրօցն ու մշակոյթը, աւելի ազատ կերպով կրնային մշակել քան քրիստոնեայ Ռուսաստանի մէջ, ուր ինչպէս տեսանք, ձարական կառավարութիւնը բուռն միջոցներու դիմեր էր հայոց ոռուսացումը դիւրացնելու համար:

Այդ ճշմարտութեան ականատես վկան էր նոյն ինքն Ներսէս Պատրիարք Վարժապետեան, որուն նշանաւոր յայտարարութիւնը մէջտեղն է:

Այս բանը այնքան լաւ գիտէր երիտասարդ թուրքերուն կուսակցութիւնը, որ հազիւ իշխանութեան զուրի անցած, դատապարտեցին սուլթաններու լայնամիտ քաղաքականութիւնը, սկսան հետամուտ ըլլալ Թուրքիոյ հպատակ քրիստոնեայ ազգերը թրքացնելու քաղաքականութեան, միատարր ժողովուրդ մը կազմելու համար:

Յետոյ թրքացման գաղափարը կամաց կամաց տեղի տուեր էր արմատական միջոցի մը:

Արդարեւ, այն ժամուն՝ անոնց մտքին մէջ ծնունդ առած էր չարամիտ խորհուրդ մը:

ՉԱՐԱՄԻՏ ԽՈՐՀՈՒՐԴ

Երիտասարդ թուրքերու կուսակցութեան խոստացած ինքնավարութեան ծրագիրը բոլորովին կեղծիք մըն էր: Անոնք այնքան տխմար մարդիկ չէին որ համոզուած ըլլային թէ Դաշնակցական Կուսակցութիւնը Անդրկովկասի քաջախիզախ հայերուն ձեռքով ապստամբութեան գրօջը պարզել տալով, անոր ետեւէն պիտի քալէին երկչոտ վրացիները եւ թաթարները, եւ կարող պիտի ըլլային հսկայ Ռուսաստանը «իջեցնել երկրորդական աստիճանի վրայ»:

Բայց անոնք հաւատալով կը հաւատային որ եթէ Դաշնակցականները այդպիսի յիմարութիւն մը դործէին, ձիաւոր խազախներուն

լախտերը եւ անանատիպ ու ձարապաշտ «մուծիկ»ներուն անհամար մտրակները աջէն ու ձախէն պիտի հնձէին ուստի հպատակ հայերուն գլուխները, իբրեւ դաւաճաններ՝ օրինաւոր իշխանութեան դէմ:

Եւ ճիշտ էր Երիտասարդ թուրքերու չարամիտ խորհուրդը: Որովհետեւ հպատակ ազգ մը կեանքի եւ մահուան պատերազմը կը սկսի լարելով իր բոլոր ոյժերը, չի կրնար պարզ ականատես ըլլալ իր ծոցին մէջ հպատակ ժողովուրդի մը կազմակերպած ապստամբութեան, եւ երկիրը զենք պաշտպանող զօրքերու երկու կրակին մէջ: Կարո՞ղ էր արդեօք որ երկրագունդին վրայ գտնուէր պետութիւն մը որ թոյլ տար իր տան մէջ հրդեհ ծագի, երբ դուրսի ահաւոր թշնամին կանգնած է շէնքին վրայ:

Այս չարամիտ խորհուրդով, Երիտասարդ թուրքերու կուսակցութիւնը կ'ուզէր մէկ զնդակով երկու թուշուռ որսալ. Երիտասարդ թուրքիան եւ Ջարական Ռուսիան իրարու հետ միանալով պիտի բանային անյատակ գերեզման մը, որուն մէջ պիտի անհետանային միլիոնաւոր հայեր, իբրեւ թշնամի եւ ապստամբ:

ԿՈՏՈՐԱԾԻ ՔՕՂԱՐԿՈՒԱԾ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Համաերոպական պատերազմի նախօրեակին, երեք թուրք ներկայացուցիչներուն երթը էրզրում, Վան եւ Մուշ, նպատակ չունէր Դաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ խորհրդակցելու հասարակաց հայրենիքի շահերուն վրայ:

Անոնց բուն նպատակն էր՝ այդ երեք կարեւոր կեդրոններու դաշնակցականներուն բերնէն գաղտնիքներ քաղելու, որպէսզի օր մը սափասուտերով փաստաթուղթեր հրատարակեն, իրենց նախամտածուած ազգասպան ոճիրին համար արդարացումներ գտնեն:

Անոնք կը զգային թէ իրենց գործադրելիք ոճիրը զարհուրելի ոճիր մըն էր, ամէնէն հրէշայինը մարդկային բոլոր ոճիրներէն, որով կիրքով կուրացած, անոնք երբեք նկատի չառին Դաշնակցական ներկայացուցիչներուն պազ-գլուխով մտածուած իմաստուն որոշումները, որոնք սպառաշունչ ցոյց տուին թէ Դաշնակցականները աւելի թուրքիոյ շահը մտածեր էին քան թիւրք ներկայացուցիչները:

Ի՞նչ յայտարարած էին էրզրումի, Վանի եւ Մուշի Դաշնակցականները: Ա՛յն թէ «Թուրքիոյ պատերազմը ուսաստանի հետ իրենց կը համարին կորստաբեր թուրքիոյ համար». որով իրենք, դաշնակցականները, «ձեռք կ'առնեն իրենցմէ կախում ունեցած բոլոր միջոցներով խափանել այդպիսի պատերազմ մը»:

Իսկ թուրք ներկայացուցիչները այդ պատերազմը «յարմար առիթնկատեցին հաշի տեսնելու Ռուսաստանին հետ, գանիկա իջեցնելու մինչեւ երկրորդական պետութեան ուսական սահմաններուն մէջ»:

Ո՞վ իրաւունք ունեցաւ: Անշուշտ Դաշնակցութեան ներկայացուցիչները: Թուրքիան չարաչար պարտուեցաւ եւ Օսմանեան կայսրութիւնը այնպիսի անդամահատութիւն մը կրեց, որուն նմանը երբեք տեսնուած չէր: Ո՞վ աւելի հեռատես հայրենասէր դուրս եկաւ. անշուշտ դաշնակցականները, որոնք պատերազմը կը համարէին կորստաբեր, մինչ թուրք ներկայացուցիչները, որոնք գերմանական բանակներու զօրութենէն շրջած, իրենց քիթէն անդին բան չտեսնելով, ապահով էին գերմանական ջախջախիչ յաղթանակին վրայ: Ծայրական է թրքական փաստաթուղթին սա հաւաստումը թէ «հայր միակ ժողովուրդն է որ արգելի կ'ըլլայ մեր համաբուրանական ծրագրիին»:

Դաշնակցութեան ներկայացուցիչները կը յայտարարեն որ «եթէ թուրքիան որոշեր է անպատեալ պատերազմ յայտարարել Ռուսիոյ դէմ, «մեզ համոզուած ենք որ հայեր կ'ըլլան կատարելապէս օրինապահ եւ կը կատարեն իրենց քաղաքացիական պարտքը»:

Այսպիսի ուղղամիտ, անկեղծ եւ հայրենասէր ընթացք մը թուրք ներկայացուցիչներէն նկատուեցաւ «ոռուսախրոթիւն», եւ այդ օրէն ի վեր իթիհատական մտքին մէջ հասունցաւ թրքահայութեան բնաջնջումին եղեռնաւոր դատավճիռը, այս բանաձեւով. «մեզ Ռուսաստանը պիտի իջեցնենք երկրորդական պետութեան աստիճանին, առանց հայերուն օգուտեան. բայց այն ժամանակ թող անոնք չըրժգոհին, եթէ իրենց ցակատագիրը տխուր ընթացք ունենայ»:

Եւ արդարեւ, այդ ժամանակէն սկսեալ, Իթիհատական կառավարութիւնը սկսաւ թրքահայ ժողովուրդին եւ Դաշնակցութեան վրայ նայիլ իբր դաւանաններ, որովհետեւ, ինչպէս որ մը թրքական փաստաթուղթը պիտի հաստատէ, թէ «Դաշնակցականները էրզրումի մէջ Կովկասը ապստամբեցնելու մեր առաջարկը չըղմուեցան, ուրեմն մեզի թշնամի են»:

Զարմանալիս այն է որ Լէօ պատմագիրը, իրեն սովորութիւն ըրած Դաշնակցութեան ուղղամիտ գործերն անգամ ծուռ աչքով դիտելու, այդ առթիւ կը զրէ այս տարօրինակ տողերը. «յիցն արժէք չունէր երբեք դաշնակցականների խօսքը թէ հայերը օրինապահ կը լինին եւ իրենց քաղաքացիական պարտքը կը կատարեն թէ թուրքիայի եւ թէ Ռուսաստանին վերաբերմամբ...: Եթէ երբեք հոգի կարողանում էին խօսել ամբողջ հայ ժողովուրդի անունից, եւ վեհոներ տալու ամբողջ հայ ժողովուրդի համար, կեանքի եւ մահուան մշանակութիւն ունեցող հարցերի մէջ...»:

Մարդ չի՛ կրնար չզարմանալ որ այդպէս լուրջ մատենագիր մը կարող է փոխել թուրք փաստաթուղթին իմաստը, պարզապէս Դաշնակցութիւնը սեղսելու համար: Փաստաթուղթը չ'ըսեր թէ Դաշնակցական երեք ներկայացուցիչները խօսեր են «ամբողջ հայ ժողովուրդի անունից», այլ անոնք, վստահ հայ ժողովուրդի պատուաւոր

նկարագրին վրայ, «խամոզուած են որ հայերը կ'ըլլան կատարելապէս օրինապահ եւ կը կատարեն իրենց քաղաքացիական պարտքը»:

Հայ պատմագրին երկրորդ սխալը ա՛յն է, որ այդ երեք հոգիներուն կը տայ վճռական դեր: Ան մոռցեր է որ էրզրումի, Վանի եւ Մուշի մէջ, Դաշնակցական ներկայացուցիչները իրենց խելքէն փչածը չեն խօսած, այլ իրենք բանբեր են Դաշնակցական Կուսակցութեան որոշումներուն, առաջուց մտածուած եւ կշռուած, ինչպէս ըրեր էին երիտասարդ թուրքերու երեք ներկայացուցիչները, որոնք հայութեան զատավճիռը կը ստորագրեն ո՛չ թէ թուրք ժողովուրդին անունով, այլ երիտասարդ թուրքերու կուսակցութեան անունով, նոյնպէս առաջուց մտածուած եւ պաղ զլուխով կշռուած:

Անոնք գիտակից են իրենց գործադրելիք ահաւոր ոճիրին, մինչդեռ դաշնակցականները այնքան միամիտ են, որ համազուտմարտէն ետքն ալ երիտասարդ թուրքերը նկատեցին իրենց դաշնակից եւ բարեկամ մարդիկ, եւ ասիկա մինչեւ այն յետին օրը, երբ, ինչպէս պիտի տեսնենք, իբր եղեռնագործ չարագործներ, դրկուեցան Փոքր Ասիոյ խորերը, ամենազարհուրելի մահով անհետանալու համար:

ԹՈՒՐԻՔ ԵՒ ԳԵՐՄԱՆ ԶԻՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Երբ Իթթիհատական կառավարութիւնը իր գործադրելիք մեծ ոճիրին մանրամասնութիւնները կ'որոճար, արդէն Աւստրիա-Հունգարիա քալեր էին Սերբիոյ դէմ, եւ քանի մը օր վերջն ալ՝ Գերմանիան Ռուսաստանի եւ Ֆրանսայի դէմ պատերազմ յայտարարեւ էր:

Պալքանեան ազգերը սմբած, չէին կրնար որոշում մը տալ, թէ չէզո՞ք պէտք է մնալ կամ պատերազմող պետութիւններու ասոր կամ անոր կողքին կանգնիլ:

Միայն Թուրքիան եղաւ որ անմիջապէս իր դիրքը ճշտեց: Այն օրէն, երբ Գոյելմոս Բ. Գերմանիոյ կայսրը մեծաշուք հանդէսով Սալահատինի շիրիմին վրայ շքեղ ծաղկեփունջ մը զետեղեց, եւ սուրբ պատեանէն քաշելով ինքզինքը «պաշտպան» հռչակեց իսլամութեան, ամէնէն տղէտ մարդն ալ հասկցաւ թէ կայսերապաշտ Գերմանիան սուլթան Ապտ-իւլ Համիտ Բ.ին դաշնակիցն էր:

Իսկ երբ ձարական Ռուսաստանը Հայկական Հարցը պատրուակ բռնելով, սկսաւ Թուրքիոյ ներքին գործերուն միջամտել, Երիտասարդ Թուրքիան, 1912-1913ի պալքանեան պատերազմէն ուժասպառ, դոց աչքերով նետուեցաւ Գերմանիոյ բազուկներուն մէջ, դառնալով անոր գաղտնի դաշնակիցը եւ կամակատար գործակիցը:

Եւ իրաւունք ալ ունէր: Երբ Աւստրո-սերբիական կոիւր համաւերտական պատերազմի փոխուեցաւ, Ռուսաստանը, Ֆրանսան եւ

Անգլիան իրարու զինակից դարձան, ծանր սպառնալիք մը նկատուեցաւ Օսմանեան կայսրութեան գոյութեան համար:

Բայց ըուն թշնամին Ռուսաստանն էր, որ մտադրեր էր այս անգամ իրականացնել Ռոմանով արքայատոհմին ոսկեղէն երազը, որ էր ուսական դրօշը ծածանել տալ Ս. Սոփիա տաճարի գմբէթին վրայ: Այս կեանքի եւ մահուան առջեւ, Երիտասարդ Թուրքիոյ ուրիշ բան չէր մնար ընել՝ եթէ ոչ նետուիլ Վանկէնհայմի հմայիչ ազդեցութեան տակ:

Արդէն Ռուս եւ գերման պատերազմը չյայտարարուած, Թուրքիոյ պատերազմական նախարարը՝ էնվէր Փաշային եւ Կ. Պոլսոյ Գերմանիոյ դեսպան՝ Վանկէնհայմին միջեւ բանակցութիւններ սկսեւր էին եւ 1914ի Օգոստոս 2ին, նիզակակցութեան դաշինք մը կնքուեցաւ ընդդէմ Ռուսաստանի:

Եւ այն օրն իսկ, Թուրքիան յայտարարեց ընդհանուր զօրակոչ, «Սեֆերիիկ», պատրաստուելով մօտալուտ պատերազմին: Բայց դեռ ձեռնապահ էր եւ հրապարակաւ յայտարարեց թէ խիստ չէզոքութիւն պիտի պահէ երկու պատերազմող պետութիւններու միջեւ, կարծելով թէ այդ ոճով պիտի կարենար Անգլիան եւ Ֆրանսան բաժնել Ռուսաստանէն, թէեւ ամէնուն համար պարզ էր որ անիկա պիտի ըլլար Գերմանիոյ հետ, Ռուսաստանի եւ անոր դաշնակիցներուն դէմ:

ԶԷԶՈՒԹՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Իթթիհատական կառավարութիւնը խելացի քաղաքականութեան մը հետեւած պիտի ըլլար եթէ իր յայտարարած խիստ չէզոքութեան հաւատարիմ մնացած ըլլար մինչեւ ետք: Մանաւանդ որ հին թուրքերը, խելացի ու փորձառու մարդիկ, զլուխ ունենալով Եռուսֆիզդէտ էֆէնտին, սուլթան Ապտ-իւլ Ազիզի սիրական որդին, Դաշնակցական կուսակցութեան պէս կը մտածէին, թէ Թուրքիոյ համար վնասաբեր է պատերազմի մէջ մտնել եւ այն ալ՝ Գերմանիոյ կողքին: Իրապէս առաջին անգամն էր որ Թուրքիան պիտի բաժնուէր Ֆրանսային եւ Անգլիային, որոնց զաւակները իրենց արիւնը թափեւր էին պաշտպանելու համար Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը՝ ընդդէմ թրքատեաց Ռուսաստանին:

Եթէ Երիտասարդ թուրքերը Սուլթան Ապտ-իւլ Համիտի դիւանադրտական տաղանդէն կաթիլ մը ունենային, կարող պիտի ըլլային խիստ չէզոքութիւն պահել՝ մնալով զինեալ խաղաղութեան մէջ:

Այս ոճով բանակները տեղերնին պիտի գամէին Ռուսաստանի կովկասեան բանակները, քանի որ, ինչպէս պիտի տեսնենք, Ռուսաստանը չէր ուզեր նախայարձակ ըլլալ, որպէսզի կարենար իր բոլոր ոյժերով իյնալ գերման եւ աւստրո-հունգարական բանակներուն վրայ:

Բայց Երիտասարդ Թուրքերը, ամբարտաւան եւ մեծախօս, այնպէս մը յափշտակուած էին գերման բանակներուն անպարտելիութենէն որ մտքերնին զրեք էին յարմար առիթը ձեռքէ չփախցնել, ինչպէս ըսեր էին Դաշնակցութեան ներկայացուցիչներուն, Գերմանիոյ աջակցութեամբ Ռուսաստանը երկրորդական պետութեան մը աստիճանի վրայ դնել:

Անգլիան եւ Ֆրանսան ալ կ'ուզէին որ Թուրքիա չէզոք մնար, որովհետեւ անոնք, զարեքով հռչակուած թրքասէրներ, չէին ուզեր Թուրքիոյ դէմ պատերազմ յայտարարել, երկուքն ալ ոգով չափ դէմ ըլլալով ռուսական արեւելեան քաղաքականութեան. որովհետեւ գերման զէնքերու յաղթութեան պարագային, Գերմանիան պիտի զառնար տէր եւ տնօրէն նեղուցներուն, Կ. Պոլսոյ եւ հետեւաբար ամբողջ աշխարհին:

Եթէ Ֆրանսան եւ Անգլիան համաձայնեք էին այդ երեք բանալիները Ռուսաստանին շնորհել, պատճառն այն էր որ առաջինը՝ ինչպէս ուրիշ տեղ ակնարկեցինք, ռուսական անհամար բանակներու շնորհիւ վերադարձել կը յուսար Ալսաս-Լօրէն նահանգները, որոնց կորուստը իրեն համար անբուժելի վէրք մըն էր եւ ապա ազգային արժանապատուութեան հարց մը: Իսկ երկրորդը, կը յուսար անոր բանակներով ջախջախել գերմանական զօրութիւնը, օր ըստ օրէ իրեն համար կը զառնար երկիրդալի ոյժ մը թէ՛ ծովու եւ թէ՛ ցամաքի վրայ: Այդ բոլոր պատճառներուն համար Թուրքիոյ չէզոքութիւնը անոնց համար աւելի արժէք ունէր, քան մեծ պետութեան մը դաշնակցութիւնը:

Իթիբհատի կառավարիչները սակայն, չուզեցին հատկնալ այդ բանը եւ արիւնհարբու էնվէր փաշայի ատրճանակէն փրթած զնդակ մը գետին տապալեց Ֆրանսասէր խոհեմ զահաժառանգ իշխանը, անշուշտ Գերմանիոյ զենպանին թելադրութեամբ:

Պետութեան մէջ կը պատահին այնպիսի երկրորդական համարուած դէպքեր, որոնք ո՛չ միայն կը փոխեն պատմութեան ընթացքը, այլ նաեւ մեծապէս կ'ազդեն ազգերու ճակատագրին վրայ:

Թուրքիոյ մէջ զօրահաւաքի գործը այնպիսի արտակարգ խստութեամբ սկսաւ, որ ամէն մարդ հասկցաւ թէ Թուրքիան ծանր կացութեան մը մատնուած է:

Հայ թերթերը լեցուն էին զօրահաւաքի մանրամասնութիւններով: Նոյնը կը վկայէ նաեւ Մօրկէնթաու, որուն պատմածները ամէն կասկածէ վեր են:

Ռուսաստան, զիտնալով թէ Թրքական զօրակոչն ամէնէն առաջ իրեն դէմ ուղղուած էր, հրաման տուաւ կովկասեան բանակին, որ կազմ ու պատրաստ գտնուին արիւնի փոթորիկի մէջ մտնելու համար:

Այժմ անցնինք տեսնելու թէ ի՛նչ քաղաքական խաղեր կը խաղցուէին վարագոյրին միւս կողմը, Կովկասի փոխարքայական պալատի բեմին ետեւ, ի վնաս բովանդակ Հայութեան:

ԳՆՈՒՄ ԺԱ.

ՎՈՐՈՆՅՈՎ-ԴԱԶԿՈՎԻ ԳԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՄ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԺՈՂՈՎԸ

Թիֆլիսի ազգային Բիւրոն նկատելով որ Հայկական Հարցը իր լուծումը գտած է ռուսական զիւանագիտութեան ճամբով եւ իր փառքին համաձայն, յարմար դատեց իր գործունէութեան հաշուետուութիւնը ներկայացնելու «Ազգային Համագումար»ի ժողովին: Ազգային Բիւրոն կը հաղորդէր համագումարին, ինչպէս կ'ըսէ վաւերագիր ձեռագիրը, «Այժմ երբ ռեֆորմներն արդէն ընդունած են, եւ գեներալ ինսպեկտորներ են նշանակուած, պէտք է սկսի գործունէութեան մի նոր, ստեղծագործական շրջան, որի մէջ ձեռք ձեռքի տուած աշխատելու են հասարակութեան բոլոր խաւերը: Կ. Պոլսի հայոց պատրիարքն իր մի նամակում Բիւրոյին, դեռ ամիսներ առաջ, ընդգծեք էր մի շարք նոր խնդիրներ, որոնցմով այժմ պէտք է գրաւուել: Ռուսաց կառավարութեան քարճրաստիճան պաշտօնեաները մտերմաբար եւ նոյնպէս ցոյց են տալիս մեր գործունէութեան նոր ուղիներ Թիւրքաց Հայաստանում: Հողային խնդիրը, կուլտուրական, ֆինանսական եւ տնտեսական ձեռնարկներ. սեա մի քանի խօսքով այն խոշոր պահանջները, որոնց մեզ պէտք է ընդառաջ գանք եւ որոնց յաջող լուծման համար մեզ չպէտք է խնայեմք ո՛չ մի ջանք, ո՛չ մի գոհաբերութիւն: Այդ բոլոր կարեւոր խնդիրները Բիւրոն դնում է համագումար ժողովի առաջ: Այս ժողովին այժմ մնում է կանգ առնել դրանց ուսումնասիրութեանց վրայ եւ ծրագիրներ մշակել նրանց իրագործման համար»:

Ինչպէս կը տեսնուի, Ազգային Բիւրոն ձեռնարկեք էր «ստեղծագործական աշխատանք»ի մը, որ մշակուած էր ռուսական կառավարութեան «քարճրաստիճան պաշտօնեաներէ»: Արդէն Թրքահայաստանի մէջ հաստատուեք էր ռուսական քաղաքական ազդեցութիւնը, որուն ետեւէն պիտի վազէր ռուսական դրամագլուխը՝ շահ ու վաստակ որոնելու: Դրամագլուխին հոգը իր վրայ առեր էր Սազանով, արտարին գործերու նախարարը, որ միաժամանակ խորհուրդ կու տար Հայերուն՝ Թրքահայաստանի մէջ հիմնել դրամատուն մը Հայ ժողովուրդին համար:

Յայտնի կը տեսնուի որ ստեղծագործական աշխատանքի «ծրագիրը շինուած էր իբր հակազդեցիկ ոյժ մը ընդդէմ գերմանական ծաւալապաշտ կայսրութեան ծրագրին, որ ասիական Թուրքիոյ մէջ օրէ օր կը տարածէր իր հզօր ազդեցութիւնը մտցնելով հոն գերմանական դրամագլուխներ, շոգեկառքի ցանցեր, այդ գեղեցիկ ու բերրի երկիրը կատարեալ շահաստանի մը վերածելու համար:

Իսկ ուսական կառավարութեան «քարճարաստիճան պաշտօնեացի» էին Սազանովն ու Վորոնցով-Պաշկովը, ունենալով ձեռքի տակ Թիֆլիսի տակ Ազգային Բիւրոյի հլու անդամները:

Այսպէս, Ազգային Բիւրոն պիտի դադրէր նեղ դիւանագիտական շրջանի մէջ գործելէ, ուր ինքը միայն օգնական էր ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այժմ ազգային համադումարէն կը ստանար երկու մնայուն պաշտօններ. Թիֆլիսի մէջ նստած՝ առաջնորդ եւ ուղեցոյց պիտի ըլլար թրքահայ ժողովուրդին, որ նստած Ռուսական հզօր կառավարութեան տակ, բոլորովին պիտի ազատագրուէր, ինչպէս կ'ընէր Գիբսոն, «թրքական լուծ»էն: Երկրորդ պաշտօնն էր, որ ան ազատագրուած Հայաստանի մէջ, Ռուսաստանի համար պիտի հանդիսանար իբր անոր կամակատար գործակալն ու առաջապահ գունդը:

Բայց անոր «ստեղծագործական աշխատանքը» ճիշտ այդ տեղ կանգ առաւ, որովհետեւ դիւանագիտական մուֆ խաղեր ամէն ինչ տակն ու վրայ ըրին:

ՎՈՐՈՆՑՈՎ-ՊԱՉԿՈՎԻ ԱՆՕՐԷՆ ԾՐԱԳԻՐԸ

Երբ Ռուս-թրքական պատերազմը կը պատրաստուէր իր բոցերուն մէջ առնելու թրքահայերն ու ուսահայերը, նորէն բեմին վրայ երեւցաւ Վորոնցով-Պաշկովի դաւաճան դէմքը: Կովկասի փոխարքան բաւական չհամարելով Հայկական Հարցը ուսական նախաձեռնութեամբ լուծելու սագրանքը, որուն հետեւանքով Իթիհատական կառավարութիւնը կատղեցուցեր էր թրքահայութեան դէմ, որուն վիճակը, ինչպէս տեսանք, սկսեւ էր օրէ օր վատթարանալ եւ սպառնական, կերպարանք ստանալ, այժմ փոխարքան իր վառ երեւակայութեան մէջ յղացաւ անօրէն ծրագիր մը, որ պիտի չկարենար գործադրուիլ՝ եթէ անոր մէջ չըլլար կեղծոնական կառավարութեան մատը:

Ծրագրին նպատակն էր Ռուսաստանի կողմը սիրապահել հայ յեղափոխական-հայդուկային կազմակերպութիւնները, որպէսզի անոնք թրքական զօրքերու թիկունքէն ապստամբութիւն յարուցանեն: Ասիկա սոսկալի ծրագիր մըն էր, որ ուս-թրքական պատերազմի մը պարագային, աչքերնին արիւնով լեցուած Իթիհատականները անողոք զապանութեամբ ոչնչացումի պիտի դատապարտէին ո՛չ միայն

թրքահայերը, այլ նաեւ ուսահայերը, եթէ ուսական բանակներուն պարտութեան պարագային՝ դերմանական յաղթական բանակներուն հետ, թրքական բանակներն ալ Կովկասեան հողին վրայ ոտք դնէին:

Վորոնցով-Պաշկով եւ գինքը շրջապատող դիւուորական հրամանատարները, աչքերնին տնկեր էին Հ. Յ. Պաշնակցութեան վրայ, իբրեւ դիւուորական մեծ կազմակերպութիւն: «Ռուս պետական մարդ»ը այն համոզումը գոյացուցեր էր թէ՛ որքան ժամանակ ուսական կառավարութիւնը հալածողի դերը ունի Պաշնակցութեան հանդէպ, թրքահայերու ապստամբութիւնը ուս-թրքական պատերազմի ժամանակ, անհնարին բան մը պիտի ըլլար:

Մենք գիտենք որ Պաշնակցութիւնը թրքական յեղափոխութեան առաջին օրէն իսկ օրինապահ գիրք մը բռնեւ էր երիտասարդ թուրքերուն հանդէպ եւ Թուրքիան միշտ նկատեւ էր հասարակաց հայրենիք մը, ուր թուրքը, հայը յոյնը, արաբը եւ հրեան՝ իրարու հետ կապուած պիտի մնային ընդհանուր շահերով, զէնք բարձրացնելով միայն օտար թշնամիին դէմ:

Վորոնցով-Պաշկով՝ գիտնալով թէ՛ դժուար բան է ուսատեաց դաշնակցութիւնը թրքատեաց դարձնել, ուրիշ խորամանկութիւններու դիմեց, այդ կուսակցութիւնը իր ծուղակին մէջ ձգելու համար:

Մէկ կողմէն փոխարքան եւ իր դիւուորական հրամանատարները, սկսան Հայերու ազգայնական տենչանքները գրգռել, խոստանալով թրքահայկական հարցի լուծումը աւելի լայն հիմքերու վրայ դնել, որ պարզ խօսքով կը նշանակէր ինքնավարութիւն: Խոստում մը որ կը գուգադիպէր թուրքերու Պաշնակցութեան խոստացած ինքնավարութեան գաղափարին: Երկու ազգեր միտումի ելեր էին փոքր, միամիտ ժողովուրդի մը արիւնը շահագործելու ամօթալի սակարկութեան: Միւս կողմէն, խոստանալով կայսերական ներումի արժանացնել 1912ի դատաւարութեան հետեւանքով բազմաթիւ դաշնակցական գործիչներ, որոնք կը գտնուէին Սիպերիոյ արքայապարտերու կամ բանտերու մէջ եւ կամ փախել էին արտասահման, դատի չենթարկուելու համար: Կայսերական ներումին հետ ալ կապուած էր իբր ինքնավարութեան փոխարէն, հայ կամաւորական խումբեր կազմել եւ այդ ալ Հայկական դրամով:

Վորոնցով-Պաշկով միտքը դրեւ էր թէ իր վայրագ դիւար կարողացած էր Թուրքիոյ մէջ ապրող Պաշնակցութեան հեղինակատր եւ պատասխանատու դէմքերը խլելով երիտասարդ թուրքերու ձեռքէն եւ դանոնք նետել ձարականութեան գիրկը: Յետագային, փաստերով պիտի ապացուցանենք թէ Պաշնակցութիւնը լաւ կը ճանչնար Վորոնցով-Պաշկովը, ձարական կեղծ աղուէսը, որ ինչպէս տեսանք, «Պրօշակ»ի մէջ ներկայացուցեր էր իրապէս իբրեւ «Խրէշ» մը:

ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ Վորոնցով-Պաշկով իր ծրագիրը չէր կրցած հնարաւոր դարձրնել թրքահայ դաշնակցականներուն միջոցով, հնարաւոր դարձուց զայն Թիֆլիսի Ազգային բիւրոյին միջոցով:

Ան իր պալատին մէջ խորհրդակցութեան կանչեց բիւրոյի ներկայացուցիչները, որոնց գլուխն էր հանրաժանօթ Մեսրոպ եպիսկոպոսը, Գէորգ Կաթողիկոսին Աքիտոփէլը եւ փոխարքային մտերիմ բարեկամը:

Այդ բանակցութիւններու միջոցին, երեւան կու գայ որ ուսական կառավարութեան վերաբերմունքը դէպի հայկական հարցը, հիմնովին փոխուած է: «Ամեմառոյրմած» Զարը, իր շնորհներուն տոպրակը լայնօրէն բացած, պատրաստ է թրքահայութեան շնորհելու կատարեալ ինքնավարութիւն:

Ահա թէ ինչ կը յայտարարէ բիւրոյի հաշուետուութիւնը, այդ բանակցութիւններուն մասին:

«Պատերազմը ուս-գերմանական սկսուելուց յետոյ, բիւրոյի գործունէութեան պատկերը միանգամայն փոխուի է: Թրքահայկական հարցն այժմ մտնում է իր նոր շրջանին մէջ: Այն չէզոքացնող եւ նոյնիսկ խանգարիչ դիրքը, որ խաղում էր այդ հարցի լուծման մէջ Գերմանիան, այլեւ գոյութիւն չունէր Ռուսաստանին համար: Եւ ահա Յուլիսի վերջերին, ուս կառավարութեան վերաբերմունքը դէպի հայկական խնդիրը հիմնովին փոխուի է, եւ հենց այդ ժամանակ բարձր իշխանութեան ներկայացուցիչները Բիւրոյի լիազօրների հետ ունեցած տեսակցութիւնների միջոցին, պատրաստակամութիւն են ցոյց տալիս թրքահայկական հարցի լուծումն աւելի լայն հիմունքների վրայ դնելու եւ ցանկութիւն են յայտնում իմանալու հայերի պահանջները: Այդ առթիւ, Բիւրոն ունենում է խորհրդակցութիւններ, պատրաստում է իր ծրագիրը, եւ քանի որ ըստ կայացած համաձայնութեան, հայ ազգի պահանջների արտայայտիչը պետ է հանդիսանար Ամեմայն Հայոց Կաթողիկոսը, բիւրոյի լիազօրները գնում են էջմիածին եւ գեկուցում են այդ բոլորի մասին Վեհափառ կաթողիկոսին» (տե՛ս ձեռագիր բիւրոյի գեկուցումը 5րդ Համազումարին, 1915ի Փետրուարին: — Տե՛ս նաեւ Լեօ, հտ. Բ. էջ 106):

Եւրոպական նենգաւոր դիւանագիտութեան մէջ թափանցող միտք մը, դիւրաւ կը հասկնայ թէ ո՛չ մէկ կառավարութիւն ինքնաբերաբար, առանց փոխարինութիւն ակնարկելու, կ'առաջարկէ աւելի ընդարձակ զիջումներ ընել, պարզապէս մարդկային գուլթէ շարժած: Եւ միամիտ կաթողիկոսին միտքէն անգամ չէր անցած որ այդ դիւանագիտական խաղերը կը կատարուէին թրքահայ ժողովուրդի արիւնին վաճառքով:

Ազգային Բիւրոյի գաղափարապաշտ անդամները երբեք գտնուած չէին այնպիսի տազնապալից դիրքի մը մէջ, որչափ այդ բանակցութեան շրջանին: Անոնք գիտակից էին թէ Վորոնցով-Պաշկովը թրքահայութեան համար կը խոստանար ինքնավարութիւն եւ իրենցմէ իրբեւ փոխարէն կը պահանջէր հայ կամաւոր գունդերու կազմակերպութիւն: Բայց անգամ մը որ Բիւրոյի անդամները մտեր էին փոխարքայական թակարդին մէջ, չհամարձակեցան մերժել անոր առաջարկին այն մասը որ կը վերաբերէր կամաւորական գունդերու կազմութեան :

ԳԵՈՐԳ Ե. Ի ՆԱՄԱԿԸ՝ ՎՈՐՈՆՑՈՎ-ՊԱՉԿՈՎԻ

Ինչպէս տեսանք, նենգամիտ փոխարքան եւ ուս բարձր իշխանութեան «ներկայացուցիչներ»ը, բաց դուռ մը ձգեր էին Բիւրոյի անդամներուն առջեւ, «ցանկութիւն յայտնելով իմանալու հայերու պահանջները», «քանի որ հայ ազգի պահանջներուն ներկայացուցիչ պետ էր հանդիսանար Ամեմայն Հայոց Կաթողիկոսը», Բիւրոյի լիազօրները զացին էջմիածին եւ «տեղեկացուցին այդ բոլորի մասին Վեհափառ կաթողիկոսին»:

Ազգային Բիւրոն արդէն գիտէր թէ որոնք են հայկական պահանջները: Մենք տեսանք նաեւ որ ան Ազգային Համագումարին առջեւ յայտնեւ էր թէ «Կ. Պոլսոյ հայոց պատրիարքն իր մէկ նամակով Բիւրոյին, դեռ ամիսներ առաջ, ընդգծեւ էր շարք մը նոր խնդիրներ, որոնցմով այժմ պետ է զբաղուել»:

Թէեւ մեր ձեռքը չունինք գրաւոր փաստ, բայց յայտնի է որ Գէորգ Կաթողիկոսին՝ փոխարքային ներկայացնելիք «հայկական պահանջներ»ը սերտօրէն կապուած են Կ. Պոլսոյ Պատրիարքին «շարք մը նոր խնդիրներուն հետ», եւ Ազգային Բիւրոն կարեւոր դատեր էր, ինչպէս կ'ըսէ վաւերադիրը, «ընդառաջ գալ եւ որոնց յաջող լուծման համար պետք չէ խնայել ոչ մէկ ջանք, ոչ մէկ գոհաբերութիւն»:

Բայց Գէորգ Կաթողիկոսը, որ սովորութիւն ունէր Հայկական Հարցի յաջող լուծման համար միշտ շարժելու եւ գործելու Կ. Պոլսոյ Պատրիարքին խորհուրդներով եւ թեկադրութիւններով, Օգոստոս 5ին (նոր տունարով՝ 18ին), ստորագրեց անիմաստ թուղթ մը ուղղուած Վորոնցով-Պաշկովին, որպէսզի «քարեացակամ» փոխարքան սիրալոյսով ընդունի նոր առաջարկները եւ ընդունիլ տայ անոր թիկունքին կանգնած ձարական կառավարութեան:

«Այժմ, կը գրէ ան, երբ իւրաքանչիւր ուս քաղաքացու մտքերը անհամբուստութեամբ հետեւում են դէպքերին, որոնք պահանջում են պետութիւնից ոյժերի եւ կամքի մեծ լարում, եւ երջանիկ եմ հաւաստ-

տիացնելու Ձերդ պայծառափայլութեանը որ հայ ժողովուրդը մոռնալով սեփական վերքից առաջ եկած ցաւի զգացմունքը, իր բոլոր մտքերը կեդրոնացրել է մեծ հայրենիքի վրայ, որի փառքի համար եւ ոգեւորութեամբ արձագանգ տուեց իր թագաւորի կողքին կատարել իր սուրբ պարտականութիւնը նորին կայսերական մեծութեան եւ հայրենիքի առաջ»:

Աւելորդ եւ անիմաստ հաւաստում. ձարին հպատակ հայերը անշուշտ պիտի կատարեն իրենց նիւթական պարտականութիւնները՝ կոտելով ոռուական գրօշին տակ, հասարակաց հայրենիքի պաշտպանութեան համար, ինչպէս սուլթանին հպատակ հայերն ալ «մոռնալով սեփական վերքից առաջ եկած ցաւի զգացմունքը», Օսմանեան գրօշին տակ, խղճմասանքով պիտի կատարեն իրենց պարտականութիւնը ի պաշտպանութիւն հասարակաց հայրենիքին, ինչպէս յայտարարել էին դաշնակցութեան ներկայացուցիչները՝ Երիտասարդ թուրքերու ներկայացուցիչներուն:

Բայց կաթողիկոսը ուղղակի շողորթութեան կը դիմէ, երբ մոռնալով թէ ինքը ընդհանուր հայութեան հոգեւոր պետն է, եւ ոչ մէկ իշխանութիւն ունի խօսելու թրքահայ ժողովուրդին անունով, քանի որ Թուրքիոյ Պատրիարքն է այդ ժողովուրդին կրօնական եւ քաղաքական պետը:

«Շն երջանիկ եմ յայտարարել Ձեզ, մեծարգոյ Կոմս, Կաթողիկոսը կը կցէր վերեւի տողերուն, նաեւ այն, որ սահմանից այն կողմը բնակւող հայ ժողովուրդը նոյնպէս անխախտ հաւատարիմ է մնացել անձնուիրութեան մէջ, մեծ ոռուսական պետութեան»:

Իրականութիւնն այն էր, որ սահմանէն անդին ապրող ժողովուրդը, դարերով անմոռնջ եւ անտեղեակ՝ ո՛չ իսկ լուր ունէր թէ իր Կաթողիկոսը այնքան թեթեւօրէն կը խաղար իր ճակատադրին դէմ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՐԴԱՐԱՑԻ ՎԱԽԸ

Մոռնալով այն ոգեւորութիւնը, որով քանի մը օր առաջ խօսեր էր Հայկական Հարցի լուծումին մասին, կատարուած ոռու կառավարութեան նախաձեռնութեամբ, ազգասէր Կաթողիկոսը այժմ սարսափէն զողալով կ'ըսէր. «Բայց ես, իբրեւ հովիւ իմ ժողովուրդի, չեմ կարող առանց յուզմունքի չյայտնել ձեզ, որ հայ ժողովուրդը Թիւրքիայում ստիպուած կը լինի ապրիլ շատ ծանր օրեր, եթէ միայն Ռուսաստանի ուշադրութիւնը դէպի հայկական ինկիլըր Բէկուզ ժամանակաւորապէս թուլանայ»:

Այս պաշտօնական նամակը նշանակալից է երկու տեսակէտներով:

Սուրէնեան Կաթողիկոսը մոռցեր էր, թէ ինքը իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս, լուի հոգեւորական խնդիրներու մէջ իրաւասութիւններ ունէր իր հօտին վրայ, եւ իրաւունք չունէր այդ հօտին անունով խօսելու Ռուսաստանի ձարին հետ, որուն քաղաքական իրաւասութեան ներքեւ էր գտնուել թրքահայ ժողովուրդը եւ այդ բոլոր Օսմանեան հայ հպատակները, որոնք ցրուած էին աշխարհին ամէն կողմը: Անոնց բոլորին միակ օրինաւոր ներկայացուցիչն էր՝ Կ. Պոլսոյ Պատրիարքը:

Երկրորդ, Կաթողիկոսը իր պաշտօնաթուղթով կ'ընդունէր թէ ինքը, իբրեւ հայ ժողովուրդի հովիւ, կը զգար թէ պատասխանատու է այդ հօտին գլուխին դալիք փորձանքներուն, եթէ ձարական կառավարութիւնը, այդ փորձանքները պատրաստողը, վայրկեան մը «իր ուշադրութիւնը թուլացնէ հայկական հարցին նկատմամբ»:

Իր արդարացի վախը այն էր, որ առանց երաշխիքի, թրքահայերը պիտի կոտորուէին:

Սուրէնեան Կաթողիկոսին նամակին մէջ որեւէ յայտնի խոստում չկայ ո՛չ կամաւորական զունդերու կազմութեան եւ ո՛չ ալ թրքահայերը ապստամբեցնելու թրքական բանակներուն թիկունքէն, ինչպէս կ'ուզէ հաւատացնել Լէօ պատմագիրը:

ՆՈՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԶՈՐՍ ԿԷՏԵՐՈՎ

Սուրէնեան Կաթողիկոսը, լսելով ազգային Բիւրոյի անդամներուն բերանէն թէ ոռու կառավարութեան բարձր պաշտօնեաները պատրաստակամութիւն ցոյց տուեր են Հայկական Հարցի լուծումը աւելի լայն հիմունքներու վրայ դնելու, ձեւակերպեր էր այդ հարցին նոր պահանջները, որոնց համար նամակազիր Կաթողիկոսը ուղղակի կ'ըսէր. - «Քանի դեռ թիւրքաց Հայաստանը Թիւրքիայի սահմաններումն է, ամբողջ հայ ժողովուրդի համար այդ ծանր հարցի վերջնական լուծման համար, իմ եւ ամբողջ հայ ժողովուրդի կարծիքով, պէտք է անել հետեւեալը. որ կազմուած է չորս նշանակալից կէտերէ. -

1. Կազմել հայկական վեց վիլայէթներից Անատոլիայում մի անբաժան նահանգ:
2. Այդ նահանգի կառավարիչ նշանակել բարձր տիտղոսով մի անձ, Ռուսաստանի ընտրութեամբ, դաւանութեամբ քրիստոնեայ:
3. Մտցնել այդ նահանգում լայն ներքին ինքնավարութիւն, ընտրողական հիմունքներով եւ հաւասար ներկայացուցչութեամբ քրիստոնեաների եւ մահմետականների:
4. Որպէսզի հայ ազգաբնակչութիւնը հաւատալ նոր կազմակերպութեանն ու իրաւակարգի կենսունակութեանը եւ հաստատութեանը,

ամբողջ ռեֆորմի գործադրութեան վերահսկողութիւնը յանձնել քա-
ցառապէս միայն Ռուսաստանի»:

Այս չորս կէտերը բաւական են, արեւուն պայծառ լոյսին պէս,
երեւան բերելու հայ ժողովուրդին դժբախտ ճակատագիրը ձեռք առած
քաղաքական գործիքներու միամիտ եւ դիւանագիտականօրէն տհաս
գործելակերպը, եւ այն շրջանին՝ երբ յղի էր մեծամեծ տակնուվրա-
յուլթիւններով, որոնք կը պահանջէին սուր քննադատական հոգի եւ
լուրջ խորաթափանց վերաբերմունք:

Ո՛Չ ՄԷԿ ԽՐԱՏ՝ ԱՆՑԵԱԼ ԴԱՍԵՐԷՆ

Թէեւ Լէօ պատմագիրը կը փափաքի որ «Էջմիածնի կաթողիկոսն
ուրիշ մի բան չդառնայ, բայց միայն մի վարագոյր, որի ետեւում
քաճկում էին իսկական ազգային գործիչները, «ազգայինջիւղները»,
ինչպէս հեզմաքար անւանում էին նրանց Կ. Պօլսում», սակայն եւ այն-
պէս ծանր նախատինք մըն էր այդ դատաստանը՝ նետուած Ամենայն
Հայոց Կաթողիկոսի ճակատին, որովհետեւ այդ պարագային ան ուրիշ
բանի չի նմանիր, բայց եթէ փայտի կտորի մը, խաղալիք դարձած այդ
իսկական ազգային գործիչներուն ձեռքը, որոնք իրենց կարգին՝ փոր-
ձանքներով լեցուն պատմական դասերէն ո՛չ մէկ օգուտ քաղած էին:

Սակայն, կար ահեղ դաս մը, որ պէտք էր անմոռանալի կերպով
գրոշմուած ըլլար Գէորգ Ե-րդ Կաթողիկոսին, Ջաւէն Պատրիարքին
եւ Մեսրոպ եպիսկոպոսի յիշողութեան մէջ: Անոնց աչքերուն առ-
ջեւ էր Էջմիածնի եւ Գուձ-Գաբուի դիւաններուն մէջ խնամքով պահ-
ուած սուլթանական ահաւոր յայտարարութիւնը՝ ուղղուած Աչքեան
Պատրիարքին:

Կարեւոր կը համարիմ նորէն հոս արտասուել այդ յայտարարու-
թեան հետեւեալ մասը. «...Արդ յառաջնում անդ աւուր յանդիման
լինելոց եմ առաջի կայսերական աթոռոյ,- կը գրէ Պատրիարքը Մա-
կար Կաթողիկոսին,- հրամայեաց ինձ սուլթանն արտմտեալ ջանս առ-
նել գամեմայն ի խափանումն այնց հրատարակութեանց եւ յայլում եւ
զնուագի ընդխօսել իւրում ընդ իս ի պալատան ի ձեռն անձնական
փարսուղարի իւրոյ յաւել ասել՝ թէ անհնարին է ինձ զիջանել տալ
զինքնօրէնութիւն գոր հայք երագեմ, եւ ոչ միայն ինձ՝ այլ եւ ամե-
նեցուն, որ զկնի իմ գալոց եմ սուլթան, նզովք դնեմ ի վերայ՝ չտալ
Հայոց այնպիսի ինչ, այլ մանաւանդ զքնքումն բովանդակ իսլամու-
թեան յերեսաց երկրի ուխտ դնեմ պատերազմի ընդդէմ անկախու-
թեան Հայոց»:

Արդ «զկնի գալոց սուլթանին» ո՛չ թէ անոր խամաճիկ յաջորդ
սուլթաններն էին, այլ Իթթիհատական կառավարութեան անազորոյն

նախարարները, որ «սուլթանին նզովքին» չարժանանալու համար,
ուխտեր էին բարբարոսական ամէն միջոցներով պատերազմիլ «ընդ-
դէմ Հայոց»:

«Կարմիր սուլթանը» անոնց կտակեր էր նաեւ այս զարհուրելի
նշանաբանը. «Հայկական Հարցի ջնջումը՝ հայ ժողովուրդի ջնջման
միջոցով»:

Եւ այս կտակը՝ առաջին օրէն իսկ, Երիտասարդ թուրքերու կա-
ռավարութեան վարիչներուն համար նուիրական ուխտ դառնալով,
զանոնք նետեր էր համարականութեան գիրկը, եւ ապա՝ Համիտին
պէս Գերմանիոյ գիրկը, որպէսզի անոր աջակցութեամբ կարենան այդ
բնաջնջումը լիովին գործադրել:

Քաղաքական տհասութիւնը դեռ աւելի աչքի կը զարնէ երբ Կա-
թողիկոսը եւ իր թիկունքին կանգնած Պատրիարքն ու Ազգային Բիւ-
րոյին ներկայացուցիչները հայկական վեց նահանգները ձարին պար-
զեւելով՝ զայն ծաղրական կը դարձնէին, քանի որ անոնք շատ լաւ
գիտէին որ իրենց առաջարկած «լայն պահանջները», այժմ իրական
արժէք չունէին, այլ կը վերաբերէին հեռաւոր ապագային, որովհե-
տեւ Կաթողիկոսը ինքն էր որ կցեր էր չորս կէտերուն հետեւեալ խօս-
քերը. «Վարչական վերոյիշեալ եղանակի կիրառումը հնարաւոր է
միայն ներկայ պատերազմի վերջանալուց յետոյ»:

Կը նշանակէր որ «ազգային գործիչ»ները գիտէին թէ թուրքեան
պիտի մտնէր այդ պատերազմին մէջ, պիտի ջախջախուէր Ռուսաս-
տանէն, որմէ յետոյ կարելի կ'ըլլար անջատել անկէ ամբողջ թրքա-
հայութիւնը:

Պարզ էր որ եթէ Ռուսաստանը յաղթական ըլլար, Կաթողիկոսին
նուէրին պէտք չկար. արդէն համեղ պատառը յաղթողին պիտի ըլ-
լար. իսկ եթէ պարտուէր՝ Իթթիհատական կառավարութիւնը հայերը
պիտի կլլէր:

ԻՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Թրքահայ ժողովուրդի ճակատագրին հետ թեթեւօրէն խողա-
ցող Սուրէնեան Կաթողիկոսը եւ իր խորհրդական գործիչները,
իրենց հրապարակային մանկական դիւանագիտութեան խաղերէն
մէկ բան միայն ստրված էին: Անոնք գիտէին թէ այդ դիւանագի-
տութեան երեսէն թրքահայ ժողովուրդը պիտի կոտորուի. միայն
չէին գիտէր - եւ այդ ալ իրենց կարճ յիշողութեան պատճառով -
թէ քանի մը ամիսներ յետոյ, Ռուս եւ Թուրք կառավարութիւնները
իրարու աջակից պիտի ըլլան թրքահայ ժողովուրդին բնաջնջումին
մէջ:

Հետեւաբար, խղճալով թրքահայ ժողովուրդին թափելիք անպարտ եւ անմեղ արեան վրայ, կաթողիկոսն ու իր խորհրդականները այդ նշանաւոր դիմումին տակ ձեւակերպեր էին նաեւ իրական պահանջներ, որոնց կարօտ էր թրքահայ ժողովուրդը ներկայի մէջ:

Եւ ան կը գրէր. «Թիւրքիայում յայտարարուած զօրահաւաքի առթիւ, նկատուում են յուզիչ նշաններ, որոնց շնորհիւ հայ ազգաբնակչութիւնը վախճնում է նորանոր դժբախտութիւններէր: Ուստի, ցանկալի է որ կայսերական կառավարութիւնը այժմ եւեթ խիստ պահանջ դնէ թիւրք կառավարութեան.

ա. անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, հայերի կեանքի եւ գոյքի պաշտպանութեան համար:

բ. որքան կարելի է շուտով, ընդհանուր վերատեսուչներին իրենց պաշտօնատեղիներն ուղարկել, տալով նրանց հնարաւորութիւն, առ այժմ մտցնել 1914ի Յունուար 26ի Փետրուար 8ի համաձայնութեամբ ընդունուած ռեֆորմը»:

Այս պահանջները ո՛չ միայն իրական չէին, այլ երազային. որ դարձեալ ցոյց կու տայ տարրական տրամաբանութեան պակասը: Ինչպէս տեսանք, արդէն զօրահաւաքը սկսել էր արտակարգ խստութեամբ եւ ամէնէն պարզամիտ մարդն ալ կը հասկնար թէ Թուրքիան պատերազմի կը պատրաստուէր եւ թէ զինակից պիտի ըլլար ո՛չ թէ Ռուսաստանի, հակառակ Գերմանիոյ, այլ զինակից Գերմանիոյ՝ հակառակ Ռուսաստանի: Եւ ասիկա լաւ գիտէին թէ՛ Կաթողիկոսը եւ թէ՛ Ազգային Բիրոյի ներկայացուցիչները, որոնք ապահովապէս կը կարգային հայ լրագիրները, յատկապէս «Մշակ» եւ «Հորիզոն» թերթերը, որոնք լեցուն էին ահաբեկիչ լուրերով, եւ ասոր համար է որ Կաթողիկոսը իր նամակին մէջ գրեւ էր «յուզիչ նշաններ», այսինքն վերահաս ջարդը:

Ռուս կառավարութիւնը շատ լաւ գիտէր թէ Թուրքիան Եւրոպային մէջ իր գոյութիւնը պահպանելու համար, Գերմանիոյ հետ պիտի ըլլար Ռուսաստանի դէմ, որ յաղթութեան պարագային, պիտի իւրացնէր Կ. Պոլիսը եւ նեղուցները, ինչպէս իրեն խոստացեր էին իր դաշնակիցները՝ Անգլիան եւ Ֆրանսան:

Ահա թէ ինչ կը գրէր անկողմնակալօրէն Ռուսական ծովային գլխաւոր պաշտօնաթերթը. —

«Չդատապարտեմք թիւրքերին թէ՛ նրանց քաղաքականութեան եւ թէ՛ նրանց պատերազմական պատրաստութիւնների համար: Չէ՞ որ թիւրքերն իրապէս տեղ չունէին գնալու՝ բայց միայն գերմանացիների մօտ, չնայած որ շատ հաւանական է որ նրանք տանու տան իրենց գործը: Միայն գերմանացիների, որոնք թիւրքիան իրենց գաղութն են դարձրել, որ նա մնայ Եւրոպայում եւ որ գլխաւորն է,

իր ձեռքերում մէջ ունենայ նեղուցները պահպանելու միակ յոյսը գերմանական գաղութ դառնալու վնասկանութիւնն է:

Կանգնեմք թիւրքերի տեղը եւ այն ժամանակ մենք, հարկաւ, կը հասկնամք որ նրանք չեն կարող ունենալ առանձնապէս մի ամուր հաւատ իրանց երկրամասերի «անձեռնմխելիութեան» վերաբերմամբ, այն ահագին համաշխարհային պատերազմի մէջ, եթէ նրանք խիստ չէզոքութիւն պահպանեն նրանում»: (Լէօ, հտ. Բ, էջ 109):

Պարզ է որ Ռուսաստանը եթէ ուզէր իսկ, կարող չէր հարկազրական միջոցներ գործածել իրեն թշնամի պետութեան մը վրայ, որ կը պատրաստուէր իր վրայ պատերազմ յայտարարել:

Տարօրինակն այն է, որ Գէորգ Կաթողիկոսը չկրցաւ հասկնալ այդ տարրական ճշմարտութիւնը, եւ իր դիմումը վերջացուց այս նշանաւոր խօսքերով. «Ամենախոնարհարար խնդրում եմ Ձերդ պայծառափայլութեան, առ ոտս արկանելով նորին կայսերական մեծութեան, մեր սիրեցեալ կայսեր, իմ եւ Ռուսաստանի ամբողջ հօտի հաւատարիմ հպատակութեան զգացմունքները, միջնորդել ամենաողորմած կայսեր առաջ թիւրքահայերի հովանաւորութեան եւ պաշտպանութեան եւ նրանց վիճակի հիմնական կարգաւորման վերաբերեալ յոյսերի իրագործման մասին»:

ՄԵԾ ԼԵՈՒԸ ԾՆԱԻ ՄՈՒԿՆ ԶՆԶԻՆ

Կարգալով կաթողիկոսական շողոմարար թուղթը, Վորոնցով-Դաչկով զուարճացաւ, հրճուեցաւ եւ տոանց բուպէ մը դեղեկելու, յայտարարեց թղթաբեր պատգամաւորին թէ ինքը «կ'ընդունի բոլոր պայմանները», լաւ գիտնալով թէ Ռուսիան ո՛չ մէկ միջոց ունի իրեն ռիսերիմ թշնամի պետութեան վրայ ճնշում բանեցնելու մեծ վտանգի ենթարկուած թրքահայութեան օգուտին համար:

Սորամանկ փոխարքան գիտէր նաեւ թէ Կաթողիկոսին չորս կէտերով պահանջներն ու թրքահայ ժողովուրդի կեանքի ապահովութեան համար ձեւակերպուած երկու կէտերն ալ, ո՛չ մէկ իրական արժէք ունին: Ուստի, ան անմիջապէս կաթողիկոսական գրութիւնը յատուկ պահարանով եւ սուրհանդակով զրկեց Պետերբուրգ: Այստեղ ալ, կառավարութեան բարձրագոյն շրջանակներուն մէջ, կաթողիկոսական նամակը նոյն իմաստով առնուեցաւ, ինչպէս որ հասկցիր էր փոխարքան:

Կաթողիկոսական թուղթին պատասխանը շուտով հասաւ: Եւ ահա, Սեպտեմբեր 2ին (նոր տոմարով 15ին), Վորոնցով-Դաչկով «Քաղցր պարտականութիւն» կը համարէր հաղորդել Գէորգ Ե. ի թէ ինքը կաթողիկոսական նամակը զրկեւ էր նախարարներու խորհուրդի

նախագահ՝ Գորեմիկիներն եւ այժմ ստացած է անոր պատասխանը, որուն մէջ ըստե՛ս է հետեւեալը. — «Ռուս կառավարութիւնը ո՛չ մէկ դէպքի մէջ, ո՛չ մէկ գիշում չ'ընեն հայկական հարցի հողին վրայ, այն մտքով որ ռեֆորմները Թուրքիոյ հայկական մահանգներու մէջ մտցնելու են ռուսաց սկզբնական ծրագրով եւ Ռուսաստանի քացառիկ վերահսկողութեան տակ»:

Այս քանի մը սեղմ եւ անորոշ տողերը, արձանագրուած «Նարընջագոյն» զիրքին մէջ, բաւական էին Սուրէնեան Կաթողիկոսին եւ Ազգային Բիւրոյի անդամներուն աչքերը բանալու ռուսական նենգամիտ զիւանագիտութեան վրայ: Ջարական կառավարութիւնը հանգիստը կերպով անխախտ կը մնար իր նախնական ծրագրերին վրայ, ինքնավարութեան խօսքն անգամ չ'ընելով, եւ կրկնելով անգամ մը եւս թէ հայկական բարենորոգումները պիտի մտցուին հայկական նահանգներուն մէջ «Ռուսաստանի քացառիկ վերահսկողութեան տակ»:

Ջարին նախարարապետը բոլորովին անտես ըրեր էր կաթողիկոսական թուղթին մէջ դրուած շորս կէտերը, ինչպէս նաեւ երկու կէտերը, որոնք կը վերաբերէին այն միջոցներուն, իբրեւ անհրաժեշտ պայմաններ, ապահովելու համար, ինչպէս կ'ըսէր կաթողիկոսական թուղթը, «վախենում է նորանոր դժբախտութիւններից»:

Ի պրոցական մանուկն անգամ զիւրութեամբ պիտի հասկնար թէ խորհրդաւոր բան մը ծածկուած է «Ռուսաստանի քացառիկ վերահսկողութեան» տակ, շատ անգամ կրկնուած նախադասութեան մէջ:

Այսպէս, հայոց եկեղեցական եւ աշխարհական ազգային գործիչներուն երազը, լեցուն հաւատքով եւ յոյսով, հայկական ինքնավարութեան վրայ, երեւակայուած իբր մեծ լեռ մը, կը ծնէր «մուկն չնչիւն»:

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԳԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Ջարական ծեր աղուէսը այնպէս մը զիւթեր էր Գէորգ Ե. Կաթողիկոսը եւ հայոց եկեղեցական եւ աշխարհական ազգային գործիչներուն վառ երեւակայութիւնը, որ պէտք անգամ զգացած էին խորհելու թէ ռուս կառավարութեան պետին պատասխանը՝ որոշ կերպով խմբագրուած ու պարզաբանուած է, եւ առանց բացատրութիւն պահանջելու փոխարքայէն, Գորեմիկիներն պատասխանը ընդունեցան իբրեւ ամենանպատաստուորը հայ ժողովուրդի տենչանքներուն, եւ իբրեւ երախտագիտութեան ցայտուն նշան մը՝ սկսան պատրաստութիւններ տեսնել կամաւորական գունդերը կազմակերպելու Կովկասի մէջ:

Ահա այդ կարեւոր փաստաթուղթը՝ կամաւորական գունդերու կազմութեան մասին. — «Միւնջ այդ, պաշտօնական գրութիւնները



Ճախտ պէյ

փոխանակում էին, Բիւրոյի նոյն լիազօրները վարում էին գործնական կարեւոր բանակցութիւններ տեղական բարձր իշխանութեան ներկայացուցիչների հետ այն խնդրի շուրջը՝ թէ ինչ կերպով կ'արտայայտուի հայերի օգնութիւնը ի դէպս պատերազմի Թիւրքիայի դէմ: Այդ բանակցութիւնների շնորհիւ կայացած համաձայնութեան, հայերը պիտի կազմակերպէին չորս կամաւորական խմբեր, որոնք պիտի գործէին պատերազմի դէպքում որոշ ծրագրով, ցոյց տրուած չորս ուղղութիւններով, այն է Սարիղամիշի, Կաղզուանի, Իգդիրի եւ Պարսկաստանի: Խմբերի ընդունուած կազմն սկզբում 2000 հոգի էր, յետոյ այդ թիւը հասցրեց 3000ի:

Դաով գնդերի կազմակերպութեան ծախքերին, պետք է ասել որ այդ ծախքերի փոքր մասը միայն տալիս էր կառավարութիւնը, իսկ խոշոր մասը հոգում է Բիւրոն... Ազգային Բիւրոն եւ նրա գործադիր մարմինը խմբերին վերաբերեալ ծախքերի խնդրով զբաղւելիս,

ի նկատի ունեցել են ո՛չ թե միայն խմբերի անմիջական կարիքները, այլ եւ այն բոլոր կարեւոր ծախքերը, որոնք կապուած են Թիւրքիայի դէմ սպասուելիք պատերազմի հետ: Դրանց մէջ առաջին տեղն է բըռնում ոռուսահայերի ներքին ինքնապաշտպանութեան խնդիրը Կովկասում, ապա գաղթականութեան խնդիրը, կոիւնների ընթացքում գոհ գնացած կամաւորների ընտանիքների ապահովութեան խնդիրը, ապագայում խմբերի լուծման ծախքերը, եւ այլն:

Այդ բոլոր կարիքները աչքի առաջ ունենալով, նաեւ ընդունելով որ պատերազմը կարող է շարունակել առ նուազն 10 ամիս, ազգային Բիւրոն կազմել էր իր ծախքերի մտաւորական նախահաշիւը, որ հասնում էր մէկ միլիոն երկու հարիւր հազար ռուբլի»: (Բիւրոյի արդէն յիշատակուած հաշուետուութեան մէջ, 1915, Լէօ, հտ. Բ, էջ 110-111):

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ազգային Բիւրոն տեսնելով թէ միայնակ չի՛ կրնար գլուխ հանել կամաւորական զունդերու կազմութիւնը, եւ անոնց ծախքերը հոգալու խոշոր ձեռնարկութիւնը, իր անդամներուն մէջէն կազմեր էր զինուորական կոչուած մարմին մը, որ «բաղկացած էր, ինչպէս կը գրէ Լէօ, բացառապէս դաշնակցականներից, որոնց անունները սակայն գաղտնի են պահում: Այդ մարմինն էր ամէն ինչ անում, կարգադրում էր ամէն բան, ստանում ու ծախսում էր բոլոր գումարները, իսկ Բիւրոն իսկապէս միայն դրամ էր հաւաքում եւ քանակցութիւններ վարում, ունենալով յատկապէս դրա համար չորս-հինգ հոգուց բաղկացած գործադիր մի մարմին, որ պարտաւոր էր հաշիւ տալ իր բոլոր գիծերի համար»:

ՎՈՐՈՆՑՈՎ-ԳԱԶԿՈՎԻ ԹՈՒՆԱԼԻՑ ՆԱՄԱԿԸ ԳԵՈՐԳ Ե.Ի

Կ'երևի թէ Ազգային Բիւրոյի անհանդարտ անդամներէն ոմանք, փոխարքայական պալատին մէջ տեղի ունեցած բանակցութեան միջոցին, յայտարարած ըլլան Վորոնցով-Գազկով կոմսին թէ կարելի է ոռուսական զէնքերով զինել Թրքահայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան համար, եւ «բարեացակամ» կոմսը այդ ինքնապաշտպանութիւնը հասկցած ըլլայ «ապստամբեցնել քրքահայ ժողովուրդը քրքական գործերու քիկունքէն»: Լէօ պատմագիրն ալ այդպէս ուզեր է հասկնայ, գրելով. - «բայց այս մասին, հասկնալի պատճառներով, հրապարակային յիշատակութիւն չէր ըլլար, որովհետեւ երկու

կողմերն ալ, թէ՛ փոխարքան եւ թէ՛ Բիւրոն, անշուշտ զգացել են որ մի գարեհուրքի ոնիր է... եւ այս պատճառով աշխատել են ծածուկ պահել այն: Գրաւոր որոշ յիշատակութիւն չկայ այս մասին բանակցութիւններին մէջ, բայց դիւրահասկնալի ակնարկներ մենք գտնում ենք Սեպտ. 2ի թղթին մէջ, որով Վորոնցով-Գազկովը յայտնում էր Գորովիկինի պատասխանը Գեորգ կաթողիկոսին»:

Ահա թէ ինչ գրուած է այդտեղ. -

«Միևսուրների խորհրդի վերեւ դրուած հաւաստիացման շնորհիւ, բոլորովին համոզուած լինելով հայերի յաջող խնդիրների լուծման մէջ, ես պարտք եմ համարում այնուամենայնիւ նախագգուշացնել Ձեզ որ թէ՛ մեր կողմերի եւ թէ՛ սահմանի միւս կողմերի հայերի գործողութիւնները ներկայ դէպքում պէտք է խստիւ համաձայնեցուած լինի իմ ցուցմունքների հետ, որովհետեւ Թիւրքիայի եւ Ռուսաստանի միջեւ ներկայումս տիրող լարուածութեան պատճառով ընդհանուր էադաֆական տեսակետից, որ բաժանում են եւ մեր դաշնակից պետութիւնները: Շատ կարեւոր է, որ Թիւրքիայի դէմ պատերազմի առիթ տայ իմքը Թիւրքիան, եւ ո՛չ թէ որեւէ գործողութիւններ մեր կողմից, ուստի շատ անցանկանալի կը լինէր եւ նոյնիսկ վտանգաւոր առաջ քերել ո՛րեւէ ապստամբութիւն քիւրքահայերի մէջ:

Միեւնոյն ժամանակ ես խոնարհաբար խնդրում եմ Ձերդ սրբութեանը՝ վերոյիշեալ նկատումներից դրդուած՝ գործ դնել Ձեր բարձր հեղինակաւոր ազդեցութիւնը Ձեր հօտի վրայ այն մտքով, որ մեր հայերը սահմանի միւս կողմի հայերի հետ պատրաստ լինեն ինչպէս այժմ, Թիւրքիայի անորոշ դրութեան միջոցին, այնպէս էլ ապագայում, ի դէպս մեր պատերազմի նրա հետ, կատարել այն յանձնարարութիւնները, որ ես, ըստ ժամանակի պահանջման, կարեւոր կը համարեմ եւ կ'առաջարկեմ նրանց ի կատար ածել» (Տե՛ս ԼէՕ, հտ. Բ, էջ 112):

Այստեղ է ահա, որ երեւան կու դայ Կովկասի փոխարքայի նամակին թուանալից լեզուն: Ան ալ Իթթիհատական կառավարութեան չափ շատ լաւ գիտէր թէ այդպիսի ապստամբութիւն մը անհնարին բան էր, քանի որ Թրքահայ ժողովուրդը թոյլ, անպաշտպան եւ անզէն է: Բայց փոխարքան, որ կը տեսնէր արդէն Թրքահայաստանի ծաղկալից դաշտերը՝ ամայացած հայերու անպարտ ու անմեղ արիւնով ծածկուած եւ ոռուսական նահանգի մը վերածուած, եւ միւս կողմէ լաւ գիտնալով որ հայ զիւանազէտներն ու հայ մամուլը զիւանազիտական գաղտնիք չունի, արդար ինքնապաշտպանութեան փոխարէն՝ դրեր էր «ապստամբութիւն» բառը, որպէսզի Իթթիհատական անողորմ կառավարութեան ձեռքին մէջ ամենազօրաւոր գէնք մը տայ, արդարացնելու համար իր գործադրելիք մեծ ուժերը: Այնչափ դարձանալու է «բարեացակամ» կոմսին, Թրքահայութեան ոխերիմ թշնամի,

իր թունալից նետերուն մէջ, որչափ զարմանալի հայ պատմագրին՝ Լէօին, որ հաւատարիմ վերէն ստացած հրամանին, կը հաւատայ այդ ապստամբութեան, որ երբեք տեղի ունեցած չէ, ինչպէս իր տեղին պիտի ապացուցանենք վաւերական լեզուով, եւ իրաւունք կու տայ Իթթիհատի կառավարութեան անոր հայաջինջ քաղաքականութիւնը արդարացնելու համար, ամէն պատասխանատուութիւն բարդելով Դաշնակցական Կուսակցութեան վրայ:

Այդ հայ գրիչը, հիմնուելով Վորոնցով-Դաշկովի նամակին հետեւեալ տողերուն վրայ. «ուստի շատ անցանկանալի կը լինէր եւ նոյնիսկ վտանգաւոր առաջ բերել որեւէ ապստամբութիւն թիւրքահայերի մէջ», եւ «մեր հայերը սահմանի միւս կողմի հայերի հետ պատրաստ լինեն ինչպէս այժմ, Թիւրքիայի անորոշ դրութեան միջոցին, այնպէս էլ ապագայում, ի դէպս մեր պատերազմի նրա հետ, կատարել այն յանձնարարութիւնները, որ ես, ըստ ժամանակի պահանջման, կարեւոր կը համարեմ ու կ'առաջարկեմ նրանց ի կատար անել», գրելով այսպիսի անարդար տողեր:

«Այստեղ է ահա, որ ստորագրում էր ամբողջ թիւրքահայութեան մահուան դատավճիռը: Դեռ 38 տարի առաջ էր որ արտասանեցին այն խօսքերը թէ այն անգէն ցաֆ ու ցրիւ ժողովուրդը պիտի ապստամբի ազգային անկախութիւն ձեռք բերելու համար: Այնուհետեւ, այդ միեւնոյն ապստամբութիւնը պաշտամունք դարձաւ հայ յեղափոխական կազմակերպութիւնների համար, եւ թրքական եաթաղանն աջ ու ձախ խցում էր այդ ժողովուրդը: Կարելի էր մի րոպէ թոյլ տալ թէ չէին հասկանում յախուռն ապստամբութեան քարոզչները թէ ի՛նչ են անում եւ ինչ դուրս կը գայ իրենց արածից: Բայց չհասկնալ եւ այժմ, երբ Թուրքիան կեանքի եւ մահուան պատերազմ էր սկսում լարելով իր բոլոր ոյժերը, իր ամբողջ կարողութիւնը եւ ապստամբութիւն կազմակերպել, ներքին ռազմականատներ յարդարել, դնել երկիրը պաշտպանող զօրքերը երկու կրակի մէջ: Կարո՞ղ է լինել երկրագունդի վրայ մի պետութիւն որ թոյլ տայ իր տան մէջ հրդեհ ծագի այն ժամանակ՝ երբ դրսի ահաւոր թշնամիին կանգնած է շէմքի վրայ: Չհասկցան որ Թուրքիան բացառութիւն չպիտի կազմէր ընդհանուր կարգի մէջ: Չհասկցան որ եթէ Թիւրքիայի եւ 1871 թ. փարիզեան կոմունան ճնշող Ֆրանսայի միջեւ տարբերութիւն կարելի էր գտնել, այդ միայն այն էր որ թրքական գազանութիւններն աւելի հրէշային էին քան ֆրանսիական գազանութիւնները:

Հայերը նոր չպիտի իմանան այդ...:

Այս յիմար անհասկցողութեան առաջ է ահա որ սուկումով պիտի կանգ առնի պատմագիրը, երբ սկսի հետազօտել թէ ինչպէս մորթուեցին եւ ջնջուեցին մի միլիոնի չափ անգէն եւ անպաշտպան մարդիկ: Նրա գարիւտամեք պիտի բազմապատկուի, երբ տեսնէ որ մի փոքրիկ

ու չնչին խումբ «ազգասէր»ներն էին այդ միլիոնաւոր բազմութիւնը ոնրապարտ թեթեւամտութեամբ, առանց պայմանի ու երաշխիքների, մատուցանում իրենց «բարեացակամ» մողոքին, այդ փոխարեւայ կոմսին: Ճիշտ է հայ ժողովուրդի այդ իսկական դահիճները ամէն կերպ բախցնում էին, ուրանում էին իրենց յանձնարարութիւնը ապստամբեցնելու թրքահայերին, բայց մեծ է իր տեղում անթիւ փաստերով կ'ապացուցանենք որ այդ յանձնարարութիւնը եղել է եւ թրքահայերի ոչնչացումը հետեւանք էր հենց այդ յանձնարարութեան:

Եւ այս բոլորը, նորից հաշուեցէք, ի՞նչի համար, ի՞նչ իրական շահի» (ԼէՕ, հտ. Բ, էջ 112-113):

Մենք արդէն, իր տեղին, անհերքելի փաստերով ապացուցած ենք, եւ զարձեալ անթիւ փաստերով պիտի ապացուցանենք թէ՛ «մի միլիոնի չափ մողոքուած ու ջնջուած անգէն մարդիկ», յաւիտենական զոհերն են ո՛չ թէ՛ «մի փոքրիկ ու չնչին խումբ ազգասէրների», այլ եւրոպական նենգամիտ դիւանագիտութեան, որ ստեղծեց «հայկական հարցը» եւ զինեց թրքական բազուկը:

Ճիշտ է, որ խումբ մը ազգասէրներ, որոնց մէջ կային ռուսասէր «իմտելիկեցիայի» թէ՛ կուսակցական եւ թէ՛ «քուրժուայ», գլուխ ունենալով ձարապաշտ եւ պարզամիտ կաթողիկոս մը, չափազանց շատ առիթներ եւ պատրուակներ մատրուակեցին իթթիհատական խորամանկ եւ ազգայնամոլ կառավարութեան, բայց ի վերջոյ՝ եւրոպական մեծ պետութիւններն են որ առաջին օրէն մինչեւ վերջ, Հայկական Հարցը ձեռքերնին առած՝ աշխատեցան իրենց քաղաքական շահերը յաջողեցնելու, եւ այսպիսով՝ ամբողջ թրքահայ ժողովուրդի արիւնը վաճառքի հանեց:

Ասկէ դուրս, ո՛րեւէ պատճառաբանութիւն քաշքշուք է:

ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՉԿՈՎ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Կովկասի փոխարքային դաւաճանութեան վերջին զօրծն եղաւ, ստեղծել քաղաքականութիւն մը, որուն զոհերն ըլլային Թուրքիոյ Դաշնակցականները:

Մենք արդէն գիտենք, որ Դաշնակցութիւնը ձարականութեան անհաշտ թշնամին էր, ինչպէս էին գրեթէ բոլոր ռուս մտաւորականները, եւ անոնց պէս նպատակ ունէր կործանել ձարականութիւնը եւ անոր տեղ՝ երկրին մէջ հրատարակել սահմանադրական ազատութիւնը:

Ձարական կառավարութեան բոլոր մեծ ու փոքր պաշտօնեաները, որոնց գլուխը՝ Վորոնցով-Դաշկով, Դաշնակցութեան դէմ սխուժ լեցուած էին, եւ ասոր համար կատաղի հալածանք մը սկսիր էր

ուսաստաններուն դէմ, փակելով հայ դպրոցները, արգելելով հայ լեզուն, գրաւելով հայ եկեղեցւոյ կալուածները, որպէսզի հայ դպրոցները դրամական նպաստ չստանան, եւ այդ միջոցներով, տակաւ առ տակաւ ուսացնել Հայ ժողովուրդը եւ գայն ի վերջոյ նետել օրթոտօքս եկեղեցիին գիրկը:

Մենք տեսանք արդէն որ ճարական կառավարութիւնը, տեսնելով ազգայնական գաղափարներով տողորուած Դաշնակցութեան բռնած թշնամական ընթացքը ճարական քաղաքականութեան դէմ, Ռուս կառավարութիւնը գաղտնի կերպով գրգռեր ու գիններ էր թափարները՝ անոնց ձեռքով կոտորել տուեր էր հայերը, եւ Դաշնակցականները, ինքնապաշտպանութեան առողջ բնազդէն մղուած՝ փառաւոր դաս մը տուեր էին թափարներուն, անգործադրելի դարձնելով ճարական կառավարութեան ճիգերը:

Մենք տեսանք որ Ռուս կառավարութիւնը, տեսնելով Դաշնակցութեան գործադրած ահարկչական սպանութիւնները կառավարական հայակեր բարձրաստիճան պաշտօնեաներուն դէմ, զանոնք խմբովին բանտ նետեր էր: Արդարեւ, անոնք դատապարտուեցան ո՛չ թէ իբր «ախարհկիչներ» եւ կամ թափարներ ջարդողներ, այլ իբր «ազգայնական-յեղափոխական կազմակերպութիւն», որուն նպատակն էր կործանել ճարականութիւնը:

Ճարական ծիր աղուէնը տակաին չէր մոռցած Թուրքիոյ Դաշնակցականներուն՝ ճարականներուն գլխուն թափած կծու նախատինքը Թուրքիոյ մէջ «սահմանադրական ազատութիւններ», իսկ Ռուսաստանի մէջ «ամենարարարոս բռնակալութիւն»:

Բայց որովհետեւ քաղաքականութեան մէջ սէր եւ ոխ բառեր գոյութիւն չունին, այլ շահ եւ օգուտ, որով այսօրուան ատածը՝ վազը կը պաշտէ, Դաշնակցութենէն «հրէշ» յորջորջուած փոխարքան՝ նկատի առնելով ուսական շահերը, վճռեց Ռուսաստանի Դաշնակցականներուն սիրտը գրաւել եւ անոնց միջոցով՝ վճռեց շահիլ Թուրքիոյ Դաշնակցականները, որոնց գործակցութիւնը անհրաժեշտ կը նկատէր ճարական քաղաքականութեան յաջողութեան համար:

Թէեւ կամաւորական գունդերու կազմութիւնը որոշուած էր թուղթի վրայ, բայց այդ նշանակութիւն չունէր. պէտք էր սիրաշահիլ Հայ Յեղափոխական - Հայդուկային կազմակերպութիւնները, որոնցմէ աչքի զարնողն էր Դաշնակցական խումբեր, իբրեւ մեծ գինուորական կազմակերպութիւն:

Փոխարքան գիտէր որ Դաշնակցական եւ ոչ - Դաշնակցական հայդուկային գունդերը կաթիլ մը ջուր էին ուսական միլիոնաւոր բանակներուն մէջ: Բայց իր բուն նպատակն էր Թուրքիոյ Դաշնակցականները թշնամացնել Երիտասարդ Թուրքերուն հետ, որոնք հակառակ էրգրումի համագումարին՝ զանոնք կը նկատէին իրենց

դաշնակիցները եւ բարեկամները, - ու զանոնք բաժնելով իրիրհետաւան կառավարութենէն՝ նետել ճարականութեան գիրկը:

Բայց քանի որ ճարական կառավարութիւնը թշնամի էր Դաշնակցութեան, Երիտասարդ Թուրքերը անվստահութեան պատճառ մը պիտի չունենային իրենց դաշնակիցներուն հանդէպ: Որով ուսութեան պատերազմի մը պարագային, կարող պիտի ըլլային զսպել իրիրհետաւան կառավարութեան վրէժի կատաղութիւնը ընդդէմ թրքահայ ժողովուրդին: Ուստի, անհրաժեշտ հարկ մըն էր կայսերական ներումի արժանացնել 1912ի դատապարտութեան հետեւանքով դատապարտուած բազմաթիւ Դաշնակցական գործիչներ, որոնք կը գտնուէին կամ սիպերիոյ աքսորավայրերու, կամ բանտերու մէջ եւ կամ փախեր էին արտասահման:

ԳԷՈՐԳ Ե.Ի ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳԻՄՈՒՄԸ՝ ՎՈՐՈՆՅՈՎ-ԴԱԶԿՈՎԻՆ

Թէեւ գրաւոր փաստ չկայ, բայց չենք սխալիր եթէ ըսենք որ փոխարքայական պալատին մէջ տեղի ունեցած բանակցութեան միջոցին, Վորոնցով-Դաշկով Ազգային Բիւրոյի լիազօրներուն ներքին-չաժ ըլլայ դատապարտուած Դաշնակցականներուն կայսերական ներում շնորհելու գաղափարը, անշուշտ առաջուց ճարին հաւանութիւնը ստանալէ ետք:

Փոխարքան ոգեւորուած էր այն յայտարարութեամբ, որ բանակցութեան ընթացքին ըրեր էր բժիշկ Զաւրբեանը, որ ինչպէս կ'ըսէ Լէօ, «Դաշնակցութեան Բիզմարքն» էր, եւ որ «խոստանում էր կամաւորական խմբի կազմել հայերից, զինելով եւ պահպանելով նրանց հայ հասարակութեան հաշիւով»:

Թէեւ Զաւրբեան դաշնակցական էր, բայց միանգամայն ծայրայեղ ուսաստէր էր, հայ լեզուն գրեթէ չէր գիտեր եւ թրքահայաստանի աշխարհագրական դիրքին եւ թրքահայ ժողովուրդին կացութեան վրայ գաղափար անգամ չունէր, ինչպէս չունէին բազմաթիւ կովկասահայ «մտաւորական գործիչներ»:

Հայրենասէր եւ ազգասէր Կաթողիկոսը, զիտնալով բազմաթիւ անմեղ դաշնակցականներու անիրաւ տեղ բանտի եւ կապանքի արժանացած ըլլալը, ճարական ներումի խօսքը լսելուն պէս, խանդավառուեցաւ եւ երկարաշունչ գրաւոր գիմում մը ուղղեց «բարեացակամ» կումսին: Ահաւասիկ.-

«Ինձ, իբրեւ ծայրագոյն հոգեւոր հօր բոլոր հայերի, կը գրէր կաթողիկոսը, բազմիցս դիմում եմ շատերն իմ հօտից աղերսելով խնդրել անսպառ գթութեան աղբիւր մեր պաշտելի միապետից՝ Բեքեւացում իրենց բազմաթիւ ազգականների, որոնք իրանց վրայ եմ

դարձրել եւ դարձնում են օրէնքի պատիժը «Դաշնակցութիւն» ընկերակցութեան մէջ մասնակցելուն համար, մի բան որ պատժում է տաժանակիր աշխատանքներով եւ ախորով»:

Պէտք էր որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը փառաբանէր «Հայոց մեծ հայրենիքը Ռուսաստանը», որպէսզի ցոյց տայ թէ բոլոր հայերը անխտիր կապուած են այդ հայրենիքին:

«Դրանից աւելին. միայն նրա, իբրեւ մեծ քրիստոնեայ պետութեան հօր պաշտպանի շնորհիւ, հայերը երկգլխանի Արծիւի հովանու տակ մտան, դարբերով թրփական լծի տակ տանջուելուց յետոյ. կոչուելով ռուսական բանակի դրօշակների տակ, պատերազմելու համար Թիւրքիայի դէմ, հայերը, գեներալիների եւ հասարակ շարքային զինուորների դերում, սովորեցին կոռուել իրենց հարստահարողների եւ քրիստոնէութեան վաղեմի թշնամիների դէմ. հայ ամենից շատ սիրուած գրողները կանչում էին ժողովուրդը հայրենասիրական մեծագործութիւնների իրենց մեծ հայրենիքի Ռուսաստանի եւ թրփական լուծի դէմ կոռուելու համար: Այս գագաթնակետի մէջ դաստիարակուած հայ երիտասարդութիւնը հիմնեց «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը:

Բնական էր որ Գեորգ կաթողիկոսը շողմոքէր նորին պայծառափայլութիւնը, «հայ ժողովուրդի ճշմարիտ ձգտումների մեկնաբանիչ», որ «վերականգնեւ էր նրա անունը կայսերական կառավարութեան առաջ» (*խօսքերը կաթողիկոսին են*):

«Բայց դրանից յետոյ, կը գրէ նա, երկար տարիներ ռուսաց քազաւորների Գալիտնի տակ բարօրութիւնը վայելելուց յետոյ, հայերի համար եկան ծանր տարիներ, որոնք անմիջապէս նախորդում էին Ջերդ Պայծառափայլութեան փոխարքայութեան փառաւոր դարաշրջանին: Ջերդ պայծառափայլութեան, բան ում եւ մէկին, յայտնի են այն ծանր վիրատարանքները, որոնք հասցւում էին հայոց եկեղեցուն, որի դարաւոր իրաւունքների համար ոտի կանգնեց հայ ժողովուրդը, հնագոյնը քրիստոնեայ ժողովուրդներից: Բայց մեր երջանկութեան համար էր որ թագաւորի կամով Ջերդ Պայծառափայլութիւնը կոչւեց կառավարելու Կովկասը եւ յիշատակուած միջոցները, որոնք յուզում էին հայ ժողովուրդը, եւ նրա ազգային կուսակցութեան՝ «Դաշնակցութիւն»ը ջնջուեցին»:

Դառնալով հայ-թաթարական ահեղ կոիւնրուն, կաթողիկոսը կը գործածէր արդար եւ ազդու լեզու մը, պանծացնելով ինքնավարութեան սկզբունքը եւ դատապարտելով ռուսական կողմնակալ տտեանը, որ շատ մը անմեղ մարդիկ ենթարկեւ էր բարոյական եւ նրւթական վնասներու:

«Այս ժամանակի միջոցին անմիջապէս հետեւեցին խռովութիւնը եւ հայ-թրփական ընդհարումները: Այս արիւնահեղ ընդհարումների

մէջ, «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը շարունակում էր իր ազգային դերը: Ջերդ Պայծառափայլութեան յայտնի է որ ինքնապաշտպանութիւնը ինկաւ այս ընկերակցութեան ուսերի վրայ:

Ընդհարման տարիներում ոչ մէկի մտով անգամ չէր անցնում որ Դաշնակցութեան ինքնապաշտպանութեան հողի վրայ տարած աշխատանքը կ'ունենար ռեւ ընդհանուր բան հակապետական դիտաւորութիւնների հետ: Ամբողջ Կովկասին յայտնի էր որ ինքնապաշտպանութեան հողի վրայ այս կուսակցութեան ցոյց տուած աշակցութիւնը ապօրինի գործունէութիւն չէ եւ ոչինչ գաղտնիք դրանից չէր շինում:

Դաշնակցութեան մեծ դատաստանական գործով որ բնւում էր 1911 թ. Պետերբուրգում, կառավարիչ Սենատի առանձին տտեանում, հայերից շատերը ենթարկուեցին շատ թէ քիչ ծանր պատիժների, չնայած որ բնւութիւնը, ինչպէս պարզուեց աշկարա, բնւիչը տարել էր վերին աստիճան կողմնակալ եւ անկանոն կերպով, որի հետեւանով շատ անմեղ մարդիկ ծանր բարոյական եւ նրւթական վնաս կրեցին: Եթէ լինէր բարեխիղճ վերաբերումն դէպի գործը, բնւիչը չէր կայանաւորի հայերին հարիւրներով, որոնք որպէս թէ ձեռք են բարձրացրել պետական կազմի հիմունքների վրայ»,...

Սուրէնեան Կաթողիկոսը մատը կը դնէր կենսական հարցի մը վրայ, թէ ինչ նպատակով Դաշնակցութիւնը կազմուած էր: Ան պիտի հետապնդէր Պերլինի ճՅրդ յօդուածին դրութիւնը: Բայց բան մը չ'ըսեւ թէ Դաշնակցութիւնը հրաժարած էր հանդիսաւոր կերպով այդ դաշինքի գործադրութեան, քանի որ Թուրքիոյ մէջ հաստատուեւ էին սահմանադրական կարգեր: Լուռ է նաեւ այն կէտին վրայ որով ինքը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, գործիք դառնալով ձարական նենգաւոր դիւանագիտութեան ձեռքը, վերակենդանացուցեւ էր այդ մահաբոյր ուրուականը:

«Հողը, որի վրայ ծնունդ աւաւ «Դաշնակցութիւն» ընկերակցութիւնը, այն անցքերն էին, որոնք հետեւեցին ազատարար պատերազմին, երբ ազատարար ձարի ձեռնով հայերի համար ստացուած Սան Ստեփանոյի դաշնագրութեամբ՝ 16րդ յօդուածը փոխարինեց Բերլինի դաշնագրի անրովանդակ ճՅրդ յօդուածով, եւ հայերը նորից քիւրքերի կամայականութեան յանձնուեցին: Ահա հենց այն ժամանակ առաջ եկան ռուսահայերի մէջ ընկերակցութիւններ, որոնք նպատակ ունէին թեթեւացնել սահմանի միւս կողմի իրենց եղբայրների վիճակը»:

Շատ նշանակալից է կաթողիկոսական փաստաթուղթին այն մասը, որ կը վերաբերի Ռուսաստանի ներքին խռովութեան: Եւ աւելի նշանակալից է այն կէտը, որմէ կ'իմանանք թէ Դաշնակցական կուսակցութեան մէջ սարգեւր-մտեր էին բազմաթիւ տաքալուխ եւ սինկորո մարդիկ, որոնք կը շեղէին Դաշնակցական Կուսակցութեան ուղղու»

թենէն, գործելով անոր ուղեցոյցին հակառակ: Այս կէտը շատ կարեւոր է հասկնալու համար թէ ինչու՞ այժմու պատմական ըրակէին՝ Դաշնակցութեան մէջ տեսակ մը հերձուած մտեր էր:

«Բայց նակատագրին հանելի եղաւ որ հայ-քրքական ընդհարումներին զուգահիսէր Ռուսաստանի ներքին խռովութիւնը: Հայերը, որոնք միշտ ուշի ուշով են վերաբերուել ռուսական լաւին էլ, վատին էլ, խորապէս վերապրում էին այն ցնցումները, որոնք ռուսաց երկրի վրայ թափուեցին: Նրա երիտասարդութեան անհանգիստ տարրերը, որոնք մտնում էին եւ Դաշնակցութեան մէջ, չէին կարող չվարակել որոշ աստիճանով ռուսական յեղափոխութեան գաղափարներով: Եւ ահա, հայկական դաշնակցութեան ազգային հունին մէջ սկսեցին Ռուսաստանից թափուել նրա բնութեան օտար արիւնքներ, հակալատարական ագիտացիայի, որին հակամարտում էին կազմակերպութեան հիմնական տարրերը, հայերը գեներ ձեռքին պաշտպանում էին իրանց կեանքն ու ստացուածքը, եւ ինքնապաշտպանութիւնը միացրեց բոլոր հայերին:

Օգտուելով այն բանից որ անմեղ ինքնապաշտպանութիւնը կարելի է ներկայացնել իբրեւ հակապետական «Դաշնակցութիւն», նրանք ձեռք էին բերում հին փաստաթղթեր, որոնք վերաբերում են ինքնապաշտպանութեան, հաւաքում էին ազգականներից, եւ տակամեծերից սուտ վկաներ, եւ ստեղծում էին մեղադրանքներ:

Այսպիսով հեռացում են գիւղական տանուտիրութեան մրցակիցները, հողային կտորներ են ձեռք բերում, ազատում են պարտքեր հատուցանելուց... ահաբեկելով պատուաւոր մարդկանց, որոնք 1905-1906ի թւերին ղեկավարել էին ինքնապաշտպանութիւնը, եւ շատ յանախ մեղադրանքները հակապետական ընկերակցութեան մասնակցելու մասին կառուցուած են լինում հէնց այսպիսի հողի վրայ: Բացայայտ է որ այս գործունէութիւնը պարզապէս վնասակար է ռուսաց պետական շահերի համար եւ հակասում է խաղաղեցման, սիրոյ եւ դէպի ժողովուրդն ունեցած վստահութեան Ձեր իմաստուն քաղաքականութեան: Ի հարկէ կառավարութիւնը պիտի հալածէր վնասակար մարդկանց օրէնքի ամբողջ խտութեամբ, բայց պէտք է տարբերել նրանից խռովութեան անմասնակից մարդկանց եւ այնպիսիներին, որոնք մասնակցութիւն էին ունեցել ինքնապաշտպանութեան մէջ լիագործած լինելով այդ բանի համար ազգաբնակչութեան կողմից»:

Կաթողիկոսը, մտնելով իր բուն նիւթին մէջ, որ է Օգոստոսփառ միապետի զթաւարտութիւնը հայցել անոնց համար, որոնք օրէնքներու հակառակող գործեր կատարեր եւ արդէն «զղջացեր են», իսկ «անմեղները արդարութիւն կը պահանջեն»:

Ան կը գրէ. - «1905 թուից անցել է 9 տարի. մարդիկ, որոնք այդ տարիներին կատարել են օրէնքներին հակառակող գործեր, արդէն

կարողացել են գղջալ, եւ անմեղ վնասուածները նեղում են եւ աղանում արդարութեան մասին:

Եւ նրանք բոլորը յոյս ունեն Օգոստոսփառ միապետի գրասրտութեան վրայ: Այս յոյսերը նրանց մէջ ուժեղացել են մանաւանդ այն ժամանակից, երբ մեր կառավարութեան ջանքերով եւ հոգացողութիւններով յայտարարուած են Թիւրքիայում բեֆորմներ հայերի համար, որոնք սկզբնական նպատակ էին «Դաշնակցութիւն» կազմակերպութեան համար:

Եւ ահա այժմ, ինչ որ իմում են դատապարտուածների, փախածների, կալանաւորածների ընտանիքները եւ անընդատ խնդրում են վշտաբեկ՝ լինել Ձերդ պայծառափայլութեան միջոցով ամենաողորմած թագաւորի առաջ եւ խնդրել նրանց համար թոյլտուութիւն՝ վերադարձնել նրանց ընտանիքներին: Նրանք վաղուց արդէն գղջացել են իրենց կամայ եւ ակամայ մեղքերը եւ միշտ կը լինեն նորին կայսերական մեծութեան ամենահաւատարիմ հպատակները»:

Գէորդ Կաթողիկոսին սէրը դէպի դատապարտուածները այնքան ուժեղ է որ անդրադարձած չէ թէ հակասութեան մէջ ինչկեր է:

«Անմեղ վնասուածները» ի՞նչ պէտք ունէին զղջալու «իրենց կամայ եւ ակամայ մեղքերուն վրայ»: Այսպիսի զղջում մը տեղի կ'ունենային միայն գաղտնի խոստովանութեան մը մէջ, եւ ոչ թէ հրապարակաւ: Այսպիսի աղաչաւոր լեզու մը կը ստորնացնէ այդ անմեղ մարդիկը, որքան արժանի չէին այդ նախատինքին:

Այդ առիթով՝ Գէորդ Կաթողիկոսը լորձնաշուրթին փառաբանութիւնը կը հասցնէ իր գագաթնակէտին: Ան ինքզինքը նուաստացնելով՝ կը խոնարհէր «առ ոտս պաշտելի միապետին», որ մինչեւ այդ օրը միայն չարիք ըրեր էր ուստահայ ժողովուրդին. իսկ թրքահայ ժողովուրդն ալ կոտորել տուեր էր «կարմիր սուլթանին» ձեռքով:

«Ձերդ պայծառափայլութիւնը, մեծայարգ կոմս, - կը գրէր անդուր Ձեր երկարատեւ ծառայութեան ընթացքում՝ Կովկասում, համոզել էք թէ ո՞րքան երախտագիտութեամբ եւ հաւատարմութեամբ դէպի ռուսական թագաւորները լցւած են իմ ժողովրդի սրտերը, որպիսի սիրով են վերաբերում Ռուսաստանին:

Իմ անունից եւ հայ ժողովրդի անունից խնդրում եմ արկանել առ ոտս պաշտելի միապետի հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ: Ապաւինելով ցարական ողորմածութեան, թոյլ եմ տալիս ինչ միջնորդել, որ Ձերդ պայծառափայլութիւնը հայցող լինի Օգոստոսփառ միապետի առաջ եւ առ ոտս արկանել նորին կայսերական մեծութեան ամենահպատակ պաղատանքս ներում շնորհելու «Դաշնակցութիւն» ընկերակցութեան մէջ 1905-1906-1907 թւականներին մասնակցելու համար դատապարտուածների, թոյլ տալու այն անսանց, որոնց մասին գործ է շարունակուում «Դաշնակցութեան» մէջ

մասնակցելու համար եւ որոնք հեռացել են հայրենիքի սահմաններից, վերադառնալ Ռուսաստան եւ կարեւոր ալն գործերը, որոնք դեռ չեն վերջացել, ինչպէս նաեւ այնպիսիները, որոնք կարող են այսուհետեւ սկսել»:

Ո՛չ մէկ փաստի վրայ չի հանդէր *Լէոյի գրածը*, թէ «Վորոնցով-Դաշկովն էլ նաեւ չունի Դաշնակցութիւնը, այն էլ գուցէ ոչ պակաս լաւ, քան Բիւրոյի դաշնակցականները, որոնք ներում էին խնդրում Ամենայն Հայոց Կաթողիկոսի քերականով, ցոյց չտալու համար թէ իրենք են ցարական գրասրտութիւն հայցողները, այլ հայ հօտի հոգեւոր հովիւրը, որպէս ղեկի իր գաւակներն ունեցած անհուն սերից»:

Ո՛չ մէկ պատճառ չկայ որ դիմումի թուղթը ստորագրողը չըլլայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ թէեւ դիւանագիտութեան մէջ պարզամիտ մարդ էր, սակայն ո՛չ անգրագէտ, որուն աւելի կը մօտենային եւ սրահներին կը բանային «դատապարտաւճանքի, փախածների, եւ կալանաւորների ընտանիքները», քան «Բիւրոյի դաշնակցականներին» այս կամ այն լիազօրները:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄԸ ՇՆՈՐՀՈՒԱԾ

Նիկոլա Բ. Չարը, որ դեռ մոռցած էր Կովկասի փոխարքային իրեն ուղղուած միտքարիչ խօսքերը, թէ «Դաշնակցութիւնը ինկած է հայ ժողովուրդի աչքէն, որ նա կը թուլնայ, կը կորսնցնէ իր նշանակութիւնը», այժմ նոյն պայծառափայլ կոմսին ներում չնորհեց ո՛չ միայն 180 դատապարտուածներու, որոնց անուանացանկը կցուած էր կաթողիկոսական նամակին, այլ նաեւ անոնց՝ որոնց մասին դատաստանական վճիռ չէր տրուած տակաւին:

Հագիւ ձարական ներումին «ուրագ»ը հրատարակուած, ներումին արժանացող դատապարտուածները, կալանաւորներն ու փախածները, վերադարձան իրենց տեղերը գոհ ու ուրախ:

Փոխարքան կարծէր էր, որ կայսերական ներումով՝ Դաշնակցութիւնը ամբողջովին իր ձեռքն առեր էր, որով պիտի կարենար զայն ուժեղացնելով՝ իր ծրագիրներուն հետ զործիք դարձնել:

Ձրի գրպարտութիւն է Լէօի այն խօսքերը թէ «Այս արդէն սովորական ներում չէր, այլ մի մեծ տարօրինակ վարձատրում, օրինակ ծառայութիւններուն համար: Այսքան թանկ էր գնահատում փոխարքան այն հանգամանքը, որ ընդհանուր եւ անպայման ներումով ոգեւորուած կազմակերպութեան միջոցով ինքն, իբրեւ կովկասեան բանակի գլխաւոր հրամանատար, կ'ունենայ, Թիւրքիայի դէմ պատերազմի դեպքերում, մի ամբողջ ժողովուրդ իբրեւ թնդանօթի միս»:

Լէօի խելքն ու միտքն է Դաշնակցութեան ձեռքով «ապստամբութիւն թրքական զօրքերու թիկունքէն»: Ինչպէս յետագային պիտի տեսնենք, բայտ իրեն, այդ անդոյ ապստամբութեան երեսէն է որ «ամբողջ թրքահայ ժողովուրդը թնդանօթի միս պիտի դառնայ»:

Դարձեալ հիւսուած առասպել մըն է, ինչպէս պիտի տեսնենք, որ Թուրքիոյ Դաշնակցականները, իրենց ընկերներուն շնորհուած ներումի ազդեցութեան տակ՝ իրենց օրինական դիրքը փոխած ըլլան իթիհաստական կառավարութեան հանդէպ:

Կարելոր է գիտնալ թէ այդ ահագին փոթորիտ շրջանին, ուր թրքահայ ժողովուրդին ճակատագիրը ամենասեւ շրջանակի մէջ դրուած էր, բովանդակ հայ ժողովուրդը ի՞նչ ընթացքի մէջ կը գլուխուէր, եւ ի՞նչ դիրք բռնած էին Թուրքիոյ Դաշնակցականները՝ ներխուսաւոր Թուրքերու կառավարութեան հանդէպ:

Մենք այս մասին պիտի խօսինք յաջորդ գլուխներուն մէջ:

ՌՈՒՍ-ԹՈՒՐԻՔ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԱՆԳԻՏԱԿԻՑ ԴԵՐԸ

Հայոց չար բախտէն՝ հայ մամուլը որ կոչուած էր «հասարակաց կարծիք»ը վարելու պատասխանատու պաշտօնին, թէ՛ Կովկասի, թէ՛ Թուրքիոյ եւ թէ՛ արտասահմանի մէջ, ողբալի կացութիւն կը պատկերացնէր:

Դարերով հայ ազգի մեծ ու փոքր բանաստեղծներն ու վիպասանները՝ ստորագնահատելով Հայաստանի շրջակայ ժողովուրդներու յատկութիւնները, հայ ազգը անոնցմէ կը համարէին, անոր մէջ զօրացնելով յախուռն գործերու մարմաջ, ինքնագոհ պարծենկոտութիւն, ազգային մեծամտութիւն, թիւրահաւանութիւն, որոնք ի վերջոյ՝ մեր ազգային նկարագրի թերի կողմերը կազմեցին:

Այս թերութիւնները շատ հաճելի կերպով կը շոյէին հայկական բարձրամիտ ազգայնամոլութիւնը քան լուրջ վերաբերմունք՝ պատմական իրողութիւններու:

Բազմաթիւ օրինակներէն վերցնենք նմոյշ մը, որ ամէն ինչ կը բացատրէ:

Երբ ժամանակի ամենաժողովրդական բանաստեղծը՝ Փամառ-Քաթիպա, կ'երգէր.

«Հագիւ լրացաւ 21 տարիս
Աղումագ բուսաւ երես՝ ծնօտիս,
Թշերես կարմիր վարդ կը կաթէ,
ջիղերս ամուր, ինչպէս երկաթ,
տուէք սարեր՝ սարեր կործանեմ,
ծառն արմատով՝ գետիմէն հանեմ,
սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
մէջս այնքան ոյժ, ըսէ՛ք, ի՛նչ ընեմ:
Առջեւս դրէք մարդ հարիւր ու հազար
ջարդեմ տրորեմ իբրեւ փողկ ու գագար՝

1. Կը նշանակէ ստեղծին:

ինչ որ ուրիշներ մէկ շարքու մէջ կ'ընեն,
այն եւ մէկ օրուան մէջ կ'ընենմ.
մէջս այնքան ոյժ, ըսէ՛ք, ի՛նչ ընենմ:
Ինձ պէս բիրեքով լի է Հայաստան,
անոր սուրբ հողին ըլլամ եւ դուրպան:
Հայուն մարմինն ուժեղ եւ առոյգ է,
այլ ափսո՛ս, անոր հոգին քմրած:
Եթէ օր մը արթննայ անոր վեհ հոգին,
նա պարզ կը ցուցնէ օսմանի ազգին
— ո՞վ էր երկուքէն ստրուկ կամ տէր...:
Ա՛խ, ե՞րբ պիտի թնդաք, խեղճ հայի օրեր»²:

Կովկասահայ ժողովուրդը եւ անոր մտաւորական երիտասարդութիւնը՝ մանր հաշիւներով չէին տառապեր, իրենք իրենց հարց տալու թէ Հայաստանի մէջ բիւրաւոր կարմրաթշիկ, երկաթ ծամող եւ ծառը արմատախիլ ընող, փողկի եւ գազարի պէս մարդիկը ջարդող եւ արորող հակաները ինչն^օ դարերով գործի անցած չէին: Եւ երբ վերջապէս, օր մը հայ թմրած հողին արթնցաւ, անոնք նորէն չքննեցին, չվերլուծեցին թէ ո՞վ մնաց ստրուկը, օսմանի ա՞զգը թէ իր մէջ այնքան ոյժ ժողոված հայը:

Նմոյշ մըն ար մեծատաղանդ վիպասան Ռաֆֆիի «Խնկ» վէպէն, որ այնքան խանդավառեր էր եւ դեռ կը շարունակէ խանդավառել հայ ժողովուրդը եւ անոր մտաւորական գործիչները:

Վիպասանը իր վէպի դիւցազներէն մէկուն բերնով կ'ըսէր այս հետեւեալ նշանաւոր խօսքերը.— «Մեր դրութեան մէջ իմ կարծիքով, համարակոտորունը, անձնավստահութիւնը եւ մինչեւ խնդութեան հասած յանդգնութիւնը աւելի գործ կը կատարեն, քան իմաստուններու լուրջ եւ խոհեմ մտածութիւնները»:

Իսկ ուրիշ դիւցազնի մը բերնին մէջ.— «Այս շատ միշտ է, խելացիներուն խելքը շատ անգամ գիրեմք կը խաբէ, եւ խաբուածները միայն այն ժամանակ որ յիմարացեր են, երբ գժերն արդէն իրենց գործը աւարտած են»:

Այս յախուռն խենթային գործելակերպը աւելի հաճելի էր կովկասահայ ժողովուրդին եւ անոր ազգասէր մտաւորականութեան, քան իմաստունի լուրջ եւ խոհեմ խորհուրդները:

Այսպէս, բանաստեղծ ու վիպասան, հիմը դրեր էին զպրոցի մը, որուն մէջ դաստիարակուեր էին մամուլի ներկայացուցիչներու մեծ

2. Ոտանաւորը արձակի վերածեր են:

մասը, որուն համար քննութիւն եւ վերլուծութիւն կարեւորութիւն չունէին:

Հայ մամուլին անդիտութիւնը — յարգելով սակաւաթիւ բացառութիւններ — միջազգային կարեւոր հարցերու մէջ ակնհերե է: Անոր ներկայացուցիչները պարզապէս կ'արձանագրէին այդ հարցերը, բայց անոնք հայ ժողովուրդը բնաւ չլուսաւորեցին այն հարցերու մէջ, որոնք սերտօրէն կապուած էին անոր ճակատագրին հետ: 38 տարի Հայկական Հարցը թրքահայ ժողովուրդի անմեղ արիւնով գետեր կազմել տուեր էր. այդ երկար ժամանակամիջոցին, հայ մամուլին մեծ մասը, մասը չզբաւ եւրոպական խարդախ եւ խաբեայ դիւանագիտութեան վրայ, որովհետեւ անոր ներկայացուցիչները, մեծ մասով ազգային գործիչներ եւրոպայէն այնպէս մը դիւթուեր էին, որ անկէ անդադար ծեծ կ'ուտէին եւ արիւնլուայ գետին կը տապալէին, սակայն նորէն ոտքի կանգնելով ծեծ կերող հրեային պէս կ'աղաղակէին. «մէյմն ալ գարկ»:

38 տարի ձարական կառավարութիւնը դէմ կեցաւ հայկական բարենորոգումներու լուծումին, քաջալերելով Սուլթան-Համիտը՝ որ կոտորէ հայերը: Հայ մամուլը չկրցաւ հայ ժողովուրդը լուսաբանել անոր բռնած թշնամական դիրքին համար, որով ան չկրցաւ հասկնալ թէ ինքը ուսական դիւանագիտութեան զոհն է: Իսկ երբ յանկարծ ձարականութեան սրտին մէջ բորբոքուեցաւ «հայասիրութիւնը», մամուլին ներկայացուցիչները հայ ժողովուրդին առջև երբեք չմերկացուցին այդ հայասիրութեան պատճառը, եւ ո՛չ ալ քննեցին ու վերլուծեցին Կովկասի փոխարքային կամաւորական խումբեր կազմելուն թրքակառողեցուցիչ շարամիտ ծրագրին պատճառը, թէ եւ «Հորիզոն» եւ «Մշակ» թերթերուն մէջ կը կարդային անդադար թէ Ռուսաստանի միջամտութեան պատճառով՝ թրքահայ ժողովուրդի զխուռն կապուած էր ընդհանուր կոտորածի սպառնալիքը:

Չենք կրնար չխոստովանիլ որ հայ մամուլին ներկայացուցիչները եթէ ուզէին իսկ չէին կրնար վերաբերմունք ցոյց տալ: Անոնք եւ ոչ մէկը դիւանագիտութեան արուեստը սորվեր էր եւրոպական համալսարանի մը մէջ, եւ ո՛չ ալ եւրոպական մտքով մամուլը վարելու ձեռնհասութիւն ունէին: Այդ բանին համար կը պահանջուէին մասնագէտներ, պատմական, քաղաքական, տնտեսական եւ ընկերային մարդերու մէջ, որպէսզի ամէն մէկ հարց ուսումնասիրուած ձեւով ներկայացուէր ընթերցող հասարակութեան:

Այդ անդիւանագիտութեան պատճառով էր որ հայ մամուլի ներկայացուցիչները չհասկցան եւ հայ ժողովուրդին չհասկցուցին, թէ ձարական կառավարութեան հիմնաքարը կը հանդիս իշխան Լորանով-Ռոստովսկի խօսքին վրայ. «Ռուսաստանը կ'ուզէ Հայաստանը, բայց

առանց հայերու»: Եւ անիծեալ այդ անմահացած խօսքը՝ այնուհետեւ նշանաբան դարձաւ մինչեւ ձարական վարչաձեւին տապալումը:

Եթէ հայ մամուլը գիտակցաբար շարժած ըլլար, անկարելի բան էր որ հասարակաց կարծիքը պատմական դասերէն օգուտ չքաղէր, քանի որ Կիլիկերոն, ճարտասան եւ պետական մարզ, խորաթափանց կերպով ըսեր էր. «պատմութիւնը կեանքի վարժապետն է»:

Այնքան փորձանքներ թափեր էին թրքահայ ժողովուրդի գլխուն, եւ սակայն այդ բոլոր մեծ դասերը զուր անցեր էին:

Անտարակոյս հայ ժողովուրդին առողջ բանականութիւնը մեռած էր. եթէ հայ մամուլը խրատող ու անշեղ ղեկավարող ըլլար: Արդ, հայ ժողովուրդը չունեցաւ այդ բախտը, որով անոր հոգեւորական եւ աշխարհիկ վարիչները մնացին ազգային եւ միջազգային քաղաքականութեան մէջ դիւանագիտականօրէն միամիտ եւ դիւախաբ, կոռուպարելով ժողովուրդ մը, որ մնաց միշտ պարզամիտ եւ դիւրահաւան մինչեւ այսօր, ինչպէս պիտի տեսնենք գործիս վերջը:

ԿԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ
ԿՈՎԿԱՍԻ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԵՁ

Երբ յայտնի կը տեսնուէր թէ ուս-թրքական պատերազմը անխուսափելի է, Կովկասի մէջ հայ կամաւորական գունդերու կազմութիւնը, որ դեռ թուղթի եւ ծրագրի մէջ էր, մտեր էր դործօն կեանքի մէջ, Ազգային Բիւրոյի ջանքերով եւ Գէորգ Կաթողիկոսի բարեհաճ աջքերուն տակ եւ անոր օրհնութեամբ:

Եւ որովհետեւ կամաւորական շարժումը ղդրդաղին եւ ցուցարարական ոճով սկսեր էր, հայ մամուլը խոշոր տառերով եւ ցնցող վերնադրերով հրատարակած ըլլալով կամաւոր գունդերու շարժումը, այդ լուրը արձագանգ գտեր էր արտասահմանի մէջ, մասնաւորապէս Պուլզարիոյ, Ռումանիոյ, Ամերիկայի մէջ, ուր հայերուն մեծ մասը Օսմանեան հպատակ էին: Այդ վայրերուն մէջ կազմուեցան քանի մը աննշան խումբեր, Օսմանեան հիւպատոսներուն դիտող ու կրքոտ աջքերուն տակ:

Իսկ Ֆրանսայի մէջ, ուր կ'ապրէին փոքրաթիւ թրքահպատակ հայեր, մտան Ֆրանսական բանակին մէջ իրբեւ կամաւորներ:

Ասոնցմէ գատ կազմուեցաւ «Հայկական լեգէոն» անունով խումբ մը, իր համակրանքի խորին «գգացումը յայտնելու համար» - ինչպէս կ'ըսէ հայ լեգէոնականներէն մէկը - Ֆրանսայի, որ ըստ նոյն լեգէոնականին, իրենց երկրորդ հայրենիքն էր. եւ այս առանց յետին մտքի եւ վարձատրութեան հաշուի. իրենց լաւագոյն վարձատրութիւնը կը կայանար պարտականութեան մը գոհունակութեան մէջ՝

կամաւորապէս կատարուած հանդէպ երկրի մը, որ զիտցեր էր իր հրապրյրով գրաւել մեր երիտասարդութեան սիրտը...:

Արտասահմանեան այդ ինդեռուկրակ խումբերը, ուսաստիւր եւ զինուորական փառքի անձկացող, եկան մտան կովկասեան կամաւորական շարքերուն մէջ:

«Կովկասէն, կը գրէ Պալաքեան Վարդապետը, արդէն հայ կամաւորական շարժումներու անդրանիկ լուրերը կը կարդայինք գերման քերթերուն մէջ: Իսկ Թուրքիա եռանդով կը շարունակէր զօրահաւաք իբր թէ դիմակալի կարեմալու համար հաւանակամ յարձակման մը դէմ»:

ՀԱՄԱՆԻՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՓՈՓՈԽԱԿԻ ՀԱԿԱՏԱԳՐՈՎ

Այս գործերը կը կատարուէին այն շրջանին մէջ, երբ «գերման ժողովուրդը, կ'ըսէ նոյն ակնատես վկան, կը կարծէր թէ միայն յաղթութեան լուրեր պիտի լսէր, սարսափով կը տեղեկանար մանրամասնութիւններուն, արեւելեան Բրուսիոյ մէջ»:

Եւ արդարեւ, զերմանական մէկ միլիոննոց բանակները արագօրէն խորտակեր էին Պելճիքայի Լեման զօրավարին փոքրաթիւ բանակները Շարլոտայի մեծ ճակատամարտին մէջ, եւ կատաղօրէն կը քալէին Փարիզի վրայ, ահ եւ սարսափի մատնելով Ֆրանսական եւ անգլիական ժողովուրդները:

Ճիշտ այս շրջանին, Օգոստոս ամսոյն, Անուերսա քաղաքէն մեծ դժուարութիւններով ճամբայ ելեր էի դէպի Լոնտրա, ուր ժողովուրդը լուռ ու մունջ եւ սմբած, լսիելով կը կարգար լրագիրները, սպասելով օրէ օր Փարիզի գրաւումին:

Հասնելով Փարիզ, որ զերմանական ծանր թնդանօթներու ուժակոծութեան տակ էր, տեսայ Ֆրանսացի ժողովուրդին ահն ու սարսափը, մանաւանդ կը զոռային մեծ թնդանօթները, որոնց ձայնը երբեմն կ'ընդհատէին «Մեփիլիմ»ի ահեղ ուժակոծումները:

Փարիզի ժողովուրդը գունդագունդ փախուստ կու տար դէպի Լոնտրա, Զուիցերիա, Իտալիա, իբր ապահով վայրեր: Փարիզը կը նմանէր ամայի քաղաքի մը, այնպէս որ Ֆրանսական կեդրոնական կառավարութիւնը պարպելով մայրաքաղաքը, դացեր հաստատուեր էր Պորտոյ, որպէսզի զերման բանակներուն ձեռքը չ'իյնայ:

Փարիզի անկումը այնքան որոշ կ'երեւէր որ Ֆրանսական կառավարութիւնը հոն թափեր էր այճերիական գունդերը, մայրաքաղաքին փողոցներուն մէջ գիրկընդիսառն կուռելու՝ հոն մտնող զերման գունդերուն հետ: Ես Փարիզ հասայ ճիշտ այն զիշերը, երբ այճերայի

այդ դուռերը, հագուած իրենց ազգային խառուտիկ տարազը, ձեռքերուն մէջ խոշոր ու սրածայր դանակներ, եւ ասորճանակներ, կոկորդալիբ կ'աղաղակէին. «տուէ՛ք մեզի գերմանացիներ որ մորթեմք»:

Կասկած չկար որ Ֆրանսան միեւնոյն տխուր ճակատագիրը պիտի կրէր, եթէ չունենար տաղանդաւոր եւ հայրենասէր զօրավարներ, որոնք Ալզաս-Լօրէնի տիրապետութեան համար պատրաստ էին իրենց բանակները զոհելու:

Եւ ահա այս ժամանակ էր որ «Հիւսիսային Արջը», ազատելու համար Ֆրանսական բանակները գերման բանակներու խիստ ճնշումէն, որոնք արագօրէն կը յառաջանային դէպի Փարիզ, ուր կը կարծէին մտնել Սեպտեմբեր 2ին, մէջտեղ նետուեցաւ:

Բայց Գոլելմոս Բ., գերման բանակներուն անուանական վերին հրամանատարը, շուտով հասկցաւ ժողովրդական իմաստուն առակին իմաստը. «Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ», եւ կամ «մարդս կ'առաջադրէ, բայց Աստուած կը տնօրինէ»:

Այժմ կարգը գերման յոխորտացող ժողովուրդին եկած էր՝ ենթարկուելու վայրենի խազախներու ահաւոր թափին:

«Ռուս բանակը, դէպի Փարիզ արագօրէն յառաջացող գերման բանակներուն հօգոյս թափը կոտորելով, իրենց թիկունքը պաշտպանել հարկադրելու համար, ուժգին թափով մը յարձակեցաւ եւ մտաւ արեւելեան Բրուսիա եւ ամէն արգելի խորտակելով, սկսաւ յառաջանալ, սրբելով իր առջեւ գտնուած ամէն խոչընդոտ»:

Իսկ նոյն ծայրագուստներուն մէջ բնակող գերման ժողովուրդը, ուս եզոզաբներու անգթութիւններու պատմութիւններէն ահաբեկած, լեղապատառ փախուտի ճամբան բռնեց՝ իրենց ետեւ թողնելով անշարժ ամէն ինչը ու ստացուածք եւ միայն իրենց անձերը փրկելու հետամուտ ըլլալով:

«Աստի՛ մեծ մասամբ ապաստանեցան Պեռլին, իսկ մայրաքաղաքի ժողովուրդը, ասոցմէ լսելով ռուս զոգաբներու գաղտնիչ պատմութիւնները, իրաւամբ սարսափի մատնուեցան: Մանաւանդ Պեռլին ապաստանած գաղթական ժողովուրդին վիճակը ստուգիւ խղճալի էր:

Արդէն ամիս մը անցած էր պատերազմի հրատարակութենէն ի վեր, եւ մինչ ամբողջ գերման ժողովուրդը հեւճոռ առձկութեամբ կը սպասէր ակնդէտ գերման ռաիվիրայ գունդերու Սեպտեմբեր 2ի Փարիզ մուտքին, երբ ֆրանսական ռազմաճակատէն ալ սկսան պարտութեան լուրեր հասնիլ Պեռլին, սրտաբեկելով միայն յաղթութեան լուրերով մինչեւ այն ատեն գիճովցած ժողովուրդը: Բայց զինուորական գրաբնութիւնը ամէն ջանք կը թափէր խոշորեցնելով յաղթութեան լուրերը եւ նոյն համեմատութեամբ յոյժ փոքրցնելով պարտութեան գուժկանները» (Հայ Գողգոթան):

Արդարեւ, ֆրանսական ճակատին վրայ ալ, գերմանացիները չզիտնալով նպաստաւոր առիթէն օգտուիլ, ունեցեր էին դառն պատրանքներ, մինչ պելճիքական փոքր բանակը դիւցազնական դիմադրութիւն մը կ'ընէր, ֆրանսական հինգ բանակներ համախմբուած էին արեւելեան սահմանազրուիքը, երբ ժոճքը, ֆրանսական բանակներուն սպարապետը, լուր առնելուն պէս թէ գերմանացիները մէկ միլիոն մարդ նետեր են Պելճիքայի վրայ, ֆրանսական բանակները արեւելեան ճակատին վրայ յարձակողականի անցան, վերադարձելու համար, ինչպէս կ'ըսէ Ֆրանսացի պատմագիր մը. «սիրելի նահանգները», եւ ստիպելու համար որ գերման բանակները իրենց աչքերը ուրիշ տեղ դարձնեն:

Ալզասի մէջ քանի մը դուռեր յառաջացեր էին մինչեւ Միւլուսը, ուսկից, սակայն, շուտով դուրս ելան:

Փոյ զօրավարը վերստին հոն եկաւ 150.000 զինուորներով, բայց ժոճքը ստիպուեցաւ այդ բանակէն զօրաբաժիններ առնել զանոնք տանելու համար Մառնի վրայ: Այսպիսով ֆրանսացիները ստիպուեցան Ալզասը կրկին պարպել:

Լորէնի մէջ տաղանդաւոր եւ հայրենասէր Գաստելնոյ զօրավարը, յառաջացեր էր մինչեւ Մոռանժ, յետոյ՝ Օդեստոս 21ին, ստիպուեր էր ետ քաշուիլ Նանսի վրայ, մինչդեռ ուրիշ բանակ մը, իր աջակողմը, հետեւելով նահանջին այդ շարժումին, կանգ առեր էին ըլուրներու վրայ: Գերմանացիները ուզեցին իրարմէ խզել այդ բանակները: Բայց Գաստելնոյ գործադրել տուաւ ուրիշ հակայարձակում մը թշնամիին աջակողմեան կողմն վրայ. ասոնք իրենց կարգին ետ քաշուեցան:

Պելճիքայի օգնութեան դացած ֆրանսական երկու բանակներն ալ պարտութեան մատնուած էին:

Այն ատեն ժոճքը հասկցաւ թէ անհրաժեշտ է արագ նահանջ մը, թշնամին իր խարխիսներէն հեռացնելու եւ ֆրանսականներուն մօտեցնելու համար: Ֆրանսացի զինուորները ուժը օր նահանջեցին բոնի զնացքով, չարաչար յոգնած, բայց գերմանացիներուն հետ կրկին չափուելու եռանդուն փափաքով:

Ֆրանսական բանակները հասեր էին Մառնի հարաւը: Ժոճքը ասոնցմէ երկու նոր բանակներ կազմեց, մէկուն վրայ զօրավար կարգեց Մոնրիւն, պաշտպանելու համար Փարիզը՝ որուն կառավարիչ կարգուած էր մեծատաղանդ զօրավար Կալինէի, կազմակերպիչ եւ եռանդուն հայրենասէր, կեղքոնական կառավարութեան Պորտոյ մեկնուածն յետոյ, իսկ միւսին վրայ հրամանատար նշանակեց Ֆոյ զօրավարը, որ օր մը պիտի անմահանայ իբրեւ ազգային դիւցաղ մը՝ ասոր բանակը խառնուեցաւ երկու նահանջող բանակներու մէջ:

Ահա այս ժամանակն է որ մարաջախտ Մոլթիքէ ռազմադիտական սխալ մը գործեց, որ Գերմանիոյ համար ճակատագրական եղաւ:

Փոն Կլիւբ, հրամանատարը դէպի Փարիզ յառաջացող աջ թեւին, հասնելով Սանդի, Ֆրանսացի Մաննուրի զօրավարի բանակին առջեւ, արհամարհեւ էր այդ փոքր բանակը, եւ փոխանակ ուղիղ դէպի Փարիզ դիմելու, իր ընթացքը շարունակեւ էր հետապնդելու համար Ֆրանշէ դ'Էսփերիի բանակը, մինչ գերման բանակները տարբեր ուղղութեամբ կը յառաջանային: Գերմանացիները կ'ուզէին ոչնչացնել Ֆրանսական բոլոր բանակները, որմէ յետոյ պիտի մտնէին Փարիզ՝ սօսելու համար Սետանի յաղթութեան տարեդարձը, ինչպէս որ գերման բարձրաստիճան եւ համագերման ուսուցչապետները սպահովացուցըն էին գերման միամիտ ժողովուրդը:

Այս սխալէն օգտուելով, Ժոֆրը, իր ձախ թեւով կոթնած Փարիզի վրայ, եւ աջ թեւով Վերտէօնի վրայ, Սեպտեմբեր 5ին հրամայեց իր գունդերուն ասպատակողներուն դիմադրել ամէն գնով:

Այդ օրը Մաննուրին յարձակեցաւ գերմանացիներուն աջ թեւին վրայ, բայց անզլիացիները, որոնց դիւանագիտական խաղերուն նպաստաւոր էր ուժասպառ Ֆրանսա մը, կորովի կերպով չյարձակեցան Փոն Կլիւբի առջեւէն դացող բանակներուն վրայ, ասով ժամանակ տալով որ գերման զօրավարը ազատի պաշարումէն եւ խոյս տայ դէպի հիւսիս:

Ասով հանդերձ, այս նահանջի շարժումով, գերման զօրավարը անպատասպար կը թողոր իրեն մօտակայ Փոն Բուլովի աջակողմը. սա, որ կուտի բռնուէր էր անզլիացիներուն հետ, մեծ Մոռենի վրայ պաշարուեցաւ Ֆրանշէ դ'Էսփերիի բանակէն եւ պարտաւորուեցաւ իր կարգին նահանջել: Փոչը, որ ճակատած էր Փոն Հոսնի սաքսոններու եւ բրուսիական յառաջապահ հեծելազօրներու բանակին դիմաց, նախ անոնց յաղթեց իր աջ թեւին վրայ, եւ ապա բրուսիական յառաջապահ հեծելազօրներու բանակը Սէն-Գօնի ճահիճներէն դուրս նետեց, ուր նախ ծանր կորուստներ ունեցաւ: Վերջապէս, Սարայը, միջակ զօրավար մը, ստիպեց Գերմանիոյ թագաժառանգ իշխանը՝ նահանջի ճամբան բռնելու:

Սեպտեմբեր ամսուան 13ին, գերմանական բանակները, պարտուած բոլոր շարքերուն վրայ, ստիպուեցան հարիւրյիսուն հազարամիթր ետ քաշուիլ: «Ղժբախտաբար, կ'ըսէ Ֆրանսացի պատմագիր մը, մեր գիւնուորները ուժաթափ եղեր էին. անոնց կը պակսէր ռազմամթերք: Թշնամի՞ն զօրաւոր դիրքերով կրցաւ պատնէշներ շինել էգնի եւ Ռէյնսի հիւսիսային կողմը եւ հողին տակ պահուրտիլ Վեստէն մինչեւ Արգոն, իր փորած փոսերուն մէջ»:

Ան բախտաւոր չեղաւ նաեւ Լորէնի մէջ, ուր Գաստելնոյ զայն պարտութեան մասներ էր Նանսիի Գրան-Գոտոնէի մէջ, մինչդեռ ուրիշ զօրավար մը զայն ետ կը մղէր ուրիշ ուղղութեան մը վրայ:

Ատիկա եղաւ Մառնի առաջին յաղթանակը, շնորհիւ Ֆրանսական մեծ սպայակոյտի անվիճելի հանճարին, որուն վրայ Ադոլֆ Հիթլերը –

որ «տասնապետի» աստիճանով կը կուէր ու կը վիրաւորուէր գերման զօրքի շարքին մէջ – իր հիացումը կը յայտնէր, երբ օր մը, երկրորդ աշխարհամարտին, իբր «առաջնորդ» Գերմանիոյ՝ պիտի զար դէնքը ձեռքին մէջ՝ կայսերական բանակներուն վրէժն առնելու:

Սակայն, Մառնի առաջին յաղթանակը դժուար պիտի ըլլար, եթէ ուսական մեծագոր բանակները Արեւելեան Բրուսիոյ մէջ չքաշէին գերման բանակներուն մեծ մասը:

Չարութիւնը մեռնելէ առաջ, մեծ բարիք մը ըրաւ իր «հաւատարիմ դաշնակից»ին, որուն հետ միացեր էր Հայկական Հարցը ուսական նախաձեռնութեամբ լուծելու համար:

ՍՈՎԻ ՍՊԱՌՆԱԼԻԲԸ

Գերմանիան ունէր ուրիշ զօրաւոր թշնամի մըն ալ. նախ անօթութիւնը, ապա սովի սպառնալիքը: Զինուորական պետութիւն մը, որ իր բոլոր դասակարգերով հաստատ համոզուէր էր թէ «ամիսէ մը գերման բանակը պիտի հասնէր Փարիզի պարիսպներուն առջեւը», ուսկից «դուրս պիտի չգար, մինչեւ որ Ֆրանսան չվճարէր երեսուն միլիարտի տուգանք», բնական բան էր որ կառավարութիւնը, գոնէ տարուան մը համար, նախատեսութիւն ունենար ժողովուրդին պաշենաւորումը սպահովելու: Կառավարութեան աչքը այն ժամանակ բացուեցաւ, երբ սկսաւ, ինչպէս տեսանք, «խրամատններուն» տաժանելի պատերազմը, ինչ որ ենթադրել կու տար թէ համաերոպական պատերազմը երկարատեւ պիտի ըլլայ, մանաւանդ Երբեակ Համաձայնութիւնը տենդագին աշխատանքի լծուէր էր Գերմանիոյ դէմ նոր թշնամիներ հանելու:

«Պատերազմի երկրորդ օրն իսկ, կը գրէ ականատես վկայ մը իր «յուշերուն» մէջ, արդէն ամէն սննդեղէն սղած էր եւ մէջտեղէն անյայտացած... արդատ դասակարգը սնունդի ամենատնտեսական նիւթերու համար անդուծիւմ կը կրէր»:

Իսկ երբ անզլիական նաւատորմիդը բռնեց ծովերը, որպէսզի Գերմանիան չէզոք երկիրներէ պաշար չստանայ, սովի սպառնալիքը շատ զգալի դարձաւ: Գերմանիոյ մէջ այլեւս ազգային կարգախօս դարձաւ «Անգլիան ամէն չարեաց աղբիւր»: Եթէ պարէնի այս պահասը պատահէր լատին երկրի մը մէջ, անտարակոյս սպատամբութիւն կը ծագէր կառավարութեան դէմ:

Բայց գերման հայրենասէր ժողովուրդը, կաղապարուած հին սպարտացիներուն տիպարին վրայ, անտրտունջ կը տոկար ամէն զբոհանքի, այն կոչը վստահութեամբ թէ իր «Պաշտելի Կայսրը» միջոց մը պիտի դանչէ իր ժողովուրդը սովի սպառնալիքէն ազատելու համար:

Այդ պաշտելի կայսրը, որ պատերազմի սկիզբէն մեծ յոյսեր դրած չէր իր գլխաւոր դաշնակիցին՝ Աւստրո-հունգարական պատերազմական կարողութեան վրայ, աչք դարձուցեր էր դէպի Թուրքիան, իր գաղտնի դաշնակիցը, միջոցներ խորհելու օր առաջ գանիկա նետելու պատերազմի բոցերուն մէջ: Բայց Թուրքիան սիրելի էր նաեւ Անգլիոյ եւ Ֆրանսայի, որոնք տակաւին կը հաւատային թէ Թուրքիան կարող էր չէզոք մնալ: Եւ այս հաւատքով լեցուն, անոնց թերթերը մանկական սպանալիքներ կ'ուղղէին անոր, այս հեղինակութիւնով. «Համաւերոպական պատերազմի կոտրած ապակիներուն արժէքը պիտի վճարէ Թուրքիան, եթէ խլրտի»:

Այս սիրարանութիւնները կատարած ժամանակ, անդին, Վոսփորի ամերուն վրայ, խոր մութի մէջ կը պատրաստուէր զարհուրելի ողբերգութիւն մը, որուն նմանը տակաւին մարդկային պատմութիւնը տեսած չէր:

Մենք այս մասին պիտի խօսինք յաջորդ գլխուն մէջ:

ԳՂՈՒՄ ԺԳ.

**ԹՈՒՐԳԻՈՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՈՒՂՂԱՄԻՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԹՈՒՐՔԵՐՈՒ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԷՊ**

ԹՈՒՐԳԻՈՅ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ահա այդ շրջանին երբ ռուսական բանակները յաղթանակէ յաղթանակ կը քալէին արեւելեան Բրուսիոյ մէջ, եւ գերման զինուորներուն աստղը իր զօրութեան փայլը կորսնցուցեր էր, Թուրքիոյ դաշնակցականները բնաւ չչլացան ռուսական յաղթանակներուն փայլէն: Անոնք մոռցած չէին ռուս-ճաբոնական պատերազմին առիթով՝ համայն դաշնակցութեան կարգախօսը. «Խալոթեան ամենակատաղի քշնամի՛ն՝ Ռուսաստանն է»:

Անոնք գիտէին նաեւ որ ռուս-թրքական պատերազմներու շրջաններուն, ճարական բանակները միշտ տքալով յաղթեր էին Օսմանեան բանակներուն, որովհետեւ Թուրքիան զուրկ ըլլալով փոխադրական միջոցներէն, չէր կրնար իր արեւելեան նահանգներէն զինուորներ փոխադրել պատերազմի ճակատը, մինչդեռ Ռուսաստանը ամէն տեսակ փոխադրական միջոց ունենալէն զատ, պալքանեան թերակողմին սլաւ ազգերն ալ իրեն դաշնակիցներն էին:

Թուրքիոյ դաշնակցականները, որոնց ուսերուն վրայ կը ծանրանար պատասխանատուութեան ծանր բաժին մը, երբ լուր առին թէ Կովկասի մէջ կամաւորական գունդերու շարժումը օրէ օր ծաւալ կը ստանայ, առաջնորդուած իրենց սեփական փորձառութիւններով, հասկցան թէ այդ վերին աստիճանի անխոհեմ քայլը մահարեր հարուած մը պիտի ըլլայ թրքահայ ժողովուրդին համար, փութացին չարիքը խափանել:

«... Նախքան պատերազմը սկսելը, կը գրէ Լէօ պատմագիրը, դաշնակցութեան մի քանի գաւառական կոմիտէներ, օրինակ Վանի, Մուշի, Էրզրումի, մարդիկ ուղարկեցին Թիֆլիս եւ պահանջեցին որ վերջ տրուի կամաւորական շարժման, նախատեսելով թէ ինչ աղէտներ նա կարող է բերել թիւրքահայ ժողովուրդի գլխին»:

Բայց դժբախտաբար, այդ ցնցող ազդարարութեան ձայնը եւ խոհական խորհուրդը մնացին «ձայն բարբառոյ յանապատի»:

Թիֆլիսը չլսեց անոնց եւ անոնք ստիպուեցան գլուխներն կախած վերաբառնալ իրենց տեղերը:

ԼԷՕ ՊԱՏՄԱԳՐԻՆ ԵՐԱԶԱՅԻՆ ՏԵՍԻԼՔԸ

Չարմանային այն է որ Լէօ, Դաշնակցութեան առած խոհեմ եւ ուղղամիտ քայլը գովելու տեղ, դիտմամբ խեղաթիւրեր է պատմական ճշմարտութիւնը, մանկելով երազային տեսիլքին մէջ, եւ այդ կուսակցութեան կատարած դիտումը կը նկատէ ժողովուրդի զանգուածային ճնշումին տակ կատարուած գործ մը եւ լոկ ձեւակերպութիւններ:

Սօսք տանք երազատեսին, որ յանդի իր ինքնահնար եղբակացութեան:

«Բայց այստեղ անհրաժեշտութիւն է ներկայացնում դնելու այն չափազանց կարեւոր հարցը թէ ինքը, Թիւրքահայ ժողովուրդը, ինչպէս էր վերաբերում իր անունով եւ իրեն համար սկսած շարժման:

Ո՞րք, սակայն, որոնք մի ժողովրդի իսկական հարագատ ձայնը այսօր վնասեցան մի րոպէին, մի ժողովրդի, որին տասնեակ տարիների ընթացքում մեկ տեսանք անմոռուց հօտի մամն սպանդանոց փշիւ ֆեդայական տգիտութեան ձեռքով: Այս անգամ էլ նրա ձայնը չկայ հրապարակում: Բայց որ նա միանգամայն ձայնագուրկ չի եղել, որ նրա մէջ այս անգամ էլ լուծ չի եղել ինքնապաշտպանութեան քննադրը» (ԼԷՕ, Հտ. Բ, էջ 120):

Դիտմամբ ծածկեր էր նաեւ Վանի, Մուշի եւ Էրզրումի մարդոց անունները, որոնք իբր մէկական հասարակ գիւղացիներ կամ գործաւորներ, այդ զանգուածային հեղեղէն քշուելով՝ նետուեր են Թիֆլիսի մէջ, ուր անոնց «յայտարարութիւններն, անշուշտ ժողովրդի զանգուածային ճնշման տակ էին անուում, բայց ոչ մի արժէք էր ներկայացնում, այլ լոկ ձեւակերպութիւններ հանդիսացան, որովհետեւ երբ Թիֆլիսը չլսեց նրանց, նրանք այլեւս չխօսեցին եւ իրանք էլ հարեցին շարժման»:

Սենք այժմ կ'անցնենք փաստական սպասոյցներով ցոյց տալու՝ որ Թուրքիոյ դաշնակցականներուն պատուիրակները այդ կուսակցութեան կարկառուն ղէմքերն էին, որոնց անունները քաջ գիտէր Թիֆլիսցի պատմագիր-մտաւորականը, եւ թէ անոնց յայտարարութիւնները անկեղծ ու ճշմարիտ էին, որովհետեւ կու գային դառն իրականութեան խորքէն, քանի որ անոնք շատ լաւ գիտէին թէ ձարական դիւանագիտութիւնը «հայկական հարցը» իր նախաձեռնութեամբ լուծելով, չնչին արդիւնքի մը յանգած էր. ո՛չ անկախութեան, ո՛չ ալ

ինքնավարութեան խօսք կար: Եթէ անոնք «ժողովրդի զանգուածային ճնշման տակ» կատարէին այս դիտումը, պէտք էր որ հրապուրիչ բան մը մէջտեղ ըլլար, որպէսզի իրենք ալ խանդավառուէին եւ գլուխներն կորսնցնէին, ինչպէս որ խանդավառուեր եւ գլուխներն կորսնցուցեր էին Թիֆլիսի «Ազգային Բիւրոյի անդամները», որոնք ձեռնարկեր էին կամաւորական գունդեր կազմելու:

Իսկ գալով հայ ժողովուրդին, չէր կրնար ճնշում բանեցնել, քանի որ գաղափար անգամ չունէր հայկական հարցին վրայ, եւ ո՛չ ալ գիտէր թէ իր ճակատագիրը ձեռք առած էին իր հոգեւորական եւ աշխարհական միամիտ գործիչները: Ան միայն մէկ բան գիտէր՝ թէ պիտի կոտորուի:

ՀԱԿԱՓԱՍՏԵՐԸ

Թունը դաշնակցական մը, Արտակ Դարբինեան, «հայ սահմանադրական - ռամկավար կուսակցութեան» յայտնի ղէմքերէն մին, որ կամաւորական գունդերու շարժման միջոցին կը գտնուէր իր ծննդավայրը, Վան քաղաքին մէջ, եւ անձկութեամբ կը հետեւէր Կովկասի մէջ կատարուած սպառնալի կեանքին եւ միջազգային քաղաքականութեան ղէպքերուն, շատ աւելի լաւ կը ճանչնար թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար Վանի, Մուշի եւ Էրզրումի մէջ, քան Թիֆլիս նստող հակադաշնակցական Լէօ պատմագիրը:

«Ահա այս իրողութիւններն էին պատճառը, կը գրէ Դարբինեան իր «Յուշեր»ուն (316րդ էջին) մէջ, որ երբ առաջին անգամ Վանի դաշնակցական ղեկավարները, Արամ, Իշխան, Վրամեան, լսեցին թէ Կովկասի մէջ կամաւորական գունդեր կազմելու ձեռնարկուած է, սարսափահար եղան: Այս իրողութիւններն էին որոնք կը ստիպէին Արամներն ու Վրամեանները ամէն հնարաւոր միջոցի դիմելու, հայ ժողովուրդին սպառնացող վտանգը հետացնելու համար...»:

Եւ ապա վկայ կ'անցնելով պատմական ճշմարտութեան կը գրէ՝ «Թիֆլիսը ետ կեցնելու համար կամաւորական գունդեր կազմելու ձեռնարկէն, Յ. Քաջագունին, որ այդ օրերուն Վան կը գտնուէր, Արամի եւ Վրամեանի առաջնորդութեամբ Թիֆլիս գնաց, բայց ի գուր: Ո՛րք արժէք չունեցան Քաջագունիին քացատրութիւնները:

Միեւնոյն նպատակով Վանէն Թիֆլիս դրկուեցաւ նաեւ Գալուստ Ալօեան (Թորոս), երեսանցի, պատուական, լուրջ ու հիմաւորց Դաշնակցական մը, որ նոյնպէս Վան պտոյտի եկած էր, եւ անձամբ զանգատած էր ինձ, կամաւորական հարցին առթիւ: Մօտէն կը նանչնայի զինք. շաբաթ մը հիւր եղած էր ինձ, Թարիգէն Սալմաստ

արձակուրդի եկած օրերուն (1909ին): Խեղճ Թորոս, չհասաւ Թիֆլիս. նամբան Թափարեզի շրջանին մէջ փրկուեալն սպանուեցաւ»:

Բայց *ամէն ինչ ի զուր անցան*, «որովհետեւ 25 տարի է ի վեր, կ'ըսէ *Ռամկավար գործիչը*, Հ. Յ. Դաշնակցութեան «արեւելեան» եւ «արեւմտեան» Բիւրոները, Թիֆլիս եւ ժնեւ, վարժուած էին հրամաններով դեկավարելու երկրին ազատագրական շարժումը, իրողապէս ստրուկութեան մատնեւ էին երկրին ժողովուրդը եւ անգորութեամբ եւ արհամարանքի դատապարտեւ էին նոյնիսկ իրենց ուղարկած «առաքեալները»՝ Արամներ, Վրամեանները, որոնք մետասաներոյ ժամուն միայն պիտի գգային թէ ո՛րքան անգիտակցութիւն կ'իշխէր իրենց «մեծ»երուն, Թիֆլիս նստած «Բիւրոյ»ականներուն մտքին վրայ»:

ԶԷԶՈՒՔ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Կայ աւելի զօրաւոր փաստաթուղթ մը, որ կը հաստատէ Թուրքիոյ Դաշնակցականներուն ուղղամիտ ընթացքը՝ կամաւորական զունդերուն կազմակերպութեան դէմ:

Այդ *փաստաթուղթը մեզի կու տայ նորէն նոյնինքն «զգաստացեալ» Վարդապետը, որ - ինչպէս կ'ըսէ ինքը իր գիրքին 53րդ էջին մէջ - «Պոլիս ժամանման առաջին օրերուն իսկ, փութացի այցելել օրուան Պատրիարքին, նախկին Պատրիարքներու, Ազգ. երեսփոխաններու, քաղաքական ժողովի անդամներուն, հայ քաղաքական կուսակցութեանց ինձ վաղածանօթ եւ բարեկամ պետերու, եւ ստացած ընդհանուր սպաւորութիւնս սա եղաւ, որ ո՛չ ոք կրցած էր թափանցել կացութեան իրապէս ծանրակշիռ հանգամանքներուն եւ ո՛չ ոք վաղուան մտահոգութիւնը ունէր»:*

Շատ հասկնալի է որ օրուան պատրիարքէն եւ քաղաքական ժողովի անդամներէն իմացած ըլլայ ան՝ Վանի դաշնակցական ղեկավարներուն զիմումը եւ մերժողական պատասխանը:

«Վանի հայութիւնը ստուգիւ ապստամբական ո՛րքուէ կանխորոշ նպատակ եւ մասնաւոր պատրաստութիւն չունէր, անով կարելի է դիրքաւ ապացուցանել որ Վանի կուսակալութեան ամբողջ հայութիւնը, գլուխ ունենալով Օսմ. պարլամենտի անդամ եւ դաշնակցական պետերէն ողբացեալ Վրամեան, ո՛չ միայն ապստամբական շարժում մը ստեղծելու հետամուտ չէին, այլ ընդհակառակն խոհեմ ու հեռատես ընթացքով մը, յաջորդաբար գաղտնի պատուիրակներ կ'ուղարկէին Ս. Էջմիածին Վեհափառ Ս. Կաթողիկոսին եւ Թիֆլիս ազգային Բիւրոյին, որպէսզի կովկասահայ կամաւորական շարժումին վերջ մը տալով, վերապահ եւ սպասողական ընթացք մը բռնեն,

չգրգռելու համար իթթիհատական ոնրածարաւ թուրք կառավարութիւնը, եւ ռուս-թրքական սահմանագլխի վրայ ապրող հարիւր հազարաւոր հայութիւնը չնեթարկելու համար անել կացութեան մը...»:

Այս նշանակալից փաստաթուղթէն կ'իմանանք Վանի Դաշնակցութեան լուրջ քայլը նաեւ Կաթողիկոսին մօտ, որու մասին կը գրէ Լէօ, որպէսզի կաթողիկոսը գործին մէջ խառնելով, բոլոր պատասխանատուութիւնը բեռնուի մի միայն Ազգային Բիւրոյի մէջ մտած դաշնակցական անդամներուն վրայ:

Կաթողիկոսին յիշատակութիւնը չ'ըներ նաեւ Արտակ Դարբինեան, Ռամկավար կուսակցութեան պարագլուխը եւ Էջմիածնի Գէորգեան ճեմարանի նախկին սանը, որպէսզի Մայր Աթոռի Գահակալին հեղինակութիւնը չվարկաբեկէ, առանց խորհելու թէ մէկ հայուն անմեղ արիւնը աւելի արժէք ունի՝ քան ո՛րեւէ բարձրաստիճան անձնաւորութեան մը վարկը:

ԱՐԱՄԻ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ

Դաշնակցական լիազօրներուն ձախողութիւնը՝ ժողովրդասէր Արամը յուզեւ էր մինչեւ խորը եւ սաստիկ ցնցեւ էր անոր ջղային զրութիւնը:

Ան հետզհետէ դարձեւ էր մտահոգ եւ մեկամաղձոտ:

Արամ իրաւունք ունէր երես դարձնելու Թիֆլիսի Ազգային Բիւրոյի անդամներէն, որոնք միանալով ռուսասէր Մուրէնեան Կաթողիկոսին հետ եւ Վորոնցոյ-Դաշկովի քաղաքական խաղերուն գործիք զառնալով, նետուեւ էին ձարականութեան գիրկը, առանց ռուս կառավարութեան պահանջելու պարտականութիւն եւ երաշխիք՝ թրքահայ ժողովուրդի ապահովութեան համար: Եւ ինչ որ չարագոյնն էր, Վանի Մուշի եւ Էրզրումի հայ ժողովուրդը բոլորովին գուրկ էր ինքնապաշտպանութեան կարեւոր գէնքերէն, մանաւանդ որ այդ նահանգներուն ժողովուրդը պատանդ էր Իթթիհատական կառավարութեան ձեռքը:

Սօսք տանք Արտակ Դարբինեանի՝ իբր ականջալուր վկայի. «Արամի հետ աւելի արտակից խօսակցութիւն կ'ունենայի եւ այն համոզումը գոյացուցած էի թէ իր միւս ընկերներէն - Վրամեանէն, Իշխանէն - աւելի անկեղծ է իր արտայայտութիւններուն մէջ: Ընկերներս միայն պաշտօնական տեսակցութիւններու ժամանակ կը խօսէին այս կամ այն դաշնակցական պատասխանատու դէմքերուն հետ, շատ համամիտ չէին որ ես՝ թէ՛ հին, թէ՛ նոր շրջանին, երբեմն համադիպումներ կ'ունենայի Արամի, պատահականօրէն ալ Վրամեանի հետ: «Արամն ալ միեւնոյն խորամանկ տիպն է, ինչպէս իր միւս

ընկերները», կ'ըսէին մերոնք դառնացած: Ճիշտ չէր այդ: Արամ կոպիտ եւ կրֆոտ էր, բայց խորամանկ չէր»: (ԴԱՐԲԻՆԵԱՆ ԱՐՏԱԿ, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 253):

«Կովկասի մէջ, կ'ըսէ նոյն ականատես եւ ականջալուր վկան, հայ կամաւորական գունդերու կազմութեան մասին դեռ նոր լուրերը հասած էին Վան, երբ Արամ նորէն ինձ այցելութեան եկաւ: Հակառակ սպասածիս՝ այս անգամ իր դեմքին վրայ չտեսայ սովորական գուարթութիւնը: Մեր խօսքը, ի հարկէ, պատերազմին շուրջ պիտի կեդրոնանար»:

Սօսիլ պատերազմի շուրջ, յարմար առիթն էր որ Դարբինեանը իր սրտին գառնութիւնը թափէր Դաշնակցութեան վրայ, անոր երեսին զարնելով կամաւորական գունդերու թրքակառողջուցիչ կազմակերպութիւնը:

Սօսք տանք բարկութեամբ բռնկած ուսմկավար գործիչին. «Չկըրցայ աւելի երկար գսպիլ ներսս կուտակուած վրդովումը եւ Արամին ըսի թէ ձախողանքով հիւսուած՝ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան մէջ մեծագոյն սխալը պիտի ըլլայ սա կամաւորական գունդերու կազմակերպութիւնը» (նոյն, էջ 253):

Ռամկավար գործիչը որ կը սպասէր իր վիրաւորիչ խօսքերուն փոխարէնը, նոյնքան ուժեղ պատասխան մը ստանալով, զարմացաւ երբ Արամը պազարխունութեամբ ուղեց որ Դարբինեանը լուսաւորէ իր միտքը:

Այստեղ խօսքը ուսմկավարին կը թողում, որ աւելի պերճախօս է քան իմս: «Բացատրութիւնս իր հիմնակետերուն մէջ այս եղաւ: Համիտեան կոտորածներուն շրջանին մէջ չէ որ կ'ապրինք այժմ: Մեր ազատագրական շարժման ընթացքին թուրքիա երբ եւ իցէ ինքզինքը այնքան ազատ չէր գտած, որքան այսօր. կամաւորական շարժումը պիտի բորբոքէ թուրքերու միջեւ այժմ գսպուած բարբարոսական կիրքը եւ այս անգամ թուրքահայութիւնը անխնայ պիտի ջարդուի ամէն տեղ, մանաւանդ որ ինքնապաշտպանութեան միջոցներէն բոլորովին զուրկ է» (նոյն, էջ 254):

Ռամկավար գործիչին զարմանքը կրկնապատկուեցաւ երբ «անսպասելիօրէն Արամ պատասխանեց, թէ ինքն ալ, Վրամեանն ալ այդ համոզումն ունին»:

Երբ Դարբինեան զարմանքէն սթափելով հարցուց թէ «ուրեմն ինչո՞ւ այս քայլն առի՞ք», Արամը մատը բուն վէրքին վրայ դրաւ եւ սպշութեան մատնելով ուսմկավար գործիչը՝ պատասխանեց, «մեզի հարցնող չեղաւ. էրգրումի մեր ընդհանուր պատգամ. ժողովին որոշման համաձայն, մենք պէտք էր պահէինք մեր լուսայեալ դիրքը թէ՛ թուրքիոյ եւ թէ՛ Ռուսիոյ հանդէպ»:

Ռամկավար գործիչին զարմանքը կրկնապատկուեցաւ երբ «անսպասելիօրէն Արամ պատասխանեց, թէ ինքն ալ, Վրամեանն ալ այդ համոզումն ունին»:

Երբ Դարբինեան զարմանքէն սթափելով հարցուց թէ «ուրեմն ինչո՞ւ այս քայլն առի՞ք», Արամը մատը բուն վէրքին վրայ դրաւ եւ սպշութեան մատնելով ուսմկավար գործիչը՝ պատասխանեց, «մեզի հարցնող չեղաւ. էրգրումի մեր ընդհանուր պատգամ. ժողովին որոշման համաձայն, մենք պէտք էր պահէինք մեր լուսայեալ դիրքը թէ՛ թուրքիոյ եւ թէ՛ Ռուսիոյ հանդէպ»:

Մնացեր էր միակ զաղտնիք մը, զոր ուսմկավար գործիչը կ'աշխատէր կորզել դաշնակցական պետի բերնէն: Երբ անոր հարցուց թէ ե՞րբ եւ ի՞նչպէս փոխուեցաւ այդ որոշումը, պատասխանը եղաւ պարզ եւ անկեղծ. «այնտեղ, կ'ըսէ ականջալուր վկան, թիֆլիսի մէջ տրուած այդ որոշումին, մենք այստեղ բոլորովին անտեղեակ էինք եւ հակառակ էինք առնուած քայլին: Բայց ի՞նչ ընենք: Ռոստոմ այնտեղ չէ, գործը մնացեր էր Զամանեանի պէս գեաղա-գիւղանների ձեռքում» բառացի կերպով անկցուց Արամ կրֆոտած ձայնով մը»:

Արամը իրաւունք ունէր բարկանալու «ազգային Բիւրոյ»ի քաղքենի հայ մտաւորական եւ քանի մը կովկասահայ դաշնակցականներու դէմ, որոնք թրքահայ իրականութեան անտեղեակ մարդիկ, նստած հանգստաւէտ աթոռներու վրայ, իրենք զիրենք համարելով նրբամիտ զիւսուողներ, ուզածուէն պէս կը մանէին ու կը քակէին զժբախտ ժողովուրդին ճակատագիրը: Իսկ խոհեմ Արամը՝ աչքով կը տեսնէր իրականութիւնը եւ Արտակ Դարբինեանը իրաւացի կերպով կը գրէր. «այստեղ պէտք է յիշեմ թէ Կովկասէն Վան ուղարկուած գործիչներէն ամէնէն աւելի Արամն էր որ կրցած էր քիչ շատ ուսումնասիրել հայերուն կացութիւնը թուրքիոյ, մասնաւորապէս Վանի մէջ: Այդ գործիչներէն միայն Արամն էր որ 10 տարի տեսակնօրէն ապրած էր թուրքիոյ մէջ, 7-8 տարի միայն Վանի մէջ»:

Շատ բնական բան է որ սպրելով վտանգներով լի միջավայրի մը մէջ, ամէնէն տաքջուլս մարդն ալ կը գառնար խոհեմ եւ հեռատես:

«Ընդհանուր զօրահաւաքի յայտարարութիւնը, ինչպէս կ'ըսէ նոյն ականատես վկան, ցնցեր էր թէ՛ հայ եւ թէ՛ թուրք ժողովուրդները, եւ այդ ա՛յն աստիճանի՝ որ Վանը, Մուշը եւ էրգրումը աշխարհէն կղզիացած էին»:

Թողունք որ Դարբինեանը ուրուագծէ այն ահաւոր պատկերը, որ սպազայ գալիք չարիքներուն խօսուն լեզուն է:

«Արամի յաջորդ այցելութիւններուն ժամանակ՝ ամէն անգամ, երբ կը հարցնէի իրեն թէ ի՞նչ լուր ունի Կովկասէն, կովկասեան ոռոս բանակին շարժումներէն, Արամ ջղայնացած կը պատասխանէր. - ո՛նեւ լուր չունինք, շուտ շուտ սուրհանդակներ կ'ուղարկենք այն

կողմը, բայց գացողը ա՛լ ետ չի դառնար, թշնամիին ձեռքը կ'իյնայ եւ կամ սահմանին այն կողմը անցնելէ յետոյ՝ ալ չի կրնար կամ չ'ուզեր ետ վերադառնալ:

Այո՛, լուր չկար դուրսէն: Վան կղզիացած էր, ո՛չ միայն լուր չուներ Կովկասէն կամ արտաքին աշխարհէ, այլ կղզիացած էր դրացի նահանգներէն, ի՛նչ կ'անցներ կը դառնար Մուշ կամ Էրզրումի մէջ, բան մը յայտնի չէր մեզի» (նոյն, էջ 255):

Երբ այս էր ցնցող պատկերը, ծաղրական կը դառնայ Լէօի փաստարկութիւնը թէ «Վանի, Մուշ եւ Էրզրումի կոմիտէներուն դիմումը» որ «Կը պահանջէր վերջ տալ կամաւորական շարժումներուն, ո՛չ մի արդիւնք չէր ներկայացնում, այլ լոկ ձեւակառուութիւններ հանդիսացան, որովհետեւ երբ Թիֆլիսը չլսեց, նրանք այլեւս չխօսեցին եւ իրանք էլ յարեցին շարժման»:

Յիմարութիւն պիտի ըլլար, որ Վանի, Մուշի եւ Էրզրումի դաշնակցականները, որոնք սարսափի եւ կրակի մէջ կ'ապրէին, թեթեւ սրտով յարէին այդ թրքակառողեցիչ շարժումին:

Այստեղ կրկին խօսք կու տանք ուսկալար գործիչին, որ դաշնակցական պետերը ծաղրելով հանդերձ, մատը կը դնէ ճշմարտութեան վրայ, - «Անձկութեան մատնուած էին նաեւ դաշնակցական ղեկավարները, Արամ, Վրամեան եւ Իշխան, այսինքն այն ղեկավարները՝ որոնք յանկարծ իրենց երեկուան երգատեսուքներէն սքափած՝ կ'ապրէին երկրին ահաւոր իրականութեան մէջ, որոնք ի հարկէ, այժմ կ'անիծէին այն օրերը, երբ իրենք իբրեւ Հայ ժողովուրդին ազատարարներ, իբրեւ «յեղափոխականներ», լրագրական էջերէն կամ միթիւններուն բեմերէն կրակ ու բոց կը ժայթքեցնէին, իր «դարաւոր ֆունէն հայ ստրուկը» արթնցնելու, թուրք բռնակալութիւնը խորտակելու համար:

Ա՛յո, երեկուան մամարտակութեամբ հրճուող Վրամեանները, «այդ մեքն ենք գալիս...» որոտացող Արամեաններն ու Իշխանները այսօր սմբեր, կծկուներ էին» (նոյն, էջ 255):

Ահա թէ ինչպէս վերէն եկած հրամանի մը վրայ գրուեցան եւ պիտի գրուին Հայոց ժամանակակից պատմութեան եղերական զըրուազները, որոնք առատ աղբիւրներ պիտի մատակարարեն ներկայ եւ ապագայ թուրք պատմագիրներուն, անոնց ձեռքը տալով այնպիսի փաստեր, որոնցմով արդարացուի եղեւնագործ իթթիհասի գործած մեծ ոճիրը:

ԹԱԹԱՐՆԵՐՈՒՆ ԵՒ ՎՐԱՑԻՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

Մինչ Կովկասի Հայ հոգեւորական եւ աշխարհական «Քաղաքագետները» թեթեւօրէն հրապարակի վրայ կը ցուցադրէին իրենց դիւանագիտական փայլուն հանձարը, մինչդեռ Կովկասեան եւ արտասահմանեան անգիտակից մամուլը խոշոր տառերով եւ զգայացունց վերնագիրներով աշխարհիս չորս կողմը կը տարածէին ամէն լուր չափազանցուած գոյներով, հետաքրքրական էր տեսնել թէ Կովկասեան միւս ազգերը, թաթարներն ու վրացիները, որոնց քաղաքական ղեկավարները, եւ անոնց մամուլի ներկայացուցիչները, հայերուն պէս տեսած չէին քաղաքագէտ պատրաստող դպրոցներ եւ որոնք, սակայն, խորամանկ եւ ճարպիկ մարդիկ էին, գաղտնապահութեան մէջ եփուած, որոնք կը գործէին մտքով եւ ոչ թէ սրտով, ի՛նչ դիրք բռնած էին կամաւորական զուգրերու կազմութեան վերաբերմամբ:

Արտակ Դարբինեան, որ շատ մօտէն ուսումնասիրած էր կովկասեան այդ երկու ժողովուրդներուն վերաբերումը Ռուսաստանի եւ Թուրքիոյ հանդէպ, իրաւամբ կը գրէ՝-

«Թաթարները, Ատրպէյճանցիք, եւ առհասարակ Կովկասի մահմետական ժողովուրդները ակնյայտօրէն հակառակ էին ռուս-թրքական պատերազմին, իսկ վարագոյրի ետեւէն շերտօրէն կը մաղթէին յաղթանակը թուրքներուն եւ հնարաւոր գաղտնի աջակցութիւնը պիտի ուզէին տալ անոնց, օրինակ Կովկասի զինուորական շարժման վերաբերեալ ամէն տեսակ տեղեկութիւններ կը հաւաքէին եւ Պարսկաստանի վրայով Կ. Պոլիս կը հասցնէին:

Թաթարները ռուս բանակին զինուոր չէին տար, բայց իբրեւ հաւատարմութեան ապացոյց, անոնք ալ կամաւոր տուին ռուս բանակին, «Վայրենի գօրաբաժին» անուանով, բայց ո՛չ թէ կովկասեան սահմանի, այլ գերմանական նակատին վրայ երթալու եւ գերմաններուն անձնատուր ըլլալու համար, որովհետեւ մեծ յոյս ունէին գերմանական յաղթանակին վրայ. ինչպէս նաեւ կը հաւատային որ թուրքերը պիտի գան եւ ազատեն Կովկասը ռուսական լուծէն»:

Վրացիները, աւելի խորամանկ, ճկուն եւ ահռելի հայատեաց, բոլորովին վերապահ դիրք մը բռնեցին:

«Վրացիներուն վերաբերումը պատերազմին հանդէպ, հայկականէն եւ թաթարականէն տարբեր բնոյթ կը կրէր: Վրացական ժողովուրդը երկու դասակարգի բաժնուած էր. աննշան փոքրամասնութիւն մը կը կազմէր վրացական կալուածատէր - ազնուական դասակարգը, որ կողմնակից էր գերման-թուրք յաղթանակին, որպէսզի իրենց դիրքերը ապահովուած մնային:

Վրացի ժողովուրդին խոշոր մեծամասնութիւնը գիւղացիներ եւ գործարաններու մէջ աշխատող բանուորներէ կազմուած ըլլալով՝ իր

տնտեսական վիճակին բարելաւումը կը փնտռէր սոցեալ – դեմոկրատ կուսակցութեան ղեկավարը: Իսկ այս վերջինը, իբրեւ մէկ հատուածը համառուսական նոյնատեսակ կուսակցութեան, հակառակ էր ձեռնարկներ անելու, բայց ջերմ բարեկամ ոուս ժողովուրդին: Ուրեմն, վրացիները ըմբռնելով որ բոնկոյ պատերազմին մէջ երկու կողմերն ալ փոքրամասնութիւն կազմող ղեկավար խաւերու շահադիտական ճիշտումներէն կ'առաջնորդուէին, վերապահ կը մնային պատերազմին հանդէպ: Եւ երբ Թուրքիոյ կողմէ եղած բանակցութիւններուն ընթացքին առաջարկուեցաւ անոնց «ապստամբի» Ռուսիոյ դէմ, խիստ որակումներով վրացի սոց. դիմոկրատները ետ մղեցին թուրքերու առաջարկը:

Վրացիները դժգոհ էին նաեւ Հ. Յ. Դաշնակցութենէն անոր կազմած կամաւորական շարժումին համար¹: Անոնք կը մեղադրէին Դաշնակցականները, որ ձարական կառավարութեան էնթրիկներուն ենթարկուելով՝ թուրք կառավարութիւնը կը գրգռէին հայերուն դէմ՝ իրենց տուած երկու-երեք հազար կամաւորներով, երբ արդէն օրինական նամբով Ռուսիոյ ամբողջ հայերը իրենց զինուորական ծառայութիւնը կը կատարէին ոուս բանակին մէջ» («Յուշեր», էջ 248):

1. Անհարկութիւն Թիֆլիսի ազգային Բիւրոյի անդամներուն, որոնց մէջ խառնուած էին ինչպէս տեսանք, քաղցրնի մտաւորական շարքին մէջ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

ԵՒ ԳԱՂԹԱՀԱՅՈՒԹԵԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

Մինչ մեծ ու փոքր ազգերը, որոնք դեռ համաւերոպական պատերազմին բոցերուն մէջ նետուած չէին, խորապէս ըմբռնելով քաղաքական նոր կացութեան արտակարգօրէն ծանրակշիռ հանգամանքը, աճապարեք էին չէզոքութիւն յայտարարելու, նոյնիսկ երեսնամեայ դաշնագրով՝ Գերմանիոյ եւ Աւստրո-Հունգարիոյ կապուած Իտալիան վճռական քայլ մը առնելէ զգուշացեր էր, չուզելով ինքզինքը ենթարկել արկածախնդիր քաղաքականութեան մը անորոշ ելքին եւ յայտարարեք էր չէզոքութիւն:

Այդ մեծ ու փոքր ազգերը ունենալով բանակ, զինուորական ոյժ եւ պաշտպաններ, հետեւելով բանականութեան ձայնին, վերապահ ընթացքի մը կը հետեւէին եւ չէին ուզէր Երբեակ Համաձայնութեան եւ կեդրոնական կայսրութիւններու մէկ կամ միւս կողմին համակրանքի կամ հակակրանքի ո'րեւէ արտայայտութիւն ընել, ուշադիր հսկելով օրէ օր պատերազմի փոփոխակի ելեւէջներուն:

«Իւրաքանչիւր ազգ, կը գրէ Պալաքեան Վարդապետը, իր ամենանշանաւոր պետական հիմ ու փորձ մարդիկը անպարտք էր բերել պետութեան ղեկին գլուխը, եւ խոհեմութեան ու անձկանօք ամէն ազգ սկսեր էր լուրջ միջոցներ ձեռք առնել, կարեանալ դիմակայելու իրենց երկրին սահմաններուն մօտեցող արիւնի համաշխարհային փոթորիկը:

Ամէն ազգ հետամուտ էր ըստ կարելոյ թափանցելու խորհուրդները իր մտքին ու սրտին, եւ անկարելի կ'ընէին բոլոր պետութիւնները, զրացի ազգերուն կոահայեաց չտալու համար, իրենց գաղտնապէս ձեռք առած ֆալսական, վարչական եւ զինուորական միջոցները»:

Աշխարհաստան պատերազմը միայն թոյլ, անզէն եւ անպաշտպան բուռ մը հայերու ջիւղերը ամուր պահեր էր, կարծես լուսնի

աշխարհին մէջ նստած ղէպքերը վերէն կը ղիտէին եւ վճիռներ կ'ար-
ձակէին:

Չկար ազգային կեզրոնական իշխանութիւն մը, որ մատնացոյց
ընէր խորխորատը, որ լայն բացուէր էր թրքահայութեան առջեւ: Էջ-
միածնի Աթուռին վրայ բազմած էր վերջին աստիճանի ուսուսակը
կաթողիկոս մը, որ Թիֆլիսի փոխարքայական պալատին թովիչէն
կախարդուած՝ իր խորհրդականներով թմրեր մտեր էր ձարականու-
թեան գիրկը:

Կար Գում-Գաբուրի Պատրիարքարանը, որուն գահակալները, Ար-
շարունի Պատրիարքը՝ Նղային հիւանդութենէն բռնուած, եւ անոր
յաջորդը՝ Զաւէն Պատրիարքը, պնդազուլու եւ յամառ, անկարող էին
ազգօգուտ քաղաքականութեան հետեւիլ:

Կար Սազըզ-աղաճի Պատրիարքարանը, որուն գահակալը՝ Թէրզ-
եան Կաթողիկոս-Պատրիարքը, որ շուարած մնացեր էր, չունենալով
ո՛րեւէ ազդեցութիւն իմաստուն քաղաքականութիւն վարելու, վէճի
բռնուած էր իր համայնքին վարիչներուն հետ:

Կար Հայ-Բողոքական հասարակութեան ժողովարանը, որուն
վերապատուելին եւ իր օգնական պատուելիները հայկական կոտո-
րածի մէջ կը տեսնէին յաւիտենական փրկութեան ապահովութիւնը:
Անոնք, ըստ իրենց տեսութեան, կոտորուող հայերը կը նկատէին
«Մարտիրոսներ», որոնք ազատելով այս թշուառ եւ անցաւոր աշխար-
հէն, երկնքի մէջ պիտի պսակուէին անթառամ պսակներով: Անոնք
ներշնչուած էին գլխաւորապէս ամերիկեան պատուելիներէն, որոնցմէ
երկուքը ես տեսա Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին
մէջ. անոնք՝ երբ արդէն թրքահայաստանը ծածկուեր էր հայերու
անմեղ արիւնով, մեզ միտիթարելու համար ցոյց կու տային շարան-
շարան մարտիրոսներ:

Մէջտեղ կը մնար անհովիւ, անղեկ եւ միամիտ ժողովուրդ մը,
որ չէր գիտեր թէ ո՛ր սուրբին ապաւինէր, որպէսզի իր աչքերը բա-
նար իրական վերահաս վտանգին վրայ:

Այս ճշմարտութեան վրայ կը կանգնի զգաստացեալ Վարդա-
պետը, որ գործին 44րդ էջին մէջ կ'արձանագրէր. «իմչպէս միշտ,
նոյնպէս պատմական այս նակատագրական օրերուն ես, ազգային
որոշ քաղաքականութիւն գոյութիւն չունէր»:

«Համագայիին ընդհանուր կարգախօսի չգոյութեան պատճա-
ռով, ամէն հայ եւ ամէն կուսակցութիւն, իր ըմբռնած եւ նախա-
սիրած եղանակով, կը խօսէր ու կը գործէր անպատասխանատու
կերպով»:

ՊՈԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԹԵԹԵՒԱՄԻՏ ԸՆԹԱՑՔԸ

Երբ Թիֆլիսի փոխարքայական պալատին մէջ եւ երիտասարդ
թուրք կառավարութեան ղաղտնի որջին մէջ ամբողջ թրքահայ ժողո-
վուրդին մահուան դատաւճիռը կը ստորագրուէր, անդին՝ Կ. Պոլսոյ
մէջ, Վոսփորի գեղածիծաղ ափերուն վրայ, նստած հայ ժողովուրդը,
միամիտ եւ անգիտակից, ինչպէս միշտ, անձնատուր եղեր էր արտա-
կարգ խանդավառութեան մը, ցուցադրելով ողբալի տեսարան մը,
ճիշտ այնպէս՝ ինչպէս ցուցադրեր էր երիտասարդ թուրքերու յեղա-
փոխութեան օրը:

Հագիւ համաերուպական պատերազմը յայտարարուած, Կ. Պոլսոյ
հայ ժողովուրդը դարձեր էր Երբեակ Զինակցութեան յաղթանակնե-
րուն թմրկահարը:

Այսպէս, երբ զերման բանակները գրաւելով Պեյճիքան եւ արագ
յաղթանակներով կը հասնէին Փարիզի դռներուն առջեւ, հայերը ցոյց
կու տային իրենց կախ երեսները, կարծելով թէ հայկական բանակ-
ներն ըլլային, որոնք պարտութեան մատնուած՝ պատերազմի ճակա-
տէն ետ կը դառնային կորաքամակ:

Իսկ երբ ձարական բանակները ուժգին թափով արեւելեան
Բրուսիան կը մտնէին, «կախ երեսները» կը շտկուէին, աննելով
ճառագայթեալ ժպիտներ եւ փայլուն աչքեր. անոնց այնպէս կ'երե-
ւէր թէ հայկական բանակներն էին, որոնք յաղթանակէ յաղթանակ
ընթանալով, կը յառաջանային աշխարհի տիրապետութեան համար,
ուստի՝ իրար կը շնորհաւորէին: Բնական բան էր որ այս հանգա-
մանքը չէր կրնար վրիպիլ Իթիթհատական կառավարութեան գիտող
եւ սրատես աչքերէն եւ կատարութեամբ կը լեցնէր ամէն թուրքի
սիրտը:

Լրագիր կարդալու պէտք չկար: Հայերուն «գուարք» կամ «կախ»
երեսները՝ պատերազմի մէջ-մէկ պաշտօնական «յայտարարութիւն-
ներ» էին:

«ԶԳԱՍՏԱՑԵԱԼԻՆ» ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ահա այս շրջանին էր որ «զգաստացեալ» Վարդապետը, որուն
ականջներուն մէջ տակաւին կը հնչէր «բռնագրօսիկ տեղահանու-
թեան» սարսափազդու ձայնը, եւ որուն մտքին մէջ սկսեր էր ուրուա-
գծուիլ ամբողջ հայ ժողովուրդի բնաջնջումին ղաղափարը, որոշեց
վերադառնալ իր ծննդավայրը, որպէսզի, ինչպէս կ'ըսէ ինքը, «օգ-
տակար ըլլայ հայ ժողովուրդին, որ իսկապէս անփրչական վտանգիմ
մէջ կը տեսնէր եւ ահաւոր անդունդի մը վրայ կը գտնուէր»:

Սեպտեմբերի կէսին մեկներ էր Պերլինէն դէպի Պոլիս, առանց «մտիկ ընելու, ինչպէս կ'ըսէ ինքը», մի քանի բարեկամներուն, որոնք խորհուրդ կու տային երթալ Կովկաս եւ միանալ հայ կամաւորական խմբերուն եւ անցնիլ Տանկաստան»:

Ան մերժեր էր բարեկամներու խորհուրդը, «վասն զի, ինչպէս կը գրէ, Բերլինի մէջ գտնուող ամէն ազգի օտարականներ 20-16 տարեկանները իրենց պատկանող հիւպատոսներէն ստիպողական հրահանգներ կը ստանային դառնալու հայրենիք եւ պատրաստ ըլլալու կատարելու իրենց պարտականութիւնը հանդէպ հայրենիքին»:

Իսկ օտար երկիրներուն մէջ գտնուող գերմաններ գունդագունդ կ'անապարէին դառնալ Գերմանիա եւ հագնելով իրենց զինուորական զգեստները կը փութային խանդավառութեամբ իրենց պատկանող գունդերուն հետ դէպի ռազմականատ: Բաղտատի երկաթուղագծի շինութեան մէջ աշխատող գերման հազարաւոր գործաւորներ սկսած էին ժամանել Պերլին՝ սահմանագլուխ երթալու համար»:

Շահեկան է գիտնալ թէ ի՞նչ էր պատճառը, որ «զգաստացեալը» եւ «հայկական «բարենորոգումներու» պատրիարքարանի կեդրոնական կոմիտէի անդամը» որ կարող էր Շուէրի վրայով Կովկաս անցնիլ, նախընտրեր էր Պոլիս վերադառնալ, ամէն վտանգ աչք առնելով»:

Անա թէ ինչ կը գրէր ան:

«Իսկ ես արկածախնդրական կը գտնէի այսպիսի յանդուգն քայլ մը: Որովհետեւ կամաւորական այսպիսի հապենպ շարժում մը պատերազմի առաջին ամիսներուն իսկ, յոյժ վտանգաւոր կը գտնէի, որ միանգամայն գրգռիչ ազդեցութիւն մը պիտի ընէր թուրք-իթքիատական ռերագործ կառավարութեան վրայ, եւ անպայման աղիտաբեր հետեւանքներ առաջ պիտի բերէր թուրք կայսրութեան մէջ ապրող երկու միլիոնէ աւելի հայ ժողովրդեան համար»:

Ամէն անոնք՝ որոնք չափազանց յուսադրուած էին ռուս պետութեան հայասէր քաղաքականութեամբ, եւ կը կարծէին թէ շնորհիւ ամենաողորմած ձայրին հնար պիտի ըլլար թրքահայաստանը փրկել, կը յիշեցնէի 1878ի ռուս-թրքական վերջին պատերազմը, երբ Կարինը գրաւելէ վերջ հայ ազգի զօրավարներով, յանկարծ քաղաքական փոխանակութեամբ մը, կը քաշուէր ռուս բանակը Կարնէն, տեղւոյն 80 հազարի մօտ հայ ժողովուրդը թողնելով թուրք կառավարութեան եւ խուժանին մոլեգնեալ վրիժառութեան» (Հայ Գողգոթան, էջ 31):

Այդ տաժանելի ճամբորդութեան միջոցին, ան ուրիշ բան մըն ալ սորվեր էր: «Սարսափը ընդհանուր է, կը գրէր, ամէն ազգ եւ անհատ նախապատրաստութիւն կը տեսնէր, ըստ կարելոյն հետու մնալու եւ հարկադրուած պարագային՝ ինչ վնասով դուրս ելլելու միջոցներ ստեղծելու հետամուտ ըլլալով»:

ԱՌՍԱՅԻՆ ԶԱՐԱԳՈՒՇԱԿ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ուղեւորը Սեպտեմբերի վերջը հասաւ Պոլիս, ճիշտ այն շրջանին, երբ գերման եւ ֆրանսական բանակները սկսեցին «խրամատներ»ու պատերազմը:

«Հազիւ Ղալաթիոյ քաղաքի մաքսատունը դուրս եկած, կը գրէ ան, մաքսատան ծանօթ պաշտօնեաներ, որոնք յանախակի նամբորդութիւններու քերամք առիթ ունեցած էին հետս ծանօթութիւն կամ արեւելեան բառով բարեկամութիւն հաստատելու, երբ իմացան որ այս անգամ Պերլինէն կը դառնամ, չափազանց հետաքրքրուած, ձգելով խուճամբոյս նամբորդներու գոյքերու խուզարկութիւնը, շուրջս բոլորուած սկսան տեղեկութիւններ խնդրել գերման յաղթանակներու մասին»:

Ձի Թուրքիա դեռ պատերազմի մտած չըլլալով, ֆրանսական եւ անգլիական Պոլիս հասած թերթեր, ինչպէս եւ յոյն եւ հայ պոլսական թերթեր, գերման յաղթանակները սուտ հանելով թուրքերը բնական բերումով յուսահատութեան մատնած էին անգթօրէն»:

Բնականաբար ստիպուած ըլլալով անխորհուրդ կերպով արտաշայտուելով չենթարկուիլ կասկածանքի, Պոլիս մտած օրս իսկ փութացի պաշտօնեաները ոգեւորել գերման իրական եւ ենթադրական յաղթանակներով...»:

Ուղեւորը, հակառակ իր կամքին, ինքզինքը գերմանասէր ցոյց տալով, շահած էր զինքը շրջապատող մաքսատան պաշտօնեաներուն վստահութիւնը եւ անոնց լեզուն բացած:

«Այնքան հանելի թուեցաւ, կը գրէր ան, գերմանական խօսելակերպս եւ այնքան իրենց արտի բելերուն մօտիկ, որ մաքսատան խուզարկու պաշտօնէից պետը, գովելով ողջմտութիւնս ըսաւ. «տէսփոք էֆէնտի, քիչ մը խրատ տուր Պոլսոյ ազգակիցներուդ, որոնք գլխովին հակառակ կը խորհին ձեզի, որպէսզի ետ կենան իրենց ռուսասիրութենէն...: Այնքան առաջ գացած եմ դէպի ռուսը, ֆրանսացի եւ անգլիացի իրենց համակրութեան եւ սիրոյն մէջ՝ որ ան օրը երբ ռուսը յաղթող է, հայոց երեսները կը խնդան... իսկ երբ ռուսը պարտուած է՝ հայերը տխուր են...: Այսքան անկեղծութիւնը իրենց գլխուն յետոյ փորձանք կը բերէ...»:

Մաքսատան պաշտօնեաներուն պետին խօսքը թուրք ժողովուրդին համար, դարձեր էր հասարակաց կարծիք մը: «Մայրաքաղաքի հայութիւնը այնքան ակնյայտի կերպով սկսած էր արտաշայտել իր ներքին զգացումներն, որ թուրք թերթերը, ինչպէս «Կարակէօզ», հեզմօրէն կը գրէին թէ օրուան պատերազմական յաջողութիւնները կամ ձախորդութիւնները իմանալու համար, ձեզի հանդիպող առաջին հայուն երեսը նայեցէք, եթէ ուրախ է՝ Ռուսիան է յաղթողը,

եթէ տրտում է՝ ուրեմն Գեորգիանիսն է յաղթողը» (ՊԱԼԱՔԵԱՆ, նոյն, էջ 43):

Գլխաւորը, ի հարկէ, այս չէր: գլխաւորը մաքսատան հայասէր պաշտօնեային չարազուշակ ազդարարութիւնն էր: «այնքան անկեղծութիւն իրենց գլխուն յետոյ փորձանք կը բերէ»:

Մաքսատան պաշտօնեաները կը հասկնան հայոց գլխուն դալիք փորձանքը, որ պիտի գար երբ ոռու-թրքական պատերազմը սկսէր, իսկ իրենք՝ հայերը, աչքերնին գոց, իրենք զիրենք կ'օրօրէին սնամէջ յոյսերով, անկարող էին դասեր քաղելու իրենց գլուխէն անցած այնքան զարհուրելի փորձանքներէն:

Այդ փորձանքներէն դաս չբաղեց նաեւ հայութիւնը, երբ թրքահայաստանը ալլեւս մարդ մնացած չէր, եւ անոր ջարդուփշուր անդամները ցրուեցան Ֆրանսական հողին վրայ, եւ մասնաւորապէս Փարիզի մէջ, ուր հիմնուեցաւ Ֆրանգո-հայկական առեւտրական սենեակը, նպատակ ունենալով երկու ազգերու մէջ բարեկամական կապերը վերահաստատել: Հաստատութեան հանդիսաւոր բացումին օրը, պոլսեցի հայ մտաւորական մը՝ Լեւոն Կիւմիւշկերտան, հարազատ պատկերը Պոլսոյ հայ ժողովուրդին, բանախօսելով Ֆրանսացի եւ հայ հոծ ընտրանիի մը առջեւ, հայ-ֆրանսական բարեկամութիւնը պանծացնելու ուրիշ բան չգտաւ ըսել, բայց եթէ՝ ընդհանուր ծափահարութեան մէջ, առաջ բերել «Կարակեօզ»ի այդ նշանաւոր խօսքը, առանց մոռցած ըլլալու թէ Ֆրանսան՝ Կիլիկեան յանձնելով գերմանական կառավարութեան, խղեր էր այդ բարեկամութեան կապը:

Պալաքեան Վարդապետը իրաւունք ունէր ըսելու: «Արդէն քաւիին վրայ իսկ կրցայ իրագրել ըլլալ այն ահաւոր խրամատին, որ բացուած էր թուրք եւ հայ երկու դրացի ժողովուրդներու միջեւ: Միտքս տանջող երկիւղով մը տեսայ, որ մայրաքաղաքին հայութիւնը տարուելով դարաւոր թշնամական իր ցեղային զգացումներէն, ստուգի կործանարար անկեղծութեամբ մը, պատերազմի երկրորդ ամսուն իսկ, թուրք ժողովուրդի մոլեռանդութիւնը ու հայատեաց զգացումներն մոլեգնութեան հասցնող թափով մը իր դէմ գրգռած էր: Գիտնալով հանդերձ, թէ թուրքին կատաղութիւնը մինչեւ ի՞նչ ահաւոր աստիճաններու կրնայ հասնիլ, եւ ի՞նչ եղեռնական հետեւանքներ կրնայ ունենալ...»:

Գոնէ վերջին 30 տարուան արիւնոտ փորձառութիւնը, դեռ չէր զգաստացուցած զինքն, եւ չէր կրցած նուազ անկեղծ եւ աւելի վերապահ ընել հայը...» (Նոյն, էջ 40):

Ապա ճշտապէս կը խորհրդածէ. «Բայց այն ազգը պիտի շափեր աւելի, որ հեռատեսութիւն պիտի ունենար դատողութեամբ եւ ո՛չ զգացմամբ վերլուծուած դէպքերու համաձայն նաւերու արեան

համատարած այս տիեզերական հեղեղին մէջ, դէպի խաղաղութեան փրկարար նաւահանգիստը, ըստ կարելոյն քիչ վնասով դուրս գալ կարեւորապէս համար յարգահոս արեան այս ահաւոր նախնիրէն»:

Ճիշտ այստեղ էր բուն չարիքին արմատը. ուղեղով գործելու տեղ՝ սրտով գործել:

ՊՈԼՍՈՅ ՀԱՅԵՐԸ ՑՆՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Հայ Գողգոթան»ի հեղինակը սարսափեցաւ, երբ տեսաւ հայ ժողովուրդը, որ ցնծութեան մէջ էր, յիշեցնելով այն երանելի օրերը, երբ նոյն այս ժողովուրդը, ուրախութեամբ գինովցած դիմացը եկող «եքիտասարդ թուրքը» գրկաբաց կը համբուրէր, կարծելով թէ անոր շնորհիւ փրկուած է ջարդի եւ կողոպտուի սպառնալիքներէն: Այժմ, երբ այդ «ազատարար» թուրքին սուրը կախուած էր իր վզին վրայ, ան նոյնպէս անձնատուր եղած էր անսահման ոգեւորութեան, որ չափ եւ սահման չէր ճանչնար:

Ահա թէ ինչ կը գրէր Պալաքեան Վրդ.ը:—

«Պոլսոյ հոծ հայութիւնը, իր փրկութեան ժամը վերջնապէս արդէն հասած համարելով, մեծ խանդավառութեան մէջ էր: Անհետատես կերպով՝ տարուած ախտաժէտ այս հոգեբանութեան եւ մտայնութեան խաբկանքով, անօրինակ մեծ թափ ստացած էր մայրաքաղաքի հայ ժողովուրդին արդէն սովորական դարձած հանդիսասիրութիւնը:

Ազգային պատմական կեանքներէ առնուած թատերական զգայացունց ներկայացումներ, տարաբախտ Կոմիտաս Վրդ.ի դեկավարութեամբ կազմակերպուած մեծ համերգներ, Բերայի Յսայեան սանուց լսարանական ցերեկոյթներ, գրական հաւաքոյթներ, թաղային երեկոյթներ կամ կիրակնօրեայ ցերեկոյթներ, գիշերային պարահանդէսներ, աշնանային «Փուտ-պօլի» մրցումներ, երկսեռ սկաուտական հրապարակային տոհմացման կարմիր խաչի անունով սարժուած յանախակի դասախօսութիւններ, եւ այլ այս կարգի հաւաքոյթներ, հանդէսներ, մրցումներ, իրար կը յաջորդէին երազատես խանդավառութեան մը առթած հիւանդագին ոգեւորութեամբ» (Նոյն, էջ 44):

Ցնծութեան մէջ էր նաեւ Կ. Պոլսոյ հայ մամուլին անգիտակեց մէկ մասը: «Պոլսոյ հայ օրաթերթերը, կը գրէ ակնանտես եւ ականջալուր վկան, մղուած այս խանդավառութեան ընդհանուր հոսանքէն, մեծադողող վերտառութիւններով կը պանծացնէին համաձայնական պետութիւններու սուտ ու շիտակ յաղթութիւնները յոյժ չափազանցեալ ձեւերով, իսկ գերմաններու սկզբնական իրական յաղթութիւններու մասին կա՛մ բոլորովին լուռ կ'անցնէին եւ կա՛մ աննշան ու աննշար աստիճանի մը կը հասնէին, չմոռնալով ի դէպս

եւ յանդէպս հակառակ արտայայտուելու ընդդէմ գերմաններու» (Նոյն, էջ 43):

Եւ իբր ապացոյց՝ կ'աւելցնէ. «առ այս համոզուելու համար, բաւ է աչքէ անցընել պատերազմի անմիջապէս վաղորդային - 1914 Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր - հրատարակուող հայ օրաթերթերն ու ասոնց մեծատառ վերնագիրները»:

ԻԹԹԻՀԱՏԻ ՆԵՆԳԱՄԻՏ ԺՊԻՏԸ

Այո՛, Պոլսոյ հայութիւնը, գլուխ ունենալով իր արժանաւոր մասուրը, ուրախութեանն զինովցած էր: Կը պարէին ու կը խնդային, յիշեցնելով արեւելեան թագաւորներու եօթը օր՝ եօթը գիշեր տեւող հարսանիքները, արշալոյսին հասած՝ հրճուանքի եւ կերուխումի մէջ: Կը ցնծային ու կը պարէին, որովհետեւ օրը-օրին կ'ապրէին եւ վաղուան մտահոգութիւնը չունէին, քանի որ Թալէաթ, հայերու «մեծ քարեկամ»ը կը հսկէր իրենց վրայ:

Տարբարխտարար, ինչպէս Կովկասի մէջ, հայերու «քարեացալիամ» կոմսը հմայեր էր Մուրէնեան Կաթողիկոսը, «ազգային մեծ գործիչը», այսպէս ալ Պոլսոյ մէջ՝ հայերու «մեծ քարեկամը» հմայեր ու զիւթեր էր մայրաքաղաքի դիւրահաւան հայ ժողովուրդը, մինչեւ իսկ Կ. Պոլսոյ եւ գաւառներու դաշնակցական պետերը, որոնք, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, մինչեւ իրենց սպանդանոց քշուելու օրը, չէին դադրած այդ ծածկամիտ մարդը իրենց բարեկամ եւ դաշնակից նկատելէ:

Ան, առիթ չէր փախցնէր մտնելու ազատ համարձակ հայկական սկումբներու, պարահանդէսի սրահներու, թատրոններու եւ ընտանեկան հաւաքոյթներու, ուշագիր աչքերով եւ սուր ականջներով տեսնելու եւ լսելու անոնց մտածութիւնն ու ներքին զգացումները: Ան, հայ պարզամիտ ժողովուրդը նկատելէր որ դարոցական մանուկ մը, որ դասարանի մէջ կ'աշխատէր ըլլալ լուռ եւ ծածկամիտ. իսկ խաղի եւ զբօսանքի ժամանակ, հսկող աչքերէ հեռու, կը դառնար շատախօս եւ սրտին մէջ եղածը դուրս կը թափէր:

Իրաւունք ունէր Պալաքեան Վրդ.ը գրելու. «Իբրքիստական ցեղամիտ կառավարութիւնը կամ նոյնն է ըսել համաճումն բոլոր բռնաւորներու նման, ո՛չ միայն ո՛նեւ արգելք չէր հաներ, այլ ընդհակառակն, օրէնքի կանխատեսած սահմանէն ալ աւելի դիւրութիւններ կ'ընծայէր, որ հայ ժողովուրդը, իր բոլոր խաւերով, շերտաւորումներով գրօսու ու ցնծայ, եւ ժամանակ չի գտնէ զբաղելու ու թափանցելու, մութին մէջ իր սարքած արիւնտ ու գաղտնի ծրագիրներուն...» (Նոյն, էջ 45):

Եւ արդարեւ, Հայկական Հարցի նոր արժարժումէն ի վեր, Իթթիհատական կառավարութիւնը հիանալի գաղտնապահութեամբ կը հետեւէր պոլսահայութեան բոլոր քայլերուն, որպէսզի ձեռքին մէջ ունենայ ապացոյցներ, զանոնք անցընելու իր հրատարակելիք հատորին մէջ, որպէսզի կարենայ ամբաստանել հայ ժողովուրդը իբրեւ դաւաճաններ Օսմանեան հայրենիքին:

Իթթիհատական կառավարութիւնը եւ թուրք մամուլը պատրուակներ կը փնտռէին թրքահայ ժողովուրդը թշնամի նկատելու, որովհետեւ անոր ինքնարուի հակադրանքը դէպի Թուրքիոյ դաշնակից Գերմանիան, եւ անոր եռանդուն համակրութիւնը դէպի Անգլիան եւ Ֆրանսան եւ անոնց բանակներուն յողթութեան փափաքող:

Անոնց ի՛նչ փոյթ՝ մտնելու հոգեբանական զննութեան մէջ, որուն եթէ հետեւած ըլլային՝ դիւրաւ պիտի հասկնային թէ հայերը քուններնին կը փախցնէին երբ դերմանական բանակներու յողթութիւնը կը լսէին եւ անոր պարտութիւնները իր այրած սիրտը կը զովագնէին, պատճառը՝ անոնց առած դաստիարակութիւնն էր:

Իրապէս, Կ. Պոլսոյ եւ գաւառներու հայ ընտրանին եւ անոր մասուրին ներկայացուցիչներուն մեծ մասը սնած եւ դաստիարակուած էին ֆրանսական, անգլիական եւ ամբիկեան վարժարաններու մէջ, եւ մտքերնին տողորուած անոնց գիրքերով եւ վէպերով, որով բնական զգացումով այդ ազգերու պէս կը մտածէին ու կը զգային:

Համակրանքի եւ հակակրանքի այդ բնական զգացումը հայ ժողովուրդին միայն յատուկ բան մը չէր, այլ նաեւ գոյութիւն ունէր ուրիշ ազգերու մէջ ալ:

«Կարծելով թէ ուսմէնները գերմանաւեր են, կը գրէ Պալաքեան Վրդ.ը, շնորհիւ իրենց ձօնէնցոյլունեան գերման կայսերական գերդաստանէն սերած թագաւորին, կը սկսիմ պանծացնել գերման ազգերը ու իրենց չաստուածացուցած կայսրն, եւ գերման յաղթանակներն պատմել, յուսալով գերմանախօս տնօրէնի քարեացակամութիւնը շահելով Պոլսոյ համար տոմսակ ձեռք ձգել: Ի մեծ հիասթափումն ինձի, յանկարծ խօսքս ընդհատելով կը պատասխանէ խոստովանաբար. «մոնսէնէր, դուք կը կարծէք թէ ուսմէնները գերմաններու կողմին պիտի պատերազմին. ո՛չ, ո՛չ ամենեւին, մենք ֆրանսացիները կը սիրենք, եւ եթէ դրամ շահինք, չենք երթար Պերլին ուտելու, այլ միայն Փարիզ կ'երթանք մենք»:

«Կը ջանամ գերմանասիրական բռնագրօսիկ ջատագովական ընդհատելով, միջին ուղղութիւն մը բռնել, եւ այս անգամ ֆրանսացիներուն քարեմասնութիւններուն վրայ խօսիլ եւ Մառնի նակատամարտը յիշել եւ զօրավար ժօֆրը գովել, որ գերմանները Մառնի մէջ պարտութեան մատնելով, Ֆրանսայի հոչակաւոր մայրաքաղաքը փրկեց եւ Սեպտեմբեր 2ին Սէտանի տարեդարձը Փարիզի մէջ

կատարելու իրենց ռազմաշունչ ցանկութիւնը յօդս ցնդեցնել տուաւ: Այ տարակոյս չունեցայ որ ռումէնները համաձայնականներու կողմէն պիտի պատերազմէին, զի ամէն ռումէն ալ շոգեմալի գործակալութեան այս պետին պէս կը խորհէր ու կը գգաք» (Նոյն, էջ 38):

Ճիշտ այդպէս էր բարեկեցիկ հայն ալ, որ եթէ ճամբորդելու ըլլար, ուղիղ կը վազէր իր սիրած Ֆրանսան ու Անգլիան, այն տեղերը մտխելով խոշոր գումարներ:

ՓԱՍՏՐՄԱՋԵԱՆԻ ՓԱՆՈՒՍՏԸ

Մինչ իթթիհատական կառավարութիւնը զայրոյթով կը զիտէր ռուս-թրքական սահմաններուն վրայ տեղի ունեցող հայ կամաւորական շարժումները, «որոնք կը կատարուէին, ինչպէս կ'ըսէ ականջալուր վկան, հակառակ Թուրքիոյ հայ քաղաքական պետերու կամբին», Գարեգին Փաստրմաճեանը անխորհուրդ քայլ մը կ'առնէր, առանց մտածելու անոր ծանր հետեւանքներուն վրայ:

Այդ սնապարծ եւ փառքի տենչացող մարզը, զաւակ կարնեցի մեծահարուստ գերդաստանի մը, հաւասարապէս յարգուած եւ սիրուած հայ եւ թուրք հասարակութիւններէն, յաջողոր էր ընտրուիլ երեսփոխան Օսմանեան խորհրդարանին:

«Գարեգին Փաստրմաճեանը, կը գրէ Պալաքեան Վրդ.ը, որ առանց զինուորական ո'րեւէ արժանիք ու փորձառութիւն ունենալու, եւ ոչ մէկ իրական պատերազմական գործ կատարելու, մէկ քանի զինավար ընկերներով Թիֆլիսի մէջ լուսանկարել կու տար ինքզինք մօտիմներ ի ձեռքին, եւ իբր «ոսկում»՝ Լօմտօն Տէյի Կրաֆիկ թերթին զրկելով վայրապար կը գրգռէր թուրք պետական մարդոց եւ ամբոյսին արդէն ատելավատ վրէժխնդրական կիրքերը, ընդդէմ անգէն եւ արդէն շուարած հայ դժբախտ ժողովրդեան» («Հայ Գողգոթան», էջ 57):

Այս անորակելի վարուելակերպը սաստիկ զայրացուց Թուրքիոյ դաշնակցականները, հակառակ Լէօի պնդումին որ կը գրէր. «... աւելի լաւ չէր լինի, որ Կ. Պոլսի Բիւրօն ամէն ջանք գործ դնէր արգիլելու համար որ Թիֆլիսի Բիւրօն չտարւէր կամաւորական արկածախնդրութեան մէջ: Բայց Կ. Պոլսի Բիւրօն թափաքելով փրագներ ի տակ, ընդհակառակն աջակցում էր Կովկասում սկսուած կամաւորական շարժման:

Այսպէս նրա կարգադրութեամբ էր որ Անդրամիկն ուղեւորեց Կովկաս կամաւորական խմբապետի պաշտօն ստանձնելու համար: Աւելին, առանց նրա գիտութեան եւ թոյլտուութեան չէր, որ շէֆերից մէկը, Օսմանեան պարլամենտի անդամ՝ Գարեգին Փաստրմաճեանը,

գնաց Կովկաս՝ նոյնպէս կամաւորական խմբապետների շարքը մտնելու. մի իրողութիւն, որ առանձնապէս կատաղացրեց երիտասարդ թիրաբերին եւ տեց նրանց ձեռքը մի ապացոյց էլ որ հայերը դաւանանքներ են: Եւ թիրք կառավարութեան հրատարակած հատորին մէջ, որ մեղադրամբ է Հայ Յեղափոխական կազմակերպութիւնների դէմ, մեծ տեսնում եմք մի լուսանկար, որ ներկայացնում է Փաստրմաճեանի եւ նրա խմբի երդման արարողութիւնը՝ պատերազմի դաշտը գնալուց առաջ. ի՞նչ արժէք կարող էին այնուհետեւ ունենալ Կ. Պոլսի դաշնակցականների փրագները» (Հտ. Բ. էջ 119-120):

«Իսկ իթթիհատական կառավարութիւնը եւ թուրք օրաթերթերը, կը գրէ Պալաքեան Վրդ.ը սաստիկ կը զայրանային տեսնելով իրենց սահմաններուն մօտեցող հայ կամաւորական խումբի մը գլուխ՝ Օսմ. պարլամենտի անդամ՝ Կարնոյ պատգամաւոր՝ Գարեգին Փաստրմաճեանը»:

Ողջամիտ մարդ մը կարող է ամբողջ ժողովուրդը մը «Դաւանան» նկատել, պարզապէս անոր համար որ երեսփոխան մը, հրացան շարժելու հագիւ կարող, պատճառ դառնայ ամբողջ ազգի մը բնաջնուածին: Քաղաքակիրթ երկիրներու մէջ, այսպիսի դէպք մը աննշմար պիտի անցնէր, եւ կամ՝ շատ շատ յանցաւորը կը բռնէին, կը դատէին եւ կը դատապարտէին, առանց անոր ընտանիքին եւ անոր պարագաներուն մազին անգամ դաչելու:

Յետ այսքան ջանքերի փաստերու, Լէօ պատմագիրը վերէն եկած հրամանին սիրական յանկերգը կրկնելով, կ'ուզէր որ Թուրքիոյ դաշնակցականներն ալ դաւաճաններ նկատուին, որպէսզի անոնք ալ պատասխանատու բռնէ գալիք շարիքներուն:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆԽՈՂՆԵՄ ԸՆԹԱՑՔԸ

Արտասահմանեան հայութեան պատկերն ալ հարազատ տպագրութիւնն էր Կ. Պոլսոյ հայութեան:

Գոյութիւն չունենալով ազգային կարգախօս մը, որ զբաւոր չըջաբերականով մը լեզուներուն սանձ դնել եւ խոհեմութիւն պատուիրէր, ամէն անհատ իր նախասիրած ոճով կը խօսէր ու կը գործէր, առանց նկատի առնելու թէ իրենք Օսմանեան հպատակներ էին եւ կախում ունէին Գոսմ-Գաբուի Պատրիարքարանէն, որ պատասխանատու էր թուրք կառավարութեան առջեւ, որ աչք ու ականջ կտրած, գիշեր ու ցերեկ կը տքնէր պատրուակներ փնտուելու համար ամէն մէկ հակաթուրք քայլ՝ դաւաճանական արարք մը համարելու:

«Արտասահմանեան հայութիւնը, կը գրէ Պալաքեան Վրդ., զբրնով, խօսքով եւ դէպի Կովկաս անապարող կամաւորներու անկազմա-

կերպ խուճբերով, Կովկասի հայութեան հետ առաջին օրէն իսկ արդէն փութացած էր յայտնել իր գործօն համակրութիւնն համաձայնական մեծ պետութիւններուն եւ ի մասնաւորի ձարական Ռուսիոյ...»: *Եւ ապա կ'աւելցնէ.* «Փարիզի եւ Սօֆիայի մէջ Ամերիկայէն գունդագունդ եկած հայ կամաւորներու գէնէքըն, հրապարակային հանդիսաւորութեամբ Պոլսահայ Եկեղեցականներու կողմէ կ'օրհնուէին նոյն տեղերու թուրք դեսպաններու գաղտնի լրտեսներուն աչքին առջեւ: Իսկ այս ամէնը՝ թուրք դեսպաններուն կողմէ օրը-օրին կը տեղեկագրուէին Պոլիս Պապը Ալի՝ պատկանեալ պաշտօնարաններուն» (Նոյն, էջ 42):

ԽՈՒՎ ԱԿԱՆՁՆԵՐ

Եթէ չկար համազգային կարգախօսը, բայց կար պոլսական շրջանակներուն մէջ փորձառու, դիւանագէտ ու անկեղծ հայասէր անձեր, որոնք ահագանդ կը հնչեցնէին «Մշակ» օրաթերթի մէջ, մատնանշելով թրքահայ ժողովուրդին սպառնացող մահացու վտանգը, արտայայտելով իմաստուն մտքեր: Անոնք այդ կարծիքը կը յայտնէին, թէ «հայերու օգուտն է լաւ յարաբերութիւններ մշակել թուրքերու հետ, եւ թէ ուստի հայերը պէտք են նկատի առնեն թրքահայերու անելի դրութիւնը, եւ ուստի շատ աղմուկ պիտի չհանեն եւ թուրք կառավարութեան դէմ սանձարձակ լեզուով չգրեն եւ չխօսին»:

Բայց այդ զգաստացնող, զգուշացնող վտանգները մատնանշող ձայնը հանդիպեցաւ խուլ ականջներու: Որովհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ «ազգային Բիւրոյի» անդամները, որոնց աթոռը կը գրաւէին նաեւ խոշոր դրամատէրեր, փառաց ի փառս կը գովերգէին ձարականութիւնը, իբր իսկական ազատարարը՝ արեւելեան քրիստոնեաներուն: Այսպիսի բորբոքուած մթնոլորտի մը մէջ՝ խոհեմութեան եւ ուղղամտութեան ամէն ձայն անհետ կը կորսուէր:

ՄԱՐՍԻԼԻՈՑ ՀԱՅՈՑ ՆՇԱՆԱԻՈՐ ԿՈԶԸ

Եթէ այս էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին մտայնութիւնը, որ սովոր էր խօսելու եւ գործելու «բովանդակ հայ հօտին անունով», կարելի չէ երեւակայել որ աչքէ հեռու գաղթահալութեան մէջ չզբտնուէին ինքնահաւանութեան անբուժելի ախտով վարակուած ինքնակոչ «փրկիչներ», որոնք հրապարակը կ'աղմկէին, պարզապէս իրենց անշրջահայեցութիւնը ցուցադրելով:

Այնպիսի փրկիչներ երեւան ելան նախ Մարսիլիոյ մէջ, որոնք նպատակ ունեցան ֆրանսական բանակին համար կամաւորներ հաւաքելու, հաւատացած ըլլալով թէ «Ֆրանսան է հարստահարուող ազգերու հովանաւորն ու պաշտպանը»:

Անմիջապէս գործի սկսելով, 67 մարտիլիացի ծանօթ հայեր, թրքակառողեցուցիչ կոչ մը հրատարակեցին, որուն տակ ստորագրեր էր, իբրեւ խուճբին պատուիրակ, Արամ Թիւրքբեան մտաւորականը, բայց դիտարական փառքի եւ տիտղոսներու տենչացող:

Ահա այդ նշանաւոր կոչին պատկերը, ուղղուած ֆրանսահայերուն.

«Այգասը եւ Լօրէնը գերմանական գազանութեան գոհերն են, ինչպէս Հայաստանը գոհն է թրքական գազանութեան: Մեր հիացումը եւ խորին համակրանքը ուղղուած են դէպի Ֆրանսան, յաւիտեանական հովանաւորը բոլոր հարստահարուած ժողովուրդներուն:

Հայաստանը երբեք չի՛ մոռնար ֆրանսական դիւանագիտութեան ջանքերը ամենափափուկ հանգամանքներուն մէջ, մեր հայրենակիցներն ազատելու համար Վիլիելմ Բ. ի արուեստական սպառնալիքներէն:

Հնչեր է պատժի ժամը մեծ ոճրագործներուն համար. արդարադատութիւնն եռագոյն դրօշի հովանիին տակ կը փայլէ: Գաղղիացի աբաղաղը կ'երգէ գոռոգաբար. ֆրանսական փողը կը հնչէ հարստահարուած ժողովուրդներու ազատութիւնը: Վիլիելմ Բ. կը սարսի իր գահին վրայ. նա որ եկաւ անամօքաբար, հայկական կոտորածներու միւս օրը, սեղմելու աշխարհի ամենամեծ սպաննողի, Կարմիր Սուլթանի ձեռքը, եւ անոր հետ համամիտ ըլլալու անպաշտպան ժողովուրդի մը խողխողման մէջ:

Բիսմարկը, աւելի անամօք քան իր տէրը, որու համար 300.000 հայերու դիակները չէին արժեք պովերանցի զինուորի մը ոսկորներուն, տեսնելով գերմանիոյ վերջը, դիմաժոռութիւններ կ'ընէ իր անիծեալ գերեզմանին մէջ:

Ռուսահայերը, մոսկովեան բանակի շարքերուն մէջ, կը կատարեն իրենց պարտքը, վրէժ հանելու համար այն նախատիւնի փոխարէն, որ կատարուեր էր մեր եղբայրներուն դիակներուն վրայ. ինչ որ կը վերաբերի մեզի, Թուրքիոյ տիրապետութեան տակ սպրոդ հայերուս, հայու ո՛չ մէկ հրացան մեր շարքերէն պիտի չարձակուի Ֆրանսայի, մեր երկրորդ հայրենիքին բարեկամներուն եւ դաշնակիցներուն դէմ: Թուրքիան յայտարարած է զինակոչ. նա մեզ կը կանչէ իր դրօշներուն տակ, առանց մեզի ըսելու որո՞ւ դէմ:

Ռուսաստանի՞ դէմ: Օ՛ն անդր, այս մեք չենք որ գանք գնդակ արձակելու Կովկասի մեր հարազատ եղբայրներուն դէմ: Բալկանեան պետութիւններո՞ւն դէմ, որոնց հանդէպ մեք միայն համակրանք

ունիմք: Երբեք, պարոնայք թուրքեր. դուք խարուած էք ձեր հաս-
ցեագրման մէջ. չմոռնանք անցածն, առանց ապահով ըլլալու ապա-
գայի մասին:

Հայեր, Թուրքիան ձեզ իր դրօշին տակ կը կանչէ, առանց ձեզ
ըսելու թէ որո՞ւ դէմ: Կամաւոր գրուեցէք ֆրանսական բանակին
եւ անոր դաշնակիցներուն շարքերուն մէջ, օգնելու համար որ ջախ-
ջախուի Վիլիելմ Բ. ի բանակը, որու երկաթուղիին գիծերը կը հանգ-
չին մեր 300.000 եղբայրներու ոսկորներուն վրայ: Այս արտօնու-
թիւնները հայ ժողովուրդը սպանութեան գինն են:

Կեցցէ՛ ֆրանսան:

Կեցցէ, Հայաստան»:

(ԱՐԱՄ ԹԻՒՐԱՒԵԱՆ, «Լ'էտերնել վիքտիմ տը լա դիբլումասի էվրո-
բէէն, 1929 Մարտիլիս»):

Այս թրքակառնեցուցիչ կոչը, որ կրնայ անթերի օրինակ ծառա-
յել ֆրանսասիրութեան կատարի զգացումին եւ գերմանատեցութեան
ծայրայեղ զգացումին, բնականաբար հաճելի անակնկալ մը եղաւ,
այնպէս որ Արամ Թիւրքբեան, տաքզլուխ հայրենասէր ազգասէր մը,
կրնար սրտի գոհունակութեամբ գրել. «այդ կոչին հրատարակու-
թիւնը բուն խանդավառութեան զգացում յառաջ բերաւ հայ ժողո-
վուրդին մէջ: Աւելի քան հինգհարիւր կամաւոր զինուորագրուեցան
ֆրանսական դրօշներուն տակ: Օգտակար է դիտել տալ որ պատե-
րագմի յայտարարութեան առաջին օրը, Փարիզի եւ Մարսիլիոյ ամ-
բողջ հայ գաղութը հագիւ չորս հազար անձ կը հաշուէր: Հայոց գործ
դրած նիզը գնահատուեցաւ ֆրանսական կառավարութեան հասա-
րակաց կարծիքին եւ զինուորական իշխանութեանց կողմէ»:

Այսպէս, երբ ֆրանսացի սպաններուն հրամանին ներքեւ «եան-
եաններ»ը, ռազմական տենդով, առաջ կը քշուէին մեռնելու «յաւի-
տեանական հովանաւորին բոլոր հարստահարուած ժողովուրդներուն»
փրկութեան համար, անդին կատարած իթթիհատը՝ յարմար առիթին կը
սպասէր որ վերջնապէս պայթի ուս-թրքական պատերազմը, որպէսզի
մէկ հարուածով բնաջնջէ ամբողջ թրքահայութիւնը, զայն խեղդելով
համատարած արեան մէջ, ինչպէս ըրած էր Ատանայի զարհուրելի
ջարգով՝ կիլիկեցի հայերուն:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՎԱՆԿԷՆՀԱՅՄ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՍՈՒԼԹԱՆ

ՎԱՆԿԷՆՀԱՅՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ

Վանկէնհայմ, իբրեւ «գեր-մարդ» գերմանացի մը, անթերի տի-
պարը, ունէր անձնական զաղափարներ, որոնք զօրաւոր արմատներ
ձգէր էին իր մտքին մէջ: Մորկէնթաու իրաւամբ կը գրէր. «համա-
գերմանութիւնը կ'ոգնուրէր իր բոլոր մտածումը եւ կը վարէր իր
բովանդակ գործունէութիւնը»:

Ան համոզուած էր որ գերմանացի մը պէտք է կոյր հնազանդ ըլ-
լայ պետութեան հրամաններուն : «Իր կայսեր աստուածացումը, կը
զրէ նոյն հեղինակաւոր գրիչը, միակ կենսական բնագոյն էր որ զինք
կը վարէր»: Անոր մտքին մէջ ուրիշ զաղափար մըն ալ արմատացած
էր. ան իւրացուցած էր Բիզմարքի նշանաւոր խօսքը թէ «գերմանացի
մը պէտք է պարտաստ ըլլայ կայսեր եւ հայրենիքին գոհելու թէ՛ իր
կեանքը եւ թէ իր պատիւը»:

Տրաղուստոր ազնուական, ան կողմնակից էր մինչեւ անգամ
ինքնապետական կազմակերպութեան, որ բրուսիական զրուկեան
ամփոփումն էր: Այդ զաղափարը այնքան տիրապետեր էր իր վրայ,
որ իրեն համար դարձեր էր յարգանքի եւ պաշտամունքի առարկայ.
ան չէր ամչցած ամերիկեան ղեսպանին ըսելու թէ «Գերմանիան ան-
խուսափելիօրէն ստիպանուած է կառավարելու ամբողջ աշխարհը»:

Այս զաղափարը անոր մտքին մէջ կրեր էր փոփոխութիւն մը:
Մեկտիքայի մէջ ղեսպան եղած ժամանակ, լաւ կերպով ճանչցած էր
Միացեալ Նահանգները. իր առաջին կինը ամերիկուհի մըն էր - եւ
«այդ ժամանակէն, կը գրէր Մորկէնթաու, խորին հիացում ունէր մեր
կորովին եւ մեր զարգացման. հիացում մը, որ բացէ ի բաց կը խոս-
տովանէր»: Զինապաշտ, ուրիշ ժամանակ ալ քանի մը անգամ կրկնէր
էր ամերիկեան ղեսպանին թէ «աշխարհս պէտք է բաժնուի Գեր-
մանիոյ, Անգլիոյ եւ Ամերիկայի միջեւ»:

Ունենալով բրուսիական պաշտօնատարի անկուշտութիւնը, Վան-
կէնհայմ բնագործէն կը սիրէր մեծ կալուածատէրերը. «մեծ սեփա-
կանատէրը, չիմական ազնուականը, կը զրէ Մորկէնթաու Վանկէն-
հայմի մասին, մարդկային ցեղի կատարելագործութիւնը կը ներ-
կայացնէր»:

Օր մը, անոր ամէնէն մօտաւոր բարեկամը ըսէր էր ամերիկեան ղեկավարին. «ես պիտի արհամարհէի ինքզինքս, եթէ քաղաքի մը մէջ ծնած ըլլայի»:

Վանկէնհայմի հիմնական գաղափարներէն մէկն ալ էր, ինչպէս նաեւ իր կայսեր, պահպանել զերման ցեղի մաքրութիւնը: Եւ այս սկզբունքը կը հանդէսէր ցեղապաշտութեան վրայ: «Վանկէնհայմի համար մարդկութիւնը, կը գրէր Մորկէնթաու, կը բաժնուէր երկու դասակարգերու. կառավարողները եւ կառավարուողները, եւ կը հեզմէր այն մտածումը թէ առաջինները կարող ըլլան առնուիլ վերջիններուն մէջէն»: Ասոր համար «կայսրը, կը շարունակէ նոյն գրիչը, ուզած է որ մեծ կալուածները առանց իր հաւանութեան փոխանցելի կամ թէ անդրանկի ժառանգորդները չկարենան առանց իր հաւանութեան ամուսնանալ»: Վանկէնհայմ այնպէս խոր կերպով իւրացուցեր էր իր պաշտելի կայսեր այդ գաղափարը, որ համարձակեր էր ըսել ամերիկեան ղեկավարին. «այս պայմաններու մէջ, կը պահպանեմք մեր կառավարողներուն ցեղի մաքրութիւնը եւ հետո կը պահեմք զայն ամէն գէշ կապերէ»:

Ինչպէս կը տեսնուի, «ցեղի մաքրութեան» գաղափարը կը հանդէսէր հրէական սկզբունքին վրայ, որ կ'արգիլէր իսրայելի ազգին, իբրեւ ընտրեալ ժողովուրդ, ամուսնական կապեր հաստատել օտար ցեղերու հետ: Այս սկզբունքը կը կապուէր նաեւ Նիցչէի վարդապետութեան հետ, որուն համաձայն՝ նախկին մարդը, անցնելով գաւազան շրջաններէ, դարձեր էր իմաստուն մարդ, որ իր կարգին նախահայրն եղեր էր «Գեր-մարդուն», ուսկից սերեր էր զերման ցեղը, կոչուած՝ վարելու մարդկութեան ճակատագիրը:

ԹՈՒՐԲԻԱՆ՝ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՃՈՐՏ ԵՐԿԻՐ

Քաղաքական հանգամանքները նպաստաւոր էին, որպէսզի Թուրքիան դիւրաւ իյնար Վանկէնհայմի լարած ուռկանին մէջ. այսինքն Թուրքիան որսալ Գերմանիոյ կողմը, անոր վրայ տարածել զերման տիրապետութիւնը: Այսպէս, կայսեր անձնական ներկայացուցիչին առջեւ, կը բացուէր քաղաքական զործունէութիւն մը եւ ընդարձակ սակարկէր մը: Վանկէնհայմ իր կողքին ունէր երեք հնարամիտ խորհրդակցաններ. Վայցը, համգերմանութեան ռահվիրայ մը, որ ամբողջ 36 տարիներ Թուրքիոյ մէջ թղթակից եղած է Ֆրանք Ֆորթէրի... (շարունակութիւնը անընթեռնի է. խմբ.):

Միւս կողմէն երիտասարդ Թուրքերը ձեռքակալելով զիւսանազէտ եւ ճարպիկ Ապտ-իւլ-Համիտը եւ զայն Սելանիկ քաղաքէն, սպաններ

կամ երկրէն վտարեր էին հին Թուրք քաղաքական ղեկավար: Անոնք՝ քաղաքականութեամբ Օսմանեան Կայսրութիւնը մահուան դուռը հասցուցեր էին. օգտուելով անոնց անճարակութենէն, Աւստրիան իրեն կցեր էր երկու նահանգներ, Բրուսիան եւ Հերցեգովինան. Իտալիան՝ Տրիպոլիսը դրաւած էր: Անիկա, ինչպէս տեսանք, մղած էր երկու պատերազմներ Պալքանեան պետութեան դէմ, եւ կորսնցուցած էր եւրոպական իր բոլոր ստացուածքները, բացառութիւն ըլլալով Կ. Պոլսոյ իր պաշտպանութեան անհրաժեշտ փոքրիկ ցամաքամաս մը: Յետոյ, այդ քայքայուած կայսրութեան տգէտ վարիչները, փոխանակ երկրին վաճառականութեան եւ ճարտարարուեստին զարկ տալու, զայն խոր թշուառութեան մէջ նետեր էին:

Օսմանեան վերածնունդի փորձերը, «որոնք յեղափոխութիւնը ներշնչած էին, կը զրէ Բօսնայ գրիչը, կանոնադրապէս վիժած էին»:

Այսպիսի քայքայուած կայսրութիւն մը՝ կառավարուած անպատասխանատու, ծայրայեղորէն ազգամուլ եւ գաղտնի կուսակցութեան մը, շատ բնական էր որ իյնար ճարտար որսորդ՝ Վանկէնհայմի ուռկանին մէջ:

Չափազանց խստութեամբ չզատնէր երիտասարդ Թուրքերը Գերմանիոյ գրիչը իյնալուն համար, որովհետեւ ճարական Ռուսաստանը կռիւնելով Ֆրանսայի եւ Անգլիոյ աջակցութեան վրայ, որոնք կարող էին ուզած ժամանակ Թուրք բանակը շարժման մէջ դնել, որոշեր էր Թրքահայաստանի ղէմ դառնալ: Ջուրին մէջ ինկած մարդը օձին ալ կը փաթթուի: Այդ օձը՝ Փոն Վանկէնհայմ փաշան էր, որ 1912 թուին, հազիւ տեղաւորուելով Բերիայի ղեկավարութեանը, լարեց իր թակարդները անոր ձեռքէն խլելու համար նաեւ ասիական ստացուածքները, վերջ դնելով Օսմանեան կայսրութեան: Անոնց մէջէն ամէնէն աւելի ակնառուներն էին՝ Փոն Տէր Կոյց փաշան եւ Փոն Տէր Չանտէրս փաշան. երկուքն ալ Թուրքէն աւելի Թուրք, ինչպէս նաեւ Վէքէր ծովակալը, Տարտանէլի նեղուցներուն վերին հսկիչը:

Վանկէնհայմ երեք տարուան ընթացքին, իր համոզիչ լեզուին ոյժովը, Երիտասարդ Թուրքիան ենթարկեր էր «Պաշտելի կայսեր» կամքին. այսինքն Թուրքիոյ բանակները, հողերը եւ 20.000.000 չափ ժողովուրդ մը վերածներ էր գերմանական գերիշխանութեան:

Այդ ոճով, «Թուրքիան պարտաւոր էր, ինչպէս կ'ըսէ Մորկէնթաու, իբր խարխիս ծառայել կայսերական գիտութեան, քաղաքական եւ զինուորական կառուցումով»:

Ան, Իթթիհատի Եռապետութիւնը դարձուցեր էր կոյր գործիք մը Գերմանիոյ զինուորական փաշաներուն ձեռքը, յանձնելով անոնց շատ մը պատասխանատու պաշտօններ: Թէեւ Մէհմէտ Ե. կը շարունակէր մնալ անուանական սուլթանը, սակայն, իրական իշխանութիւնը կը գտնուէր Իթթիհատական կառավարութեան ձեռքը, որուն

ետեւ կանգնած էր գերման ղեսպանը, որ արտաքին երեւոյթները փրկելով, դարձեւ էր իսկապէս Թուրքիոյ իրական սուլթանը:

Թուրքիոյ՝ Գերմանիոյ միացումը, համաշխարհային պատե-
րազմի մը պարագային, ահագին ճակատագրական դեր մը պիտի
խաղար: Իր կողքին ունենալով Օսմանեան ազգը, Գերմանիան կարող
էր փակել Տարտանէլը, միակ ընթացիկ հաղորդակցութեան ճամբան
Ռուսիոյ եւ իր արեւմուտքի դաշնակիցներուն միջեւ, որով անարժէք
կը դարձնէր ոռուս-ֆրանսական զինակցութիւնը: Եւ բնականաբար
այս էր արդէն Վանկէնհայմի առաքելութեան բուն նպատակը:

Ո՛չ մէկ կասկած՝ որ նեղուցներու փակումը պիտի կազմէր Վան-
կէնհայմի նուրը զիւանագիտութեան փառապսակը, որուն մեծապէս
օգնեց Երրեակ համաձայնութեան կարճատես քաղաքականութիւնը:

Մորկէնթաու իրաւունք ունէր գրելու որ «եթէ գերմանիան պա-
տերազմի առաջին օրերէն իսկ ապահոված չըլլար Կ. Պոլսոյ հյու եմ-
քարկումը, ամեշմարտամման չէ որ քշմամուքիւնները Մառնի ճա-
կատամարտէն մէկ քանի ամիս ետք դադրէին»:

Կայ աւելին: Էնվէր, կոմիտէին գլխաւոր անդամներէն մէկը,
բարեկամն էր Վանկէնհայմին: Առանց պատճառի չէր, որ չափէն
աւելի ծանրացայ Վանկէնհայմի նկարագրին եւ անոր գաղափար-
ներուն վրայ, դուրս ցայտեցնելու համար այդ «գեր-մարդ» գերմա-
նացիին հպարտ տիպարը, որուն վրայ ահաւոր պատասխանատու-
թեան բաժին մը պիտի ծանրանայ թրքահայ ժողովուրդի բնաջնջման
մեծ եղեռնին մէջ, եւ որուն համար արդարացիօրէն պիտի ըսուի թէ
Իթթիհատի եղեռնորդ զահճապետներու շարքին մաս կը կազմէր:

Կայսեր անձնական ներկայացուցիչին թշնամութեան պատճառն
էր՝ Հայկական Հարցին նոր արծարծումը, մոսկովեան զիւանագի-
տութեան սաղրանքներով: Գերման ղեսպանը չէր հանդուրժեր որ
ոռու ղեսպանը, հին պաշտօնատար մը՝ Գիրսըն անունով, իր աչքին
տակ ոտքերը գետին զարնէր եւ ձեռքին բռունցքը սեղանին վրայ,
սարսափ ազդէր Իթթիհատական վարիչներուն, ստիպէր որ ընդունին
Ռուսիոյ ներկայացուցած հայկական բարենորոգումներու առաջար-
կը, որով թոյլ կը տրուէր ձարական կառավարութեան՝ միջամտելու
Թուրքիոյ ներքին գործերուն մէջ:

Ընթերցողը պէտք է յիշէ որ ճիշտ այդ շրջանին էր որ յայտնի
համագերման գրիչ Ռոհրրախը, «հայասէր» հռչակուած, հրապարակ
նետեր էր իր նշանաւոր գրքոյկը, ուր, ինչպէս տեսանք, ի միջի այլոց
գրեր էր այս յիշատակի արժանի տողերը. «եթէ մեզ անհրաժեշտ է
պաշտպանել Թուրքիան, այն ժամանակ քրքական պիտի մնայ Հա-
յաստանը: Եւ որովհետեւ քաղաքական նպատակներու ոյժով պիտի
պաշտպանեմք Թուրքիան միմչեւ յետին ժայրայեղութիւն, ուստի թոյլ
պիտի չտանք որ Հայաստանը անցնի Ռուսաստանին»: Ուշագրաւ է որ



Լիման Ֆոն Ջանտերս փաշա

«հայասէր»ը Հայաստան կ'ըսէր եւ ո՛չ թէ հայ ժողովուրդը, որուն
վզին կախեր էր բռնազաղթի ահաւոր հեռապատկերը:

Վանկէնհայմի թշնամութիւնը աւելի սաստկացաւ հայերուն դէմ,
երբ Արշարունի Պատրիարքը, հակառակ թրքասէր մը ըլլալուն, գոր-
ծիք դառնալով Սուրէնեան Կաթողիկոսին եւ Գիրսըն ոռու ղեսպանին
ձեռքը, Գում-Գարուի Պատրիարքարանին մէջ կազմեր էր կեդրոնա-
կան յանձնախումբ մը, որուն պաշտօնն էր զիմուսներ կատարել
Պերլինի 61րդ յօդուածը ստորագրող պետութիւններուն մօտ, Հայկա-
կան Հարցը լուծելու՝ ոռուական նախաձեռնութեամբ:

Վանկէնհայմի պէս խորամանկ զիւանագէտի մը աչքէն ի հարկէ
չէր կրնար վրիպիլ թէ ի՛նչ էր ձարական կառավարութեան նպատակը՝
Ուստի, վախնալով ոռու հայկական աշխարհներու մերձեցումէն,
փորձեւ էր հայերը Ռուսաստանէն բաժնելով՝ կապել Գերմանիոյ եւ
Թուրքիոյ հետ: Ահա թէ ինչ կը գրէ Գրիգորիս Վրդ. Պալարեան,

գերման դեսպանին մտատանջութեան մասին. «...Պալեանեան պատերազմին ընթացքին, իբր հայկական բարեկարգութեան պատրիարքարանի կեդրոնական կոմիտէի անդամ, երբ երբեմն ի պաշտօնէ կ'երթայի գերման դեսպան Վանկէնհայմը տեսնելու, նա անվերապահ կ'երկար չէր ծածկեր իր այս կարգի երկիւղները յիշելու ինծի, փափաք յայտնելով որ հետամալով ռուսերէն՝ նետուիմք իրենց գիրկը» (տե՛ս «Հայ Գողգոթան», էջ 32):

Գերմանիան եւ Թուրքիան, աչքի առջեւ ունենալով Ռոհրարի օրինադիրքը, թրքահայութեան բնաջնջումը՝ քաղաքակիրթ աշխարհի աչքին արդարացնելու դիտումով, փորձեր կատարեցին հայերուն սիրտը սիրաշահելով՝ կապել զանոնք Գերմանիոյ եւ Թուրքիոյ հետ:

ՀԱԿԱԳԻՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԹՈՒՐԻՒՄԻՈՅ ՄԷՋ

Կայսերական Գերմանիան այլեւս չէր կրնար սպասել որ իր «գաղտնի դաշնակիցը» խրի-մնայ չէզոքութեան մէջ:

Ինչպէս արդէն տեսանք, գերման Մեծ-Սպայակոյտին ծրագիրն էր արդա յաղթանակներով պատերազմին վերջ գնել, որովհետեւ սպորուստի սզութիւնը մեծ մտահոգութիւն կը պատճառէր: Ուստի, պէտք էր օր առաջ հասնիլ Ռուսաստանի եւ Կովկասի յուսթի եւ ցորենաշատ դաշտերը:

Հանգամանքները նպաստաւոր էին: Ռուսաստանը, որ կարող էր միեւնոյն ժամանակ յարձակում կրել թէ՛ աւստրո-հունգարական եւ թէ՛ դերմանական բանակներէն, համաերոպական պատերազմի առաջին օրը, յաջողութիւններ ունեցեր էր ինչպէս տեսանք, արեւելեան Բրուսիոյ մէջ. բայց իրենց զօրաշարժի դանդաղութեան պատճառով սակաւաթիւ գունդեր ունէին գերման-աւստրո-հունգարական բանակներու դիմաց:

Ուրիշ զօրաւոր պատճառ մըն ալ կար, որ նպաստաւոր էր Թուրքիոյ՝ պատերազմին մէջ մտնելուն: Ռուսիոյ մէջ կար ո՛չ միայն գերմանացեղ կայսրուհի մը, որուն բացարձակ ազդեցութեան ենթարկուած էր տկարամիտ Նիկոյա ձարը, այլ «ռուս կալուածատէր – ազնուականները վախնալով գիւղացիական շարժումներէ, ինչպէս կը զրէ Արտակ Դարբինեան՝ Ռուսական դասակարգային մտայնութեան մասնագէտը, կ'ուզէին որ գերմանացիք յաղթեն, որպէսզի «երկաթէ բռուցքով» մը վերջ տրուի այս շարժումներուն» (Յուշեր, էջ 249):

Այս հանգամանքները նկատի առած, Գերմանիոյ համար անհրաժեշտ էր որ Թուրքիան իր չէզոքութեան կեղծ դիմակը վար առնէր եւ պատերազմ յայտարարէր իր դարաւոր թշնամիին դէմ:

Սակայն, Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնն ալ ունէր ո՛չ նուազ զօրաւոր պատճառներ՝ այնքան փափարուած պատերազմի բոցերուն մէջ անհաշիւ չմտնելու համար:

Մեզի ծանօթ է արդէն, որ էրզրումի Դաշնակցական համազումարի լիազօր ներկայացուցիչները որոշէր էին ամէն միջոցներով արգիւել Թուրքիոյ մուտքը համաերոպական պատերազմի մէջ, «որովհետեւ Դաշնակցականները չէին կրնար համոզուիլ թէ թուրքերը պիտի կրնան յաղթել Ռուսիոյ» (նոյն, էջ 250):

Եւ ասոր համար էր որ անոնք առւս-թրքական պատերազմը ադիտարեր կը նկատէին Օսմանեան հայրենիքին համար:

Իթիհատական կոյր եւ ազգայնամոլ կառավարութեան քանի մը ազդեցիկ վարիչները, արհամարհէր էին այդ իմաստուն խորհուրդը եւ իրենց «դաշնակիցները», զանոնք նկատելով իբր «գանցատելի տարր մը»:

Բայց այդ ազգայնամոլները չէին կարող բոլորովին արհամարհել բուն հին թուրքերը, որոնք փորձառու, դիւանագէտ եւ իսկապէս հայրենասէր մարդիկ էին, որոնցմէ եւ ոչ իսկ կրցեր էին ժառանգել թրքական խորամանկ դիւանագիտութեան զաղտնիքները:

Արդ, այդ հին թուրքերը բացէ ի բաց դէմ էին Իթիհատի գերմանասէր քաղաքականութեան եւ չէին ուզեր որ իրենց հայրենիքը նետուի ահաւոր արկածախնդրութեան մէջ:

Թրքական բոլոր դասակարգերուն մէջ, Ֆրանսան եւ Անգլիան աւելի ժողովրդականութիւն կը վայելէին քան թէ Գերմանիան:

Այսպէս, Սուլթանը, որուն իշխանութիւնը թէեւ անուանական, բացէ ի բաց պատերազմի հակառակ էր: Գահաժառանգ իշխանը, Եուսուֆ-Իսէդդին, Իթիհատի կատաղի հակառակորդ մը, յայտնապէս դաշնակից պետութիւններու կողմն էր եւ չէր ուզեր որ իր երկիրը պատերազմի մէջ մտնէ Գերմանիոյ կողքին: Մեծ Վերուկը, Սայիդ-Հալէմ փաշան, Անգլիոյ աւելի համակիր էր քան թէ Գերմանիոյ: Թալէաթ Պէյ, ներքին գործոց ամենահզօր նախարարը, «աւելի խորամանկ քան էնկիւր փաշան, պարզ շահու համար հակեր էր դէպի գերմանացիները, բայց սրտի խորէն կ'ատէր գանձնէ», կը վկայէ դեսպան՝ Մորկէնթաու:

Ճեմալ փաշան, ծովային նախարարը, Ֆրանսասէր էր: Դահլիճէն մեծ մաս մը, որոնց մէջ դենպետը՝ որ է Շէյխ-Իւլ-Իսլամը, ո՛չ մէկ խանդավառութիւն կը սնուցանէր դէպի Գերմանիան: Ժողովուրդին մեծ զանդուածը, որ Մեծն Բրիտանիան կը նկատէր թուրք ազգին զարաւոր բարեկամը, պատերազմի զազափարին հակառակ էր:

ԹՐԻՔԱԿԱՆ «ԴՌԵԴՆՈՂ»ՆԵՐԸ

Գերմանիոյ դէմ հասարակաց կարծիքը խորտակեց Վանկէնհայմ, Թուրքիոյ ճակատագրին տէրն ու տնօրէնը: Ան ափին մէջ ունէր Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան փառամոլ ու տգէտ խմբակ մը, որուն պետը՝ Էնվէր փաշան, ռազմաշունչ տենչանքներով լեցուն, հաւատացեր էր գերման զօրավարներու շողոքորթ լեզուին, որ անդադար անոր ականջին կը փսփսային «Դու՛ն Ադեֆուանդը Մակեդոնացիին պէս մեծ աշխարհակալ մը պիտի ըլլաս»:

Պատերազմական նախարարին արկածախնդրութեան մէջ՝ յոյսի նշոյլ մը կար: Գերման զօրապետները յաջողեցին էրն շարժումի մէջ դնել թուրք ցամաքային բանակը, բայց ո՛չ անոնց ծովային զօրութիւնը: Թուրքը գրեթէ պատերազմական նաւեր չունէր:

Համաերոպական պատերազմէն առաջ, Թուրքիան երկու գրահաւորներ՝ «դռեղնոդ»ներ ապսպրեցին էր անգլիական նաւաշինութեան զօրծարաններէն: Ասոնցմով Թուրքիան պիտի յարձակէր Յունաստանի վրայ եւ պիտի ազատազրէր Եգէական ծովուն կղզիները: Այդ նաւերուն շինութեան դրամը ժողովուրդի քսակէն ելեր էր հանգանակութիւններով, եւ թրքուհիները հայրենասիրական տարօրինակ խանդավառութիւն մը ցոյց տուեր էին՝ մագերինի ծախելով ի նպաստ հասարակաց գանձին:

Համաերոպական պատերազմի յայտարարութեան օրը, Թուրքիան վերջին գումարները կը վճարէր նաւազօրծարաններուն եւ թուրք նաւագները Անգլիա հասեր էին նոր վերջացած նաւերը տանելու համար:

Բայց դեռ նաւահանգիստ չհասած՝ բրիտանական կառավարութիւնը միջամտելով, այդ նաւերը անգլիական ծովային նախարարութեան տակ դրեր էր: Զրկուելով այդ երկու նաւերէն, Թուրքիան չէր կրնար եւ ո՛չ իսկ Յունաստանի վրայ յարձակիլ, ուր մնաց անգլոֆրանսական-ռուսական նաւատորմի զիններուն վրայ:

ՎԱՆԿԵՆՀԱՅՄԻ ՃԱՐՊԻԿ ԽԱՂԸ

Անկասկած, Անգլիան՝ գրկելով Թուրքիան այդ նաւերէն, նկատի աւեր էր որ Թուրքիան անպատճառ պիտի մասնակցի պատերազմին, որով կարծեք էր թէ Սուէզի ջրանցքի երթեւեկը ապահովուած կ'ըլլայ:

Գերմանիոյ համար Թուրքիոյ նիզակակցութիւնը թանկագին էր, որովհետեւ անկէ կախուած էր 40 տարուան երազի մը իրականացումը: Բրիտանական այս անդիւանագիտական քայլը հիանալի կերպով շահագործեց Վանկէնհայմ՝ կայսեր ամենակարող ղեսպանը, «գերման սուլթանը»:

Ան լարեց իր ճարպիկ դիւանագիտական մեքենան: Վոսփորի ջուրերուն մէջ, գերման դեսպանատան դիմաց, առանձնական նաւովրայ գետեղուած անթիւ հեռագրով մը, ան պատգամագիր մը զրկեց Պերլին, պահանջելով որ շուտով Կ. Պոլիս ուղարկուին «Կէօքէն» եւ «Պրեսլաու» խոշոր մարտանաւերը:

Օգոստոս 4ին, այդ մարտանաւերը մտեր էին Մեսսինա, ուր իտալական հրամանը ազդարարեց էր գերման ծովակալ Չուխտի՝ որ 24 ժամէն աւելի չէր կրնար մնալ իտալական չէզոք ջուրերուն մէջ:

Թէեւ Բրիտանական Դէտ-մարտանաւ մը պահակ կեցեր էր, բայց եւ այնպէս գերման ծովակալը փախուստ տալով բրիտանական մարտանաւի կրակի առջեւէն, յաջողեցաւ 1914 Օգոստոս 10ին, երկու շոգեպինդ մարտանաւերը մտցնել նեղուցները եւ ապահովցնել Մարմար ծովուն մէջ:

Վանկէնհայմը ցնծութեան մէջ էր: Այս նաւերուն ժամանումը իր դեսպանական սպարէզին յաղթանակն էր: Գերմանիոյ կողմէ տարուած իրական առաջին դիւանագիտական յաղթանակը: «Տարիներէ ի վեր, կը գրէ Մորկէնթաու, ան կը փափաքէր կայսերական վարչապետութեան պաշտօնին, եւ հիմա կը վարուէր մէկու մը պէս, որ կը տեսնէ իր նպատակին հասած ըլլայ: Կէօքէնի եւ Պրեսլաուի նամարդոպիւնը իր անձնակազմ գործն էր, համաձայնելով թուրք դաշինքին հետ. ան պատրաստած էր անոնց մուտքը Տարսանէլէն, եւ անթիւ հեռագրով Միջերկրականի մէջ գանձն առաջնորդած: Վերջապէս, գանձն առանց միջադէպի՝ մինչեւ Կ. Պոլիս քերելով, կը կնկէր գերման եւ թուրք զինակցութիւնը: Բոլոր հնարքները եւ մեքենայութիւնները, որոնք ամբողջ երեք տարիներ սադրած էր, այսօր իրենց տրամաբանական կորակացութեան կը յանգէին»:

Ստուգիւ, այս երկու գերման նաւերը պատմութեան մէջ նշանաւոր դեր մը կատարեցին, որովհետեւ «անոնց նեղուցէն անցնիլը՝ Թուրքիոյ նախատագիրը ամրապէս կայացց Գերմանիոյ նախատագրին եւ թուրք կայսրութեան բախտը որոշեց» կը գրէ Մորկէնթաու:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁ ՄԸ

Գերման մարտանաւերուն Տարսանէլի ջուրերը կտրել անցնիլը՝ համաերոպական պատերազմին անկիւնադարձը եղաւ, ինչպէս նաեւ ճակատագրական՝ թրքահայ ժողովուրդի բնաջնջումին մէջ:

Կէօքէնը՝ նորադոյն տիպարի հօգոյ յաճանաւ մըն էր. Պրէսլաու նուազ մեծ էր, բայց սաստիկ արագութիւն ունէր: Երկուքն ալ աւելի արագ էին քան Միջերկրականի անգլիական կամ ֆրանսական մարտանաւերը: Միւս կողմէն սուլթանին նաւատորմիցը, աւելի զօրաւոր

կը դառնար քան ուսական Սեւ ծովուն նաւատորմիդը, որով ան չէր կրնար յարձակիլ Կ. Պոլսի վրայ:

Վանկէնհայմի խաղը, ծնունդ առած իրապաշտ ուղեղէ մը, կրկին տեսակէտներով ապօրինի էր:

Գերման մարտանաւերուն երեւումը Մարմարայի մէջ, հակառակ էր միջազգային պայմանադրութիւններուն, որոնք ինչպէս տեսանք, մարտանաւերուն մուտքը կ'արգելէին Տարտանէլի մէջ: Երկրորդ, Թուրքիան չէզոք երկիր մըն էր, եւ հակառակ գերմանական ճնշիչ ազդեցութեան՝ Իթթիհատի վարիչներուն վրայ, մտադիր էր չէզոք դիրքի մէջ մնալ: Բայց գերման դեսպանին խաղը կ'ընթացէր կ'ըլլար գերման-թուրք նիզակակցութիւնը, որ մինչեւ այդ օրը պաշտօնապէս յայտնի չէր:

Չէզոք Թուրքիան՝ Գերմանիոյ բազուկներուն մէջ նետողը՝ «Վաքրակրոն» Անգլիան էր: Անիկա գիտնալով հանդերձ թէ գերման դեսպանին խաղը մարտահրաւէր մըն էր Երրեակ Համաձայնութեան կառավարութիւններուն, շուարեցաւ մնաց:

Բոլոր աշխարհը գիտէր որ Գերմանիան բռնաբարելով Պելճիքական հողին չէզոքութիւնը, պատուած էր միջազգային օրինագիրքը, որ ինչպէս տեսանք Բեթման-Հոլմէզի բերնով յայտարարեր էր «Բուրջ քուլթի կտոր»: Բոլոր աշխարհ գիտէր նաեւ որ Վանկէնհայմ չէր կրնար Դաշնակիցներուն գլխուն խաղալ իր խաղը, եթէ թուրք դահլիճը անոր համամիտ չգտնուէր:

Անգլիան, Գերմանիոյ դէմ պատերազմ յայտարարեր էր, Պելճիքայի չէզոքութիւնը բռնաբարած ըլլալուն: Արդար էր, որ հոս ալ Անգլիան կոթնելով միջազգային դաշինքներուն վրայ, իբր անանցանելի պատճէններու՝ անհոգ չգտնուէր Տարտանէլի մուտքը նաւատորմիդով մը պաշտպանելու: Երբ Գերմանիան բռնաբարեց այդ մուտքը, եթէ Անգլիան նոյն սկզբունքով շարժէր, կարող էր իր յաճանաւերով բռնաբարել նեղուցները, մտնել Մարմարա, յարձակիլ գերման մարտանաւերուն վրայ եւ ընկղմէր զանոնք:

Բայց անգլիացիները, գործելով իբրեւ «ուղղամիտ մարդիկ» եւ ձեռնպահ, «հաւանակալն է, կը գրէ Մորկէնթաու, Թէ գերմանակալն ցաւերուն ոչնչացումը արգիլէր Թուրքիոյ պատերազմի մէջ, որովհետեւ քուրքերը ստանալով, այդ ոճով հնարաւոր կը դառնար որ ան յարմար ժամուն իր բանակներով միանար գերման բանակներուն հետ»:

Գերմանիոյ փափաքածն ալ այդ էր: Ան պիտի կարենար փակել Տարտանէլը, երբ որ ուզէր:

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՐԶԱՄԻՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Համաձայնական պետութիւնները տազնապեցան, որովհետեւ գերման մարտանաւերուն գաղտագողի մուտքը Մարմարա ծովուն մէջ, եւ անոնց հոն մնալը՝ յայտնապէս «պատերազմի պատճառ» (քաղուս պելլի) էր. որովհետեւ Փարիզի մէջ, 1856ին կնքուած դաշնադրութիւնը, ինչպէս եւ 1871ին՝ Լոնտրային մէջ կնքուածը, կ'արգելէին պատերազմական նաւերուն Տարտանէլէն մուտքը, եթէ չէր ստացուած Սուլթանին մասնաւոր արտօնութիւնը, արտօնութիւն մը, որ խաղաղութեան ժամանակ միայն կարելի էր ստանալ: Գործնականին մէջ Օսմանեան կառավարութիւնը պաշտօնական արարողութիւններէ դուրս, շատ հազուադիւս պարագաներու մէջ, խնդրոյ առարկայ այդ արգելքը վերցնելը, Սուլթանին կողմէ իրապէս նուազ բարեկամական արարք մը պիտի ըլլար, եւ Կէօքէնի ու Պրեսպուլի մուտքի թոյլտուութիւնը՝ որ 24 ժամէն աւելի թրքական ջուրերուն մէջ մնան, ոչինչ նուազ՝ քան պատերազմի յայտարարութիւնը պիտի նշանակէր:

Անգլիան, նշանաւոր իր նենգամիտ դիւանագիտութեամբ, այս անգամ այսպիսի ծանրակշիռ քայլի մը մէջ երեւցաւ աւելի քան պարզամիտ: Անիկա այդ պայմանադրութիւնները նկատելով իր պատուար մը, որ գերման նաւերուն առջեւ կը փակէր Տարտանէլն ու Կ. Պոլսը, ապա ինչնով վերոյիշեալ կարգադրութիւններու անբռնաբարելութեան, իր նաւատորմիդներով զբաւած էր այն բոլոր կէտերը՝ ուրիշ այս գերմանական մարտանաւերը կրնային փախչիլ, իրենք գիրենք ապահովութեան մէջ գիմելու համար: Սակայն, ճիշտ Տարտանէլի մուտքն էր որ անտեսուած էր, մանաւանդ որ գերման կառավարութիւնը, անգլիացիները քնացնելու համար, 1914ի Օգոստոսի սկիզբները, տակաւին պաշտօնապէս չէր զեկուցած թէ միջազգային օրէնսդրութիւնը դադրած է գոյութիւն ունենալէ:

Նոյն պարզմտութիւնը ունեցաւ նաեւ Անգլիական նաւատորմիդին ծովակալն ալ, որ չկարենալով գերման մարտանաւերուն հետեւիլ, ինչպէս տեսանք, անոնք հասեր էին Մարմարա ծովը: Մովակալը ինքզինք կը քաջալերէր թէ Գերմանիոյ ծրագիրները ի դերեւ հանած էր, քանի որ փախչողները ամէնէն առաջ Տարտանէլ պիտի մտնէին, բայց այդտեղ, իրենց դէմ, պիտի կանգնէր միջազգային օրինագիրքը եւ պիտի արգիլէր մուտքը, քանի որ Թուրքիան չէզոք երկիր էր, ինչպէս ըրեր էին իտալական թնդանօթաւալածները, որոնք հակեր էին Մեսսինայի մէջ գերման նաւերու վրայ, յարգել տալով իտալական ծովուն չէզոքութիւնը:

Անգլիական կառավարութիւնը, որուն վրայ կը ծանրանար դէպքին պատասխանատուութիւնը՝ յանուն իր դաշնակիցներուն, բուն

դուրս գալիմ, որպէսզի գերմանները չյափշտակեն իրենց սեփականուրթիւնները եւ չփակեն իրենց յառաջդիմութեան ասպարէզը ռուս ազգային դրօշին տակ»:

Ասոր համար, այդ փոքրիկ դասակարգը, Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ կնքուած զինակցութեամբ մը միայն հնարաւոր կը տեսնէին իրականացնել Ռուսիոյ դարաւոր բաղձանքները, որ է մտնել Միջերկրականի տաք ջուրերուն մէջ, որուն այնքան կը փափաքէր այդ դասակարգը, որպէսզի իր առեւտուրը եւ ճարտարարուեստը քաղցնելով «ազգային դրօշին տակ», տարածէ զանոնք այդ գեղեցիկ ծովուն վրայ:

Ֆրանսան, Թուրքիոյ սիրական բարեկամը, սրտի ճգմուտով քաւեր էր Ռուսիոյ ետեւէն, որպէսզի անոր բանակներուն միջոցով վերագրուէր իր երկու կորսուած հարուստ գաւառները: Եթէ Թուրքիան չէզոք մնար, Ֆրանսան կը յուսար, հակառակ գերմանական ոյժին ազդեցութեան, որ իր լեզուն, մշակոյթը եւ առեւտրական շահերը անխախտ պիտի մնային Թուրքիոյ մէջ:

Իսկ Անգլիան, գերազանցօրէն թրքասէր, լծուեր էր ռուսական կառքին ետեւը, պարզապէս անոր համար որ ջախջախէ Գերմանիան, իրեն համար դարձած հզօր եւ երկիւղալի մրցակից մը:

Թրքական մարտանաւերը զրաւելին ետք, Անգլիոյ համար թրքական չէզոքութիւնը դարձեր էր անհրաժեշտութիւն մը, որովհետեւ եթէ Գերմանիա իր զաղանի գաշնակիցը քաշէր պատերազմին մէջ, թրքական յարձակում մը, գերման երկու մեծ մարտանաւերով, Սուէզի ջրանցքին վրայ, կատարեալ աղէտ մը պիտի ըլլար: Սուէզի վրայէն էր որ անդադար կ'երթեւեկէին անգլիական նաւախումբեր, բեռնաւորուած Հնդկաստանէն բերուած զօրագունգերով:

Այդ բանակցութիւնները կը կատարուէին այն շրջանին, երբ բոլոր աշխարհ հաւատացեր էր թէ Փարիզը, Ֆրանսայի «ուղեղը», դատապարտուած էր անձնատուր ըլլալու, եւ թէ երեք ամիսէն համաբերական պատերազմը վերջ պիտի գտնէր Գերմանիոյ ջախջախիչ յաղթանակով:

Բայց Անգլիան, որուն համար պատերազմը սկսեր էր, բանակցութիւնները կամաւ կ'ուշացնէր, ժամանակ շահելու համար, սպասելով Ֆրանսական ճակատէն եկած լաւ կամ գէշ լուրերուն:

Եւ ահա, Սեպտեմբեր 13ին, հասաւ աւետաւոր լուրը թէ գերմանացիները պարտուած ամէն դիժերուն վրայ, հարիւրյետուն հազարամեթր նահանջեր են: Մտոնի առաջին յաղթանակն էր:

Թուրքիոյ մէջ, հակագերման հոսանքը լայն շունչ մը քաշեր էր ֆրանսական բանակներուն յաղթութեան լուրը առնելով, յուսալով որ այլեւս Իթիլիստը պիտի ստիպուի իր չէզոքութիւնը պահել: Այստեղէն է որ կը սկսի Երրեակի անճարակ ղեւանդատութիւնը: Անոնք իրենց ղեսպաններուն բերանով փոխանակ Թալաւթի եւ Էնվէրին իրական, շօշափելի եւ հրապուրիչ զիջումներ ընելու, անդադար

անոնց կը կրկնէին. «դուք շատ պատերազմներ ունեցաք. կործանուով կը սպառնայ ձեր երկրին, եթէ այս պատերազմին մէջ մտնէք»: Եւ իբր խոստում շարունակ կը կրկնէին. «պատրաստ ենք ապահովել Թուրքիոյ հողային ամբողջութիւնը»:

Այդ խոստումը խախտու էր, եւ սուտերու վրայ կը հանգչէր, բանի որ Երրեակի պետութիւնները տարի մը առաջ, պալքանեան պատերազմներուն ժամանակ, նոյն խոստումը տուեր էին, բայց եւ այնպէս՝ իրենց իսկ վճիռով եւրոպական Թուրքիան կորսուած էր: Թալաւթի եւ Էնվէր այդքան ապուշ մարդիկ չէին որ հաւատային ռուս ղեսպանին կոտորաւոր սուտին: Ռուսաստանը ի՞նչ երեսով կը խոստանար ապահովել Օսմանեան կայսրութեան հողային ամբողջութիւնը, երբ Հայկական Հարցը պատրուակ առած, անգլիական եւ ֆրանսական կառավարութիւններուն հաճութեամբ, կը սպառնար այդ հողային ամբողջութեան, որոշած ըլլալով՝ գրաւել Թրքահայաստանը, Տարտանէլը, Վսփորը եւ Կ. Պոլիսը: Թալաւթի եւ Էնվէր շատ լաւ տեղեակ էին այս բոլորին:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՐՈՒԱԾՐ

Վանկէնհայմ ճարպիկութեամբ շահագործեց Երրեակի անճարակ ղեւանդատութիւնը: Դեպքանը զիտցաւ զրաւել Թալաւթի եւ Էնվէրի ազգայնամոլական զգացումները անոնց ականջներուն շարունակ փսփսայով. «մի վստահիք անոնց խոստումներուն վրայ: Անոնք չէի՞նք որ տարի մը առաջ ձեր վրայ ինկան»: Յետոյ, փայփայելով թրքական գոռոզութիւնը, անոնց կ'ըսէր. «դուք որչա՛փ տխմար էք. չէ՞ք հասկնար թէ ինչո՞ւ համար Անգլիան կը փափաքի որ դուք կոխուէմ մեկուսի մնաք. վախի համար է: Ծնորհիւ մեր օգնութեան, դուք գիւնդարական հզօր զօրութիւն մը դարձեր էք. յայտնի է որ Անգլիան շատ կը վախնայ՝ ձեզ մեզի հետ միացած տեսնելով»:

ՎԱՆԿԷՆՀԱՅՄԻ ՍԱՓԱՍՈՒՏԵՐԸ

Գերման ղեսպանը՝ յարձակողականէն ղեմեց սափասուտերու, համագերմանական ուրիշ քարոզչութիւն մը, սպաս զրուած աշխարհածաւալ կայսրութեան:

Ան անողոք զրչապայքար մը սկսաւ Երրեակ պետութիւններու դէմ, հակագերման զգացումները խորտակելու համար: Թրքական հասարակաց կարծիքին կը յիշեցնէր անգլիական նենգամտութիւնը, երկու յաճանաւերուն զրաւումին առիթով: Անոր կը հասկցնէր թէ իր հայրենիքը Թուրքիոյ հաւատարիմ բարեկամն է, որուն նուիրեր էր

իր երկու մեծ մարտանաւերը, իբրեւ փոխադարձ հատուցում այդ սպորինի գրաւումին դէմ:

Ապա գերմանական ոսկիներով կաշառելով թուրք մամուլը, մասնաւորապէս «Իֆտալը», այդ կեղծ վաճառումը հռչակել տուաւ իբրեւ մեծ յաղթանակ մը Օսմանեան կայսրութեան համար:

Միեւնոյն ժամանակ, աւետել տուաւ մեծահռչակ յաղթանակներ, որոնք բնաւ գոյութիւն ունեցած չէին:

Ամերիկեան ղեսպանը, որուն առջեւ Վանկէնհայմ սովոր էր բանալ իր վշտահար սիրտը, այս հետաքրքրական տողերը կը նուիրէ իր «Յուշեր»ուն մէջ:

«Ես նկատեցի թուրքներուն զգացումները, Անգլիոյ մէջ ապալըրուած իրենց նաւերուն կորուստէն յետոյ: Գերման ղեսպանատան գործակալները երկար սիւնակներ ունեցան իրենց տրամադրութեան ներքեւ՝ թերթերու մէջ իրենց վնարումով, եւ դառն յարձակումներ տարածեցին Անգլիոյ դէմ, որ վար դրած էր այդ նուէրը. ամբողջ մամուլը շուտով անցաւ գերման հակակշռին տակ: Վանկէնհայմ գնեց «Իֆտալը», որ Կ. Պոլսոյ գլխաւոր օրաթերթերէն մէկն էր. այս թերթը ամփիջապէս սկսաւ Գերմանիոյ ներքողը ընել, եւ անուանարկել անոր հակառակորդները: «Օսմանիշէր Լոյտ»ը, փրանսերէն եւ գերմաներէն լեզուներով հրատարակուած՝ ղեսպանատան մէկ օրկանը դարձաւ:

Հակառակ անոր որ թուրք սահմանադրութիւնը կ'երաշխարհէր մամուլի ազատութիւնը, գրաքննութիւն մը հաստատուեցաւ, ի շահ կեդրոնական պետութիւններուն: Բոլոր հրատարակիչները հրաման ընդունեցան գրել ի նպաստ Գերմանիոյ եւ անոնք համակերպեցան այդ բանին: ԺէՕՆ ԹԻԻԲԻ համաձայնական փրանսերէն թերթը ջնջուեցաւ: Խնդրոյ առարկայ օրկանները ընդարձակեցին գերմանիոյ յաղթանակները, եւ դարբնեցին ամէն տեսակ այդ կարգի լուրեր: Անոնք միշտ կը խօսէին համաձայնական պետութիւններուն մասին, որոնց մեծ մասը երեսակայական էր: Իրիկունը Վանկէնհայմ եւ Բալլավիչինի, ինծի ցոյց կու տային պաշտօնական հեռագիրները զինուորական գործողութեանց մասին, քայց հետեւեալ օրը, աչքէ անցընելով թերթերը, կը հաստատէին թէ լուրերը բնափոխուած կամ կեղծուած էին ի նպաստ Գերմանիոյ:

Արդ, այս անարգ պայքարը ուրիշ թելադրող չունեցաւ, քայց եթէ Գերման դրամը...» (ՄՈՐԿէնթԱՌԻ, «Յուշեր», գլ. Ը, էջ 105-106):

ՀԱՐՊԻԿ ՔԱՐՈԶԻՉ ՄԸ

Բայց Գերման ղեսպանատան գործակալներէն մէկը՝ ազնուատուհմ գերման մը, Պր. Օբէնկայմ, ճամբորդեց՝ ամբողջ Թուրքիոյ

մէջ աշխատելով հանրային կարծիքը Ռուսիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսային դէմ գրգռել:

«Առ երեսոյթ, կը գրէ Մորկէնթաու, Օբէնկայմ ինքզինքը կը ներկայացնէր հնագետ, իրականութեան մէջ ան ամէն կողմ հիմնեց գրասենեակներ, ուրկէ գրապարտութիւններու հեղեղներ կը հասնէին Համաձայնութեան դէմ: Պատերու վրայ ահագին բարտէսներ փակցուեցան, ցոյց տալով ընդարձակութիւնը այն երկիրներուն, գորս Թուրքիան մէկ դարու ընթացքին կորսնցուցած էր:

Ռուսիա կը ներկայացուէր իբր գլխաւոր պատասխանատու հեղինակը այս «գողութեանց», եւ մէջտեղ կը դրուէր այն իրողութիւնը թէ Անգլիան այսօր անոր զինակիցն է:

Պատկերներ ցոյց կու տային ընչաքանց Համաձայնութիւնը, իբր անյագ կեանքանի մը, որ անկուշտօրէն կը խոյանար խեղճ Թուրքիոյ վրայ:

Էնվէրը կը ներկայացուէր՝ իբր այն «հերոս»ը որ Ադրիանապոլիսը ազատած էր, եւ Գերմանիան՝ իբր բարեկամը ազգին: Գայգերը յանկարծ դարձաւ «Հանի Վիլիսլմ», իսլամութեան հօգո պաշտպանը, եւ կը պատմուէր նոյնիսկ թէ ան մահմետականութիւնը ընդունած էր: Ժողովրդային զանգուածը տեղեկացած էր թէ Հնդկաստանի եւ Եգիպտոսի մահմետականները ապստամբելու վրայ էին եւ պիտի տապալէին իրենց անգլիացի «բռնակալները»: Փողոցներու աւելածուն անգամ սորվեցաւ ըսել. «Կոթ ըշթուդէ Էնկլիանտ» (Աստուած պատուհասէ Անգլիան):»

Սարսափելին այդ պայքարը չէր, քանի որ պատմական փաստ էր թէ թրքական հողերուն կորուստին պատասխանատուն Ռուսիան էր. այլ սարսափելին այն էր որ Գերմանիան պատերազմը կորսնցնելու վրայ էր, եւ առանց տաղնապի կը պատրաստէր այնպիսի փոթորիկներ յառաջացնելու, որոնց առաջին զօհը թրքահայ ժողովուրդը պիտի ըլլար:

ՀԻՆՏԵՐԲՈՒՐԿ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Շահեկան է սեղմ տողերու մէջ ճշտել թէ որոնք էին այն մեծամեծ յաղթութիւնները, որոնք գերման ղեսպանը փողով ու թմբուկով հռչակել տուէր էր թուրքերու վհատած սրտերը վեր բռնելու համար:

Նիկոլա մեծ զուբսը, ձարական բանակներուն սպարապետը, աւստրո-հունգարական ճակատի կողմէն պաշտպանողական դիրք բռնելով, ուժգին թափով Վարսաւիոյ եւ Վիլնայի բանակներով, Քէճօնիկզպիրիկ ուղղութեամբ յարձակեր էր Բրուսիոյ վրայ, ահ ու սարսափ տարածելով բովանդակ Գերմանիոյ մէջ:

Վտանգը մեծ էր եթէ Արեւելեան Բրուսիան ռուսական գունդերով զբաւուէր: Սակայն ռուսական այս մասնակի յաջողութիւնը երկար տեւած չէր: Գերմանական Մեծ-Սպայակոյտը բեմի վրայ հաներ էր անուանի զօրավար մը՝ Հինտենպուրկ, որուն զինուորական տաղանդին վրայ Գուլելմոս Կայսր նախանձելով՝ դործօն բանակներու շարքէն զուրս հաներ էր:

Հինտենպուրկ հազիւ գլուխ անցած բանակին, իր բոլոր ոյժերով նետուեր էր ռուսական առաջին բանակին վրայ եւ խորտակեր էր զանհկա Թաննէրերգի մէջ. ապա ինկեր էր երկրորդ բանակին վրայ, որ մղեր էր Ինսթրապուրկի մէջ:

Միւս կողմէն աւատը-հունգարական բանակներն ալ աննշան յաջողութիւն մը ունեցեր էին Գալլիցիոյ հիւսիսային կողմը:

Սակայն, իսկոյն, ռուսական բանակները, փայլուն յաջողութիւն մը ունեցեր էին Լէյմբէրկի եւ Քրասովիքի քով:

Կայսրը վարձատրելու համար Հինտենպուրկի տարած յաղթանակները, զայն Մարաշխտ անուաներ էր:

Ռուսական բանակներուն անյաջողութեան պատճառն էր զօրակոչի իրենց դանդաղութիւնը, որուն համար չէին կարող մեծաթիւ բանակներ խմբել գերմանական ճակատին վրայ:

Այդ շրջանէն, գերմանական բանակներուն դիրքը հետզհետէ կը վատթարանար: Ուստի, պէտք էր թուրքերը զբաւել Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ: Ազնուական տիտղոսներով ճոխացած գերմանացի մը, չքաշուեցաւ զբարտաւթիւններու հեղեղներ թափել Երբեակի դուռնին՝ ներկայացնելով Ռուսիան, Անգլիան եւ Ֆրանսան իւր գիշատիչ զազաններ, որոնք անյազարար նետուեր էին խեղճ Թուրքիոյ վրայ:

Գերմանացի պատասխանատու մարդիկ առիթ չէին փախցներ էնվէր փաշան հոչակելու իրր ազգային «ղիւցազ» մը եւ Գերմանիան՝ իրր Թուրքիոյ մտերիմ բարեկամը:

Միւս կողմէն գերման գրիչները կը քարոզէին թուրք խուժանին թէ Հնդկաստանի եւ Եգիպտոսի մահմետականները ապստամբելու վրայ են եւ պատրաստ տապալելու իրենց «րոնաւոր անգլիացիները»:

Այս անխիղճ քարոզութեամբ, Վանկէնհայմ ձեռք բերաւ կրկնակի արդիւնքներ: Ան, մէկ կողմէն, Գերմանիան Թուրքիոյ բարեկամ կարծել տուաւ, եւ միւս կողմէն՝ խաբեց թուրք յետամնաց ժողովուրդը, որ գազափար չունէր թէ Անգլիան՝ զբաւելով թրքական երկու յաճանաւերը, օրինաւորապէս եւ բարոյապէս իրաւունք ունէր: Ուստի մարտը մէկ բան միայն գիտցաւ. ինքը, թշուառ ժողովուրդ մը, անգլիական ջուրերուն մէջ երկու նաւեր ունէր, չինուած իր իսկ ճակտի քրտինքով, եւ անգլիական կառավարութիւնը անոնց տիրացեր էր, եւ դաշինք կապեր էր Ռուսաստանի հետ, որ դարէ մը ի վեր զոգցեր էր թրքական ընդարձակ հողերը:

ԳԼՈՒՍ ԺԶ.

ՏԱՐՏԱՆԷԼԻ ՓԱԿՈՒՄԸ

ԳՆՐՄԱՆԻԱ ԿԵՂԾ ԹՐԲԱՍԷՐ

Երբ բանակցութիւնները սկսեր էին համաձայնական պետութիւններու եւ Բարձրագոյն Դրան միջեւ, Թուրքիան չէզոք պահելու մասին, Գերմանիան, Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն, դիտաւորութիւն չունէր Թուրքիան անմիջապէս պատերազմի մէջ քաշելու: Գերմանիան, այս երկրին բարգաւաճութեան համար, իրական շահագրգռութիւն մը ունէր եւ կը փափաքէր անոր խաղաղութեան պահպանումը:

Մարդասէր Մորկէնթաու, որ շատ լաւ գիտէր թէ ի՞նչ ահաւոր աղէտներու պիտի մասնուէին Օսմանեան հպատակ քրիստոնեայ ազգերը՝ երբ Թուրքիան պատերազմի բոցերուն մէջ մտնէր, հեռագրեց Ուաշինկիթոն, հարցնելով թէ արդեօք կրնա՞ր Թուրքիոյ վրայ ազդեցութիւնը դործադրել, որպէսզի ան պահէ իր չէզոքութիւնը:

Կեդրոնական կառավարութիւնը, որ եւրոպական նենգաւոր դիւանագիտութեան խաղերուն մանկական պարզամտութիւնը ունէր, արտօնեց որ այդ դիմումը կատարուի, պայմանով որ անհատական հանգամանք ունենայ եւ ո՛չ պաշտօնական, հիմնուած էտպէս մարդասիրական շարժառիթներու վրայ:

Մորկէնթաու անմիջապէս դիմեց Վանկէնհայմի, Թուրքիոյ իսկական սուլթանին, անկէ իմանալու համար թէ արդեօք իր դիմումը անհաճօյ չէ՞ր Գերմանիոյ, որ գիտէր հին եւ նոր Թուրքիոյ տկար կէտը, ամէն օտար միջամտութեան դէմ:

Ձարմացաւ ամերիկեան ղեսպանը, երբ Թուրքիոյ «սուլթան»ին բերնէն լսեց «ո՛չ մէկ առարկութիւն. ամէնէն անելի Գերմանիան կը փափաքի որ Թուրքիան չէզոք մնայ»:

Գերմանիոյ կայսրը, ինչպէս եւ իր ամենագօր ղեսպանը, ո՛չ թէ Թուրքիան կը սիրէին, անոր բարգաւաճումին եւ անոր խաղաղութեան պահպանումին վրայ խոկալով, այլ որովհետեւ այդ շրջանին «գիմնալ չէզոք» Թուրքիան գերմանական շահերը կ'ապահովցնէր: Ինչպէս տեսանք, համաձայնական պետութիւնները երբեք չգիտցան թէ արդեօք Թուրքիան գերմանիոյ կողքին պիտի մտնէ՞ր պատերազմի թէ ոչ: Այս ծածկամտութեան պատճառով, Ռուսիան պարտաւորուած էր

կարեւոր ոյժեր պահել Կովկասի մէջ, Անգլիան կը զօրացնէր իր բանակները Եգիպտոսի եւ Հնդկաստանի մէջ, եւ զօրաւոր նաւաբաժին մը կը պահէր Տարտանէլի մուտքին առջեւ: այս բոլորը սքանչելիօրէն նպաստաւոր էին Գերմանիոյ կենսական շահերուն, որովհետեւ արեւելքի մէջ վար զրուած այս զօրագունդերուն հետու մնալը, արեւմտեան ճակատին վրայ կը տկարացնէր այնքան Անգլիան, որքան Ռուսաստանը:

Գերմանիոյ այս վերաբերումը հանդէպ Թուրքիոյ՝ ա՛յն շրջանէն էր, երբ, ինչպէս տեսանք, Պելճիքան զբաւուած էր եւ ֆոն Բլիւք կը քալէր Փարիզի վրայ եւ Գերմանիան կը կարծէր յաղթել Ֆրանսայի եւ Ռուսիոյ, իր զինակիցին Աւստրիոյ օժանդակութեամբ: Եւ այս կերպով՝ ձեռք բերել ջախջախիչ յաղթանակ մը, որ թոյլ պիտի տար իրեն կառավարել Եւրոպայի ճակատագիրը, որ իր երազն էր:

Իսկ եթէ այդ շրջանին, չէզոք Թուրքիան Գերմանիոյ կողքին պատերազմի մասնակցէր, այս նոր զինակիցը շուտով նեղացուցիչ պիտի երեւէր, որովհետեւ, ինչպէս կը վկայէ Մորկէնթաու, ան սպասմանաւոր կերպով ինքզինքը համեստ ցոյց պիտի չտար. փափաքներ, որոնց մէջ պիտի ըլլար, անտարակոյս, Եգիպտոսի եւ Պալքանեան հողերու վերադարձումը:

Նմանօրինակ հնարաւորութիւն մը՝ դէմ պիտի ըլլար Գերմանիոյ եւ Աւստրիոյ կայսրերու ծրագիրներուն: Որով անոնք՝ Թուրքիոյ դործօն զինակցութեան մէջ շահ մը չունէին, պայմանաւ որ նկատուած յաջողութիւնը այնքան արագ կերպով իրականանար:

ԹՐՔԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՄԱԿԸ ՎԱՐ ԱՌՆՈՒԱԾ

Վրայ հասնելով Մառնի յաղթանակը, Վանկէնհայմ իր թրքասէրի կեղծ զիմակը վար առաւ: Ֆրանսան եւ Ռուսիան հուժ-հուժ ուտելու երազը օդը ցնդեր էր: Հիմա կը մնար մետալին միւս կողմը նայիլ: Եթէ Ռուսիան ետ մղէր աստրիական բանակները, թուրք գործակցութիւնը պիտի ունենար զինուորական մեծ արժէք: Վանկէնհայմ արդէն այդ բանը դիւրացուցած էր: Այդ շրջանին Օսմանեան քաղաքակաճանութիւնը ճիշտ ու ճիշտ ինքզինքը գերման ծրագիրներուն կը յարմարցնէր: «Այն վերին ազդեցութիւնը, կը գրէ Մորկէնթաու, որ Վանկէնհայմ դաւիճիմ վրայ ի գործ կը դնէր, կ'աւելնար օրէ օր, եւ ազգը կը հետեւէր այն համրուն, որ լաւագոյնս կը ծառայէր այդ տեսակ գաղափարներու:

Երբ Համաձայնութեան դեսպանները տագնապի մատնուած, ընկիճիմ չէին գիտեր, Վանկէնհայմ Թուրքիան իրապէս գիմակից ըրեր

էր իր հայրենիքին. գորացուցեր էր անոր բանակը եւ նաւատորմը, եւ կը պատրաստուէր օգտուիլ անկէ ուզած պահուն, որովհետեւ երէ յաղթութիւնը չէր կրնար ստացուիլ առանց անոր օժանդակութեան, այն ժամանակ դիմում պիտի ըլլար այդ բանին. մինչ հակառակ պարագային, Գերմանիան թուրք կառավարութեան վճարելիք բան մը պիտի չունենար: Դէպքերու ընթացքին սպասելով, բանակցութիւնը կը հրամայէր ուրեմն կազմակերպել Օսմանեան ոյժերը, առիթը գալուն գործածելու համար զանոնք»:

ԱՄԷՆ ՅՈՅՍ ԿՈՐՍՈՒԱԾ

Մինչեւ հիմա Վանկէնհայմը իր դիւանագիտական տաղանդը գործածէր էր Թուրքիան պաշտպանելու համար, իբր գերման կայսրութեան պահեստի ոյժ մը: Ան իթթիհատական կառավարութեան խոստացեր էր թէ Թուրքիան պատերազմի մէջ պիտի մտնէ ա՛յն պարագային, երբ Գերմանիան չյաջողի երեք ամիսէն ծունկի բերել Ֆրանսան եւ Ռուսաստանը:

Այժմ, Մառնի հարուածէն ետք, յաղթութեան ամէն յոյս կորսուած էր: Ֆրանսացիները ետ մղած էին արշաւանքը եւ բռնադատած թշնամի բանակները էնի երկարութեան վրայ ամփոփուելու: Ռուսերը յաղթական կերպով կը յառաջանային Կալիցիոյ մէջ եւ Լեմպերկը գրաւած էին արդէն. անհաւանական չէր որ անոնք շուտով անցնէին նաեւ Կարպաթները:

«Այս մթին վայրկեաններուն, կը գրէ Մորկէնթաու, Բալլափիչիմի, աստրիական դեսպանը, յուսահատ եւ ցաւագին տեսք մը առած էր: Ան, դասակարգերու մէջ, կը ճգնէր Գերմանիան անկեղծ բարեկամ ցոյց տալ Երիտասարդ Թուրքիոյ եւ Համաձայնական պետութիւնը անոր թշնամի: Պարզ էր որ գերմանապիտութիւնը պարարտ հող գտած չէր Թուրքիոյ խաւերուն մէջ, որոնք լայն համակրութիւն ցոյց կու տային թրքամոլ Անգլիոյ եւ Ֆրանսայի»:

Մորկէնթաու, խորապէս ուսումնասիրած ըլլալով Թուրքիոյ դասակարգերու հոգեբանութիւնը, հետեւեալ հեղինակաւոր դատաստանը կ'ընէ. «Կարծեմ թէ թուրք բոլոր դասակարգերուն մէջ Անգլիան եւ Ֆրանսան աւելի ժողովրդականութիւն ունէին քան իրենց թշնամիները: Սուլթանը դէմ էր պատերազմին. գաւազառանգ իշխանը, Եուսուփ Իգետտին, յստակ կերպով ինքզինքը Համաձայնութեան կողմը ցոյց կու տար. մեծ վզուկը, Սայիտ Հալիմ, աւելի Անգլիոյ նպաստաւոր էր քան Գերմանիոյ: Ճէմալ փաշան, կառավարական եռապետութեան երրորդ անդամը, փրանսաւէր ըլլալու համար ունէր. նոր վերադարձած էր Փարիզէն, եւ շատ շողոճորրուած այն

ընդունելու քննարկումն որ ցոյց տրուած էր իրեն: Դահլիճին մեծագոյն մասը ո՛չ մէկ խանդավառութիւն կը զգար Գերմանիոյ հանդէպ, եւ հանրային կարծիքը, այնքան որքան որ գոյութիւն ունէր Օսմանեան կայսրութեան մէջ, Մեծն Բրիտանիան կը նկատէր իբր ազգին դարաւոր բարեկամը, հետեւաբար ծանր ընդդիմութիւն մը կար Վանկէն-հայմի դէմ»:

ՄԱՀԱԲԵՐ ՀԱՐՈՒԱԾԸ

Մենք արդէն գիտենք որ խաղախ գունդերու ահաբեկիչ երեւումը՝ արեւելեան Բրուսիոյ մէջ՝ արդէն ահուգողի մատներ էր գերման ժողովուրդը, եւ հիմա ալ Կարպատեան լեռներու վրայ ծանրացող վտանգը՝ կեղրոնական կայսրութիւններու ժողովուրդներուն համար՝ կեանքի եւ մահուան հարց էր:

Բայց գերման կայսեր անձնական ղեկավարը արթուն պահակի պէս կը հսկէր, գիտնալով որ իր առաքելութիւնէն կախում ունի գերմանական տենչանքներուն իրագործումը: Ան կանգ չառաւ միջազգային պայմանադրութիւններու արգելքին առջեւ, եւ ո՛չ ալ թրքական հանրային կարծիքին ընդդիմութեան առջեւ, խորհելով որ մահացու զիւանագիտութիւնները ծայրայեղ միջոցներ կը պահանջեն: Ան արդէն ձեռքի տակ ունէր այնպիսի պայթուցիկ ուժեր մը, որ կրկնակ հարուածի ոյժ ունէր:

Եւ ահա օր մը, Սեպտ. 26ին, Վանկէնհայմ, Թալաթի, Էնվէրի եւ Ճէմալ փաշայի, Թուրքիոյ եռապետներուն յայտնի մեղսակցութեամբ, հրաման տուաւ Վէպէր փաշային, սրտով թրքացած գերման զօրավարին, որ Տարտանէլի ամրութիւններուն վերահսկիչն էր, նեղուցները փակել:

Նեղուցներու փակումը Վանկէնհայմի ճարտիկ եւ յանդուգն զիւանագիտութեան մեծագոյն յաղթանակն էր: Այդ յաղթանակը ճակատագրական ահաբեկութիւն ազդեցութիւն ունեցաւ աշխարհամարտին վրայ: Ան կը փակէր նաւարկութիւնը եւ կը խանգարէր գիտութեան ու տնտեսական յարաբերութիւնները Ռուսիոյ եւ իր արեւմտեան դաշնակիցներուն միջեւ, եւ կ'երկարաձգէր պատերազմի տեւողութիւնը: Տարտանէլի փակումը հարուածեց նաեւ Միացեալ Նահանգներն ալ, որ հրաման չէր տուած իր ղեկավարին պաշտօնական դիմում մը ընել Թուրքիան չէզոքութեան մէջ պահելու համար: Համաշխարհային պատերազմը երկար տարիներ տեւելով, վերջ ի վերջոյ, ինչպէս պիտի տեսնենք, անոր բեռը իր վրայ ծանրացաւ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՂԶԻԱՑՈՒՄԸ

Այսքանը դեռ ոչինչ էր: Ամէնէն աւելի Ռուսիան կրեց մահաբեր հարուածին հետեւանքները: Արդարեւ, այս վճռական դէպքը եղաւ որ Ռուսիան բաժնեց իր զինակիցներէն, այն հսկայ «հիւսիսային արջ»ը, որ մէկ տարիէն նուազ ժամանակէ մը ետք, պարտուեցաւ եւ քայքայուեցաւ, եւ որ յետոյ հնարաւոր դարձուց ուսական մեծ Յեղափոխութիւնը, որ ջարդ ու փշուր ըրաւ Ռոմանով ազգատոհմին դահլը, եւ ողնաշարէն կաթուածահար ըրաւ անոր չարամիտ զիւանագէտները, որոնք պիտի հռչակուէին օրէնքէ դուրս, թշուառութեան անդունդը խորասուզուած՝ Թուրքիոյ հայ ժողովուրդին անմեղ արեան գետերը պիտի քշեն տանին հայկական բարենորոգումներու «նարնջագոյն» գետին, որ կեղծիքի եւ դաւադրութիւններու զուլի գործոց մըն է:

Պարզ քննութիւն մը երեւան կը հանէ թէ այս ահաբեկ երկիրը՝ միայն չորս նաւահանգիստներ ունէր: Մէկը Պալթիկ ծովու առջեւն է, որ կը բանի եւ որ արդէն գերման նաւատորմին կողմէ փակուած է: Միւսն է Արխանգէլ, հիւսիսային սառուցեալ ովկիանոսին վրայ, որ տարւոյն շատ մը ամիսներուն ընթացքին ստոած կ'ըլլայ եւ Ռուսաստանի սրտին հետ մէկ գիծով երկաթուղիի երկար ճամբով մը կը հաղորդակցի՝ իսկ երրորդ նաւահանգիստն է Խաղաղականին վրայ, Վլատիվոստոք, որ նոյնպէս տարւոյն երեք ամիսները կը զոցուի սառերէն եւ որ Ռուսիոյ հետ կը հաղորդակցի Միպերիական երկաթուղիով, եւ ունի 5.000 մղոն երկարութիւն:

Չորրորդ՝ ծովու ճամբան Տարտանէլն էր, իրականութեան մէջ միակ բանուկ ճամբան: Տարտանէլը այն նեղ դուռն էր, ուրկէ կրնար եօթանասուն միլիոն բնակիչներու յաւելուածոյ արտադրութիւնները զրկել Եւրոպա: Այսպէս, իրենց արտածութեան եւ ներածութեան ինը տասներորդը՝ տարիներէ ի վեր այս ճամբով փոխադրուած էր: Յանկարծ այս պարզ գործողութիւնը ճարին բանակը կը զրկէր ռազմանիւթէ, տնտեսապէս կը կործանէր Ռուսիան, կասեցնելով իր արմտիքի արտածումը, որ գլխաւոր աղբիւրն էր իր հարստութեան, եւ հետեւաբար կը կղզիացնէր զինքը: Վերջապէս ամէնէն աղիտաւորը ա՛յն էր, որ Անգլիա եւ Ֆրանսա անկարող կ'ըլլային զինուորապէս գործակցելու Ռուսաստանին եւ անոր ռազմաճակատին վրայ բաւականաչափ ռազմամթերք փոխադրել, կարենալ ետ մղելու համար գերման յարձակումը: Ռուսիան իր պարենատրուածքին համար պիտի ստիպուէր Արխանգէլի եւ Վլատիվոստոքի նաւահանգիստներէն զուհանալու վիճակին մէջ իյնալ: Պարզ էր որ 1915ին Ռուսիոյ զինուորական քայքայումին պատճառը՝ Տարտանէլի փակումն էր. զինուորները պարզապէս չունեցան կուռելու համար անհրաժեշտ ռազմանիւթը: Մորկէնթաուի հեղինակաւոր գրիչը իրաւունք ունէր գրելու:

«Ռուս գիւղացիները կուրծփերնին բաց, առանց հրացանի եւ առանց թնդանօթի դիմադրեցին գերման հրետանիին, մինչդեռ անօգուտ ռազմամթերքի լեռնակոյտերը կը դիգուէին հիւսիսային սառուցեալ եւ Խաղաղական ռվկիանոսներու հեռաւոր նաւահանգիստներուն մէջ, առ ի չգոյէ երկաթուղիներու, որ զանոնք զինուորական գործողութեան վայրը փոխադրէր»:

Եթէ Ռուսաստան «շիշի մը մէջ խցանուեցաւ», գործածելով Մորկէնթաուի ճշգրիտ բացատրութիւնը, գլխաւոր պատճառն եղան Երրեակ Համաձայնութեան ղեկավարները, որոնք, ինչպէս տեսանք, հազիւ կը ծածկէին իրենց արհամարհանքը՝ զլուխ գտնուող թուրք քաղաքագէտներուն հանդէպ, եւ հեռու կը մնային այն ոճրապարտ մեքենայութիւններէն, որոնք այդ պահուն մաս կը կազմէին թուրք քաղաքականութեան:

Վանկէնհայմ օգտուեցաւ իր դաշնակիցներուն խղճահարութենէն, եւ իր հեղինակութիւնը պարտադրեց ապականած եւ վատասերած կառավարութեան մը վրայ, ձեռքին մէջ առնելով անոր գլխաւոր գործունէութիւնը, անոր բանակը, անոր նաւատորմը, եւ վերջապէս զոցելով ջուրի նեղ ճամբայ մը, շուրջ քսան մղոն երկարութեամբ, եւ երկուքէն երեք մղոն լայնութեամբ, մահաբեր եղաւ Ռուսաստանի եւ անոր արեւմտեան դաշնակիցներուն:

«Այս արդիւնքին հասնելու համար, կը զրէ արդարացի կերպով ամերիկեան ղեկավարը, Գերմանիա մարդկային ո՛չ մէկ կեանք գոհեց, ո՛չ ալ թնդանօթի հարուած մը արձակեց. ասով հանդերձ մէկ ակնթարթի մը մէջ ի գլուխ հանեց այն ինչ որ ռուսական ութը միլիոն լաւ գինեալ ոյժեր պիտի չկարենային անտարակոյս իրագործել: Այս պարագան, ներկայ պատերազմին ամէնէն եղեռնական զինուորական յաղթանակներէն մէկը եղաւ. այդ յաղթանակը միակ գործն էր գերման քարոզչութեան, գերման կորովամտութեան եւ գերման կորովամտութեան եւ գերման դիւանագիտութեան»:

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՄՈՐԿԷՆԹԱՈՒ

ԹՈՒՐԿ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՊԱՏԻՆ ԳԱՄԱԾ

ՄՈՐԿԷՆԹԱՈՒԻ ԲՈՒՆ ԲՈՂՈՒՔԸ

1914 թուականի Սեպտ. 26ին, Ռուսաստանի քաղաքական պատմութեան մէջ դարազլուխ թուական մը բացուեցաւ:

Այդ օր, Բրիտանիոյ Կ. Պոլսոյ ղեկավարը, իր զաղտնի սպասարկութեան միջոցով, ծանրակշիռ լուր մը իմացաւ եւ երկրորդ օրն իսկ վազեց ամերիկեան ղեկավարատուն:

«Սեպտեմբեր 27ին, կը զրէ Մորկէնթաու, Սըր Լուի Մալթթ, քրիտանական ղեկավարը, յայտնապէս խոստոված, իմ աշխատութեան սենեակս մտաւ: Եգիպտոսի խտիրը նոր մեկնած էր քովէս, եւ ուր այցելուիս հետ Եգիպտական խնդիրները շօշափող խօսքեր ըրի:

— Ատոնց մասին ուրիշ անգամ կը խօսինք, ըսաւ ան: Ես շատ աւելի կարեւոր բան մը ունիմ ձեզի գեկուցանելու. «Անոնք» Տարտանէլը փակեր են:

«Անոնք» ըսելով բնաւ չէր ակնարկեր — ինքնին հասկնալի է — թուրք կառավարութիւնը, միակ իշխանութիւնը որ օրինապէս իրաւունք ունեցած ըլլայ այս տրակոնքեան գործին դիմելու, այլ այն իշխանութիւնները որոնք ներկայիս վեհապետն են Թուրքիոյ, այսինքն գերմանացիները: Սըր Լուի Մալթթ իրաւամբ ինծի կը գեկուցանէր այս լուրը, որովհետեւ այս արարքը այնքան Միացեալ Նահանգներուն, որքան դաշնակիցներուն հանդէպ իրաւունքի անտեսում մըն էր» («Յուշեր», էջ 109-110):

Անմիջապէս Մորկէնթաու ուղղուեցաւ մեծ վզրուկին սպարանքը, բողոքելու համար այս աւելի քան քմահաճ արարքին դէմ:

«Երբ հասայ, կը զրէ ան, նախարարները ժողով ունէին. նախասենեակը նստած էին եւ ձայները մինչեւ ինծի կը հասնէին, եւ ինծի համար դիւրին էր որոշել Թալաթի, Էնվերի եւ Ճավիտի ընտանի շեշտերը, ինչպէս դահլիճին միւս անդամներունը: Ինչ որ կրցայ նուրբ միջնորմներէն կորզել, ատկից յստակօրէն կ'երաւար թէ Թուրքիոյ անուանական տէրերը, գրեթէ մեզի չափ գերագրգոռած էին, Սըր Լուի Մալթթին եւ ինծի չափ, նեղուցը գոցուելուն հետեւանով»:

«Հասեր էր ժամը որ դեսպանը ներկայ ըլլար ողբերգական տեսարանի մը: Մեծ Եպարփոսը, *կը գրէ ան*, դուրս ելաւ իմ դիմուսիս պատասխանելու համար: Ողորմելի էր անոր երեւոյթը: Այս մարդը, որ գոնէ անունով, կառավարութեան ամէնէն կարեւոր պաշտօնատարն էր, անձամբ սուլթանին գործիքը, անկարողութեան եւ վախի անարգ տպաւորութիւն մը կ'ընէր»:

«Տժգոյն էր ան եւ նոսրէն միւնչեւ գլուխը կը դողար, յաղթահարուած յուզումէն. հագիւ կրնար խօսիլ եւ երբ իրեն հարցուցի թէ արդեօք Տարտանէլի փակման գեկոյցը ստո՞յգ էր, ան թոքովեց եւ յետոյ պատասխանեց հաստատական կերպով մը»:

Մեծ վզրուկը դե՛ռ աւելի շփոթեցաւ երբ դեսպանը իրեն ըսաւ. «Դուք գիտէք թէ այդ բանը պատերազմ կը նշանակէ, եւ իմ կառավարութեան անունով կարելի եղածին չափ բռուն կերպով բողոքեցի»:

Պատակցութեան ամբողջ տեւողութեան դեսպանը կրցաւ լսել Թալաթի եւ իր պաշտօնակիցներուն զօրաւոր ձայները, որոնք քովի սենեակին մէջ կը բարձրանային: Մեծ վզրուկը ներողութիւն խնդրեց եւ սրահ վերադարձաւ:

ՀԱՒԻՏԻ ՆՇԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Դահլիճին անդամները դիտնալով թէ ի՛նչ ըսել է բրիտանական ծովային ոյժը, եւ թէ ի՛նչ ծանր փորձանքի պիտի մատնուի Թուրքիան եթէ օր մը ամերիկեան նաւատորմն ալ անգլիականի կողքին կանգնի, փութացին դեսպանին մօտ դրկել ձաւիտ պէյը, ելեւմտական նախարարը, անոր հետ՝ այդ խնդրի մասին խօսելու:

Այդ հրեան, գործնական մտքի տէր մարդ, ձեռքին մէջ ունենալով Թուրքիոյ դատարկ զանձանակը, որուն մէջ Գերմանիան լուծաւ մը անգամ նետած չէր, կարող էր գայրացած դեսպանին հետ ճակատարաց խօսիլ, վեր հանելով զազանիքը:

«Ասիկա մեզի համար բացարձակ անակնկալ մըն է», եղաւ ձաւիտի առաջին խօսքը. «նշանակալից խոստովանութիւն մը, *կը գրէ Մորկէնթաու*, թէ դահլիճը անգետ էր այդ որոշումին»:

Այդ խոստովանութիւնը պիտի չգոհացնէր ի հարկէ ամերիկեան դեսպանը, որուն պատասխանը նոյնքան շեշտակի եղաւ. - «Միացեալ Նահանգները, *ըսաւ ան*, պիտի չընդունէին այդ բանը, քանի որ Թուրքիա խաղաղութեան վիճակին մէջ էր եւ իրաւունք չուներ առեւտրական նաւերուն առջեւ նեղուցները գոցելու»:

Հետաքրքրական է այն մերկացումը որ Թուրք նախարարը ըրաւ Մորկէնթաուի առջեւ. - «Թուրք թորփիլանաւ մը դուրս ելած էր Տարտանէլէն եւ փորձած էր Եգիպտական ծովուն մէջ մտնել: Բրիտանական

մարտանաւերը, որոնք դուրս կեցած էին, նշան ըրին անոր, *բննցին* գայն եւ հաստատեցին թէ նաւուն վրայ գերման նաւաստիներ կային: Անգլիացի ծովակալը իսկոյն հրաման ըրաւ թորփիլանաւին որ վերադառնայ... ծովակալը իրաւունք ուներ այդ բանը ընելու: Վէպեր փաշայ, այն գերման գորավարը, որ այդ պահուն ամրութիւններուն պահպանումը կ'ապահովէր, առանց թուրքերուն խորհուրդ հարցնելու, իսկոյն հրաման տուաւ նեղուցը գոցուելու» (ՄՈՐԿԷՆԹԱՈՒ, «Յուշեր», *գլ. Թ, էջ 111*):

Ճաւիտ պէյ ուղիղ խօսած էր: Վանկէնհայմ իր դեսպանութեան առաջին օրերուն, Մորկէնթաուի ըսած էր մտերմաբար, ինչպէս վերեւ ակնարկեցինք, թէ «Տարտանէլի փակումը գործադրելի է երեսուն վայրկեանի մէջ»: *Եւ այդպէս ալ եղաւ:* «Եւ իր հայրենակիցները ահա, *կը գրէ ամերիկեան դեսպանը*, հաստատեցին իր խօսքերը: Ականներ եւ ցանցեր իջուեցան, փարոսներու լոյսերը մարեցան, ազդանշաններ իմացուցին նաւերուն որ անցք չկար եւ ամէնէն կամայական արարքը որ գերմանները երբեք կատարած ըլլան, ի գլուխ ելաւ»: *Այսպէս, դուրս կը հասկցուի թէ ինչո՞ւ մեծ վզրուկը ոտքէն մինչեւ գլուխ կը դողար, տեսնելով Թուրքիոյ վզին փակցուած փականքը:* Մորկէնթաու իրաւունք ունէր *գրելու*, «Եւ հիմա կը տեսնէի թուրք պետական մարդիկը, միակ տէրերը ջուրի այս նեղ նամբուն, որոնք վախէն դողալով եւ կակազելով եւ զարհուրած նապաստակներու պէս ասդին անդին կը վագէին, սարսափած գերման վարմունքին անագնութենէն, սակայն բացայայտօրէն ապիկար ո՛նել վնասկան միջոցի ձեռնարկելու»:

Թէ այդ մարդիկը անկարող էին «վնասկան միջոցներու ձեռնարկել», *կ'ապացուցուի անով որ ձաւիտ՝ ամերիկեան դեսպանին ըսեր էր թէ* «դահլիճը կրնար Տարտանէլի վերաբացումը հրամանագրել, բայց այս բանը երբեք տեղի չունեցաւ, եւ հաղորդակցութեան կարեւոր այս նամբան՝ չորս տարիներէ աւելի փակ մնաց»:

Օսմանեան դահլիճը չէր կարող Տարտանէլի վերաբացումը հրամանագրել, որովհետեւ այդ բանին համար հարկաւոր էր սուլթանական «իրատէն»: Սուլթանը, *ինչպէս տեսանք*, անուանական էր, եւ իրական սուլթանը Վանկէնհայմն էր, որ նեղուցներու փակումը հրամայեր էր:

Մորկէնթաու այլեւ զադրեցաւ իր բողոքը կրկնելէ: «Եւ, *կը գրէ ան*, ապահովաբար աչքիս առջեւ ունէին նշգրիտ պատկերը այն յետին տագնապներուն, որոնց մատնուած էին Օսմանեան կայսրութեան ներկայ վարիչները, գերման վայրագութեան երեսէն. նոյն պահուն եւ ոգեկոչեցի մտածումս սուլթանին վրայ, որուն ստորագրութիւնը անհրաժեշտ էր, օրինակէս գոցելու համար այս ջուրերը, եւ որ հիմա հանդարտօրէն կը բնանար իր պալատին մէջ, այս գործին հանդէպ բովանդակ անգիտութեամբ»:

ՏՊԱՒՈՐԻԶ ԴԵՍՊԱՆԸ

Տարտանէլի փակուժով «Վոսփորը սկսաւ յանկարծ ժանտախտէն բռնուած մաւահանգիստի մը երեսոյթը առնել, կը գրէ ահանատես վկան Մորկէնթաու. Ռուսիայէն, Ռումանիայէն, Պուլկարիայէն արմտիքի, շինութեան փայտ եւ ուրիշ արտադրութիւններ բերցուցած հարիրաւոր մաւեր կը հասնէին Վոսփոր, միայն տեսնելու համար եւ չէին կրնար աւելի հեռու երթալ: Պէտք եղածին չափ խարսխանշեր չկային որպէսի կապուէին այդ մաւերը, հետեւաբար անոնք ստիպուած էին Վոսփորի երկարութեան, մէջտեղը երթալու եւ հոն երկաթ նետելու, սպասելով դէպքերուն: Վոսփորը շուտով նմանեցաւ կայմերու եւ միացող ծխնելոյզներու անտառի մը, որովհետեւ խնողումը այն աստիճանի էր որ ինքնաշարժ մաւ մը դժուարաւ նամբայ կը բանար այս քառսին մէջէն»:

Իթթիհատական կառավարութիւնը ամչցաւ ըսելու թէ Տարտանէլը օտար դեսպանի մը հրամանով փակուած է. խոշոր սուտ մը գլորեց, որ իբր թէ Տարտանէլը մօտ ատենէն պիտի վերաբացուի, եւ այս պատճառով այն նաւերը, որոնց թիւը շարունակ կ'աւելնար, մէկ ամիս ի գուր սպասելէ ետք, տրտում տխուր վերադարձան իրենց նաւահանգիստները:

«Մէկ քանի շաբաթէն, կը գրէ նոյն ահանատես վկան, Վոսփորը եւ անոր յարակից ջուրերը անապատի մը վերածուեցան: Հանդարտութիւնը այս տեղերուն, որ ամբողջ տարիներ աշխարհիս ամէնէն ոգեւորեալ ծովային մաւահանգիստներէն մէկը եղած էր, միայն թրքական մաւակներէ եւ կամ երբեմն երբեմն պզտիկ առագաստամալի մը կողմէն կը խանգարուէր»:

Անշուշտ, ոուս նաւաստիները հասկցած էին թէ ինչ կը նշանակէր Տարտանէլի փակումը՝ զինուորական տեսակէտով:

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Երիտասարդ թուրքերու յեղափոխութեան գլխաւոր դրդապատճառներէն մին եղած էր, ինչպէս տեսանք Օսմանեան կայսրութիւնը ազատել կաշկանդիչ կապերէ, որոնց ենթարկեր էր զանիկա Եւրոպան, օգտուելով անոր աստիճանական տկարացումէն:

Այդ նուաստացուցիչ ու փշոտ խնդիրը Առանձնաշնորհումներու խնդիրն էր, ծանօթ «Քարիթուլախոններ» անունով, որոնք մեծապէս կ'ազդէին Թուրքիոյ միջազգային կացութեան վրայ:

Դարերէ ի վեր, այդ առանձնաշնորհումները Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ բնակող օտարականներու դիրքը կը



Ամերիկեան դեսպան Կ. Պոլսոյ՝ Հենրի Մորկէնթաու

ճշտէր, եւ հիմնուած միջազգային պայմանադրութիւններու վրայ, փոփոխելի չէին, բայց բոլոր պետութիւններու հաւանութեամբ:

Համաձայն այդ պայմանադրութիւններուն, Թուրքիան երբեք հաւասարութեան նոյն աստիճանին վրայ չէր նկատուած հանդէպ եւրոպական նոյն պետութիւններու: Եւ իրապէս Թուրքիան չէր նկատուեր իբր անկախ վեհապետութիւն մը, որովհետեւ իր օրէնքները եւ մաքսային կանոնները ա՛յնքան հիմնապէս կը տարբերէին Եւրոպայի եւ ամերիկայի ունեցածներէն, որ ոչ-իսլամ ո՛րեւէ երկիր չէր կրնար մտքէն անցնել այս ամէնուն ենթարկուիլ, հետեւաբար շատ մը պարագաներու՝ օտարերկրութեան, որ է ըսել «Էքսթրիթորիալիդէ» սկզբունքը միշտ յաղթող եղած էր, ի նպաստ նոյն երկիրներու քաղաքացիներուն, որոնք առանձնաշնորհումներ կոչուած իրաւունքներ կը վայելէին:

Բազմաթիւ տարիներէ ի վեր, զրեթէ ամէն ազգ, մէջը ըլլալով նաեւ Միացեալ Նահանգները, ունէին իրենց սեփական դպրոցները,

որոնք ո՛չ թէ թուրք օրէնսդրութեան եւ պաշտպանութեան տակ դրուած էին, այլ նոյն երկիրը կը պահէր զանոնք:

Եւրոպական պետութիւնները ունէին իրենց սեփական հիւպատոսական դատարանները եւ բանտերը, դատելու եւ պատժելու համար իրենց ազգակիցներուն կողմէ թուրքիոյ մէջ դործուած ոճիրները:

Շատ մը երկիրներ, իրենց մասնաւոր թղթատարական հաստատութիւնները ունէին, չուզելով վստահիլ իրենց սուրհանդակ Օսմանեան վարչութեան:

Ասկից զատ, թուրքիոյ սեղմ իրաւունք մը միայն ունէր՝ տուրք դնելու օտար արտադրութիւններու վրայ, եւ չէր կրնար այդ տուրքը աւելցնել, առանց օտար պետութիւններու հաւանութեան:

Թուրքիոյ արգիլուած էր ո՛րեւէ ճարտարարուեստ մը առաջ տանիլ, ընդհակառակն, Եւրոպայի մէջ ստիպուած էր գնել ստորին տեսակէ մեծաքանակ ապրանքներ: Ինչպէս կը տեսնուի, եւրոպական հաստատութիւնները կը գտնուէին գործնականապէս չէզոք հողի վրայ, եւ պարտադրութիւնը երկակողմանի էր:

Տարիներէ ի վեր, թուրք պետական մարդիկը իրաւամբ կը բողոքէին այդ սեղմումներուն դէմ, յայտարարելով որ անոնք անարգանք մըն էին իրենց ազգային փառքին դէմ եւ կը ջլտտէին իրենց յառաջողիմութիւնը:

Բայց ո՛չ մէկ պետութիւն ականջ կը դնէր այդ արդար բողոքներուն, չուզելով հրաժարիլ թուրքիոյ կաթը ծծելու իրաւունքէն:

ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐ ՀՈՒՄՆԵՐՈՒ ԶՆՁՈՒՄԸ

Բայց ինչ որ չէին կրցած ընել այնքան տաղանդաւոր եւ պարկեշտ մեծ վզրուկները, յաջողեցան ընել իթթիհատի դեկավարները: Հոս տեղն է ըսելու որ եղած չէ կառավարութիւն մը որ կարողացած ըլլայ մութին մէջ այնքան դաղնաօրէն եւ ճարպիկօրէն խաղալ, որքան իրարու յաջորդող թուրք կառավարութիւնները: Իթթիհատական կառավարութիւնը պղտոր լուրեր տարածել կու տար իմանալու համար թէ ինչ է Եւրոպային հանրային կարծիքը, անոր համաձայն շարժելու համար:

Երբ Իթթիհատը տեսաւ թէ Եւրոպան սմբած մնացեր է եւ թուրքիոյ օտար ազգաբնակչութիւնները՝ առանձնաշնորհումներու ջընջումին պարզ գաղափարին առջև սարսափեր են, եւ այդ սարսափը Տարտանէլի փակումով կրկնապատկուած էր, ջնջումին պաշտօնական յայտարարութեանէն առաջ ուզեց միայն Միացեալ Նահանգներուն դեսպանին կարծիքը իմանալ, որուն հետ կ'ուզէր հաշտ երթալ:

Երբ էնվէր փաշան հաղորդեց անոր թէ նախարարութիւնը որոշեր է առանձնաշնորհումներու ջնջումը, յարելով թէ անշուշտ երկիր մը

որ անկախութեան համար կոռուած էր, ինչպէս էր Միացեալ Նահանգները, պիտի համակըէր թուրքիոյ այն ճիգին, որով ան նպատակ ունէր թօթափել իր շղթաները:

Պատերազմական նախարարը այն հին թուրքերէն չէր որ հօր երկրէ մը դողար, եւ իր որոշումը փոխէր: «Հակառակ մեր բողոքներուն, կը գրէ մամբրիկեան դեսպանը, դաւիթը գեկոյց ըրաւ բոլոր պետութիւններուն թէ առանձնաշնորհումները մէկ Հոկտեմբերէն սկսելով ջնջուած պիտի ըլլային»:

Արդ այդ թուականը թուրք պատմութեան մէջ անկրկնազարձ մը կը բանար. «Թուրքիան բուրքերուն» նշանաբանով նոր երկիր մը հաստատուեր էր թուրք ժողովուրդը ազատեր էր օտար խնամատարութենէն. այլեւս կարող էր հաւասարի պէս խօսիլ օտար պետութիւններուն հետ:

Եւրոպան անկարող էր այլեւս ձայն բարձրացնել եւ ստիպուեցաւ հետեւիլ իմաստուն առածին. «այն ձեռքը գոր չես կրնար կտրել, համբուրէ եւ ցակատիդ վրայ դիր»:

Անգլիան՝ դարերով Օսմանեան պետութեան խնամակալ, Միացեալ Նահանգներուն պէս հաւանեցաւ տնտեսական առաւելութիւնները, բայց ո՛չ առանձնաշնորհումներու միւս մասերը:

«Վանկէնիայմ, կ'ըսէ մամբրիկեան դեսպանը, շատ սրտնեղած էր, որովհետեւ իր կեդրոնական կառավարութիւնը պարսաւեց զինքը բոյլատրած ըլլալու համար ջնջումը»:

Բայց կայսեր «Լիպատր» դեսպանը երբեք իրաւունք չունէր սրտնեղելու, եւ ոչ այլ շփոթելու, քանի որ ինչպէս տեսանք, իր քարոզչութեան շրջանին՝ մեծ ճարտարութեամբ թրթոացուցեր էր այն միակ լարը, որուն վրայ երիտասարդ թուրքերը զգայուն էին. — ազատիլ եւրոպական մեծ պետութիւններու կապանքներէն: Օտար երկիրներէն ամէնէն մահացեալը Ֆրանսան եղաւ, որ ինչպէս տեսանք, շնորհիւ Ֆրանքօ-թրքական դաշինքին, տիրականօրէն կը տարածէր իր լեզուն եւ մշակոյթը բովանդակ Օսմանեան կայսրութեան մէջ, եւ կը վայելէր տնտեսական եւ առեւտրական մեծ առաւելութիւններ:

Իթթիհատական կառավարութիւնը միայն Միացեալ Նահանգներէն կ'անկնածէր առանձնաշնորհումներու ջնջումը գործադրելու համար: Էնվէր այդ օրը հիւանդ, իր մօտ կանչեց մամբրիկեան դեսպանը՝ անոր հաղորդելու թուրք նախարարներու որոշումը եւ իմանալու անոր կարծիքը: Ապա քաղցր լեզուով մը աւելցուց. «անշուշտ երկիր մը որ իր անկախութեան համար կոռուած էր, պիտի համակըէր թուրքիոյ այն ճիգին, որով ան նպատակ ունէր քօթափել իր շղթաները»: Եւ որպէսզի համոզիչ լեզու գործածէ՝ աւելցուց. «Միացեալ Նահանգները օժանդակած են ձարոնին, որպէսզի ան ինքզինքը այդ կարգի կապանքներէն ձերբազատէ. պէտք է որ մեք ինքզինքնս մեր

հայրենիքին ախոյեանը հանդիսացնենք. չէ՞ որ Թուրքիան ալ շաքոնի չափ քաղաքակրթութիւնով չազ մըն էր»:

Մորկէնթաու՝ սրամիտ մարդ, հասկցուց պատերազմական նախարարին, որ Միացեալ Նահանգները առանձնաշնորհութիւններէն պիտի չհրաժարէին այնքան ժամանակ՝ որ թուրք դատարանները եւ բանտերը կը պահեն իրենց ներկայ կանոնները: Ապա աւելցուց թէ «մեր ազգային դպրոցները եւ վարժարանները շատ քանակագին են մեզի համար, եւ թէ մենք երբեք պիտի չհրաժարինք անոնցմէ»:

Բայց, ան տեսնելով որ թուրքերը կը կասկածին ամերիկեան կրթական հաստատութիւններուն վրայ, իբր թէ անոնք քաղաքական նպատակ մը կը հետապնդէին եւ կրօնական քարոզչութիւններ կը կատարէին թուրք աշակերտներու մէջ, վարպետորդի ձեւով մը համոզեց էնվէրը, կառավարութեան ամէնէն ազդեցիկ անդամներէն մէկը, որ այցելէ հոշակաւոր Ռոպերթ դոլէճը: Ան սիրով ընդունեցաւ առաջարկը եւ Հոկտեմբեր 1ին, առանձնաշնորհութիւններու ջնջումին օրը, հոն ընդունուեցաւ նախապէս պատրաստուած փառաւոր թէյասեղանով մը: Թէյասեղանի ընթացքին, ղեսպանը՝ թուրք պետական մարդուն կասկածները փարատելու համար՝ ըսաւ «այս կարգի հաստատութիւններ կառուցանելով Թուրքիոյ մէջ, մենք կ'աշխատենք ո'չ թէ ձեր հայրենակիցները բրիտանացիներէն դարձնելու համար, այլ գանձակ կրթելու նպատակով՝ գիտութեան եւ արուեստներու մէջ... մեր դաստիարակները, երբեք, ոչ մէկ մահմետական բրիտանացիներէն դարձուցած են եւ ոչ ալ փորձած են ընել այդ բանը»:

Մորկէնթաուի խօսքերը անկեղծ էին, որովհետեւ բողոքական պատուելիները առաջին օրէն մինչեւ այսօր մէկ հատիկ մահմետական մը քրիստոնեայ չեն դարձուցած, այլ անոնց աշխատութիւնը եւ ճիգը եղեր էր, եւ այսօր ալ է, հինօրեայ քրիստոնեայ հայերը բողոքական քրիստոնեայ դարձնել, եւ այդ դպրոցներուն եւ վարժարաններուն կողքին՝ հիմնուած բարեսիրական հաստատութիւնները, գործնական միջոցներ էին այդ առաքելութիւնը փառքով պատկերելու:

Կերեւի թէ էնվէրի վրայ մեծ ազդեցութիւն գործած ըլլալուն էին ղեսպանին այս խօսքերը. «մենք կ'ուզենք որ բարութեամբ վարուիք մեր դպրոցներուն հետ, որոնց համար մենք ամէնք ալ կը գործովիմք Միացեալ Նահանգներուն մէջ»:

Ուրիշ խնդիր մըն ալ, որ նոր տպաւորութիւն գործեր էր Եռապետին վրայ, ամերիկեան բողոքական պատուելիներուն տեսքն էր, որ իրեն թուեցաւ ճշմարիտ յայտնութիւն մը, եւ այդ բանը բացէ ի բաց յայտարարեց ղեսպանին. «ես կը սպասէի գտնել միւսիւրեքներ, ըսաւ ան, որոնց նմանները կը նկարեն Պերլինի թերթերը, երկար մագերով, կախուած գդակով, ձեռքերնին միշտ աղօթք ընելու դիրքին մէջ իրարու միացուցած: Ասոր փոխարէն ես այստեղ կը տեսնեմ

պատուելի մը, որ թրքերէն կը խօսի բլրուլի պէս, եւ աշխարհիկ մարդու մը պէս կը շարժի»:

Արդարեւ, հնարամիտ ղեսպանը իր նպատակին հասնելու համար «այս հաստատութեան մէջ, կը գրէ ան, ոչ մէկ կարեւոր պաշտօնատար պաշտօնապէս ներս չէր մտած անոր դռներէն»:

«Պէտք էր ցածին չափ կը ցանցնայի թուրք նկարագիրը, գիտնալու համար թէ էնվէրի կողմէ բացէ ի բաց հանդիսաւոր կերպով տրուած այցելութիւն մը ընդհանուր մեծ տպաւորութիւն առաջ պիտի բերէր. այս լուրը պիտի երթար կայսրութեան ամէնէն հեռաւոր ծայրերը, եւ ասով ընդհանուր կերպով մը պիտի ենթադրուէր թէ կառավարութեան ամէնէն ազդեցիկ անդամներէն մէկը այս ամերիկեան հաստատութիւնը եւ ուրիշներ իր հովանաւորութեան տակ առած էր: Այս այցելութիւնը աւելի լաւ պիտի պաշտպանէր մեր վարժարանները եւ դպրոցները քան թէ գորագունդ մը»:

Եւ իրապէս քիչ յետոյ, երբ Թուրքիան արիւնի, արցունքի եւ հառաչանքներու դժոխք մը դառնայ, եւ մինչեւ իսկ մեծ պետութիւններու հպատակները դառնութեան օրեր անցընեն, Մորկէնթաու կրնար գրել. «Ապագան ցոյց տուաւ թէ որքան բարեբաստ ենք շնորհով մը ունեցեր էի, առաջարկելով այդ ազդեցութիւնը, գերծ ընելու համար մեր վարժարանները ամէն տեսակ անձկութիւններէ. իրապէս այս վերջին չորս տարիները միշտ առանց վտանգի չեղան Թուրքիոյ մէջ բնակողներուն համար, եւ սակայն ո՞ր հաստատութիւնները երբեք դժուարութիւններ չունեցան ըլլալ կառավարութեան, ըլլալ ժողովուրդին հետ»:

ՕՏԱՐԱԶԳԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓԱԿՈՒՄԸ

«Թուրքիան՝ թուրքերուն» ծրագիրը անմիջապէս դորձադրուեցաւ. իթիֆհատական կառավարութիւնը եւրոպական թղթատարական պաշտօնարանները ջնջել հրամայեց կրօնական ազատութիւնները, որ կը վայելէին օտար պետութիւններու հպատակները. պետական խիստ հակահռիփ տակ առնուեցան օտար կրթական հաստատութիւնները, ջնջուեցան հիւպատոսական ղեսպանները եւ բանտերը, որոնց տեղը բռնեցին թրքական դատարանները՝ թուրք դատաւորներով եւ օրէնքներով. անոնք այլեւս պիտի դատէին եւ պատժէին օտար հպատակներուն գործած ոճիրները. եւրոպացին ալ հասարակ «Ռայայ»ի պէս պիտի նետուէր թրքական բանտին մէջ, ուր, ինչպէս կը վկայէ ամերիկեան ղեսպանը, սովորութիւն կար հաւաքել անմեղները եւ յանցաւորները, միեւնոյն տեղը զնել մարդասպանները եւ պատիկ յանցանքներու համար դատապարտուած մարդիկը, վերջապէս ձեռք ենթարկել հեռաւոր վկանները:

Այնպէս, «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէն Հօկաւ 1ին բարձրագուրու կ'իշխէր իր նոր հիմնած երկրին վրայ, որուն մէջ բնակող օտարականները ուրիշ բան պիտի չըլլային, եթէ ոչ շնորհագուրկ ստրուկներ, ստիպուած յարգելու ազատ եւ անկախ կայսրութեան մը օրէնքները:

Մորկէնթաու իրաւունք ունէր գրելու.— «Ինչ որ տարիներ է վեր չէին կրցած բնի թուրք պետական մարդիկ, մէկ օրուան մէջ ըրաւ ապականած եւ վատասերած կառավարութիւն մը», որովհետեւ այդ դարշանք ազդող կառավարութիւնը, խորամանկ եւ նենգամիտ, «Թուրքիան թուրքերուն» ծրագիրը ձեռք առաւ ճիշտ այն պահուն, երբ Երրեակ Համաձայնութիւնը եւ ինչպէս նաեւ կեղերոնական կայսրութիւնները կը սիրաշահէին Թուրքիան, եւ ասիկա թանկագին առիթ մը ընծայեց ի գլուխ հանելու համար այս արմատական փոփոխութիւնը: Ո՛չ մէկ կասկած, որ երկար դարերէ ի վեր Թուրքիոյ քաղաքական յաջողութիւններու գլխաւոր պատճառները եղան եւ պիտի մնան իր երկրին աշխարհագրական հիանալի դիրքը եւ համբերութիւն ունենալ ու թանկագին առիթներու սպասել:

ՌՈՒՍԻՈՅ ՌԵՂՂՈՒԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԸ

Մինչդեռ իթիհատական կառավարութեան մոլեռանդ եւ ազգամոլ հոսանքը նոր դարազլուխ մը կը բանար Օսմանեան կայսրութեան մէջ, Գերմանիոյ դիրքը ռազմական ճակատներու վրայ ողբերգական փուլի մը մէջ մտեր էր, որով Թուրքիոյ իրական գործակցութիւնը թանկագին կը դառնար:

Բայց ինչպէս վերը ըսինք, այդ գործակցութեան դէմ ցցուած էին թուրք հանրային կարծիքը, որ գլուխ ունենալով «անուանական» Սուլթանը, դէմ էր պատերազմի: Նմանապէս պաշտօնական անձնաւորութիւնները, պարագլուխ ունենալով զահաժառանգ իշխանը, մեծ համակրութեամբ կապուած էին Անգլիոյ եւ Ֆրանսայի, եւ մինչեւ անգամ Թալաւաթ հօր եռապետը՝ տակաւին բացարձակապէս չէր համոզուած, ինչպէս կը վկայէ ամերիկեան ղեսպանը, թէ լաւագոյն քաղաքականութիւնը պատերազմ եղած ըլլայ, եւ իր ծրագիրը չէր անմիջապէս նախարարական բոլոր պաշտօնները ձեռք անցընել, այլ կամայ կամայ իր ճամբան պատրաստել, մինչեւ որ բացարձակ հակադէմ մը տիրանայ, իր քաղաքականութիւնը պարտադրելու համար:

Թուրքիան պատերազմի մէջ նետելու ծրագրին լուրջ արգելք մը կը հանդիսանար նաեւ ամերիկեան ղեսպանը, որ ինչպէս ինքը կ'ըսէ, կը ջանար Թուրքիան խաղաղութեան մէջ պահել, եւ կը շարունակէր էնվէրի եւ Թալաւաթի մօտ այդ մտքով պնդել:

Այս պարագան զայրացուց կայսեր ներկայացուցիչը:

«Ես կը կարծէի թէ դուք չէգո՛մ մըն էիք, գոչեր էր ան ամերիկեան ղեսպանին երեսն ի վեր, մոռնալով թէ ինքը մէկուկէս ամիս առաջ, երբ ամերիկեան ղեսպանը ի շահ խաղաղութեան միջամտեր էր, քաղաքացիները էր անոր ձեռնարկը, որովհետեւ այդ շրջանին պետ տեսնուած չէր որ թուրքը՝ զեմքը ձեռքին մէջ, գերման գիւնուորին կողմին կանգնէր»: Մորկէնթաու, որ խօսքի տակ չէր մնար, չոր ու կարուկ պատասխան մը տուաւ «ես կը կարծէի... որ դուք Թուրքիոյ մէջ ըլլալիք» այսինքն «չէգո՛մ» երկրի մը մէջ:

Ամէնչէն աւելի Վանկէնհայմի նենգութիւններու դէմ գլուխ բարձրացուցեր էին Օսմանեան դահլիճին ամէնչէն սրամիտ եւ գործունեայ անդամները. Ճաւիտ, ելեւմտական նախարարը, Մահմուտ փաշա՝ հանրային շինութիւններու նախարարը, Պուստանի՝ առեւտրական եւ երկրագործական նախարարը, եւ Ոսկան Մարտիկեան՝ թղթատարական եւ հեռագրական նախարարը:

«Այս չորսը, ինչպէս եւ մեծ նպարգոսը, կը գրէ Մորկէնթաու, բացէ ի բաց կը հակառակէին պատերազմին եւ կը տեղեկացնէին Թալաւաթի եւ Էնվէրի, թէ իրենք իրենց հրաժարականը պիտի տան, եթէ Գերմանիան յաջողէր իր մեքենայութիւններուն մէջ»:

Եւ ահա 29 Հոկտեմբերով, Ռուսաստանէն ողբալի լուրեր հասան: Թրքական երեք ուժբաբարձ նաւեր Օտեսայի նաւահանգիստը մտեր էին: Ռուսական Տոնէց թնդանօթակիրը՝ իր մարդոց մէկ մասովը ընկղմած եւ երկու յածանաւերու վնաս պատճառած էին: Ասկէ զատ ընկղմեր էին նաւ մը, սպաննելով երկու հոգի եւ ա՛յլ երկու վիրաւորելով: Յետոյ իրենց թնդանօթները ուղղեցին քաղաքին վրայ եւ քանդեցին գտարանը:

Իրականին մէջ ուժբաղծած էին նաեւ Սերաստապօլ եւ Նովորոսիսք մեծ եւ բանուկ նաւահանգիստներն ալ: Այս նաւերուն կը հրամայէին գերման սպաներ. շատ քիչ թուրքեր կային, որովհետեւ Պայրամի կրօնական տօնին առիթով, արձակուրդ տրուած էր անոնց: Այս տեսակ արարք մը՝ գուտ եւ պարզ մարտահրաւէր մըն էր, գերմանացիներուն կողմէ խորհրդածուած պատճառներով ի գործ դրուած, պատերազմ մը անխուսափելի դարձնելու համար:

Այս լուրը հիմնուած է ականջալուր Մորկէնթաուի վկայութեան վրայ: Ուրիշ ականջալուր վկայ մը, մտերիմ բարեկամ ամերիկեան ղեսպանին, անոր հաղորդեր էր, թէ գերման Կեներալ նաու սպաները միշտ կը սպառնային նման օրինակ յիմարութիւն մը գործել, եթէ Թուրքիան որոշում մը չտար. եւ ահաւասիկ այս անգամ խօսքերնին պահած էին:

ՅՈՒՋՈՒՄԸ ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ

Այս անիմաստ արարքը, հակառակ միջազգային դիւանագիտութեան սովորութիւններուն, ո՛չ միայն Երբեակ Համաձայնութեան դեպքաններուն ջիղերը ծայրաստիճան գրգռեր էր, այլ նաև Իթթի-հատական կառավարութեան բարձր շրջանակներն ալ, որովհետեւ լաւ գիտէին թէ դեպքան Վանկէնհայմն էր, որ հրամայեր էր Շուխոն ծովակալին, որ Կէօրէն եւ Պրեսլաու մարտանաւերուն գլուխ անցած, մեկնի դէպի Սեւ ծովը եւ ուժակոծէ երեք նաւահանգիստները:

Երբ ուժակոծումի լուրը Կ. Պոլիս հասաւ, կը գրէ Մորկէնթաու, Սէնթըր դ'Օռիանի մէջ ծովային նախարար՝ ձէմալ փաշան թուղթ կը խաղար. այդ յարձակողականը եթէ Թուրքիոյ կառավարական մէկ գործողութիւն ըլլար, կարելի չէր առանց իր հրամաններուն ձեռնարկել անոր: Երբ եկան գտնել խաղի սեղանին շուրջ տեղեակ ընելու համար, ձէմալ շատ անակնկալի եկած երեւցաւ: «Այս մասին ո՛չ մէկ տեղեկութիւն ունիմ ես, բացառանչեց ան. այդ բանը առանց իմ գիտութեան կատարուած է»:

Հաւանական է որ ձէմալ փաշան անկեղծ էր իր անգիտութիւնը մէջտեղ դնելով, ինչ որ քիչ յետոյ պիտի տեսնենք:

Չափազանց յուզուեր էր նաև Մորկէնթաու, որ սկսեր էր իր ջանքերը կրկնապատել, որպէսզի Թուրքիան չէզոք մնայ, լաւ գիտնալով թէ ստիպումի տակ՝ պատերազմի մէջ մտնողը ինչ ծանր աղէտներ կարող է բերել Օսմանեան հպատակ քրիստոնեայ ազգերու գլխուն:

Տեսակցութեան մը մէջ, կը գրէ Մորկէնթաու, Թալաթ ինծի միեւնոյն լեզուն գործածեց, ըսելով թէ այս յարձակումի մասին սկիզբէն բան մը չէր գիտցած եւ թէ ասոր բովանդակ պատասխանատուութիւնը կ'իյնար գերման ծովակալ՝ Շուխոնի վրայ:

ԹԱԼԱԱԹԻ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ԴԷՄ

Թալաթ յայտնապէս սուտ կը խօսէր: Անկարելի բան էր որ ան, եռապետութեան ամէնէն հզօրը, պատրաստած չըլլար այդպիսի ծանր գրգռութիւն մը, ուսկից ուրիշ բան չէր կրնար ծագիլ, բայց եթէ պատերազմ:

Ինչպէս տեսանք, գերման կառավարութեան եւ գերման ժողովուրդին բուռն ատելութիւնը Ռուսիոյ դէմ՝ յայտնի էր: Իթթիհատական կառավարութեան ատելութիւնը Ռուսիոյ դէմ կրկնապատիկ էր: Թուրք եռապետները երբեք չէին կարող մոռնալ թէ պալքանեան ազգերու դաշինքը, թուրք-պալքանեան երկու պատերազմները եւ եւրոպական Թուրքիոյ կորուստը Ռուսաստանին գործերն էին:

Անոնք եւս աւելի կատղեր էին որ դեռ թուրք-պալքանեան պատերազմը չվերջացած, ճարական դիւանագիտութիւնը ձեռք ստեր էր Հայկական Հարցը, որպէսզի այդ պատրուակին տակ ծածկուած, կարենայ վերջ տալ նաև Արեւելեան Անատոլիոյ եւ անով, որ մը, վերջ տալ Օսմանեան կայսրութեան:

Ամէնէն աւելի Թալաթ կ'ատէր Ռուսաստանը: Ան թէև ծագումով գնչու մըն էր, բայց աւելի կատաղի թուրք մըն էր, քան հարագատ թուրք մը: Անոր մտքին առջեւ միշտ ցցուած էր ուս դեպքան Գիրսընի ուրուականը:

Այստեղ նորէն խօսք կու տանք ամերիկեան դեպքանին, որուն առջեւ Թալաթ իր սիրտը կը բանար անվերապահօրէն: Տեսակցութեան մը ընթացքին ան դեպքանին ըսեր էր. «Թուրքիան որոշած է Գերմանիոյ կողմը անցնիլ եւ յաղթել կամ անոր հետ մեռնիլ»: Այս գործակցութիւնը ան հիմներ էր հետեւեալ շարժառիթներուն վրայ. «Եթէ Գերմանիան յաղթական ըլլար, որուն մասին չէր կասկածեր, կայսրը վրէժ պիտի լուծէր Թուրքիայէն, որ մերժած էր իր գործակցութիւնը»: Եւ յետոյ աւելցուցեր էր. «Անր շահը կ'ուզէ որ մեմ Գերմանիոյ կողմը բռնենք. եթէ մէկ ամիս ետք մեր շահը ուզէ Անգլիոյ կամ Ֆրանսայի կողմը բռնել, այդ բանը պիտի բռնենք մոյմէմ յօժարութեամբ: Ռուսիան մեր մեծագոյն թշնամի է, եւ մեմ կը վախճանք անկէ: Եթէ այսօր, այն պահուն երբ Գերմանիան անոր վրայ կը յարձակի, մեմ կարենանք ոտքի լաւ հարուած մը տալ իրենց, եւ գայն ժամանակի մը համար մեզի վնաս հասցնելու վիճակէն դուրս դնենք, մեր պարտականութիւնն է որ մեմ այդ ոտքի հարուածը տամք անոր»:

Շարժառիթները արդարացի էին, բայց եւ այնպէս, այդ գնչուն շատ ալ ուրախ չէր, հասկնալով գործին ծանր պատասխանատուութիւնը: «Ան, կ'ըսէ ամերիկեան դեպքանը, կէս միլիարդոս եւ կէս մարտահրաւէր ժպիտով մը ինծի նայելով, ամբողջ կացութիւնը ամփոփեց այս յեղակարծ խօսքին մէջ, «Ich mit Deutschen» (Ես գերմանացիներուն հետ եմ) ըսաւ ան իր գէշ գերմաներէնով, որ անշուշտ նոր սորվեր էր գերման դեպքանէն»:

ՍԱՅՏ ՀԱԼԻՄԻ ԴԻՐՔԸ

Եթէ Թալաթ եւ էնվէր պատրաստած էին Վանկէնհայմի գրգռիչ խաղին, բայց անտարակոյս՝ մեծ էր վզուռի Սալիտ Հալիմի ցար. երբ, կը վկայէ Մորկէնթաու, Ֆրանսական եւ անգլիական դեպքանները եկան Բննիլ գիւնը եւ իրմէ իրենց անցագրերները պահանջեցին, փղձկեցաւ, խնդրեց անոնցմէ յետաձգել իրենց մեկնումը, վստահեցնելով զիրենք թէ գործը կրնայ կարգազրուիլ:

Մեծ վզրուկին բռնած դիրքը շփոթութեան մասնեց Թալաաթն ու էնվէրը, որովհետեւ անոր հրաժարականը կրնար ծանր հետեւանքներ ունենայ: «Մեծ եպարքոսը, կը գրէ Մորկէնթաու, միակ անդամն էր դահլիճին որ էնվէր եւ Թալաաթ կ'ուզէին մասնաւոր կերպով գործածել, իբր Եգիպտոսի արքայական տան իշխան, որուն մեծ հարստութիւնը, նախարարութեան խորհուրդին մէջ իր ներկայութեանը որոշ քարճրութիւն մը կու տար»:

Թալաաթ, մեծ վզրուկին բանագնացի դիմակը առած, դիմեց ամերիկեան ղեսպանին, խնդրելով անկէ՝ որ ռուս ղեսպանատուն երթայ եւ տեղեկանայ այն հատուցումներու միջոցներուն վրայ, որոնք Թուրքիան կրնար մատուցանել, գոհացնելու համար Ձարը:

Մորկէնթաու, գիտնալով հանդերձ, թէ թուրք եռապետին բաղձանքը կեղծ էր եւ նպատակն էր միայն Սալիտ Հալիմի աչքը մտնել, եւ այդ կերպով զայն դահլիճին մէջ պահել, յանձն առաւ այդ առաքելութիւնը, յուսալով Թուրքիան չէզոքութեան մէջ պահել:

Բայց արդէն ղէպքերը գահավիժեր էին:

Գիրսըն արդէն հրաման ստացեր էր անմիջապէս մեկնելու, եւ պատրաստ էր հրամանը գործադրելու: Ասով հանդերձ այս խիստ պայմանները դրաւ, որոնք կարող էին գինքը գոհացնել. «Խարկ էր նամբել բոլոր գերման սպաները, ըլլան անոնք թուրք բանակին կամ թուրք նաւատորմին մէջ»: Յետոյ աւելցուցեր էր. «Ռուսիան պիտի ընէ անհրաժեշտ կարգադրութիւններ, որպէսզի թուրք նաւատորմը կրկին Սեւ ծով չվերադառնայ» եզրակացուցեր էր Գիրսըն վայրագ երեւոյթով:

Երբ Թալաաթ վերադարձաւ ամերիկեան ղեսպանատուն, իմանալու համար ռուս ղեսպանին դրած պայմանները, ըսաւ թէ «Ռահլինը քննած էր ռուսական պատասխանը եւ մեծ եպարքոսը կը փափաքէր Գիրսընի պայմանները գրաւոր ունենայ»: Ասոր համար դարձեալ կը խնդրէր որ ամերիկեան ղեսպանը միջնորդի դեր կատարէ:

Դեսպանը չոր կերպով մը պատասխանեց «Վառոնի» Իտալիոյ դեսպանը, ստանճնած է ռուս շահերու պաշտպանութիւնը... նոր բանակցութիւնները պէտք է որ տեղի ունենան Իտալիոյ դեսպանին միջնորդութեամբ»:

Շատ հաւանական է, որ այդ մերժողական պատասխանը չտար, եթէ եռապետը իրեն հաղորդած չըլլար թէ «Վանկէնհայմի մօտ նախանշելէն կու գար»: Սրամիտ ամերիկացին շուտով հասկցաւ թէ այդ գլուխ-գլխի մտերմութիւնը ի՛նչ կը նշանակէր եւ իր սրտին բոլոր դառնութիւնը թափեց այդ կեղծաւորին վրայ:

«Ինչո՞ւ համար դուք մեծ եպարքոսին բանագնացի դիմակը չէք հաներ ձեր երեսէն եւ ձեր անձին անունովը չէք խօսիր ինձի»:



Քեազըմ Քարապիճի

Այսպէս՝ նեղը դրուած, Գնչուն խնդաց եւ կտրուկ կերպով պատասխանեց. «Շատ աղէկ. ուրեմն Վանկէնհայմ, էնվէր եւ ես կը նախընտրեմք որ պատերազմը հիմա սկսի»:

Ինչպէս կը տեսնուի, ձէմալ փաշային անունը չկայ, եւ որով պատերազմին պատասխանատուութիւնը կը ծանրանայ այդ երեք չարագործներուն վրայ:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Տեսնելով որ պատերազմը անխուսափելի է, դահլիճին չորս անգամները՝ Պուստանի, Ոսկան, Մահմուտ եւ Ճաւիտ, անմիջապէս գործադրութեան դրին իրենց սպառնալիքները եւ իրենց հրաժարականը տուին դահլիճին անգամակցութենէն: Մեծ վզրուկը, հակառակ որ ինչն ալ խոստացեր էր թողուլ իր պաշտօնը, եւ սակայն չըրաւ այդ բանը:

«Ան, կ'ըսէ արդարադատ Մորկէնթաու, ծայրայեղորէն յաւակնոտ եւ սնափառ էր, եւ այն աստիճան կը գնահատէր իր պաշտօնին պատիւները, որ վերջնական որոշումի պահը գալուն, չկրցաւ թողուլ այդ պատիւները»:

Սայիտ Հայիմի մէջ այդ սնափառութիւնը աւելի զօրացեր էր երբ նոյն Հոկտ. 29ին, Մորկէնթաուի միջոցով իմաց տուեր էր անգլիական դեսպան՝ Սըր Լուի Մալէթին, թէ իր կառավարութիւնը չէր ճանչնար «ո՛ւնէ եզիպտական սահմանագլուխ», ինչ որ կը նշանակէր թէ Եզիպտոս նկատուած էր իբր թրքական ստացուածք եւ անգլիական գրաւումը՝ ժամանակաւոր յետաձգութիւն:

Շատ հաւանական է, որ թուրք պետական մարդը, գերման-թուրք յաղթանակին վրայ վստահ, խոստացեր էր Մեծ վզրուկը թաւաւոր կարգել «ագատագրեալ» Եզիպտոսի վրայ, Օսմանեան գերիշխանութեան տակ:

ՄԻԱՏԱՐԻ ԴԱՀԼԻՃԸ

Հեռատես նախարարներու հրաժարականներով, իշխանութիւնը անցաւ թուրք իսլամներու ձեռքը, մոլեռանդ, ազգամուլ, քրիստոնեաներու արեան ծարաւի մարդիկ, որոնց պետը՝ Թալաթ, մուսթին մէջ գործելով կը պատրաստուէր դառնալ բացարձակ «տիկտատոր» եւ որ գլորուելով գլորուելով պիտի իյնար Կարմիր Սուլթանին գիրկը:

Պօսք սանք Մորկէնթաուի, որ քանի մը տողերու մէջ կը գծէ ճշգրիտ պատկերը. - «Թուրքիոյ պատերազմի մէջ մտնելուն անմիջական արդիւնքը՝ վերաբերմամբ իր ներքին քաղաքականութեան, եղաւ ամբողջ ազգին անձնատուութիւնը «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէին, որ հիմա բոլոր մասերուն մէջ կը հակակշռէր կառավարութիւնը: Այս գաղափարապաշտ կազմակերպութիւնը, որ ստեղծուած էր հայթայթելու համար այս երկրին ժողովուրդին բարիքները, ի վերջոյ դարձած էր բրուսիական ինքնակալութեան մը գործիքը»:

ՄՐՏԱՏՐՈՓ ՕՐԵՐ

Վանկէնհայմ հասեր էր իր նպատակին: Գիրսըն՝ Ջարին կոչու դեսպանը, թուրք նախարարներու հետ կոպիտ խօսելու վարժած, իր պայմանները թելադրելէն ետք, հակառուսական ցոյցէ մը վախնալով քաշուեր էր Պուլղարիա, թրքական պատասխանին սպասելու համար:

Իսկ Ֆրանսական եւ անգլիական դեսպանները, սրտատրոփ օրեր անցուցին. Հոկտ. 1ին իրենց անցագիրները պահանջելով, կը պատրաստուէին յաջորդ օրը մեկնել Վոսփորի գերածիժաղ փոխընդ, ստիպուած ըլլալով նստիլ իրենց դիւանատան գրասենեակներուն մէջ, վառարանի մը առջեւ, իրարու ետեւէն աչքէ անըջնել պաշտօնագիրները՝ կրակ նետելու համար: Ասոնք դեսպանատան հին դիւանաթուղթերն էին, երկու դարէ աւելի հոն՝ նշանաւոր դեսպաններու երկար յաջորդութեան մը հռչակաւոր գործեր, դիւանագիտական յաղթանակներու, որոնք Անգլիոյ եւ Ֆրանսայի հաշուին կառավարել էին թուրք կայսրութիւնը, արիւն եւ դրամ վատնելով անոր ամբողջութիւնը պահպանելու համար:

Թուրքիոյ մէջ վերջ գտեր էր այլեւս Ֆրանսական ազդեցութիւնը, լեզուն եւ մշակոյթը: Իսկ «Բրիտանական ազդեցութեան երկար պատմութիւնը, կը գրէ Մորկէնթաու, իր վախճանին հասեր էր: Գերման կայսեր կողմէ մղուած քսանամեայ պայքարը, քանզի էր այս ազդեցութիւնը եւ վերջապէս գերման նախագիտութիւնը յաղթահարած: Այն կրակնորդ, որ Սըր Լուի Մալէթ յարատեւօրէն կը հրահրէր, իրականութեան մէջ մեռելակալ խարոյկն էր՝ Թուրքիոյ մէջ շիջած Անգլիոյ գորութեան: Արժանապատուութեամբ լեցուն եւ քիչ մը մտածկոտ այս դիւանագետը, դիտելով որ շրջապատուած էր բրիտանական դեսպանատան շփեղութիւններով, բնականաբար աչքին առջեւ բերէր այն սուլթանները, որոնք բերքմն յարգալիք երկիրով մը կը խոնարհէին Անգլիոյ վեհապալատութեան առջեւ. ժամանակ մը Բրուսիա եւ Գերմանիա միայն անունով գոյութիւն ունէին»:

Մորկէնթաու, որ նոյն օրն իսկ ստանձնեց էր Ֆրանսական եւ անգլիական շահերուն պաշտպանութիւնը, արդարադատ զուգակշիռ մը կ'ընէ մայրամուտ եւ նորածագ արեւներուն միջեւ:

«Որքան ալ ցաւագին ըլլայ, շատ մը տեսակէտերով Թուրքիոյ մէջ բրիտանական այս կործանումը, սակայն Մեծն բրիտանիոյ եւ իր դեսպանին պատիւը պիտի մնար անվթար: Սըր Լուի Մալէթ՝ Վանկէնհայմի պէս չէր կաշառած թուրք պաշտօնատարները, չէր սպականած թուրք մամուլը, ոտնակոխ չէր ըրած միջազգային իրաւունքին վերջին հետքերը, չէր եղբայրացած կատաղի ամբոխավարներու խումբի մը հետ, եւ իր թշնամիին դէմ կեղծ եւ ստապատիք տեղեկագիրներու անդուլ պայքար մը չէր մղած: Այն դիւանագիտական խաղը, որ պարտութեան յանգած էր, մին էր անոնցմէ, որուն համար անգլիոյ պետական մարդիկը չէին սահմանուած. այդ խաղը կ'ուզէր այն տաղանդ որ Վանկէնհայմ մը միայն ունէր, այն գերման քաղաքականութիւնը, որ համաձայն Պիզմարֆի առածին, պարտաւոր էր հայրենիքին համար գոհաբերել, ո՛չ միայն կեանքը, այլ նաեւ պատիւը»:

Նոյեմբեր 1ին (նոյն տարին) Անգլիոյ եւ Ֆրանսայի ղեկավանները մեկնեցան: Դիւանագիտական խաղերը՝ իրենց գործը վերջացուցեր էին եւ հիմա կարգը եկած էր թնդանօթին:

ԳԼՈՒՍ ԺԸ.

ՌՈՒՍ-ԹՐԻՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԵՒ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԴԵՐԸ

ՌՈՒՍ-ԹՐԻՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Նիկոլա Բ. ձարը, գերման եւ թուրք մարտահրաւէրին ձեռնոցը վերցնելով, 1914ի Հոկտեմբեր 20ին, պատերազմ յայտարարեց Թուրքիոյ դէմ:

Նոյն օրը Ֆրանսան եւ Անգլիան ալ պատերազմ յայտարարեցին Բարձրագոյն Դրան:

Երբ ձարը կովկասեան բանակին հրամայեց սահմանը անցնիլ, հայ կամաւորական գունդերն ալ կազմ եւ պատրաստ կը գտնուէին այդ բանակին մէջ:

Անոնց խմբապետներն էին՝ Անդրանիկ, Դրօ, Քեռի եւ Համազասպ, որոնք ուսական բանակին հետ արշաւեցին դէպի Բասէն եւ Պայագիտ:

Նոյն տարուան Նոյեմբեր 3ին, Ֆրանսական եւ անգլիական նաւատորմիդները սկսան ուժեղանալ նեղուցներուն արտաքին բերդերը եւ պաշարում դրին Տարտանէլի առջեւ, արգիլելու համար թուրք եւ գերման մարտանաւերուն մուտքը Միջերկրականի մէջ:

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԴԵՐՈՒ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ

Տեղակալ Աւետեան, որ մաս կազմած է Զօրավար Անդրանիկի սպայակոյտին, կովկասեան ճակատին վրայ, հետեւեալ պատկերը կու տայ հայ կամաւորական գունդերուն կազմութեան մասին՝ բաժնելով զանոնք եօթ գունդերու:

«Առաջին գունդը, հրամանատարութեամբ գորավար Անդրանիկին, մեկնեցաւ Ջուլֆա՝ 3 Նոյեմբեր 1914ին:

Երկրորդ գունդը, հրամանատարութեամբ Դրօյի, մեկնեցաւ Իգտիբէն Վանի ուղղութեամբ, 24 Հոկտեմբեր 1914ին:

Նրորդ գունդը, հրամանատարութեամբ Համագասպի, մեկնեցաւ դէպի Սարդամիշ, 1 Նոյեմբեր 1914ին:

Չորորդ գունդը, հրամանատարութեամբ Քեռիի, մեկնեցաւ Թորբումի նակատը, 6 Նոյեմբեր 1914ին:

Հինգերորդ գունդը, հրամանատարութեամբ Վարդանի, նոյնպէս բռնեց Վանի ուղղութիւնը:

Վեցերորդ գունդը, որ Հնչակեան կուսակցութեան անունով կազմուած էր, Գրիգոր Ուզարեանի հրամանատարութեամբ, որուն դրօշին տակ հաւաքուեցան ոչ-դաշնակցական տարրեր, ինչպէս հնչակ, ռամկավար եւ չէզոք կամաւորներ, որոնք փութացած էին դէպի Կովկաս իրենց անկեղծ եւ անձնուէր մասնակցութիւնը բերելու համար հայ ազատագրական գործին, դաշնակցական չկամութեամբ մատնուեցան դառն յուսախարութեան, լրուելով Թիֆլիսի փողոցներուն մէջ, ենթարկուելով անօրութեան եւ խեղճութեան. շատեր հարկադրուեցան ծախել իրենց հագուստները, գրաւուեցան իրենց հետ բերուած զինուորական պիտոյքները, ինչպէս գէնք, արագահարուած, կամուրջի յատուկ շրթայ, որոնք պահեստները յանձնած էին, ո՛չ վերադարձուեցան իրենց տէրերուն եւ ո՛չ ալ ծառայեցին իրենց նպատակին:

Գրիգոր Ուզարեանի դրօշին տակ հաւաքուած եւ դաշնակցութենէ հալածական բոլոր կամաւորները, որոնք դարձաւ հալածանքի առարկայ դարձան ազգային խորհուրդի կողմէ, ուրանալով անոնց գոյութիւնը. որով Իշխան Արդութեանի հրամանատարութեամբ՝ կազմուեցաւ վեցերորդ գունդ մը՝ չբացնելու համար Ուզարեանի վեցերորդ գունդը:

Սոյն խառնակութիւնը ռուս հրամանատարութեան ականջը հասաւ, որ վաւերացնելով նախապէս կազմուած վեցերորդ գունդի գոյութիւնը Ուզարեանի հրամանատարութեամբ, Իշխան Արդութեանի գունդին անունն ալ դրաւ եօթներորդ գունդ, եւ հարցը փակուեցաւ:

Վեցերորդ գունդը ուղղուեցաւ Բասէնի նակատը, իսկ եօթներորդ գունդը, իբրեւ պահեստի ուժ, բռնեց Վանի ուղղութիւնը:

Եօթը կամաւորական գունդերու ընդհանուր թիւն է 7.000 անձ, որոնք կը բաղկանային ձիաւոր եւ հետեւակ վաշտերէ, իւրաքանչիւր գունդին բաժին իյնալով երեքական գումարտակ՝ չորսական վաշտով (վաշտ կամ հարիւրակ՝ հարիւրէն հարիւր յիսուն զինուոր կը պարունակէ):

Այսպիսով հայ կամաւորական գունդերը իբրեւ յառաջապահ եւ թուրք հողին ծանօթ, նակատ բռնեցին Կարինէն մինչեւ Ջուլֆա (Ջուղա), առաջին ծայրը բաժին իյնալով Ուզարեանի վեցերորդ գունդին, իսկ վերջին ծայրը՝ Անդրանիկի առաջին գունդին. միւս հինգ գունդերը ցրուեցան այս երկու ծայրերուն մէջտեղերը»:

«ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹԻ ԹՐՔԱՏԵԱՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Պատերազմի յայտարարութենէն երկու օր ետք, Հոկտեմբեր 22ին, «Հորիզոն» օրաթերթը, մոռնալով Կ. Պոլսոյ իր թղթակցին գծած մտայլ կանխատեսութիւնները, որոնցմով կ'ազդարարէր թէ Հայկական Հարցի վերաբարձումին պատճառով՝ թուրքերն ու քրիստոները կատղած են եւ թէ թշնամութիւնը հայերու դէմ հասած է ծայրայեղ շարժումին, եւ թէ ամէն ինչ պատրաստ է կոտորածները սկսելու համար, եւ չհասկնալով թէ ի՞նչ կը նշանակէ Տարտանէլի փակումը, առանձնաշնորհումներու ջնջում, խանգաւառօրէն առաւ «տեսանող»ի հովեր եւ հրատարակեց այնպիսի անիմաստ յայտարարութիւն մը, փառաբանելով Ռուսաստանը եւ անոր դաշնակիցները, եւ ծանրապէս նախատելով թուրքիւն եւ նախատեսելով անոր անկումը:

Ահա այդ թրջական պատերազմի յայտարարութեան պատճէնը, որ անգամ մը եւս երեւան կու գայ հայ մամուլի մէկ մասին անզիտակից ու անպատասխանատու դերը:

«Այսօր հասել է ժամը վերջ տալու այն արիւնալից պատմութեան, որ յայտնի է «քիւրքահայի մարտիրոսագրութիւն» անունով: Պայմաններն այնպէս են դասաւորուել, որ ներկայ պայմանների մէջ հայն եւս կարող է իր կարեւոր տեղն ունենալ եւ իր ոյժերով նպաստել իր հողի վրայ տեղի ունեցող կռիւների ելքին: Հետեւապէս հայութիւնն պարտաւոր է վնասել իր բռնելիք դիրքը եւ միանալ կողմերից մէկին կամ միւսին:

Եւ հայութիւնը առանց երկրայելու, առանց ամենաչնչին տատանման, իր օգնութիւնը տալիս է Երրեակ Համաձայնութեանը եւ իր բոլոր ոյժերը տրամադրում է Ռուսաստանին: Եւ այն անում է ո՛չ միայն այն դիտումով որ Երրեակ Համաձայնութեան ձեռքով վնասել թիւրքահայերի արդար դատը, որ Ռուսաստանն է գլուխ կանգնել այդ խնդրի լուծման, այլ եւ ներկայ համամարդկային պատերազմին մէջ արդարութիւնը Երրեակ Համաձայնութեան կողմն է: Այնպէս որ հայութիւնը իր բռնած դիրքը խորապէս գիտակցում է եւ ըստ այնմ էլ իր ոյժերը դասաւորում:

Պատմութեան մէջ հայութիւնը ծայրայեղօրէն գգոյշ է գտնուել եւ այդ գգուշութիւնը շատ անգամ վախկոտութեամբ եւ ստրկամտութեամբ է բացատրուել. այսօր վերապահութեան ժամանակ չէ եւ նա բաց նակատով է հրապարակ իջնում. բացի ռուսական բանակներում գործող հայ զինուորներից, նա պատերազմի դաշտ է հանել նաեւ իր կազմակերպած կամաւորների խմբերը, որոնք գործում են ռուս զօրքների կից եւ նպաստում են իրենց համեստ ոյժերով Երրեակ Համաձայնութեան յաղթանակին» (Լէօ, հտ. Բ, էջ 118):

Միտքը բացուած մանուկն անզամ դիւրաւ կը հասկնայ թէ համօրէն հայութեան անունով խօսող խելքին փշած ճոռոմարանութիւնը, պատերազմի կատարեալ յայտարարութիւն մըն է ո՛չ միայն Թուրքիոյ, այլև Գերմանիոյ դէմ, որ Տարտանէլը փակել տալով, ո՛չ միայն Ռուսիան «շիշի մը մէջ խցեր էր» այլ Երրեակ Համաձայնութեան միւս երկու պետութիւններուն ալ ջախջախիչ հարուած մը տուեր էր:

Ողբերգական կէտն ա՛յն էր, որ այդպիսի թրքակատղեցուցիչ յօգուածներով, Ռուսաստանի գաղթահայութիւնը, մտած ճարական գիւտանագիտութեան ազդեցութեան տակ, իր ետեւէն կը քաշէր միւս ո՛չ-ռուսահայ գաղութները, Կ. Պոլիս, Զմիւռնիա, Եգիպտոս, մանաւանդ Ամերիկա, որոնք ռուսահայերուն շունչով ոգեւորուած, ասպարէզ կը նետուէին առանց հետեւանքները կշռելու:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ

Արտասահմանէն եկող հայ կամաւորները, որոնք Թիֆլիսի փողոցներուն մէջ անօթի ծարաւ թափառեցան, գաղափարական մարտիկներ էին, որոնք, ինչպէս կը գրէ տեղակալ Աւետեան, այն հաւատքն ունէին թէ «Ժողովուրդի մը կազմութեան, պարծամքի եւ հպարտութեան լաւագոյն էջը կը կազմեն իր ազատութեան պայքարի եւ պատերազմներու դրուագները, որոնք կ'ապահովեն այդ ժողովուրդին ուրիշ փառաւոր էջերը:

Անհերքելի նշմարտութիւն մըն է, անկարող դարձած է իր ռազմիկի պարտականութիւնը արժեցնելու:

Իսկ այն ազգը որ ինքզինքը բարձր եւ հպարտ պահած է, արժէցուցած է իր ռազմիկի պարտականութիւնը»:

Հայ կամաւորական գունդերու խմբապետները «հրահրուած էին նաեւ Վորոնցով-Դաչկովի հայերուն ինքնակալութիւն տալու լուսաշող խոստումներով, որ իրենց առանձին կամաւորական գունդերով՝ օժանդակ եւ յառաջապահ հանդիսանան Կովկասեան ճակատի ռուս ընդհանուր հրամանատարութեան հովանիին տակ, ի նպաստ ռուս յաղթանակին», որուն շնորհիւ միայն պիտի կարենար իրականանալ հայկական ինքնավարութիւնը:

Այս գաղափարականով ոգեւորուած հայ կամաւորական գունդերը, ըստ իրենց խոստումին, արդարացուցիչ իրենց ստանձնած պարտականութիւնը:

Իրապէս, հայ կամաւորներու յառաջապահ օժանդակութեամբ, ռուսական բանակը պատեց կովկասեան ճակատը եւ մտաւ թրքական հողը, առաջին հարուածով գրաւելով Պայազիտը, Ալաշկերտի հովիտը, Զէվիւնը եւ Քէօփրիւ Քոյը: Ռուս բանակը արագ յառաջ-

խաղացուած ունեցաւ, եւ հայ կամաւորները արժանի եղան վերին հրամանատարութեան գովասանքներուն:

Այս առիթով, կը գրէ տեղակալ Աւետեան, Թիֆլիսի փոխարքան իր շնորհակալութիւնները յայտնեց հայ կամաւորական զօրամասերու հրամանատարներուն: «Մեր աղուէլը՝ ուրախ էր, տեսնելով որ Լորանովեան իր հայալինջ ծրագիրը ուղիղ ճամբու վրայ էր: Նոյնքան ցնծութեան մէջ էր ռուսական բանակի վերին հրամանատարը՝ Զէրնագուպով: Ան յայտարարեց զօրավար Անդրանիկին, որ Զուլայի գիծը կը գտնուէր, հետեւեալ խօսքերը.

«Երջանիկ եմ որ հայ ժողովուրդը ռուս բանակին հետ ոտքի կը կանգնի մղելու համար ճնշուած Հայաստանի ազատութեան կոխը: Զինուոր մըն եմ եւ եւ չեմ գիտեր ինչ պիտի ըլլայ հայերուն ճակատագիրը. ատիկա դիւանագիտութեան կախում ունի, բայց կը կարծեմ թէ նոր արշալոյս մը կը ծագի հայ երկնակամարին վրայ: Իրրեւրիստոնեայ կը փափաքիմ աղօթել Աստուծոյ՝ կամաւորներու հետ, որպէսզի ձեզի շնորհէ լիակատար յաղթանակ»:

Ճիշտ է, ռուս զօրավարը այնպիսի «դիւանագէտ» մը չէր, ինչպէս էր հայոց «բարիք կամեցող» Վորոնցով-Դաչկով, բայց անոր շափ գիտէր որ հայ կամաւորական գունդերը կը քաշէին ապահովցնելու համար Ռուսաստանին լիակատար յաղթանակ, հիմնուած իշխան Լորանովի կարգախօսին վրայ «Հայաստանը առանց հայերու»:

Բայց Անդրանիկ եւ տեղակալ Աւետեան, հայկական բարեմտութեամբ «հայ երկնակամարին վրայ ծագելիք արշալոյսին», սոյն հաւատքով խրախուսուած՝ «ձմրան ցուրտ եղանակներուն սկսան գործի, մաքրագործելու համար թուրք յաղթանակի հաշույն ռուսագութիւն ընող քիւրտ աշիրէթական վոհմակները, որոնց հետ կարողացաւ գլուխ իլլել Անդրանիկ, անձնատուութեան եւ զինաթափութեան պարտադրելով չորս աշիրէթապետեր, ջախջախիչ յաղթանակներ շահելով Խուրուզ Խորասանի, Գուրուրի եւ Կարաթելի կողմերուն»:

Անդրանիկ, Գունուար 4ին, Զուլայի կարեւոր գիծը կը պաշտպանէր, եւ «զօրավար Զերնագուպովին հիացումիւն առարկան կը դառնար իր գունդով»:

Այդ օրերուն անդրանիկ իր պարտականութիւնը վստահելով իրեն հաւատարիմ եզրտի ձիհանկիր աղային, ինք անցաւ Վանի սահմանը եւ աճապարեց անոր օգնութեան հասնիլ. «Բայց Անդրանիկ, կը գրէ տեղակալ Աւետեան, յանկարծ ուղղութիւնը փոխեց դէպի Տիւման, արգելք հանդիսանալու համար Խալիլ փաշայի կործանարար ծրագիրին, որ Կովկասի համար պաշարողական ձեռնարկ մը սկսելու վրայ էր Պարսկաստանի վրայով»:

Կարեւոր է ծանօթանալ այն ծանր տագնապին, որուն ենթարկուած էր Վան, որուն օգնութեան հասնիլ կ'աճապարէր հայրենասէր Անդրանիկը:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻՇԱՆԻ ԹԵԹԵՒՍՈՒԿՈՒԹԻՒՆԸ

Գաղութային ողբերգության փոքրիկ նմուշ մը տալու համար, բաւական է այն տետրակը, որ 1914ին տպուած է Գահիրէի մէջ: Այդ տետրակի կողքին վրայ տպուած է Նիկոլա Բ.ի պատկերը, տակը «անցէ՛ք սահմանը»: Իսկ կողքին խոշոր տարերով՝ «ողջոյն ազատարար Քեռիին»: «Դէպի Հայաստան»: «Զար Նիկոլա...»: Այս բոլորին վրայ գրուած է հեղինակին անունը, Սուրէն Պարթեւեան, որ թրքահայերու զրկանութեան մէջ անձանօթ դէմք չէ:

«Կարելի չէ, կը գրէ Լէօ, ընտրութիւն անել այս գրուածքից: Ողջը միաշար մի դրուատիք, մի երգ ու պար հայրենասիրական աւիւնով լցուած, մինչեւ բոլոր չափերը վերելը, մինչեւ «հակասութիւն»: Բերում եմ մի երկու պատահական էջ.-

«Պատերազմի եակատ մը եւս կ'աւելնայ անսահման Ռուսաստանի արդէն պարգած քակատներուն վրայ:

Անցէ՛ք սահման... դէպի Հայաստան...:

Գրեմիքնի նուիրական կամաւորներուն տակ աղաղակուած անդառնալի հրամանն է մեծ ու ամենադորմած Զարին:

Ու հայ երկրին լանջքը կ'այծծփի, կ'ուռնեայ սհա, ընդունելու համար տիրական գրոհները Կովկասի ռուսական բանակներուն:

Հայուն դարաւոր տառապանքն է որ Արարատի աստի կողմը տարածուող արեան դաշտերէն եւ արցունքի հովիտներէն կը սկսի խուլօրէն ծփալ ու թեթեւացման հառաչանքի հովեր ձնացնել...: Մտիկ ըրէ՛ք այդ հայուն հեւքին որ կ'ելլէ Զուլումի աշխարհէն... Գնահատակ սերունդներու ոսկրները կը խայտան իրենց գերեզմաններուն մէջ: Գլուխներ բացէ՛ք ու ծունկի եկէ՛ք: Աշտարակեցիներու, Արդութեաններու, Խրիմեան Հայրիկներու ուրուականներն են որ կը հասնին էջմիածնի վեմերուն տակեն փոքրի աստուածացումներու հրաւիրելով հայուն անընկնելի ճիտը...: Լորիս Մելիքովի եւ Տէր Ղուկասովի արժանաւոր յաջորդները արդէն երեսն եկեր են Ռուսիոյ կովկասեան սպայակոյտի մէջ եւ սահմաններէն անդին արշաւող բանակներուն գլուխը անցեր: Հարիւր հազար հայ կամաւորներ խոնուեր են Կովկասի պետական զինամթերանոցներու շուրջը՝ իրաբանչիւրը հրացան մը վերցնելու եւ սահմանագլուխ վազելու անհամբեր:

Յետոյ՝ «Ինքնավար Հայաստան» վերնագրին տակ.-

«Ներկայ հանգամանքներուն մէջ, այս հարցը երկդիմութիւն չի վերցնել: Եթէ քաղաքական անհաւասարակշռութեան հաշիւներն ու նկատառութիւնները թոյլ չտան, կամ բաղադրի չընծայեն, յաղթական Ռուսաստանին պարգապէս կցել հայկական նահանգները, մեմք Թուրքահայաստանի անկախութեան պահանջը պիտի դնենք»:

Եւ յետոյ՝ «Ողջոյն ազատարար Քեռիին» վերնագրի տակ.-

«Ի գործ ուրեմն, արտասահմանի հայեր, շնորհաւորենք զիրար, ու խանդավառ ու շնորհապարտ բերկրութեամբ ողջունենք ազատարար «Քեռիին», որուն հերոսական բանակները Բասէնէն ու Պայագիտէն անդին կը խոյանան այս րոպէին շահախաբիչ թափով մը, երթալ մեր ցեղին դարաւոր շղթաները խորտակելու:

Էրզրումի պարիսպներուն շտկուած ռուսական թնդանօթներու որոտումներու մէջ չէ՞ք լսեր արդէն հայկական ազատութեան երգը: «Զայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն, Թումուզ թումուզ եղան հայոց սրտեր գէմքի շաչիւնէն...»:

Երգեցէ՛ք տղաք:

Ու ես գոց աչքերով կը տեսնեմ կատաղի գունդերն անոնց, բոլոր փետայիններուն, որ ահիպարանոց երկվարներու վրայ սահմանէն անդին կ'անցնին, կը սուրան դէպի Վան, Մուշ, Սասուն, իրենց երբեմնի զինակից ընկերներուն մեռելներն արթնցնելով՝ հայրենի մարտաներու երկայնքներուն: Կովկասէն կու գան անոնք, հայ ընդվզումին ամեհիները, անողմները, հայ արիւնին անյայտ վրէժխնդիրները... խոյացիր, Կովկաս, եղբայրական Կովկաս, ատելութեանդ կայծակները ձեռքերուդ ու սկոռներուդ մէջ սեղմած. խոյացիր մեր դահիւնները պատուհասելու եւ քու վեհանիստ թագաւոր կայսրիդ արդարութիւնը բերելու, տարածելու մեր տարաբախտ երկրին վրայ...:

«Ողջոյն, ողջոյն, թրքահայերուն ազատարար Քեռիին: Հուրբա» (Տե՛ս ԼէՕ, Հտ. Բ, էջ 121-122):

Կանգնած դէմ առ դէմ այս յուշարձանային թեթեւօղիկութեան, կարելի չէ որ գտնուի խելքը-զուրի հայ մը որ իրաւունք չտայ Լէօի կատարած դատաստանին. «Բառերի արտայայտութիւններին մէջ գուցէ անհատ է Պարթեւեանը, կը գրէ ան, բայց տրամադրութիւնը գերագանցօրէն հանրագաղութային էր: Մեծամիտ, անբարտաւան մի տրամադրութիւն որ աղմուկ ու ճնշիւն էր հանում անողորմ կերպով եւ գինովցնում էր մարդկանց. եւ գինովցած էր ամբողջ պատերազմող աշխարհը: Հայերն էլ իրենց կամաւորական չորս խումբերով դարձեր էին պատերազմող կողմ, դաշնակից ո՛չ միայն Ռուսաստանին, այլ եւ Անգլիային, Ֆրանսային, Բելգիային: Եւ նրանց կամաւորները, գալով գաղութներից, նոյնպէս հայրենասիրական ցոյցեր էին անում, երգեր երգում թիֆլիսի փողոցներում, փոխարքայի պալատի առաջ, եւ մանաւանդ ճանապարհին, դէպի Հայաստան»:

Ողբերգական կողմն այն էր, որ երբ հայ մամուլին մէկ մասը եւ Սուրէն Պարթեւեանին պէս մարդիկ, լցուած ազգային անսահման գոռուցութեամբ, զոնքիչուտական տրամադրութիւններով հրապարակը կ'աղմկէին, անդին Իթիֆհատական կառավարութիւնը, գաղտնի ժողովի մը մէջ, ստեղծութեան կայծակները ձեռքերու եւ սկոռներուն

մէջ սեղմած՝ ո՛չ միայն պատրաստեր էր, ամենայնայնուհանդերձ, թրքահայրենական բնաջնջումին դիմադրելու ծրագիրը, այլևս սկսեր էր, իր գաղտնի գործակալներով, որոնց մէջ կային դաւաճան հայեր այլ, փաստեր հաւաքելու իր հրատարակելիք «Խայկակալ տեղ-չաճֆներ» խորագրով գիրքին համար, արդարացնելու համար իր գործադրելիք անլուս ոճերը:

Եթէ մէկը ինձի պէս ճանչցած ըլլար Կ. Պոլսոյ մէջ, հայ-թրքա-կան եղբայրակցութեան շրջանին, սպրկելի, յեղափոխականի մանր մօրուքով եւ գլխարկով, գաւազանը ձեռքին մէջ շարժելով եւ աչքերը դէպի երկինք ուղղած Սուրէն Պարթևեանը, անոր դոնքիշոտական թեթևասուրիկ երգիծական քերթուածը պիտի համարէին խելքին փշած գորովի խանդ մը: Բայց իթթիհատական կառավարութիւնը այդպիսի երգիծական քերթուածները կը համարէր զօրաւոր փաստեր, աշխարհի առջեւ ցոյց տալու համար թէ հայերը հոգիով-սրտով կապուած են թուրքոյ զարաւոր թշնամիին՝ Ռուսաստանին, որ կռթնած հայ ժողովուրդին վրայ, կ'ուզէ տիրել արեւելեան Անատոլիոյն եւ ասով՝ ջնջել թուրք ժողովուրդը: Հասկցնել անոր, որ թուրքիան կեանքի եւ մահուան պատերազմ սկսեր է լարելով իր բոլոր ոյժերը: Կարո՞ղ էր թուրք կառավարութիւնը թոյլ տալ որ իր բանակը երկու կրակի մէջ նետուի: Կարելի՞ է արդեօք երկրագունդի վրայ երեւակայել պետութիւն մը, որ թոյլ տայ իր տան մէջ հրդեհ ծագել այն ժամանակ՝ երբ դուրսի ահաւոր թշնամին, ուժեղացած հայկական գունդերով, կանգնի չեմին վրայ:

Ուրեմն, թուրքիան ծանօթ իր գաղանային անգլթութիւններուն, պիտի գործադրէր իր սպառնալիքը. - «Եթէ հայերը օտար միջամտութիւնները հրաւիրելին թուրքիոյ ներքին գործերուն մէջ, Համիտեան ջարդերը տղու խաղալիք մը պիտի ըլլան մեր սարքուածներուն բով»:

ԴԱՍԱԼԻՔ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Գէորդ Կաթողիկոսի եւ իր խորհրդականներու ազգային սնապարծութիւնը՝ կամաւոր գունդեր կազմեր էին, ուզելով հաւատացնել ամբողջ աշխարհի որ հայ ժողովուրդը մեծ եւ ուժեղ ռազմիկ ժողովուրդ է, հերքելու համար միանգամայն օտար մամուլին այն շարամիտ ամբաստանութիւնը, որուն համաձայն «եթէ թուրքիան իր պատմութեան ընթացքին մէջ հանդիսացեր է առանձին եռանդով կոտորող, հայերն այլ աշխարհի եռանդ ցոյց տուեր են կոտորուելու մէջ»:

Այս անարգական բացատրութիւնը հրապարակ նետուած էր համիտեան կոտորածներու շրջանին, երբ օտարները չէին ճանչցած ո՛չ Հայաստանի աշխարհագրական դիրքը եւ ո՛չ ալ անոր շրջակայ

ժողովուրդները: Իթթիհատեան սահմանդրութեան վերահաստատումով հայ-թրքական յարաբերութիւններու արիւնոտ խորխորատը լեցուած էր եւ երկու դրացի ժողովուրդներու հաշտարար կապը վերահաստատուած:

Եւ ահա, մէջտեղ ելան Սուրէնեան Կաթողիկոսը եւ իր խորհրդականները, որոնք հաւանաբար որոշ գաղափար մը չունէին թրքահայաստանի աշխարհագրական դիրքին եւ զանիկա շրջապատող ժողովուրդներու մտայնութեան վրայ. եւ անոնք Հայկական Հարցը վերարծարծեցին, կարծելով որ իրենց կազմած կամաւորական գունդերով՝ Հայաստանի «փրկութեան ժամը» հնչեցուցեր են:

Բայց այս հիւանդոտ սնապարծութեան զէմ կանգնեցաւ անփառունակ խոշոր փաստ մը:

«Կովկասեան հրամանատարութիւնը, կը գրէ Լէօ, Ռուսաստանի զանազան կողմերում ծառայութեան մէջ գտնուող զինուորներից շատերին փոխադրեց թրքական ռազմաբեմը, այս հաշուով որ նրանք իրքեւ հայեր կատաղութեամբ կը կոռուեն իրենց ազգին թշնամի՝ թիրաքների դէմ: Բայց պատերազմը սկսած չսկսած, այդ զինուորները սկսեցին դասալիք լինել եւ փախչել իրենց տները»:

ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱԶԿՈՎԻ ՏԱԳՆԱՊԸ

Եթէ կար մէկը որ բոլորովին խայտառակուած դուրս եկաւ այդ ամօթալի դասալքութենէն, այդ անձը Վորոնցով-Դաշկովն էր, «որովհետեւ, ինչպէս կը գրէ Լէօ, այս բոլոր վատառողջ գարշահոտ խմորումներն արդիւնք էին Վորոնցով-Դաշկովի խարդախ քաղաքականութեան, որ կատարելապէս անբարոյականացնում էր հայ-կղերարութեան ղեկավարող շրջանակները, դնելով անոնց ձեռքում այնպիսի մի ռազմական խաղալիք, որպիսին էր կամաւորական շարժումը», ուրկէ ծնունդ առաւ կամաւորական շարժումը զօրացնելու շարաննեղ ծրագիրը:

Ուստառակուած փոխարքան տազնապեցաւ ո՛չ միայն անոր համար որ բազմաթիւ հայ երիտասարդներ ռազմական ճակատին վրայ սպաննել տալու ծրագիրը իր նպատակին չէր հասած, այս սոսկումով կը տեսնէր՝ որ դասալքութեան տարրը այնքան կը տարածուէր որ կը սպառնար նաեւ վարակել միւս քանի մը հայ կամաւորական գունդերը, որոնք կ'արշաւէին Վանի ուղղութեամբ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ

Այս նեղ կացութենէն դուրս գալու համար, Կովկասի փոխարքան զիմեց հայ հոգեւորականութեան, խնդրելով որ յորդորէ զինուորները չփախչել իրենց պարտականութենէն:

Գէորգ Կաթողիկոսը անմիջապէս պատգամաւորութիւն մը կազմեց հոգեւորական եւ աշխարհական անձերէ, որոնց մէջ տիրական դէմքն էր բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեան: Պատգամաւորներու պաշտօնն էր շրջիլ ուսման-թրքական ճակատը, Պայագիտէն մինչեւ Սարըղամիշ:

Կաթողիկոսական կոնդակը հետեւեալ հրահանգները կու տար պատգամաւորութեան զլուսն դրած՝ Մեսրոպ եւ Խորէն եպիսկոպոսներուն.

«Նախ յայտնել հրամանատարաց գորաբանակին գորհնութիւնս եւ գրարեմադրութիւնս մեր վասն կատարեալ յաջողութեան եւ յաղթութեան քաջարի գորաց Ռուսիոյ:

Երկրորդ ի ժամ այցելութեան յետոյ, ի յարմարագոյն տեղոյ, կատարել գկայսերական մաղթանս, օրհնելով զգորականս եւ զգորս եւ քաջալերելով զնոսա:

Երրորդ յորդորելով զհայ զինուորս եւ զկամաւորս՝ լինել հանապազ կարգապահ, պարտամնաչ եւ օրինակելի յամենայն գործս եւ ըստ օրինակելի նախնեաց իւրեանց պատերազմել քաջութեամբ եւ անձնագոհողութեամբ ընդդէմ ընդհանուր թշնամեաց, վասն պատուոյ եւ փառաց հայրենեաց եւ վասն ազատութեան տանկահայ ժողովրդեան եւ փրկութեան Հայաստանի»:

ՆՇԱՆՆԱԿԱԼԻՑ ԿԷՏԵՐ

Այս խեղճուկ գրարարով գրուած ձեռագիր փաստաթուղթը զանազան կողմերով նշանակալից է:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որուն սրտին մօտիկ է գրել ու գործել յանուն իր ամբողջ հօտին, որուն մեծագոյն մասը պատանդ էր Իթիհատական կառավարութեան ձեռքին մէջ, կը հրամայէ իր թրքակառնուցուցիչ կոնդակը կարգալ հայ զինուորներուն առջեւ, օրհնութիւններ եւ բարեմաղթութիւններ ընել Ռուսիոյ քաջարի զօրքերուն կատարեալ յաղթութեան եւ յաջողութեան համար, եւ յորդորել Հայ զինուորները եւ կամաւորները, որպէսզի իրենց նախնեաց օրինակին համեմատ՝ քաջութեամբ եւ անձնագոհողութեամբ պատերազմին ընդդէմ ընդհանուր թշնամիին, տաճկահայ ժողովուրդին եւ Հայաստանի փրկութեան համար:

Ինչպէս տեսանք, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքն ալ կատարելով իր պաշտօնական պարտականութիւնը, շրջաբերական հրատարակեց որ հայերը հաւատարմութեամբ կատարեն իրենց զինուորական պարտականութիւնը, պատուիրեց աղօթքներ եւ մաղթանքներ թրքական բանակներուն յաջողութեան համար, բայց չըսաւ թէ Ռուսահայաստանը Թրքահայաստանին կցուի եւ հայերը ազատին ձարական բռնակալ վարչաձեւէն:

Բայց էջմիածնի շատ մօտիկ կանգնած «Մշակ»ը, իր 261 թուին մէջ, անհաւատալի լուր մը կը տպէր «թէ Սուրէնեան կաթողիկոսը պարտադրել է չնամաչել պատրիարքին շրջաբերական հրամանը աղօթելու թիւրքերի յաջողութեան համար՝ իբրեւ սպառնալիքով եղած մի կարգադրութիւն»:

Եւ այսպիսի մտայնութեան մէջ ի՞նչ արժէք կրնար ունենալ պոսական քանի մը շրջաններու կողմէն նոյն լրագրին 282 թուին մէջ արտայայտած կարծիքը թէ «հայերի օգուտն է լաւ յարաբերութիւններ մշակել թիւրքերի հետ եւ թէ ուսաստիճանը պիտի նկատի առնեն թիւրքահայերի ամել դրութիւնը. ապա եւ չպիտի շատ աղմկեն եւ թուրք կառավարութեան դէմ սանձարձակ լեզուով չգրեն եւ չխօսեն»:

Շովինիզմով ու ռազմական տենդով բորբոքուած միջնորդարին մէջ՝ խոհեմութեան եւ ուղղամտութեան ամէն մէկ ձայն անհետ կորսուած էր:

Մէջտեղ կը մնար միայն յամառութեամբ անմրցելի կաթողիկոս մը, որուն գործերն ու խօսքերը ո՛չ մէկ տարբերութիւն ունէին անպատասխանատու Արամ Թուրայէ մը, որ ինչպէս տեսանք, Գերմանիոյ դէմ կրակոտ կոչեր կը հրատարակէր, հայկական կոմիտէ կը կազմակերպէր Փրանսական բանակի համար կամաւորներ հաւաքելու եւ կոկորդալիւր աղաղակելու.

«Կեցցէ Ֆրանսան
Կորսուի Գերմանիան»:

Գէորգ Կաթողիկոսը գիտէր թէ Հայ զինուորները իրենց նախնեաց օրինակին պէս քաջութեամբ եւ անձնանուիրութեամբ պատերազմել են ընդդէմ ընդհանուր թշնամեաց, բայց մոռցեր է որ Հայ զինուորները քաջութեամբ եւ անձնագոհութեամբ կուտեր են, երբ տեսեր են թէ բռնաւորներ՝ զինուոր են իրենց քրիստոնէական կրօնքին դէմ, որ իրենց աչքին գերագոյն եւ անբռնաբարելի սրբութիւն էր, եւ անոր համար, յանուն անոր կ'ապստամբէին եւ արիւնով իսկ կը բողբէին ազգի ընտիր, զգայուն զաղափարական տարրերը:

«Թէեւ տգէտ եւ վատատեղեակ իրենց կրօնքին, այսուամենայնիւ, երբ պէտք է մեռնիլ հաւատքի համար, հայերը կ'երթան գուարբի քաջարար դէպի շարչարամբ». այսպէս կը վկայէ Տավերնիէ, հոչակաւոր Փրանսացի ճանապարհորդը, որ 17րդ դարուն մէջ վեց անգամ

պտըտեր է մահմետական Արեւելքի մէջ, տեղն ու տեղը ծանօթանալու նաեւ հայոց կացութեան եւ բարքերուն հետ:

Եթէ Գէորգ Կաթողիկոսը եւ իր հոգեւորական պատգամաւորները անձանօթ էին եւրոպացի ճանապարհորդներու գրքերուն, պէտք է որ շատ ծանօթ ըլլային հայ ազգին ցնցող առածին, որ անդրկովկասի մէջ բերնէ-բերան կը շրջէր:

«Զինաւոր, որ ասել է զինուոր, մարտնչող եւ միանգամայն նահատակ յանուն կրօնի եւ եկեղեցու»:

Ռուսական բանակի հայ դասալիք զինուորները, սերունդ գաղափարապաշտ ազգի մը, չէին փափաքեր մեռնիլ քրիստոնեայ ձարի մը համար, որ իրեն աչքին առջեւ փակել հրամայեր էր իրենց եկեղեցիներն ու դպրոցները, արգելքներ դրեր էր հայ լեզուի եւ մշակոյթի դէմ, իր հպատակ հայերը բռնի ուսուցանելու, եւ զանոնք կոտորել տուեր էր կրիստոսական թաթարներու ձեռքով: Ուստի, անոնք չէին հաւատար, ինչպէս հաւատալով կը հաւատային կաթողիկոսն ու իր պատգամաւորները, թրքահայաստանի «փրկութեան» գործին, կատարուելիք ձարական Ռուսաստանի ձեռքով:

Մինչ այսպէս, Սուրէնեան կաթողիկոսն ու իր մօտիկ խորհրդականները եւ անոնց ազդեցութեան տակ գտնուող հայ անգիտակից մամուլը ամէն քար կը շարժէին, ցոյց տալու համար թէ իրենք իրենց կամաւորական գունդերով միասին զինակից են Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ, մինչ Իթիւհատ եւ Գերմանիա ձեռք ձեռքի տուած, գաղտնապահութեան մէջ կատարեր էին «նեստ»ը, որ արիւնոտ փոթորիկի ոլորտներով պիտի ծածկէր ամբողջ թրքահայաստանը:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԹՐՔԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՂՂԱՄԻՏ ԸՆԹԱՑՔԸ

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԻՂ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Մենք արդէն փաստերու լոյսին տակ գիտենք թէ Թուրքիոյ Դաշնակցութիւնը՝ սկսած «Երիտասարդ Թուրքերու» զինուորական յեղափոխութենէն մինչեւ էրզրումի համազումար ժողովը, միշտ անխարդախ դիրք մը բռներ էր իրենց դադափարի դաշնակիցներուն հանդէպ. եւ իրենց գիծէն չչեղեցան, երբ անոնք դաւաճանեցին իրենց խոստումներուն, կազմակերպելով Ատանայի զարհուրելի կոտորածները:

Հայ Դաշնակցականներուն ընթացքը ա՛յնքան անկեղծաւոր էր, որ գիտնալով հանդերձ թէ ուս-թրքական պատերազմի մը պարագային Թուրքիան պիտի յաղթուի, յայտնապէս յայտարարեցին թէ իրենք դէմ են Ռուսաստանի:

Երբ լուր առին թէ Գէորգ Ե. կաթողիկոսը եւ մեծահարուստ հայեր, խարուած՝ փոխարքայ Վորոնցով-Դաշկովի սաղրանքներէն, սկսեր էին կամաւորական գունդեր կազմել, ջանացին, ինչպէս տեսանք, արգելք հանդիսանալ այդ թրքակառողեցուցիչ թատերական տեսարաններուն:

Երբ այլեւս բացորոշ տեսնուեցաւ թէ՛ ուսերուն եւ թէ՛ թուրքերուն միջեւ շուտով պատերազմ պիտի ծագի, Կ. Պոլսոյ Դաշնակցութեան պաշտօնաթերթը՝ «Ազատամարտ» կը գրէ. —

«Մեզ գէտ Կ. Պոլսոյ կողմէ հայ ժողովուրդին քնակած մարգերուն գրամանը, հայ ժողովուրդը ո՛չ առուտուրի ապրանք մը, ո՛չ ալ շահադիտութեան առարկայ մը կրնայ ըլլալ օտար պետութեան մը համար: Հայ զինուորը հաստատամտութեամբ պիտի կռուի բոլոր նակատներուն վրայ, գորս քշնամիմ պիտի փորձեր անցնի»:

Դաշնակցութեան կեզրունը այս ուղղամիտ յայտարարութիւնը կ'ընէր հակառակ անոր որ ան էրզրումի համազումար ժողովին մէջ Իթիւհատական կառավարութեան ներկայացուցիչներուն բացառապէս յայտարարեր էր, ինչպէս տեսանք, թէ Թուրք-ուս պատերազմը կորստաբեր պիտի ըլլայ Օսմանեան կայսրութեան համար, այն համոզումը գոյացուցած ըլլալով, թէ Թուրքիան անպայման

պիտի յաղթուէր, ինչպէս եղեր էր միշտ ոռու-թրքական պատերազմներու ժամանակ: Եւ այդ իմաստուն ազգարարութիւնը անլսելի մնացեր էր:

Գիտենք նաեւ որ Վասպուրականի Դաշնակցական պետերը, յատուկ պատուիրակութիւն մը ուղարկելու էին Էջմիածին եւ Թիֆլիս, համոզելու համար Գէորգ Ե. կաթողիկոսը եւ ազգային Բիւրոյի ճարպաշատ անդամները, որպէսզի ցրուեն կամաւորական գունդերը, որոնց կազմութիւնը թրքահայ ժողովուրդին համար աղիտաւոր կը համարէին: Հակառակ այս հեռատեսութեան՝ պատուիրակութեան պնդումները արհամարհանքի արժանացան:

Թուրքիոյ Դաշնակցականները տակաւին ուրիշ անգութ յուսախաբութիւն մըն ալ ունեցեր էին: Էրզրումի համագումարին մէջ, ինչպէս սկիզբը յիշատակելու ենք, համաձայնութիւն գոյացեր էր էրզրումի թուրք պետերուն հետ, որպէսզի նշանաւոր դաշնակցական մը՝ Ալոյեան, Կովկաս ղրկուէր խորհուրդ տալու համար ոռուսահպատակ հայերուն որ վերապահ գտնուին այնքան ատեն՝ որքան ուղղամտութեան սահմանները իրենց թոյլ տան եւ առաջքը առնեն ամէն գրգռութեան, կասկածի տակ չձգելու համար Թուրքիոյ հայերուն ուղղամտութիւնը:

Եւ ինչպէս տեսանք, այդ դաշնակցական նուիրակը՝ իր ճամբորդութեան ընթացքին սպաննուեցաւ, երբ տակաւին թրքական հողի վրայ կը գտնուէր:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆԸ

Հակառակ այս լարուած վիճակին, որու ընթացքին թրքահայ ժողովուրդի վիզին կախուէր էր մահուան դատաւճիռը, Թուրքիոյ Դաշնակցականները իրենց ուղղամտութենէն բնաւ չհեղեցան: Եւ ոռութրքական պատերազմի յայտարարութենէն երեք օր առաջ, Հոկտեմբեր 10-23 թուականին, Կ. Պոլսոյ Դաշնակցական գրասենեակը շրջաբերական մը ուղղեց գաւառական կոմիտէներուն:

Այդ շրջաբերականը, թէեւ շատ սեղմ ոճով գրուած, լեցուն է խոհական խորհուրդներով, որոնք առաջնորդ պիտի ըլլային հայ ժողովուրդին բռնելիք ընթացքին. ո՛րեւէ կերպով չվիրաւորելու թուրք եւ որոշ մահմետական տարրերը, որոնք արդէն գրգռուած էին մոլեռանդ մոլլաներու եւ Իթթիհատ կառավարութեան գաղտնի գործակալներու գրգռիչ բարոգութեամբ:

Ահաւասիկ այդ շրջաբերականը որ առաջ կը բերէ դոկտ. Լեպսիուս, հայ ժողովուրդին մեծ բարեկամ եւ թուրք ժողովուրդին վրայ կարեկցող եւ անոր բարին փափաքող անաչաւ մարդը. -



Ճեմալ փաշա

«Ընկերներ, ինչպէս դուք գիտէք, մեր կուսակցութեան Տրդ ընդհանուր ժողովը սկսաւ եւ վերջացուց իր աշխատութիւնները որոշուած ժամանակին մէջ: Տեղական կազմակերպութեան ձգելով մեր որոշումներու գործադրութիւնը, այսօր կ'ուզենք ձեռնադրութիւնը հրաւիրել լրջութեամբ վրայ կացութեան, որուն մէջ կը գտնուի մեր երկիրը՝ ընդհանուր պատերազմին հետեւանով: Աւելի քան երբեք անհրաժեշտ է կիրարկել մեր բոլոր ոյժերը, մեր ժողովուրդին չարիք մը խնայելու համար, եւ մեզի ինկած քաժիտով, ընդհանուր կարգին եւ ապահովութեան սատարելու համար, հարկ է հեռացնել ամէն առիթ, որ կրնայ միջադէպեր կամ թէ քաղաքական թիրիմացութիւններ առաջ բերել ժողովրդական զանազան տարրերու միջեւ» (տե՛ս գաղտնի տեղեկագիր տողդ. ԵՕՀԱՆՆԷՍ ԼԵՊՍԻՈՒՍԻ, «Հայաստանի Ջարդերը», էջ 192):

ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆԸ

«Հայ Լուսաւորչական Եկեղեցւոյ պատրիարքը, Զաւէն Սրբա-
գան, կը գրէ տոկզ. Լեպսիուս, շրջաբերական հեռագիր մը դրկեց
Թուրքիոյ բոլոր թեմերուն, որով ի վեր կը հանէր թէ հայ ազգը,
որուն հաւատարմութիւնը շատ մը անգամներ քանցուած է, ներկայ
վայրկեանիս՝ ուր հայրենիքը բազմաթիւ պետութիւններու հետ պա-
տերազմի մէջ է, պիտի կատարէ իր պարտքը եւ պիտի համակերպի
բոլոր գոհողութիւններուն, աւելցնելու համար փառքը Օսմանեան
գահուն, որուն սերտօրէն կապուած է, եւ ի պաշտպանութիւն հայ-
րենիքին»:

Պատրիարքը այս շրջաբերական հեռագիրով, հրաման կու տար
առաջնորդներուն եւ առաջնորդական փոխանորդներուն, այս մասին
խորհրդակցիլ իրենց համայնքներուն հետ:

«Բոլոր եկեղեցիներուն մէջ, կը գրէ տոկզ. Լեպսիուս, Օսմանե-
ան զեմքերուն համար աղօթքներ կատարել:

Ներքին գաւառներու հայ առաջնորդները, Կարիւնէն, Վանէն եւ
ուրիշ տեղերէ հեռագիրներ կը դրկէին Բարձրագոյն Դուռ, ըսելու
համար թէ հայերը, որոնք հայրենիքի պաշտպանութեան համար ոչ
մէկ գոհողութեան առջեւ ընկրկած են երբեք, այս անգամ ալ ամէն
գոհողութեան պատրաստ են»:

«Պատերազմի առաջին օրէն, առանց բացատրեան, կը գրէ
տոկզ. Լեպսիուս, բովանդակ հայ մամուլը՝ կոչերով կը հրաւիրէր
հայ ժողովուրդը Օսմանեան հայրենիքին միութիւնը պաշտպանելու»,
հետեւելով «ագատամարտ» օրաթերթին:

Այս բոլոր արտայայտութիւնները անկեղծ էին, որոնք, ինչպէս
կը վկայէ տոկզ. Լեպսիուս, թուրք եւ գերման մամուլի կողմէ,
զոհութեամբ ընդունուած էին:

ՍՈՒՐԲ ՊԱՏՐԱԶՄԻ ԾԻՄԱՂԵԼԻ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Ըստ թունալից գրքոյկին, պիտի ջարդուին «այն ազգաբնակչու-
թիւնները, որոնք իսլամները իրենց լուծին տակ խոնարհեցուցած
են»: Գերմանացիները իրենց գաղութներուն մէջ ո՛չ մէկ մահատա-
կան հպատակ ունենալով, այս կէտը կը պաշտպանէր զիրենք:

1. Պէտք է հասկնալ միայն Թուրքիոյ հայ մամուլը, վասնզի արտասահմանեան հայ մամուլը,
մասնաւոր ամերիկեանը, նստած ազատ հողի վրայ, անկաշկանդ լեզուով կը գրէին եւ յար-
ձակուանք կը գործէին, իրր թէ Թրքահայ ժողովուրդը վարդէ անկողնի վրայ կը հանդէսը...

Բայց իրենց սովորական եսապաշտութեամբ, կը գրէ Մորկէն-
թաու, գերմանացիները մէջտեղ կը ձգէին իրենց աւատրիացի զինա-
կիցները, քանի որ Բոսնիոյ եւ Հերձեկովինայի մէջ մարդարէին
բազմաթիւ հետեւողներ կան: Իսլամները հրաման ունին բանակներ
կազմելու, «նոյնիսկ անհրաժեշտ պիտի ըլլար աւելցնել ամուսնաց
մէկ քանի օտար տարրեր», այսինքն մարզիչներ եւ գերման սպաներ
անուանել:

Այս բոլորով հանդերձ, մահմետական մոլեռանդին մտքին մէջ,
գերման բարեկամը «ֆրիստոնեայ շուք մըն է», ճիշտ ինչպէս ան-
գլխացի մը կամ Ֆրանսացի մը եւ անոր ալ սպանումը նոյնքան
արժանաւոր արարք մըն է:

Եւ հակասութիւններով լեցուն գուրամը փոյթ ըրած չէ հաշուի
տանել արեւմտեան զիւանագիտութեան նորագնունութեանց պարագան,
որով ամերիկեան ղեսպանը արդարացի կերպով կը գրէ. —

«Գերմանացիները հայթայթեցին նոր ապացոյց մը իրենց հիմնա-
կան անարակութեան եւ տիեզերական պայմաններու մասին իրենց
կատարեալ տգիտութեան: Միակ շօշափելի իրողութիւնը որ յստակօ-
րէն դուրս կու գայ այս խաչակրութեանէն, Գայգերին այն փափաքն է,
որով ան կ'ուզէ երբեք հարիւր միլիոն մահմետականներ դէպի նոր Սէն
Բարթելեմի մը մղել»:

Բարեբախտարար, սկիզբէն «սուրբ պատերազմը» սնանկ դուրս
եկաւ կարգ մը երկիրներու մէջ. Հնդկաստանի, Եգիպտոսի, Ալճերիայի
եւ Մարոքի մահմետականները զիտէին թէ աւելի լաւ վարմունքի մը
ենթակալ էին, քան ինչ որ չէին յուսար ո'րեւէ տեղ գտնել:

ՅՈՅՑԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՁ

Թէեւ նիհատը յաջողեր էր այն մահմետական երկիրներուն մէջ,
որոնց վրայ գերման կայսրը եւ իր անձնական ներկայացուցիչը
այնքան գեղեցիկ յոյսեր դրեր էին, սակայն ամերիկեան ղեսպանը,
ինչպէս ինքը կը խոստովանի, թէ «կատաղօրէն մոլիոնաւոր ժողովուրդի
մը մէջ, այսֆան հրդեհող գրականութիւն մը տարածելուն վտանգը
բացայայտ էր: Ես միակ չէզոք դիւանագետը չէի որ լուրջ հետեւանմը-
ներէն կը վախճար: Պրն. Թոզեֆ, բուլկար ղեսպանը, միւր մարմնոյն
ամէնէն կարող անդամներէն մէկը չէր ծածկեր իր մտահոգութիւնը»:

Այդ միջոցին Բուլկարիան չէզոք էր, եւ պատերազմիկ մեծ պե-
տութիւնները անոր հետ սակարկութեան մէջ էին զանիկա իրենց
կողմը քաշելու համար: Ան, իբրեւ քրիստոնեայ բուլղար, փորձով
գիտէր թէ ի՛նչ փորձանքներու կրնան ենթարկուիլ Թուրքիոյ բուլղար-
ները, եթէ իր երկիրը Երբեակ Համաձայնութեան կողքին կանգնէր:

«Թոզեֆ սովորութիւն ունէր ինձի ըսելու, կը գրէ Մորկէնթաու, որ ինք կը յուսար թէ իր երկիրը չէզոք պիտի մնար: Երկու կողմերը, կ'ըսէր ան, հետամուտ են մեր զինակցութեան, եւ մեր քաղաքակա- նութիւնն է «սուրբ Պատերազմ» մը շղթայագերծել, եւ ասոր հետե- ւանքը ըլլան ջարդերը, ապահովարար մեքն պիտի միանանք Համա- ձայնութեան»:

Մարդասէր Մորկէնթաուի ուզածն ալ այդ էր, այսինքն արգիլել ջարդերը: «Ես համոզեցի զինքը, կը գրէ ան, որ Վանկէնիայմի նը- թայ եւ կրկնէ այս յայտարարութիւնը. նոյն ժամանակ ես ալ նմանօ- րինակ որոշում մը ի գործ կը դնէի Էնվէրի վրայ»:

Եթէ ան էնվէրը ձեռք առեր էր, միայն անոր համար չէր որ պա- տերազմի նախարարը Վանկէնիայմի աջ բազուկն էր, այլ որովհետեւ ան ուսումնասիրած էր արեւելեան բարքերը, որոնց ներկայացու- ցիչները կը սիրէին մեծարանք եւ զովեստ: Ան զիտէր թէ էնվէրը՝ մեծամիտ մարդ, մեծապէս յարգուած կը զգար ինքզինքը եթէ հօր Ամերիկայի ղեսպանը իրեն կարեւորութիւն տար: Մենք տեսանք թէ ինչպէս Մորկէնթաու առանձնաշնորհումներու ջնջուած օրը՝ էնվէրը հրաւիրեց էր Բոպլըթ գոլէճը, եւ թէյասեղանի մը ընթացքին զրաւեր էր անոր սիրտը, որուն հետեւանքը եղեր էր ա'յն, որ ամերիկեան կրթական հաստատութիւնները երբեք ղեռաբուծութիւններ չունեցան:

Ամերիկեան ղեսպանը նոյն արթնամտութիւնը ցոյց տուեր էր ուս- թրքական պատերազմի առաջին օրը, երբ կառավարութեան հրամանով բոլոր օտար վարժարանները պէտք է փակուէին: Այդ հրամանին գործադրութիւնը յանձնուած էր Պէտրի պէյին, որ ինչ- պէս վերեւ ըսինք, Թալասթին աչքին լոյսն էր, եւ կատաղի կերպով կ'ատէր Եւրոպան: Օտար թշնամի հաստատութիւններուն մէջ ամէնէն աւելի աչքի զարնողը Ֆրանսացի քոյրերու Նոդրը-տամ տը Սիոնի աղջիկներու բարձրագոյն վարժարանն էր, ուր կը յաճախէին փափ- կութեամբ մեծցած ազնուական ու հարուստ զասակարգերու աղջիկ- ները: Անոնց համար հրահանգ տրուած էր թուրք ոստիկաններուն նետել զանոնք մայրաքաղաքին փողոցներուն մէջ, ենթակայ խուժա- նին յետին անարգանքներուն:

Մինչ ղեսպանին կիւր աներկիւղ քաջութեամբ, մեծաքանակ ոս- կիները եւ թանկագին ու արժէքաւոր իրերը ամերիկեան ղեսպանա- տան մէջ կ'ապահովուէին, ոստիկաններու շարքի մը մէջէն անցնելով, վրայ հասաւ Պէտրի պէյը, անձամբ հսկելու օրէնքով անթերի գոր- ծադրութեան վրայ:

Մորկէնթաու նախ անոր սպանաց ըսելով.- «դուք կ'անգիտա- նա՞ք թէ ես իմ յիշատակներս կը գրեմ եթէ դուք շարունակէք այդ կերպով վարուիլ. անոր մէջ ձեր մասին պիտի խօսիմ իրքեւ ստա- հակի մը»:

Այդ կտրուկ սպանալիքը սմբեցուց թուրք պաշտօնեան: Բայց ղեսպանը գիտնալով ոստիկանապետին սնտիտա եւ զովեստներէ շա- ցող նկարագիրը, գործածեց փաղաքշական լեզու մը,- «Արդեօք չէ՞ք կրնար բան մը ընել, որ ինձի իրաւունք տար ձեզ աւելի նպաստաւոր երևույթի մը տակ ներկայացնելու»: Պէտրիին թեւերը ինկեր էին: Ֆրանսացի քոյրերը եւ իրենց հիասքանչ քրիստոնեայ աշակերտու- չիները՝ փողոց չ'ենտուեցան:

Արթնամիտ ղեսպանը նոյն արթնամտութիւնը գործածեց երբ «սուրբ պատերազմը» հռչակուեցաւ: Ան նորէն հրաւիրեց էնվէրը, ցոյց տալու համար անոր թէ ինքը խոշոր անձնաւորութիւն մըն է, որ կարող է իր պաշտպանութեան յանձնուած թշնամի պետութիւններու հպատակները նիւստի սպանալիքէն ազատել:

Ուրեմն, ո'րեւէ «սուրբ պատերազմ» մը տեղի չ'ունեցա՞ւ. Վան- կէնիայմի մեծ գործը իրապէս ճախողեցա՞ւ: Ասոր պատասխանը կու տայ Մորկէնթաուի հեղինակաւոր գրիչը:

«Ամէն անգամ որ կը մտածեմ այդ գաւեշտական նիւստին վրայ, կը գրէ ան, միտքս կու գայ տեսարան մը որ ամերիկեան ղեսպանա- տան մէջ տեղի ունեցաւ. Էնվէր նստեց էր սեղանին մէկ ծայրը եւ հանդարտօրէն իր թէյը կը խմէր պտիկ ուսկերով եւ քիթն իր ուսե- լով. իրեն դիմացը կը նստիմ, նոյն խաղաղական ժամանակով գրադած: Նոյեմբերի 14ն է. առջի օր Սուլթանը իր «սուրբ պատերազմը» յայ- տարարած է. մզկիթներու եւ ուրիշ վայրերու մէջ հաւաքումներ տեղի ունեցած են, եւ պատերազմի յայտարարութիւնը կարդացուած է, հրաշունջ նստեց ունեցած են: Էնվէր գիտ կը վստահացնէ թէ ամէն պարագայի՝ ամերիկացիներուն ո'չ մէկ չարիք պիտի ըլլայ, ո'չ մէկ տեղ ջարդ տեղի պիտի ունենայ: Իր խօսած պահուն, քարտու- դարներէս մէկը ներս կու գայ, եւ ինձի կ'իմացնէ թէ պտիկ խումբ մը կարգ մը օտար հաստատութիւններու դէմ ցոյցի արտայայտու- թիւններ կ'ընէ, թէ այս խումբը յարձակում գործած էր արտաքա- կան վանատատան մը վրայ, որ անխորհրդաբար պահած էր իր նշա- նատախտակը «անգլիական հագուստներուն վանտուն» ժամուցա- գրով: Կը հարցնեմ Էնվէրի թէ ինչ կը նշանակէ ասիկա. ինձի կը պատասխանէ թէ սխալ մըն է եղածը, եւ թէ՛ ոչ մէկը անհանգիստ պիտի ըլլայ»:

Նախարարին մեկնումէն քանի մը վայրկեան ետք՝ ամբողջ յար- ձակած է Բօնմարշէի վրայ, Ֆրանսական հիւսուածեղէններու վաճա- ոստուն մը, եւ ուղիղ գիծով դէպի բրիտանական ղեսպանատուն կը յառաջանայ: Դարձեալ տագնապը պաշարած է բրիտանական շահե- րուն պաշտպան ղեսպանը: «Ամբիաջպէս, կ'ըսէ ան, Էնվէրը հեռա- խօսի գլուխ կը կանչեմ. ամէն բան աղէկ կ'երթայ, կը պատասխանէ ան. ղեսպանատան առջեւ բան մը տեղի պիտի չ'ունենայ»:

ԹՈՒՔԱԹԼԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԸ ԹԱԼԱՆՈՒԱԾ

Յայտնի էր որ «սուրբ պատերազմը», թէեւ Գերմանիոյ մէջ հրահանգուած էր, բայց անոր գործադրութեան սեղմումը կամ լայնումը էնվէրի եւ Թալասթի կամքին թողուած էր:

«Մէկ կամ երկու վայրկեան յետոյ, կը գրէ դեսպանը, ամբողջ իր ուղղութիւնը փոխելով դէպի Թալասթիեան կը յառաջանայ, Կ. Պոլսոյ առաջին ֆաշարանը: Այն իրողութիւնը թէ այդ ֆաշարանը կը ղեկավարուի հայու մը կողմէ, բաւական է բացատրելու ամէն բան:

Վեց հոգի ակիշներով զինուած, կը խորտակեն ապակիները եւ պատուհանները. ուրիշներ կ'առնեն սեղանի վրայ մարմարները եւ կտոր կտոր կ'ընեն զանոնք. մէկ քանի վայրկեանի մէջ՝ հաստատութիւնը ամբողջովին թալանուած էր»:

Մորկէնթաու կըրցաւ պատկերը դնել իր բուն շրջանակին մէջ, գրելով. «այս ցոյցը ներկայացուց «սուրբ պատերազմը», ինչպէս որ Կ. Պոլիս հասկցաւ զայն: Այսպէս՝ վերջ գտաւ խեղճօրէն երեք հարիւր մահմետականներ քրիստոնեաներու դէմ հանելու գերման ամօթալի նախափորձը»:

Ուրեմն, Շէյխ-իւ իսլամի «սուրբ պատերազմի» յայտարարութիւնը, եւ թունալից գրքոյկին քարոզած բնաջնջումը քրիստոնեաներուն, բնաւ տեղի չունեցաւ. Վանկէնհայմի մեծ գործը իրապէս ձախողեցաւ:

Բնաջնջումի այդ մեծ գործը կատարելապէս յաջողեցաւ, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, միմիայն անգէն եւ անպաշտպան ժողովուրդի մը դէմ, որուն կ'ակնարկէ ամերիկեան դեսպանը գրելով. «

«Կայսրը, տարածելով այս կործանարար տեսութիւնները, իբր ամբողջական արդիւնք ուրիշ բան չստացաւ, բայց եթէ իսլամիին սրտին մէջ սերմանել տուաւ քրիստոնէիին դէմ այն բուռն ատելութիւնը, որ յատկանիշն է իր տարօրինակ եւ տպաւորելի բնութեան, եւ վառեց կիրքերը, որոնք յետոյ յայտնաբերուեցան հայերու եւ ուրիշ հպատակ ազգաբնակչութիւններու ջարդերու պահուն»:

ՃԷՄԱԼ՝ ԵԳԻՊՏՈՍԻ ՓՐԿԻԶ

Երիտասարդ Թուրքիոյ եռապետներուն իրենց հայրենիքը համաեւրոպական պատերազմի բոցերուն մէջ նետելուն իսկական նպատակը եղեր էր ազգային դողողութիւնը: Աշխարհակալ Սուլթաններու Թուրքիան մէկ դարու ընթացքին կորսնցուցեր էր կայսրութեան մեծ մասը:

Իթիբհատական կառավարութիւնը, ազգայնամոլ ու մեծամիտ, կանգնելով կայսերապաշտ Գերմանիոյ կողքին, վստահ էր որ իր

դաշնակիցին ձեռքով պիտի կարենար վերականգնել Օսմանեան կայսրութիւնը, որ անհետանալու վրայ էր:

Ինչպէս տեսնենք, գերման կայսեր անձնական ներկայացուցիչ եւ մունեստրիկ Օրէնհայմըն էր որ իր սափասուտերով այդ ծուռ հաւատորը ներշնչէր էր Թուրքիոյ: Այդ կարճատես զիւանագէտներուն, անոնց ներշնչելով այն յոյսը, թէ կարելի պիտի ըլլար կազմել մահմետական ընդարձակ եւ ուժեղ կայսրութիւն մը, որուն վարիչն ու պետը ըլլար Նալիֆա Սուլթանը:

Այդ ընդարձակ ծրագրերին առաջին նպատակը պիտի ըլլար Եգիպտոսի աշխարհակալութիւնը, մանաւանդ որ ոռոս-թրքական պատերազմի յայտարարութենէն ետք, անմիջապէս Անգլիան ջնջեր էր Թուրքիոյ անուանական գերիշխանութիւնը եւ իր տիրապետական իշխանութիւնը հաստատեր էր անոր վրայ:

Ճէմալ փաշան, երրորդ եռապետը, պահելով հանդերձ ծովային նախարարի իր պաշտօնը, եգիպտական արշաւանքին պէս կարգուեցաւ: Այս հանգամանքով, ան ո՛չ միայն Թուրքիոյ ամէնէն գեղեցիկ կանաճարին աշխարհակալը պիտի ըլլար, այլ աշխարհի հզօրագոյն անձերէն մէկը:

«1914ի Նոյեմբերի սկիզբը, կը գրէ Մորկէնթաու, Հայտար փաշայի կայարանին մէջ, Ճէմալ, ծովային նախարարը, թուրք կայսրութեան ամէնէն հզօր երեք մարդոցմէն մէկը, ֆամբայ կ'ըլլէր ստանձնելու համար չորրորդ բանակին հրամանատարութիւնը, որուն կեդրոնը կը գտնուէր Սուրիոյ մէջ: Իր պաշտօնակիցները եւ ուրիշ ազդեցիկ անձնաւորութիւններ, փութացած էին հրապարակաւ իրենց ողջերթը մատուցանելու, որուն միջոցին անոնք զինքը կ'անուանէին Եգիպտոսի փրկիչը»:

Մենք տեսնենք արդէն թէ այդ փրկիչը ինչպիսի նկարագրի տէր մարդ էր. ունայնամիտ եւ փառամոլ, Ճէմալ՝ ինքը շրջապատող բարձր անձնաւորութիւններու ճամարտակութիւններուն ի պատասխան, պատասխանեց ճոռոմբար. «Կ. Պոլիս պիտի չվերադառնամ, Եգիպտոսը աշխարհակալել տաք»:

Նւաջուցիչ ծափերը ծածկեր էին իր ճայնը:

Իթիբհատական եռապետութեան անդամին ընծայուած պատիւները թատերական էին. իր պաշտօնակիցներուն մեծ մասը շատ դու՛հ էր տեսնելով անոր մեկնումը, որովհետեւ, ինչպէս կը վկայէ Մորկէնթաու, Ճէմալ՝ նեղացուցիչ Մարկոս Անտոնիոս մըն էր, «մասնաւորապէս Թալասթի եւ էնվէրի համար, որոնք կը խնդակցէին իրարու այն մտածումին համար թէ Ճէմալ իր բռնակալութիւնը եւ պողպատէ կամքը պիտի երթայ կիրարկելու սուրիացիներու, հայերու եւ ուրիշ ոչ իսլամ տարրերու վրայ»:

Թէեւ Ճէմալ փաշան նկարագրով արիւննուշտ մարդ էր, բայց ունէր խորաթափանց միտք, եւ ասոր համար համաձայն չէր պոստ

թուրքերէ կազմուած դահլիճին հետ, ինչպէս կը գրէ ամերիկեան դեսպանը, «շատ անգամ ըլլալով նեղութիւն պատճառով պաշտօնակից մը, . . . ան ընդհանրապէս կը նկատուէր իբրեւ ֆրանսասէր, ինչ որ ալ ըլլալին իր գգացումները, ան ջանք չէր ընել պահելու իր գոռանմէր գերմանացիներուն հանդէպ»:

Իր անձնական փառասիրութիւնը շատ անգամ գինք կուրի մէջ կը դնէր Թալասթի եւ Էնվէրի հետ, այնպէս որ այս վերջինները շատ անգամ ըսած էին Մորկէնթաուի թէ «չէին կրնար հանդարտեցնել գինքը. այս պատճառով անոնք գոհ էին որ ձեւալ կը մեկնէր, ոչ թէ անոր համար որ իրենք իրապէս կը հաւատային թէ ան պիտի յաջողի Սուէզի ջրանցքին տիրանալու եւ անգլիացիները Եգիպտոսէն վճռուելու գործին մէջ, այլ պարզապէս նեղացուցիչ եւ գերմանատեսաց անձ մը ազատելու համար, մանաւանդ որ «սուրբ պատերազմի» յայտարարութիւնը մօտալուտ էր»:

Բայց թուրք ժողովուրդը այդպէս չէր մտածեր: «Երբ ձեւալ փաշայ դուրս ելաւ կայարանէն, կը գրէ Մորկէնթաու, թուրք ժողովուրդը ամբողջովին ըմբռնեց թէ պատմական ժամը հնչած էր: Մէկ դարէն պակաս ժամանակի մը մէջ, Թուրքիան կորսնցուցած էր իր ստացուածքներուն մեծագոյն մասը, եւ այն բանը ուրկէ իր ազգային արժանապատուութիւնը ամէնէն աւելի տառապած էր, եղած է Եգիպտոսի անգլիական գրաւումը: Այս գրաւումին տեսողութեան միջոցին, թուրք վեհապետութիւնը նանչցուած էր. բայց այն վայրկեանէն որ Օսմանեան կայսրութիւնը պատերազմ յայտարարեց Համաձայնութեան դէմ, անգլիացիները վերջ դրին այս կեդծիքին, եւ պաշտօնապէս յայտարարեցին իրենց սեփականութեան իրաւունքները: ձեւալին արշաւանքը պատասխանն էր այս հաստատումին»:

Իթթիհատի պատասխանատու անդամները նետելով Թուրքիան պատերազմի բոցերուն մէջ, ըսեր էին թուրք ժողովուրդին, ինչպէս վերը ըսինք, թէ պատերազմին իրական նպատակը կը կայանար Օսմանեան կայսրութիւնը վերականգնելու մէջ, որ ակներեւ վտանգի մէջ է: Եգիպտոսի նուաճումը պիտի ներկայացնէր առաջին հանգրուանը այս ընդարձակ ծրագրին:

«Թուրքերը գիտէին նաեւ թէ, կը գրէ Մորկէնթաու, անգլիական վարչութեան ներքին այդ կորստած նահանգը բարգաւաճ երկիր մը դարձած էր եւ թէ նուաճողը հոն մեծ հարստութիւններ պիտի գտնէր: Զարմանալի չէր ուրեմն որ ժողովուրդին հուրբանքը ընկերացած ըլլալին ձեւալին մեկնումին»:

ՃԷՄԱԼ ՓԱՇԱ ՓՈՒՍ-ՍՈՒԼԹԱՆԸ

Ճէմալ փաշա, արթնամիտ մարդ, գիտէր թէ իր պաշտօնակից երկու եռագետները գինքը իբրեւ պատուաւոր աքսորական մը մայրաքաղաքէն կը հեռացնէին, որովհետեւ գիտէր թէ իր գորարանակի հրամանատար անուանուիլը խելքի հակառակ էր, որովհետեւ իր բուն գործը, ծովային նախարարի իր հանգամանքովը, կը կայանար նաւատորմիդին սպասարկութեամբ զբաղելուն մէջ, եւ ոչ թէ արշաւախումբ մը՝ Սուրիոյ եւ Միսիսի հրավառ աւազներուն մէջ առաջնորդել:

Բայց ան, Էնվէրին պէս ազգային դիւցազ մը դառնալու միտք չուներ, գիտնալով որ հզօր անգլիացիները Եգիպտոսէն վճռուելուն գործը իրեն համար չէր. «սարսափելի կերպով ունայնամիտ եւ անյազ խաղամոլ» բառերը Մորկէնթաուին են. ան ուղեց դառնալ Անտոնիոս մը, հիմնելով թագաւորութիւն մը:

«Ան կը յուսար, կը գրէ գինքը մօտէն ճանչցող Մորկէնթաու, որ այն զինուորական արշաւախումբը, որուն կ'երթար հրամայելու, ոչ միայն զինքը պիտի կացուցանէր Թուրքիոյ ամենագեղեցիկ բաժանին աշխարհակալը, այլ եւ աշխարհի հզօրագոյն անձերէն մէկը»:

Արդարեւ Սուրիոյ մէջ ան կառավարեց տեսակ մը անկախութեամբ, որ կը նմանէր միջնադարեան կողպատիչ պարոններուն ունեցածին:

«Աւելի վերջը, կը գրէ ամերիկեան դեսպանը, ան տեսակ մը փոխ-Սուլթան դարձաւ, պահելով իր անձնական արժունիքը, կատարելով ուրբաքի իր մասնաւոր «Սէլամլըք»ը, տալով իր հրամանները, վարելով դատարանները համաձայն իր գաղափարներուն, եւ շատ անգամ անգիտակալով Կ. Պոլսոյ իշխանութիւնները»:

ԷՆՎԷՐ՝ ԿՈՎԿԱՍԻ ՃԱԿԱՍԻՆ ՎՐԱՅ

Էնվէր փաշան, սուրբ պատերազմի զօրութեան վրայ մեծ յոյսեր դրած, նոյն նոյեմբերի ամսուն, գնաց ստանձնելու հրամանատարութիւնը Թուրքիոյ միւս մեծ զինուորական ձեռնարկութեան՝ ընդդէմ ուսերուն, Կովկասի ճակատին վրայ, լուծելու դարաւոր վրէժը՝ ատելի Ռուսաստանէն, որուն թագաւոր կայսրերը թուրք ժողովուրդին արեւը քամեր էին, եւ պալքանեան թերակղզիին ժողովուրդները ստրի կանգնեցնելով, վերջ գնել տուեր էին եւրոպական Թուրքիոյ ձեռք առեր էին Հայկական Հարցը, հայոց ղեկավարներուն ազգային բաղձանքներ գրգռելով, եւ ասով՝ խափանելով, ինչպէս միշտ, բանորոգչական որ'եւէ ձեռնարկ, որպէսզի Զարը ստիթներ ստեղծէ

միջամտելու Թուրքիոյ ներքին գործերուն մէջ, իբր թէ քրիստոնեաները կը ձերբազատեն թրքական լուծէն:

Կովկասին ճակատին վրայ մղուած պատերազմը ամէնէն աւելի ժողովրդականն էր, եւ կը խօսէր ամէն մէկ թուրքի սրտին: Այդտեղ ալ կային «փրկելիք» իսլամ հողամասեր: 1878ի պատերազմէն ետքը, Թուրքիան բռնադատուած էր, ինչպէս տեսանք, իր զրացիին լքելու այն արդիւնաւոր հոգերը, որոնք Կասպից եւ Սեւ ծովերուն մէջտեղը կը գտնուէին, եւ ուր հայ ազգաբնակչութիւնը գերակշիռ էր. այս երկիրն էր որ էնվէր միտքը դրեր էր վերանուաճել:

«Բայց ոչ մէկ խանդավառ ցոյց, կը գրէ Մորկէնթաու, չողջունեց «յեղափոխութեան հերոսը», երբ ան կը մեկնէր երթալու համար իր պաշտօնին գլուխը, էնվէր հանդարտօրէն հեռացաւ քաղաքէն, առանց նշմարուելու»:

Եթէ ծափերը չընկրկեցան «յեղափոխութեան հերոս»ին, եւ ան «հանդարտութեամբ» հեռացաւ քաղաքէն, պատճառը պարզ էր: Իր պաշտօնակիցները, եւ յատկապէս ինքը, մայրաքաղաքին մէջ, ականատես եղեր էին «սուրբ պատերազմ»ի խեղճուկ արդիւնքին: Անոնք գիտէին նաեւ որ Կովկասի մահաճակատան տարրերը, մանաւանդ վախկոտ թաթարները, եթէ փորձէին ապստամբիլ եւ մէկ հատիկ քրիստոնեայ սպաննել, անոնց գլուխները պիտի ջախջախուէին ձիաւոր խազարներու լախտերներուն տակ:

Աւելի զօրաւոր պատճառ մըն ալ կար, որուն համար պատերազմական նախարարը հեռացեր էր «առանց նշմարուելու»: Իր մեծ եւ անպարտելի դաշնակիցը, Գերմանիան, յուսախաբուութեան մատնուած էր, նեղուցները համաձայնականներու կրակին տակ, պետական դանձր դատարկ, թուրք բանակը անօթի ծարաւ, գրեթէ մերկ վիճակի մէջ, ենթակայ համաճարակ հիւանդութեանց, ինչպէս եղեր էր Չաթալճայի գծին վրայ:

Եւ ինքն էր գլխաւորապէս, որ հակառակ թուրք հանրային կարծիքին, Երիտասարդ Թուրքիան նետեր էր արկնի եւ արցունքի գետի մը մէջ:

Եւ արդէն որոշուած էր «բաւոթեան նոխազը».- թրքահայ անդէն ու անպաշտպան ժողովուրդը...:

ԳԼՈՒՍ Ի.

ԳԼՈՐԳ Ե.Ի ԹՐՔԱԿԱՏՂԵՑՈՒՑԻՉ ԳԻՐՔԸ

ԳԼՈՐԳ Ե. ԵՒ ՆԻԿՈԼԱ Բ. ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Սուրէնեան Կաթողիկոս, որ իր զիտցածէն բան մը մոռցած էր, եւ քաղաքական ծանրակշիռ ղէպքերէն բան մը սորված էր, աչքերը չբացաւ նաեւ երբ հրատարակուեցաւ «Սուրբ Պատերազմ»ը, քրիստոնեայ ռազմիկ պետութեանց հպատակներուն եւ անոնց դաշնակիցներուն դէմ: Ընդհակառակն, ուրախութենէն ինքնիրմէ դուրս ելաւ, երբ լուր առաւ թէ իր «սիրեցեալ քաղաքը կայսրը», Նոյեմբերի վերջերը՝ Թիֆլիս պիտի ժամանէ, կովկասեան ժողովուրդները խախուսելու համար եւ զանոնք համակրութեամբ կապելու ձարական աթոռին շուրջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը անմիջապէս էջմիածինէն Թիֆլիս եկաւ դիմաւորելու համար ամենայն ուռսաց ձարը, որուն բանակները, ինչպէս կը գրէ Արտակ Դարբինեան, «Առաջ են շարժում, տանիկ զօրքերը ջարդում են ու յետ քաշում. ոռուսկան բանակը հասնում է Բաշկալէ եւ Սարա. վերջապէս ոռուսկան թնդաթօքները որոտում են Արնակի գաւառի սահմաններում, Մոլլա-Հասան գիւղի տակ, եւ նրանց ձայնը գնում տարածում է հեռունները:

Անդրանիկը հասել է Մոլլա-Հասան:

Ահա այս կայծակի արագութեամբ թոշում է գիւղից գիւղ, գաւառից գաւառ, քերանից քերան: Պետք է ասքրած լինել տանկահայերի դրուքիւնը, պետք է մարդ փորած լինի իր կաշու վրայ այն բոլոր գրկամէքները, որոնց մէջ ասքրել է տանկահայը տարիներով, որ կարողանայ գաղափար կազմել թէ ինչպիսի ոգեւորութիւն էր առաջ բերում այդ մի հատիկ նախադասութիւնը տառապող հայ ժողովուրդի մէջ»:

Ողբերուած Կաթողիկոսը, որ ձեռքին մէջ ունէր հայութիւնը փառաբանող աղերսագիր մը, յուզուած ձայնով մը կարգաց զանիկ կայսրին առջեւ: Աղերսագրին վերջաբանը արժանի է խորին ուշադրութեան. «Թիւրքահայերի փրկութիւնը հնարաւոր է միայն վերջնականապէս նրանց թիւրքաց տիրապետութիւնից ազատելով եւ ստեղծելով ինքնավար Հայաստան մը, մեծ ոռուսկան պետութեան հօգու հովանաւորութեան տակ: Ինքնավարութեան գաղափարը այնքան է հասունացել թիւրքահայերի մէջ, որ ամբողջ ազգաբնակչութիւնը

ոգևորում է եւ ապրում է այդ գաղափարով: Բայց Հայաստանում ինքնավար կարգերի իրագործումը կախում է Ձերդ Մեծութեան կամփից, ու ամբողջ հայ ժողովուրդն երջանիկ կը լինէր, եթէ ձերդ Մեծութիւնը ամենաողորմածաբար բարեհաճէր այժմէն իսկ յայտարարել Ձեր արքայական կամփը թուրքաց Հայաստանի ապագայ կազմակերպութեան մասին, որ լցնէր Թիւրքիայի բազմաչարչար հայ ժողովրդի սրտերը՝ խորին եւ մշտնջենական երախտագիտութեամբ դէպի Ձերդ Մեծութիւնը եւ հօգոյ Ռուսաստանը»:

Կաթողիկոսական վաւերագիրը, որ լայն արձագանգ գտեր էր Հայ եւ ռուս մամուլին մէջ, եւ որուն վերջին մասը արձանագրեցինք, արժանի է ամբողջութեամբ արտագրելու, քանի որ Իթիֆհատական կառավարութիւնը, այդ թրքականողեցուցիչ վաւերագիրը զխաւոր պատճառներէն մէկը համարել էր արդարացնելու համար իր կանխամտածուած ոճիրը: Ահա այդ մասը.

«Երեք օր սրանից առաջ, ըսաւ նա, ես բախտն ունեցայ հայ հիւնաւորց տանարում, սուրբ սեղանի առաջ, արտայայտել Ձերդ Մեծութեան իմ եւ իմ հօտի հաւատարիմ հպատակութեան զգացումները: Համարակութիւն եմ վերցնում հաւաստիացնել Ձեզ, տէր արքայ, որ անձնուիրութեան եւ անկեղծ սիրոյ նոյն զգացմունքներով ոգևորում եմ բոլոր երկիրների հայերը, մանաւանդ թրքահայերը, որոնք ամբողջ դարերի ընթացում հեծում են թիւրքաց ծանր լուծի տակ:

Իմ բոլոր նախորդները, հայոց երջանկայիշատակ կաթողիկոսները, Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը, միշտ տոգորում են եղել այն խոր հաւատով թէ թիւրքաց Հայաստանի ազատութիւնը հնարաւոր է Մեծն հօգոյ Ռուսաստանի մեծ արքունիքի կամփով: Եւ յիշակի, Ռուսաստանում թագակիր միապետները, սկսած Պետրոս Մեծից, միշտ արժանացրել են հայերին իրենց բարձր ուշադրութեանը: Երջանիկ եմ արտայայտելու, Մեծ Արքայ, որ հայ ժողովուրդն արժանանում է եւ Ձեր ողորմած ուշադրութեանը: Ձերդ Մեծութեան կամփով, կայսերական կառավարութիւնն իր վրայ առաւ նախաձեռնութիւնը մշակել թիւրքաց Հայաստանում մտցնելիք ռեֆորմների ծրագիրը: Կառավարութեան ներկայացուցիչները մեծ հմտութիւն եւ պետական իմաստութիւն ցոյց տուին այդ գործում, եւ դրա շնորհիւ ներկայ տարուայ Յունուար 26ին յաջողուեց ստանալ ռեֆորմների ծրագրի հաստատութիւնը Սուլթանի կողմից:

Այս բոլորին համար ես ի բոլոր սրտէ յայտնում եմ Ձերդ կայսերական Մեծութեան խորին շնորհակալութիւն իմ եւ իմ հօտի կողմից: Բայց այդ ռեֆորմները, ինչպէս միշտ, թուրք կառավարութեան կողմից առ ոչինչ են դարձրած: Հայերի դրութիւնը առաջուայ պէս մնում է անտանելի եւ ծանր, եւ այդ ինձ աստիկ ցաւ է պատճառում: Վշտի եւ ցաւի այս զգացմունքներով, ես նորից դիմում եմ,

Մեծ Արքայ, Ձեր մեծութեան հօգոյ հովանաւորութեանը: Ձերդ Մեծութիւնը կարող է վերջ դնել իմ հօտի տանջանքներին: Բոլոր այն փորձերի պատմութիւնը, որոնք եղել են թուրք կառավարութեան ձեռքով մտցուելիք ռեֆորմների միջոցով, տխուր հետեւանքներ է միշտ հասցրել...» (ԼէՕ, հտ. Բ, էջ 125-126):

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԽԵՂԱԹԻՒՐՈՒԱՇ

Ինչ որ ուշագրաւ է կաթողիկոսական փաստաթուղթին մէջ, այն է որ Գէորգ Ն., ղետուութեամբ թէ անդիտութեամբ, պատմական իրողութիւնները խեղաթիւրեր է, անշուշտ Ձարին հաճելի երեւնալու համար:

Թէ Հայոց «երջանկայիշատակ կաթողիկոսները, Կ. Պոլսի, Երուսաղէմի եւ Կիլիկիոյ պատրիարքները, Կ. Պոլսի ազգային ժողովը միշտ տոգորում են եղել այն խոր հաւատով թէ թիւրքաց Հայաստանի ազատութիւնը հնարաւոր է միայն հօգոյ Ռուսաստանի մեծ արքունիքի կամփով» բացատրութիւնը՝ խախտու հիմներու վրայ դրուած բանաձեւ մըն է:

Պատմական ճշմարտութիւնն ա՛յն է որ Ամենայն Հայոց Կաթողիկոսները ո՛չ միայն տոգորում են եղած այն խոր հաւատով թէ թրքահայաստանի ազատութիւնը հնարաւոր է միայն հօգոյ Ռուսաստանի մեծ արքաներու կամփով, այլ Թուրքիոյ նախկին պատրիարքները, Մատթէոս եւ Գէորգ, դառնալով էջմիածնի գահակալներ, չարաչար կերպով խաբեցին ռուսական ղեկանագիտութիւնը եւ իրենց սրտին խորը մտայնութեամբ եւ «Օսմանեան հայրենաւերներ»:

Նրիմեան Հայրիկ, որ իբր թրքահայոց պատրիարք, առաջին անգամ պաշտօնապէս Ազգային ժողովի սեղանին վրայ դրաւ «հարստահարութիւններու» խնդիրը, դառնալով էջմիածնի աթոռին գահակալը, երբեք չմտաբերեց Հայաստանի փրկութիւնը հօգոյ Ռուսաստանէն սպասելու, քանի որ աչքով տեսաւ թէ ինչպէս Աղեքսանդր Գ. եւ իր որդին Նիկոլա Բ. հալածեցին Հայ եկեղեցին, փակեցին Հայ դպրոցները, յարբուսեցին զբաւերելին Հայ եկեղեցական կառուածները, մղելով Հպատակ Հայերը դէպի ռուսացում եւ դէպի օրթոդոքս եկեղեցին: Ան Ռուսաստանութեան մէջ ա՛յնքան առաջ գնաց, որ հրապարակաւ նդովեց ձարական գերդաստանը:

Կիլիկիոյ կաթողիկոսները, որոնք ազատօրէն կ'իշխէին իրենց հարուստ թեմին մէջ, Թրքահայաստանի ազատութիւնը, երբեք Ռուսաստանէն ակնկալած չեն: Կ. Պոլսոյ Պատրիարքարանի հիմնարկութեան մինչեւ ռուս թրքական պատերազմը, մեծ վզուկներու եւ շէյխ-իւլ-իսլամներու բարեկամները եղած են, երբեմն նոյնիսկ անոնց ցուցմունքներով առաջնորդուելով: Անոնք, դառնալով իսկա-

պէս զիւսանազէտ հայ ամիրաներու ազդեցութեան տակ, եւ ոչ մէկ շփում ունենալով Ռուսաստանի հետ, մտքերնէն անգամ անցուցած չէին Թրքահայաստանի փրկութիւնը ակնկալել հզօր Ռուսաստանէն, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսները մէկակիւս պատուաւոր բանտարկեալներ էին, մինչ իրենք, Թուրքիոյ մէջ ճոխացած էին քաղաքական բարձր իշխանութեամբ:

Չուսմեան Պատրիարքը այնքան թրջասէր էր որ երգիծաբան Պարոնեան անոր վարքն ու բարքը ամփոփեց: (Տե՛ս ՊԱՐՈՆԵԱՆ, Խրիմեան Հայրիկ իրրեւ պատրիարք Կ. Պոլսոյ):

Մաղաքիա Օրմանեան Պատրիարքը, զոր եւ իրաւամբ անուաներ եմ «զազանագուսպ», ո՛չ մէկ քաղաքական յարաբերութիւն մշակեր է Ռուսաստանի հետ, որովհետեւ էջմիածնի մէջ ուսուցիչ եղած ժամանակ, տեսեր էր թէ անոր գահակալները «իրաւագուրկ» մարդիկ էին:

Եղիշէ Դուրեան Պատրիարքը, որ մտերիմ բարեկամ եղած էր ինձի, չէ եղած օր մը որ Ռուսաստանի նկատմամբ համակրական խօսք մը արտասանէ. ասոր համար ան կասկածելի եղաւ ձարական կառավարութեան համար, եւ զրկուեցաւ կաթողիկոսական աթոռէն:

Վարժապետեան Ներսէս Պատրիարքը, նշանաւոր իր բնատուր թրջասիրութեամբ, որուն հանդիսաւոր յայտարարութիւնը պիտի մնայ իր թրջասիրութեան կոթողային յուշարձանը, ինքնին բաւական է ջրելու հզօր Ռուսաստանի առասպելական հմայքը:

Իսկ գալով պատրիարքական տեղապահ՝ Արշարունիի եւ Զաւէն Պատրիարքին, որոնց օրով Պատրիարքարանը «ռուսապիութեան բոյն» նկատուած էր, որովհետեւ ինչպէս տեսանք, կաշկանդուած էին հոգեւորական բարձրագոյն իշխանութենէն:

Կ. Պոլսոյ Հայոց Ազգային Ժողովը, որուն անգամները բաղկացած էին հոգեւորականներէ եւ աշխարհական պետական բարձր պաշտօնեաներէ, կը գտնուէին Փրանսական եւ անգլիական ազդեցութեան տակ, եւ իբրեւ Օսմանեան հայրենասէրներ՝ ձարականութեան հետ ո՛րեւէ կապ չունէին. եւ երբ տիրացան «Ազգային Սահմանադրութեան» եւ Ազգային երեսփոխանական ժողովին», ստեղծելով թուրք պետութեան մէջ տեսակ մը անկախ պետութիւն, խորթ աչքով կը նայէին հզօր Ռուսաստանի վրայ, եւ սաստիկ դէմ էին «Մեծ արքաների, որոնք Նիկոլա Ա. էն սկսած հիմնած էին բոնապետական վարչաձև մը»:

Գալով Նրուսաղէմի պատրիարքներուն, անոնք շատ լաւ գիտէին թէ իրենց վանքին հաստատութիւնը հիմնուած էր Սալիֆաներու առանձնաշնորհութիւններուն վրայ, եւ եթէ թուրք զինուորները կը մտնէին հայ տաճարին մէջ, պարզապէս հաշտարարի դեր կատարելու համար էր՝ կռուասէր արեղաներու եւ օտարազգի կրօնաւորներու մէջ, որոնք իրարու գլուխը կը պատառոտէին:

Ուրեմն, ո՛րեւէ ռուսամոլ մը չեղա՞ւ, որ հաւատար թէ Հայաստանի «ազատութիւնը եմարաւոր է միայն հզօր Ռուսաստանի մեծ արքաների կամփից»: Այո՛, եռանդուն ռուսամոլ մը եղաւ Ներսէս Աշտարակեցիին, Թիֆլիսի թեմի առաջնորդը, որուն Նիկոլա Ա. ը խոստացեր էր վերականգնել հայկական թագաւորութիւնը: Հայրենասէր Աշտարակեցիին, խաչը ձեռքին, առաջնորդեց տասը հազար հայ կամաւորները, որոնք վճռական դեր կատարեցին: Յաղթանակէն ետք, ռուսասէր Ներսէսը աքսորուեցաւ, իբրեւ վտանգաւոր մէկը ռուսական շահերուն:

Չեղա՞ւ Ամենայն Հայոց Կաթողիկոս մը, որ անգիտանալով սղգային քաղաքական եւ եկեղեցական պատմութիւնը, ռուսամոլութեան անթերի տկար հանդիսանար: Այո՛, եղաւ. մեծամիտ, յամառ եւ անպատասխանատու Գէորգ Ե. ը, ծնած Աշտարակեցիին աճիւնէն, որ ոտքով ու ձեռքով նետուեցաւ ձարականութեան գիրկը, հայրենասիրութեան սեղանին վրայ՝ ողջակէզ ընել տալով թրջահայ ժողովուրդը:

Մարսափելին ձարամոլութիւնը չէ, այլ աւելի սարսափելին ա՛յն է, որ գիտանալով թէ թրջահայ ժողովուրդի վիզին կախուած է «սուրբ պատերազմի» սատակիչ սուրը, եւ սակայն կը համարի այդ հօտին անոննով խօսիլ եւ գրել, որուն վրայ ո՛րեւէ քաղաքական իրաւասութիւն չունէր:

ՆԻԿՈԼԱ ՋԱՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մենք չենք գիտեր թէ «Ամենաողորմած»ը ինչ պատասխան տուած է Հայաստանի ինքնավարութեան մասին, բայց գիտենք թէ ան Թիֆլիսէն մեկնելէն առաջ՝ անուղղակի պատասխան մը տուեր է Ֆրանսայի դեսպան Պալէոլոգին, թէ, ինչպէս կը վկայէ նոյն դեսպանը, ինքը մտադիր է ազատել հայերը, կցելով Թրջահայաստանը Ռուսաստանին:

Ասիկա փոքրիկ մասնիկ մըն էր միայն այն դիտաւորութիւններուն, որ ռուսական դիւանագիտութիւնն ունէր, յաղթութեան դէպքին մէջ Թուրքիոյ վերաբերմամբ:

Արդարեւ, խօսքին անմիջապէս յաջորդեց գործը: «Նիկոլայի այցելութիւնից յետոյ, կը գրէ Թիֆլիսի մէջ անցած դարձածին քաղաքագետ Լէօն, Փոխարքայի պալատում սկսում էր ստուգութեան շրջան դէպի հայերը ու նրանց ռազմական տեղը, բայց բիրտի համար անկատելի էր մնում այս հանգամանքը եւ ան առաջուայ ոգեւորութեամբ էր վերաբերում դէպի իր «բարեացակամ» Կոմսը, քէն այլևս նրա մօտ չէին լինում նրա դիկավարները»:

ԲԻՒՐՈՅԻ ՀՐԱՒԻՐԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Թէեւ փոխարքայական պալատին ղռները փակուելը էին Կաթողիկոսի խորհրդականներուն առջեւ, բայց անոնց սէրը, անոնց հաւատքը աւելի եւս կը սաստկանար ղէպի ձարական «ամենաողորմածութիւնը»:

1914ի Դեկտեմբեր 26ին, 1915ի Յունուար 10ին, տեղի ունեցաւ Ազգային Բիւրոյի կողմէ հրաւիրուած ներկայացուցիչներու խորհրդակցական ժողովի առաջին նիստը, նախագահութեամբ Մեսրոպ եպիսկոպոսի:

Կաթողիկոսին Աքիտոսիւլը կը յայտնէ, ըստ ձեռագիր փաստաթուղթին որ «մի քանի անգամ դիմում է եղել կառավարութեան՝ խնդրել գեմէ տալ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար, բայց պատասխանը միշտ մերժողական է եղել. կառավարութիւնը իրեն համար անպատուութիւն է համարում գեմէ տալ մի ժողովրդի ընդդէմ միւսի, այդ նա համարում է պետական սնանկութիւն: Պէտք է եղած ժամանակ կառավարութիւնը խոստանում է պաշտպանել ժողովրդին, եւ միայն համաձայնել գեմէ տալ սահմանակից այն վայրերի համար, որոնք մօտ են պատերազմի թատերաբեմին. այդ նպատակով տուել է արդէն մի քանի հազար բերդաններ մեր խմբապետներին:

Գաւառի ներկայացուցիչներն էլ տալիս են իրենց վայրի մասին տեղեկութիւններ. այսպէս Ղարսում մի քանի անգամ դիմում է եղել նահանգապետին գեմէ խնդրելով, եւ միշտ էլ մերժուել է: Կառավարութիւնը այն կարծիքին էր, որ թուրքերը լոյսլ տարր են, բայց երբ վերջերս պարտուել է որ թուրքերը կառավարութեան դէմ են, վերաբերումը սկսել է փոխուել, եւ 2000 հրացան բաժանում հայ եւ մալական տարրին: Բացի այդ, քրիստոնեաներին արտօնութիւն է տրուում գեմէ կրելու, բայց այս բոլորը շատ քիչ է, որովհետեւ թուրքերը շատ լաւ են զինուած, եւ թուրքերի կոռուղ ոյժը տանն է, իսկ մերը պատերազմի դաշտում»:

Ուրեմն, նորէն յայտնի եղեր էր որ ոռւս կառավարութիւնն ու նահանգապետները, իրենց խորքին մէջ թրքասէր են, եւ համակրութիւն չեն սնուցաներ ոռուսերու սիրով տոչորող հայերուն հանդէպ: Այս կէտը նկատի առնելով, փաստաթուղթը կը շարունակէ. –

«Անհրաժեշտ է ո՛չ միայն մեր ժողովուրդին գեմէ տալ, այլ եւ պէտք է զինաթափ անել թուրքերին եւ իւրաքանչիւր գիւղից հինգ կամ տասը պատանդ առնել եւ ուղարկել Ռուսաստանի խորքերը: Պէտք է նաեւ հին թրքասէր պաշտօնեաների փոփոխումը եւ տեղական ատմի-նիստրացիայի մաքրագործումը թուրք անվստահելի տարրերից»:

Վերեւ յիշուած փաստաթուղթը, որուն մէկ մասը մէջբերեցինք, քանի մը տեսակէտերով նշանակելի է:

Անիկա ո՛չ միայն ցոյց կու տայ թէ Մեսրոպ եպիսկոպոսը եւ իր խորհրդականները մեծամտօրէն կը համարէին թէ ոռուս կառավարու-

թիւնը կը գտնուի հայ ազգայնամոլութեան տրամադրութեան տակ, այլ չէին անզրագոռնար, եւ ասիկա է սարսափելին, որ երկուքուկէս միլիոն թրքահայերն ալ պատանդ էին անազորոյն կառավարութեան մը ձեռքը, որ հայերու վրայ կը նայէր իբր պետութեան դաւաճաններ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՐ

Ազգային Բիւրոյի խորհրդակցական ժողովը, յետ միաձայն քուէարկելու մեծամեծ պահանջներ, ձարական ղեւանագիտութեան ներկայացնելու համար, «պատգամաւորների վրայ պարտք դրաւ, որ վերադառնալով՝ հասկցնեն հայ ժողովրդին որ իրենց յոյսը դնեն միայն իրենց վրայ, եւ աշխատեն զինուել»:

Ներկայացուցչական խորհրդակցական ժողովը անխոհեմ որոշում մըն ալ առաւ, նոյն այդ ինքնապաշտպանութեան գործին համար ընտրելով բիւրոյին կից յանձնաժողով մը, որ մանրամասն հրահանգներ կը մշակէր զաւաններու մէջ ինքնապաշտպանութեան ցանց մը կազմակերպելու համար:

Եւ որովհետեւ այդ ծրագիրները, որոնք հաճելի քայլեր չէին յաշս ձարական կառավարութեան, կը վերաբերէին Այսրկովկասի հայութեան, Իթիֆհատական կառավարութիւնը, որ արդէն այն սխալ համոզումը գոյացուցեր էր թէ հայերը արդէն կամաւոր ղուռուներով թուրքերոյ դէմ պատերազմ յայտարարած են, հիմա ալ ռազմաճակատ կը յարզարեն Կովկասի մէջ, թուրք տարրերու դէմ, դիտէր թէ այս անգամ աւելի սարսափելի պիտի ըլլային հայ-թրքական արիւնոտ եւ անասելիօրէն աղիտալի յարաբերութիւնները:

ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Ինքնապաշտպանութեան պահանջին հետ զուգընթաց կ'ընթանար կամաւորներու թիւը 10.000ի հասցնելու եռանդը, եւ ասիկա այն ժամանակ, երբ ձարական «ամենաողորմածութիւնը» Թրքահայաստանը ոռուսական նահանգ մը կը նկատէր:

Եթէ ոռուսական հրամանատարութիւնը հաշտ աչքով չէր նայեր ինքնապաշտպանութեան պահանջին վրայ, ընդհակառակն չէր ժխտեր քաջալիբեղ կամաւորական ղուռուներու բազմապատկումը, որպէսզի որչափ կարելի է հայերը թրքական գնդակներէ սպաննուէին: Իսկ Սուրէնեան Կաթողիկոսն ալ կ'ուզէր ցոյց տալ աշխարհի թէ հայը ստրուկ չէ, այլ կռուող, մարտական ժողովուրդ է:

Մենք տեսանք որ առաջին օրէն սկսեալ՝ կամաւորական ոյժը չափազանց համեստ, կարելի է ըսել՝ հազիւ նշմարելի էր համաշ-

խարհային պատերազմին մէջ, ուր կռուող կողմերու բանակները միլիոններով զինուորներ կը պարունակէին իրենց մէջ:

«Բայց ազգային մեծամտութիւնը, կը գրէ Թիֆլիսի մէջ նստած Լէօն, պարծենկոտութիւնն ու յոխորտամէք վառելու համար շատ բաւական էին այդ անկանոն խմբերը, եւ այնպէս նեղիկ հորիզոններով շրջապատուած միջավայրում, որի գաղափարախօսն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր ստրկամիտ դանիելականութեամբ:

Կռուող կողմի հպարտութիւնը, հագարաւոր գէնքեր, ռուսական գանձարանից ստացուող մեծաբանակ գումարներ ու հանդերձանքներ, այս բոլորը գլուխ էր պտըտցնում, մեծամեծ պատրանքներ յեռիւրում, մինչեւ առասպելականութիւնը»:

Այս ուռած տրամադրութեան պատկերը, որ իթթիհատական ջարդարար քաղաքականութեան հացին վրայ իւղ կը քսէր, «ամբողջովին արտացոլուած ենք տեսնում, կը գրէ ականատես վկան Լէօն, ժամանակի մամուլի մէջ: «Հորիզոն»ը պատկերագրող յաւելումներ էր հրատարակում, ամբողջովին նուիրուած կամաւորութեան: Երեւում էր մի քանի տասնեակ հրացանաւոր մարդկանց խմբակար եւ նրա տակ տպուում էր թէ դա հայկական այսֆաներորդ քանակն է»:

Մերկ իրականութիւնն այն էր որ Թիֆլիսի Բիւրոն, ըստ վկայութեան 1917ին հրատարակուած «համառօտ տեղեկագիր շ. Կ. Ազգ. Բիւրոյի գործունէութեան» պաշտօնագրին, իր գոյութեան ընթացքին մէջ կրցեր է հաւաքել 6000 կամաւոր: Եթէ ստոնց վրայ աւելցնենք նաեւ այն կամաւորները, որոնք կը գտնուէին անգլո-ֆրանսական բանակին մէջ, կը ստանանք մօտ 9-10 հազար հոգի:

Բայց հայ գործիչները եւ անպատասխանատու հայ մամուլը իրենց պոռոտախօս գոռում-գոչումներով, կ'եռապատկէին եւ կը հնգապատկէին այս թիւը...:

Արդէն անոնք աւելի կամաւորներ չէին կրնար պահել եւ սնուցանել: Մենք գիտենք որ սկզբնական հաշիւով, Բիւրոն կամաւորական խումբերու պահպանութեան համար տասը ամսուան ընթացքին մէջ պիտի ունենար երկու միլիոն ռուբլի սեփական միջոցներ, ըսել է տարին երկու միլիոն չորս հարիւր հազար ռուբլի: «Բայց կամաւորական խմբերը, կը գրէ Լէօ, հիմնուած «համառօտ տեղեկագրին» վրայ, գոյութիւն ունեցան 2 տարիէն աւելի, եւ սակայն ամբողջ այդ ժամանակում հազիւ կարելի եղաւ մի այսպիսի գումար կազմել: Թէեւ քիւրդի մէջ քթոռներ էին գրաւում մի երկու երեք խոշոր կապիտալիստներ, բայց հայ բուրժուազիան առհասարակ շատ ժխտութիւն էր ցոյց տալիս ազգի փրկութեան այս գործին մէջ... 300.000 ռուբլի: Եթէ չլինէին կառավարութեան խոշոր նպաստները, Բիւրոն իր միջոցներով հազիւ թէ կարողանար մի քանի հարիւր կամաւորներ պահել»:

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԲԱՆԱՎԷՃ ԱՆՈՐ ՇՈՒՐՋ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԶԳԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԻՔԸ

ԴԷՊԻ ՀԱՅՅԵՐՈՒ ԲՈՒՆԱՍԾ ԴԻՐՔԸ

Մեր ազգային դարաւոր պատմութեան բովանդակ շրջանին, սկսած հին դարերէն մինչեւ մեր օրերը, հայոց ազգին գլուխէն անցած մեծամեծ փորձանքներուն գլխաւոր պատճառներէն մէկն այ եղած է եւ է, որ հայ կղերական եւ աշխարհական ղեկավարները - բացառութիւն ըլլալով հայ ամիրաներու եւ քաղաքական պատրիարքներու շրջանը - տողորուած ինքնահաւանութեամբ, չուղեցին, կամ աւելի ճիշտ, չկարողացան ո՛չ մէկ հաշիւ տեսնել այն շրջապատին հետ, ուր դարերով հայ ժողովուրդը կողք-կողքի ապրեցաւ իր դրացի քրիստոնեայ եւ ոչ-քրիստոնեայ ժողովուրդներու հետ, կատարելապէս չանդրադառնալով ու անտեսելով որ հայ ժողովուրդը միանգամայն մեկուսացած է:

Առաջին անգամ Թուրքիոյ դաշնակցականները եղան, որոնք փորձեցին ճանչնալ շրջապատը եւ բարի դրացիութեան, մինչեւ իսկ եղբայրակցական կապեր հաստատել քրիստոնեան հետ, որոնց հարբատահարի բազուկը ծանրացած էր հայ գիւղացութեան վրայ: Բայց այդ կենսական ձեռնարկը կարօտ էր ի հարկէ երկար ժամանակի, եւ դաշնակցութիւնը իր փոթորկալից կեանքին մէջ, ամբողջովին չէր կրնար նուիրուիլ այդ գործին: Վրայ հասնելով միտհատեան Սահմանադրութեան վերահաստատումը, մէջտեղ ելաւ «հողային հարցը», որ թերեւս յաջող լուծում մը ունենար, եթէ վրայ չհասնէին պալքանեան պատերազմները եւ «հայկական հարցի» վերարծարծումը, որ ամէն ինչ խավանեց եւ քրիստոնեւոր աւելի կատաղութեամբ զինեց հայերու դէմ:

Կովկասի մէջ հայ ղեկավար շրջանակները բնաւ փորձած չէին ճանչնալ եւ մօտենալ իրենց մրցակից ժողովուրդներուն, յատկապէս վրացիներուն եւ թաթարներուն հետ, որոնց վրայ արհամարհանքով կը նայէին, թէեւ անոնք իրենցմէ աւելի ղրկանազէտ մարդիկ ունէին, եւ ինչպէս տեսանք, գաղտնապէս գործելով, իրենց կողմը շահեր էին թէ՛ թուրքերը եւ թէ՛ գերմանացիները:

Երբ այդ ժողովուրդները տեսան թէ Հայոց Կաթողիկոսին ներկայացուցիչները ազատ մուտք ունէին փոխարքայի պալատին մէջ, եւ կոթնած Վորոնցով-Ռաչկովի «քարեացակամութեան» վրայ՝ կը վայելէին բացառիկ պայմաններ, ունին հրապարակաւ դործող քաղաքական եւ զինուորական ամբողջ հաստատութիւն մը, որ յարաբերութիւններ ունի քաղաքական եւ զինուորական իշխանութիւններուն հետ, դրամ կը հաւաքէ իր ազգային ազատութեան համար, ազգային համագումարներ կը կազմակերպէ ամէն կողմէ եկած պատգամաւորներով, մէկ խօսքով՝ կը ներկայացնէ ամբողջ կառավարութիւն մը, մինչդեռ իրենք զրկուած են ազատ արտայայտուելու իրենց ազգային ձգտումներուն մասին, սկսան հայ ժողովուրդին վրայ նայիլ ոչ միայն անվստահութեամբ, այլ նախանձով, ատելութեամբ:

Եթէ այդ դրացի ժողովուրդները զիտնային կաթողիկոսական պատգամաւորներուն գլուխ-գլխի տեսակցութիւնները «ծեր աղուէս»ին հետ, անոնց սրտերը ո՛չ թէ նախանձով եւ ատելութեամբ պիտի լեցուէին հայ ժողովուրդին դէմ, այլ ուրախութեամբ եւ հրճուանքով, քանի որ «ծեր աղուէսը» զանիկա դէպի կորստեան անդունդը կ'առաջնորդէր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՓԵՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՕՐՈՒԱՆ ԿԱՐԳԱԽՕՍ

Երբ հայ պատգամաւորները այս ու այն կողմ ցրուած կամաւորներ կը հաւաքէին ուսաստան ժողովրդական հոծ զանգուածներէն, որոնց մէջէն դուրս եկած էին այն հազարաւոր զինուորները, որոնք, ինչպէս տեսանք, հետաքրքրութիւն ցոյց չէին տար դէպի «ազատարար պատերազմը», փոխանակ զգաստանալու եւ շրջահայեաց ըլլալու, սկսան մտածել թէ ի՛նչ կազմակերպութեան պէտք է յանձնել Ռուսիոյ ձեռքով ազատագրուելիք Թրքահայաստանը:

Այս հարցն էր ահա, եռանդուն եւ ընդարձակ բանավէճի առարկայ դարձեր էր 1914ի աշնան, Թուրքիոյ դէմ պատերազմական զործողութիւններ սկսելէ անմիջապէս յետոյ:

Անպատմազէտ եւ ճարտապաշտ Գրիգոր Արծրունին, որ առիթը ներկայանալուն «արջի ծառայութիւն» մատուցանելու թրքահայ ժողովուրդին, «Մշակ»ի մէջ կը պահանջէր որ Թրքահայաստանին տրուի անկախութիւն: Բայց ասիկա իր անձնական ցանկութիւնն էր. օրուան կարգախօսն էր ինքնավարութիւնը, որ ինչպէս շատ ու շատ անգամ կրկնեցինք, Հայկական Հարցի ստեղծումէն ի վեր մտաւորական հայ գործիչներուն հաստատուն խորհուրդը եղած էր: Անոնց պահանջն էր քարեկարգումներու հարցը, եւ Կաթողիկոսը իր բոլոր պաշտօնական թուղթերուն մէջ, նոյն պահանջին վրայ կը պնդէր:

Վորոնցով-Ռաչկովն էր որ ձեռքի տակէ գրգռեր էր որ ինքնավարութիւն պահանջեն:

Եւ ահա, այս անգամ, հայկական ինքնավարութեան չափերու եւ սահմաններու մասին տարբեր կարծիքներ կը յայտնուէին:

«Այս բանավէճը, կը գրէ Լէօ, որի մէջ լայն մասնակցութիւն սկսեցին ունենալ եւ ուսներէն քերթերը Թիֆլիսում եւ մայրաքաղաքներում, հետզհետէ ընդունեց այնպիսի կերպարանք որ բնականաբար չէր թէ՛ Կովկասի եւ թէ՛ Թիւրքիոյ հայերի համար:

Ռուսական մամուլը հարցի բնութիւնը տարաւ այն ուղղութեամբ որ թուրքահայերը ստանան «աւտոնոմիա» (ինքնավարութիւն) Ռուսաստանի հովանաւորութեան տակ, ինչպէս ձեւակերպում էր շարունակ հայ բուրժուական ինտելիգենցիան. այդ դէպքում ինչո՞ւ պիտի նրանցից անջատուած մնան Կովկասի հայերը: Իսկ եթէ սրանց ալ տրուի աւտոնոմիա, այն ժամանակ հարց կը բացուի եւ կովկասահայերը պիտի ինքնավարութիւն ունենան իսկ իրանք՝ ո՛չ»:

Արդար էր ուստական մամուլի ամբաստանազիրը, քանի որ պատերազմը ամէնուն մէջ վառեր էր անզուսպ ազգայնական կիրքեր: Բնական է՝ ուստական մամուլի հարցի այս տեսակ մեկնաբանումը աւելի եւս պիտի գրգռէր դրացի ժողովուրդներու ազգայնական կիրքերը: Եւ ահա անոնց մէջ ծայր տուաւ կատարեալ թշնամական վերաբերմունք՝ դէպի հայերը առհասարակ եւ մանաւանդ՝ դէպի անոնց ինքնավարութիւնը:

«Հորիզոն»ը, որ ամէնէն աւելի կատաղի կերպով կը ներկայացնէր ինքնավարութեան բանավէճը, կատարեալ մենամարտ մը բացաւ վրացի ազգայնականներուն հետ:

«Այժմ, կը գրէր ան, իր 1914ի 266 քուիմ մէջ, երեւում է որ տարաբախտ քիւրքահայերն էլ ատելի են այս տարօրինակ բարոյագէտներին: Սա արդէն ուղղակի անբացատրելի է. ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էք իրար անցել, - քիւրքահայերը ձգտում են աւտոնոմիայի: Այո՛, ձգտում են, բայց ձեզ ի՛նչ, ձեզ ի՛նչ գործն է, ի՞նչ հաշիւ ունե՞ք այնտեղ»:

«Հորիզոն»ը իրաւունք ունէր հարցնելու թէ «ինչո՞ւ իրար անցեր էք, եթէ քրքահայերը ինքնավարութեան կը ձգտին»:

Թէ՛ «Մշակ»ի եւ թէ՛ «Հորիզոն»ի պարզամիտ խմբագիրները, վարժ ըլլալով «ի ձայն փողոյ եւ թմբկի» հրապարակը աղմկելու, չէին կրնար հասկնալ թէ կարելի է արեւուն տակ գործել անշուշտ ու ծածուկ ալ:

Վրացիները, կնքելով դիւանագիտական համաձայնութիւններ ձարականութեան դէմ, եւ դառնալով գաղտնի դաշնակիցներ Թիւրքիոյ եւ Գերմանիոյ, անոնց պէս կատաղի կերպով հակառակ էին թրքահայերու ինքնավարութեան, դրուած Ռուսաստանի գերիշխանութեան տակ:

ՀԱՅ ԵՒ ՌՈՒՍ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՁՈՒՄԸ

Եւ եթէ այսպէս էր դրուեալնը եւ ուրիշ կերպ էլ կրնար ըլլալ, երբ հայ ժողովուրդի մեկուսացումը, կղզիացումը օր օրին կը դառնար տխուր՝ աղիտալի փաստ մը, կարելի՞ էր արդեօք ըսել թէ գոնէ հայ եւ ռուս դաշնակցութիւնն այնքան ամուր էր, այնքան սրտագին որ հայերը յենուելով անոր վրայ, կարող էին եւ չվախնալ իրենց մեկուսացումէն:

Հայ եւ ռուս դաշնակցութիւնը խզողը եղաւ նախ փոխարքայական պալատը: «Դեռ նոր կամաւորական խմբերը պատերազմի դաշտ էին գնացել, կը գրէ Լէօ, եւ ահա փոխարքայի պաշտօնական օրգան «Կավկազ» լրագիրն արհամարհանքով էր խօսում նրանց մասին»:

Ձայրացաւ «Հորիզոն»ը եւ իր 254 թուին մէջ, առաջնորդող յօդուած մը գրելով, կը բացատրէր թէ «Ինչ ցաւալի դիրք է բռնել կիսապաշտօնական «Կավկազ»ը դէպի հայ կամաւորներ եւ ինչպէս յանդուգն կերպով իր էջերում վիրաւորում է հայ ժողովրդի ամենաուրիշական զգացմունքները»:

Նոյն լեզուէն կը բանեցնէր նաեւ ռուս շինովնիկներու պաշտօնաթերթ «Դոլոս Կավկազ»ը, սպաղբելով յօդուած մը, որուն վերնագիրն էր «Ե՛ւ ծիծաղելի, ե՛ւ տխուր»:

«Ռուս լրագիրը, կը գրէ Լէօ, ծաղրում էր քրքահայերի աւտոնոմիան, քանի որ հայերը մեծամասնութիւն կազմում էին միայն վանի եւ Մուշի կողմերում, մինչդեռ աւտոնոմիայի համար պահանջում էին միացնել վեց վիլայեթները եւ կցել նրանց նաեւ Կիլիկիան: Շատ իրաւացի կերպով ռուս լրագիրը հարցնում էր, քանի՞ ռուսական կորպուսներ են հարկաւոր այսօր տարածութիւնը պահպանելու համար»:

Արեւու պէս պայծառ է որ ռուս հարիւրակալիները աւելի լաւ կը հասկնային իրերու դրութիւնը Թրքահայաստանի մէջ՝ քան հայ ազգասէրները:

Եւ «Հորիզոն»ը, փոխանակ պող դրուելով մտածելու այս աչք ծակող իրականութեան վրայ, գլուխը աւելի տաքցուց, իր լրագրի նոյն թիւին մէջ, սաստիկ զգացուած այս «անբարեխղճութիւնից», առաջ քաշեր էր Կ. Պոլսոյ պատրիարքարանի ձեռքով կազմուած վիճակահանութիւնը, որ ոչինչ կ'ըսէր այս լուրը եւ ծանրակշիռ հարցի նկատմամբ:

Ռուս ժողովուրդն ալ ծուռ աչքով կը նայէր Թրքահայ ինքնավարութեան վրայ: Այս մասին Լէօ ճշտապէս կը գրէ. —

«Եւ այսպէս քիւրքահայ աւտոնոմիայի գաղափարը միանգամայն վարկաբեկում էր եւ ռուս հասարակութեան մէջ: Նրա մէջ տեսնում էին ռուսահայերի անջատական ծրագիրը, որ միեւնոյն ժամանակ

պիտի խանգարիչ հանդիսանար, որ Ռուսաստանն իրան կցէ ասիական Թիւրքիայում իր գրաւած հողամասերը:

Առհասարակ բոլոր հայերին յատկացում էր «աւտոնոմիստ» արհամարհական եւ նոյնիսկ քշնամական անունը, որ պատերազմին յաջորդած արիւնահեղ ցեցումների տարիներում՝ դժբախտութիւններ շատ բերեց հայ ժողովրդի գլխին»:

Բայց ամէնէն աւելի սարսափելին այն էր որ այս տրամադրութիւնն անարգել մտեր էր նաեւ ռուս բանակին մէջ. «Խօսք էր դառնում, կը գրէ Լէօ, ծաղրել պատերազմի նպատակը», «կուում ենք աւտոնոմիայի համար, կծու արտայայտութիւններով»: Պաշտօնազրուեալն մը համաձայն, զինուորական վարչութիւնը կը մերժէր շատ աննշան յանձնարարութիւն մը տալ զինուորի մը, պարզ այն պատճառով որ ան «հայ է»:

Ահա ինչ տեսակ դաշնակիցներ էին հայերն ու ռուսերը: Եւ սակայն, Աշոտ Նահապետեան, միամիտ եւ անզէտ, Թիֆլիսի հայ «բուրժուազիայի» նոր հիմնած լրագրին մէջ, կոչուած «Կովկասկոյէ Սլովօ», 1914ին կը պարծենար թէ «հայերու կապերը ռուսերու հետ սերտացած են»:

Բայց ասիկա, ինչպէս շատ անգամ տեսանք, հայ ազգասէրներու սովորական յատկութիւն մըն էր, չտեսնել իրականութիւնը: Թէեւ հայ մտաւորականութիւնը եւ հայ քաղքենի գործիչները անվերապահ կերպով, ստրկօրէն, առանց որոշ պայմաններու եւ երաշխիքներու, հայ ժողովուրդը դրեր էին ձարական նենգաւոր դիւանագիտութեան տրամադրութեան տակ, բայց ասիկա պատճառ մը չէր դարձած որ այս դիւանագիտութիւնը փոխէ իր վերաբերմունքը դէպի իրեն զոհաբերուող ժողովուրդը: Հայ քաղքենի դասակարգը հին մտայնութեամբ տողորուած, սեղմուած մնաց ռուս պաշտօնական աշխարհի կուրծքին: Անոնք երբեք չկրցան հասկնալ շատաչուն սպտակները ուտելէն ետք անգամ, թէ փոխարքայական պալատի նենգամտութիւնները լոկ արտաքին խաբուսիկ ձեւեր էին, որոնց տակ ծակուած էր միեւնոյն ռուս հայատեաց տրամադրութիւնը: Անոնք չհասկցան նաեւ թէ կամաւոր յամառութիւնը, ինչպէս անհատի մը, նոյնպէս ալ ժողովուրդի մը մեծագոյն թշնամին է:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ԹՈՒՐՔ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ
ՆՇԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Ազգային Բիւրոյի քանի մը անդամները տեղէ տեղ կը չըջէին, նոր կամաւորներ զինուորագրելու Թուրքիոյ դէմ եւ հայ մամուլը հրապարակաւ կը վիճէր թէ ի՛նչ կազմակերպութիւն պիտի

ունենայ թրքահայաստանը, ազատութի՞ւն թէ ինքնավարութիւն, անդին, հեռաւոր Նիւ Եորքի մէջ, ուր լայն արձագանգ գտեր էր ինքնավարութեան շուրջ եղած վէճերը, բացուեր էր ողբերգական տեսարան մը:

Այդ հսկայ քաղաքին մէջ կ'ապրէր բարեկեցիկ հայ գաղութ մը, որուն մէջ չէին պահսեր բանիբուն եւ խոհական մարդիկ, որոնք չհասկնային թէ ի՞նչ կը նշանակէ դեռ արջը չսպաննած, վիճել անոր մորթը բաժնելու մասին:

Այդ մարդերէն ամէնէն աւելի աչքի զարնողն էր, կեսարացի իրատես հայ մը, Կիւլապի Կիւլպէնկեան, որ երկար ժամանակ Կ. Պոլիս ապրած էր, եռանդուն հայրենասէրի եւ «Ազգային բարերար»ի տիտղոսին իսկապէս արժանացած, համիտեան կոտորածները աչքով տեսած: Ան դիպուածով փողոցին մէջ պատահելով իրեն վաղեմի ծանօթներէն մէկուն, Պետրոս Տոնապետեանին, հնչակեան կուսակցութեան զլիսաւոր սիւներէն մէկը, եւ իմանալով որ Միացեալ Նահանգներ եկեր է կամաւորներ հաւաքելու Թիւրքիոյ դէմ կռուելու համար, փոխանակ բարի զալուստի՝ կծու յանդիմանութեամբ անոր երեսն ի վեր գոչեր էր. «Այս ինչ է ըրածնիդ, խեղճ քրքահայոց կրած անցեալի դժբախտութիւնները բաւական չեղա՞ն միթէ որ հիմա նորէն կը ջանա՞ք կոտորել տալ եւ բոլորովին ոչնչացնել զանոնք»:

Բայց երբ Նազըմ Բէյի յայտարարութենէն չզգաստացած՝ յեղափոխական գործիչին բերնէն լսեց իր համոզումը այդ աննպատակ, բախտախնդրական եւ միանգամայն ազգակործան ձեռնարկի մասին, այն ժամանակ վստահութիւն առնելով կը պատմէ անոր թէ «Նիւ Եորքի քրքական հիւպատոսը մասնաւորապէս կ'երթայ կը տեսակցի իւր եւ տեղական ուրիշ մի քանի հայ անհատներին հետ, եւ կ'ազդարարէ որ ի շահ Թիւրքիոյ մէջ ապրող իրենց ցեղակիցներին, ժողովի հրաւիրէին իրենց Ամերիկայի սանձարձակ հայերը եւ համոզէին նոցա՝ հրաժարիլ իրենց անտեղի վնասաբեր հակաթրքական ընթացքէն եւ լեզուէն»:

Այսպէս էին թուրք հիւպատոսին խօսքերը, կը գրէ ան, Նիւ Եորքի այդ քանի մը հայ երեւելիներուն. —

«Այս ի՛նչ է ձեր մի կարգ հայերի հրապարակաւ բռնած ընթացքը եւ գործածած լեզուն Օսմանեան տէրութեան դէմ: Աշխարհի ամենամեծ պետութիւններն են որ այս միջոցին երկուսի բաժնուած կը պատերազմին միմեանց հետ տասնեակ միլիոնաւոր վարժ եւ հմուտ զինուորներով: Հայերը գոնէ ամենափոքր մի տէրութիւնն իսկ չեն որ արդարանալի նկատուէին թէ իրենց պետական շահերի պատճառաւ՝ պարտաւորուած էին բռնել մէկ կամ միւս կողմը խուճիկ կողմը:

Նոցա կամաւորները ոչ միայն բոլորովին անարժէք են, այս հսկայական պատերազմին համար, այլ մի կաթիլ ջուրի պէս պիտի

լինեն ոյժերի ծովի մէջ: Ինչո՞ւ ուրեմն պարապ տեղը այսօր անմուկ կը հանեն եւ նախատական դիրք ցոյց կու տան Թուրքիոյ դէմ: Նոքա խորհելու են թէ մեր կառավարութիւնը անշուշտ կ'իմանայ այս ամէն բաները եւ բնականաբար կը վրդովի:

Ամերիկայի այս հեռաւոր եւ խաղաղ երկրին մէջ այդ հայերը ամէն երկիւղէ գերծ, ապահով եւ հանգիստ կ'ապրին իրենց համար: Բայց կ'երեւի ամենեւին չեն մտածեր թէ Թուրքիոյ մէջ իրենք ունին հայր, մայր եւ ազգականներ: Միթէ բոլորովին մոռցան տասնեակնոց տարի առաջ հայ ազգին գլխին եկած սուկալի դժբախտութիւնը եւ կոտորածը: Աշխարհիս այս ընդհանուր խառնակութեան միջոցին, Թուրքիոյ հայ ժողովուրդը կարող է շատ աւելի մեծ դժբախտութեանց ենթարկուիլ, եթէ արտասահմանի հայերն այսպէս շարունակեն գրգռել մեր կառավարութիւնը:

Ուստի ժողովի կանչեցէ՛ք ձեր մարդիկը, խրատեցէ՛ք եւ ազդարարեցէ՛ք որ խղճան իրենց Թուրքիա ապրող ազգականներն ու հայրենակիցները, եւ փոխեն իրենց ընթացքը» (տե՛ս ՕՏՆԱՊԵՏԵԱՆ, «Ձայն տառապելոց», էջ 479-480):

Իսկ պատմիչը կ'աւելցնէ. —
«Այս ժողովը տեղի ունեցաւ: Բայց խրատն ու ազդարարութիւնը մնացին ձայն քարքառոյ յանապատի: Մեր ազգասիրական միտքը վերածուած էր մազալի մի անապատի, ուր տրամախօսութիւնը անկարող էր արմատ բռնել»:

Թուրք հիւպատոսին այս խրատն ու ազդարարութիւնը արժանի էին հայկական խանութներու վրայ փակցուելու՝ իբր ազդադիր: Կարծես սրտացաւ ու խոհեմ հայ մըն է որ կը խրատէ իր ազգակիցները, ցոյց տալով անոնց այն անդունդը, որ բացուած է թրքահայութեան առջեւ: Բայց այլեւս հայ ժողովուրդը իր ճակատագրին տէրը չէր, այլ անցեր էր բախտախնդիրներու եւ անդիտակից հայ մամուլին ձեռքը:

Նորէն խօսք տանք Աքիայի նախկին աքսորականին, որ մասը դնէ պատմական իրականութեան վրայ, ցոյց տալով թէ մինչեւ ու՞ր կընան հասնիլ պոռոտախօսութիւնն ու փառամոլութիւնը:

«Միակ կամաւորական շարժումի երեւոյթը չէր որ հայկական ցեղի հակաթրքութիւնը կը ցուցադրէր: Զէնք կրելու անգիտակ եւ անյօժար ազգասէրները, կովկասէն մինչեւ Ամերիկա, սկսան իրենց մեղմաբարբախ գրիչներով եւ գիրաշարժ լեզուներով արձակել փոռն քառային ուղիներ Օսմանեան կայսրութեան վրայ եւ սպառնալ նորա կործանումը: Մի այնպիսի ժամանակ՝ երբ բոլոր պատերազմիկ պետութիւնները արտասովոր ջղային վիճակի մէջ էին, երբ ամենաթերեւ թշնամական արտայայտութիւններին կարեւորութիւն կը տրուէր եւ երբ ամէն ինչ կ'իմացուէր եւ ուշադրութեան կ'առնուէր ամէնուրեք հաստատուած պետական խիստ գրաբնութեան միջոցաւ: Թուրքի ո՛չ

մէկ պատերազմիկ իրական թշնամիի մամուլն այնպէս նախատական եւ սանձարձակ լեզու չէր գործածեր նորա դէմ, ինչպէս կը գործածէր դիւագնաց եւ անպատասխանատու հայը ոչ միայն թուրքի այլ եւ հաւասարապէս Բուլղարիոյ եւ Գերմանիոյ դէմ:

Ամերիկայի մէջ ուր ազգային բախտախնդրութիւնն ունի ընդարձակ ասպարէզ եւ աւելի յաջող առիթներ, մի հայ եպիսկոպոս եւ աշխարհական 1914ի Նոյեմբերին միասնաբար նամակներ գրեցին Վաշինգտոնի անգլիական եւ ռուսական դեսպաններին առաջարկելով 10.000 ամերիկահայ կամաւորներ տալ Թուրքիոյ դէմ կռուելու համար, թէ եւ իսկապէս իրենց տրամադրութեան տակ չունէին եւ ոչ մէկ տրամադրելի կամաւոր եւ չպիտի կարենային նարել 10 նշմարիտ կամաւորներ, որոնք գիտակցաբար եւ պատրաստակամ լինէին երթալու եւ թուրքի հրացանէն գնդակահարուելու: Եւ իրենց այդ անհեթեթ նամակները հրատարակել տուին ամերիկեան թերթերի մէջ պարզապէս ի ցոյցս մարդկան եւ ի փառս իրենց անուանց:

Յանուս հայրենասիրութեան կատարուած այս ողբերգական խեղկատակութիւնները մինչ մէկ կողմէն կը խայտացնէին շատ դիւրահաւան երիտասարդների ունայնամտութիւնը, միւս կողմէ, սակայն, կը սաստկացնէին կատաղութեան թոյնը թուրքի սրտին մէջ իւր նիւրանների տակ ընկած հայ ժողովրդեան դէմ» (տե՛ս ՏՕՆԱՊԵՏԵԱՆ, Նոյն, էջ 477-478):

Ինչպէս կը տեսնուի այս փաստաթուղթէն՝ ամերիկահայ անպատասխանատու դէմքերը հարազատ ցոլացումն էին բախտախնդիր եւ փառամոլ Արամ Թուրապեանի տիպին, որ դեռ պաշտօնական Ֆրանսայէն բարիք մը չտեսած, խանդավառ եւ գլուխը կորսնցուցեր էր հրատարակելով իրեն ծանօթ մեծածախս մատեանը, որուն էջերը զարդարաբեր էր ֆրանսացի պետական եւ մտաւորական դէմքերով, հրատարակելով անոնց սնամէջ հայասիրական նամակները, իբր պատասխան իր նոյնքան չողոքորթական դիմումներուն, որպէսզի առիթը ստեղծէ ցուցադրելու իր եւ իր գինակիցներու նկարները:

Ամերիկայի մէջ կամ այլուր՝ կային շատ մը խելքը գլուխ մարդիկ, որոնք թրքական միտքը ուսումնասիրած ըլլալով, կը տեսնէին թրքահայերուն բնաջնջման ուրուականը, բայց այնպէս մը բռնուած էին Գէորգ Ե. Կաթողիկոսի ափին մէջ, որ մեղք կը համարէին անոր կամքէն չեղելու:

Ասոնց անթերի տիպարներէն մէկն էր, ինչպէս տեսանք, Յարութիւն Մկրտիչեանը, որ Լոնտոնի խորհրդակցական ժողովին մէջ դռնը էր:—

«Բաւական է որքան խարուեցանք այս խարդախ անգլիացիներէն. այլեւս մտիկ պիտի չընենք անոնց խորհուրդներուն: Ինչ որ կարողիկոսը մեզի կը հրամայէ ա՛յն պիտի ընենք, ինչ որ ռուս կառավար-

րութիւնը մեզի խորհուրդ կու տայ, անոր միայն պիտի հետեւինք: Թող երթայ տասն հազար հայ ալ կոտորուի, բայց ռուսի ձեռքով ազատինք»:

Եւ Տօնապետեանը, ժողովականներէն մէկը, իրաւամբ կը գրէ. — «Իմ հանգուցեալ բարեկամի այս տեսակի ազգասիրական հոգեբանութիւնը միայն անոր յատուկ չէր: Մեր ժամանակակից այն բոլոր ազգասերները, որոնք Հայաստանի ազատութեան սիրոյն համար պիտի տատամնէին գոհել իրենց նկոյթը, ամենայն վեհանձնութեամբ պատրաստակամ են եղած թրքական կացիմի եւ սուրի առջեւ նետել եւ յօշոտել տալ տասնեակ հազար հայ արարածներ՝ վասն ազատութեան Հայաստանի, մի Հայաստան, ուր յոյս ունէին ապա իրենք քաղաւորել»:

Երբ ա՛յս էր ազգասիրական բորբոքումը, այլեւս զարմանք չէ որ թուրք հիւպատոսին խրատն ու ազգարարութիւնը մնային «ձայն բարբառոյ յանապատի»: Այդ ձայնէն մենք ունեցանք միայն պատմական զարհուրելի թուականի մը ճշտումը: Հիւպատոսն արդէն գիտէր թէ թրքահայ ժողովուրդի բնաջնջման դիւային ծրագիրը արդէն պատրաստուած էր եւ կը սպասուէր յարմար առիթին՝ գործադրութեան դրուելու համար:

Այս բանը գիտէր նաեւ ազատարար Ռուսիոյ «ձեր աղուէս»ը, եւ կ'աշխատէր որ ո՛չ մէկը ապրի թրքական կացիներն եւ սուրին հարուածէն:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶՔԻ ՓՈՒՇ

Ձարական դիւանագիտութեան աչքի փուշը Դաշնակցութիւնն էր, մանաւանդ Թուրքիոյ զաշնակցականները, որոնք ոտքով-գլխով չէին ինկած անոր թակարդին մէջ, ինչպէս ինկեր էին Գէորգ Կաթողիկոսը, իրեն մտերիմ խորհրդական եպիսկոպոսները, եւ Թիֆլիսի ազգային Բիւրոյի անդամները, որոնց մեծամասնութիւնը կը կազմէին միլիոնատէր եւ քաղքենի (բուրժուա) դասակարգի մարդիկ:

Ձարականութիւնը մոռցած չէր, ինչպէս ըսինք, Դաշնակցութեան պաշտօնաթերթին նախատական յորջորջումը, «Թիւրքիայում՝ սահմանադրական ազատութիւններ, Ռուսաստանում՝ ամենաբարբարոս բռնակալութիւն»: Կոմս Վորոնցով-Դաշկովն ալ չէր մոռցած իր հասցէին ուղղուած «հրէշ» յորջորջումը:

Այժմ, ձարական դիւանագիտութիւնը ուզեց լիուլի վրէժ հանել այն կազմակերպութեանն, որու սուրբերը ժամանակ մը այնչափ սարսափ պատճառներ էին իրեն, եւ յատուկ պատգամաւորներու միջոցով ուզեր էր խափանել կամաւորական գունդերու կազմակերպութիւնը, որ Իթթիհատի համար կատգեցուցիչ փաստ էր:

Թէևս Վորոնցով-Դաշկովի դիւանագիտական խաղերով՝ բանտերու մէջ նետուած դաշնակցականները բանտէ արձակուեր էին, սակայն ձարական վարչաձևեր միշտ պահպաներ էր արհամարհանք, չարակամութիւն, նոյնիսկ դէպի Ռուսաստանի դաշնակցականները, այնպէս որ ժանտարմական վարչութիւնը գաղտնի կը հետապնդէր այն դաշնակցականները, որոնք իբր թէ գաւառներու մէջ կը շրջէին կամաւորներ հաւաքելու համար:

«Հայաստանի յեղափոխական քանգարանում, կը գրէ Լէօ, մի ժամանակ պահուում էր ազգային Բիւրոյի ջանքերով հրատարակուած կամաւորական այլոսի այն օրինակը, որի մէջ ժանտարմական վարչութիւնը նշանակել էր իւրաքանչիւր խմբապետի պատկերի շուրջը թէ նա ինչ քրեական յանցանքների մէջ էր մեղադրուում. օրինակ յայտնի խմբապետ, «դաշնակցական Խնչոն», որ սպաննուել էր պատերազմի մէջ, անուանուած էր աւագակ»:

Եթէ այս վատ արհամարհանքը՝ քաջ գիտնորականի մը դէմ, որ իր արիւնը թափեր էր Ռուսաստանի համար, ապա ինչպիսի չարակամութիւն դէպի Թուրքիոյ դաշնակցութիւնը, որուն ուղղամտութիւնն ու թրքասիրական կոչերը խոռովեր էին ձարական դիւանագիտութեան քունը:

**ՓՈՇԻՆԵՐՈՒ ՏԱԿ ԾԱԾԿՈՒԱԾ
ՀԱԿԱՂԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ**

Եթէ ուսական դիւանագիտութեան աչքի փուշը Դաշնակցութիւնն էր, դաշնակցութեան աչքի փուշն ալ ձարականութիւնն էր: Առաջինը, հակառակ Պոլսոյ իր գեապանին թափած ճիգերուն, չէր յաջողած Թուրքիոյ Դաշնակցութիւնը Ռուսիոյ ձեռք գործիք դարձնել շահագործելու համար անոր ազդեցութիւնն ու ոյժերը: Եւ Դաշնակցութիւնը, մանաւանդ անոր ողջամիտ մասը, միշտ ոխերիմ թշնամի մնաց ձարականութեան, որ եթէ համաեւրոպական պատերազմէն յաղթական դուրս գար, հայ ժողովուրդին առջև պիտի գոցէր ազգայնութեան ամէն ճանապարհը:

Ձարական դիւանագիտութիւնը արթուն կը հսկէր Դաշնակցութեան վրայ, անկէ լիուրի վրէժ հանելու համար: Անիկա շատ լաւ գիտէր որ իր նենգաւոր խաղերու երեսէն, Թրքահայաստանի մէջ պիտի պատահին այնպիսի սարսափելի ջարդեր, որոնց քով համիտեան կոտորածները պիտի խաւարին:

Անհրաժեշտ էր իթթիհատը թշնամացնել Դաշնակցութեան հետ, որպէսզի այդ արեան կոհակներուն մէջ խեղդուին նաեւ դաշնակցականները:

Եւ ահա օր մը, Թիֆլիսի մէջ կը տպագրուէր կովկասեան գիտնորական շրջանի տպարանին մէջ, «Յոյժ գաղտնի» վերտառութեամբ պաշտօնական զեկուցում մը, որ փոխարքայական պալատը զրկեր էր 6 կամ 7 տարի առաջ Վանի ուսական հիւպատոս՝ Մայիւսկին:

«Այս գեկուցումին մէջ նա ապացուցում էր, կը գրէ Լէօ, թէ քիւրֆահայերի գլխուն եկած դժբախտութիւնների միակ պատճառը դաշնակցութիւնն է: Փառաքանելով թրքահայ գիւղացուն իր անմամն աշխատասիրութեան համար, հիւպատոսն այդ մեծ աշխատաւոր գանգուածը ներկայացնում էր գոհ դաշնակցական արկածախնդրութիւնների եւ նկարագրում էր թէ ինչպէս, իր աչքի առջեւ, տարիների ընթացքում, հարուստ ու ծաղկած գիւղերը վերածուեցին աւերակների, որոնք փռուած էին անապատներում:

Հիւպատոսը քննելով 1905-1906 թուականների հայ-թրքական ընդհարումների հետեւանքները, գտնում էր որ կովկասեան դաշնակցականներն են եղել այդ արիւնահեղութիւնների պատճառները, իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար»:

Ձարական հայատեաց քաղաքականութեան ներկայացուցիչը շատ լաւ գիտէր թէ թրքահայ գիւղացիութեան գլխուն եկած դժբախտութիւններու դրդապատճառը ոչ թէ հնչակեան - որուն անուան յիշատակութիւնը չարամտօրէն ծածկած է - եւ դաշնակցական կուսակցութիւններուն արկածախնդրութիւններն էին, այլ եւրոպական խարդախ ու խարեքայ դիւանագիտութիւնը, որուն երկու փայլուն ներկայացուցիչները, հայերու «քարեացակամ» կոմս Իգնատիւրը, եւ հայ գիւղացիութեան տառապանքներուն վրայ «լացող» լորտ Մալիւսրիին էր, Անգլիոյ արտաքին գործոց նախարարը, որոնք հայ ժողովուրդին վիզէն կախեցին 16րդ եւ 61րդ յօդուածները իբր ճակատագիր, մեծագոյն չարիքը՝ միջազգային դիւանագիտութեան մէջ, որ բնաջնջող սուրի տակ կը դնէր ամբողջ թրքահայ ժողովուրդը:

Մայիւսկին չէր կրնար չգիտնալ թէ իր աչքերուն առջեւ, տարիներու ընթացքին մէջ, հարուստ ու ծաղկած գիւղերը, վերածուած աւերակներու, փռուած անապատներու մէջ, որոնց վրայ ինքը կողորդելուս արցունք կը թափէ, զգուելի գործն էր Ձարին, որ հայ հոգեւորականներու լեգուով կը կոչուէր «աստուածամամն» եւ «քրիստոսամամն» թագաւոր, եւ որ զրկախառնուած էր մահմետական սուլթանականութեան հետ, դառնալով այս սարսափելի գործին մէջ, խորհրդատու եւ քաջալերիչ՝ հայկական համատարած կոտորածներու:

Կոտորուած եւ յետին թշուառութեան մատնուած հայ անմեղ գոհերուն թիւը կը հասնի 300.000ի: Եւ անոնք գետին կը փռուէին հնչակեան կուսակցութեան շրջանին, երբ տակաւին Դաշնակցութիւնը հրապարակ իջած չէր:

Այս վերջինին մեծագոյն ցոյցը ուղղուել էր ո՛չ թէ Թուրքիոյ դէմ, այլ եւրոպական մեծ պետութիւններուն դէմ, ասիկա Օսմանեան զրամատունը օղը հանելու ցոյցն էր, որպէսզի քնացած կուռքերը շարժին եւ բարենորոգումներու ծրագիրը գործադրել տան:

Մենք արդէն գիտենք որ այստեղ ալ ցցուած է «Քրիստոսամամն» թագաւորին՝ Կ. Պոլսոյ ղեսպանատան առաջին թարգման՝ Մաքսիմովի դէմքը, իրաւամբ անուանուած «նարպիկ ու սրիկայատիպ դիւանագէտ»:

Ան գիտէր որ իր կառավարութեան զաղտնի զրամով, ոււմբերով եւ ատրճանակներով դիմուած քանի մը տաք զլուխ կովկասցի դաշնակցականներ, որոնք միանալով քանի մը նոյնքան տաք զլուխ թրքահայ դաշնակցականներու, օր ցերեկով մտնելով զրամատունը, սպառնացին օղը հանել, եւ որպէսզի ստիպեն զրամատէր Անգլիան եւ Ֆրանսան միջամտելու, խոստացուած բարենորոգումները գործադրել տալու համար: Հազիւ թէ ահարեկիչները, Մաքսիմովի միջամտութեամբ, քարափը ուղղուեցան, մայրաքաղաքէն հեռանալու համար, անմիջապէս կատղած մոլլանները եւ թուրք մոլեռանդ ամբոխը բիրերով յարձակեցան անպաշտպան ու անզէն հայերու վրայ, փռելով վեց-եօթը հազար դիակներ Կ. Պոլսոյ փողոցներուն մէջ: Զարգուեցան գլխաւորապէս դաւառներէն եկած հայ բանուոր զիւղացիները, որոնք արդէն ձարական կառավարութեան մեղսակցութեամբ՝ երկրի մէջ կը ջարդուէին:

Վանի ուս հիւպատոսը շատ լաւ գիտէր թէ օրեր առաջ՝ ջարդար բիրերը պատրաստուել էին Մաքսիմովի եւ կարմիր Սուլթանի միաձայն հաւանութեամբ:

Մնա՞ց ծածուկ բան մը որ չլուսաբանէ հայ անմեղ արեան պատասխանատուները:

Ոչինչ:

ԿԵՂՄԻՔԻ ՔՕՂԸ ՎԱՐ ԱՌՆՈՒԱՄ

Բայց կեղծիքի ու ստութեան միջնորտը, որով համակուած է Վանի ուս հիւպատոսին ղեկուցապիրը, ա՛յդ է որ ան քննելով 1905-1906 թուականներուն հայ-թաթարական ընդհարումներուն հետեւանքները, գտեր էր որ Կովկասի մէջ ալ դաշնակցականներն են եղած այդ արիւնհահեղութիւններուն պատճառները իրենց քաղաքական նպատակներուն հասնելու համար:

Մատերնիս ղնելով այդ երկու թուականներուն վրայ, կը գտնենք որ այդ արիւնհահեղութիւններուն բուն պատճառներն եղեր էր ձարական բռնապետութիւնը, որ իր գոյութեան պատուանդանը ըրեր էր

ազգայնական մոլեռանդութիւնը, սկզբունք մը, որ զահալիժօրէն կը տանէր դէպի վայրենի ուուսացում եւ դէպի անդունդ եւ անդադար հալածում անըրկովկասեան երեք ազգերու դէմ:

Առայժմ, մէկ կողմ թողելով վրացիներն ու թաթարները, ուս դիւանագիտութիւնը իր ամբողջ ոյժով ինկաւ հայերու վրայ, իբր յեղափոխական եւ անջատողական տարրի մը, իբր հարուստ եւ յառաջադէմ ժողովուրդ մը, որ ունէր աւելի ազգային գիտակցութիւն: Անոր դէմ կիրարկեց հալածանքներու շարք մը:

Այս հալածանքները զագաթնակէտին հասցուց Կովկասի փոխարքան՝ Իշխան Գալիցին, որ հայերուն հանդէպ ունեցած իր ատելութիւնը թունաւոր ու մոլեգին կիրք մը դարձուցած էր: Իր ջանքերով փակուեցան հայկական դպրոցները եւ կրթական ու մշակութային հիմնարկութիւնները: Իսկ երբ, 1903ի ամառը, հրատարակուեցաւ ձարական կալուածներն ու գումարները եւ սկսան ժողովրդական ցոյցերը, տեղի ունեցան ընդհարումներ կառավարական զօրքերու հետ, թափեցաւ արիւն:

Կրօնասէր հայ ժողովուրդը վիրաւորուած իր նուիրական զգացումներուն մէջ, ցնցուեցաւ համօրէն եւ մէկ մարդու պէս ոտքի կանգնեցաւ, ինչպէս ըրեր էր 1500 տարի առաջ, սասանեան բռնակալութեան դէմ:

Անգէն ու անպաշտպան, եւ ուստի բնական մղումով՝ բնազարբար, հայ ժողովուրդը եւ քաղքենի ու եկեղեցական հարուստ հասարակութիւնը վագեցին Դաշնակցութեան դիրկը եւ անոր պաշտպանութիւնը փնտնեցին:

Կագմակերպեցին ընդարձակ չափերով ինքնապաշտպանութիւն, ղնելով Դաշնակցութեան տրամադրութեան տակ ահագին զրամական միջոցներ, գէնքեր ձեռք բերելու եւ ուրիշ ուղղմական պատրաստութիւններ տեսնելու համար:

Արդարեւ, ուսահայ ժողովուրդին առջեւ դրուած էր կեանքի եւ մահու նշանակութիւն ունեցող հարց մը.՝ կա՞մ պէտք էր դիմադրել ձարական բռնակալութեան դէմ եւ կա՞մ պէտք էր ձուլուիլ ուսական ովկիանին մէջ:

Դաշնակցութիւնը անխնայ ահաբեկումի միջոցով պայքարեցաւ կովկասեան եւ ուս դարանակալութեան դէմ. սպաննուեցան բազմաթիւ մանր եւ խոշոր պաշտօնեաներ:

Ուս դիւանագիտութիւնը այդ ինքնապաշտպանութիւն նկատեց կռուի քարոզ եւ ձեռնոցը վերցուց, ու վճռեց իր արեան մէջ խեղդիլ ժողովրդական շարժումը: Բայց ի՛նչպէս ընել. կար հասարակաց կարծիքը, որ միեւնոյն աղտոտ ջուրով պիտի լուար քրիստոնեայ եւ քաղաքակիրթ ձարը, ինչպէս լուացեր էր մահմետական սուլթանի մը ջարդերը՝ իր անգէն ու անպաշտպան հպատակներուն դէմ:

Ռուս դիւանագիտութիւնը միջոցը գտաւ այդ զգուշի դործը կատարելու համար: Ան ձեռք առաւ թաթարները, որոնք խորամանկութեամբ ծածկելով իրենց ոռուստեայ գզացումները, իրենք զիրենք ցոյց տուեր էին իբր «ամենախաւատարիմ ձարական եպատակներ»: Ռուս դիւանագիտութիւնը հաւատաց այդ բանին, ձեռքի տակէ զինեց զանոնք, համոզելով որ ոչնչացնելով դաշնակցականները եւ անոնց վրայէն հայ ժողովուրդը, մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլան եւ վերջ զբաժ հայգուկային խումբերու:

Այսպէս, երբ ամէն ինչ կազմ ու պատրաստ էր, 1905ին Բագուրի մէջ սկսաւ հայ-թաթարական կոտորած, որ իր բոցերով եւ արիւնով բռնեց արեւելեան Անդրկովկասի այն բոլոր տեղերը, ուր հայ եւ թաթար միասին կ'ապրէին: Մոլեզնոտ պատերազմ մըն էր երկու ժողովուրդներու միջեւ, եւ որ տեւեց մէկուկէս տարիէն աւելի:

Երբ արեան կոհակները կը հոսէին այլեւս առատօրէն, ձարի «Բրիստոսաւեր» զօրքը փոխանակ վերջ դնելու եղբայրասպան արիւնահեղութեան, չհզոբութիւն կը պահպանէր, այնպէս որ կարելի էր աչքին առաջ երկաթուղիի կառքէն դուրս քաշել հայերը եւ տեղւոյն վրայ, զօրաբաժինի աչքի առջեւ մորթել զանոնք:

Սակայն, ռուսական դիւանագիտութիւնը սխալեր էր իր հաշիւներուն մէջ: Հայ թաթարական պատերազմներուն չսպասեցին դաշնակցականները, այլ ընդհակառակն, շատ ուժեղացուցին զայն: Ան աննման քաջութեամբ յաղթանակեց:

Այդ անսպասելի յաղթանակով՝ Դաշնակցական Կուսակցութիւնը ստացաւ մեծ ժողովրդականութիւն: Սակայն երկու թշնամի դաշնակիցները - ռուս դիւանագիտութիւնն ու թաթար բեկութիւնը - չմոռցան իրենց պարտութիւնը եւ պահեցին իրենց ռիսն ու վրէժը՝ ապագայի յարմար ժամանակներուն:

Ահա այս էր մերկ իրականութիւնը, որ Վանի ռուս հիւպատոսը, պատմական դէպքերը խեղաթիւրելով, ուզեց մոլորեցնել հասարակաց կարծիքը, հայ ազգային գոյութեան պահպանման կոիւնները վերադրելով Դաշնակցութեան «Բաղախական նպատակներուն»: Այս քօղարկեալ բառերով՝ ան ըսել կ'ուզէր թէ անիկա պայքարի մէջ մտեր էր պարզապէս տապալելու համար ձարական բռնակալութիւնը:

Մեզի կը մնայ այժմ բանալ դադտնիքին քօղը՝ ինչո՞ւ համար դադտնի գեկուցադիրը 6-7 տարի գզրոցին մէջ ամուր փակուելէն ետք, յանկարծ լոյս աշխարհ եկաւ:

Պատճառը պարզ է: Եթէ 7 տարի ետ երթանք, կը հասնինք Միտհատեան Սահմանադրութեան հռչակման, որուն պատճառով Թուրքիոյ մէջ կը տիրէին սահմանադրական ազատ կարգեր, իսկ Ռուսիոյ մէջ «ամենաբարբարոս քոնակալութիւն», որոնց շրջանին Դաշնակցութիւնը հասած էր իր փառքի եւ հզօրութեան գագաթնակէտին:

Այժմ, այլեւս ամօթի եւ վախի շրջանն անցեր էր: Ռուսական նենգ դիւանագիտութիւնը ամէն ինչ կը կատարէր պարզ եւ հրապարակայնօրէն, ոչինչ չէին ուզած ծածկել. դադտնիքներ չուներ, ընդհակառակն, անիկա ամէն կերպ կ'ուզէր ուռեցնել, խոշորցնել այն անդունդը, որ Հայկական Հարցի վերարծարծումով եւ թրքակառուցութեան միջամտութիւններով բացեր էր, որուն մէջ գլորել պիտի տար անդէն ու անպաշտպան թրքահայ ժողովուրդը:

Անիկա սկոռայ կը կրճտէր, տեսնելով իր աչքին առջեւ դաշնակցականները, որոնց կազմակերպած ու ղեկավարած խումբերը առիւծի պէս կռուեր էին ձարական կռուավարութեան եւ թաթար ազնուականութեան գունդերուն դէմ. եւ այժմ անոնք խումբ խումբ դասալիք կ'ըլլային, թրքական ճակատին վրայ, չուզելով մեռնիլ Ռուսաստանի շահերուն համար, որ «խլեր էր իրենց ազգային եկեղեցական հարըստութիւնը, կողոպտեր էր, հացազուրկ դարձուցեր էր իրենց գիւղացիները, խլելով անոց հողերը, եւ տալով ռուս գաղթականներուն... Միթէ հարկաւոր են նորանոր ապացոյցներ, որոնցմով աւելի լաւ եւս ցոյց տրուէր թէ ռուս կռուավարութիւնը հայ տարրի ամենակատաղի թշնամիքն է»:

Վրէժի բոցը սրտին մէջ, ռուս զինուորական իշխանութիւնը կարեւոր տեսեր էր որ գեկուցումը տպագրուի եւ լայն չափով տարածուի գործող բանակի մէջ, որ հոն ալ հաստատուի ատելութիւն, թշնամական տրամադրութիւն դէպի Դաշնակցութիւնը, որուն ողջամիտ մասը սաստիկ հակառակ էր կամաւորական գունդերու կազմութեան:

Այս երեւոյթը շատ բացայայտ կերպով երեւան եկաւ մանաւանդ 1914ի վերջերը, երբ կովկասեան ճակատին հրամանատար դարձաւ սեւ հակահայկական քաղաքականութեան մը, ոչ ի հարկէ, առանց գլխաւոր հրամանատարի, այսինքն «քարեացակամ» կոմս Վորոնցով-Դաչկովի «համաձայնութեան»:

Կար ուրիշ ծանրակշիռ հանգամանք մըն ալ, որ ցոյց կու տար դադտնի գեկուցադրին հրատարակութեան չարամիտ ոգին: Վանի դէմ պիտի գործէր Սայմաստի ռուսական բանակը. այդտեղ էր՝ իր արշաւանքը սկսած հայ կամաւորական առաջին խումբը, որ թէ՛ ամէնէն բազմամարդն էր եւ թէ՛ յայտնի էր մանաւանդ իր խմբապետով, որ էր Դաշնակցութեան հետ գժտուած՝ քաջ Անդրանիկը, որ ինչպէս տեսանք, մեծ ժողովրդականութիւն ստացեր էր Սասունի երկրորդ ցոյցով:

Այս խումբի յառաջխաղացումը կանգ պիտի առնէր Վանի առջեւ, որ եւ ձախողեցաւ, որուն հետեւանքով ռուսական բանակը կամաւոր կերպով նահանջեր էր մինչեւ Ջուղա, խրախուսելու համար թուրք զօրքերը, որ անխնայ ոչնչացնեն Վասպուրականի մէջ գտնուած

դաշնակցականները, որոնք զինուած չէին, մնալով հաւատարիմ թուրք-դաշնակցական միութեան:

Միւս կողմէ, եթէ թուրք բանակը յաջողէր մտնել Կովկաս, ինչ-պէս ծրագրուած էր, թաթար բեկերը իրենց հին ոխն ու վրէժը պիտի լուծէին դաշնակցականներէն, իրենց ցեղակից թուրք զինուորներուն եւ ուսու կառավարութեան հանդիսատես աչքին առաջ մորթելով զանոնք, եւ անոնց հետ՝ կովկասահայ ժողովուրդը, իբր խռովարար եւ դաւաճան տարր:

Եւ ասոր համար էր որ ուսուական բանակները երբեք այլեւս չառաջնորդուեցան հայ զօրավարներէ, որպէսզի իրենց նախորդներուն պէս արագ եւ փայլուն յաղթանակներով սարսափ չազդեն թուրքերուն վրայ, եւ համակոտորած ջարդերու սահմանուած թրքահայութիւնը՝ տէր եւ տիրական չունենայ:

Երբ ձարական ապուշ դիւանագիտութիւնը իր մեծ ու փոքր պաշտօնեաներով իր վերջին թուղթերը կը խաղար, պատրաստելու հայ ժողովուրդի կորուստը, անդին Կ. Պոլսոյ մէջ, փրկութեան յոյս մը կը շողար, որ իրականութեան ճամբուն մէջ պիտի մտնէր, եթէ անդլօֆրանսական նենդամտութիւնը իրենց դաշնակից Ռուսաստանը կռնակէն չհարուածէր:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԳԵՐՄԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

ՎԱՆԿԷՆՀԱՅՄ՝ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԱԼ

Հակառակ ձէմալի եւ Էնվէրի ռազմաշունչ երեւոյթներուն, յանկարծ ուրիշ տեսակի գործունէութիւն մը առաջ եկաւ Կ. Պոլսոյ մէջ: 1914ի վերջերը, հակառակ որ ամէն ինչ արտաքսասպէս պատերազմական վիճակ կը պատկերացնէր, այս մայրաքաղաքը յանկարծ դարձաւ խաղաղութեան մեծ կեդրոն:

«Անգլիական նաւատորմը, կը գրէ Մորկէնթաու, յարատեւօրէն կը սպառնար Տարտակէի եւ ամէն օր թուրք զօրագունդեր կ'անցնէին փողոցներէն, շարժումներ, որոնք չէին գրաւեր գերման դեսպանին ուշադրութիւնը, որովհետեւ ան մէկ բան միայն կը խորհէր, միակ բան մը. — այս կատաղի ցոռոմաբանը յանկարծ խաղաղութեան առաքեալի մը փոխակերպուեցաւ: Ան տեսաւ հիմա թէ մեծագոյն ծառայութիւնը գոր կրնար իր կայսեր մատուցանել, իր պաշտօնին բերումով, ուրիշ բան չէր եթէ ոչ վերջացնել պատերազմը, այն տեսակ պայմաններով, որոնք Գերմանիան ուժասպառութեան, նոյնիսկ կործանումէ ազատ պահէին, եւ ձեռք անցընել կարգադրութիւն մը՝ որ իր երկիրը պիտի մտնէր ազգերու ընկերութեան մէջ»:

«Կատաղի ցոռոմաբան»ը սկսեւ էր ամերիկեան ղեկավարին ախանջը լեցնել՝ ըսելով. — «Խոհեմ գորավար մը երբ կը սկսի իր կռիւին, միշտ ձեռքի տակ ունի իր նահանջի յատակագիծերը, այն պարագային համար, երբ պիտի յաղթուէր. սկզբում մը որ գէնքի տակ գտնուող ազգէ մը կը կիրարկուի: Պատերազմը մէկ ստուգութիւն միայն կ'ընծայէ, սա՛ թէ ան պիտի վերջանայ օր մը: Այսպէս, երբ մեքէ կը պատրաստենք մեր կռուի յատակագիծերը, պէտք է նկատի ունենալ նաեւ թշնամութեանց դադարումը»:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՂՁԱՆՔԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Արդարեւ, Գերմանիան հարկեցուցիչ պատճառներ ունէր բաղձալու թշնամութեանց դադարումը: Գերմանիան, ինչպէս տեսանք, միայն կարճ տեւողութեամբ պատերազմի մը համար պատրաստուած

էր, որովհետեւ հաշուած էր երկու կարճ շրջաններու մէջ, որոնք առ առաւելն վեց ամիս կրնային տեւել, ջախջախել Ֆրանսան եւ Ռուսիան: Բացայայտ էր թէ ձախողած էր այդ ծրագիրը եւ անհնար էր որ այլեւս Գերմանիան կարենար պատերազմը շահիլ:

Օր մըն ալ, գերման զեսպանը՝ ամերիկեան զեսպանին ըսեր էր. «կայսրութիւնը մեծ սխալ մը պիտի գործէր, եթէ պայքարին մէջ յամառէր մինչեւ ուժասպառ ըլլալը, որովհետեւ ասիկա պիտի նշանակէր վերջնական կորուստը իր գաղութներուն եւ առեւտրական նաւատորմիդին, ինչպէս եւ Բայքայումը իր վաճառականութեան»:

Արդէն Օգոստոս ամսուան մէջ ալ ըսեր էր. «եթէ մեքն երեսուն օրուամ մէջ Փարիզը չառնենք, յաղթուած ենք», այնպէս որ Մառնի ճակատամարտէն ետքը, գերման զեսպանին վարժունքը փոխուեր էր. ան ջանք չըրաւ ծածկելու այն իրողութիւնը, թէ ամէն ինչ՝ որ իր հայրենակիցները կրնային յուսալ, մաշումի տաժանելի պատերազմ մըն էր, որ բացարձակ կերպով սպարդին խաղաղութեան մը պիտի յանգէր:

«Այս անգամ, ըսեր էր ան, սխալ մը գործեցինք, երկարածիք պայքարի մը համար չպարեմաւորուելով, յառաջիկայ անգամուն ալիւս նմանօրինակ սխալ մը պիտի չգործենք. բաւականաչափ պղինձ եւ բամպակ պիտի մթերենք, հինգ տարի դիմանալու համար»:

Կ'անցնին քսան տարիներ: «Քառակուսի գլուխ» Վիլհելմ Բ-ի արժուին վրայ պիտի բազմի ուրիշ «քառակուսի գլուխ» մը, Ատուլֆ Հիթլէր, որ Գերմանիոյ հետ միասին աշխարհը հուրի եւ սուրի պիտի մատնէ, եւ պիտի գործէ «յառաջիկայ անգամուն ալ նմանօրինակ սխալներ»:

Վանկէնհայմ ուրիշ պատճառ մըն ալ ունէր անմիջական խաղաղութիւն մը փափաքելու համար, պատճառ մը, որ պայծառ լոյսի տակ կը զնէ գերման զիւանդդիտութեան լրբութիւնը: Այն կանխապատրաստութիւնները, որոնք Թուրքիան կը տեսնէր Եգիպտոսի նուաճումին համար, գերման զեսպանը մեծապէս մտահոգ կ'ընէին: Եւ ան ստիկա կը յայտարարէր անկեղծօրէն եւ շնականօրէն, առանց փոյթ ընելու թէ Թուրքիան իր սափասուտերով պատերազմի բոցերուն մէջ նետակէն ետքը, գանրիկա կռնակէն դաշունահար կ'ընէր...:

«Սկիզբը, ես կը կարծէի, կը զրէ Մորկէնթաու, թէ Վանկէնհայմ կը վախճար որ իր զինակիցը չյաղթուի. բայց ան ինծի յայտնեց թէ իր բուն վախը այն էր թէ Թուրքիան կրնայ նաեւ յաղթել: Եգիպտոսի մէջ թրքական յաջողութիւնը պիտի հակասէր կայսեր ծրագիրներուն, այս պարագային Թուրքիան քնականաբար պիտի անդէր խաղաղութեան խորհրդաժողովին մէջ, պահելու համար իր մեծ պետութիւնը, եւ պիտի հաշուէր Գերմանիոյ վրայ, որ օժանդակէ իր յետս պահանջումին»:

Արդ, Գերմանիոյ դիտաւորութեան մէջ չկար նպաստել թուրք կայսրութեան վերահաստատումին: Այդ միջոցին Գերմանիան կը յուսար Անգլիոյ հետ համաձայնութեան մը գալ. այս համաձայնութիւնը անտարակոյս հիմնուած պիտի ըլլար Արեւելի մէջ շահերու բաժանումին վրայ: Գերմանիան ամէն բանէ առաջ կը փափաքէր ձեռք անցընել Միջագետքը, իբր անհրաժեշտ հաստուած մը, Համպուրկ-Պաղտատ երկաթուղիի գիծին: Ասոր փոխարէն պատրաստ էր ան ընդունելու Եգիպտոսի կցումը Անգլիոյ: Այսպէս, Գերմանիան կ'առաջադրէր Անգլիոյ հետ բաժնել Թուրքիոյ երկու գեղեցկագոյն ստացումները: Ասիկա մէկն էր այն առաջարկութեանց, որոնք Գերմանիան կը հաշուէր խաղաղութեան համաժողովին ներկայացնել, համաժողով մը, որուն գումարման պահը կը ծրագրէր հիմա փութացնել Գերմանիոյ ներկայացուցիչը:

Թուրքիոյ կողմէ Եգիպտոսի նուանումը, ուրեմն, կը սպառնար այս տեսակ դիտաւորութեան մը իրականացումին դէմ: Անօգուտ բան է մեկնարանել Գերմանիոյ ընթացքին բարոյականութիւնը՝ հանդէպ իր զինակիցին: Այս քովանդակ չարայարումը հաշտ էր իր «իրապաշտ» քաղաքականութեան հետ՝ հանդէպ օտար ազգերու» (ՄՈՐ-ԿԷՆԹԱՌ, գլուխ ԺԵ., էջ 181-182):

Ուրիշ զօրաւոր պատճառ մըն ալ կար, որ Գերմանիան կը մղէր խաղաղութիւն բաղձալու: Ատիկա Տարտանէլի մէջ տիրող ծայր աստիճան իրարանցումն էր:

Կ'ըսուէր թէ Համաձայնականները նեղուցի մուտքին առջեւ 40 մարտանաւերու տորմիդ մը հաւաքեր էին, դիտաւորութիւն ունենալով ընդդիմութիւնը խորտակել եւ ներս մտնել:

Միւս կողմէ կացութիւնը աւելի եւս կը ծանրանար այն պատճառով, որ հասարակաց կարծիքն այն դադափաբը կազմած էր թէ այդ ձեռնարկը յաջողութեամբ կրնայ պսակուիլ:

«Նոյնպէս այդ ձեռնարկին հաւատացին, կը զրէ Մորկէնթաու, Վանկէնհայմը, բանակը եւ նաւատորմի գրեթէ բոլոր գերման սպաներուն կարծիքով, այդ ձեռնարկը ո'չ միայն կարելի էր այլ մանաւանդ անխուսափելի էր»:

Հասարակաց կարծիքը աւելի եւս զօրացեր էր երբ Փոն Տէր Կոյց փաշան, որ այդ վերջին տարիներուն՝ Թուրքիոյ զինուորական մարզիչը ըլլալով, աւելի քան ո'ւրեք մէկը աղէկ կը ճանչնար նեղուցին պաշտպանութեան միջոցները, եւ որով՝ անոր կարծիքը հեղինակութիւն մը ունէր, Վանկէնհայմի բեռնով Մորկէնթաուի հազորդէր էր թէ «կարելի է Տարտանէլէն քննի ներս մտնել: Եթէ Անգլիան այդ գործին մէջ պատերազմին կապուած կարեւոր գործողութիւն մը տեսնէ, կրնայ յաջողիլ 10 նաւով եւ 10 ժամէն առաջ Մարմարա ծով մտնել»:

Նոյն համոզումն ունէր նաեւ ծովակալ Սըր Ճոն Ֆըչըրը, ծովակալույթեան առաջին լորտը, ձեռնարկին յաջողութիւնը հաշուելով 12 նաւերու կորուստ մը, հաշիւ մը՝ որ շատ չէր տարբերեր առաջինէն:

Վանկէնհայմը գերման ժողովուրդին բերանն էր: «Գերման ազգարնակչութեան բոլոր դասակարգերուն մէջ, կը գրէ Մորկէնթաու, անկեղծօրէն խաղաղութիւն կը բաղձային. ակնարկները դէպի Կ. Պոլիս կը դառնային, իբր այն տեղը՝ որ այս կարգի բանակցութեանց սկզբնաւորութեան համար լաւագոյն բարեպատեհութիւնները կ'ընծայէր: Գերմանացիները համոզուած էին թէ նախագահ Ուիլսոն պատերազմի մէջ եղող ժողովուրդներուն միջեւ միջնորդ պիտի ըլլար. իրապէս, երբեք չէին խորհեր թէ այս դերը ուրիշ անձնաւորութեան մը կրնայ վիճակուիլ»:

Արդարեւ, գերման կառավարութիւնը, պատերազմի առաջին օրէն այս տեսակէտը նկատի առած էր: Պալաքեան Վարդապետը, որ այդ ժամանակ Բերլին կը գտնուէր եւ հետաքրքրութեամբ դէպքերուն կը հետեւէր, կարող էր գրել. - «մեծ յարգանք կ'ընծայուէր ամերիկացիներու, եւ ամէն ջանք կ'ընէին գերմանացիները որպէսզի սա մեծ ազգին համակրութիւնը եւ շիտակութիւնը շահին: Զի միայն Բերլինի մէջ 50.000 ամերիկացիներ կ'ապրէին այն ատեն...»:

Միակ նկատի առնուելիք կէտը կը մնար ա՛յն՝ թէ ո՞րն էր այդ ամէնէն նպաստաւոր կերպը, որով նախագահին պիտի մօտենային: Նախապատրաստական բանակցութիւնները անշուշտ տեղի պիտի ունենային Եւրոպայի մէջ գտնուող ամերիկեան դեսպաններէն մէկուն միջոցով:

«Արդ, կը գրէ Մորկէնթաու, այլեւս պատեհութիւն չունենալով թշնամի մայրաքաղաքներուն մէջ գտնուող ամերիկեան դեսպաններէն մէկուն հետ հաղորդակցելու, ուրեմն ամէն ինչ կը մղէր գայն դիմելու Թուրքիոյ ամերիկեան դեսպանին»:

ԵՐԻՏՐԱՍՏՐԻ ԹՈՒՐԻՔԵՐՈՒ ՍԱՐՍԱՓԸ

«Այն վայրկեանին, երբ համաճայնական ուժակոծումի մը առջին գրոյցները կը տարածուէին, կը գրէ ամերիկեան դեսպանը, Թուրքիան գրեթէ յուսահատ կացութեան մը մէջ էր, վախը եւ խուճապը ամէն կողմէ կը լլկէր ժողովուրդը, ինչպէս նաեւ պաշտօնական շրջանակները. այնպէս կը թուէր թէ անթիւ աղետներ պիտի թափուէին երկրին վրայ»:

Ամէն կերպով արժանի էին պաշտօնական շրջանակները վախի եւ խուճապի մատնուելու: Մինչեւ 1 Յունուար 1915, Օսմանեան կայսրութիւնը տակաւին ոչինչ ըրած էր արդարացնելու համար պատերազմի

մէջ իր մուտքը: Ընդհակառակն անիկա միայն ձախողանքներ կրած էր: Ճէմալ փաշային Եգիպտոսին տիրանալու ձեռնարկը արիւնալի եւ նուաստացուցիչ ձախողանք մը եղեր էր. միւս կողմէ, Կովկասը ոռու լուծէն ազատագրելու էնվէր փաշային փորձերը աւելի աղիտարեր պարտութեան մը առաջնորդած էին: Գերմանացիները այդ զօրակահին տուեր էին, որպէսզի թողու ոռու բանակին՝ մինչեւ Սեբաստիա յառաջանալ, ուր պարտաւոր էր հաստատել իր ընդդիմութիւնը: «Բայց էնվէր, կը գրէ Մորկէնթաու, միայն իր խելքին փչածը ընելով, խոյացեր էր Կովկասի մէջ ոռու հողեր նուաճելու նպատակով»: Բանակը հոն ամբողջովին պարտուած էր եւ երբեք իր տառապանքները վերջ չէին գտած, որովհետեւ առողջապահական սպասարկութիւնը ողորմելի վիճակի մէջ էր. բժաւոր տենդը եւ թանջը երեւան եկեր էին բոլոր բանակներուն մէջ: Մահերու թիւը հասեր էր 100.000ի. զարհուրելի պատմութիւններ շրջան կ'ընէին, մասնաւորապէս այս բանակին կրած չարիքներուն վրայ:

Նոյնպէս գիտէին թէ Անգլիան արշաւախուժմը մը կը պատրաստէր Միջագետքի համար, եւ ո՛չ մէկը կը կասկածէր անոր յաջողութեան վրայ, քանի որ քարիւղի հորեր կային, եւ Անգլիան այդ «սեւ ոսկին» կը պաշտէր, եւ ասոր համար է որ աննշան փոքրիկ բանակ մը թողլով Ֆրանսական ճակատին վրայ, խելքն ու միտքը Միջագետքի հորերուն վրայ ուղղած էր:

Ո՛չ-նուազ զօրաւոր պատճառ մըն ալ կար. Բարձրագոյն Դուռը պատերազմի յայտարարութիւն մը կը սպասէր բուլղարացիներու կողմէ, որոնք անարդել մայրաքաղաքին վրայ պիտի քաշէին, ինչ որ ճակատագրականօրէն իր ետեւէն պիտի քաշէր Յունաստանը եւ Ռումանիան:

Այլեւս դիւանագիտական գաղտնիք մը չէր թէ Իտալիան, յարմար ժամանակը գալուն՝ պիտի միանար համաճայնականներուն:

Թուրքիոյ համար սարսափ մըն ալ ա՛յն էր, որ այդ միջոցին, ոռու նաւատորմը որ ուժրակոծեր էր Տրապիզոնը, ահ ու զողի մատնելով Սեւ ծովի վրայ ապրող թուրք ազգաբնակչութիւնը, կը սպասուէր որ Վոսփորի մուտքին առջեւ յայտնուի:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳԻՒԱՆԱԳԷՏ ՄԸ՝ Կ. ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Երբ Վանկէնհայմ իր սիրտը կը բանար Մորկէնթաուի առջեւ, եւ անոր կը պարզէր գերման դիւանագիտութեան գաղտնիքները, Կ. Պոլիս ժամանեց գերման դիւանագէտ մը, Դոկտ. Րիհարդ ֆոն Գիւլման, որուն վստահացած էին դիւանագիտական մեծ առաքելութիւններ:

Պատերազմի առաջին օրերուն, Գիւլման Կ. Պոլիս եկաւ, գերման դեսպանատան խորհրդականի հանգամանքով, ֆոն Մուլթիլուսի տեղ, որ զէնքի տակ կանչուած էր: Այս ընտրութիւնը շատ բարեղէպ էր, որովհետեւ Գիւլման Կ. Պոլիս ծնած, հոն ունեցած էր իր մանկութեան տարիները, իր հայրը ըլլալով Անատոլուի երկաթուղիի ընկերութեան նախագահ: Ան կը հասկնար թուրքերը ա՛յնպէս, ինչպէս կրնան միայն անոնք հասկնալ, որոնք երկար ժամանակ ապրած են թուրքերուն հետ:

«Դիւանագիտական մարմինը, կը զրէ Մորկէնթաու, ջերմօրէն գնահատեց անոր ժամանումը: Ան իմ վրաս յարձակողական մարդու մը տպաւորութիւնը չըբաւ, այլ շատ հանելի ընկերակցի մը, որ մասնաւոր կերպով բարեկամական յարաբերութիւններ կը մշակէր ամերիկեան դեսպանատան հետ: Գիւլման մեզի համար որոշ հմայք մը ունէր, քանի որ ուղղակի նակատէն գալով, մեզի կրնար ստոյգ պատկերներ գծել. մենք ամէնքս ալ բուն շահագրգռութիւն մը կը զգայինք արդի պատերազմին պայմաններուն նկատմամբ. եւ այն մանրամասնութիւններով, որոնք ան մեզի հայրայրեաց խրամներու կարեւորութեան մասին, շատ մը յետ միջօրէներ եւ իրիկուններ ան մեզ տառապէս հմայքի մը տակ պահեց: Իր խօսակցութեան նախասիրած միւս նիւթն էր Վելք Փօլիթիւ-ը (տիեզերական քաղաքականութիւն), որուն բոլոր խնդիրները կը մանչնար նշանաւոր կերպով մը:

Մենք զինքը այն ժամանակ կարեւոր անձնաւորութեան մը տեղ չէինք դնել, եւ սակայն այն եռանդը, որ ան իր գործերուն մէջ ի յայտ կը բերէր, կը գրաւէր ամէնուն ուշադրութիւնը նոյնիսկ այդ միջոցին:

Եւ չուշացայ նշմարելու թէ հանդարտութեամբ եւ իր քաղցր կերպերով, ան մեծ ազդեցութիւն կը գործէր ամէն անոնց վրայ, որոնց կը յանախէր: Ան քիչ կը խօսէր, ուշադրութեամբ մտիկ կ'ընէր եւ տեղեկատուութեան ո՛չ մէկ միջոցին վրայէն կ'անցնէր անփութօրէն. երեսօթի նախելով, Գիւլման՝ Վանկէնհայմի ամէնէն աւելի մտերիմ գաղտնակիցն էր եւ պաշտօն ունէր դեսպանին եւ արտաքին գործոց նախարարութեան միջեւ հաղորդակցութիւն պահպանելու» (ՄՈՐԿԷՆԹԱՈՒ, *զուրա ԺԵ.*, էջ 133-134):

Դեկտեմբերի կէսերուն, ֆոն Գիւլման նորէն Բերլին մեկնեցաւ, ուր մնաց շուրջ երկու շաբաթ: Իր վերադարձին, 1915 Յունուարին, զգալի կերպով փոխուեցաւ Վանկէնհայմի վերաբերմունքը:

«Մինչեւ այդ վայրկեանը, կը զրէ ամերիկեան դեսպանը, խաղաղութեան բանակցութիւններուն վրայ խօսած էր, աւելի կամ նուազ ընդհանուր կերպով մը հիմա ան ձեռք առաւ իւրաքանչիւր խնդիրը

որոշ կերպով: Եւ հասկցայ թէ Գիւլման Բերլին կանչուած էր շատ սահմանաւորեալ նոր երահանգներ ստանալու համար, որոնց համաձայն Վիլիելմ Բ. ի ներկայացուցիչը պետք էր շարժիլ ասկից ետքը»:

Իրապէս, որպէսզի կայսեր ներկայացուցիչը չխաւարի Գիւլմանի աստղին առջեւ, բանակցութեանց շրջանին, «սակաւախօս» դիւանագէտը ինքզինքը երկրորդական դիրքի մը վրայ կը բռնէր. նոյնիսկ ան ներկայ գտնուեցաւ ամէնէն կարեւոր տեսակցութիւններուն, որոնք տեղի ունեցան Մորկէնթաուի եւ Վանկէնհայմի միջեւ՝ առանց խօսակցութեան խառնուելու, գոհանալով միայն, ինչպէս սովորաբար, հետաքրքիր ստորակարգեալի մը դիրքովը, որ հանդարտօրէն մտիկ կ'ընէ:

ՍԱՐՄԱՓՅՑՈՒՑԻԶ «ԱՐՄԱՏԱՆ» (ARMADA-ՆԱԻՍՏՈՐՄԻՂ)

Երիտասարդ թուրքերուն քունը փախցնողն էր բրիտանական հզօր «Արմատա»ն, որ կը մօտենար՝ դիտաւորութիւն ունենալով քանդել քաղաքին պաշտպանութեան միջոցները եւ տիրանալ անոր:

«Այդ միջոցին, կը զրէ ամերիկեան դեսպանը, ոչինչ կը դողացնէր թուրքերը այնքան, որքան բրիտանական նաւատորմը, որուն բազմաթիւ դարերու ընթացքին տարած յաղթանակները, յաջորդական, հմայած էր իրենց երեսկայութիւնը. այդ նաւատորմը գերբնական բան մը կ'երեւէր թուրքերուն, միակ ջախջախիչ ոյժը, որուն դէմ անկարելի էր ամէն պայքար»:

Յետոյ դեսպանը կ'աւելցնէ.— «Թալաթ անձամբ ինծի ըսաւ որ եթէ Անգլիան պատրաստ ըլլար մէկ քանի նաւեր գոհելու, ըլլալիքը բացայայտ էր. ան աւելցուց թէ Եգիպտոսի արշաւանքին նշմարիտ շարժառիթն էր ուշադրութիւնը տարբեր կողմ դարձնել, եւ ասով հրուանդանին դէմ յարձակումի մը առաջիք առնել»:

ԱՆԳԼՈ-ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԻՍՏՈՐՄԻՆ ԱԶԴԱՄ ՍԱՐՄԱՓԸ

«Վանկէնհայմ ինծի հաղորդեց, կը զրէ ամերիկեան դեսպանը, թէ վայրկեանը, Յունուար 1915, սփանչելի էր վերջ դնելու պատերազմին»:

Իտալիան տակաւին չէր մասնակցեր կռուին, հակառակ անոր Վանկէնհայմ ամէն պատճառ ունէր կարծելու թէ Իտալիան զարնան պիտի սկսէր պատերազմի: Եթէ Բուլղարիան եւ Ռուսիան տակաւին մեկուսի կը մնային, ոչ մէկը սակայն կ'անգլտանար թէ իրենց սպասողական ընթացքը յաւիտենապէս պիտի շտեկէր:

Ֆրանսան եւ Անգլիան կը պատրաստուէին իրենց առաջին «գարնանային յարձակողականիմ»։ Գերմանները կը վախնային թէ այդ յարձակողականը կրնայ յաջողութեամբ պսակուիլ։ Բրիտանական եւ ֆրանսական մարտանաւերը հաւաքուած էին Տարտանէլի առջեւ, եւ մեծ սպայակոյտը, ինչպէս եւ Կ. Պոլսոյ բոլոր զինուորական եւ նաւային մասնագէտները, համոզուած էին թէ Համաձայնական նաւատորմները կրնային խորտակել ընդգլխով իւրերը եւ նեղուցէն մտնելով, գրաւել քաղաքը։

«Թուրքերուն մէկ մասը, կը գրէ Մորկէնթաու, արդէն յոգնած էր պատերազմէն, եւ Գերմանիան կը կասկածէր անոնցմէ թէ անջատ հաշտութիւն մը կրնային կնքել։ Այնպէս ինչպէս որ ես յետոյ հասկցայ, անգամ մը որ զինուորական կացութիւնը Գերմանիոյ համար սպառնական թուէր, ան խաղաղութիւն կ'ուզէր. ընդհակառակն, եթէ պայմանները բարոյփութիւն, անմիջապէս ռազմաշունչ կը դառնար վերստին։

Երբ սատանան հիւանդանայ, արեղայ դառնալու կ'ելլէ, երբ սատանան բժշկուի, ալ ուր թէ ան արեղայ ըլլալու ելլէ», կ'ըսէ առածը։ Սակայն, եթէ Վանկէնհայմ մեծապէս կը կարօտէր խաղաղութեան՝ 1915ի Յունուարին, ինքնին հասկնալի է թէ այդ խաղաղութիւնը վերջնական չէր նկատեր. ապացոյցն այն էր որ իր կառավարութիւնը ո'չ մէկ ցաւ կը յայտնէր իր ռեիթներուն նկատմամբ»։

Յայտնի էր որ Գերմանիոյ ուղածը տեսակ մը զինադադար էր, որովհետեւ իրենց բաւական չէին ցորենի, պղնձի եւ բամպակի ամբարները։ Անոնք անհրաժեշտ էին՝ կարենալ երկար պայքար մղելու համար։

Նշանակալից են ամերիկեան ղեսպանին այս խօսքերն ալ. «Ես կը գտնեմ այն ծանօթագրութիւններու մէջ, ուր մեր խօսակցութիւնները արձանագրած եմ, յետագայ բացատրութիւններուն պէս խօսքեր, գոր Վանկէնհայմ միշտ իր բեռնէն կը փախցնէր. «յառաջիկայ պատերազմը», «յառաջիկայ անգամ», եւ մարգարեական ռզուով կ'աւելցնէր. «ապագան մեզի կը վերապահէ աւելի մեծ անբաժութիւն մը, աւելի մեծ՝ քան ներկան», ասով ան կը ցոյացնէր ազատագրի զինուորական ամենագործներուն համոզումը»։

Այդ տիեզերական անբաժութեան առաջնորդը պիտի ըլլար տարօրինակ խառնուածքով մարդ մը, Ատուլֆ Հիթլեր, «այդ ազատագրի զինուորական ամենագործներուն» փնտրած մարդը։

ՅԵՏԻՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

Միայն արտաքին ծանր դէպքերը չէին, որոնք Թուրքիան կը մղէին խաղաղութիւն բաղձալու, այլ երկրին ներսն ալ կացութիւնը շատ ողբալի չէր։

«Ժողովուրդէն հագարաւորներ կը մեռնէին անօթի, գրեթէ բոլոր ողջանդամ այրերը կանչուած էին դրօշի տակ, այնպէս որ միայն անբաւական թիւ մը կը մնար հողը մշակելու համար։ Անարդար եւ ռերապարտ զինուորական գրաւումները՝ գործնականապէս կործանած էին ամբողջ վանառականութիւնը։ Դանձր ո'նեւ ժամանակ աւելի սպառած էր, քանի որ Տարտանէլի փակումը եւ միջերկրականեան մաւահանգիստներուն պաշարումը կ'արգիլէին ամէն ներածում, եւ հետեւաբար ներածումներէ գանձուած տուրքերուն ստացումը։

Ասկից գատ, այնպէս կ'երեւէր թէ Թալաթի եւ իր ընկերներուն դէմ ժողովուրդին յարաբնում բարկութիւնը, վերահաս առաջին առիթով պիտի պայթէր...»։

ՓԱԽՈՒՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԴԷՊԻ ՓՈՔՐ ԱՍԻԱ

Նշանակալից իրողութիւն մը մէջտեղ դրաւ պաշտօնական շրջանակներուն մտքին վիճակը։

Թուրք Իթթիհատական կառավարութիւնը, Յունուար 1էն սկսելով, միջոցներ ձեռք առեր էր երկու կառախումբերու կազմութեան համար, մէկը Սուլթանը եւ իր հետեւորդները պիտի տանէր Փոքր Ասիա, եւ միւսը սահմանուած էր Վանկէնհայմին, Բալլավիչիին եւ ղիւանագիտական մարմնի միւս անդամներուն համար։

ԲԱՂԱՎԻԶԻՒՄԻ ՏԱԳՆԱՊԸ

Դանակից նաւատորմիչներուն Կ. Պոլսը ումբակոծելու սպառնալիքը ամէնէն աւելի շփոթութեան մասնէր էին Աւստրիոյ ղեսպանը, Բալլավիչիին, հպարտ իր կայսրով եւ իր հայրենիքով։ Հապսպուրկեան բաղձանդամ տան արագօրէն կործանումը, որ այնքան դարբերով՝ յարձակումներուն ղիւմակալած էր, իր վրայ չափազանց ծանր բեռի մը պէս կը թուէր ճնշել։

Ան համակրութեան պէտք ունէր, ինչպէս ձախորդութեան մէջ գտնուող գրեթէ ամէն մարդ։ «Այդ համակրութիւնը, կը գրէ Մորկէնթաու, պիտի չգտնէր Վանկէնհայմի մօտ, որ իրեն հետ կը վարուէր ո'չ իբր սրտակցի մը, այլ իբր ներկայացուցիչը ազգի մը, որ անիրաժեշտօրէն պարտաւոր էր ծռիլ Գերմանիոյ գերագոյն լուծին տակ։ Թերեւս այս էր պատճառը որ Բալլավիչիին իր շփոթութեան մէջ զիս ընտրեց իբր գաղտնակից Տարտանէլի ումբակոծումին առթած շփոթութեան»։

Աւստրիոյ ղեսպանին տագնապը մերկ իրողութեան մը վրայ կը հանգչէր։ Այդ միջոցին, որ Բալլավիչիին իր երկիրները կը պարզէր

ամերիկեան դեսպանին առջև, կեդրոնական պետութիւնները, ինչպէս վերը տեսանք, կը կարծէին թէ Տարտանէլը փակելով՝ Ռուսիան պաշարած կ'ըլլային․ ան այլեւս չէր կրնար իր ցորենը եւրոպական հրապարակներու վրայ զրկել, ո՛չ ալ զինուորական գործողութիւններուն շարունակութեան համար անհրաժեշտ պատերազմական իրեղէնները ներմուծել: Ուրեմն, Գերմանիան եւ իր զինակիցը՝ իրենց թշնամիին ջիղը կոտրած կ'ըլլային, եւ եթէ իրենց սեղմումը կարենար տակաւին երկարաձգուիլ, Ռուսիան ճակատագրականօրէն պիտի քայքայուէր:

Բայց կար նաեւ մետալին միւս կողմը, որ Աւստրիոյ քունը կը փախցնէր: Այս միջոցին ձարին բանակները յաղթական էին, եւ ասիկա ինքնին բաւական էր Աւստրիան տագնապի մատնելու համար: Բայց նիւթեղէններու իրենց ներկայ պահեստը սպառելով, ռուսերուն ներկայ թուական գերակշռութիւնը անօգուտ պիտի դառնար, եւ այն ատեն՝ իրենց գործն ալ պիտի լմննար:

Այն պարագային որ Ռուսիան Կ. Պոլսն եւ Տարտանէլի հակա-կշիռը ձեռք առնէր, կացութիւնը պիտի փոխուէր, եւ կեդրոնական կայսրութիւնները պիտի յաղթուէին: «Այս պարտութիւնը, ինչպէս Բալլավիչինի ըսեր էր ամերիկեան դեսպանին, շատ աւելի ծանրակշիռ պիտի ըլլար Աւստրիոյ, քան իր զինակիցին համար: Բալլավիչինիմ գիտէր նաեւ – Վանկէնհայմ անձամբ ըսեր էր ինծի – որ եթէ աւստրեւ-հունգարական կայսրութիւնը մասերու բաժնուէր, Գերմանիան միտք դրեր էր իրեն կցել 12.000.000 գերման հպատակները»:

Հետեւաբար, Բալլավիչինիի համար, Տարտանէլի դէմ անգլոֆոնանսական յարձակումը իր մէջ կը կրէր իր հայրենիքին կործանումը, որովհետեւ ան հաստատօրէն կը հաւատար, ինչպէս Կ. Պոլսոյ ականաւոր անձնաւորութիւններու մեծ մասը, ումբակոծման ձեռնարկի յաջողութեան:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՐՏՈՐԻՆԱԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փութագնելու համար այդ խաբուսիկ հաշտութիւնը, կայսեր անձնական ներկայացուցիչը ամերիկեան դեսպանին առաջարկեց հետեւեալ պայմանները․ – Բելճիոյ մէջ տեւական նաւային կայաններ ունենալ, որոնց շնորհիւ գերման նաւատորմը ամէն ժամանակ պիտի կարենար Անգլիոյ սպանալ պաշարումով, եւ ասով՝ ապահովել ծովերու ազատութիւնը: Երկրորդ, Գերմանիան իրաւունք կը պահանջէր ամէնուրեք հանքածուխ ստանալու, այդ պահանջը այլանդակ էր, քանի որ այդ իրաւունքը խաղաղութեան ժամանակ ունէր արդէն:

Ասոր փոխարէն՝ Ֆրանսան պիտի ստանար Լորէնի մէկ մասը, եւ Բելճիոյ մէկ մասը, ի փոխարինութիւն վնասներու հատուցումի մը:

Անպատկար Վանկէնհայմ պաշտօնապէս կը դիմէր Գերմանիոյ, ի նպատակ նախագահ Ուիլսոնի միջամտութեան:

Մորկէնթաու, 1915 Յունուար թուակիր նամակով, որ գրեց Ուաշինգթոն, մանրամասն կերպով պարզեց այն պատճառները, որոնց համար Գերմանիան եւ Թուրքիան խաղաղութիւնը կը փափաքէին:

Պաղաղութեան այս առաջին փորձը Մարտի վերջերը աւարտեցաւ, երբ Գիւլման հեռացաւ Կ. Պոլսէն՝ Լա Հէյի դեսպան ըլլալու համար:

Երբ այդ նենգամիտ դիւանագէտը գնաց իր հրաժեշտի այցելութիւնը տալու ամերիկեան դեսպանին, այս վերջինս զայն գտաւ «այլմեան սխալման, հաճոյքի եւ հաշտարար, ինչպէս սովորաբար»:

Անոր վերջին խօսքերը դեսպանին ձեռքը սեղմած ժամանակ եղան․ «Երեք ամիսէն հաշտութիւն պիտի ունենանք, վսեմութիւն»:

ՈՒԱՇԻՆԿԻՆՆԻ ՄԵՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Այս խօսքերը անկեղծ արտայայտութեան մը ցոլացումն էին, որովհետեւ ըստ վկայութեան ամերիկեան դեսպանին, Գիւլմանը «Կ. Պոլսոյ գրաւումին մասին կը խօսէր իրրեւ կատարուած իրողութեան մը»:

«Նոյն կարծիքն ունէին, ինչպէս կը վկայէ նոյն գրիչը, Վանկէնհայմ, Բալլավիչինի, իտալական դեսպանը, Շուէտի դեսպանը, քուլդար դեսպանը, Գիւլման եւ Շտոֆէնպլերկ՝ գերման դեսպանատան առաջին քարտուղարը»:

Թրքահայութեան չար բախտէն, 1915 Մարտի բարեբախտ գուշակութիւնը, անոյշ երազի մը պէս անցաւ: Ամերիկեան կառավարութիւնը, որ ինչպէս տեսանք, առաջին օրէն իր համակրութիւնը ցոյց տուեր էր Երրեակ Համաձայնութեան հանդէպ, եւ Գերմանիոյ ջախջախումը՝ իր շահերուն համապատասխան, մերժեւ էր միջամտել, ժամանակը պատեհ չնկատելով, մանաւանդ որ Աւստրիոյ դեսպանը՝ Բալլավիչինի, բնաւ տեղեկութիւն չունեցաւ ամերիկեան դեսպանին հետ սկսած բանակցութեանց մասին, որովհետեւ Վանկէնհայմ, ինչպէս կը վկայէ Մորկէնթաու, Աւստրիոյ ներկայացուցիչին հետ կը վարուէր ճիշտ այնպէս, ինչպէս որ իր կառավարութիւնը Վիեննայի հետ կը վարուէր, ո՛չ թէ հաւասարի, այլ ստորակարգեալի պէս: Այսօր ո՛չ մէկուն համար զաղտնիք մըն է Աւստրիոյ-Հունգարիոյ զինուորապէս եւ դիւանագիտօրէն Գերմանիոյ կողմէ կատարեալ լքումի մը ենթարկուած ըլլալը:

Ամերիկեան կառավարութեան մերժողական պատասխանը՝ ճակատագրական դեր մը խաղաց, ո՛չ միայն համաշխարհական պատերազմը երկարաձգելով, այլ նաեւ պատճառ եղաւ որ Իթիլահատական

կառավարութիւնը լիովին գործադրէ իր ղիւային ծրագիրը հայերու հանդէպ:

ՎԱՆԿԷՆՀԱՅՄԻ ՇՓՈԹՈՒԹԻՒՆԸ

Կայսեր լիազօր Վանկէնհայմն ալ վարդէ անկողնի վրայ չէր հանգչեր: Ինք Կէօրէն եւ Բրեսլաու նաւատորմը մինչեւ Կ. Պոլիս բերած էր, եւ այս իրողութեամբ՝ Թուրքիան պատերազմի մէջ գահաւիժած:

Եթէ անգլիացիք նեղուցէն մտնէին, Ռուսիան ո՛չ միայն պատերազմի գօրաւոր եւ տեսական ազդակ մը կը դառնար, այլ ոչինչի կը վերածէր իր բոլոր անձնական ջանքերը: Այսուհանդերձ, Վանկէնհայմ իր երկրւոյնըրը աւատրիացի պաշտօնակիցէն տարբեր եղանակով ի յայտ կը բերէր:

«Հաւատարիմ իր ցեղին գործելակերպին, կը գրէ Մորկէնթաու, Ան դիմած էր սպառնալիքներու եւ յոխորտանքի: Դեմքին վրայ բան մը չէր մատնէր իր ներքին անձկութիւնը, այլ իր ամբողջ մարմինը տեսական կատաղութեմէ մը կը դողար: Երբեք չէր ողբար իր բախտին վրայ, այլ հնարքներ կը փնտրէր վրէժ լուծելու համար: Ան ինձի կը հաղորդէր այն տառապանքները, որոնց որոշած էր ենթարկել իր թշնամին...»:

Մասնաւորապէս բան մը գինք կը լլկէր: Ասիկա իր ղեսպանատան վտանգաւոր դիրքն էր: Թառած բարձր բլուրի մը վրայ, ըլլալով քաղաքին ամէնէն աւելի աչքի գարնող շէնքերէն մէկը, ան բոլորովին յայտնի նպատակակէտն էր անգլիական նաւատորմին թնդանօթներուն համար: Եւ անտարակոյս անգլիական նաւատորմը բուռն փափաք ունէր ուժակոծելու Հոհնէնդլէրներուն եղող այս սոսկալի շէնքը:

Դողալով իր սիրելի կայսեր շէնքին վրայ, անոր լիազօրը ըսեր էր ամերիկեան ղեսպանին. «Յոյ փորձն ղպչիլ անոր, եւ ես վրէժս պիտի առնեմ: Եթէ անոնք միակ ռուս մըն ալ արձակեն, մեմք օլը պիտի հանենք ֆրանսական եւ անգլիական ղեսպանատուները»: Յետոյ այդ «ամբարտաւան, եւ անգուօ ճոռումարանը» յոխորտանքով ըսեր էր ամերիկեան ղեսպանին. «գացէ՛ք, ըսէ՛ք անգլիացի ծովակալին այս խօսքերը, եւ ըսէ՛ք անոր մաեւ թէ բոլորովին պատրաստ է մեր ուժանակը»:

Կար ուրիշ պարագայ մըն ալ, որ խորշում կը պատճառէր թէ՛ Վանկէնհայմին եւ թէ՛ Բալլավիշինին: Ասիկա թուրք կառավարութեան հետ հսկի Շէհիր մեկնելու որոշումն էր: Անոնք բացարձակապէս չէին ուզեր Սուլթանին եւ իր կառավարութեան հետեւելու ղէպի Փոքր Ասիա, բա՛լ ղիտնալով որ պարտութեան մը պարագային՝ ինչ փորձանքներ պիտի գային իրենց գլխուն:

«Եթէ Համաձայնականները գրաւէին Կ. Պոլիսը, կը գրէ Մորկէնթաու, իրենց երկիրներուն հետ ամէն հաղորդակցութիւն պիտի խզուէր. բացի ասկէ, անոնք այն տեղ թուրքերուն բացարձակ իշխանութեան տակ պիտի ըլլային, որոնք իբր պատանդ պիտի օգտուէին անոնցմէ - խօսքերը գերման ղեսպանին են - : Վանկէնհայմ եւ Բալլավիշինի փորձեցին համոզել Թալաթը, որ որոշէ ի հարկին կառավարութիւնը Ադրիանապոլիս փոխադրելու, ուրկէ կրնային ինքնաշարժով Կ. Պոլիս երթեւեկել, եւ ուրկէ, եթէ քաղաքը գրաւուէր, կրնային իրենց երկիրը փախչիլ: Բայց թուրքերը մերժեցին իրենց խնդրանքը...: Մեր մարդիկը, ուրեմն, երկու կրակի մէջ կը գտնուէին. կա՛մ մայրաքաղաքին մէջ պիտի մնային անգլիացիներու եւ ֆրանսացիներու գերիները ըլլալու համար, եւ կա՛մ թուրք կառավարութեան պիտի հետեւէին ղէպի էսկի Շէհիր, թուրքերուն ձեռքը իյնալու համար»:

Ինչպէս ամէն մարդ, Վանկէնհայմն ալ ղիտէր որ եթէ «ֆրանսացիներն ու անգլիացիները տիրանային Կ. Պոլսոյ, թուրքերը սուղի պիտի նստեցնէին իրենց պարտութիւնը, ոչ միայն Համաձայնութեան, այլ եւ գերմանացիներուն հանդէպ, որոնք գիրեմք պատերազմի մէջ քաշեր էին»:

ՅԻՄԱՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Եթէ Թուրքիոյ մայրաքաղաքին բոլոր հեղինակաւոր անձնաւորութիւնները կը հաւատային թէ զաշնակից նաւատորմիդները պիտի կարենային ղիւրաւ Կ. Պոլիսը նուաճել, որչափ եւս առաւել ժողովուրդը, որ թնդանօթին առաջին հարուածներուն իսկ ազանջէ ազանջ կը շրջեցնէր ամէնէն յիմարական գրոյցները: Կը պատմուէր թէ ամերիկեան գործակատար մը՝ Տարտանէլի մէջ հաշուած էր զօրագուն-ղերով լեցուն 17 փոխադրանաւեր, թէ մարտանաւերը արդէն 800 ռումբեր արձակած են, եւ բոլոր բլուրները հիմնայատակ ըրած են, եւ թէ Թալաթի թիկնապահը սպաննուած էր:

Կ'աւելցուէր նաեւ թէ թուրք խուժանը այն գաղափարէն չարչարուած է՝ իբր թէ անգլիացիները եւ ֆրանսացիները ծովեզրերին մօտենալով, մի գուցէ իրենց յաղթանակը թուրք կիներու ընդհանուր առեւանգումովը տօնեն:

«Անտարակոյս տիւար գրոյցներ, կը գրէ Մորկէնթաու, որոնք գերմանացիներուն եւ իրենց թուրք եղբայրակիցներուն կողմէ տարածուած էին: Իրողութիւնը այն էր որ Կ. Պոլսոյ ժողովուրդին մեծ մասը մաղթանքներ կ'ընէր Համաձայնականներուն յաջողութեան համար, որոնք պիտի ազատէին ղիւրեմք կեղեքողներու իրոսախումբին լուծէն, որոնք այդ միջոցին երկիրը կը կառավարէին»:

ՅՈՒՍԱՀԱՏ ԹԱԼԱԱԹԸ

«Ես, կը գրէ ամերիկեան դեսպանը, տեղագիւն իրարանցումի մը մէջ տեսայ անձ մը, լճուած եւ ընկնուած: Դա Թալաաթն էր: Ամէն անգամ որ առիթը ունեցայ տեսնել զինքը, այս տագնապալի ժամանակներուն, հաստատեցի թէ ասիկա պատկերն էր աւերումին եւ պարտութեան: Թուրքերը, նախնական ցեղերու մեծ մասին պէս, բնաւ չեն պարտկեր իրենց յուզումները, եւ դիւրութեամբ ուրախութեանէն կ'անցնին յուսահատութեան:

Յայտնապէս կը տեսնուէր թէ անգլիան թնդանօթներուն աղմուկը նեղուցին մէջ որոտալով, կը թուէր ուղղակի Թալաաթի հոգւոյն մէջ արձագանգել:

Ադրիանապոլսոյ երբեմնի նամակատան ցրուիչը կը կարծէր թէ իր ասպարէզին վերջն հասած ըլլայ: Ան նորէն հաղորդեց ինծի իր համոզումը թէ Անգլիան պիտի տիրանար մայրաքաղաքին, եւ իր ցաւը թէ իր երկիրը պատերազմի մտած էր, որովհետեւ գիտէր թէ ի՛նչ տեղի պիտի ունենար Համաձայնական նաւատորմին Մարմարա ժամանելուն»:

Եւ թրքահայ ժողովուրդին սպառազայ դահճապետը՝ կատարելապէս իրաւունք ունէր: Այսօր պատմականօրէն հաստատուած է որ Լորտ Քիչնըր, նաւային այս արշաւանքին հաւանութիւնը տալով, հաշուի առած էր Թուրքիոյ մէջ յեղափոխութիւն մը՝ որ իր յաջողութիւնը պիտի զիւրացնէր:

«Արդարեւ, կը գրէ ամերիկեան դեսպանը, եթէ ձեռնարկը յաջողած ըլլար, երիտասարդ թուրքերու իշխանութիւնը կրակի եւ արեան մէջ պիտի թաւալէր:

Թնդանօթներու առաջին աղմուկին պատերը որմագոյերով պիտի ծածկուէին, որ յայտնէին թէ Թալաաթ եւ իր ընկերները պատասխանատու հեղինակներն էին երկրին վրայ խուժող բոլոր աղէտներուն:

Պետրի, ոստիկանութեան պետը, շատ գործ ունէր հաւաքելու աշխատութիւն չունեցող երիտասարդ մարդիկը, եւ զանոնք բաղաբէն դուրս դրկելու համար: Ասով՝ Կ. Պոլիսը մաքրելու համար ամէն կասկածելի տարրերէ, որոնք կրնային երիտասարդ թուրքերու դէմ յեղափոխութիւն մը պատրաստել: Ամէն մարդ գիտէր թէ երիտասարդ թուրքերը շատ աւելի կը վախնային յեղափոխութեանէն, քան բրիտանական նաւերէն: Եւ միեւնոյն նեմեսիսն էր որ կը հալածէր Թալաաթը, անդադար եւ անողոքելիօրէն»:

Իր չար ճակատագրէն, անողոքելիօրէն հալածուած թրքահայ ժողովուրդին սպառազայ դահճապետը, անշուշտ իրաւունք տուած էր հայ Դաշնակցութեան համագումարին, որ սաստիկ կերպով հակառակ էր Թուրքիոյ պատերազմի բոցերուն մէջ նետուելուն, դուշակելով

կոտորածը. եւ արդարեւ, ինչպէս իր տեղին պիտի տեսնենք, Մուսթաֆա Քեմալ փաշայի դէմ սարքուած մահափորձին առիթով, Անկախութեան ատեանը կախաղան պիտի բարձրացնէ Երիտասարդ թուրք կուսակցութեան նշանաւոր պետերը, որոնք Թուրքիան պատերազմի կրակին մէջ նետեր էին:

Աչք ծակող օրինակ մը ցոյց կու տայ թէ ի՛նչ աստիճանի հասեր էր ընդհանուր ջղային տագնապը:

«Դո՛ւք. Շէտերէր, Բերլինէր Թակերլաթ-ի թղթակիցը, կը գրէ Մորկէնթաու, Տարտանել կարն այցելութեան մը վերադարձին, դիւանագիտական շրջանակէ կարգ մը տիկիներու պատմեց թէ գերման սպաները ամէն ժամ կը վախնային եւ կ'ըսէին թէ արդէն իրենց պատմեցները փաթթուած էին թաղելու համար:

Այս խօսքերը կայծակի արագութեամբ տարածուեցան, եւ յանցաւորը՝ ձերբակալման սպառնալիքի տակ գտնուեցաւ»:

ՄԱՀԱՄԵՐՁԻՆ ՎԵՐՁԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ՄԱՐԴԸ

Այս տենդագին իրարանցումին մէջ կար անձ մը որ լքուած եւ ընկճուած էր. էնվէր վաշան. ինչպէս տեսանք, 1915ի Յունուարին վերջերը, դարձեր էր ան Կովկասի ճակատէն, իբր զլուխ՝ ամբողջովին պարտուած եւ ջախջախուած զօրագունդերու:

«Այս պարագան բաւական էր, կը գրէ Մորկէնթաու, ուրիշ ո՛նէ գինուորական պետի մը հեղինակութիւնը խորտակելու համար, եւ էնվէր ինքզինք այնքան ինկած կը զգար՝ որ հրապարակաւ երեսելէ կը զգուշանար:

Ես, իր վերադարձին, առջին անգամ տեսայ զինք Կարմիր Մահիկին ի նպաստ նուագահանդէսի մը մէջ: Անոր ներկայ գտնուեցաւ՝ նստած օթեակի մը խորը, այնպէս մը՝ իբր թէ պահուրտիլ ուզէր, եւ երբեք վստահ չեղաւ հասարակութեան ընկիւթ ընդունելութեան: Կ. Պոլսոյ բոլոր ականաւոր անձնաւորութիւնները, գահաժառանգ իշխանը, դահլիճին անդամները եւ դեսպանները ներկայ էին, եւ համաձայն սովորութեան՝ իշխանը կանչել տուաւ իր բարձրապատիւ պաշտօնեաները, մէկը միւսին ետեւէն, ողջունելու զիրենք, եւ շնորհաւորելու համար...: Էնվէրն ալ միւսներուն պէս կանչուեցաւ եւ այսպէս նկատողութեան առնուիլը իրեն քաջութիւն տալով՝ խառնուեցաւ դիւանագետներուն, որոնք իրեն հետ նոյնպէս մեծ քաղաքավարութեամբ եւ համակրութեամբ վարուեցան»:

Այսպէս վերահաստատուած, նորէն բեմին վրայ երեւցաւ, նորէն կարեւոր դեր մը ստանձնեց՝ ներկայ տագնապալի կացութեան մէջ:

Մէկ քանի օր ետք՝ ան իր դառնացած սիրտը բացաւ ամերիկեան դեսպանին, եւ «ինքզինքը շատ զարմացած ցոյց տուաւ տիրող ընդհանուր երկիւղներուն համար, եւ կատրած այն գաղափարէն, որով պատրաստութիւն կը տեսնէին սուլթանը եւ կառավարութիւնը Փոփր Ասիա դրկել, քաղաքը ձգելով անգլիացիներուն իբր աւար»:

Թուրքիոյ կեանքի եւ մահուան այս պայքարին մէջ, էնվէր երեսուան բերաւ իր պաղարիւնութիւնը, իր նկարագրի ոյժը, իր հանդարտ եւ ինքնավստահ ընթացքը, ճիշտ այնպէս, ինչպէս որ ես զինք տեսայ այն օրը, երբ իբր սպայ՝ կը հրամայէր Սելանիկի բանակին,

որ զնդացիրներով ումբակոծեն թաքսիմի այն մեծ եւ գեղեցիկ գինուորանոցը, ուր Սուլթան Ապտիւլ Համիտ Բ-ի հաւատարիմ զինուորները, յեղափոխութեան դրօշը պարզած՝ մահ կը սպառնային Երիտասարդ Թուրքերուն եւ Սելանիկի բանակին:

Հակառակ անոր՝ որ դեսպաններ, զօրավարներ եւ քաղաքագէտներ զուշակեր էին ինչպէս տեսանք, դաշնակից նաւատորմին Տարտանելէն բռնի ոյժով ներս մտնելու կարելիութիւնը, էնվէր միշտ անվրդով, վերջերս աչքէ անցուցած ըլլալով նեղուցին ամբողջութեամբ, կը վստահեցնէր ամերիկեան դեսպանը թէ «Համաձայնական նաւատորմը չի յաջողիր բռնի մերս մտնել Տարտանելէն»: Յետոյ աւելցուցեր էր. «Նոյնիսկ հակառակ պարագային, Կ. Պոլիսը պատրաստ էր պաշտպանուիլ մինչեւ իր յետին մարդը»:

ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ

Սակայն, իր ընկերակիցները եւ շարաշար պարտուած պատերազմական նախարարութիւնը, լաւատես յայտարարութեանց համակարծիք չէին, եւ յղացած էին զարհուրելի որոշում մը: Կառավարութեան պետերը յղացեր էին այն գաղափարը, որ նոյնիսկ եթէ թուրք բանակներու կողմէ եկած զիւցազնական ընդդիմութեան մը պարագային, մայրաքաղաքը Համաձայնականներու իշխանութեան տակ իյնալու վտանգին մէջ ըլլար, անոնք պիտի հետեւէին ռուսական վարուելակերպին, որ Մոսկուան այրեր էին, որպէսզի երբ Մեծն Նափոլէոն հոն մտնէ, աւերակներու միայն իշխէ:

Այս որոշումը յստորանք մը չէր, այլ մահամերձի մը վերջին յոյսը:

«Համաձայնականները երբեք ողջ ողջ ձեռք պիտի չանցնեն մեր մայրաքաղաքը, բսեր էին անոնք ամերիկեան դեսպանին, ան մոխիրներու եւ աւերակներու կոյտ մը միայն պիտի ըլլայ»:

Իրապէս, նոյն գրչին վկայութեան համաձայն, «սպառնալիքը երբեք առեւտրային չէր, որովհետեւ տեղեկացայ թէ Բարիւղի թիթեղներ արդէն գտնուած են ոստիկանական բոլոր կայանները, եւ ուրիշ վայրեր, պատրաստ՝ առաջին նշանին ֆաղաքը կրակի տալու. արագապէս դիւրին գործ մը, գիտնալով որ Կ. Պոլիս մասամբ փայտաշէն է»:

Աւելի բարբարոսական ծրագիր մըն ալ ունէին, արժանի մոնկոլ ցեղերու զործելակերպին: «Որոշուած էր, կը գրէ նոյն գրիչը, չքաւակնանալ այս ժամանակաւոր շինութիւններու ֆանդումովը, այլ իրենց դիտաւորութիւնն էր նոյնպէս ոչնչացնել ճարտարապետութեան գլուխ գործոցները, որոնք իսլամներու գրաւումէն շատ առաջ կառուցուած էին քրիստոնեաներու կողմէ, եւ ամէնէն առաջ Այս Սոփիայի



Էնվեր փաշա

մզկիթը: Այս յիշատակարանը որ մահմետական մզկիթ մը ըլլալէ առաջ, քրիստոնեական եկեղեցի մը եղաւ, երբեմնի քիւզանդական կայսրութեան սփանջիագործ շինութիւններէն մէկն էր»:

Այսօր որքան տարօրինակ պիտի երեւնար մեզի այս բարբարոսական զործողութիւնը, եթէ այդ դէպքէն 40 տարիներ ետք, 1955ի Յունիս 27ին, թուրք ռամկավար վարչաձեւի մը օրին, որ որդեգրած է զուիցերիական սահմանադրութիւնը, կեանքը քաղաքականութեանէն զատած, պետութիւնը Փրանսականին նմանցնելով, հռչակած է թէ «պետութիւնը կրօնք չունի», թուրք ոստիկանութեան եւ դաշնակից ամերիկացիներու, անգլիացիներու, Փրանսացիներու եւ իտալացիներու բարեհաճ աչքին տակ, կրակի տուաւ բիւզանդական ճարտարապետութեան հնագոյն եկեղեցիները, ոչինչ պատճառի մը համար:

Գլուխ-գործոցներ էին եւ կրակի տրուեցան, անգամ մը եւս սպացուցանելով թէ քաղաքակրթութեան համար «ֆէս»ին տեղ զլիարկ

գործածելով, հին մտայնությունն էն բան մը չի փոխուիլը, այլ գլուխը փոխելու է վարչաձևերն համընթաց... :

Իթիթհատի պարագլուխներն ալ, Միջազգային Ֆրանմասոնութեան զիրկը ինկած, կրօնական ամէն սկզբունքէ զուրկ էին, բայց կ'աշխատէին երեւոյթները փրկել:

«Մեմբ անշուշտ, կը գրէ Մորկէնթաու, սրտմտեցանք այդ տեսակ վանտալական գաղափարի մը առջեւ: Ես այս մասին դիմում մը ըրի թալապարի, որ բնաւ փոյթ չէր ընել այդ տեսակ ֆանդումի ծրագիրներուն մասին, եւ երբեք կանգ չէր առնել այս տեսակ նկատումներու առջեւ»:

Թուրքիոյ զիկտատորը տարօրինակ պատասխան մը տուաւ. «Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէին մէջ վեց հոգի իսկ չկայ որոնք գրադիւն հին արուեստով»:

Թուրք վարչապետը անկեղծ էր, երբ կը յայտարարէր թէ թուրքը հին արուեստով չի գրադիր: Մենք արդէն գիտենք որ Նինուէի պեղումներէն զուրս ելած արուեստի եւ գրականութեան հրեշտակները՝ փոխանակ թրքական թանգարանները զարդարելու, եւ աշխարհի անհամար զբօսաշրջիկները այդ վայրերը հրաւիրելու, պետական զանձին մէջ խոշոր դրամներ մտցնելով, թոյլ տուաւ որ անոնք երթան զարդարեն բրիտանական եւ Լուվրի թանգարանները, որոնք ասիական փառքին պահապաններն եղան: Ջարդ, կոտորած, աւեր եւ թալան՝ զեղարուեստի տեղ բռնած էին, եւ որոնք կը կազմակերպուէին մեծ խնամքով... :

Հաւանական է որ արեւելքի հրաշալի մայրաքաղաքը կրակի տալու որոշումը ծնունդ ըլլայ այն տեսակ մը պատերազմական խորհրդածողովին, որ Թալապարի հրաւիրած էր Տարտանէլի խնդրին համար, երբ էնվէր փաշան սակաւին Կովկաս կը գտնուէր:

Այս ժողովին ներկայ էին, ըստ վկայութեան ոստիկանութեան տնօրէն Պէտրի բէյի, Լիման ֆոն Ջանդերս, դերման զօրավարը, որ ընդհանուր քննիչն էր Օսմանեան ծովեզերքներու ամբողջիւններուն, եւ Պրոնսարդ, թրքական բանակի սպայակոյտի պետը եւ բազմաթիւ ուրիշներ:

Ամէնքն ալ այն կարծիքը յայտնեցին թէ անգլիական եւ ֆրանսական նաւատորմիկները կրնային խորտակել նեղուցին ընդդիմութիւնը: Միակ վիճելի կէտը եղեր էր զիտնալ թէ նաւերը ու՞թ թէ քսան ժամէն Պոլիս պիտի կարենային հասնիլ, ամբողջիւնները քանդելէն ետք:

Եւ հակառակ անոր որ պատերազմական նախարարին զիրքը մեծ կշիռ ունէր, խորհուրդը որոշեց անգլիտանալ էնվէրը, առանց անոր գիտնալուն՝ տեսնել անհրաժեշտ նախապատրաստութիւնները, եւ առժամանակեայ կերպով գոնէ զայն զուրս թողուլ իրենց զազանի խորհրդակցութիւններէն:

ԵԼՔԸ՝ ԴԷՊԻ ՓՈՒՔՐ ԱՍԻԱ

Մարտի սկիզբը՝ մայրաքաղաքէն ելքը սկսեր էր արդէն: Կիներ եւ մանուկներ երկրին ներսերը կը տարուէին. դրամատունները հրահանգ ունէին իրենց ոսկիները Փոքր Ասիա ղրկելու: Բարձրագոյն Դրան զիւանաթուղթերը էսկի Շէհիր կը փոխադրուէին, «եւ միեւնոյն ժամանակ, կը գրէ Մորկէնթաու, գրեթէ բոլոր դեսպանները եւ իրենց հետեւորդները, եւ պաշտօնատարները իրենց կարգադրութիւնները կ'ընէին, սպասելով այն պարագային, երբ ֆաղաբը պարպելը ստիպողական դառնար: Կ. Պոլսոյ արուեստի գործերէն մեծ մաս մը թաղած էին նկուղներու մէջ, կամ ուրիշ եղանակով մը պահպանած, թելադրութեամբը թանգարանապահին, որ Թալապար Միութեան եւ Յառաջդիմութեան Կոմիտէի «հնութիւններու» վեց սիրողներուն մէջ կը հաշուէր»:

Մնացեր էր փափուկ խնդիր մը կարգադրել, որ է Միացեալ Նահանգներու ղեսպանն ալ միացնել փախստականներու կարուանին:

ՄՈՐԿԷՆԹԱՈՒԻ ՄԵՐԺՈՒՄԸ

Կ'ուզէին հեռացնել ամերիկեան ղեսպանը, որպէսզի պաշտօնական անաշառ սկանստեսի մը աչքը վկայ չկանգնէր վանտալական քանդումին:

Պէտրի պէյը եւ ճամպուլթ, կատաղի մահմետականներ եւ քրիստոնեայ Եւրոպան ատող, կարգադրեր էին որ Մորկէնթաու իբրեւ ղեսպան պէտք էր Սուլթանին հետ երթալ: Կառախումբը կազմուած ըլլալով, Թալապարի աջ բազուկները եկեր էին տեղեկանալու թէ քանի անձեր պիտի հետեւէին իրեն, որպէսզի կարենային անոնց տեղ պահել:

«Ես, կը գրէ ամերիկեան ղեսպանը, ուղղակի մերժեցի, առարկելով թէ իմ պաշտօնս իմ ներկայութիւնս կը պահանջէր երկրին մէջ եւ թէ միակ չէզոք երկրի դեսպան մը կրնար ջարդերը եւ ֆանդումը արգիլել, ինչ որ պարտական էի ընել ֆաղաբակիրք աշխարհի համդէպ: Գալով իմ ղեսպանի դիրքին, ես պատրաստ էի երաժարիլ անկէ եւ միայն պարզ պատուակալ հիւպատոս մը ըլլալ, քան Սուլթանին հետեւն երթալ»:

Յետոյ, սրամիտ Մորկէնթաու, այդ երկու փառամոլները հրապուրելու համար, որ չպնդեն իրենց որոշումին վրայ, ըսեր էր թէ իրենք աւելի տարիքը առաջացած եւ փորձառու մարդու մը պէտք ունէին այս կարգի միջազգային տազնապի պահուն, խորհուրդ հարցնելու համար անոր:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Այս մարդասէր դեսպանը, ինչպէս ինքը կը վկայէ, «իրական շահագրգռութիւն մը ունէր պաշտպանելու ոչ միայն օտար եւ ամերիկեան հաստատութիւնները, այլ եւ մարդասիրական պատճառներով պահպանելու թուրք ազգաբնակչութիւնը ընդդէմ այն ծայրայեղութիւններուն, որոնք կրնային պատահիլ, եթէ Համաձայնութեան բանակները Կ. Պոլիս մտնէին»:

Դեսպանը լաւ գիտնալով թէ «Սուրբ Պատերազմ»ի յայտարարութիւնը ինչ աստիճանի գրգռեր էր իսլամ խուժանին մոլեռանդութիւնը ընդդէմ քրիստոնեաներուն, մանաւանդ Օսմանեան անդէն ու անպաշտպան փոքրամասնութիւններուն դէմ, պատրաստ թալանի եւ ջարդի, առջարկեց ոստիկանութեան երկու պետերուն, որ իրենք եւ ինքը տեսակ մը յանձնարումը կազմեն, «պատրաստ՝ նկատելու մօտալուտ տագնապին»:

Անոնք հաւանեցան եւ Կ. Պոլսոյ քարտէսի վրայ նշանակեցին այն թաղերը եւ շէնքերը, որոնք արդի ռազմագիտական կանոններուն չզի-մանալով, պիտի իյնային համաձայնականներուն հարուածին տակ, ինչպէս պատերազմական, ծովային նախարարութիւնները, հեռագրական կայանները եւ գրեթէ բոլոր հանրային շէնքերը: Յետոյ, իրենց յանձնարումը սահմանեց կարգ մը գօտիներ, որոնք պէտք է անվթար պահուէին, ինչպէս Բերա, ամէնէն աւելի բնակուած կեդրոնը, ուր կը գտնուէին բոլոր դեսպանատուները, նոյնպէս շատ մը բազմամարդ թաղեր, ինչպէս Ստամպուլ եւ Կալաթա եւ թուրք թաղերը:

Մորկէնթաու, որ նոյնպէս համոզուած էր թէ Համաձայնութեան նաւային մուտքը Կ. Պոլսոյ մէջ քանի մը օրուան հարց է, «հեռագրեց, ինչպէս կ'ըսէ ինքը, Ուաշինկոնի կառավարութեան, հաստատելու այս յատկագիծերը եւ համաձայնութեան գալու ֆրանսական եւ քրիտանական կառավարութիւններուն հետ, որպէսզի ապահովութեան այս գօտիները յարգուին: Պատասխանը եղաւ նպաստաւոր:

Բոլոր կանխապատրաստութիւնները, կը գրէ Մորկէնթաու, լրացած էին. կայարանին մէջ այն կառախումբերը, որոնք պարտաւոր էին Սուրբանը, կառավարութիւնը եւ դեսպանները Փոքր Ասիա տանելու, շոգիի վրայ էին, պատրաստ առաջին նշանին մեկնելու, եւ մենք ամէնքս կը սպասէինք Համաձայնական նաւատորմին յաղթական ժամանումին»:

ՊՈԼՍՈՅ ՀԱՅԵՐԸ ՅՆԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այն շրջանին, երբ զաւառի հայութիւնը սարսփահար կը դողար՝ իր առողջ բնազդով գուշակելով իր գլխուն վրայ սաւառնող արիւնոտ փոթորիկը, որ ոլորտներով պիտի ծածկէր ամբողջ Թրքահայաստանը, Կ. Պոլսոյ հայերը այն երեք ամիսներու շրջանին, երբ խաղաղութեան բանակցութիւնները կը կատարուէին, անձնատուր եղեր էին, ինչպէս համաբերողական պատերազմի առաջին օրերուն, անսահման ցնծութեան, մինչ յոյները եւ հրեաները լուրջ եւ խոհուն կեցուածքով իրենց ուրախութիւնը կը զսպէին:

Ինչպէս առաջ, այժմ ալ Համաձայնական պետութիւններուն մօտալուտ յաղթանակը գինովցուցած էր զիրենք, առանց դաս մը քաղած ըլլալու թէ 32 տարիներէ ի վեր հայութեան կուռք դարձած այդ կառավարութիւնները՝ շարժելով եւ դործելով միայն իրենց նիւթական շահերուն համար, գրգռեր էին կարմիր Սուլթանը, եւ թրջական հաթաղանը ալ ու ձախ հնձեր էր 300.000 անմեղ հայ մարդիկ:

Անոնք երբեք չհասկցան թէ քաղաքական կեանքի մէջ խոհեմութեան եւ հեռատեսութեան պակասը, ազգերը առաջնորդեր են դէպի կործանում:

Երբ թատերական ներկայացումներ, մեծ համերգներ, գիշերային պարահանդէսներ, մրցումներ իրարու կը յաջորդէին, գտնուեցան խելահաս եւ ազգասէր մարդիկ, որոնք փորձեցին չափ դնել այդ խանդավառութիւններուն եւ ոգեւորութիւններուն, բայց արհամարհանքի արժանացան...:

«Երբ ինձի հետ, կը գրէ ակնատես եւ ականջալուր վկան Պալաքեան Վրդ-ը, հազրի մի քանի ազգային երեսփոխաններ կը փորձէին ի գուր մատնանշել Թուրքիոյ հայութեան սպառնացող վերահաս ահաւոր վտանգը, սակայն ախտի սպառնալիքներով լուրքեան դատապարտուած էին բողոքները, շնորհիւ մայրաքաղաքին ոստիկանութեան ընդհանուր տնօրէն՝ Պետրիի ամենագոր միջամտութեան»:

Իսկ զրօնող եւ ցնծացող ժողովուրդին բերան եզող մարդիկը կը պրոսային անոնց երեսին, ըսելով. -

«Ինչ հարկ կայ չարագուշակ մտավախութիւններով խանդավառուած ժողովուրդը սարսփեցնել: Զէ՞ որ անգլիական եւ ֆրանսական միացեալ հօր նաւատորմը արդէն Տարտանէլի առջեւ կանգնած, իր հարիւրաւոր մեծ ու փոքր թնդանօթներու դժոխային կրակով ամէն օր փարուհանք կ'ընէր Չանագ Գալէի նեղուցի Գիլ իդ Պահրի ամրակուռ մարտկոցները...: Եւ չէ՞ որ մէկ քանի օր ետք Պոլիսը արդէն ինկած պիտի ըլլար»:

Նոյն վկան հետաքրքրական մանրամասնութիւններ ալ կ'աւելցնէ, լրացնելով Մորկէնթաուի պատմածները:

«Արդարեւ, կը գրէ նա, այս միջոցին Կ. Պոլսոյ նոյնիսկ թուրք բոլոր օրաթերքերը բացայայտօրէն կը գրէին թէ թուրք կառավարութիւնը, գլուխ ունենալով Սուլթան Ռէշատը եւ նախարարութիւնը, պատրաստութիւն կը տեսնէին դէպի էսկի Շէհիր, եւ ապա, ի պահանջել հարկին, նաեւ թուրք հին մայրաքաղաք Գոնիա ապաւինիլ: Այս նպատակով պետական դիւանատուններու թուրքերն հաւաքուած եւ սնտուկներու կամ երկաթեայ արկղներու մէջ գետեղուած էին եւ օրէ օր վերջնական մեկնումի հրամանին կը սպասէին: Հետեւաբար մտավախութեան ինչ շարժառիթ կար...»:

Վերջապէս այս օրերուն ժողովրդային խանդավառութիւնը այն աստիճանի հասեր էր որ կարելի է ըսել թէ կը գերազանցէր 1894ի հայկական անդրանիկ խանդավառութեան օրերը: Երբ հայերը դարձեալ ամէն օր գունդազունը Մարմարա ծովի ափերը կը վազէին դիտելու համար անգլիական փառահեղ նաւատորմին մեծաշուք անցքը Մարմարայէն դէպի Վոսփոր, անշուշտ հայերը փրկելու համար...:

«Մինչդեռ Պոլսոյ հայութիւնը կը խայտար ու կը ցնծար այսպէս ամէնօրեայ հանդէսներու մէջ, անդին գաւառներու երկու միլիոնէ աւելի խեղճ հայութիւնը լքուած ու ձգուած էր իր սեւ քախտին»:

Գժբախտաբար այդպէս էր:
Հաշտութեան նուիրուած եռամսեայ ըննակցութեանց շրջանին, ուր արեւելքի մայրաքաղաքը կ'ապրէր խոր խաղաղութեան մէջ, եւ միայն անդլո-Փրանսական թնդանօթները կ'սրտտային, ազդարարելով թէ պատերազմը միայն Տարտանէլի ջուրերուն մէջ կը մղուի, երիտասարդ թուրքերու «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կեդրոնական Կոմիտէն եւ կայսերական Գերմանիան արդէն ստորագրած էին ամբողջ թրքահայութեան մահուան դատավճիռը, - եւ ասիկա կը պատահէր ճիշտ այն ատեն, երբ Կ. Պոլսոյ հայութիւնը «կը խայտար եւ կը ցնծար»...: Իսկ դարանակալ թշնամին՝ կը սպասէր յարմար առիթին...:

«ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱԻԱՏՈՐՄԸ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԶԷ»

Այս պատմական խօսքերը էնվէր փաշային են, յայտարարուած ո՛չ թէ սարսփի մէջ ապրող իր ընկերներուն, «որոնք, ինչպէս կ'ըսէ Մորկէնթաու, անոր դատելու կարողութեան մասին կորսնցուցեր էին իրենց վստահութիւնը», այլ ամերիկեան ղեսպանին, որուն խորհուրդներուն ղիմելու սովորութիւն ունէր ծանրակշիռ հարցերուն մէջ, հաղորդելով անոր թէ «Տարտանէլը կրնար դէմ դնել»:

Դեսպանը զարմացաւ լսելով նախարարին խօսքերը, «որովհետեւ, ինչպէս ինքը կ'ըսէ, այդ ընդհանուր տեղիքն մէջ, ան երբեք

չէր ըսեր թէ իրենց ամրութիւններուն անխոցելութեանը հաւատացող կայ, ո՛չ ալ այն միջոցին՝ քաղաքին մէջ տիրող խուճապը անըմբռնելի կը նկատէր:

Բայց այդ պաղարիւն եւ յամառ մարդը, որ աչքէ անցուցեր էր Տարտանէլի հին ամրութիւնները, բնած իւրաքանչիւր թնդանօթ եւ անոր կայանը, հակառակ հեղինակաւոր մասնագէտներու դատաստանին, համոզումը գոյացուցեր էր թէ իր մարդիկը պիտի կարենային Համաձայնութեան նաւատորմը անահմանօրէն ձախողութեան մատնել»:

Այս համոզումը այնքան խոր էր իր մէջ որ ուզեց ամերիկեան ղեսպանը անձամբ զաղափար մը կազմել, համոզուած որ պիտի կարենար հանդարտեցնել գերագրգռուած միտքերը:

Հակառակ որ նաեւրը գրեթէ ամէն օր կը ոմբակոծէին նեղուցը, ղեսպանը իր կեանքը մահուան վտանգին մէջ ղենելով, փութաց ընդունիլ առաջարկը:

Մարտ ամիսի 15ին, ղեսպանին եւ էնվէրին շքախումբը, կազմուած բազմաթիւ ականաւոր անձնաւորութիւններէ, որոնց զլխաւորներն էին, Իպրահիմ պէյ դատական նախարարը, Հիւսնի փաշա, այն զօրավարը, որ Երիտասարդ Թուրքերու յեղափոխութեան ժամանակ, Ապտիւլ Համիտը գահընկէց ընող բանակին կը հրամայէր, եւ ծերակուտական արար մը, Շէրիֆ ձաֆէր փաշա, մարզաբէն ուղղակի շառաւիղը, Ֆուատ փաշա, պատուակալ մարաշախտ տիրող սով, որուն կեանքը լեցուն եղած էր արկածներով եւ հակառակ իր 92 տարեկան հասակին, «յորդառատ ուրախութիւն մը ունէր, շատ կը խմէր եւ կ'ուտէր, եւ իրր Օթէլլոյ, կրնար պատմել շատ մը ակտի, կուրի եւ հրաշապատում պատահարներու պատմութիւն: Ամէնք ալ աւելի տարեց էին բան էնվէրը, եւ ծագումով աւելի բարձր բան ան, եւ սակայն ամէնքն ալ իրեն հանդէպ ցոյց կու տային մեծագոյն ակնածակն: Եւ էնվէրն ալ սքանչալցած կ'երեւէր, կարենալ խօսելու համար կացութեան մասին»:

Շքախումբը հասաւ Պանտրմա, այն բնակ, ուր կը թաւալէր պատերազմի մեծ գործողութիւններէն մէկը:

Երբ Մարտ 15ին շոգենաւը հասաւ Պանտրմա, էնվէր՝ Մորկէնթաու մէկ կողմը առաւ եւ կամըջակին վրայ ելան: Արեւը կը փայլէր մութ կապոյտ երկինքի մը մէջ, որ ուրիշ ոչ մէկ տեղ կարելի էր գտնել: Ոսօքը կեղրոնացաւ երկու էական կէտերու վրայ. Համաձայնականներու ձեռնարկը պիտի յաջողէ՞ր. Ռուսիա պիտի տա՞ր պատերազմին իր գործօն ղերը:

էնվէր նորէն խօսեցաւ «անհիմաստ խուճապի» մասին, որ մայրաքաղաքի բնակչութեան բոլոր դասակարգերուն մէջ կը ծաւալէր:

«Նոյնիսկ եթէ Բուլղարիա եւ Յունաստան մեզի դէմ դառնան, ըսաւ ան ղեսպանին, մեզ Պոլիսը պիտի պաշտպանենք մինչեւ վերջը:

Մենք մեծաբանակ թնդանօթներ եւ ռազմանիւթ ունինք, հաստատ հողի վրայ կառուցուած մարտկոցներ, մինչդեռ անգլիացիները եւ ֆրանսացիները ծովու վրայ են եւ հետեւաբար անկայուն...

Ես շատ քիչ կը մտահոգուիմ այն բաներով, որոնց վրայ ուրիշներ կը խորհին. ես անոնցմէ ռեւէ մէկէն աւելի աղէկ ուսումնասիրեցի խնդիրը, եւ կը զգաս թէ իրաւունք ունիմ. այնքան ժամանակ որ պատերազմական նախարար մնամ, մենք անձնատուր պիտի չըլլանք: Ես կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչ բան կրնայ պատահիլ այս անգլիական եւ ֆրանսական նաւատորմիդներուն:

Ենթադրեմք թէ անոնք խորտակեն Տարտանէլի ընդդիմութիւնը, Մարմարա ծովը մտնեն եւ Պոլիս հասնին. ասկից ինչ օգուտ պիտի ունենան: Իրաւ է թէ անոնք կրնան քաղաքը ռմբակոծել եւ կործանել. իսկ գալով գայն գրաւելուն՝ եթէ կրնան թող հրամմեն: Անոնք ցամաք հանելու գիտուոր չունին, եւ առանց կարելոք բանակ մը բերելու, ճշմարիտ տագնապի մը մէջ պիտի գտնեն ինքզինքնին...»:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՏԱՐՏԱՆԷԼԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՎԵՐՑՈՒԱԾ

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐՈՒ ՓԱԽՈՒՍՏԸ

Անգլիացիները հեռացան Տարտանէլէն ճիշտ այնպիսի պահու մը, երբ Կ. Պոլիս իրենց մուտքին ոչ մէկ արգելք կար:

Զօրավար Մէրթէնս այնքան համոզուած էր թէ դաշնակից «արմատա» Մարտ 19ի առտուն կանուխ Պոլիս պիտի կարենար մտնել, որ թղթակիցին ըսեր էր. «Ես խորհուրդ կու տամ ձեզի վաղը առաւօտուն ժամը վեցին ելլել եւ երթալ անատօլուի բլուրներուն վրայ. մենք ալ նոյն բանը պիտի ընենք»:

Մորկէնթաու կը հաղորդէ որ «Ամէնուրեք գիտուորները հրաման ստացած էին մինչեւ վերջին ռումբը լեցնել թնդանօթները, յետոյ հեռանալ իրենց տեղերէն: Ամրութիւնները անգոր դարձած, անտարակոյս պիտի դիւրացնէին Համաձայնական նաւատորմին գործը:

Յառաջանալու միակ արգելքը պիտի ըլլար ականներու դաշտը, որ սակայն կարելի էր ականաբարձ նաւերով մէկ քանի ժամուան մէջ մաքրել... Հետեւաբար արտաքին մեղուցին ամրութիւնները լոռաքեան դատապարտելէ ետքը, բան մը չէր գոցեր այլեւս Կ. Պոլսոյ նամբան, բացի գերման եւ թուրք մարտանաւերէն, որոնց ամենագորաւոր միութիւնն էր Կէօբէն, որ սակայն երկար ժամանակ պիտի չկարենար դէմ դնել Գուլիս էլիզաբէթ-ին:

Այսպէս ուրեմն, Մարտ 20ի առաւօտուն, Համաձայնական նաւատորմը կրնար Կ. Պոլսոյ առջեւ երեւնալ»:

Ի՞նչ բան տեղի պիտի ունենար: Պատասխանը շատ պարզ եւ պայծառ է: Ինչպէս ըսինք, պիտի պայթէր յեղափոխական շարժումը ընդդէմ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կեդրոնական Կոմիտէի 40 անդամներուն եւ անկից ծնունդ առած Թալասաթի, էնվէրի եւ ձէմալի դէմ, որոնց վրայ հիմնուած էր թուրք կառավարութիւնը, եւ Օսմանեան ժողովուրդները խանդավառութեամբ պիտի ընդունէին ֆրանսացիներն ու անգլիացիները, «որոնք գիրեմք պիտի ազատէին կեղեքողներու հրոսախումբէն եւ ատելի գերմանացիներէն, որոնք կ'իշխէին իրենց վրայ»:

ՓԱԽՈՒՍՏԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ՝ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԿՆՈՑՈՎ

Արդէն Լոնդոնի դահլիճը, Պետրոգրադի կառավարութեան խընդրանքին վրայ էր որ երկար տատանումներէ ետքը, տուեր էր Տարտանէլ արշաւելու որոշումը, իբրեւ թէ անոր յաջողութեան մասին շատ կը տարակուսէր:

Անգլիացի ծովակալ՝ Գարտէնի կարծիքով, «պէտք էր վստահիլ Նեղուցը յարակուսով առնուելուն: Միայն երկարատեւ եւ մեծ ծաւալով գործողութիւններ, բաւականաչափ թիւով նաւերու հետ, կրնային այդ յաջողութեան տիրանայ»:

Անգլիացի ծովակալը կը յարէր թէ «ձախողանք մը, Անգլիոյ արեւելի մէջ ունեցած հեղինակութիւնն ու ազդեցութիւնը պիտի քայքայէր»:

Եւ Վինսթըն Չըրչիլ, այդ ժամանակի պետը անգլիական ծովակալութեան, կատարեալ վստահութիւն եւ յոյս ունէր նոր աւարտած Գուիլի Էլիզաբէթ հսկայ մարտանաւին քանդիչ ոյժին վրայ, որ եկեր միացեր էր Միջերկրականի նաւատորմին, առանց գործօն դեռ մը կատարելու:

Ամօթալի փախուստէն անմիջապէս ետք, Լոնդոնի կառավարութիւնը, Չըրչիլի ստիպման տակ, փութացեր էր պաշտօնական զեկուցադիր մը հրատարակել, որուն մէջ կը ծանուցանէր երեք նաւերու ընկզմումը եւ չորս ուրիշ նաւերու ծանրապէս վնասուած ըլլալը: Անգլիական դահլիճը կարծեր էր թէ իր կամաւոր պարտութեան խոստովանութեամբ՝ իր յետին միտքը ծածկած կ'ըլլայ:

Ասոր հաւատաց բարեմիտ Մորկէնթաու, որ այդ անկեղծ վարմունքին մէջ նոր ապացոյց մը կը տեսնէր այն ուղղամտութեան, որով անգլիացիները չէին պահէր նոյնիսկ իրենց գէշ լուրերը, «վարուելակերպ մը, որ մեզ ամերիկացիներս կը նկատեմք իբր լաւագոյնը պատերազմի ժամանակ»:

Պաշտօնական զեկուցադրին հրատարակած գէշ լուրերը ապշուածեան մատներ էին նաեւ Ֆոն Տէր Կոլց փաշան, որ Բելճիքայէն նոր վերադարձեր էր, ուր կառավարիչ եղած էր: Նոյնքան զարմացած էր նաեւ Վանկէնհայմ: Ասոնք իրենց զարմանքը չէին ծածկեր ամերիկեան դեսպանէն.-

«Արտաքին կարգի բան է ասիկա, կը կրկնէր միշտ ֆոն Տէր Կոլցը: Անյուր բան է ասիկա, արձագանգի պէս կը հառաչէր Վանկէնհայմ, զարմացած»:

ՓԱԽՈՒՍՏԻ ԻՍԿԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Իրականին մէջ, Անգլիան դաւաճանած էր իր արեւելեան զինակիցին, որուն կորուստը յայտնի կը տեսնէր այդ փախուստին մէջ: Դիւանագէտ մը ըլլալու պէտք չկար, թափանցելու համար բրիտանական նենգամտութեան մէջ:

Մոռնալու չէ թէ էնվէր փաշան, որ լաւ գիտէր թէ Ռուսիա եւ Անգլիա Ռէվալի մէջ իրարու հետ բարեկամացեր էին Օսմանեան կայսրութիւնը իրարու մէջ բաժնելու համար, որուն հետեւանքը եղաւ Միտհատեան սահամանադրութեան հռչակումը, ազատ եւ բարեկարգ թուրքիայի վրայէն վերցնելու համար օտար միջամտութեան վտանգը:

Ան գիտէր նաեւ թէ Ռուսիան ո՛չ մէկ դիմով կրնար համաձայնիլ իր դարաւոր ոսոխին հետ, եթէ անկէ պատուոյ խոստումը առած չըլլար, որ վերջնական յաղթանակին, Տարտանէլը, Վոսփոփը եւ Կ. Պոլսը նկատէր իբր բնական ժառանգութիւն ձարերու երազին: Նոյնպէս գիտէր որ Անգլիան պէտք ունէր ուսական հսկայ բանակներուն, ջախջախելու համար զինքը սարսափի մատնած զինապաշտ Գերմանիան: Ասոր համար յանձն առեր էր ուսական պայմանը, որուն զրգիլը իրեն համար սովորական խաղ մըն էր, դարերով անոր վարժած ըլլալով:

Եւ էնվէր իրաւունք ունէր ըսելու ամերիկեան դեսպանին.- «Ձեմ կարծեր որ Անգլիան փորձէ խորտակել Տարտանէլի ընդդիմութիւնը Ռուսիոյ պահանջումին վրայ»:

Թէեւ Ֆոն Տէր Կոլց փաշան եւ կայսեր անձնական ներկայացուցիչ՝ Վանկէնհայմը հիացեր էին Լոնդոնի կառավարութեան պաշտօնական զեկուցադրին վրայ, որ, ինչպէս տեսանք, չէր ծածկած իր նաւատորմին կորուստները, սակայն անոնց համար Անգլիոյ ըրածը հանելուկ մը եղած էր:

Յետոյ անոնք կանգ առին այս կէտին վրայ. «Անգլիան պէտք է որ հնազանդի յետին մտքի մը»: Ի՞նչ կրնար ըլլալ ասիկա...

«Այս գիտական դիւանագէտները, կը զրէ Մորկէնթաու, իրարու ետեւէ ֆննութեան կ'անցընեն զանազան շարժառիթները այս տեսակ վարմունքի մը, եւ վերջապէս կ'նգրակացնեն նոյնիսկ Մաքսիմալիզմի գոհացնող կերպով.-

Անգլիան, կ'որոշեն անոնք միաձայն, իրականութեան մէջ, Տարտանէլի ձեռնարկին համար ոչ մէկ խանդավառութիւն ունէր, որով հետեւ յաջողութեան պարագային, պարտաւոր էր Կ. Պոլսը Ռուսիոյ թողուլ, ինչ որ սակայն երբեք մաս չէր կազմեր իր դիտաւորութիւններուն: Իր կորուստները խոստովանելով, Անգլիան իր գիւնակցին ցոյց կու տայ այդ ահագին դժուարութիւնները, մէկ խօսքով անոր անիրականալի ըլլալը. բացի ասկէ կը հասկցնէր իրեն թէ այնքան

քազմավաստակ փորձէ մը ետք, պէտք էր որ իրմէ նոր գոհողութիւններ ակնկալէին»:

Այս էր մերկ իրականութիւնը, որուն վրայ մատերնին դրեր էին երկու գիտնական դիւանագէտները: Որովհետեւ անոնք լաւ գիտէին թէ թուրքերը եւ գերմանները հին եւ տկար բերդերու պաշտպանութեան համար 74 ժամ միայն ռազմանիւթ եւ ռուստի պաշար ունէին, որոնք սպառնալէն ետք, պիտի քաշուէին նեղուցէն, թողլով որ անոնք անարգել մտնեն Կ. Պոլիս:

Էնվէր զուր տեղ ամբաստանած չէր անգլիացիները, ըսելով ամբերիկեան դեսպանին թէ «անգլիացիները թուրք սպաններ կ'ապականեն եւ իր անձին դէմ դաւադրութիւն մը կը միւթեն», ինչ որ կ'ապացուցանէ թէ թուրք սպանները յարաբերութեան մէջ էին անգլիացի ծովային սպաներու հետ, անոնց հաղորդելով ինչ որ կ'անցնէր կը զառնար Տարտանէլի բերդերուն շուրջը:

Էնվէր կոտուշուոր սուտ մըն ալ գլորեց ամբերիկեան դեսպանին, որով իբր թէ «իրենք մեծ քանակութեամբ թնդանօթ եւ ռազմամիւթ ունէին»:

Յարտնի բան էր որ Անգլիան հակամէտ էր աւելի իր կայսրութիւնը կորսնցնելու, քան նեղուցները, Վոսփորը եւ Կ. Պոլիսը Ռուսիոյ ձեռքը զնելու, զիտնալով որ իր դարաւոր մրցակիցը, տիրելով այդ երեք հրաշալի դիրքերուն, պիտի դառնար աշխարհի տէր, որուն առջեւ պիտի բացուէին Միջերկրականի տաք ջուրերը, Պարսկաստանի եւ Հնդկաստանի ճամբաները, եւ ասով՝ Անգլիան պիտի ընդունէր ջախջախիչ հարուած մը, քան ինչ որ պիտի չընդունէր իրեն մղձաւանջ դարձած յաղթական Գերմանիայէ մը:

Բրիտանական ծրագրին մէջ ուրիշ յետին միտք մըն ալ կար. Գերմանիոյ ձեռքով Ռուսիոյ տալ մահացու հարուած մը, եւ օր մը յաղթականօրէն մտնել Կ. Պոլիս, վերջնականապէս տեղաւորուելով Վոսփորի ափերուն վրայ, ձեռք անցընելով աշխարհի տիրապետութեան բանալիները:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԵՆԳԱՄՏՈՒԹԵԱՆ
ԴԱՍԱԿԱՆ ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Մորկէնթաու, հակառակ աչքի վարնող անգլիասէր մը ըլլալուն, կը զրէ. «յաղթանակի մախօրեակին, Համաձայնական նաւատորմը պաշարումը կը վերցնէ»:

Ո՛չ թէ պաշարումը կը վերցնէ, այլ ամօթալի փախուստին սարսափահար երեւոյթ մը կու տայ, զետին թողլով բազմաթիւ թնդանօթներ, ահագին ռազմանիւթ եւ անսպառելի պաշար:

Այս տարօրինակ արարքը անգլիական նենգամտութեան դասական օրինակ մըն էր: Մեծն Բրիտանիան լիովին տեղեակ էր թէ թուրքիան այդ միջոցին ո՛չ Գերմանիայէն եւ ո՛չ ալ Աւստրիայէն ո՛նէլ ռազմանիւթ կը ստանար:

Քարտէսի պարզ քննութիւն մը ցոյց պիտի տայ այդ բանը: Ահա թէ ինչ կը գրէ Մորկէնթաուի հմուտ գրիչը, անուղղակի դատապարտելով անգլո-ֆրանսական նենգամիտ դիւանագիտութիւնը. —

«Իրականութեան մէջ, թուրքիան իր զինակիցներէն այնքան կղզիացած էր, որքան Ռուսիան նամօրինակ դիրքի մը մէջ կը գրտնուէր: Երկու երկաթուղիներ Կ. Պոլիսը Գերմանիոյ կը կապէին. մէկը կ'անցնէր Բուլղարիայէն եւ Սերբիայէն: Այդ պահուն Բուլղարիան չէգոք էր, եւ եթէ նոյնիսկ աչք գոցէր թնդանօթներու եւ ռումբերու փոխադրութեան, նորէն այդ գիծը չէր կրնար օգտագործուիլ, որովհետեւ Սերբիան միշտ ձեռքին մէջ ունէր Նիշէն-Բելկրաս գացող երկաթուղիի կայուածին հակակշիռը, քանի որ տակաւին երկիրը արշաւանքի չէր ենթարկուած:

Միւս գիծը կ'անցնէր Ռումանիայէն, Բուլբրէշի ճամբով, անկախօրէն Սերբիայէն. այս գիծը, ուղղակի պիտի կարենար կապել Քոռութի գործատունը Տարտանէլի հետ, եթէ սերը կառավարութիւնը արտօնէր այդ բանը, եւ այն իրողութիւնը թէ պատերազմական միութիւնը կրնային այնքան բարդութեամբ փոխադրուիլ, կը բացատրէ թերեւս այն կասկածները, որոնք ունեցան: Անգլիացի եւ ֆրանսացի դեսպանները չդադրեցան բողոքել այս ենթադրեալ չէգոքութեան դէմ, բայց իրենց գանգատները միայն գրգռուած հերքումներով ընդունուեցան:

Այսօր այլեւս տարակոյս չկայ որ Բուլբրէշի դահլիճը կատարելապէս պարկեշտ գտնուեցաւ եւ շատ հաւանական է որ գերմանացիներն էին որոնք հնարեցին այս պատմութիւնը, միակ նպատակ ունենալով հաւատացնելու համաձայնականները թէ իրենց պահեստները անսպառ էին» (ՄՈՐԿԷՆԹԱՈՒ, ՂՐՈՒՍ Ժ., էջ 225):

Մենք արդէն գիտենք որ Գերմանիան յաղթելու յոյսը կորսնցուցեր էր, տեսնելով որ օր ըստ օրէ պատերազմի նախանիւթն ու ռուստտեղէնը կը պակսին: Տեսանք նաեւ որ թուրքիան թշուառութեան դուռը հասած, իր օրհասի օրերը կ'ապրէր, եւ Իթթիհատի պարագլուխները ծակեր կը փնտռէին իրենց ոճրապարտ գլուխները թաքցնելու համար:

Անգլիոյ նենգամտութեան երեսէն, Գերմանիան եւ թուրքիան շունչ առին: Կամաւորապէս ռազմամթերքի եւ ռուստտեղէնի թողած աւարն այնքան առատ էր որ կուուելու եւ յաղթելու եռանդը կրկնապատուեցաւ:

ԳԵՐՄԱՆ ԶՕՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Սուճապահար փախուստը՝ Թուրքիոյ գերմանները ծանր մտահոգութենէ մը ազատեր էր: Երբ Տարտանէլը ուբակոծուեցաւ, եւ «Սուրբ Պատերազմը հռչակուեցաւ, Անգլիոյ դէմ զարհուրելի ատելութիւն մը բորբոքեցաւ նեղուցին ամբողջիւնները պաշտպանող թուրք իսլամ զինուորներու սրտին մէջ: «Անոնց դէմքերը, կը գրէ ակնաստես Մորկէնթաուն, կը նառագայթէր այն խորունկ մոլեռանդութեան, որ ոչոք կը կազմէ թուրք զինուորներուն: Պահ մը անոնք կը հաւատային, նորէն կրակ ըրած ըլլալ անհաւատ անգլիացիին դէմ, եւ այդ գործին մէջ կը դնէին իրենց ամբողջ հոգին: Եւ աղաղակներու մէջ կրնայի որոշել իրենց պետին միօրինակ ձայնը, որ լսելի կ'ընէր այն աղօթքը, որ ամբողջ 12 դարեր գիրենք կոռուի մղած էր. «Աստուած մէծ է. միայն մէկ Աստուած կայ, եւ Մուհամմետ անոր մարգարէն է»: Դիտելով արշաւանքի մէջ այս արեւելցիները, որոշ կերպով իրենց դէմքերուն վրայ կարդացի անհաւատներու հանդէպ իրենց անդրդուելի ատելութիւնը, եւ յիշեցի ինչ որ իմ հիւրամեծարներս (գերմաններ) նոյն ատուուն ըսած էին, շօշափելով այն աներածեշտութիւնը որ իրենց զինուորները պէտք չէին խառնուիլ թուրք զինուորներուն հետ, որովհետեւ համոզուած եմ որ այդ պարագային, գոնէ «Սուրբ Պատերազմը» գիրենք մղած պիտի ըլլար ուրիշ բանի մը, եւ թէ թուրք զինուորները, մոռնալով իրենց դաշնակցութիւնը, քրիստոնեաներու դէմ իրենց ատելութիւնը գերմաններու վրայ պիտի յագեցնէին»:

Եւ ջարդի այս սարսափին առջեւն էր, ինչպէս տեսանք, Վանկէնհայմ եւ Բալլավիչինի չէին ուզեր Փոքր Ասիա փոխադրուել, լուրջ կասկածներ ունենալով որ, իբր քրիստոնեաներ, մոլեռանդ թուրքերէն պիտի կոտորուէին իրենց ամբողջ հետեւորդներով, եթէ Համաձայնական նաւատորմը Կ. Պոլիս մտնէր:

Ուստի զարմանք չէ որ ամօթալի փախուստը, ջարդի սպառնալիքի տակ գտնուող Թուրքիոյ գերմաններուն համար կը նշանակէր փրկութիւն՝ ահաւոր վտանգէ մը:

Ուրախութենէն զինովցած գերմանները կործանումի դուռը հասած թուրքերուն տուին 5 միլիառ մարքի ահագին գումար մը, որուն մեծ մասը դործածուեցաւ հաղորդակցութեան թանկագին ճամբուն վրայ պաշտպանութիւններ կառուցանելու, եւ ինչպէս կ'ընէ Մորկէնթաուն, այնքան քիչ ամբացած նեղուցը, հիմա այնքան անվկանդ դարձաւ, որքան Հելիկոյանտ. նոյնիսկ կը հարցուէր թէ արդեօք աշխարհիս բոլոր նաւատորմները միանալով, կրնայի՞ն Տարտանէլի ընդգրկուել:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐ ԱՐՁԱԳԱՆԳԸ ՌՈՒՍՏՈՅ ՄԷՋ

Անգլիական դաւաճանութեան այս անորակելի արարքը այնքան խոր արձագանգ գտաւ Ռուսիոյ կառավարական շրջանակներու մէջ որ 1916ի Նոյեմբերի սկիզբը, անգլիական կառավարութիւնը Ռուսիայէն խնդրեց չհրատարակել Տարտանէլի մասին Ռուսիոյ եւ Անգլիոյ միջեւ կնքուած դաշնագիրը: «Ուրոյ Թոսի» թերթը, որ ծանուցած էր դաշնագրին կնքուելը, կը պահանջէր որ կառավարութիւնը հրատարակէ գանձիկա:

Հանրային կարծիքը չափազանց գրգռուած ըլլալով, «Տումային բացման առիթով, կը գրէր Թան թերթը, ուժգնօրէն քննադատեցին կառավարութեան քաղաքականութիւնը: Խօսուած նաեւ յայտնի ըրին երկրին մէջ տիրող անվստահութիւնը»:

Երբ 1916ի 14 Նոյեմբերին, Ռուսիոյ վարչապետ Շթուրէր հրատարեցաւ, Տումային մէջ իրեն դէմ եղած խիստ բողոքներուն եւ կուսակցութիւններուն հետ համերաշխ աշխատել անկարելի դառնալով, իրեն յաջորդ կարգուեցաւ հաղորդակցութիւններու նախարար՝ զօրավար Թրէքով, քաղաքականութիւնը չփոխուեցաւ: Նոր վարչապետը, մէկ կողմէն հանրային կարծիքը հանդարտեցնելու համար, եւ միւս կողմէ Անգլիոյ եւ Ֆրանսայի ծածուկ բաներ մը հասկցնելու համար, 1916 Նոյեմբեր 23ին, Տումայի ժողովին մէջ յայտարարեց. –

«Ռուսիա հազար տարիէ աւելի է որ կը փափաքի հարաւային կողմէն ազատօրէն բաց ծով ելլել: Ռուս ժողովուրդին վաղուց ի վեր գաղափարականը կը կազմէ Վոսիտրի եւ Տարտանէլի նեղուցներուն քանալին ձեռք ձգել եւ այսպէս Կ. Պոլսոյ դռներուն վրայ Ռուս կայսերական զինանշանին գետեղուիլը տեսնել:

Ահա այս փափաքները իրագործելու մօտ են: Մեր հաւատարիմ դաշնակիցները ըմբռնեցին ասոր կարեւորութիւնը եւ անոր կենսական խնդիր մը ըլլալը մեզի համար: 1914ին Անգլիոյ Ֆրանսայի եւ մեր միջեւ կնքուած պայմանագրութեան՝ Իտալիա եւս հաւանեցաւ:

Այս պայմանագիրով, վճարար վաւերացուած եւ հաստատուած է Ռուսիոյ ունեցած իրաւունքը նեղուցներուն եւ Կ. Պոլսոյ տիրանալուն մասին:

Ռուսերը գիտնալու են թէ ինչո՞ւ համար կը նուիրեն իրենց արիւնը: Մեր դաշնակիցներուն հետ յաջողութեամբ կնքուած նոր պայմանագիրը այսօր ձեգի կը ներկայացնեմ եւ այս բեմէն կը կրկնեմ թէ մե՛ր եւ մե՛ր դաշնակիցներուն միջեւ կատարեալ համերաշխութիւն եւ ներդաշնակութիւն կայ»:

Ռուս վարչապետին ճառին մէջ միայն մէկ իրականութիւն կար, որ է դարաւոր երազը նեղուցներուն, Վոսիտրին եւ Կ. Պոլսոյ տիրա-

նալու տենչանքը: Ճառին միւս մասերը շողոքորթութեամբ լեցուն կտորներ էին:

Ռուս մանկամիտ վարչապետը դեռ չէր հասկցած որ Անգլիան սատանային հետ ալ դաշինք կը կնքէր իր շահերը ապահովելու համար:

ԿԱՄԱՒՈՐ ՓԱԽՈՒՍՏԻՆ ԱՂԻՏԱԻՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Համաձայնական նաւատորմին խուճապահար փախուստը ճակատագրական հետեւանքներ ունեցաւ: Անիկա գերման եւ թուրք զինակցութիւնը ամբապնդեց:

Այդ աղէտալի փախուստին անմիջական հետեւանքը եղաւ ճշտել չէզոք Բուլղարիոյ դիրքը, որուն վերապահուած էր վճռական դեր մը:

Այդ շրջանին բուլղար զինակցութիւնը աճուրդի գրուած էր: Հակառակ Համաձայնական նաւատորմին կրած ձախողանքին, թուրքերը եւ գերմանացիները բոլորովին ապահով չէին, քանի որ Կ. Պոլսոյ ամէնէն աւելի ուղղակի ճամբան թշնամիին համար միշտ մերձենալի էր:

Գերմանացի մը, կառավարական շրջանակի ամէնէն ազդեցիկներէն մէկը, իրաւունք ունէր ամերիկեան դեսպանին յայտարարելու. — «Մեքէ չեք կրնար Տարտանէլը պահել, առանց Բուլղարիոյ զինուորական աջակցութեան»:

Այս մէկ քանի խօսքին մէջ ամփոփուած է պատերազմի ամբողջ ողբերգութիւնը: Ասիկա կը նշանակէր՝ որ եթէ այս ազգը չընդգրկէր թուրքիոյ եւ կեդրոնական կայսրութիւններուն դատը, Կէլիպոլոսի արշաւանքը պիտի յաջողէր, Կ. Պոլիսը պիտի իյնար, Օսմանեան կայսրութիւնը պիտի կործանէր, Ռուսիան նոր կեանք պիտի առնէր տնտեսապէս եւ զինուորական գետնի վրայ, եւ պատերազմը յարաբերաբար կարճ ժամանակի մը մէջ պիտի վերջանար Համաձայնութեան յաղթանակով: Հաւանական է որ Բուլղար չէզոքութիւնն ալ նոյն արդիւնքը տար:

Այսպէս, կարելի է առանց չափազանցութեան ըսել որ 1915ի Սեպտեմբերին եւ Հոկտեմբերին՝ պատերազմին տեւողութիւնը կախում ունէր Ֆելտիմանտ Չարէն:

Այս իրողութեան կարեւորութիւնը այս տեսակէտով մեծ է: Բուրքէշի անիրաւ զաշինքով, ինչ որ եւրոպական թուրքիայէն կը մնայ, անկանոն ցամաքի բարակ գոտի մըն է միայն, Կ. Պոլսէն հազիւ 100 մղոնի չափ զէպի արեւմուտք երկարող, որով բոլոր սահմանադրութիւնները կը հպին բուլղարիոյ սահմանազրուիներուն: Դէպի արեւմուտեան Եւրոպա երկարող երկաթուղիի գլխաւոր գիծը կը մեկնի Կ. Պոլսէն եւ կ'անցնի Ադրիանուպոլիսէն, Ֆիլիպպէէն եւ Սոֆիայէն:

Այդ պահուն, Բուլղարիան կրնար կէս միլիոն հողինոց բանակ մը հանել, լաւ մարզուած եւ կատարելապէս զինուած, որ քայլերով հին Բիւզանդիոնին վրայ, իր ճամբուն վրայ գործնականապէս ո'չ մէկ արգելքի պիտի հանդիպէր: Թուրքիան ինքն ալ ունէր կարեւոր բանակ մը, սակայն անիկա այդ միջոցին զրադած էր նուաճելու համար Տարտանէլի մէջ Համաձայնական ոյժերը եւ Կովկասի մէջ ալ ուսեսերը: Եթէ Բուլղարիան թշնամի դառնար, թուրքիան Գերմանիայէն ո'չ զինուոր եւ ո'չ ալ ռազմանիւթ կրնար ստանալ: Կատարելապէս կղզիանալու վտանգին ենթարկուած էր, եւ իր հզօր զրացիներու հարուածներուն տակ, իբր զինուորական զօրութիւն եւ իբր եւրոպական պետութիւն, անհետանալու դատապարտուած, շատ կարճ պայքարէ մը յետոյ:

Սակայն, դիւանագիտութեան հաշիւներուն չէր դար ո'չ թուրքիոյ կործանումը, ո'չ ալ պատերազմի շուտով աւարտումը, այլ ճարական Ռուսիոյ կործանումը, որուն համար անհրաժեշտ էր պատերազմի երկարաձգումը: Ասոր համար անփոյթ գտնուեցան՝ անիրաւուած Բուլղարիան Համաձայնութեան կողմը շահելուն:

ԷՆՎԷՐ ՓԱՇԱՆ՝ ԻՐ ՊԱՐԾԵՆԿՈՏՈՒԹԵԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԷՏԻՆ

Անգլիական նաւատորմին կամաւոր եւ անփառունակ փախուստը՝ թուրքիոյ պատերազմական նախարարը հասցուց իր պարծենկոտութեան եւ հրճուանքի գազաթնակէտին: Եւ ո'վ կարող էր զրկել զայն այդքան եւ ալ աւելի փառաւորուելու իրաւունքէն: Չէ՞ որ գերման եւ թուրք տաղանդաւոր զօրավարներ եւ քաղաքական աչքի զարնող անձնաւորութիւններ միաբան վկայեր էին թէ անգլիական նաւատորմը անպարտելի է եւ կարող է Տարտանէլէն անցնիլ եւ Կ. Պոլիս մտնել: Չէ՞ որ միայն ինքն էր որ կարող է Տարտանէլէն անցնիլ եւ Կ. Պոլիս մտնել: Չէ՞ որ միայն ինքն էր որ մարզարէացիներ էր թէ «անգլիական մաւտորմը անպարտելի չէ»:

Նափոյէտնի այդ ծաղրանկարը, որ ինչպէս տեսանք, պալքանեան պատերազմի միջոցին առանց գնդակ մը արձակելու տիրեր էր Ադրիանուպոլսոյ, եւ կովկասեան ճակատին վրայ խայտառակօրէն պարտուած, ամօթէն երեսը ծածկեր էր իր ընկերներէն, որոնց խոստացեր էր բովանդակ Կովկասը զնել Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ, այժմ ինքզինքը կը նկատէր անպարտելի զօրավար մը եւ հեռատես քաղաքագէտ մը:

Ան այլեւս գլուխ կանգնեցաւ այն օսմանացիներուն, որոնք, ինչպէս կը վկայէ Մորկէնթաու, կը համարէին թէ վճռական յաղթանակը տարած էին: Ամբողջ դարերու ընթացքին, կ'ըսէին անոնք,

բրիտանական նաւատորմը իշխանը եղած էր ծովերու, եւ իրենք էին որ այսօր զանհիկա կ'ենթարկէին իր առաջին մեծ ձախորդութեան:

«Իրենց ամբարտաւանութեան մէջ, երիտասարդ թուրք պարագլուխները, կը տեսնէին արդէն իրենց երկրին ամբողջական վերագարթումը: Այն երկիրը, որ անկումի սպառնալիքին տակ էր, յանկարծ կը վերսկսի նոր ու փառաւոր գոյութեան մը: Հպարտ ու ամբարտաւան, անոնք կը յանդգնէին վերէն նայիլ այն ժողովուրդին որ իրենց սորվեցուցած էր արդիական պատերազմը»:

Այդ ժողովուրդը գերմանացին էր: «Շատ քրգոռած կ'երեւէին, կը գրէ Մորկէնթաու, երբ կը յիշեցնէին թէ իրենց յաջողութիւններուն մէկ մասը կը պարտէին գերմաններուն»:

Ամէնէն աւելի գրգռուածը էնվէր փաշան էր: «Ինչո՞ւ համար մենք ինքզինքնիս պէտք ենք պարտական նկատել ասոնց, կ'ըսէր ան ամերիկեան ղեսպանին: Անոնք ինչ ըրին մեզի համար, բաղդատելով այն բանին հետ՝ որ մենք ըրինք իրենց համար: Մեզի քիչ մը փոխ դրամ տուին, իրաւ է մէկ քանի սպաներ դրկեցին, բայց նկատի առէք մեր ծառայութիւնները: Մենք յաղթեցինք բրիտանական նաւատորմին, ինչ որ անկարելի էր գերմանացիներուն եւ ուրիշ ո'նէ ազգի: Մենք Կովկասի մէջ զօրաւոր բանակներ դրինք եւ հոն պարտադրեցինք մնալ ռուսական բազմաթիւ զօրագունդեր, որոնք կրնային արեւմտեան ճակատը դրկուած ըլլալ: Նոյնպէս ստիպեցինք Անգլիան որ կարեւոր ոյժերը վար դնէ Եգիպտոսի եւ Միջագետքի մէջ, եւ այս կերպով տկարացուցինք Ֆրանսայի մէջ համաձայնական զօրաբաժինները: Ո՛չ, գերմանացիները երբեք առանց մեզի տարած պիտի չըլլային իրենց յաղթանակները. երախտագիտութեան բեռը ամբողջովին կը ծանրանայ անոնց վրայ»:

Այս կաշառակեր մարդը, գերմանական ոսկիներով հարստացած, զիրքի եւ պաշտօնի հասած, հակառակ հանրային կարծիքին թուրքիան պատերազմի բոցերուն մէջ նետած, դարձեր էր այսքան ամբարտաւան եւ կոկոզավիղ, թէեւ գիտէր թէ ձեռք բերուած յաջողութիւնը պարզապէս անարիւն յաղթանակ մըն էր, եւ ո՛չ միայն ապերախտութեամբ երես կը դարձնէր Գերմանիային, այլ ինչպէս պիտի տեսնենք իր տեղին, կը դաւաճանէր Մուսթաֆա Գեմալ փաշային, որ իսկական յաղթանակներ կը շահի ամբողջ Եւրոպայի դէմ, ոտքի կանգնեցնելով իթթիհատական կառավարութեան ձեռքով կորուստի դուռը հասած թուրքիան:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԹՐՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՎԾԻՌԸ

ԲՆԱԶՆՁՈՒՄԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ

Երբ մոսկովեան նենգամիտ դիւանագիտութիւնը իր սաղրանքներով բալբանեան ազգերը թուրքիոյ դէմ լարեց եւ բռնկեցնել տուաւ թուրք-պալբանեան պատերազմը, եւ նոյն շրջանին կոմս Վորոնցով-Դաշկովի աղուէսային դիւանագիտութիւնը ձեռք առաւ դիւանագիտականորէն տհաս՝ Գէորգ Ե. ձարամուր Կաթողիկոսն ու Աղզային Բիւրոյի մի քանի ազգեցիկ անդամները, որոնք հայոց հին եւ նոր զպրութեան անտեղեակ եւ պատմական արիւնոտ դասերէն ո՛չ մէկ օգուտ քաղած մարդիկ էին, եւ անոնց միջոցով Հայկական Հարցի նոր արծարծումը ռուսական կառավարութեան նախաձեռնութեամբ՝ միջազգային դիւանագիտութեան սեղանին վրայ դրուեցաւ, հայուն եւ թուրքին միջեւ նորէն բացուեցաւ այն խոր անդունդը, որ թուրք սահմանադրութեան հռչակումը լեցուցեր էր երկու ժողովուրդները իրարու մօտեցնելով:

Մենք արդէն մանրամասնորէն ծանօթ ենք իթթիհատական կառավարութեան ջանքերուն, անմիջապէս համաձայնութիւն գոյացնելու հայերու հետ, դադրեցնելու համար ռուսական միջամտութիւնը, որուն պատճառով հռչակուեր էր Օսմանեան Սահմանադրութիւնը եւ Համիտ Բ-ի տապալումը:

Գոււմ-Գարուի Պատրիարքարանը, ինչպէս տեսանք, գտնուելով էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ճնշիչ ազդեցութեան տակ, նետուած էր Կ. Պոլսոյ ռուս ղեսպանին ճանկերուն մէջ: «Այս ինչ վարչաձեւի դիւանագետը, կը գրէ Մորկէնթաու, գոռոզ եւ արիամարհոտ էր. ան ծայր աստիճան նեղգաժէտ էր, բայց թուրքերուն հետ կը վարուէր արիամարհանքով, ի յայտ կը բերէր գրեթէ այն տեսակ շահագրգռութիւն մը, որ երկրին տէրը դառնալու կամքն էր եւ կը թուէր արդէն գործադրել «Բննութիւնը» այս ամօրապարտ կառավարութեան գլխուն վրայ»:

Ոյժ առած ռուս ղեսպան Գիրսընի ցուցմունքներէն, Պատրիարքարանը բացէ ի բաց կը մերժէր հաւատք ընծայել ներքին գործոց նախարար՝ Թալաթի խոստումներուն, Հայկական Հարցը նպաստաւոր կերպով լուծելու համար:

Այս որոշումը, ինչպէս տեսանք, անհնարին կատաղութեամբ լեցուց «զնչունն», որու սրտին մէջ մտաւ չար սատանայ մը, թրքահայութեանէն վրէժը լուծելու համար, մանաւանդ որ գիտէր թէ Անգլիան եւ Ֆրանսան համաձայն էին Ռուսիոյ վերապահել Կ. Պոլսոյ եւ Տարսանէլի ժառանգութիւնը, ինչպէս նաեւ անոր նուիրելու թրքահայաստանի ժառանգութիւնը:

Գիտենք նաեւ, որ երբ ոռու դեսպանատան ճնշման տակ ստորագրուեցաւ Հայաստանի մէջ մտցուելիք բարենորոգումներու հարցը, իթթիհատական կառավարութիւնը յայտնի կերպով թշնամական դիրք բռնեց թրքահայ ժողովուրդի դէմ, այնպէս որ երբ գաւառներու մէջ տարածուեցաւ լուրը թէ բարենորոգումներու ոռուական ծրագիրը ընդունուած է, նորէն տարածուեցաւ թուրք եւ քիւրտ ժողովուրդներու մէջ ընդհանուր կատաղութիւն՝ քրիստոնեաներու եւ մանաւանդ հայերու դէմ:

Այդ շրջանին է որ «Հորիզոն» թերթը ունեցաւ մտայն կանխատեսութիւն մը, որուն համաձայն կոտորածները անխուսափելի էին: Իսկ երբ համաեւրոպական պատերազմին հետեւանքով՝ թուրքիան դարձաւ Գերմանիոյ դաշնակիցը, ամէն ինչ պատրաստ էր կոտորածները սկսելու համար:

Այս բոլորը գիտէին թէ՛ Գէորգ Ե. Կաթողիկոսը եւ թէ՛ Թիֆլիսի Իբրտոյի անդամները, սակայն անոնք ձարամոլութեան մէջ այնքան մխրճուել էին, որ փոխանակ նշմարելու կոմս Վորոնցով-Դաչկովի լարած թակարդները, մահացու վտանգը՝ ընդդէմ թրքահայ ժողովուրդին, ա՛յլ աւելի նետուեցան թակարդին մէջ, բանալով խոր անդունդ մը հայ եւ թուրք ժողովուրդներու միջեւ, որոնք այլեւս իրարու դէմ զինուեցան իբր անհաշտ թշնամիներ:

Այս ահաւոր ճգնաժամին էր որ էրզրումի մէջ գումարուեցաւ, ինչպէս տեսանք, Դաշնակցութեան համագումարը, ուր Դաշնակցութեան պետերը իմաստուն որոշում տուին՝ մերժելով «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կեդրոնական Կոմիտէին անօրէն առաջարկը, որ կը ստիպէր Դաշնակցութեան պետերը՝ Ռուսաստանի դէմ ապստամբեցնել հայերը, վրացիները եւ թաթարները, եւ այդ օրէն ի վեր՝ իթթիհատ վրէժով լեցուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

Իսկ երբ մէկ կողմէն Վասպուրականի մէջ հայերը թուրք բանակէն դասալիք եղան, եւ միւս կողմէ Վորոնցով-Դաչկովի նենգամտութեամբ կազմուեցան հայ կամաւորական գունդերը, որոնց փոխարէն Հայաստան ինքնավար պիտի դառնար Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ, երիտասարդ թուրքերը դիմեցին համիտականութեան եւ գերմանականութեան գիրկը, իսկ էջմիածնի ընդհանրական Կաթողիկոսը, իր եկեղեցական եւ աշխարհական խորհրդականներով՝ ձարականութեան գիրկը: Այս երեք գիրկերը կը միանան,

կը դառնան անյատակ գերեզման մը, որուն մէջ, կ'անհետանան միլիոնէ աւելի հայեր:

Թրքահայ ժողովուրդի բնաջնջումին դիւային ծրագիրէն առաջ, անհրաժեշտ է նշել թէ հայ ժողովուրդի կրօնական եւ աշխարհական ղեկավարներու անպատասխանատու, ինքնակամ եւ պատեհապաշտ դիւանագիտութեամբ, 32 տարիներէ ի վեր հայ ժողովուրդին գլխուն եկած մեծամեծ փորձանքներէն ո՛չ մէկ դաս, ո՛չ մէկ խրատ քաղած են, մանաւանդ թէ այդ զարհուրելի փորձանքները՝ պատմութեան զարհուրելի կրկնութեամբ տեղի ունեցած են:

ԳԺՈՒԽՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Երբ համաեւրոպական պատերազմէն առաջ, Գերմանիան ոռուական շահերու ռեսերիմ թշնամին՝ առիական թուրքիոյ մէջ աշխատեցաւ, ինչպէս տեսանք, իր կողմը շահել հայերը եւ չյաջողեցաւ, սիրտը դիւային ատելութեամբ լեցուեցաւ անոնց դէմ:

Հակաիթթիհատական թուրք գրող մը, Մէվլան Ջատէ Ռիֆաաթ, քօղը կը վերցնէ գաղտնիքի մը վրայէն, պատմելով թէ «պատերազմին սկիզբը՝ Վանկէնեալմ Բարձրագոյն Դուռը Անկախացած է եւ յայտարարած թէ իր կառավարութիւնը պիտի չմիջամտէ եթէ բուրքերը հայոց հետ հաշիւմին մաքրեմ իրենց գիտցած ձեւով»:

Ուրեմն, պայծառ կերպով յայտնի է թէ հայոց բնաջնջումի որոշումը ո՛չ թէ Վանի կարծեցեալ ապստամբութեան հետ կապուած է, ինչպէս դիտումնաւոր կերպով կ'ենթադրէ Լէօ պատմագիրը, այլ շատ կանուխէն եւ կապուած է Հայկական Հարցին արծարծումին հետ:

Բնաջնջում դիւային ծրագիրին որոշումը տրուած է հրէական միջազգային Ֆրանմասոնութեան կեդրոնին մէջ:

Այս որոշումին մէջն էր, ինչպէս իր տեղը սկնարկեցինք, որ հրեաները համոզեր էին «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէին ազդեցիկ անդամները, որ քրիստոնեայ յոյները եւ հայերը, ինչպէս նաեւ քիւրտները, օտար միջամտութեան ազդեցութենէն ազատելու համար՝ հարկ էր խառն ամուսնութեամբ ձուլել թուրք ցեղին հետ, թրքացնել...:

Այս ծրագիրը յաջողած չըլլալով, այս երկրորդ տխրահուշակ ժողովին մէջ որոշեցին Հայկական Հարցը լուծել այնպիսի ահաւոր եղեռնով մը՝ որ իրենց ցեղապետներն անգամ ճէնկիդ խանը եւ թիմուր Լէնկը, ապահար մնան:

Ժողովին մէջ բնաջնջումին ծրագիրը գործադրելու ժամանակը հասած համարուեցաւ, մեզի նոյն անյայտ թուականի մը մէջ, ենթադրաբար հայ կամաւորական գունդերը կազմուելէն ետքը:

Արդարեւ, կամաւորական գունդերու կազմաւորումը թրջակատ-
ղեցուցիչ արարքներէն ամէնէն աւելի աչք ծակողն էր, մանաւանդ որ
ամերիկահայ կուսակցական թերթեր՝ կարճատեսութեամբ հրատա-
րակեցին կովկասահայ կամաւորներու նկարներ, որոնք մեծ փաստ
եղան թուրք կառավարութեան եւ Իթթիհատ կուսակցութեան ձեռքը
եւ հայոց դէմ գրգռութիւնը վերջին ծայր հասցուցին:

Չարաժողովին կը նախագահէր բուլղար «զնչուն»՝ Թալաաթ փա-
շան, Թուրքիոյ զիկտատորը եւ ներքին գործոց նախարարը: Ներ-
կայ էին էնվէր փաշա, բժիշկ Նազըմ, Հասան Ֆէհմի, Գարա Քէմալ,
Պէհատտին Շաքիր, Ճաւիտ Պէյ, Թաւմ կուսակցական պարբերաթեր-
թին նշանաւոր խմբագրապետը, որ այնքան կատաղի եւ գրգռիչ
յօդուածներ գրեր էր հայոց դէմ, եւ ուրիշներ:

Այդ չարաժողովին պատուոյ նախագահն էր Սադայէլը, դասա-
դուխը դեւերու, որ իբր գորավար կ'երեւէր անոնց մէջ: Ամէն մէկ
Իթթիհատական, գործածելով Եղիշէի գեղեցիկ բացատրութիւնը,
«ձեռք առաւ սատանան իբր վահան, եւ հագաւ գայմ իբրեւ զրահ, եւ
եղաւ կատարեալ զինուոր մը անոր կամքին»:

Այդ ընդհանուր համաժողովին մէջ՝ Իթթիհատ-Թէրրազը, այս-
ինքն «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան թուրք ազ-
գայնական կոմիտէն՝ դատեց հայ ազգը եւ դատապարտեց մահուան:

ԲՆԱԶՆՁՈՒՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Այս ահաւոր եւ դժոխային ծրագրին կազմակերպումը եւ ուղ-
ղութիւնը յանձնուեցաւ գործադիր յանձնախումբի մը, որուն ան-
դամներն էին բժիշկ Նազըմ, բժիշկ Պէհատտին Շաքիր եւ կրթական
նախարար՝ Շիւքրի պէյը, թուրք մտաւորականութեան լաւագո՞յն
ներկայացուցիչները...

Այս յանձնախումբէն գատ, Թալաաթ փաշան, նախ իբր ներքին
գործոց նախարար եւ յետոյ՝ իբր վարչապետ, պաշտօնապէս վերին
ուղղիչ եւ հրամանատար կարգուեցաւ, իրեն ալ բազուկ ունենալով
ձանպղատ բորենին:

Երեքներու յանձնախումբէն՝ Պէհատտին Շաքիր յղացաւ բնաջըն-
ջումի պարզ եւ դիւային ծրագիր մը, որ արբանեակներուն ձեռքով
գործադրութեան պիտի դրուէր: Այդ ծրագիրը երկու մասերէ կը
բաղկանար. առաջինը տեղահանութիւն, երկրորդը սպանութիւն:

Արդար ըլլալու համար, պէտք է ըսել թէ տեղահանութեան եւ
ամբողջ ազգ մը կոտորելու դադափարները՝ ծնունդ եւ գերմանական
մտքին, գործադրուած թուրքին ձեռքով, որ դարերով իր հպատակ-
ները կոտորեր էր, դառնալով վարպետ մասգործ մը:



Պեհատտին Շաքիր

«Տեղահանութեան» դադափարին հեղինակն է, ինչպէս տեսանք,
«հայաւեր»՝ դուտ. Ռոհրրախ, իսկ «սպանութեան» դադափարին
հեղինակը՝ «հայատեաց» Վիլհելմ Բ. կայսրը:

ԲՆԱԶՆՁՈՒՄԻ ԳՈՐԾԱԴԻՐՈՒԹԵԱՆ
ՏԱՄՆԵՐԿՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

Հայ ժողովուրդը մահուան դատապարտուած էր հետեւեալ դիւա-
յին գաղտնի ծրագիրով, բաղկացած 12 կէտերէ:

1.- Ընկերակցութիւններու օրէնքին Գ. եւ Դ. յօդուածներէն
օգտուելով, խափանել բոլոր հայ ընկերակցութիւնները եւ անյա-
պաղ ձերբակալել անոնց վարչական մարմիններէն բոլոր անոնք, որ

հակառակ կ'աշխատէին Իթթիհատի, եւ զրկել զանոնք Մուսուլի եւ Բաղտատի պէս հեռաւոր նահանգները ու փճացնել:

Զերբակալել նոյնպէս իւրաքանչիւր հայաբնակ քաղաքներու ազգային գործօն անդամները, եկեղեցական թէ աշխարհական, կուսակցական թէ անկուսակցական, ազատական թէ պահպանողական, կը բաւէ որ ժողովուրդին վրայ ազդեցութիւն ունենան, եւ բանտարկելով՝ չէզոքացնել արտաքին աշխարհէն, որպէսզի չկարենան ժողովուրդը կառավարութեան դէմ ըմբոստացնել:

2.- Ընդհանուր կերպով զինաթափ ընել հայ ժողովուրդը, մինչեւ խոհանոցի մեծ դանակները, անհնար դարձնելով ո՛րեւէ ընդվզում:

3.- Յատուկ պատշաճ միջոցներով՝ իսլամական կարծիքը պատրաստել: Վանի, էրզրումի եւ Ատանայի պէս տեղեր, ուր հայերն արդէն իսկ իրենց ընթացքով իսլամներուն պժգանքը շահած են, կազմակերպել դէպքեր, ինչպէս Ռուսիա ըրաւ Բաքուի մէջ:

4.- Էրզրումի, Վանի, Սամուրէթ-իւլ-Ազազի եւ Բիթլիսի պէս նահանգներու մէջ՝ զործադրութիւնը բոլորովին ժողովուրդին թողնելով, զօրքերն ու կարգապահական ոյժերը իբր թէ շարդերը արգիլելու գործածել: Իսկ Ատանայի, Սվազի, Պրուսայի, Նիկոմիդիոյ եւ Իզմիրի պէս վայրերու մէջ, իսլամներուն օգնել՝ զինուորական ոյժով:

5.- Բնաջնջումը գործադրել անխնայ կերպով, առանց խտրութեան տարիքի եւ սեռի, բայց մասնաւորապէս յիսունէն վար այրերու եւ դպրոցի ուսուցիչներուն վրայ: Աղջիկներն ու մանուկները թողուլ իսլամացնելու համար:

6.- Փախչիլ յաջողածներուն ընտանիքը մէջտեղէն վերցնել եւ միջոցներ ձեռք առնել՝ երկրին հետ անոնց կապը բոլորովին խզելու համար:

7.- Մերժել իսլամութեան ո՛րեւէ առաջարկ, նկատելով որ 1895-96ի դէպքերը ցոյց տուին որ հայերու հաւատափոխութիւնը չի՛ կրնար անկեղծ ըլլալ:

8.- Ազգային եւ անհատական շարժուն եւ անշարժ ամբողջ հարստութիւնը հայ ժողովուրդին, եւ տեղական զբամատուներու մէջ աւանդ զրուած զբամներն ու ոսկի եւ արծաթ զարդեղէնները յարքունիս գրաւել, իբր լքեալ անտէր գոյք:

9.- Հայ կառավարական պաշտօնեաները վտարել բոլոր պաշտօնատուներէն, պատճառաբանելով թէ լրտեսութիւն ըրած են:

10.- Բանակին մէջ գտնուողները բնաջնջել պատշաճ ձեւով, զինուորական իշխանութիւններու կողմէ:

11.- Գործողութիւնը միաժամանակ սկսիլ եւ այսպէս ինքնապաշտպանութեան պատրաստուելու ժամանակ չթողուլ:

12.- Վերջին ծայր հոգ տանիլ՝ որ այս հրահանգները գաղտնի մնան, միայն մէկ երկու հոգիի միջեւ:

Ինչպէս կը տեսնուի, ո՛րքան սատանայական է բնաջնջումի գաղտնիքը, որ պատմութեան մեծագոյն ոճիրն է եւ յաւիտենական ամօթը, նոյնքան զիւային են այդ բնաջնջումին որոշումները, որոնք կէտ առ կէտ գործադրուեցան:

Այս ձեւով կնքուեցաւ մահուան դատավճիռը անգէն ու անպաշտպան ժողովուրդի մը դէմ, որ հայկական հողերու անխճեալ հարցին վրայ գաղափար անգամ չունէր, եւ չորս ու կէս դար ճգնել, քրտինք թափել էր Թուրքիան տնտեսապէս ապրեցնելու համար, եւ իր ամիրաներու ճարտարութեամբ եւ հաւատարմութեամբ՝ բարձրացուցել էր սուլթանական փառքը, այն միակ պատրուակով որ ռուս, անգլիական եւ համիտեան կառավարութիւններու դիւանազիտական նենգաւոր խաղերը 16րդ եւ 63րդ յօդուածները կախել էին հայ ժողովուրդի վրդէն իբր ճակատագիր. ասիկա մեծագոյն չարիքն ու ոճիրն է միջազգային իրաւունքին մէջ:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ՝ ՀԱՅ ԴԱԻԱՃԱՆՆԵՐՈՎ ԾՐՋԱՊԱՏՈՒԱԾ

Բնաջնջումի ծրագիրը գործադրութեան չսկսած, թուրք կառավարութիւնը ձեռք զարկաւ ուրիշ պատրաստութիւններու, իբր լրացուցիչ մասեր ահաւոր եղեռնին: Նախ, ներքին գործոց ամենագոր նախարար Թալաթ, Պատրիարքարանին դուրսն ու ներսը շրջապատել տուաւ հայ դաւաճաններով, ծածկուած խորհրդակախի եւ բարեկամական քօղի տակ:

Այս հայ դաւաճաններէն ամէնէն աւելի վատերն էին Պէշիկթաշի տխրահռչակ Միթթար Արքիմ Մկրտիչեան եւ Պատրիարքարանի գործակատար Գամէր Շիրիմեան, որոնք, ինչպէս կը գրէ ականատես վկան՝ Պալաթեան Վրդ.ը, «Թալաթ ֆարտարօրէն կը գործածէր, իրագել մնալու համար Ազգային Պատրիարքարանի ներքին ամէն իրադարձութեանց»:

Նոյն գրիչը կ'ուրուագծէ սեւ պատկեր մը. «գառնագգեստ գայլերու վոհմակ մը, որոնց մէջ յեղափոխականի պատուանուը կրող բախտախնդիրներ եւ չէին պակսեր, ինչպէս Հմայեակ Արամեանց, խլուրդային ժիր գործուէութեան մէջ էին, եւ ամէն ջանք կ'ընէին Հայոց Պատրիարքը համոզելու, Թալաթի կողմէ ապահովել «սխալմանք» բերելով՝ թէ հայոց ո՛րեւէ վտանգ չի սպառնար: Ներքին գործոց

նախարարը հայ եւ թուրք բոլոր փորձ դաւաճաններու եւ լրտեսներու գաղտնի բանակը շարժման մէջ դրած էր՝ օրը օրին իրագրել մնալու համար մայրաքաղաքի հայ կեանքի բոլոր փուլերուն, ըստ այնմ՝ խաւարին մէջ իր դեկը գործածելու համար՝ դէպի հայ ցեղի ջնջման արդէն որոշուած արիւնաժարաւ նպատակը»:

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՍԵՒ ՅԱՆԿԸ

Հայոց բնաջնջումը ծրագրող իթիհատական կառավարութեան եւ անոր ետեւ թաքնուած իթիհատական կեղրոնական կոմիտէին առաջին մտահոգութիւններէն մին եղաւ՝ մեր ժողովուրդը զրկել իր մտաւորականներէն, որոնք բնական առաջնորդներն ու խորհրդականներն են ազգի մը: Պէտք էր որ անոնք բոլորն ալ ոչնչանային, թէ՛ մայրաքաղաքին եւ թէ՛ գաւառներուն մէջ:

4. Պոլսոյ Հայ մտաւորականներուն եւ յեղափոխական գործիչներուն պատկանող դասակարգի սեւ ցանկին գլխաւոր հեղինակն էր վերոյիշեալ Միխիմար Արթին Մկրտիչեան: Բոլոր ցանկի առնուածները շուրջ 250 հոգի էին, ինչպէս կը վկայէ ազանջալուր վկան՝ 4. Պոլսի Հայ գրագէտ Միքայէլ Շամտաճեանը իր «Հայ մտքին հարկը Նդիռնիմ» գործին մէջ:

Հայ յեղափոխական գործիչները՝ այնպիսի միամտութեամբ յարած էին թալանարկի իրր Հայոց մեծ բարեկամի, որ երբեք մտքերնէն չէր անցած ձեւով մը արտասահման ապաստանիլ. անոնք պատանդ մնացին կառավարութեան ձեռքը, եւ դիւրին եղաւ զանոնք ձերբակալել որոշեալ օրը:

Գրիգոր Զօհրապի պարագան՝ աւելի քան խօսուեն փաստ մըն է: «Ամենակարեւոր նախապատրաստութիւնը այն եղաւ, կը գրէ Յարութիւն Աստուրեան, որ այդ զարհուրելի օրերուն 4. Պոլսի կը գտնուէր, կառավարութիւնը 1916 մինչեւ 55 տարեկան հայերը, թիւով 200.000 հոգի, դրօշի տակ կանչեց եւ գանձի իրր գործաւոր խրամ փորելու աշխատցուց: Զգուշացաւ անոնց ձեռքը գեմք տալէն, որով շուրջ 300.000 հայ այր մարդիկ ստիպուեցան թողուլ իրենց տունը եւ ընտանիքի բնակարանը եւ գացին ծառայելու Օսմանեան հայրենիքին, որ ծածուկէն իրենց կեանքին դէմ կը դաւաճանէր: Քաղաքներու մէջ մնացին միայն ծերեր, կիներ, մանուկներ եւ կամ դրօշի տակ չկանչուած սակաւ այրեր» (Պատմութիւն Հայոց, Պուլէնոս Այրէս, 1947, էջ 409):

Յետոյ գաւառներուն մէջ չնչին պատրուակով երեւելի անձերը բռնեց, բանտեց եւ ապա ձեռք տակ սպաննեց, ոմանք կախեց, ուրիշներ՝ խոշտանգելով մեռցուց, սարսափ ազգելով մնացողներուն վրայ:

ՈՃՐԱԳՈՐԾ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Երեքներու ոճրապարտ յանձնախումբը, լաւ գիտնալով թէ զրոնար պիտի ըլլայ քաղքենի թուրքերու ձեռքով բնաջնջ ընել Հայերը, որոնք երկար դարերով թուրք ժողովուրդին հետ բարի դրացիութեամբ ապրէր էին, հնարեց արագ սպանութեան զարհուրելի միջոց մը, որուն վրայ դեւերու բանակն անգամ պիտի դողար...:

Այս յանձնախումբը, ընդհանուր ներման արժանացնելով, պետութեան բոլոր բանտերէն դուրս հանեց Հազարաւոր ոճրագործներ, արհեստով մարդասպանները, հոչակաւոր աւազակները, թալանողները եւ թուրք ցեղին իրական ներկայացուցիչները, Հայոց կատաղի թշնամի քիւրտ ցեղերը, չէրքէզները, լազերը, սերունդ՝ հին ուրարտացիներու:

Ասոնք խումբ խումբ գետեղուեցան Անատոլուի ռազմագիտական վայրերուն մէջ, ուր տեղահանութիւն պիտի կատարուէր:

Կառավարութեան յանձնախումբը այս դահիճները գինեց լախտով, տապարով ու հրացանով, եւ անոնց տրամադրութեան տակ դրաւ մեծ քանակութեամբ կիր, որպէսզի իրենց մարդասպանի ոճիրները գործադրելէն ետք, դիակները փոսերու մէջ նետեն եւ կիրով այրեն, ժանտախտի առաջը աւնելու համար:

Մարդասպաններու այս խումբերը, որոնք թուրքերը «Ձէթէ» կը կոչէին, քաղաք կամ գիւղ պիտի չմտնէին, այլ դուրս պիտի սպասէին, ձորերու կամ անտառներու մէջ: Ասոնք սկսեցին արդէն ասպատակել Փոքր Ասիոյ բոլոր ճամբաները, անտանելի դարձնելով եւ ընդհատելով ամէն երթեւեկ:

Կեղրոնի Հայաջինջ հրամանները չգործադրող բոլոր վալիները, միւթասարըֆները, գայմազամները անմիջապէս պաշտօնանկ ընելով, անոնց տեղ կամակատար «հլու» անձեր դնել:

Իթիհատի այս որոշումներուն գործադրութեան անթերի հսկողութիւնը յանձնել Արեւելեան Անատոլուի իթիհատական կոմիտէներու մասնաճիւղերուն: Միանգամայն լիազօրութիւն տալ, ի հարկին աւելի խստութեամբ գործելու, եթէ հանգամանքները ստիպողական ըլլան եւ թոյլատու:

4. ՊՈՒՍՈՑ ԵՒ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ԿԱՊԸ ԽՁՈՒԱԾ

Իթիհատական կառավարութիւնը 1914 թուի Սեպտեմբեր ամսուն՝ կտրեց 4. Պոլսոյ կապը գաւառներուն հետ. արգելեց երթեւեկութիւն ընել երկրին ներսերը՝ քաղաքէ քաղաք կամ գիւղէ գիւղ, այնպէս որ մայրաքաղաքին Հայութիւնը գաւառներու Հայութիւնէն լուր չունէր եւ ո՛չ ալ գաւառներու Հայութիւնը՝ Պոլսոյ Հայութիւնէն:

Այս ճղնաժամային դրուժեան մէջ, Ջաւէն Պատրիարքը, անհող եւ յամառ, անցած զարձածէն բոլորովին անտեղեակ, միտքն ինկաւ Երզնկայի թափուր թեմին առաջնորդ նշանակելու Սահակ Օտապաշեանը, որ ճարահատ մեկնեցաւ դէպի իր պաշտօնավայրը:

Եւ չհա, ճամբուն վրայ չէր քէզի տարազով ծպտուած ութը թուրք ճիւղեր սպաներու մահաբոյր գնդակներուն ներքեւ՝ կը սպաննուէր: Այս ոճիրը Իթթիհատի կողմէ կազմակերպուած եւ ներքին գործոց նախարար Թալաաթի կողմէ հրահանգուած, նշանակալից հանգամանք մը ունէր: Ներքին գործոց նախարարին սիկարեանները հէք վարդապետը սպաննելէն ետքը, անոր պաշտօնաթուղթերը առնելով մեկնած էին, կառքին մէջ սպաննալին մօտը թողնելով ոսկի ժամացոյցը եւ մեծաբանակ դրամը: Այս վերջին հանգամանքները կը հաստատէին ինքնին թէ սպանութեան բուն նպատակը գողութիւն չէր, այլ զուտ քաղաքական:

«Թալաաթ այս անդրանիկ ոնիրը գործել տուաւ համաշխարհային պատերազմի վաղորդայնիքն, եւ ռուս եւ թուրք պատերազմի սկզբնաւորութենէն անմիջապէս ետքը, տարուած սա մտավախութենէն թէ հայոց պատրիարքարանը իր կողմէ մասնաւոր եկեղեցակազմ պատուիրակ մը դրկէ ռուսական սահմանագլուխը, անշուշտ երգնկա առաջնորդ դրկելու պատրուակի մեքքեւ, գաղտնապէս հրահանգելու համար ռուս բանակի հայ գորավարները եւ կամաւորական բանակի պետը Անդրանիկը»:

Այս անմեղ զոհը՝ նախակարապետ պիտի ըլլար զոհաբերուած միլիոնաւոր հայ ժողովուրդին նահատակութեան:

ԱՐԳԵԼՔ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՂԱՄԱՆՔ

Հայկական կեանքը ջլատելու համար, Իթթիհատական անազոբոյն կառավարութիւնը նամակներու գրաքննութիւնը՝ պաշարման գինուորական օրէնքին անունով՝ ծայր աստիճան խստութեան հասցուցեր էր: Իսկ ճամբորդութեան երթեւեկը պատերազմական օրէնքով հետզհետէ այնքան կաշկանդեր էր որ ամէն հաղորդակցութիւն Կ. Պոլսոյ եւ գաւառներուն միջեւ դադրած էր, այնպէս որ իրարմէ բնաւ լուր չունէին: Կառավարութիւնը հեռագրի համար միայն դրամ կը գանձէր, առանց հեռագիրը քաշելու:

Արտասահմանի հայերուն գաղտնիքներուն տիրանալու համար, թոյլ տուաւ որ Միացեալ Նահանգներու երբեմնի թրքահպատակ հայերը, որոնք իրենց երախայական պարզմտութեամբ միշտ փայլած են, եւ որոնք խուլ մնացին թրքական հիւլապատոսին իմաստուն ազդարարութեան առջեւ, անխոհեմ նամակներ գրեան իրենց մօտաւոր կամ

հեռաւոր ազգականներուն, իրենց նամակներուն մէջ միշտ ծրարելով տոյարներ, յանձնարարելով անոնց որ այդ գումարները գործածեն զէնքեր գնելու համար, եւ եթէ դրամ ալ չդնէին, կը յանձնարարէին որ զէնք գնեն, դործածելու համար գանոնք թուրքերուն դէմ:

Անոնց մտքէն անգամ չէր անցներ որ իրենք դէմ առ դէմ կը գտնուին խաբեբայ, խարդախ, նենգաւոր կառավարութեան մը, որ ռուս թրքական պատերազմէն ի վեր խիստ գրաքննութիւն մը հաստատեր էր չէզոք երկիրներէն եկած ամէն նամակի եւ ծրարի վրայ:

Եւ դիմացս ունիւմ հայերէն լեզուով գրքոյկ մը, որուն հեղինակը ո՛չ իր անունը դրած է, ո՛չ ալ տպարանին անունը, ո՛չ ալ տպագրութեան թուականը: Այդ գրքոյկին մէջ հրատարակած են Միացեալ Նահանգներէն եկած նամակները եւ անոնց մէջ դրուած տոյարները գումարներով: Ո՛չ մէկ կասկած որ հեղինակը լրտես գրաքննիչ հայ մըն է, զոր Թալաաթ կը գործածէր այդ փափուկ պաշտօնին համար:

Շատ բնական էր որ նամակները եւ դրամը իրենց տէրերուն չյանձնուէին: Այս նամակները փաստեր եղան կառավարութեան ձեռքին մէջ հայերը նկատելու իբր պատամբներ, եւ այդպէս վարուելու անոնց հետ:

Նմանապէս խիստ եղաւ տնտեսական հալածանքը: Իթթիհատական անզգամ կառավարութիւնը, որ արդէն խոժոռ աչքերով կը նայէր հայոց տնտեսական նախանձելի դիրքին վրայ, գանոնք ենթարկեց բացառիկ տուրքերու:

Այսպէս, պատերազմական տուրք, գինուորական տեսակ տեսակ պէտքերու անունով, եւ կողոպտեց անխնայ, նպատակ ունենալով աղքատցնելու հայ ժողովուրդը: Հայը, ինչպէս միշտ, անտրտունջ վճարեց այդ տուրքերը, եւ անգամ մըն ալ սալեցուցիչ արագութեամբ գլուխ բարձրացուց եւ հարստացաւ, ապացոյց տալով թէ շինարարութիւնը եւ արագ վերականգնումը իր արեան ժառանգութիւնը կը կազմէին:

«ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԳԴԷՄ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Բաւական չէր կազմել չէթէական խումբեր, որոնց ձեռքով միայն միլիոնաւոր մարդիկ սպաննելը զժուար գործ էր, այլ պէտք էր գրգռել եւ ոտքի հանել նաեւ թուրք խաժամուժ, որ տղէտ եւ մոլեռանդ, սպանութեան փառաւոր գործիք մըն էր:

Ուրեմն, պէտք էր գործադրել հռչակաւոր 12 կէտերուն Յը, որ էր՝ մասնաւոր պատշաճ միջոցներով իսլամական կարծիքը պատրաստել:

Այս կարծիքը պատրաստելու համար, Երեքներու յանձնախումբը, կամ իր ետեւ ծածկուած իթթիհատական կոմիտէի իրական կառավարութիւնը, Ֆրանմասոն եւ անաստուած, որով անգութ, իսլամական աղանդը գործածեց իր հրէշային ծրագիրը գործադրելու համար:

Ան հայկական դաւառները ուղարկեց, մասնաւորապէս էրզրումի եւ Անատոլուի պէս տեղեր, ուր հայերը արդէն իսկ իրենց ընթացքով իսլամներուն պժգանքը շահած էին, մոլեռանդ, տգէտ եւ ազգայնամուլ մոլլաներու եւ իմամներու խումբեր, որոնք մզկիթներու մէջ կը քարոզէին թէ «անհաւատ հայերը» միացած են «գարա-կեաւուր» մոսկովներուն հետ՝ կործանելու Օսմանեան կայսրութիւնը:

Յետոյ, կրակոտ խօսքերով կ'աղաղակէին ոգեւորող աղօթքը. «Աստուած մեծ է. միայն մէկ Աստուած կայ. Մուհամմէտ անոր մարգարէն է»:

Այս աղօթքը, ինչպէս տեսանք, ոյժը կը կազմէր թուրք զինուորներուն, եւ կռուի կը մղէր զանոնք անգլիացիին դէմ, մզկիթներուն մէջ կը վառէր ու կը բորբոքէր թուրք խուժանը, որ այլեւս համոզուած էր թէ դաւաճան հայերուն արիւնը Մէհմէտի դրախտին դռները պիտի բանար...:

Պատմութեամբը կատաղութենէն ակոսները կը կրճտէր հայ «անհաւատներ»ուն դէմ, ու կը սպասէր օր առաջ անոնց արիւնը խմել:

Վիլհելմ Բ. հրատարակել տալով «սուրբ պատերազմ»ը, իր քառակուսի գլուխով կարծեր էր թէ այդ նուիրական զէնքով ջարդել պիտի տայ Անգլիոյ եւ Ֆրանսայի տիրապետութեան տակ գտնուող մահմետական երկիրներուն մէջ ապրող բոլոր անգլիացիներն ու ֆրանսացիները, եւ յաղթանակէ յաղթանակ քալելով, ստեղծէ իր որոշած աշխարհածաւալ Գերմանիան:

Երբ, ինչպէս տեսանք, այս ցնորական երազը օդը ցնդեցաւ, անկարելի բան էր որ կայսրը եւ իր անձնական ներկայացուցիչ՝ Վանկէնհայմը մտքերնէն շանցընէին թէ թուրք կառավարութիւնը այդ ահաւոր զէնքը վերջ ի վերջոյ պիտի դարձնէր անգլէն եւ անպաշտպան հայերուն դէմ, եւ անգլիացիներէն եւ ֆրանսացիներէն չառած վրէժին ատելութիւնը՝ հայերու վրայ պիտի թափէր:

ՀԱՅԵՐԸ՝ ԶԻՆԱԹԱՓ

Ինչպէս կարմիր սուլթանը հայերու ջարդը սկսելէ առաջ հաւաքել կու տար անոնց զէնքերը, որպէսզի ինքնապաշտպանութեան նուիրական իրաւունքին չզիմէին, նոյն բանն ըրաւ նաեւ իթթիհատական անօրէն կառավարութիւնը, եւ այնպիսի հրէշային շարշարանքներով՝ որ Համիտի միտքէն անգամ չէին անցներ...:



Սայիտ Հալիմ փաշա

Իթթիհատական անագորոյն կառավարութիւնը իր մեծ ոճիրը արդարացնելու համար, սկսաւ ամբողջ հայութենէն զէնքեր հաւաքել, որպէսզի ցոյց տայ թէ հայերը զինուած են, եւ պատրաստ՝ կռնակէն հարուածելու թուրք բանակը, եւ ոռու աշխարհակալին դռները բանալու:

ԽՂՃԱՄԻՏ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐԸ՝ ՊԱՇՏՕՆԱԶՈՒՐԿ

Թէեւ բնաջնջումին ծրագիրը եւ զանկա գործադրող որճրագործ խումբերը պատրաստ էին, բայց անոր գործադրութիւնը կախում ունէր վալիներէ, միւլթասարըֆներէ, գայմազամներէ, որոնցմէ չատերը, խղճամիտ մարզիկ, յանձն պիտի չառնէին անմեղ արիւն թափել, պարզապէս գոհացնելու համար իթթիհատի պետերուն զիւային վրէժխնդրութիւնը:

Թալաաթ, որ այդ շրջանին արդէն դիկտատոր դարձեր էր, պաշտօնանկ ըրաւ այդպիսի պաշտօնեաները եւ անոնց տեղ նշանակեց արիւնարբու եւ Ֆրանմասոն իթթիհատականներ, յատկապէս ընտրուած «տոմմէ» հրեաներու դասակարգէն, որոնք առեւտրական զետնի վրայ՝ հայերուն ռիւերիմ թշնամիներն էին:

Այս ի ծնէ ոճրագործները, «Սրբագան Պատերազմի» ոյժ տալու եւ թուրք սինլըր ամբոխին ախորժակը գրգռելու համար, իրենց արբանեակներուն միջոցաւ, խոստացան յանուն կառավարութեան, որ ջարդարար մահմետականը պիտի տիրանայ իր ջարդած հայերուն գանձին, կայուածներուն, զեղեցիկ կիներուն, աղջիկներուն եւ մանուկներուն:

Դժուար չէ երեւակայել թէ ինչպիսի հրապուրիչ խայծ էր որ կը նետուէր անթի մեռնելու աստիճանին հասած եւ լպիրշ խուժանին առջեւ: Եթէ ջարդարար իսլամ մը սպաննուէր, Մուհամէտին զրախտին կ'արժանանար, եւ եթէ սպրէր, մէկ օրուան մէջ հարուստ կը դառնար:

ԹԱԼԱԱԹԻ ԱՐԻԻՆՈՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Երբ ազգաջնջումը իր յետին մանրամասնութեամբ պատրաստուեցաւ, Թալաաթ փաշա, իբր մեծ վզրուկ, ներքին գործոց նախարար, բնաջնջումի պաշտօնական վերին ուղղիչ եւ հրամանատար, պատասխանատու իսլամ բարձրաստիճան պաշտօնեաներուն ուղղեց հաստ պահարաններու մէջ դրուած եւ մեղրամոմով կնքուած արիւնոտ նամակներ, եւ անոնց մէջ՝ անոնց ուղղուած անհատական նամակներ, ուր խստիւ կը պատուիրուէր չբանալ կնքուած նամակները, այլ սպասել իր հեռագրերներուն, որ բանան գանոնք եւ իր հրամանները կէտ առ կէտ գործադրեն:

ԿԱՐԵՒՈՐ ԴԱՍ ՄՐԸ՝ ՀԱՅ ՎԱՐԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հայոց ազգի ներկայ եւ ապագայ գործիչները եւ ղեկավարները՝ Թուրքիան կառավարող այդ հասարակ ոճրագործներէն ազդու դաս մը առնելու են:

Անոնք ո՛չ միայն խարդախ, նենգամիտ եւ ստախօս են, այլ խիստ գաղտնապահ, ծածկուած մեղրածորան, հաճելի, գրաւիչ եւ շողմարար ձեւերուն տակ, որոնց առջեւ ցած մակարդակի վրայ կը մնայ նոյնիսկ «Աննգամիտ Ալպիոնը»...:

Յայտնի է որ թուրք վարիչներուն այս գաղտնապահութեան գաղտնիքը հեռաւոր դարերէն կու գայ, եւ կապուած է Սուլթան

Մէհմէտ Ֆաթիհի նշանակալից խօսքին մէջ, արտասանուած, Ուզուն-Հասանի մօրը. «մայրիկ ես իմ գաղտնիքներս եւ ո՛չ իսկ մօրուհիս կը յայտնեմ»...:

Այս յատկանշական զիծերը ցեղային ժառանգութիւն են եւ քիչ թէ շատ կը գանուին իւրաքանչիւր թուրքի սրտին մէջ: Ամբողջ ազգի մը բնաջնջումը եւ գանիկա գործադրող բոլոր պատրաստութիւնները մի առ մի կ'որոշուին եւ գաղտնիքը կը մնայ թանձր մութի մէջ ծածկուած:

Անկարելի է չտեսնել գաղափարի անձուկ կապը «միութիւն եւ մահ» գաղտնի դաշնակցութեան, կոչուած նաեւ «սեւ քաթ», որ ինչպէս տեսանք, իր ափին մէջ առեր էր սերբ ազգին ճակատագիրը՝ «Միութիւն եւ Յաղապետութիւն» կեդրոնական կոմիտէին հետ: Երկու ընկերակցութիւններն ալ երդուեր էին յայտնի կամ գաղտնի սպանութիւններով վերցնել մէջտեղէն բոլոր անոնք, որ իրենց երկրին հողամաս մը կամ հողամասեր հայրենիքէն անջատել կ'ուզեն յայտնի կամ ծածուկ միջոցներով: Անոնց գործադրելիք քաղաքական ոճիրները գաղտնապահութեան շատ աւելի թանձր քօղով մը ծածկուած էին, քան հրէական միջազգային ֆրանմասոնութեան եւ կամ «Սիոնի իմաստուններուն» գաղտնի որոշումները:

Իսկ այդ ահռելի շրջանին, հայ ազգի գործիչներն ու ղեկավարները կը կազմեն թուրքին հակապատկերը: Բարեմիտ, սրտաբաց, քաղաքականօրէն տհաս, ամէն չնչին դէպքի առջեւ խանդավառուող, զգացական եւ գլուխ կորսնցնող:

Դէպքերուն ականատես եւ ականջալուր վկան, Պալաքեան Վրդ.ը, իրաւունք ունէր գրելու. «Ազգիմ ճակատագիրը վարող հայ քաղաքական կուսակցութեանց՝ բացարձակապէս կը պակսէր պահանջուած հեռատեսութիւնը եւ յստակութիւնը, որքան ճշմարիտ ալ ըլլար պնդել թէ կառավարել՝ հեռատեսել ըսել էր...:

Եւ այս անոր համար, որ քաղաքական հայ կուսակցութեանց մտաւորական ղեկավարները, գաղափարի ազնիւ ընկերներ, փորձուեցան Ակատել թուրք իթթիհատական մարդիկը, որոնք պարզապէս փողոցի ոճրագործներ էին, իբրեւ ազատութիւնը բերող թուրքեր»:

Իսկ գաղտնապահութեան արուեստին մէջ - բացառութեամբ հայ ամիրաներուն, վաճառականներուն եւ պետական պաշտօնեաներուն, բոլորն ալ թրքական նենգաւոր քաղաքականութեան մէջ թրծուած մարդիկ - հայ գործիչները եւ ղեկավարները բաց բերան եւ աղմկարար, բնաւ չհասկնալով այն տարրական ճշմարտութիւնը թէ ազգի մը ճակատագիրը վարող մը կարող է մտքէն ամէն բան անցընել, բայց իրաւունք չունի այդ մտքէն անցուցածը տանիքներու վրայ բարձրագոյ աղաղակելու, հայ ցեղին կատաղի թշնամիներուն ձեռքը գէնք տալով, որպէսզի կարենան արդարացնել իրենց ահռելի ոճիրը:

Դժբախտաբար, այս ձեռով գործելը՝ արդիւնք է մեր ազգային թերութիւններուն, այսինքն յոխորտանքի, մեծամտութեան, ինքնահաւանութեան, ինքնագովբի...:

Ասիկա է մեզի՝ Հայերուս տրուած Քաղաքական Պատմութեան մեծագոյն եւ անմոռանալի դասը...:

ՆԻՒԹԵՐՈՒ ՅԱՆԿ

ՅԱՌԱՋԱՐԱՆ

5

ԳԼՈՒԽ Ա.

ԳԷՈՐԳ Ե. ԵՒ ՆԻԿՈԼԱ Բ.

7

Գէորգ Սուրէնեան Կաթողիկոս Ամենայն Հայոց – Սուրէնեան՝ Նիկոլա ձարին մօտ – Հայկական Հարցին նոր արծարծումը – Գէորգ Ե.՝ գործիք ուսական քաղաքականութեան – Անպարանքի պատճառը – Գէորգ Ե.՝ օրուան մարդը – Կ. Պոլսոյ Պատրիարքարանը՝ ուս դեսպանատան մանկերուն մէջ – Ազգային գործիչներու մնչում՝ վարչութեան վրայ – Գաղտնի կայքեր – Ձարական դիւանագիտութեան բաժնուն նպատակը – Պատրիարքարանի պատասխանատուութիւնը – Փաստացի օրինակներ – Կ. Պոլսոյ թրքասէր եւ ուսասէր հոսանքները – Գէորգ Ե. եւ Վորոնցով Դաշկով ձեռք-ձեռքի – Թիֆլիսի առաջին համագումար ժողովը – Թիֆլիսի երկրորդ համագումար ժողովը – Հիմնարկութիւն Թիֆլիսի Ազգային Բիւրոյի – Իրարանցումի դրդապատճառները – Ազգային Բիւրոյի զեկուցման նշանակալից կէտերը – Գէորգ Ե.ի նոր դիմումը ուս կառավարութեան – Ռուսական կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնը – Պօղոս փաշա Նուպար՝ Գէորգ Կաթողիկոսի լիազօր ներկայացուցիչ՝ Արեւմտեան Եւրոպայի մէջ:

ԳԼՈՒԽ Բ.

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐԱՆՈՐ ՍԱԳՐԱՆՔՆԵՐԸ

29

Վորոնցով-Դաշկովի պաշտօնագիրը Գէորգ Կաթողիկոսի – Կաթողիկոսի պատգամաւորները Դաշկովի մօտ – Անպատասխի հարուածը – Թուրք պաշտօնեաներու երկիւղը – Եօթը կէտերը – «Ես ուս պետական մարդ եմ»:

ԳԼՈՒԽ Գ.

ՄԵՍ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

41

Արեւելեան հարցի նոր արծարծումը – Գերմանիոյ մարտարարուեստը – Գերմանիան տէր՝ միջազգային շուկաներուն – Գաղտնի լրտեսներ – Գերմանիոյ սուր արտօժակը – Արշաւ՝ դէպի թրքական Ասիան – Պերլին-Պաղատա երկաթուղին – «Հայասէր»:

նշանակութիւնը - Գերմանական գաղափարը՝ Հայաստանը առանց հայերուն - Հայերը դէպի Միջագետք եւ Սուրիա - Խօյական գաղափարը՝ Հայ ցեղի պանծացումը - Անգլիա եւ Ֆրանսա - Աւստրիա եւ Իտալիա - Ֆրան-Մասոններու օթեակներու կարեւոր դերը - Խոր համակրանք՝ դէպի Ֆրանսան - Վերջ գինեալ խաղաղութեան:

ԳԼՈՒԽ Դ.

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ 57

Պօղոս նուպար Փարիզի մէջ - Երիտասարդ թուրքերը եւ Հայկական Հարցը - Պետերբուրգի հայկական կոմիտէի իմաստուն խորհուրդը - Թրքախորակայն եւ ռուսախորակայն հոսանքներ:

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԳԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ 63

Դեսպան Գիրսն եւ Հայկական Հարցին հետապնդումը - Պօղոս փաշայի գործունէութիւնը - Մեսրոպ Եպիսկոպոս Թիֆլիսի թեմին առաջնորդ - Ազգային Բիւրոյի դիւանագիտական մարզանքները - Պատգամաւորներ Շատիրովի մօտ:

ԳԼՈՒԽ Զ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

69

Ռուսական դիւանագիտութեան յարթամակը - Փետրուար 8ը՝ օր ամբողջ Հայոց պատմութեան մէջ - Հայոց ծայրայեղ բերկրամբը - Կ. Պոլսոյ Պատրիարքին շնորհաւորամբը - Պօղոս Փաշայի հեռագիրը - Ներքողական կոնդակ Պօղոս Փաշային - Գէորգ Կաթողիկոսի երախտագիտական նամակը՝ Սազանով նախարարին - Կաթողիկոսին երախտագիտական նամակը՝ կոմս Դաշկովին - Ազգային համագումարը - Բոյոբոյ քրիստոնեաներու դէմ - Նախատեսուած կոտորածները:

ԳԼՈՒԽ Է.

ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՑՈՒՑԻՑԸ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐՈՒՆ ՎՐԱՅ 81

Գերմանիոյ փառասիրական տենչանքները - Վանկէնհայմ Կ. Պոլսոյ դեսպան - Հակապատկերներ - Վանկէնհայմի քաղաքական ասպարէզը - Վանկէնհայմի կեցնդանագիրը:

ԳԼՈՒԽ Ը.

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՆ ՁԵՌՔ ՁԵՌՔԻ

ՀԱՅԵՐԸ ՍԻՐԱՇԱՀԷԼՈՒ ՀԱՄԱՐ 87

Թրքահայաստանը կոռախնձոր՝ ռուս եւ գերման մրցակցութեան - Գերման եւ հայկական միութեան կազմութիւնը - Լեպսիուսի դիմագիծը - Գերման եւ հայկական միութեան նպատակները - Գերման ժողովուրդին նկարագիրը - հեռատես հայեր - Լեպսիուս Կ. Պոլսոյ մէջ - Թուրք-վրացական գաղտնի դաշինքը - Թուրքիոյ ջանքերը՝ հայոց հարցը լուծելու համար - Թալաթի առաջարկը՝ մերժուած - Մերժումին պատճառները - Մերժումին ահոյի հետեւանքները - Գերման եւ թուրք ընկերութեան կազմութիւնը - Հայոց ուղղուած առաջին հանդիսաւոր սպառնալիքը - Ձայն քարքառոյ յանապատի - Նորադարձ մը:

ԳԼՈՒԽ Թ.

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

105

Սուր պայքար՝ Սերբիոյ եւ Աւստրիոյ միջեւ - «Երկու Նիկոլա»ները - Քոնստանդնուպոլսի տեսակցութիւնը - Սարայեւոյի ոնիրը - Ջարիուրանք՝ Աւստրիոյ եւ Հունգարիոյ մէջ - Երկու կայսրերուն բանակցութիւնը - Անահիտան ցնծութիւն՝ Սերբիոյ մէջ - Աւստրիական ծանուցագիրը - Պատերազմի յայտարարութիւնը - Գերմանիոյ դիրքը - Հսկայ ցոյց մը պատերազմին դէմ - Պատերազմի պաշտօնական յայտարարութիւնը՝ Ռուսիոյ եւ Ֆրանսայի դէմ - Գերմանիոյ ծրագիրը - Իտալիոյ, Բելիոյ եւ Անգլիոյ դիրքը - Ճակատագրական մեծ սխալ մը - Գերման ժողովուրդին հայրենասիրական խանդը - Պատերազմողները եւ իրենց ոյժերը - Սխալ հաշիւ մը:

ԳԼՈՒԽ Ժ.

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

125

Արեւելեան հարցը բեմի վրայ - Ընդհանուր կոտորածի ուրուականը - Դաշնակցութեան ընդհանուր ժողովը՝ Էրզրումի մէջ - Ուշագրաւ կէտերը - Թուրք ներկայացուցիչները Էրզրումի մէջ - Ապստամբութեան յորդորը - Ապստամբութեան փոխարէնը - Դաշնակցութեան իմաստուն պատասխանը - Ուշացած խիստի գաղափար մը - Ջարամիտ խորհուրդը - Կոտորածի լոյսարկուած սպառնալիքը - Թուրք եւ գերման զինակցութիւնը - Ձեզոքութեան օգուտները:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱԶԿՈՎԻ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍ-ԹՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԹԱԿԻՆ 139

Ազգային համագումարի ժողովը - Վորոնցով-Դաշկովի անօրէն ծրագիրը - Գաղտնի բանակցութիւններ - Գէորգ Ե.ի նամակը Վորոնցով-Դաշկովի - Կաթողիկոսին արդարացի վախը - Նոր պահանջներ՝ չորս կէտերով - Ոչ մէկ իրատ՝ անցեալ դասերէն -

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԲԱՆԱՎԷՃ ԱՆՈՐ ՇՈՒՐՋ 273

Կովկասեան ազգերու վերաբերմունքը՝ դէպի հայերու բռնած դիրքը - Հայկական ինքնավարութիւնը՝ օրուան կարգախօս - Հայ-ռուսական դաշնակցութեան խզումը - Նիւ Եորքի թուրք հիւպատոսին նշանակալից ազդարարութիւնը - Դաշնակցութիւնը աչքի փուշ - Փոշիներու տակ ծածկուած հակադաշնակցական զեկուցումը - Կեդիֆի ֆոզը վար առնուած:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԳԵՐՄԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

289

Վանկէնհայմ՝ խաղաղութեան առաջնալ - Խաղաղութեան բաղանջին պատճառները - Երիտասարդ թուրքերու սարսափը - Գերմանացի դիւանագէտ մը՝ Կ. Պոլսոյ մէջ - Սարսափեցուցիչ «Արմատա»ն - Անգլո-ֆրանսական նաւատորմին ազդած սարսափը - Յետին թշուառութիւնը - Փախուստի որոշումը դէպի Փոքր Ասիա - Բալլավիշիմի տագնապը - Խաղաղութեան տարօրինակ պայմանները - Ուաշինկոնդի մերժողական պատասխանը - Վանկէնհայմի շփոթութիւնը - Յիմարական գրոյցներ - Յուսահատ Թալաթը:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՄԱՀԱՄԵՐՁԻՆ ՎԵՐՋԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

305

Խորհրդաւոր մարդը - Ջարիուրեյի որոշում մը - Ելքը՝ դէպի Փոքր Ասիա - Մորկէն-թաուի մերժումը - Ապահովութեան յանձնախումբը - Պոլսոյ հայերը՝ ցնծութեան մէջ - Անգլիական նաւատորմը անպարտելի չէ:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՏԱՐՏԱՆԷԼԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ՝ ՎԵՐՑՈՒԱԾ

315

Անգլիացիներու փախուստը - Փախուստի շարժառիթները՝ անգլիական ակնոցով - Փախուստի իսկական շարժառիթները - Անգլիական նենգամտութեան դասական ուրիշ օրինակ մը - Գերման զօրակազմներու ուրախութիւնը - Անգլիական դաւաճանութեան խոր արձագանգը՝ Ռուսիոյ մէջ - Կամաւոր փախուստին աղիտաւոր հետեւանքները - Էնվէր փաշան՝ պարծենկոտութեան գագաթնակէտին:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԹՐՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՎՃԻՌԸ

325

Բնաջնջումի նախանշանները - Դժոխային համաժողովը - Բնաջնջումի գործադիր յանձնախումբը - Բնաջնջումի գործադրութեան տասներկու հրահանգները - Պատրիարքարանը՝ հայ դաւանանքով շրջապատուած - Հայ մտաւորականներուն սնցանկը - Ոնրագործ խումբերու կազմութիւնը - Կ. Պոլսոյ եւ գաւառներուն կապը՝ խզուած - Արգելք թղթակցութեան եւ տնտեսական հալածանք - «Մուրք Պատերազմ»ի յայտարարութիւն՝ ընդդէմ հայութեան - Հայերը զինաթափ - Խղճամիտ պաշտօնեաները՝ պաշտօնագործը - Թալաթի արիւնոտ նամակները - Կարեւոր դաս մը՝ հայ ազգի վարիչներուն համար:





Տպագրութիւնը աւարտեցաւ 1993ի Ապրիլին
Միխիթարեան Տպարանին մէջ, Ս. Ղազար - Վեներիկ